

THE UNIVERSITY OF CHICAGO



Առճերսէր Մոեմ

Լուսին
և
վեցսկնսանոց



Մատենադարան

Երևան «Հայտ» 1989

Լուսին և վեցպենսանոց

Քրեագիտական
Ներքին Մտաշարային

Մոեմ Ս.

Մ 855 Լուսին և վեցպենսանոց [վեպ]; Պատմվածքներ/Մոեմեր-սեթ Մոեմ; (Քարգմ. Ա. Խաչատրյան և ուրիշ.; Նկ. վ. Ք. Մանդակունի).— Եր. Լույս, 1989.— 522 էջ, նկ. 11:

Ժողովածուում ներկայացված են անգլիացի նշանավոր գրող Մոեմերսեթ Մոեմի «Լուսին և վեցպենսանոց» հանրահայտ վեպը և մի շարք պատմվածքներ՝ «Անձրե», «Գետախորշ», «Մայր Անգլիայից հեռու», «Անյուծի մորթին» և այլն:

«Լուսին և վեցպենսանոց» վեպը գրվել է 1919 թ. Նեղինակի Քաթիթի և Սամուա կատարած ճանապարհորդությունից հետո: Ժամանակին մեծ ազդուկ հանած այդ ինքնատիպ ստեղծագործության հիմքում ընկած են իրական դեպքեր՝ ֆրանսիացի մեծ նկարիչ Պոլ Գոգենի կենսագրական փաստերը, որոնք Նեղինակն ազատորեն օգտագործել է իր մտացածին հերոսի՝ նկարիչ Սթրիբլենդի կերպարն ստեղծելիս:

Գունավոր ներդիրները Պոլ Գոգենի մի շարք նկարների վերապատկերումներն են:

Ժողովածուն կազմվել է ըստ «Սովետական գրողի» 1976 թ., 1981 թ. Երևանի համալսարանի «XX դարի արտասովետական արձակ» (2. 1) 1984 թ. հրատարակությունների:

4701080000(17)197.1989

ԳՄԴ 84. 4Մբ—4

У

7021011989

ГОСУДАРСТВЕННАЯ

НАСЫ

Сомәрсег МҮРҒА

ЛУНА И ГРОШ, РАССКАЗЫ

(На армянском языке)

Составители: Хачатрян А. В., Богарян Э. Х.
Ереван «Луйс» 1989



ISBN 5-545-00249-9

© «Լույս» հրատարակչություն, կազմելու, ձևավորելու համար 1989 թ.



իշտն ասած, երբ առաջին անգամ ծանոթացա Չարլզ Սթրիբլենդի հետ, ոչ մի արտակարգ բան չնկատեցի նրա մեջ: Բայց հիմա հաղիվ թե գտնվի մեկը, որ միտի նրա մեծությունը: Ես նկատի չունեմ հաշտակ բողբոջների կամ փառապանծ զորավարի մեծությունը, դա ավելի շատ վերաբերում է նրա դրամատիկին, բան իրեն, և շատ հաճախ հանդամանքների փոփոխությունը գրկելով նրան հասարակական գիրքից, գրկում է նաև մեծությունից: Պրեմիեր-մինիստրը իր պաշտոնից դուրս գտնում է փքուն ճոռոմաբան, իսկ առանց բանակի գեներալը՝ զավառական քաղաքի ընամի հերոս:

Չարլզ Սթրիբլենդի մեծությունը իսկական մեծություն էր: Հնարավոր է, որ նրա արվեստը ձեզ դուր չպա, բայց նրա նկատմամբ անտարբեր մնալ չեք կարող: Այն շշմեցուցիչ է ու գերող: Անցել են այն ժամանակները, երբ նա ծաղրի առարկա էր, և հիմա նրան պաշտպանելը էքսցենտրիկության նշան չի համարվում, և ոչ էլ մեծարելը՝ այլասերվածություն: Սթրիբլենդին հատուկ թերությունները ընդունվում են որպես նրա արժանիքների անհրաժեշտ լրացում: Շատ հնարավոր է, որ զեռ վեճեր են գնում արվեստի մեջ գրաված նրա տեղի մասին, բայց նրանով հիացողների գովասանքները դուրս ետևընան անհիմն են, որքան շարահյուսների նվաստացուցիչ կարծիքները: Այնուամենայնիվ կասկածից դուրս է, որ նա հանձար է: Իմ կարծիքով արվեստի մեջ ամենահետաքրքիր բանը նկարչի անհատականությունն է, և էթե այն ինքնատիպ է, պատրաստ եմ ներել նրան հազարավոր սխալներ: Վելասկեսը՝ գուցե ավելի մեծ նկարիչ էր, բան Գրեկոն², բայց երբ վարժվում ես նրան, այլևս չես հիանում նրանով, մինչդեռ զգայուն ու ողբերգական կրեստային մատու-

ցում է մեզ իր հոգու հավերժական գաղտնիքները որպես տեսական գոհարերություն:

Գերասանը, նկարիչը, բանաստեղծը կամ երաժիշտն իր արվեստով, իսկ կամ գեղեցիկ, բավարարում է մարդու էսթետիկական ճաշակը, բայց դա բարբարոսական բավարարում է, նման սեռական բնազդին, քանի որ տրվում է ամբողջովին: Նրա գաղտնիքը հրապուրիչ է ինչպես դետեկտիվ վեպը: Դա մի հանելուկ է, որ լուծում չունի, ինչպես տիեզերքի առեղծվածը:

Սթրիբլենդի ամենամանջան գործը վկայում է նրա ինքնատիպ, բարդ ու տառապանքներով լի անհատականության մասին: Հենց դա է, որ հրապուրում է նույնիսկ նրանց, ովքեր չեն սիրում նրա նկարները, և առաջացել է այդքան լուրջ հետաքրքրություն նրա կյանքի ու անձի նկատմամբ:

Սթրիբլենդի մահից հետո լորս տարի էլ չէր անցել, երբ Մորիս Հյուրեն «Մերկուր դե Ֆրանս»-ում՝ հրատարակեց իր հոդվածը, որը մոտացումից փրկեց նկարչին: Մորիս Հյուրենի հետքերով, ավելի կամ պակաս եռանդով, դնացին բազմաթիվ հայտների գրողներ: Վաղուց Ֆրանսիայում ոչ մի բննադատ չէր վայելել այդքան անառարկելի հեղինակություն: Եվ իրոք, նրա սրտատարկները շափազանց ազդեցիկ էին. թեև դրանք արատոց էին թվում, բայց նկարչի մասին հետադայում գրված աշխատությունները հաստատեցին նրա կարծիքը, և այժմ Չարլզ Սթրիբլենդի անունը հաստատուն տեղ է գրավել այն ուղղության մեջ, որի հիմք դրեց այդ ֆրանսիացին:

Սթրիբլենդի հեղինակության բարձրացումը արվեստի պատմության ամենաոճմանտիկ էպիզոդներից մեկն է: Բայց ես մտադիր չեմ գրազվել նրա արվեստի վերլուծությանը կամ այնքանով միայն, որքանով այն վերաբերում է նրա անհատականությանը: Ես չեմ կարող համաձայնվել այն նկարիչների հետ, որոնք ամբարտավանորեն պնդում են, թե արվեստից անտեղյակ մարդը ի վիճակի չէ հասկանալ նկարչությունը, և իր գնահատականը լավագույն դեպքում կարող է արտահայտել լուրջությամբ կամ չեղիքի գրգռչով:

Անհեթեթ մոլորություն է արվեստը դիտել որպես արհեստ, որ լրիվ հասկանալի է միայն արհեստավորին: Արվեստը զգացմունքների մանիֆեստացիա է, իսկ զգացմունքները խոսում են բոլորին հասկանալի լեզվով:

Ես համաձայն եմ միայն այն բանի հետ, որ, էթե քննադա-

տը արվեստի տեխնիկայի մասին գործնական գիտելիքներ չունի, գծվար թե կարողանա գնահատել նրա իսկական արժեքը, իսկ նկարչական արվեստի բնագավառում իմ սգիտութունն անսահման է: Բարեբախտաբար ես կարիք չունեմ նման համարձակ քայլի դիմելու, քանի որ իմ բարեկամ տաղանդավոր գրող և հիանալի նկարիչ էդվարդ Լեգատը՝ սպառիչ վերլուծության է ենթարկել Չարլզ Մթրիքլենդի ստեղծագործություններն իր փոքրիկ գրքում, որը նորաձաշակ սժի մի հիանալի նմուշ է, նշանակալիորեն ավելի հաջող մշակված Ֆրանսիայում, քան Անգլիայում:

Մորիս Հյուբեն, հասարակության ուշադրությունն ու հետաքրքրությունը շարժելու համար, իր նշանավոր հողվածում մեկնաբանեց Չարլզ Մթրիքլենդի կենսագրությունը: Արվեստագետի կրթութան անաշուտությամբ նա աշխատեց իսկական գիտական և ուշադրությունը հրավերել բարձր կարգի ինքնատիպությանը օժտված տաղանդի վրա, և, լինելով շափազանց լավ ևս գրող, հասկացավ, որ միայն «իսկական մարդկային հետաքրքրությունը» կարող է նպաստել իր նպատակին հասնելու: Եվ երբ նրանք, սվեբեր նախկինում հանդիպել էին Մթրիքլենդին — գրողներ, որ գիտեին նրան լոնդոնում, նկարիչներ, որ Մոնմարտում նրա հետ կողք կողքի նստել էին սրճարանում, — դարձանքով իմացան, որ նա, ով ապրել էր իրենց շրջանում և որին շատերն նման անհաջողակ նկարիչ էին համարել, իսկական հանձար է, Ֆրանսիայի և Ամերիկայի հանդեսները հեղեղվեցին հողվածներով: Այդ հիշողություններն ու գովասանքներն ավելացրին Մթրիքլենդի փառքը, բայց չբավարարեցին հասարակության հետաքրքրությունը, այլ ավելի բորբոքեցին այն: Թեման ձեռնտու թեմա էր, և փութաշան վեյթթրիստ-Ռոտհոլցին² իր հետաքրքիր մեկնադրության մեջ ներկայացրեց Մթրիքլենդի մասին զանազան հեղինակությունների կարծիքների մի երկար ցուցակ: Մարդը առասպել ստեղծելու բնատուր ձիրք ունի: Հափշտակվելով իրենց նմաններից առանձնացած մարդկանց կյանքի դարձանալի և խորհրդավոր պատմություններով, մարդիկ լեզուներ են հյուսում նրանց մասին, ֆանտաստիկ հավատ տարածելով իրենց ստեղծածի նկատմամբ: Դա ուղեկցված լինելով լեզուներով կյանքի միտքի նկատմամբ: Դա ուղեկցված լինելով լեզուներով կյանքի միտքի նկատմամբ: Դա ուղեկցված լինելով լեզուներով կյանքի միտքի նկատմամբ: Դա ուղեկցված լինելով լեզուներով կյանքի միտքի նկատմամբ:

Հեզոնոլ փիլիսոփան քմծիծաղ է տալիս այն մտքից, որ մարդկությունը խնամքով է պահպանում սրբ վայտեր Ռալֆի³ հիշա-

տակը ոչ թե նրա համար, որ նա անգլիական դրոշակ բարձրացրեց մինչ այդ անհայտ երկրներում, այլ նրա համար, որ նա իր թիկնոցը փռեց Կույս Թագուհու ոտքերի տակ:

Չարլզ Մթրիքլենդն տարեց անհայտության մեջ: Նա ավելի շատ թշնամիներ ունեցավ, քան բարեկամներ: Եվ դրա համար էլ տարօրինակ չէ, որ նրա մասին գրողները իրենց սուղ հիշողություններն աշխատում էին լրացնել երևակայությամբ, և այն քիչ բանը, որ հայտնի էր նրա մասին, բավական էր առիթ տալու ողորմանիկ նկարագրություններին:

Նրա կյանքում շատ բան տարօրինակ և սարսափելի եղավ: Նա բուն խառնվածքի տեր մարդ էր: Ընկալաբար անողորմ զանվեց նրա նկատմամբ: Եվ ժամանակի ընթացքում նրա մասին հյուսված լեզուները հասավ այնպիսի մանրամասների, որ խոհեմ պատմաբանը չէր համարձակվի գրան վնասելու փորձ կատարել:

Բայց գերապատիվ Ռոբերտ Մթրիքլենդը խոհեմ պատմաբան չէր: Նա գրեց իր հոր կենսագրությունը, հավանաբար, մտազբղված լինելով միայն «բացատրելու տարածում գտած որոշ անհշուտություններ», որ վերաբերում էր Չարլզ Մթրիքլենդի կյանքի վերջին շրջանին, և որը «բիշ վիշտ չէր պատճառել գեղես ասպրող մարդկանց»:

Իհարկե, շատ բան, ինչ որ պատմում էին Մթրիքլենդի կյանքի մասին, չէր կարող ահաճություն չպատճառել հարգարժան ընտանիքին: Մթրիքլենդ-որդու գիրքը՝ մեծ զվարճություն պատճառեց ինձ, նույնիսկ ուրախացրեց, որովհետև շափազանց անհետաքրքիր ու տաղտկալի էր գրված: Ռոբերտ Մթրիքլենդը պատկերել էր հիանալի ամուսնու և հոր, բարեհոգի անձի ու խիստ բարոյական մարդու մի կերպար: Ժամանակակից կղերականը գիտություն մեջ հասել է այնպիսի զարմանալի հմտության, որ, եթե չեմ սխալվում, կոչվում է էքսիջիսիս՝ (տեքստի մեկնություն), իսկ ճարպկությունը, որ գերապատիվ Ռոբերտ Մթրիքլենդը ցուցաբերել էր հոր կյանքի այն բոլոր փաստերը մեկնաբանելիս, որոնք պարտաճանաչ որդին «հարմար» էր համարել հիշատակելու, նրան ասպառայում, անկասկած, բարձր գիրք էր պահանջվելու կրոնական դասում: Ես նրա սրունքներին արդեն կպիսկոպոսական գուպաններ էի տեսնում:

Այնուամենայնիվ դա համարձակ, բայց վտանգավոր ձեռնարկում էր:

Ընդհանուր ճանաչում գտած լեզուներ քիչ չէր նպաստել

Մթերբլենդ-Նոր փառքին, որովհետև շատերին նրա արվեստը իր կողմն էր գրավել Մթերբլենդի անձի նկատմամբ ունեցած առե-լուծյունից, ուրիշներին՝ այն կարեկցանքից, որ առաջացրել էր նրա ողորդողական մաս՜ը, այդ իսկ պատճառով բարեմիա որդու ջանքերը որոշ ստանուծյունն առաջացրին Չարլզ Մթերբլենդով հիացուկների մեջ: Եվ պատահական չէ, որ «Սամարուհին»՝ Մթերբլենդի ամենանշանավոր գործերից մեկը, միտք Մթերբլենդի գրքի հրատարակությունից առաջացած բանավեճից Նևտոնի մահացումից 235 ֆունտով պակաս, քան ինն ամիս առաջ, երբ այն գինեց մի հանրահայտ կոլեկցիոններ, որի հանկարծահաս մահից հետո նկարը նորից անուրդի հանվեց:

Շատ հնարավոր է, որ Մթերբլենդի արվեստը այնքան ուժ ու ինքնատիպություն չունենար, որպեսզի ուշքի գար նման հարվածից հետո, եթե առտուպելների սիրահար մարդկությունը հիասթափությունը չմերժեր այդ պատմությունը, որը հուսախաբ էր անում արտակարգի նկատմամբ ունեցած մարդկանց կրքոտ հակումը: Եվ դոկտոր Վեյթբրեխտ-Ռոթշույցի՝ շոտով լույս տեսած աշխատությունը վերջնականապես գրեց արվեստասեր-նեկրի ամեն տեսակի կասկածները:

Գոկտոր Վեյթբրեխտ-Ռոթշույցը պատկանում էր պատմաբանների այն դպրոցին, որը ոչ միայն հավատում է, որ մարդկությունն ամբողջովին արատավոր է, այլ շատ ավելին: Եվ, իհարկե, այդ դպրոցի ներկայացուցիչներն ավելի շատ ընդունելություն են գտնում ընթերցողների կողմից, քան այն հեղինակները, որոնք շարամիտ հաճույքով են ներկայացնում ուսման-սիկ մեծություններին որպես ընտանեկան բարեգործության տիպարներ: Ինչ վերաբերում է ինձ, ես հիասթափություն կապրեի, եթե իմանայի, որ Անտոնիոսի և Կլեոպատրայի² միջև գոյություն են ունեցել միայն տնտեսական հարաբերություններ: Եվ իրոք, շատ փաստեր են պետք ինձ համոզելու համար, որ Տիբերիոս³ կայսրը նույնքան բարեմիտ միապետ է եղել, որքան Գևորգ 5-րդ թագավորը⁴:

Գոկտոր Վեյթբրեխտ-Ռոթշույցն այնպիսի խիստ բառերով հաշվեհարդար տեսավ գերապատիվ Ռոբերտ Մթերբլենդի գրքի հետ, որ ակամա խզմահարությունն ևս զգում դժբախտ երեցի նկատմամբ: Նրա փափկանկատությունը հայտարարվեց կեղծավորություն, իրուստիողական շտատիստությունը՝ բացահայտ

սուտ, իսկ միտումնավոր չառնությունը՝ զավաճանություն: Եվ ճշմարտության դեմ գործած աննշան մեղքերի պատճառով, ու պարսավելի է հեղինակի, բայց ոչ որդու համար, ամբողջ անգր-սաքսոնական ազգը մեղադրվեց կեղծ բարեպաշտության, անմտության, հավակնոտության, նենգության, խորամանկության և խարերայական արարքների մեջ:

Իմ կարծիքով անխոհեմ վարվեց միտք Մթերբլենդը, երբ վիպակոչելով Չարլզ Մթերբլենդի Փարիզից գրած նամակը, որտեղ նա կնոջը բնութագրել էր որպես «հիանալի կին», փորձեց միտել արգեն տարածում դասած ասեկոսին, որ նրա հոր և մոր միջև «տահաճություններ» են եղել, որովհետև զսկտոր Վեյթբրեխտ-Ռոթշույցը ձեռք բերեց և հրատարակեց այդ նամակի ֆաքսիմիլը, ուր գրված էր. «Թող գրողի ծոցը դեռ իմ կինը: Նա հիասթափ կին է, բայց կերպագուստի, որ նա դժոխքում լինելու»: Պետք է ասել, որ եկեղեցին իր հզորության ժամանակներում նման անցանկալի վկայության հետ այլ կերպ կվարվեր:

Գոկտոր Վեյթբրեխտ-Ռոթշույցը Չարլզ Մթերբլենդի խանդավառ երկպառոտներից էր և վատնող չկար, որ նա կեղծ լույսի տակ կներկայացներ նկարչին: Նա լավատեղյակ էր մարդկային գործողությունների արտաքննապես անմեղ թվացող, բայց իշականում ստոր շարժառիթներին:

Նույնքան հոգեբան լինելով, որքան արվեստի գիտուհի, նա լավ ծանոթ էր մարդու ենթագիտակցության դադոնիթներին: Ոչ մի միտակի չէր հաջողվել ավելի խորը թափանցել սովորական երևույթների մեջ, որքան նրան: Միտակը տեսնում է անասելին, հոգեբանը այն, ինչի մասին չեն խոսում: Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպիսի շանասիրություն էր ուսումնական հեղինակը պրոպրետում ամեն մի մանրամասնություն, որը կարող էր անվանարկել իր հերոսին: Նա շարախինդ ուրախություն էր զգում, երբ նրան հաջողվում էր դաժանության կամ ստորության որևէ օրինակ բերել, հերետիկոսին խարույկի վրա ուղարկող ինկվիզիտորի նման հրճվում էր, երբ ինչ-որ մտացված պատմության հնարավորություն էր տալիս փնտս հասցնել պերսպատիվ Ռոբերտ Մթերբլենդի որդիական բարեպաշտությանը:

Նրա աշխատությունը արժանի է հիացումների: Նա ոչ մի մանրուք չէր անտեսում: Եվ հավատացնում էմ, որ եթե Չարլզ Մթերբլենդը լվացրատանը պարտք էր մնացել, այդ հաշիվը

կներկայացվի in extenso*, իսկ եթե նա խուսափել է վերադարձ-
նել փոխ վերցրած ինչ-որ կես կրոն, ապա այդ հանցագործ
արարքի ոչ մի մանրամաս բաց չի թողնվի:

ԳԼՈՒԽ 2

Երբ այդքան շատ է գրվել Չարլզ Սթրիբլենդի մասին, արժե՞
որ ես էլ գրեմ: Նկարչի Հուշարձանը նրա ստեղծագործությունն
է: Ճիշտ է, ես Սթրիբլենդին ավելի մոտիկից գիտեի, քան շա-
տերը. առաջին անգամ հանդիպեցի նրան նախքան նկարիչ դառ-
նալը և հաճախ էի նրան տեսնում Փարիզում, որտեղ նա շատ
ծանր տարիներ անցկացրեց: Այնուամենայնիվ, ես երբեք գրի չէի
առնի իմ հիշողությունները, եթե պատերազմի պատահականու-
թյունները չհասցնեին ինձ Քսֆի: Այնտեղ, ինչպես հայտնի է,
նա անցկացրեց իր կյանքի վերջին տարիները, և այնտեղ էլ ես
հանդիպեցի մարդկանց, որոնք մոտիկից ծանոթ էին նրան: Այս-
պիսով ես հնարավորություն ունեցա լուսաբանելու նրա ողբեր-
գական կյանքի այն ժամանակաշրջանը, որ համեմատաբար
ավելի մութ էր մնացել: Եթե Սթրիբլենդը, ինչպես գտնում են
շատերը, իրոք մեծ նկարիչ է, ուրեմն հետաքրքիր կլինի լսել
այն մարդկանց պատմությունները, որոնք լավ ծանոթ էին
նրան: Ինչեք չէինք տա մենք այն մարդու հիշողությունների հա-
մար, ով նույնքան մոտիկից գիտեր էլ Գրեկոյին, որքան ես՝
Սթրիբլենդին:

Ի միջի այսոց ես այնքան էլ չեմ փորձում եման պատճառա-
բանություններով արդարանալ: Չեմ հիշում ո՞ր իմաստունն է
մարդկանց խորհուրդ տվել, հանուն հոգեկան հավասարակշռու-
թյան, օրը երկու անգամ անել այն, ինչ նրանք չեն սիրում.
անձամբ ես ճշգրտություններ եմ կատարում այդ պատվիրանը՝
ամեն օր վեր եմ կենում անկողնուց և ամեն օր պանկում եմ
քնելու: Եվ բնավորությամբ հակված լինելով մենակեցության,
ամեն շաբաթ մարմինս դաժանորեն ուժասպառ եմ անում,
կարդալով «Քայմա»-ի գրական հավելվածը:

Իսկպես հոգեվերլիչ կարգապահություն է մտածել այն մե-
ծաբանակ գրքերի մասին, որ գրվել են, այն երջանիկ հույսերի

մասին, որ նրանց հետ են կապում հեղինակները և այն ճակա-
տագրի մասին, որ սպասվում է այդ գրքերին: Ի՞նչ հույս կա,
որ որեւէ գիրք իր համար ճանապարհ կհարթի այդ բազմություն
մեջ: Իսկ եթե անգամ հաջողություն է վիճակված, ապա դա էլ
ժամանակավոր է: Միայն ասածուն է հայտնի, թե ինչպիսի
տառապանքներ է կրել հեղինակը, ինչպիսի դառը փորձություն
է ապրել, սրտի ինչպիսի ցավեր է տարել, և այդ բոլորը միայն
նրա համար, որ նրա գիրքը պատահական ընթերցողին մի քա-
նի ժամ հաճույք պատճառի կամ օգնի նրան ցրելու ճանապարհի
ձանձրույթը: Բայց չէ որ, եթե դատելու լինենք նրանց մասին
գրված գրախոսականներից, այդ գրքերից շատերը հրաշալի են
գրված, հեղինակները շատ միտք են ներդրել նրանց մեջ, իսկ
մի քանիսը եղել են նրանց ամբողջ կյանքի անխոնջ աշխատան-
քի պտուղը:

Այս բոլորից ես գալիս եմ այն եզրակացության, որ գրողը
պետք է բավարարություն փնտրի միայն իր աշխատանքի և իր
մտքերից աղատվելու մեջ, անտարբեր մնալով ամեն տեսակի
կողմնակի բաների՝ պարսավանքի ու գովասանքի, հաջողության
ու անհաջողության նկատմամբ:

Բայց պատերազմը սկսվեց՝ իր հետ բերելով իրերի նոր հա-
րաբերակցություն: Երիտասարդությունը սկսեց ողջունել ասպ-
վածներին, որոնք մեր ժամանակ անծանոթ էին, և հիմա արդեն
պարզ երևում է այն ուղղությունը, որով ընթանալու են նրանք,
ովքեր ապրելու են մեղանից հետո: Անհանգիստ և իր ուժը գի-
տակցող կրտսեր սերունդն արդեն չի բախում դռները, նա
ներս է խուժել և գրավել մեր տեղերը: Օղբ թնդում է նրանց
բացականչություններից: Ծերերը ընդօրինակում են երիտասարդ-
ների բարքերը և ճգնում են համոզել իրենց, որ իրենց ժամա-
նակը դեռ չի անցել: Նրանք աղմկում են երիտասարդներին հա-
վասար, բայց նրանց բերաններից ոչ թե մարտակոչ է դուրս
գալիս, այլ ողորմելի ծվոց: Նրանք նման են այն պառավ անա-
ռակներին, որոնք աշխատում են կարմիր ներկի ու շպարի մի-
ջոցով վերադարձնել նախկին երիտասարդությունը: Ավելի
խելամիտները արժանատալություններ շարունակում են գնալ
իրենց ճանապարհով: Նրանց զուսպ ժպիտներում ներողամիտ
ծաղր է նկատվում: Նրանք հիշում են, որ ժամանակին իրենք էլ
աղմուկով ու արհամարհանքով դուրս են մղել նախորդ և արդեն
հոգնած սերնդին, և կանխատեսում են, որ ներկայիս հանդուգն

* ամբողջությամբ (լատ.)

ջահակիրները շուտով նույնպես ստիպված կլինեն զիջել իրենց տեղը: Վերջին խոսք գոյություն չունի: Նոր կառավարանն արգեն հնացել էր, երբ նիսվեն՝ մինչև երկինք հասցրեց իր մեծությունը: Համարձակ խոսքերը, որոնք այնքան նոր են թվում նրանց համար, ովքեր դրանք առաջին անգամ են արտասանում, եղել են և գրեթե նույն ինտոնացիաներով արտասանվել արդեն հարյուրավոր անգամներ: Ճոճանակը ետ ու առաջ է շարժվում: Շարժումը միշտ էլ նույն շրջանն է գծում: Երբեմն մարդ շափից ավելի է ապրում և մի ժամանակից, ուր նրան որոշակի տեղ է հատկացված, ընկնում է իր համար օտար ժամանակի: Նման գեպերում դա մարդկային կատակերգության ամենազվարճալի անսարսնեթից մեկն է դառնում: Ո՞վ է հիմա, օրինակի համար, հիշում Ջորջ Կրաբին: Իսկ ժամանակին նա նշանավոր բանաստեղծ էր, և մարդկությունը միաձայն ընդունում էր նրա հանճարը, մի բան, որ մեր ավելի բարդ ժամանակներում անհիմաստ է թվում: Ջորջ Կրաբը Ալեքսանդր Պոպի՝ դպրոցի հետևորդ էր և հանգավորված երկտող ոտանավորներով բարոյախոսական պատմություններ էր գրում: Բայց շուտով սկսվեց Ֆրանսիական հեղափոխությունը, հետո նապոլեոնյան պատերազմները, և բանաստեղծները նոր երգեր երգեցին: Միտքը Կրաբը շարունակեց գրել հանգավորված երկտող ոտանավորներով բարոյախոսական պատմություններ: Հավանաբար նա կարդում էր այդ երիտասարդների բանաստեղծությունները, որոնք աշխարհում մեծ ազմունկ էին հանել, և դրանք հիմարություն էր համարում: Իհարկե դրանցից շատերը այդպես էլ կային: Բայց Կրիթսի և Վորդսվորթի օգաները, Կոլրիջի, առավել ևս Շելլիի՝ մի քանի սյոնեմները, մարդկության համար հայտնաբերեցին առաջներում անհայտ հոգու ընդարձակ մի թագավորություն: Մինչդեռ Ջորջ Կրաբը սլշխարի նման հիմար էր, շարունակում էր գրել հանգավորված երկտող ոտանավորներով բարոյախոսական պատմություններ: Երբեմն ևս կարգում եմ այդ երիտասարդների գործերը: Հնարավոր է, որ ավելի կրակոտ Կիլսը և եթերային Շելլին արդեն հրատարակել են նոր ստեղծագործություններ, որոնք շնորհակալ մարդկությունը կհիշի ընդմիշտ: Չդիտեմ: Ինձ հիացմունք է պատճառում այն հղկվածությունը, որ հատուկ է նրանց գրչի տակից դուրս եկած չուրաքանչյուր ստեղծագործությանը: Երիտասարդությունը ինքնին կատարյալ է և ավելորդ է խոստումների մասին հիշատակել: Ինձ ապշեցնում է նրանց կատարյալ

ոճը, բայց բառապաշարի ճոխությունը (անմիջապես երևում է, որ նրանք մանուկ հասակում թերթիկ են Ռոջեյտի՝ «Գանձարանը») ուղին չի ասում: Ըստ իս, նրանք դիտեն շափազանց շատ և զգում են շափազանց մակերեսայնորեն: Տանել շեմ կարող ոչ նրանց սրտատուչությունը, որով նրանք թեթևակի խփում են թիկունքիս, ոչ էլ այն հուզմունքը, որով նկատում են կրծքիս: Նրանց կիրքը մի փոքր դժգույն է թվում ինձ, երազանքները՝ տաղալկալի: Ես չեմ սիրում նրանց: Փաղվել եմ այլ ժամանակի մեջ և շարունակելու եմ գրել երկտողանի հանգավորված ոտանավորներով բարոյախոսական պատմություններ: Բայց եռակի հիմար կլինեի, եթե դա չանեի միայն իմ սեփական հաճույքի համար:

Գլխիկ 3

Բայց այս բոլորը ի միջի այլոց:
Ես շատ երիտասարդ էի, երբ գրեցի իմ առաջին գիրքը: Երջանիկ պատահականությամբ այն ուշադրություն գրավեց և տարբեր մարդիկ սկսեցին ծանոթություն փնտրել ինձ հետ:
Ոչ առանց թախծի եմ ես անձնատուր լինում այն ժամանակվա լոնդոնյան գրական աշխարհի հիշողություններին, երբ առաջին անգամ ամաշխուղ, բայց նախանձախնդրորեն մուտք գործեցի նրա սահմաններից ներս: Վաղուց լոնդոնում չեմ եղել, և եթե վեպերը ճիշտ են նկարագրում նրա բնորը՝ զծերը, ուրեմն շատ բան է փոխվել այնտեղ: Եվ թաղամասերն էլ, որտեղ հիմնականում տեղի էր ունենում գրական կյանքը, այժմ ուրիշ են: Հեմփսթեդը, Նոթինգ-Հիլ-Գեյթը, Հայ-Սթրիթն ու Քենսինգթոնը իրենց տեղը զիջել են Չելսիին ու Բլումսբերիին: Այն ժամանակ բառասունից ցածր տարիք ունեցող դրողը ուշադրության չէր արժանանում, իսկ հիմա քսանհինգից բարձր կամիկական ֆիզուրա է: Մեր ժամանակ մենք ամաշուրմ էինք ցուցադրել մեր զգացմունքները, և ծիծաղելի երևալու սարսափը մեղմացնում էր հավակնատության որևէ դրսևորում: Չեմ կարծում, որ այն ժամանակների բոճեման առանձնապես հոգ էր տանում բարքերի խտություն մասին, բայց չեմ հիշում նաև այնպիսի անպահանջություն, ինչպիսին, հավանաբար, հիմա ցուցարկում են բոլորը: Մենք կեղծավոր չէինք համարում մեզ, երբ մեր անմտությունները ծածկում էինք լուսնյան քոզով: Իրերն իրենց

անուններով կոչելը սարտադիր չէր մեզ համար, և կանայք էլ ղեռ չէին վարժվել ինքնուրույնութան:

Սա ապրում էի Արևմտահայ կառավարման մոտ և օմնիբուսով երկարատև ճանապարհորդություններ էի կատարում դեպի հյուսիս-արևելք գրողների անհրաժեշտ նախքան իմ մեջ բազումություն կգտնեի դուրս գալու օրը, երկար ժամանակ փողոցում ետ ու առաջ էի բայում, և հետո սարսափից նվազելով մտնում էի մարդկանցով լի հեղձուցիչ սենյակ: Ինձ ներկայացնում էին մեկ այս, մեկ այն նշանավոր մարդուն, և ես, մինչև մաղբերիս արմատները կարմրելով, ուշադրությամբ լսում էի գրքիս մասին արած նրանց գովասանական խոսքերը: Ես զգում էի, որ սրամտություն էին սպասում ինձանից, բայց մինչև որե՛կ բան կմտածեի, երեկոն վերջանում էր: Շփոթմունքս թարցնելու համար հարևաններին թե՛ կամ վատ կտրամված բուսերբերու էի փոխանցում: Ուզում էի աննկատ մնալ, որպեսզի հանդիստ հետևեի այդ նշանավոր մարդկանց, լսեի նրանց խելացի զրույցը:

Հիշում եմ մարմնեղ, խտաբարո, խոշորաթիթ ու ընչաքաղց աչքերով կանանց, որոնց շրջագզեստներն ասպազեմքերի տեսք ունեին, և վտիտ մկնիկներ էի նմանվող, հեղ ձայնով ու խայթող հայացքով պառավ օրիորդներին: Կախարդվածի նման ես նայում էի, թե ինչպիսի համառություն, առանց ձեռնոցները հանելու նրանք կույ էին տալիս տապակած հացը և հետո մատներն անփութորեն սրբում իրենց աթոռների վրա, կարծելով որ ոչ ոք չի նկատում: Կահույքի համար դա, իհարկե, վատ էր, բայց տանտիրուհին իմ կարծիքով նույն կերպ էր վարվում, երբ հյուր էր լինում իր ծանոթների մոտ: Այդ կանանցից մի քանիսը հագնելով մեզին մոտայով և հավատացնում էին, թե շին ցանկանում անճաշակ երեւոյ միայն այն պատճառով, որ վեպեր են գրում: Եթե գեղեցիկ կազմվածք ունես, աշխատիր ընդգծել այն, իսկ փոքրիկ ոտքերի վրա նրբագեղ կոշիկները երբեք ոչ մի հրատարակչի շնն խանդարել քեղանից գնելու քո «արտադրանքը»: Մյուսներն, ընդհակառակը, թեթևամիտ համարելով նման տեսակետը, հագնում էին գործարանային արտադրանք և բարբարոսական զարդեղեն էին կրում: Որպես կանոն, տղամարդիկ բարեկիրթ տեսք ունեին և աշխատում էին հնարավորին շափ գրողների քիչ նմանվել: Նրանք ցանկանում էին բարձրաշխարհիկ մարդու տեսք ունենալ և առիթի գեպրում իրոք որ կարող էին պատկանելի ֆիրմայի գրասենյակային ծառայողի տեղ անցնել:

Նրանք միշտ էլ հոգնած էին երևում: Առաջ ես երբեք գրող չէի տեսել, և նրանք ինձ մի փոքր սարսուղիակ էին թվում, նույնիսկ ոչ բուրբուխի իրական:

Ինձ թվում էր նրանք փայլուն գրույց էին վարում և ես գարմանքով էի լսում, թե ինչպես էին անվանարկում իրենց գրչակից րնկերոջը, հենց որ սա թիվանքով դառնում էր դեպի իրենց: Արտիստիկ խառնվածքի տեր մարդկանց առավելությունն այն է, որ ընկերները նրանց սրախոսության առիթ են տալիս ոչ միայն իրենց արտաքին տեսքով կամ բնավորությամբ, այլ նաև ստեղծագործություններով: Սա համոզված էի, որ երբեք չեմ կարողանա մտքերս արտահայտել այնպիսի թեթևությամբ ու նրբորեն, ինչպես նրանք: Զրուցելն այն մասնակ սրվեստ էր համարվում: Դիպուկ, սրամիտ պատասխանը ավելի բարձր էր գնահատվում, քան շոգտագործող խորիմաստությունը և էպիգրամը, որ դեռ հիմարությունը սրամտության վերածելու մեխանիկական միջոց չէր դարձել, աշխուժացնում էր սալոնային զատարկարանությունները: Դժբախտարար սրամտությունն այդ փայլուն հանգեսից ոչինչ չեմ կարող հիշելու Քայց իմ կարծիքով խոսակցությունը միշտ էլ ավելի էր աշխուժանում, երբ այն վերաբերում էր մեր պրոֆեսիայի գուտ առևտրական կողմին: Որե՛կ նոր գրքի արժանիքները քննարկելուց հետո, բնականաբար, սկսում էինք խոսել, թե քանի օրինակ է նրանից վաճառվել, որքան կանխավճար է ստացել հեղինակը և զեռ որքան եկամուտ է բերելու գլխը: Հետո խոսք էր լինում հրատարակիչների մասին, մեկի առատաձեռնությունը համեմատվում էր մյուսի մյուսություն հետ. քննարկում էինք, թե նրանցից որի հետ է ավելի լավ գործ բռնել, նրա հետ, ով ավելի առատաձեռն էր, թե նրա, ով կարողանում էր անցկացնել ամեն տեսակի գիրք: Ոմանք կարողանում էին սեկյամել հեղինակին, ոմանք էլ՝ ոչ: Որոշ հրատարակիչներ լավ էին զրում ժամանակի ոգին, մի քանիսն էլ աչքի էին ընկնում իրենց հնամաշակությունով: Այնուհետև խոսք էր լինում առևտրական միջնորդների, մեկ համար նրանց ձեռք բերած պատվերների մասին, թեթևախոս խմբագիրների, նրանց անհրաժեշտ հոգվածների բնույթի մասին, այն մասին, թե որքան են վճարում հազար բառի համար և ինչպես, կանոնավոր էին վճարում հոնորարը, թե ձգձգում էին: Այդ բոլորը ինձ շափազանց ումանտիկ էր թվում: Ես ինձ զգում էի ինչ-որ գաղտնի եղբայրության անդամ:

Այն ժամանակ ոչ որ այնքան ուշադիր չէր իմ նկատմամբ, որքան Ռոզա Ուոթերֆորդը: Նրա մեջ տղամարդու խելքը գուգակցվել էր կենց ըմահածութեան հետ, իսկ նրա գրած վեպերը իրենց օրիգինալությամբ շփոթմունքի էին մատնում ընթերցողներին: Նրա տանն էր, որ ես առաջին անգամ հանդիպեցի Չարլզ Սթրիբլենդի կնոջը: Միսս Ուոթերֆորդը թէյի երեկո էր կազմակերպել, և նրա փոքրիկ սենյակը լեփ-լեցուն էր մարդկանցով: Ռոյորն աշխուժորեն զրուցում էին, իսկ ես, լուռ մի կողմ քաշված, ինձ շատ վատ էի զգում: Բայց շափազանց երկչոտ էի, որպեսզի հյուրերի սրնէ խմբի միանայի, որոնք, թվում էր, թե ամբողջովին կլանված էին իրենց սեփական գործերով: Միսս Ուոթերֆորդը, որպես հյուրասեր տանտիրուհի, շփոթմունքս նկատելով, ինձ օգնության հասավ:

— Դուք պետք է խոսեք միտիս Սթրիբլենդի հետ: Նա հիացած է ձեր գրքով:

— Իսկ ինչո՞վ է նա գրազվում,— հարցրեցի ես:

Ես գիտակցում էի իմ ագիտությունը, և եթե միտիս Սթրիբլենդը հանրաճանաչ գրող էր, ափելի լավ կլիներ, մտածում էի ես, նախքան նրա հետ խոսելը, համոզվելի դրանում:

Իր պատասխանը ափելի ապավորիչ դարձնելու համար Ռոզա Ուոթերֆորդը լրջությամբ խոնարհեց աչքերը:

— Միտիս Սթրիբլենդը նախաճաշ է տալիս հյուրերին, Եթե հաշտություն ունենաք, հրավերը պատրաստ է:

Ռոզա Ուոթերֆորդը ցինիկ էր: Կյանքը նրա համար վեպեր գրելու հիանալի առիթ էր թվում, իսկ հասարակությունը՝ անհրաժեշտ հում նյութ: Երբեմն այդ հում նյութից ընտրում էր նրանց, ովքեր հիանում էին նրա տաղանդով, հրավիրում էր իր մոտ և սրասուղ ընդունելություն ցուցաբերում: Բարեսրտորեն ծիծաղելով նշանավոր մարդկանց նկատմամբ ունեցած նորանց թուլությունների վրա, նա, այնուամենայնիվ, հմտորեն էր խաղում հուշակավոր գրողի իր դերը:

Ինձ ներկայացրին միտիս Սթրիբլենդին, և մենք տասր րոպեի շափ առանձին զրուցեցինք: Բացի հաճելի ձայնից ես նրա մեջ ուշադրության արժանի ոչ մի բան չնկատեցի: Միտիս Սթրիբլենդը ապրում էր վաթսիներսրում: Նրա բնակարանի լուսամուտները նայում էին կիսակառույց եկեղեցուն, և քանի որ նայն թաղա-

մասում էինք այրում, բարեկամաբար տրամադրվեցինք իրատ նկատմամբ: Բանակի ու նավատորմի հանրախանութը կապոզ օղակ է հանդիսանում բոլոր նրանց համար, ովքեր Քեմբրիջի և Սենթ-Ջեյմս պարկի միջև են ապրում: Միտիս Սթրիբլենդը հարցրեց իմ հասցեն, և մի քանի օր հետո ես նախաճաշի հրավեր ստացա:

Ես հազվադեպ էի հրավեր ստանում և ուրախությամբ ընդունեցի այն:

Երբ փոքր-ինչ ուշացած եկա (շափազանց շուտ ներկայանալու վախից ստիպված երեք անգամ պատվեցի եկեղեցու շուրջը), հյուրերն արդեն հավաքվել էին: Այնտեղ էին միսս Ուոթերֆորդը, միտիս Ջեյը, Ռիչարդ Քվայնինգն ու Ջորջ Ռոուզը, բոլորն էլ գրողներ: Գաբնանային գեղեցիկ օր էր, և հավաքվածները հիանալի տրամադրության մեջ էին: Խոսում էին ամեն տեսակի բաների մասին:

Միսս Ուոթերֆորդը, որի պատանեկան տարիների էսթետիկական պատկերացումների (խիստ կանաչ շրջազգեստ, ձեռքին նարգիզ) և հասուն տարիքի թեթևադիտության միջև անհամապատասխանություն էր ստեղծվել (բարձր կրունկներ և փարիզյան արդուզարդ), նոր գլխարկ էր կրում: Այդ հանգամանքը բարձր տրամադրություն էր ստեղծել նրա մոտ: Նա երբեք նման չարակամությամբ չէր արտահայտվել մեր ընդհանուր բարեկամների մասին: Միտիս Ջեյը համոզված լինելով, որ անպարկեշտությունը օրամտության ոգին է, շշուկով այնպիսի դատողություններ էր թույլ տալիս, որոնք կարող էին կարմրեցնել նույնիսկ ձյունասպիտակ սիտոցին: Ռիչարդ Քվայնինդը ինչ-որ հիմարություններ էր գուրս տալիս, իսկ Ջորջ Ռոուզը հպարտությամբ գիտակցելով, որ կարիք չունի փայլելու, քանի որ նրա օրամտությունները գրեթե առած էին դարձել, բերանը բաց էր անում միայն այն ժամանակ, երբ որևէ բան էր գնում այնտեղ:

Միտիս Սթրիբլենդը քիչ էր խոսում, բայց ընդհանուր խոսակցությանը մասնակցելու մեծ շնորհք ուներ. բավական է, որ գրույցն ընդհատվեր, նա ճիշտ ժամանակին արած որևէ դիտողությամբ նորից էր աշխուժացնում այն: Միտիս Սթրիբլենդը երեսուցյոթ տարեկան էր, բարձրահասակ, լիքը կազմվածքով, բայց ոչ դեղ: Գնդեցկությունը աչքի չէր ընկնում, բայց նրա թխավուն դեմքը հաճելի էր, հավանաբար ընդհանրապես աչքերի Մադերը սանրված էր խնամքով: և կարևոր էր նաև և վեցսենսանոց

75 x 76

НАСЛ

КОНЕЦА

Նանցից միայն նա էր, որ չէր շարժվել: ու ավելի պարզ, անբանազրոսիկ տեսք ունեւր:

Միսիս Սթրիբլենդի ճաշասենյակը կահավորված էր ժամանակի խիստ պահանջին համապատասխան: Պատերը երեսպատված էին բարձր սպիտակ տախտակադրվագներով ու կանաչ պատաններով, որոնց վրա կախված էին գեղեցիկ սև շրջանակներով Ուիսթլերի փորագրանկարները: «Ակնաթիթեռ» նախընտրված կանաչ վարագույրները խիստ ուղիղ գծով իջնում էին մինչև կանաչ գորգը, որի անկյուններում ստվերախիտ ծառերի մեջ ուրախ խաղում էին ժամանակի ընթացքում խուճապած ճագարները: անմիջապես զգացվում էր Վիլյամ Մորիսի՝ նկարների ազդեցությունը: Վառարանի դարակը դրվագազարդված էր հորանդական կապույտ ճենապակով: Այդ ժամանակներում Լոնգոնում կային հինգ հարյուրից ոչ պակաս ճաշասենյակներ, որոնք կահավորված էին նույն համեստ, արտիստիկ ու մուսլի ոճով:

Ես այնտեղից դուրս եկա միսս Ուոթերֆորդի հետ: Հիանալի օրն ու նրա նոր գլխարկը մեզ արամազրեցին մի փոքր շրջելու դրսուտում:

— աշալի ժամանակ անցկացրինք, — ասացի ես:

— Իսկ նախաճաշը դուր եկա՞վ ձեզ: Ես խորհուրդ եմ տվել նրան, եթե ցանկանում ես գրողներ ընդունել, լավ հյուրասիրություն պետք է կազմակերպես:

— Հիանալի խորհուրդ է, — պատասխանեցի ես: — Բայց նրա ինչի՞ն են պետք գրողները:

Միսս Ուոթերֆորդը թոթվեց ուսերը:

— Նա գտնում է, որ գրողները հետաքրքիր են և չի ուզում ետ մնալ մողայից: Խեղճ կի՞ն, շատ բարեհոգի է և կարծում է, որ մենք բոլորս էլ արտակարգ մարդիկ ենք: Մեզ նախաճաշով հյուրասիրելը հաճույք է պատճառում նրան, իսկ դա ոչ մի բանով չի վնասում մեզ: Դրա համար էլ ես համակրում եմ նրան:

Հետագարձ հայացք գցելով, ես կարծում եմ, որ միսիս Սթրիբլենդն, այնուամենայնիվ, ամենամեծն էր նշանավոր մարդկանց երկրպագուներից, որոնք սիրում էին հետապնդել իրենց որսին Հեմփսթեդի նրբաճաշակ բարձունքներից մինչև Չեյն-Ուոթի աննշան արվեստանոցները: Միսիս Սթրիբլենդը իր խաղաղ պատանեկությունը անց էր կացրել գավառում, և Լոնդոնի գրագարանից ուղարկված գրքերը հափշտակել էին նրան ոչ միայն իրենց սեփական ուսմանտիկայով, այլ նաև մայրաքաղաքի ու-

մանտիկայով: Նա ընթերցանության կրթոտ սիրահար էր (հաղվադեպ բան այս մարդկանց մոտ, որոնք ավելի շատ հետաքրքրվում են հեղինակներով, քան նրանց գրքերով, նկարիչներով, քան նրանց նկարներով) և սպրում էր երևակայական աշխարհում, օգտվելով այնպիսի աղատությունից, որ անմատչելի էր նրա համար ամենօրյա կյանքում: Եվ երբ ծանոթացավ գրողների հետ, նրան սկսեց թվալ, թե ընկել է մի թատերաբեմ, որն առաջներում միայն դահլիճից էր տեսել: Միսիս Սթրիբլենդը այնքան էր իդեալականացնում գրողներին, որ նրան իսկապես թվում էր, թե այցելելով կամ ընդունելով նրանց, ապրում է բուրդովին այլ, ավելի իմաստալից կյանքով: Այն կանոնները, որոնցով նրանք վարում էին իրենց կյանքի խաղը, չէին շփոթեցնում նրան, բայց երբեք մտքով անգամ չէր անցնում դրանց ենթարկել իր սեփական կյանքը: Նրանց ազատ բարձրը, ինչպես նաև հագնվելու անսովոր ձևը, անհեթեթ թեորհաներն ու պարագործները հրապուրում էին միսիս Սթրիբլենդին, բայց ոչ մի ազդեցություն չէին թողնում նրա համոզմունքների վրա:

— Իսկ միտքը Սթրիբլենդի գոյություն ունի՞, — հետաքրքրվեցի ես:

— Օ, իհարկե: Նա ինչ-որ գործ է անում Սիթիում: Կարծեմ բորսային միջնորդ է: Շատ տաղտկալի անձնավորություն է:

— Նրանք լա՞վ հարաբերությունների մեջ են:

— Պաշտում են իրար: Եթե միսիս Սթրիբլենդը ձեզ ճաշի հրավիրի, կծանոթանաք նրա հետ: Նրանք հազվադեպ են կողմնակի մարդկանց ճաշի հրավիրում: Սթրիբլենդը խաղաղ մարդ է և գրականությանը ու արվեստով բուրդովին չի հետաքրքրվում:

— Ինչո՞ւ միշտ հմայիչ կանայք ամուսնանում են ձանձրալի տղամարդկանց հետ:

— Որովհետև խելոք տղամարդիկ հմայիչ կանանց հետ չեն ամուսնանում:

Ես չկարողացա որևէ պատասխան գտնել և հարցրի.

— Երևի աներ ունի՞ միսիս Սթրիբլենդը:

— Այո, մի տղա, մի աղջիկ: Երկուսն էլ դպրոց են գնում: Խոսակցության նյութը սպառվեց, և մենք սկսեցինք այլ բաների մասին զրուցել:

Ամառվա ընթացքում ես հաճախ էի տեսնում միսիս Սթրիք-լենդին: Այցելում էի նրա նեղ-ընտանեկան նախաճաշերին և ավելի հանդիսավոր թիչի հավաքույթներին: Մենք անկեղծորեն համակրում էինք իրար: Ես շատ երիտասարդ էի և հնարավոր է, որ նրան շոյում էր արն միտքը, իբր զեկավարում է գրականու-թյան զովարին ասպարեզում կատարած իմ առաջին քայլերը, իսկ ինձ համար հաճելի էր, որ կար մեկը, ում հետ կարող էի կիսել իմ հոգսերը, համոզված լինելով, որ ինձ ուշադիր կլսեն և խելացի խորհուրդ կտան:

Միսիս Սթրիքլենդը կարեկցելու ընդունակություն ուներ: Հիա-նալի արժանիք, որ շատ հաճախ շարաշահվում է նրանց կող-մից, ովքեր գիտակցում են իրենց մեջ այդ շնորհքը.— դիվային արագությունը նեղում են իրենց բարեկամների դժբախտություն վրա, միայն թե կարողանան օգտագործել այն: Նրանք նավթի շատրվանի նման կարեկցանքի տարափ են տեղում իրենց զո-հերի վրա, ավելի խճճելով նրանց գործերը: Կան մարդիկ, որոնց կրծքի վրա այնքան արցունք է թափվել, որ ես չէի համարձակվի թրջել և իմով: Միսիս Սթրիքլենդը չէր շարաշահում իր արժա-նիքը: Նրա կարեկցանքն ընդունելիս զգում էի, որ դա միայն ուրախություն է պատճառում նրան: Երբ ես այդ մասին պա-տանեկան անմիջականությամբ պատմեցի Ռոդա Ուոթթերդոր-ֆին, նա ասաց.

— Հաճելի է կաթ խմելը, հատկապես բրենդիով, բայց կա-թից ազատվելը միայն ուրախություն է պատճառում կովին: Եստ տհաճ բան է լցված կուրծքը:

Միսիս Սթրիքլենդի մեջ ինձ մի ուրիշ բան էլ էր զուր գա-լիս՝ վայելչորեն ապրելու նրա կարողությունը: Նրա բնակարանը միշտ մաքուր էր ու կոկիկ, զարդարված երփներանգ ծաղիկ-ներով, և հյուրասենյակի կրեստնը՝ չնայած իր խիստ նախշերին, պայծառ ու զվարթ տեսք ուներ: Արվեստով կահավորված փոք-րիկ ճաշասենյակում հաճելի էր ճաշելը. սեղանը հիանալի սպասա-քավորված էր, երկու սիրունատես սպասուհիները՝ վայելչորեն հագնված, ուտելիքը՝ լավ պատրաստված: Անմիջական զգաց-վում էր, որ միսիս Սթրիքլենդը հրաշալի տանտիրուհի է և անկասկած նաև հիանալի մայր: Հյուրասենյակի պատերից կախ-ված էին նրա երեխաների լուսանկարները: Որդին՝ Ռոբերտը,

տասնվեցամյա մի պատանի, սովորում էր Ռեգբիի կոլեջում: Մի լուսանկարում նա ֆլանելի սպորտային կոստյումով էր, մեկ ուրիշում՝ բարձրօձիք ֆրակով: Մոր նման նա էլ ուներ բաց ճակատ և գեղեցիկ մտախոհ աչքեր: Ընդհանրապես թողնում էր մաքրասեր, առողջ և բոլորովին սովորական պատանու տպա-վորություն:

— Չեմ կարծում, որ նա շատ խելացի է.— ասաց միսի-ս Սթրիքլենդը մի անգամ, երբ ես նայում էի նրա լուսանկարին,— բայց նա բարի և շատ լավ տղա է:

Ազդիկը տասնչորս տարեկան էր: Նա մոր նման ուներ թուխ ու խիտ մազեր, որոնք այնքան թափվում էին ուտերին: Նրա դեմքը նույնպես բարի էր, աչքերը՝ անվրդով:

- Նրանք երկուսն էլ ձեզ շատ նման են,— ասացի ես:
- Ճիշտ է, նրանք ավելի շատ ինձ են նման, քան հորը:
- Ինչո՞ւ ինձ չեք ծանոթացնում ձեր ամուսնու հետ,— հարցրեցի ես:

— Իսկ դուք շա՞տ եք ցանկանում:
Նա ժպտաց, — նրա ժպիտը իրոք հմայիչ էր, — և մի փոքր կարմրեց: Զարմանալի էր, որ նրա տարիքի կինը այդքան հեշ-տություն վրա էր կարմրում: Ըստ երևութիին, նրա ամենամեծ հմայ-քը միամտությունն էր: Վ

— Նա գրականությանը խորթ մարդ է, իսկական քաղցրնի,— ասաց միսիս Սթրիքլենդն առանց արհամարհանքի որևէ նշանի, ավելի շուտ եռանդազին քնքշանքով, կարծես ցանկանալով պաշտպանել ամուսնուն իր բարեկամների հարձակումներից:

— Նա ծառայում է բորսայում, իսկական բորսային միջ-նորդ է: Նա ձեզ մահու շափ կձանձրացնի:

- Ձեզ է՞լ է ձանձրացնում:
- Ոչ, չէ որ նա իմ ամուսինն է: Ես շատ եմ կապված նրա հետ:

Միսիս Սթրիքլենդը ժպտաց, աշխատելով թաքցնել իր շփոթ-մունքը: Ինձ թվաց, թե նա վախենում է, որ Ռոդա Ուոթթերդորֆ ողով որևէ հեգնանք թույլ կտամ: Նա լուեց մի պահ, և աչքերը լցվեցին քնքշանքով:

— Չարլին իրեն հանճար չի ձևացնում, նույնիսկ բորսայում շատ փող չի վաստակում, բայց նա չափազանց բարի և լավ մարդ է:

- Ինձ թվում է, որ կհամակրեմ նրան:
- Որնէ առիթով ես ձեզ ճաշի կհրավիրեմ մեզ մոտ, իսկ եթէ ձանձրանաք, մեղադրեք ինքնեզ ձեզ:

ԳԼՈՒԽ 6

Երբ վերջապես հանդիպեցի Չարլզ Սթրիբլինդին, հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ ինչպես հարկն է շտապացա նրա հետ: Միտիս Սթրիբլինդը մի առավոտ ինձ գրութուն ուղարկեց, տեղեկացնելով, որ այդ երեկո հյուրեր է ունենալու, և քանի որ նախօրոք հրավիրվածներից մեկը չէր գալու, առաջարկում էր ինձ զբաղեցնել նրա տեղը: Նա գրում էր. «Պարտքս եմ համարում զգուշացնել, որ մահու շափ կձանձրանաք: Դա անխուսափելի է: Այնուամենայնիվ, եթե գաք, անշափ երախտապարտ կլինեմ ձեզ: Մենք հարմար առիթ կգտնենք իրար հետ զրուցելու»:

Մեր բարեկամական հարաբերությունները ինձ ստիպեցին ընդունել հրավերը:

Երբ միտիս Սթրիբլինդը ինձ ներկայացրեց ամուսնուն, նա բավական անտարբերութեամբ սեղմեց ձեռքս: Աշխուժորեն շրջվելով դեպի ամուսինը, նա կատակով նկատեց:

— Ես հրավիրել եմ նրան ցույց տալու, որ իրոք ամուսին ունեմ: Ինձ թվում է, նա սկսել էր կասկածել դրանում:

Սթրիբլինդը բազաբավարութեամբ ժպտաց: Այդպես են ընդունում այն սրախոսությունը, երբ գրանում ոչ մի ծիծաղելի բան չեն տեսնում: Նոր հյուրերը գրավեցին տանտիրոջ ուշադրությունը, և ես անուշադրության մատնվեցի:

Երբ վերջապես բոլորը հավաքվեցին, ես նույնպես գրույցի բնվեցի մի կնոջ հետ, որին ինձ խնդրել էին «զբաղեցնել» ճաշի ժամանակ: Հանկարծ մտքովս անցավ, թե ինչու բազաբակիրթ մարդը տարօրինակ հնարամտություն է գործադրում իր կարճատև կյանքը տաղտկալի ձեռնարկությունների վրա վատնելու: Դա այն հավաքույթներից մեկն էր, որ մարդու ակամայից զարմանք էր պատճառում, թե ինչու է տանտիրուհին հրավիրել հյուրերին, և ինչու էին հյուրերը նեղություն բաշխել ներկայանալու: Հավաքվել էր տասը մարդ: Նրանք հանդիպել էին անտարբերությամբ և բաժանվելու էին թեթևության ղզացումով: Նման

հավաքույթը զուտ աշխարհիկ պարտականություն կատարում էր: Սթրիբլինդները պարտավոր էին ճաշի հրավիրել: մարդկանց, որոնք իրենց բուրգովին չէին հետաքրքրում: Նրանք իրենց պարտքն էին կատարում, հյուրերը՝ իրենց: Ինչու: Որպեսզն խուսափեն սեղանի շուրջը tête-à-tête նստելու ձանձրութեց, որպեսզի ազախնին հանգստանալու հնարավորություն տալին, որովհետև մերժելու պատճառ չունեին կամ էլ ճաշի «պարտքի» տակ էին ընկել:

Անյակում բավականին նեղվածք էր: Սեղանի շուրջը իրենց կանանց հետ նստած էին հայտնի փաստարանն ու պետական պաշտոնյան, միտիս Սթրիբլինդի բույրը ամուսնու՝ գնդապետ Մակ-Էնդրյուի հետ, և պառլամենտի մի անդամի կինը: Քան, որ պառլամենտի անդամը այդ օրը չէր կարող բացակայել պառլամենտից, նրա փոխարեն ինձ էին հրավիրել: Հավաքույթը ինչ-որ փրուն ծանրակշռություն ուներ: Կանայք շափից ավելի շինծու տեսք ունեին լավ հագնված լինելու համար, և շափից ավելի վստահ իրենց դիրքին, հետաքրքիր լինելու համար: Տղամարդիկ ծանրակշռության իսկական մարմնացում էին: Նրանք բույրն էլ շափազանց ինքնագոհ էին երևում:

Խոսում էին սովորականից ավելի բարձրածայն, ենթարկվելով հավաքույթն ավելի աշխույժ դաբձնելու քնազական ցանկությունը, և սենյակում մեծ ազմուկ էր տիրում: Բայց ընդհանուր գրույցը մի տեսակ չէր ստացվում: Յուրաքանչյուր մարդ խոսում էր իր հարևանի հետ. իր աչ կողմում նստած հարևանի հետ խորտիկներ, ապուր և ձուկ ուտելիս, ձախ կողմում նստածի հետ՝ տապակած միս, քաղցրավենիք ու մրգեղեն ճաշակելիս: Խոսում էին քաղաքական դրություն, գուֆի, իրենց երեխաների և վերջին ներկայացման մասին, թագավորական ակադեմիայում ցուցադրված նկարների, եղանակի և ամառվա ծրագրերի մասին: Խոսակցությունը ոչ մի վաղիցան չէր ընդհատվում, և ազմուկն ավելի էր մեծանում: Միտիս Սթրիբլինդը հպարտանալու իրավունք ուներ՝ ճաշկերույթը հաջող էր անցնում: Նրա ամուսինը արժանապատվությամբ էր կատարում տանտիրոջ դերը: Միայն շատ լուակցաց էր, և երեկոյի վերջում ինձ թվաց, թե նրա երկու հարևանուհիների դեմքին հոգնածության արտահայտություն երևաց: Ըստ երևույթին նա ձանձրացնում էր նրանց: Մի երկու անգամ միտիս Սթրիբլինդն անհանգիստ հայացք գցեց նրա վրա: Վերջապես նա վեր կացավ, և կանայք նրա ետևից խմբով

դուրս եկան սենյակից: Սթրիբլենդը նրանց ետևից փակեց դուռը և, անցնելով սեղանի մյուս ծայրը, նստեց փաստաբանի ու պետական պաշտոնյայի միջև: Նա բոլորիս բաժանակները պորտփեյն չցրեց և սիգարաներ առաջարկեց: Գինին փաստաբանին շատ դուր եկավ, և Սթրիբլենդը պատմեց, թե որտեղից էր գնել այն: Սկսեցինք խոսել գինիների ու ծխախոտի մասին: Հետո փաստաբանը մեզ ներկայացրեց այն դատական գործը, որ ինքն էր վարում, իսկ գնդապետը սկսեց շատախոսել պոլոյի մասին: Ես ասելու ոչինչ չունեի և, լուռ նստած, քաղաքավարությունից գրգված աշխատում էի ձեռքներս, թե հետաքրքրությունը լսում եմ նրանց: Եվ քանի որ ոչ մեկը չէր նկատում ինձ, սկսեցի վննել Սթրիբլենդին: Նա ավելի բարձրահասակ էր, քան կարծում էի, և, չգիտեմ ինչու, ավելի նիհար ու անբարեսև էի պատկերացնում նրան: Իրականում Սթրիբլենդը լայնաթիկունք ու ծանրամարմին էր, խոշոր ոտքերով ու մեծ ձեռքերով, երեկոյան կոստյումը պարկի պես էր նստել նրա վրա: Ինչ-որ բանով նա զուգված կառապանի էր հիշեցնում: Սթրիբլենդը քառասուն տարեկան տղամարդ էր: Ոչ գեղեցիկ էր, ոչ էլ տգեղ, դիմագծերը բավական համաչափ էին, բայց սովորականից ավելի խոշոր լինելով անբարենպաստ սովորություն էին թողնում: Նրա մարտի սափարփած լայն դեմքը տհաճորեն մերկ էր թվում: Մազերը շիկակարմիր էին, կարճ կտրված, աչքերը ոչ այն է կապույտ էին, ոչ այն է՝ գորշ: Մի խոսքով, շատ սովորական արտաքինով մարդ էր: Այժմ ինձ հասկանալի էր, թե ինչու միսիս Սթրիբլենդը նրա ներկայությամբ իրեն ճնշված էր զգում: Այգայիսի ամուսին չէ, որ ցանկանում էր մի կին, որը ձգտում էր գրողների ու արվեստագետների շրջանում գիրքի հասնել: Սթրիբլենդը բոլորովին զուրկ էր աշխարհիկ փայլից, բայց դա՛ չէր կարևորը, նա նուրբիակ որևէ տարօրինակությամբ աչքի չէր ընկնում: Պարզապես մեղմաբարո, ձանձրալի, ավելի և սովորական անձնավորություն էր: Հնարավոր է, որ նա հիացմունքի արժանի հատկանիշներ ուներ, բայց այնուամենայնիվ ինչ-որ վանող բան կար նրանում: Նա զրոյի էր հավասար: Թեև ուղի հասարակության օրինավոր անդամ էր, լավ ամուսին ու բորսային աղելիվ միջնորդ, բայց շարժեր ժամանակ կորցնել նրա վրա:

Սեզոնն արդեն վերջանում էր, և իմ բոլոր ծանոթները մեկնելու պատրաստություն էին տեսնում: Միսիս Սթրիբլենդը իր ընտանիքով Նորֆոլկ էր գնում: Այնտեղ, ծովափին, նրա երեխաները կարող էին հաճելի ժամանակ անցկացնել, իսկ ամուսինը՝ գոլֆ խաղալ: Մենք հրաժեշտ ավելցիկը իրար և պայմանավորվեցինք հանգիստի աշխարհ: Բայց մեկնելուս նախօրյակին խանութի ելքի մոտ պատահաբար հանգիստիցի նրան երեխաների հետ: Նա էլ ինձ նման լոնգսից մեկնելուց առաջ իր վերջին գնումներն էր կատարում, և ինձ նման հոգնել ու շոգել էր: Առաջարկեցի գնալ գրոսայգի և պողպատյակ ուտել:

Միսիս Սթրիբլենդն ըստ երևույթին ուրախ էր, որ հնարավորություն ունի ցույց տալու ինձ իր երեխաներին, և սիրով բնորոշեց առաջարկս: Նրա երեխաները, կյանքում ավելի գրավիչ էին, քան լուսանկարում, և միսիս Սթրիբլենդը իրավամբ հպարտանում էր նրանցով: Ես դեռ շատ երիտասարդ էի և նրանք առանց ինձանից քաշվելու շատախոսում էին ամեն ինչի մասին: Նրանք հրաշայի, առողջ երեխաներ էին: Եվ ծառերի տակ նստելը նույնպես հաճելի էր:

Մի ժամ հետո միսիս Սթրիբլենդը կառք նստեց և երեխաների հետ գնաց տուն, իսկ ես ծուլորեն շարժվեցի դեպի ակումբ: Միզուցեց մենակությունից էր, որ ես այդ օրը ինչ-որ նախանձ զղացի ընտանեկան բարեկեցության նկատմամբ, որին քիչ առաջ էի սկանառես եղել: Հավանաբար նրանք շատ էին սիրում իրար, ունեին իրենց մասնավոր, կողմնակի մարդու համար բոլորովին անհասկանալի կատակները, որոնք ուշաթափվելու շափ զվարճություն էին պատճառում նրանց: Եթե Չարլզ Սթրիբլենդին դատելու լինենք այն շափանիշով, որն ամեն ինչից բարձր է դասում խոսքի փայլը, հնարավոր է, որ նա ձանձրից բարձր էր, սակայն նրա ինտելեկտը համապատասխանում էր ապրած միջավայրին, իսկ դա ոչ միայն որոշակի հաջողություն էր, այլ նաև երջանկություն երաշխիք է: Միսիս Սթրիբլենդը հիանալի կին էր և սիրում էր ամուսնուն: Ես պատկերացնում էի, ին ինչպես էր անցնում նրանց ոչնչով շխտոված, աղնիվ, խսկաղ և, շնորհիվ մեծացող հիանալի երեխաների, որոնք կոչված էին շարունակելու իրենց ցեղի ու դասի առողջ ավանդույթները, լավանդակալից կյանքը: Նրանք հանգիստ կապրեն մինչև խոտ

ծերութիւն, հասունացած կտեսնեն իրենց երեխաներին, ինչպես հարկն է կամուսնացնեն որդուն մի գեղեցիկ աղջկա, ապագա առողջ երեխաների մօր հետ, իսկ աղջկան մարդու կտան մի գեղեցիկ, արժանավոր երիտասարդի, շատ հավանական է զինվորականի Եվ վերջապես խոր ծերութիւն մեջ, երեխաներից ու թոռներից սիրված, երջանիկ, բարեկեցիկ և ոչ անօգտակար կյանք ապրելուց հետո կանցնեն հավիտենութիւն գիրկը:

Ըստ երևույթին այդպիսին է անհամար զույգերի կյանքի պատմութիւնը, և նման կյանքը իր յուրօրինակ գրավչութիւնն ունի: Այն հիշեցնում է մեզմ առվակի, որը խաղաղ հոսում է կանաչ մարգագետիններով ու խիտ ծառերի ստվերների տակով այնքան ժամանակ, մինչև թափվի անեղջր ծով, իսկ ծովն այնքան հանդարտ է, այնքան խաղաղ ու անտարբեր, որ ակամայից անորոշ թախիծ ես զգում: Գուցե իմ բնավորութիւնն տարօրինակութիւնն է միակ պատճառը, որ դեռ այն ժամանակ ցույց էր տալիս իրեն, բայց մեծամասնութիւնն նման ապրելակերպը միշտ էլ անհամ է թվացել ինձ: Ես ընդունում էի դրա սոցիալական արժեքը, կանոնավոր երջանկութիւնը, սակայն իմ մեջ եռացող արշուներ ձգտում էր այլ, անհանգիստ կյանքի: Այդքան հեշտ ձեռք բերված հաճույքները վախեցնում էին ինձ: Թող խոթեր ու նենգ ծանծաղուտներ հանդիպեն իմ ճանապարհին, միայն թե այդքան միապաղաղ շանցնի իմ կյանքը, միայն թե ճաշակեմ շկանխատւ սվածի ուրախութիւնը:

ՔԱՌԻՆ 8

Կարդալով այն ամենը, ինչ գրել եմ Սթրիքլենդների մասին, ևս տեսնում եմ, որ դրանք բավական ազոտ են ստացվել: Ինձ չի հաջողվել այնպիսի բնորոշ գծեր հաղորդել նրանց, որոնք գրքի հերոսներին ստիպում են ապրել իրենց սեփական, առաջ կյանքով: Ենթադրելով, որ դա իմ մեղքն է, երկար ժամանակ արպտում էի ուղեղս, աշխատելով այնպիսի առանձնահատկութիւններ վերհիշել, որոնք կարողանային կենդանութիւնն հաղորդել նրանց: Ես համոզված եմ, որ ավելի արտահայտիչ կռարձների իմ հերոսներին, եթե նրանց կողմից որևէ սիրված խոսք կամ տարօրինակ սովորութիւնն օգտագործեի, իսկ այսպես նրանք որմագորգի խոսնացած պատկերների են նման, ձուլվել

են ֆոնի հետ, հեռվից բուրբոնի տեսքից զուրկ են թվում և ընկալվում են որպես միայն աչքին հաճելի էփանագին նկար: Իմ միակ արդարացումը նրանում է, որ նրանք հենց այդպիսի սպավորութիւնն էին թողել ինձ վրա: Ինչ-որ անորոշութիւն կար նրանց մեջ, որ հատուկ է այն մարդկանց, ովքեր հանդիսանալով սոցիալական օրգանիզմի մասնիկը, գոյութիւն ունեն միայն նրա մեջ ու նրա շնորհիվ: Նրանք հիշեցնում են մեր մարմնի բշիշկներին, որոնք անհրաժեշտ են, բայց քանի դեռ առողջ են, չեն նկատվում մեր կողմից: Սթրիքլենդների ընտանիքը սովորական բուրժուական ընտանիք էր: Հաճելի, հյուրասեր, երկրորդ կարգի գրական առյուծների նկատմամբ անշար մոլութիւն ունեցող կին, բավական ձանձրալի ամուսին, որն ազնվորեն կատարում էր իր պարտականութիւնները, այնտեղ, որտեղ նախախնամութիւնը դրել էր նրան, և երկու սիրունիկ, առողջ երեխաներ: Ավելի սովորական ընտանիք դժվար է պատկերացնել: Նրանց մեջ չկար որևէ բան, որ գրավեր հետաքրքրասերի ուշադրութիւնը:

Երբ հիշում եմ այն ամենը, ինչ պատահեց հետագայում, ինձ հարց եմ տալիս, մի՞թե այնքան հիմար էի, որ Սթրիքլենդի մեջ չնկատեցի մի բան, որ տարբերք նրան սովորական քաղքենուց: Հնարավոր է: Տարիների ընթացքում ես սկսեցի ավելի լավ նանաչել մարդկանց, բայց նույնիսկ այն փորձը, որ ձեռք եմ բերել, եթե Սթրիքլենդին առաջին անգամ հանդիպելիս ունենայի, համոզված եմ, որ նույն ձեռով կվարվեի: Միայն այն տարբերութիւնը, որ ավելի լավ ճանաչելով մարդուն, այնքան չէի զարմանա, լսելով այդ նորութիւնն այնտեղ սկզբին Լոնդոն վերադառնալով:

Վերադառնալուս հաջորդ օրը, Ջերմին-Սթրիքլում պատահաբար հանդիպեցի Իոզա Ուոթերֆորդին:

— Դուք շատ աշխույժ տեսք ունեք, — նկատեցի ես, — ի՞նչ է պատահել:

Նա ծայտաց, և նրա աչքերն ինձ արգեն ծանոթ շարախնդութիւնը փայլեցին: Դա նշանակում էր, որ նա իր բարեկամներէից մեկի մասին ինչ-որ սկանդալային պատմութիւն է լսել, և այդ դրասեր կնոջ բոլոր բնագոյներն արթնացել էին:

— Դուք ծանոթ եք Չարլզ Սթրիքլենդին, այնպես չէ՞:

Ոչ միայն նրա դեմքը, այլ նաև ամբողջ ֆիզուրան եռանդ էր արտահայտում: Ես զլխով հավանութիւնն նշան արեցի և մտա-

ծեցի երեի խեղճը օմնիրուսի տակ է ընկել կամ էլ բորսայում տանուլ է տվել իր ամբողջ կարողությունը:

— Մարտափելի է, չէ՞, նա լքել է կնոջը:

Միսս Ուոթերֆորդը, իհարկե, զգում էր, որ Ջերմին-Սթրիթի մայրը այն տեղը չէ, ուր կարելի էր շարունակել խոսակցությունը, և արտիստիկ բնավորության տեր լինելով, շշմեցրեց ինձ միայն մերկ փաստով, հայտարարելով, որ ոչ մի մանրամասնություն չգիտի: Իհարկե, անարդարացի կլինեք նրա նկատմամբ մտածել, թե այնպիսի մանրուք, ինչպիսին փողոցային երթևեկությունն է, կարող էր խանգարել նրան ամեն ինչ մանրամասն պատմելու: Քայց նա անդրդվելի էր:

— Չեզ ասում եմ, որ ոչինչ չգիտեմ,— պատասխանեց նա իմ հուզված հարցումը: Երբեք և, ուսիրը թոթվելով, ավելացրեց,— ինձ թվում է, ինչ-որ սիրունիկ մատուցողուհի լքել է սրճարանի իր աշխատանքը:

Նա ժպտաց և պատճառաբանելով, որ ատամնաբույժը սպասում է իրեն, աշխույժ քայլերով հեռացավ: Ես ավելի շատ հետաքրքրված, քան վշտացած էի: Այդ ժամանակ ես դեռ կյանքի փչ չէի փորձ ունեի և ինձ շատ հուզեց, որ ժանոթներիս շրջանում պատահել է մի բան, որ ասոջ միայն գրքերում էի կարդացել: Չեմ վարչեզում, տարիների ընթացքում ես վարժվեցի նման զեպտերի հանդիպել իմ շրջապատում, բայց այդ ժամանակ դա ծանր ապավորություն թողեց ինձ վրա: Սթրիթլենդը բուռնաուն տարեկան էր և զզվելի էր, որ նրա տարիքի մարդը անձնատուր էր եղել սիրային արկածների Պատանու մեծամտությունները ևս գտնում էի, որ երեսունհինգ տարեկանից հետո չեն սիրահարվում, եթե չեն ուզում ծիծաղելի երևալ: Այդ նորությունը ինձ էլ էր անհարմար գրություն մեջ դնում, որովհետև գլուզից միսիս Սթրիթլենդին գրել էի, որ շուտով Լոնդոն կվերադառնամ և անմիջապես կգնամ իր հետ մի բաժակ թեյ խմելու, եթե, իհարկե, չի սուտարկում: Ես խոստացել էի հենց նույն օրը գնալ, բայց նրանից պատասխան չէի ստացել: Յանկանո՞ւմ էր արդյոք միսիս Սթրիթլենդը տեսնել ինձ, թե՛ ոչ: Եստ հավանական էր, որ նման հուզմունքի պահին նա մոռացել էր իմ նամակի մասին, և ես ավելի խելամիտ վարված կլինեի, եթե չզնայի: Մյուս կողմից, հնարավոր է, որ նա ուզում էր գաղտնիք պահել այդ պատմությունը և իմ կողմից անտակաություն կլինեք ցույց տալ, որ այդ անսովոր նորությունը ինձ էլ էր հասել: Ես վախենում էի

վիրավորել նման սիրալիր կնոջ զգացմունքները և միաժամանակ վախենում էի նաև աներես երևալ: Ինձ համար պարզ էր, որ նա շատ է տառապում, բայց չէի ցանկանում տեսնել նրա վիշտը, քանի որ ոչնչով չէի կարող օգնել: Եվ միաժամանակ սրտանց ցանկանում էի տեսնել, թե ինչպես էր նա տանում այդ հարվածը, շնայած ամաշում էի իմ հետաքրքրափրությունից: Մի խոսքով չգիտեի ինչ անել:

Վերջապես հասկացա, որ կարող էի ներկայանալ այնպես, իբր ոչինչ չգիտեմ, և ազախնի միջոցով իմանալ կամենում է սրդոք միսիս Սթրիթլենդը տեսնել ինձ: Դա հնարավորություն կտար նրան մերժել ինձ: Բայց ես այնքան էի շփոթվել, որ երբ նախօրոք պատրաստած ֆրագը ասացի ազախնին և սպասեցի պատասխանի, լարեցի բոլոր ուժերս, որպեսզի չփախչեմ: Ազախինը վերադարձավ: Շուգմունքից ինձ թվաց, թե նրան արդեն հայտնի է այն ամբողջ աղետը, որ պատահել էր այդ տանը:

— Չէի՞ք կամենա անցնել այստեղ, սրբ,— ասաց նա:

Ես նրա ետևից հյուրասենյակ մտա: Վարագույրները գրեթե բաշված էին: Միսիս Սթրիթլենդը նստած էր մեջքով դեպի լույսը: Նրա փեսան, գնդապետ Մակ-Էնդրյուն բուխարու շվառված կրակի մոտ կանգնած տաքանում էր: Ես շափազանց անհարմար զգացի: Ինձ թվաց, թե իմ հանկարծակի ժամանումը անուկնկալի էր բերել նրանց և միսիս Սթրիթլենդը պատվիրել էր ինձ ներս հրավիրել միայն այն պատճառով, որ մոռացել էր մերժում գրել: «Իմ հանկարծակի հայտնվելը,— մտածեցի ես,— զայրացրել է գնդապետին»:

— Ես բոլորովին համոզված չեմ, որ սպասում եք ինձ,— ասացի ես, աշխատելով անբռնազրոսիկ երևալ:

— Իհարկե, սպասում էի: Աննան հիմա թեյ կբերի մեզ...

Նույնիսկ կիսամութ սենյակում նկատեցի, որ միսիս Սթրիթլենդի աչքերը կարծրել էին արտասուքներից, իսկ գեմքը, որ միշտ էլ փոքր-ինչ գունատ էր, զորը հողազույն էր դարձել:

— Հիշո՞ւմ եք իմ քենակալին: Եթե չեմ սխալվում, այստեղ ծանոթացաք, դարձանք:

Մենք սեզմեցիներ իրար ձեռք: Ես այնքան էի շփոթվել, որ ոչինչ չկարողացա ասել, բայց միսիս Սթրիթլենդը ինձ օգնության հասավ: Նա հարցուփորձ արեց, թե ինչպես անցկացրի ամառը և շնորհիվ նրա մի կերպ շարունակեցի խոսակցությունը,

մինչև թեյ մատուցեցին: Գնդապետը վիսկի և սոդաջաշուր խընդ-
րեց:

— Ձեզ էլ խորհուրդ կտայի վիսկի խմել, էմի,— ասաց նա:
— Ոչ, ես թեյ եմ ուզում:

Գա առաջին ակնարկին էր այն մասին, որ ինչ-որ տհաճ բան է պատահել: Ես ձեռքերի, թե չեմ լսում և ամեն ինչ արեցի, որպեսզի միտիս Սթրիքլենդին խոսակցություն մեջ ներգրավեմ: Գնդապետը, որ դեռ կանգնած էր բախարու մոտ, ոչ մի բառ չարտասանեց: Ինձ հետաքրքրում էր, թե վերջապես երբ կկարողանամ հրաժեշտ տալ և ինչու էր միտիս Սթրիքլենդը ընդու-
նել ինձ:

Հյուրասենյակում ծաղիկներ չկային և ամեն տեսակի մանր-
մունք իրերը, որ հավաքել էին ամառվա ընթացքում, դեռ չէին
դրել իրենց տեղը. այդ սենյակը, որ միշտ հարմարավետ էր
եղել, այնքան խստաբարո և մոռյլ տեսք ուներ, որ ինչ-որ
աւրորինակ զգացում էր համակում մարդու, կարծես պատից
այն կողմ հանգուցյալ էր պառկած: Ես վերջացրի թեյս:

— Սիգարետ ուզո՞ւմ եք,— հարցրեց միտիս Սթրիքլենդը:
Նա հաշեց շուրջը, փնտրելով տուփը, բայց աչք չէր երևում:

— Ըստ երևույթին սիգարետ չունենք:

Հանկարծ նա սկսեց հեկեկալ և դուրս վազեց սենյակից:

Ես աչքել էի: Հավանաբար սիգարետների բացակայությունը
ինչ-որ հիշողություն արթնացրեց նրա մեջ, և այն նոր զգացումը,
որ հիմա արդեն տան մասին հոգացող չկա, անսպասելի ցավ
պատճառեց նրան: Նա հասկացավ, որ նախկին կյանքը մեկընդ-
միշտ վերջացած է: Այլևս հնարավոր չէր պահպանել աշխարհիկ
պայմանականությունները:

— Իմ գնալու ժամանակն է,— ասացի ես գնդապետին և վեր
կացա:

— Ձեզ երևի արդեն հայտնի է, որ այդ սրիկան լքել է նրան,—
բղավեց նա զայրացած:

Մի պահ վարանեցի:

— Այո, ինձ ակնարկել են, որ ինչ-որ անախորժություն է
պատահել նրանց:

— Նա փախել է: Ինչ-որ կնոջ հետ Փարիզ է գնացել, առանց
կոպեկի թողնելով էմիին:

— Սրտանց ցավում եմ,— ասացի ես, շիմանալով ուրիշ ինչ
ասել:

Գնդապետը մի շնչով խմեց իր վիսկին: Նա բարձրահասակ,
նիհար, սպիտակած մազերով ու կախ ընկած բեղերով մարդ
էր: Աչքերը կապույտ էին, շրթունքները՝ թառամած: Նախորդ
հանդիպումից իմ հիշողության մեջ միայն նրա անմիտ դեմքն
էր տպավորվել: Հիշում էի նաև, թե նա ինչպիսի հպարտու-
թյամբ էր պատմում, որ նախքան պաշտոնաթող լինելը, տասը
տարի շարունակ շարաթը երեք անգամ պոլո է խաղացել:

— Իմ կարծիքով, միտիս Սթրիքլենդը հիմա ինձանով զբաղ-
վելու բուրոգովին տրամադրություն չունի,— ասացի ես:— Հա-
ղորդեցեք նրան, որ շատ եմ ցավում իր համար և ինձ երջանիչ
կհամարեմ, եթե կարողանամ որևէ բանով օգտակար լինել:

Գնդապետը նույնիսկ չսեց ինձ:

— Չգիտեմ, թե ինչ է լինելու նրան: Բացի այդ, նա երևիսա-
ներ ունի: Ինչո՞վ են նրանք ապրելու: Օգո՞ւմ: Տասնյոթ տարի

— Տասնյոթ տարի: Ի՞նչ եք ուզում ասել զբանով:

— Նրանք տասնյոթ տարվա ամուսիններ էին,— պատասխա-
նեց նա կտրուկ:— Սթրիքլենդը ինձ երեք դուր չի եկել: Իհար-
կե, նա իմ քենակալն էր, և ես ոչինչ չէի կարող ասել: Ձեր կար-
ծիքով նա չենտլմե՞ն է: Էմիին չպետք է ամուսնանար նրա հետ:

— Մի՞թե դա վերջնականապես վճռված է:

— Էմիին մնում է միայն բաժանվել նրանից: Ես նրան այդ-
պես էլ ասացի. «Անմիջապես խնդրագիր գրիր բաժանման մա-
սին, էմի: Գա ձեր պարտքն է ձեր և երեսնաների առջև: Թող
նա աչքիս շերևա: Այնպես կթրթակեմ, որ ուշքի չգա:

Ակամայից մտքովս անցավ, որ գնդապետ Մակ-Էնդրյուսի՝
չէր հաջողվի այդքան հեշտությամբ կատարել իր խոստումը
(Սթրիքլենդը ամբակազմ տղամարդ էր), բայց լռեցի: Շատ
ցավալի է, որ անարգված առաքինությունը վիճակված չէ
պատժել հանցավորին: Ես երկրորդ անգամ փորձեցի հրաժեշտ
տալ, երբ միտիս Սթրիքլենդը ներս մտավ: Նա հասցրել էր սրը-
բել արցունքները և պուդրայնել քիթը:

— Խնդրում եմ ներքե, չկարողացա ինձ զսպել,— ասաց
նա:— Ուրախ եմ, որ դեռ չեք գնացել:

Նա նստեց: Ես բուրոգովին կորցրեցի ինձ: Անհարմար էի
զգում խոսել մի բանի մասին, որն ինձ բուրոգովին չէր վերա-
բերում: Ես դեռ չգիտեի, որ կանանց հիմնական թերությունը
ուրիշների հետ (ով կամենում է լսել նրանց) իրենց անձնական
զործեքը բննելու կիրքն է:

Քիւն էր, թե միսիս Սթրիբլենդը ճիգ է գործադրում իր վրա:
— Արդեն խոստ^ում են այդ մասին,— հարցրեց նա:

Նրա համոզվածութիւնը, որ ես արդեն գիտեմ իր ընտանի-
քին հասած դժբախտութիւն մասին, շփոթութիւն մեզ գցեց
ինձ:

— Ես նոր էմ վերադարձել: Բացի Ռոզա Ուոթերֆորդից ոչ
մեկի չեմ տեսել:

Միսիս Սթրիբլենդը սեղմեց ձեռքերը:

— Ասացեք այն ամենը, ինչ լսել եք նրանից:

Ես լսում էի, բայց նա պնդեց:

— Ես ուզում եմ ամեն ինչ իմանալ:

— Ձեզ լավ հայտնի է, թե ինչպես է նա սիրում քամբասել:
Նրա խոսքերին չի կարելի հավատալ: Ռոզա Ուոթերֆորդն ասաց,
որ ձեր ամուսինը լքել է ձեզ:

— Միայն այդքան^ոնր:

Ես չհամարձակվեցի կրկնել բաժանման ժամանակ Ռոզա
Ուոթերֆորդի ակնարկը սրճարանի աղջկա մասին և ստեցի:

— Նա շատ^աց, որ Չարլին ինչ-որ կնոջ հետ է գնացել:

— Ոչ:

— Միայն այդ էի ուզում իմանալ:

Ես շփարել էի, բայց այնուամենայնիվ հասկացա, որ հիմա
կարող եմ հեռանալ շրաժեշտ տալիս միսիս Սթրիբլենդին ասա-
ցի, որ միշտ պատրաստ եմ ծառայել իրեն: Նա թույլ ժպտաց:

— Ծնորհակալ եմ, բայց հալիվ թե գտնվի մեկը, որ կարո-
զանա որևէ բան անել ինձ համար:

Չափազանց ամաչկոտ լինելով, որպեսզի կարողանայի ցա-
վակցութիւն հայտնել նրան, շուտ եկա դեպի գնդապետը, ցան-
կանալով հրաժեշտ տալ, բայց նա ձեռքս չբռնեց:

— Ես էլ եմ դուրս գալիս: Եթե Վիկտորիա-սթրիբլով եք գը-
նում, ուրեմն մեր ճանապարհները նույնն են:

— Հիանալի է,— ասացի ես:— Գնա՛նք:

ԳԼՈՒԽ 9

— Սարսափելի է,— ասաց գնդապետը, երբ դուրս եկանք
փողոց:

Ես հասկացա, որ նա ինձ հետ եկավ, որպեսզի մի անգամ
էլ քննարկի այն, ինչ ժամերով քննարկել էր քենու հետ:

— Հասկանում եք, մենք եււլիսիակ շգիտենք, թե ով է այդ
կինը,— ասաց նա:— Մեզ հայտնի է միայն, որ օրիկան Փա-
րիզ է գնացել:

— Իսկ ես կարծում էի, որ նրանք օրինակելի ամուսիններ
են:

— Այդպես էլ կար: Ձեր գալուց առաջ էմին ասաց, որ իրենց
ամուսնական կյանքի ընթացքում երբեք չեն կովել: Գուր ճանա-
չում եք էմիին: Նրա նման լավ կին չկա աշխարհում:

Քանի որ նման վստահութիւն էի արժանացել, ես որոշեցի
մի քանի հարց տալ:

— Ուրեմն դուք ենթադրում եք, որ միսիս Սթրիբլենդը ոչինչ
չէ՞ր կասկածում:

— Ոչինչ: Նա օգոստոսը էմիի ու երեխաների հետ նորֆոլ-
կում է անցկացրել: Սթրիբլենդն իրեն այնպես էր պահում, ինչ-
պես միշտ: Կնոջս հետ մի քանի օրով այնտեղ էինք գնում, և
ես դուրս էի խաղում նրա հետ: Սեպտեմբերին նա քաղաք վերա-
դարձավ, որովհետև կոմպանիոնը արձակուրդ էր գնում, իսկ
էմին մնաց ծովափին: Նրանք վեց շաբաթով տուն էին վարձել
և ժամանակը լրանալու մոտ էմին գրեց Սթրիբլենդին, հայտ-
նելու, թե երբ են վերադառնալու Լոնդոն: Նա Փարիզից պա-
տասխանեց: Գրեց, որ այլևս չի ուզում էմիի հետ ապրել:

— Իսկ ինչ^ով էր նա բացատրում դա:

— Աղա՞վնչակա, նա ոչ մի բացատրութիւն չէր գրում: Ես
կարգացի նամակը: Ընդամենը տասը տող էր, ոչ ավելի:

— Ոչինչ չեմ հասկանում:

Այդ պահին մենք անցնում էինք փողոցը, և աշխույժ եր-
թեկութիւնը խանդարեց մեզ շարունակելու խոսակցութիւնը:
Այն, ինչ պատմեց ինձ գնդապետը, շատ անհավանական էր
Քվում, և ես որոշեցի, որ միսիս Սթրիբլենդը նրանից ինչ-որ
բան է թաքցնում: Պարզ է, որ տասնյոթ տարվա ամուսնական
կյանքից հետո ամուսինը կնոջը չէր լքի առանց պատճառների,
որոնք կնոջը շատիպէին կասկածել, որ իրենց համատեղ կյանքը
այնքան էլ բարեկեցիկ չի եղել:

Գնդապետը ընդհատեց մտքերս:

— Ի՞նչ բացատրութիւն կարող էր նա տալ, բացի նրանից,
որ փախել է ինչ-որ կնոջ հետ: Նա հովանարար մտածում էր
որ էմին ինքը գլխի կրնկնի: Այն թե ինչ տիպն էր նա:

— Ի՞նչ է պատրաստվում անել միսիս Սթրիբլենդը:

— Նախ և առաջ ապացույցներ պետք է գտնենք: Ես ինքս Փարիզ կգնամ:

— Իսկ ինչպե՞ս են նրա աշխատանքային գոտիները:

— Այստեղ նա շահազանց խորամանկ գտնվեց: Մի ամբողջ տարի նահանջի էր նախապատրաստվում:

— Զգուշացրե՞ր էր կոմպանիոնին, որ հեռանում է:

— Մտքովն էլ չի անցել:

Գնդապետ Մակ-Էնդրյուն շատ աղոտ պատկերացում ուներ առևտրական գործերի մասին, իսկ ես բոլորովին շունչով: Այդ իսկ պատճառով այդպես էլ չհասկացա, թե ինչ վիճակում էր թողել Աթրիքլենդն իր գործերը: Գնդապետի խոսքերից դատելով, լքված կոմպանիոնը պետք է, որ շահագանցող զայրացած լիներ և սպասում էր դատական գործ հարուցել: Երևում էր, որ այդ պատմությունը Աթրիքլենդի վրա հիմա հարյուր ֆունտ էր նստելու:

— Բարեբախտաբար քնակարանի կահույքը էմիին է պատկանում: Բոլոր դեպքերում դա նրան կմնա:

— Դուք հիշո՞ւմ էիք այդ, երբ ասացիք, թե նա առանց կոպեկի է մնացել:

— Իհարկե հիշում էի: Էմին ունի երկու, թե երեք հարյուր ֆունտ և այդ կահույքը:

— Բայց ինչո՞ւ է ապրելու:

— Միայն աստծուն է հայտնի:

Թվում էր, թե ամեն ինչ ավելի էր խճճվում, և զայրացած գնդապետն ավելի էր մոլորության մեջ գցում ինձ: Եվ ես շատ ուրախացա, երբ նա, նայելով Բանակի և Նավատորմի խանութի ժամացույցին, հիշեց, որ թղթախաղի ընկերները սպասում են իրեն ակումբում, և ես մենակ Սենթ-Ջեյմս պարկի միջով շարունակեցի ճանապարհս:

ԳԼՈՒԽ 10

Մեկ թե երկու օր հետո միսիս Աթրիքլենդը երկտող ուղարկեց ինձ, հարցնելով, թե ես շե՞մ կարող արդյոք երեկոյան ճաշից հետո այցելել իրեն:

Ես նրան մենակ գտա: Միանձնուհու հասարակ, սև շրջազգեստը վկայում էր նրա մեծ կորստի մասին, և ես միամտորեն

զարմացա, թե այդ ծանր սրտով ինչպես էր նա կարողանում խաղալ մի գեր, որն իր պատկերացմամբ արժանավայել էր իրեն:

— Դուք ասացիք, որ եթե որևէ հարցով դիմեմ ձեզ, չեք մերժի,— նկատեց նա:

— Այո, իհարկե:

— Կարո՞ղ եք գնալ Փարիզ Չարլիին տեսնելու:

— Ե՛ս:

Դա շահագանցող անսպասելի էր ինձ համար: Զե որ միայն մեկ անգամ էի տեսել նրան: Ի՞նչ էր նա մտադիր հանձնարարել ինձ:

— Ֆրեդն է պատրաստվում գնալ (Ֆրեդը գնդապետ Մակ-Էնդրյունն էր): Բայց ես չեմ վստահում նրան: Նա միայն ամեն ինչ կփչացնի: Եվ չգիտեմ էլ ո՞ւմ խնդրեմ:

Նրա ձայնը դողաց, և ես զգացի, որ ամենափոքր վարանումն իսկ խոզություն կլիներ իմ կողմից:

— Բայց ես ձեր ամուսնու հետ տասը բառ էլ չեմ փոխանակել: Նա ինձ չի ճանաչում և շատ հնարավոր է, որ ինձ պարզապես գրողի ծոցն ուղարկի:

— Դա առանձնապես չի վնասի ձեզ,— ասաց միսիս Աթրիքլենդը ժպտալով:

— Ի՞նչ եք ուզում, որ անեմ:

Նա ուղղակի պատասխան չտվեց այդ հարցին:

— Իմ կարծիքով նույնիսկ յավ է, որ նա ձեզ չգիտի: Գիտեք, նա Ֆրեդին երբեք չի սիրել, և նրան միշտ հիմար է համարել: Զինվորականները խորթ են նրան: Ֆրեդը կերբորքվի և վեճի տեղիք կտա, և փոխանակ գործը կարգավորելու, կփչացնի: Եթե ասեք, որ իմ կողմից եք եկել, նա կլսի ձեզ:

— Վաղուց չէ, որ ճանաչում եմ ձեզ,— ասացի ես,— և չեմ պատկերացնում մարդ ինչպես կարող է նման գործ նախաձեռնել, երբ բոլոր մանրամասնություններին ծանոթ չէ: Ես չեմ ուզում խառնվել մի բանի, որն ինձ չի վերաբերում: Իսկ ինչո՞ւ ինքներդ չեք գնում նրա մոտ:

— Դուք մոռանում եք, որ նա մենակ չէ:

Ես յեզուս կծեցի: Պատկերացրի, թե ինչպես եմ մտնում Չարլզ Աթրիքլենդի տունը և ուղարկում նրան իմ այցետոմսը: Ահա նա, գուրս է գալիս իմ այցետոմսը երկու մատով բռնած:

— Ինչո՞ւ եմ արժանացել այս պատվին:

— Եկե՛լ եմ ձեր կնոջ մասին ձեզ հետ խոսելու:

— Լո՞ւրջ: Երբ ավելի մեծանաք, կհասկանաք, որ ուրիշի գործերին շարժե խառնվել: Եթե բարի լինեք ձեր գլուխը մի փոքր ձախ թեքել, կտեսնեք դուրս: Հաշտութիւն եմ ցանկա- նում:

Ես կանխազգում էի, որ ինձ համար շատ դժվար կլինի ար- ժանապատմութիւնը հեռանալ և անիծում էի ինձ, որ Լոնդոն վերադարձա նախքան միսիս Սթրիբլենդին իր դժվարութիւնները կարգի կբերել: Ես թաքուն մի հայացք գցեցի նրա վրա: Նա խորատուզվել էր մտքերի մեջ: Բայց մի վայրկյան հետո նայեց ինձ, խոր հոգոց հանեց ու ժպտաց:

— Այս բոլորն այնքան անսպասելի էր, — ասաց նա: — Մենք տասնյոթ տարվա ամուսիններ էինք: Երբեք մտքով չէր անցնի, որ Չարլին կարող է ուրիշ կնոջով տարվել: Մենք միշտ էլ համերաշխ ենք ապրել: Ծիշտ է, ես շատ հետաքրքրութիւն- ներ ունեի, որ նա չէր կիսում ինձ հետ:

— Իմացե՞լ եք, թե ով... — ես չգիտեի ինչպես արտահայտու- վել... — ո՞վ է այդ կինը, որի հետ նա գնացել է:

— Ոչ, Այդ մասին ոչ մեկն էլ պատկերացում չունի: Շատ տարօրինակ է: Նման դեպքերում, սովորաբար, մարդիկ սիրա- հարեներին հանդիպում են սեստորանում կամ որևէ այլ տեղ և պատմում կնոջը: Իսկ ինձ ոչ մեկը չի նախազգուշացրել, ես ոչ մի բան չեմ կասկածել: Նրա նամակը անսպասելի էր, ինչ- պես պարզ երկնքում ամպրոպի ճայթիւնու: Իսկ ես կարծում էի, թե նա երջանիկ է ինձ հետ:

Միսիս Սթրիբլենդը սկսեց արտասվել: Խեղճ կին: Ես սրտանց իղճացի նրան: Բայց նա անմիջապես հանդարտվեց:

— Ես չպետք է արիութիւնս կորցնեմ, — ասաց միսիս Սթրիբ- լենդը, սրբելով արցունքները: — Հիմա պետք է որոշել, թե ինչ է անհրաժեշտ անել:

Ես սկսեց մի տեսակ անկապ-անկապ ինտել մեկ՝ մոտ անց- չայի մասին, մեկ՝ իրենց առաջին հանդիպման ու ամուսնու- թիւն մասին, և աստիճանաբար իմ առջև ուղղադժվեց նրանց համատեղ կյանքի պատկերը: Ես զգացի, որ նախկին ենթադրու- թիւններս այնքան էլ սխալ չէին: Միսիս Սթրիբլենդը Հնդկաս- տանում ծառայող աստիճանավորի աղջիկ էր: Պաշտոնավող լի- նելով, նրա հայրը մնացել էր ապրելու ինչ-որ տեղ երկրի խոր- քում, բայց ամեն տարի օգոստոսին ընտանիքին տանում էր

Եւրոսըն օգոստոսից: Այստեղ էլ էմիլ հանդիպեց Չարլզ Սթրիբլենդին: Չարլին քսաներեք տարեկան էր, իսկ նա՝ քսան: Նրանք միասին թենիս էին խաղում, զրոսնում, լսում Փեզը եր- գիչներին: Եվ նա որոշեց Չարլիի կինը դառնալ՝ նրա առաջար- կութիւնն անելուց մեկ շաբաթ առաջ: Նրանք տեղավորվեցին Լոնդոնում, սկզբում Հեմփսթեդում, իսկ հետո, երբ Սթրիբլենդի գործերը ավելի հաջող ընթացան, քաղաքի կենտրոնում: Ունե- ցան երկու երեխա՝ մի տղա, մի աղջիկ:

— Նա շատ էր սիրում նրանց: Եթե նույնիսկ ձանձրացել էր ինձանից, ինչ խղճով լքեց երեխաներին: Պարզապես անհավա- տայի է: Ես հիմա էլ չեմ հավատում, որ այս բոլորը ճշմար- սութիւնն է:

Վերջապես նա ինձ ցույց տվեց Սթրիբլենդի նամակը: Ես վազուց էի ուզում կարգալ այն, բայց չէի համարձակում խընդ- րել նրան այդ մասին:

Սիրելի էմի,

Հուսով եմ, որ տաք ամեն ինչ կգտնես կարգին: Աննային հա- դողել եմ քո բոլոր հանձնարարութիւնները և երբ զաք, քո և երեխաների համար ճաշը պատրաստ կլինի: Ես ձեզ չեմ դիմա- վորի: Ռոշել եմ ձեզանից առանձին ապրել և առաջադաս զնում եմ Փարիզ: Տեղ հասնելուն պես կուղարկեմ այս նամակը: Չեմ վերադառնա: Ռոշուլն անխախտ է:

Սիշտ քո՝ Չարլզ Սթրիբլենդ

— Բացատրութիւն կամ զղջման ոչ մի խոսք: Մի՞թե հրե- շավոր չէ:

— Նման հանգամանքներում շատ տարօրինակ նամակ է, — պատասխանեցի ես:

— Միայն մի բացատրութիւն կարող է լինել՝ նա իրեն կորց- րել է: Զգիտեմ, թե ով է այդ կինը, որ հրապուրել է նրան, բայց նրան ուրիշ մարդ է դարձրել: Երևի հին պատմութիւնն է:

— Ինչո՞ւ եք այդպես կարծում:

— Դա Ծրեզը պարզեց: Չարլին սովորութիւն ուներ շաբաթը երեք շորս անգամ բրիջ խաղալ ակումբում: Ծրեզը ծանոթ է այդ ակումբի անդամներից մեկի հետ և երբ մի խոսակցու- թիւն ծամանակ Չարլիին մոլի բրիջ խաղացող է անվանել, նրա ծանոթը շատ զարմացել է: Նա Չարլիին ոչ մի անգամ թղթա-

խաղի սեղանի մոտ շի տեսել: Հիմա ամեն ինչ պարզ է. էրբ կարծում էի, թե նա սկսումբում էր, Չարլին նրա հետ էր լինում: Ես մի պահ լռեցի, հետո հիշեցի երեխաներին:

— Ըստ երևույթին շատ դժվար էր բացատրել Ռորբերտին այս ամենը, — ասացի ես:

— Օ, ես ոչինչ չեմ ասել ոչ նրան, ոչ էլ աղջկաս: Զէ՞ որ մենք բազա վերադարձանք նրանց դասերն սկսվելու նախորդ օրը: Ես արիտթյուն ունեցա ասելու, որ նրանց հայրը կարևոր գործով է մեկնել:

Հավանաբար շատ դժվար էր եղել նման գաղտնիքը սրտում իրեն հանգիստ ու անվրդով պահել, և ավելի դժվար՝ հոգ տանել ամեն տեսակի մանրուքների մասին, որոնք անհրաժեշտ էին երեխաներին դպրոց գնալու համար նախապատրաստելիս: Միսիս Սթրիբլենդի ձայնը նորից դուրաց:

— Ի՞նչ է լինելու նրանց, խեղճ փոքրիկներս: Ինչպե՞ս ենք ապրելու:

Նա չսնում էր զսարի իրեն, բայց նկատեցի, թե ինչպես էին ձեռքերը ջղաձգորեն սեղմվում ու բացվում: Շատ ցավալի տեսարան էր:

— Իհարկե, ես կգնամ Փարիզ, եթե կարծում եք, որ դրանով կկարողանամ օգնել ձեզ, միայն թե որոշակիորեն ասացեք իմ անելիքը:

— Ես ուզում եմ, որ նա վերադառնա:

— Գնդապետ Մակ-Էնդրյուն ինձ ասաց, որ դուք որոշել եք բաժանվել նրանից:

— Ես Չարլիից երբեք չեմ բաժանվի, — բացականչեց միսիս Սթրիբլենդը զայրացած: — Այդպես էլ հաղորդեցեք նրան: Նա երբեք չի կարողանա ամուսնանալ այդ կնոջ հետ: Ես նրանից պակաս համառը չեմ և երբեք չեմ բաժանվի: Ես պարտավոր եմ երեխաներիս մասին մտածել:

Վերջին բառերը նա, հավանաբար, ավելացրեց, որպեսզի բացատրի իր բռնած դիրքը, բայց ինձ թվաց, որ այստեղ խոսքը ավելի շատ սովորական խանդին էր վերաբերում, քան մայրական հոգատարութանը:

— Դուք դեռ սիրո՞ւմ եք նրան:

— Զգիտեմ: Ես ուզում եմ, որ նա վերադառնա: Եթե վերադառնա, ամեն ինչ կմոռանամ: Վերջապես մենք տասնյոթ տարեկան ամուսիններ ենք եղել: Ես ազատամիտ կին եմ: Ինչ արել:

արել է, միայն թե չիմանայի: Նա պետք է հասկանա, որ այդ կիրքը երկար չի տևի: Եթե վերադառնա, ամեն ինչ կվերջանա, և ոչ ոք ոչինչ չի իմանա:

Միսիս Սթրիբլենդը շատ էր վախենում բամբասանքներից: Դա մի փոքր վհատութուն պատճառեց ինձ: Ես գեռ չգիտեի, թե ինչպիսի մեծ դեր է խաղում մարդկանց կարծիքը կանանց կյանքում: Կարծիքի նկատմամբ ունեցած սարսափը կեղծիքի սովեր է պցում նրանց ամենախոր զգացմունքների վրա:

Հայտնի էր, թե որտեղ էր ապրում Սթրիբլենդը: Նրա կոմպանիոնը բանկին հասցեագրված մի վայրագ նամակում անարգել էր Սթրիբլենդին այն բանի համար, որ նա թաքցնում է իր բնակավայրը: Սթրիբլենդը ցիխիկ հումորով պատասխանել էր իր կոմպանիոնին և տվել իր ճիշտ հասցեն: Նա հյուրանոցում էր ապրում:

— Ես երբեք չեմ լսել այդ մասին, — ասաց միսիս Սթրիբլենդը, — բայց Ֆրեդը լավ գիտե, և ասում է, որ շատ թանկարժեք հյուրանոց է:

Նա խիստ կարմրեց: Ես հասկացա, որ նա մտովի տեսնում էր ամուսնուն հյուրանոցի շքեղ համարում, մեկ այս, մեկ այն ռեստորանում ճաշելիս, ամբողջ օրը ձիարշավարանում, խակ երեկոները՝ թատրոնում անցկացնելիս:

— Այդպես նա երկար չի դիմանա, — ասաց միսիս Սթրիբլենդը: — Վերջապես նա քառասուն տարեկան է: Եթե մի երիտասարդ այդպես վարվեր, ես կհասկանայի, բայց նրա տարիքի տղամարդու համար, երբ երեխաները գրեթե հասունացել են, սարսափելի է: Նա կբաշքայի իր առողջութունը:

Զայրույթն ու տառապանքը պայքարում էին նրա մեջ:

— Ասացեք նրան, որ մեր տունն առանց նրա տուն չէ: Ամեն ինչ կարծես նույնն է, բայց միաժամանակ և տարբեր: Ես չեմ կարող առանց նրա ապրել: Ավելի լավ է վերջ տա՞մ կյանքիս: Հիշեցրեք նրան մեր անցյալը, այն շուրթը, որ միասին արել ենք: Ի՞նչ պետք է սուեմ երեխաներին, երբ հարցնեն նրա մասին: Նրա սենյակը մնացել է այնպես, ինչպես առաջ և սպասում է նրան: Մենք բոլորս էլ սպասում ենք նրան:

Եվ միսիս Սթրիբլենդը սկսեց բառ առ բառ կրկնել այն ամենը, ինչ ես պետք է ասեի Սթրիբլենդին: Ավելին, նա ինձ հուշեց ամենանշգրիտ պատասխանները, որ պետք է տալի նրա յուրաքանչյուր առարկութան դեպքում:

— Խոստանում եք անել, ինչ որ հնարավոր է.— ավելացրեց նա աղերսանքով։— Ասացեք նրան, թե ինչ վիճակի մեջ եմ գտնվում։

Միսիս Մթրիբլենդը բացահայտորեն ցանկանում էր, որ ես ամեն տեսակի միջոց գործադրեմ՝ նրա գուժը շարժելու համար, և առանց բաշվելու լաց եղալ։ Զարգանց զգացվելով՝ ես զայն բացա Մթրիբլենդի ստոր դաժանութիան վրա և խոստացա ամեն ինչ անել, որպեսզի նրան տուն վերադարձնեմ։ Համաձայնվեցի մեկնել հենց հաջորդ օրը և մնալ Փարիզում այնքան, մինչև որ որևէ արդյունքի հասնեմ։ Հետո, քանի որ արդեն ուշ էր և երկուսս էլ շատ հուզվելուց հոգնել էինք, հրաժեշտ տվեցի նրան։

ԳԼՈՒԽ 11

Փարիզի ճանապարհին, խորհելով ինձ տրված հանձնարարության մասին, ես վախենում էի, որ այն դատապարտված է անհաջողության։ Հիմա, երբ միսիս Մթրիբլենդի վշտալի տեսքը չէր շփոթեցնում ինձ, կարող էի ավելի սառնասրտորեն մտածել պատահածի մասին։ Ինձ տարակուսանք էին պատճառում միսիս Մթրիբլենդի վարքագծի մեջ եղած հակասությունները։ Նա շատ դժբախտ էր, բայց ցանկանալով իմ մեջ կարեկցանք առաջացնել, ամեն կերպ ի ցույց էր դնում իր դժբախտությունը։ Կասկածից դուրս էր, օրինակ, որ նա նախօրոք պատրաստվել է արտասվելու, որովհետև ձեռքի տակ բավական քանակությամբ թաշկինակներ ունեւր։ Նրա հեռատեսությունը հիացնում էր ինձ, բայց եթե լուրջ մտեմանք նախորդ իրադարձությունների, կհամոզվեմք, որ այդ հեռատեսությունը ավելի քիչ հուզիչ էր գարձնում նրա արցունքները։ Ես դժվարանում էի որոշել։ Նրա համար էր նա ցանկանում իր ամուսնու վերադարձը, որ սխալում էր նրան, թե նրա համար, որ վախենում էր շարախոսություններից, ինձ անհանգստացնում էր այն կասկածը, որ նրա սրբություն արհամարհված սիրտ վիշտը միախառնվել էր խոցված ինքնասիրության տառապանքների հետ, և քանի որ շատ երիտասարդ էի, դա ինձ անվայել էր թվում։ Ես դեռ չգիտեի, թե որքան հակասական է մարդկային բնությունը, չգիտեի, որ նույնիսկ ամենաանկեղծ մարդիկ սիրում են կեցվածք ընդունել, չգի-

տեի, թե որքան ստոր կարող է լինել ազնվարարու մարդը և որքան բարի թշվառականը։

Բայց իմ ուղևորություն մեջ ինչ-որ արկածային բան կար, և որքան ավելի էի մտեկնում Փարիզին, այնքան ավելի էի ոգեշնչվում։ Ես ինձ տեսնում էի դրամատիկ դերում մի վստահված բարեկամի, որը մոլորված ամուսնուն վերադարձնելու էր ամեն ինչ ներելու պատրաստ կնոջ գիրկը։

Որոշեցի Մթրիբլենդին հանդիպել՝ հաջորդ օրը երեկոյան, որովհետև զգում էի, որ հարկավոր է շափազանց նրբանկատորեն ընտրել ժամանակը։ Նախաճաշից առաջ զգացմունքների՝ դիմելը քիչ հավանական է, որ հաջողություն ունենա։ Այդ ժամանակ սեփական մտքերս շարունակ սիրով էին տարված, բայց բնական կան հրջանկություն չէի կարողանում պատկերացնել նախքան թեյը։

Հյուրանոցում հարցուփորձ արեցի, թե որտեղ է գտնվում «Հոթել դը Բելժը», որտեղ իջևանել էր Զարիզ Մթրիբլենդը։ Ինձ դարձանք պատճառեց, որ դռնապանը այդ մասին երբեք չէր լսել, այն ժամանակ, երբ միսիս Մթրիբլենդը ինձ ասել էր, որ դա մեծ, շքեղ հյուրանոց է ինչ-որ տեղ Ռիվոլի փողոցի մոտակայքում։ Փնտրեցինք տեղեկագրքում և պարզվեց, որ նույնանուն միակ հյուրանոցը գտնվում է Ռյու դե Մուան փողոցի վրա։ Դա բոլորովին էլ լավ թաղամաս չէր։ Ես բացասաբար շարժեցի դուրս։

— Ոչ, դա չէ, ես համոզված եմ դրանում։

Դռնապանը ուներ թոթվեց։ Այդպիսի անունով ուրիշ հյուրանոց Փարիզում չկա։ Հանկարծ մտքովս անցավ, որ Մթրիբլենդը թաքցրել էր իր իսկական հասցեն և կոմպանիոնին պարզապես խաբել, տալով նրան առաջին իսկ պատահած հյուրանոցի հասցեն։ Զգեստեմ ինչու, ինձ թվաց, թե միայն Մթրիբլենդն է ընդունակ ստիպել կատաղած բորսայական միջնորդին Փարիզ սլանալ և անսպասելիորեն հայտնվել ետ ընկած վատահամբավ մի հյուրանոցում։ Այնուամենայնիվ մտածեցի, որ ավելի լավ է գնամ և ինքս տեսնեմ։ Հաջորդ օրը ժամը վեցին կառք նստեցի և կառապանին պատվիրեցի տանել Ռյու դե Մուան, բայց փողոցի անկյունում բաց թողեցի կառքը, որովհետև ուղում էի հյուրանոցին ոտքով մտեմնալ և մի լավ գնեմ։ Փողոցում բազմաթիվ կրպակներ կային, որոնք ազբատ գնորդների համար զանազան ապրանքներ էին վաճառում։ Մեղտեղում, ինձանից

ծախ, գտնվում էր «Հոթիլ դը Բելժը»։ Ես իշխանել էի բալական համեստ հյուրանոցում, բայց սրա հետ համեմատած իմը հոյակապ էր։ «Հոթիլ դը Բելժը» բարձր շենք էր, որ արդեն երկար տարիներ չէր վերանորոգվել և այնքան էր խարխուլվել, որ նրա կողքի տները մաքուր ու հարմարավետ էին թվում։ Կեղտոտ պատուհանները երբեք չէին բացվում։ Ոչ, այստեղ չէ, որ Չարլզ Մթրիքլենդը հանցագործ ճոխության մեջ ապրում էր մի անհայտ հմայիչ կնոջ հետ, հանուն որի մոռացել էր պատիվ ու պարտականություն։

Զգալով, որ հիմար դրուժյան մեջ եմ քնկել, սաստիկ զայրացա և, առանց Մթրիքլենդի մասին որևէ բան հարցնելու, պատաստվեցի հեռանալ, բայց ներս մտա, որպեսզի հետո կարողանալի միտիս Մթրիքլենդին ասել, որ արեցի այն ինչ կարող էի։ Հյուրանոցի մուտքը ինչ-որ կրպակի կողքին էր։ Դուռը բաց էր և հենց մուտքի մոտ գրված էր. «Bureau au premier»¹։ Նեղ աստիճաններով բարձրացա վերև և հարթակի վրա ապակե խցիկի նման ինչ-որ բան տեսա։ Խցիկի ներսում մի սեղան ու երկու աթոռ կար, իսկ դրսում գրված էր մի նստարան, որի վրա, հավանաբար, գիշերային սպասավորն իր անհանգիստ գիշերներն էր անցկացնում։ Ոչ մի մարդ չէր երևում, բայց էլիպտրական զանգի տակ գրված էր՝ Garçon², Սեղմեցի կոճակը, և շուտով հայտնվեց աշխույժ աչքերով ու մուսյլ տեսքով մի երիտասարդ։ Նա բաճկոնով ու գորգանման հողաթափերով էր։

Զգիտեմ, թե ինչու, ամենաանփույթ ձևով ես հարցրեցի.

— Պատահաբար այստեղ չի՞ ապրում միտոր Մթրիքլենդը։

— Երեսուներկու համար։ Վեցերորդ հարկ,— հետևեց պատասխանը։

Ես արևբան էի զարմացել, որ մի պահ շիմացա ինչ ասելու.

— Նա տա՞նն է։

Սպասավորը նայեց խցիկում կախված տախտակին։

— Բանալին չի թողել։ Բարձրացեք վերև, տեսե՛ք։

Ես անհրաժեշտ համարեցի ևս մի հարց տալ.

— Madame est là?³

— Monsieur est seul⁴։

Սպասավորը կասկածանքով նայեց ինձ, երբ ուղիղ վերև բարձրացա։ Մուտք աստիճանների վրա զարշնչի բորբոսահոտ էր տարածվել։ Երբորդ հարկում, սենեկազգեստով ու զգզված մագերով մի կին բաց արեց դուռը և լուռ նայեց ինձ։ Վերջապես

հասա վեցերորդ հարկ և բախեցի երեսուներկու համարի դուռը։ Ինչ-որ ձայն լսվեց ներսից, և դուռը կիսով շափ բացվեց։ Իմ առջև կանգնած էր Չարլզ Մթրիքլենդը։ Նա ոչ մի բառ չարտասանեց, Պարզ երևում էր, որ չճանաչեց ինձ։

Ես տվեցի անունս և աշխատեցի նրբաձևորեն անփույթ երևալ։

— Հավանաբար չեք հիշում ինձ։ Ես պատիվ եմ ունեցել ճաշելու ձեզ մոտ անցած տարի հուլիսին։

— Ներս եկե՛ք,— ասաց նա սիրալիրությամբ,— շատ ուրախ եմ ձեզ տեսնելու։ Նստե՛ք։

Ներս մտա։ Դա մի փոքրիկ սենյակ էր լեփ-լեցուն, ինչպես ֆրանսիացիներն են անվանում, Լուի-Ֆրիլաի ժամանակների ոճի կահույքով։ Կարմիր վերմակով ծածկված լալն փայտե մահճակալ, մեծ հանդերձապահարան, կլոր սեղան, փոքրիկ լվացարան և կարմիր ռեպսով երեսպատված երկու աթոռ։ Ամեն ինչ կեղտոտ ու հնտի էր։ Հանցավոր ճոխության ոչ մի նշան չկար, ինչպես գեղապետ Մակ-Էնդրյուն նկարագրել էր վառ գույներով։ Մթրիքլենդն աթոռներից մեկի վրա գրված հագուստները զցեց հատակին և առաջարկեց ինձ նստել։

— Ինչո՞վ կարող եմ ծառայել,— հարցրեց նա։

Այդ փոքրիկ սենյակում նա ինձ ավելի հաղթանդամ թվաց, քան մեր առաջին հանդիպման երեկոյին։ Նա մաշված բաճկոն էր հագել և հավանաբար մի քանի օր չէր սափրվել։ Երբ առջին անգամ հանդիպեցի Մթրիքլենդին, նա իր տանը, շքեղ կոստյումի մեջ չափազանց անհանգիստ էր զգում իրեն, իսկ հիմա, շնայած թափթիված էր ու զգզված մազերով, բավական ազատ էր պահում իրեն։ Ես չգիտեի, թե նա ինչպես կընդուներ իմ նախօրոք պատրաստած գիտողությունը։

— Ինձ այստեղ է ուղարկել ձեր կինը։

— Ես էլ պատրաստվում էի դուրս գալ մի բաժակ օշինդրոզի խմելու։ Գնանք միասին։ Օշինդրոզի սիրո՞ւմ եք։

— Կարելի է։

— Ուրեմն, գնանք։

Նա զրեց զգակը, որը, ի միջի այլոց, խողանակելու մեծ կարիք ուներ։

— Կարող ենք միասին էլ ճաշել։ Դուք փաստորեն ինձ ճաշ էք պարտք։

— Իհարկե, Մենա՞կ եք։

Ես ինձ շոյված էի զգում, Էրեւակայելոյ, որ այդ նրբանկատ հաշքը շատ ճարպկորեն սովեցի:

— Ի՛նչարկէ: Ճիշտն ասած, Էրեւ որ է, որ ոչ մեկի հետ չեմ խոսել: Իմ ֆրանսերենն այնքան էլ լավ չէ:

Աստիճաններով նրա հետ իջնելիս Ես կասկածանքով էի մտածում, թէ ի՞նչ սլատահեց սրճարանի տղիկա հետ: Արդեն հասցրել էին գոտիէ՞լ, թէ Սթրիբլենդը դադարել էր նրան սիրելուց: Ի միջի այլոց, վերջինը ինձ անհավանական էր թվում, չէ՞ որ նա գրեթէ մի տարի շարունակ նախապատրաստվել էր այդ հանդուցն քայլին: Հասանք Կլիշի փողոցի վրա գտնվող սրճարանը և նստեցինք մայթին զրված սեղաններից մեկի մոտ:

ԳԼՈՒԽ 12

Կլիշի փողոցը բազմամարդ էր այդ ժամին, և քիչ թէ շատ կենդանի երևակայութիւն ունեցողը կարող էր յուրաքանչյուր անցորդի մեջ ուսմանտիկ գծեր նկատել: Մայթով այս ու այն կողմ էին շտապում գրասենյակային ծառայողներ, գործակատարուհիներ, ձերուհիներ, որոնք կարծես դուրս էին եկել Օնորեզը Բալզակի էջերից. կանայք ու տղամարդիկ, որոնք իրենց եկամուտը մարդկային թուլութիւններից էին քաղում:

Փարիզի ազբատ թաղամասերի աշխույժ եռուղեքը հուզում է մարդու արյունը և նախապատրաստում ամեն տեսակի անակրնկալներին:

— Գուք լա՞վ եք ճանաչում Փարիզը, — հարցրւցի ես:

— Ոչ, Մենք Փարիզում անցկացրել ենք մեր մեղրամիսը, դրանից հետո այստեղ չեմ եղել:

— Իսկ ինչպէ՞ս գտաք այդ հյուրանոցը:

— Ինձ խորհուրդ տվեցին: Ես ուզում էի որևէ էժանագին բան գտնել:

Օշինդրողին բերեցին, և մենք պատշաճ հանդիսավորութեամբ սկսեցինք հալվող շաքարի վրա շուր կաթնեցնել:

— Ինձ թվում է ավելի լավ կլինի, որ միանգամից ասեմ, թէ ինչու եմ եկել, — ասացի ես ոչ առանց շփոթմունքի:

Սթրիբլենդի աչքերը փայլեցին:

— Ես համոզված էի, որ վաղ թէ ուշ ինչ-որ մեկը գալու է. էմիից բազմաթիվ նամակներ եմ ստացել:

— Ուրեմն դուք լավ գիտեք, թէ ես ինչ եմ ասելու:

— Ես նամակներ չեմ կարդացել:

Ժամանակ շահելու համար ծխախոտ վառեցի: Ես չգիտեի ինչպէս սկսել իմ առաքելութիւնը: Այն պերճախոս ֆրանսերը, որ նախօրոք պատրաստել էի, սրտաշարժ թէ զայրացկոտ, այստեղ, Կլիշի փողոցում անտեղի էին թվում: Հանկարծ նա փոթկոցով ծիծաղեց:

— Շատ զովար խնդիր է, չէ՞:

— Զգիտեմ, — պատասխանեցի ես:

— Դե լավ, ամեն ինչ անկեղծորեն ասացեք, իսկ հետո միասին ուրախ երևկո կանցկացնենք:

Տատանվեցի:

— Մի՞թէ չեք հասկանում, որ ձեր կինը սարսափելի դժբախտ է:

— Ոչինչ, կանցնի:

Գծվար է նկարագրել այն սառնութիւնը, որով նա պատասխանեց: Ես շփոթվեցի, բայց աշխատեցի ամեն կերպ թաքցնել շփոթմունքս և սկսեցի խոսել մի տոնով, որ սովորաբար օգտագործում էր կրոնավոր քեռիս՝ Հենրին, երբ ցանկանում էր իր ազգականներից որևէ մեկին համոզել մասնակցելու բարեգործական նպատակներով արվող բաժանորդագրութեանը:

— Չե՞ք առարկի, եթէ անկեղծորեն խոսեմ ձեզ հետ:

Նա մպտաց և շարժեց գլուխը:

— Ձեր կինը արժանի՞ էր նման վերարկւունքի:

— Ոչ:

— Որեէ բողոք ունե՞ք նոսնից:

— Ոչ մի բողոք:

— Այդ դեպքում մի՞թէ հրեշավոր չէ լքել նրան տասնյոթ տարվա ամուսնական կյանքից հետո նման ձևով, երբ նա ոչ մի մեղք չունի:

— Հրեշավոր է:

Ես պարճացած նայեցի նրան: Իմ ասածների հետ այդքան անկեղծորեն համաձայնվելը զրկեց ինձ հենարանից և դրեց ոչ միայն զմբարին, այլ նաև ծիծաղելի դրութեան մեջ: Ես պատրաստվել էի համոզել նրան, խրատել, սպառնալ, շարժել գութը, նախազգուշացնել ու հանդիմանել, և եթէ կարիք լիներ նույնիսկ խայթել ու կծու ծաղրի ենթարկել: Բայց ի՞նչ կարող է անել խոստովանահաշքը, երբ մեղավորն ինքն է խոստովանում իր

մեղքերը: Ես ոչ մի փորձ չունեի, քանի որ ինքս էլ էի ժխտում
ամեն տեսակի մեղադրանք:

— Իսկ Տեսո, Ի՞նչ,— հարցրեց Սթրիբլենզը:

Աշխատեցի արհամարհանքով ծոմել շրթունքներս:

— Եթե ամեն ինչ ընդունում եք, ինձ թվում է այլևս կարիք
չկա շարունակելու:

— Ինձ էլ է թվում:

Ես զգացի, որ առանձնապես լավ շեմ կատարում ինձ վրա
դրված պարտականությունը և սաստիկ զայրացա:

— Բայց գրողը տանի, չէ՞ որ չի կարելի առանց կոպեկի
թողնել կնոջը:

— Ինչո՞ւ չի կարելի:

— Ինչո՞վ է նա ապրելու:

— Տասնյոթ տարի ես եմ պահել նրան, ինչո՞ւ չի կարող
հիմա, թեկուզ բազմազանություն համար, ինքը պահել իրեն:

— Զի կարող:

— Թող փորձի:

Ես, իհարկե, շատ բանով կարող էի պատասխանել նրան:
Կարող էի խոսել կնոջ տնտեսական դրություն մասին, այն
պարտականությունների մասին, որ տղամարդն այս կամ այն
կերպ իր վրա է վերցնում ամուսնանալիս, բայց հանկարծ հաս-
կացա, որ վերջին հաշվով կարևոր է միայն մի բան:

— Գուց ասյևս չե՞ք սիրում նրան:

— Բոլորովին,— պատասխանեց նա:

Դրանք մարդկային կյանքին վերաբերվող շատ լուրջ հար-
ցեր էին, բայց Սթրիբլենզն այնպիսի հանդուգն անամոթությամբ
էր պատասխանում, որ ես ստիպված կծում էի շրթունքներս,
երպեսզի չծիծաղեմ: Շարունակ կրկնում էի ինքս ինձ, որ պար-
զապես զզվելի էր նրա վարքագիծը, և աշխատում էի ազնիվ
զայրույթով լցվել:

— Գրողը տանի, չէ՞ որ դուք պարտավոր եք երեխաների
մասին մտածել: Նրանք ոչ մի վատ բան չեն արել ձեզ և ոչ էլ
խնդրի են աշխարհ բերել իրենց: Եթե շնոգաք նրանց մասին,
փողոց կնետվեն:

— Շատ տարիներ նրանք ոչ մի կարիք չեն զգացել: Ոչ բո-
լոր երեխաներն են այդպես ապրում: Բացի դրանից, որևէ մեկը
հոգ կտանի նրանց մասին: Ես համոզված եմ, որ Մակ-Էնդրյու-
ները կվճարեն նրանց ուսման ծախսերը:

— Մի՞թե չեք սիրում նրանց: Այնքան լավ երեխաներ են:
Մի՞թե ուզում եք հրաժարվել նրանցից:

— Ես սիրում էի նրանց, երբ փոքր էին, իսկ հիմա, երբ
հասունացել են, ճիշտն ասած, ոչ մի զգացմունք չունեմ նրանց
նկատմամբ:

— Անմարդկային է դա:

— Շատ հնարավոր է:

— Եվ բոլորովին չե՞ք ամաչում:

— Ոչ:

Ես փորձեցի փոխել խոսակցության ընթացքը:

— Բոլորը կատարյալ խոզ կհամարեն ձեզ:

— Թող համարեն:

— Մարդիկ կտանեն և զզվանք կզգան ձեր նկատմամբ: Դա
ոչ մի նշանակություն չունի՞՝ ձեզ համար:

— Ոչ:

Այնքան արհամարհական էր նրա կարճ պատասխանը, որ
իմ հարցը, շնայած միանգամայն բնական էր, շափազանց անմխ
թվաց ինձ: Ես մի երկու րոպե խորհեցի:

— Զեմ հասկանում, ինչպես կարող է մարդ հանգիստ խղճով
սպրել, երբ գիտե, որ շրջապատում բոլորը գատապարտում են
իրեն: Գուց համոզված եք, որ վաղ թե ուշ խիզճը չի տանջելու
ձեզ: Բոլորն էլ խիզճ ունեն, որ արթնանալու է մի օր: Եթե ձեր
կինը մահանա, մի՞թե խիզճը չի տանջի ձեզ:

Նա չպատասխանեց: Ես համբերությամբ սպասում էի մինչև
որ նա խոսեր: Վերջապես ստիպված եղա ինքս խախտել լռու-
թյունը:

— Դրան ի՞նչ կասեր:

— Միայն այն, որ դուք ապուշ եք:

— Բոլոր գեալքերում ձեզ կստիպեն, որ պահեք ձեր կնոջն
ու երեխաներին,— պատասխանեցի ևս փոքր-ինչ խոցված:—
Իմ կարծիքով օրենքը կայաշտպանի նրանց:

— Օրենքը կարո՞ղ է քարից արշուն քամել: Ես ոչինչ չունեմ:
Հարյուր ֆունտով եմ եկել այստեղ:

Եթե առաջ տարակուսում էի, հիմա բոլորովին շփոթվեցի:
Իսկապես, «Հեբելի դը Բելմ»-ի աղքատիկ պայմանները նրա ա-
սածների լավագույն ապացույցն էին:

— Իսկ երբ ձեր փողերը վերջանան, ի՞նչ եք անելու:

— Որևէ աշխատանք կանեմ:

Նա միանգամայն հանդիստ էր, իսկ աչքերում սուտղվա նման փայլում էր մի քմծիծաղ, որից երևում էր, որ իմ բուրբ ասած- ները հիմարութուն էին թվում նրան: Ես մի պահ լռեցի, մտա- ծեղով, թե հետո ինչ ասեմ: Բայց այս անգամ առաջինը նա խո- սեց:

— Ինչո՞ւ է՞մի՛ն նորից չի ամուսնանում: Նա դեռ երիտասարդ է և արտաքինով բավական գրավիչ: Կարող եմ նրան երաշխա- վորել որպես հիանալի կին: Եթե ցանկանում է բաժանվել, խնդրեմ, ես մեղքն ինձ վրա կվերցնեմ:

Այժմ ժպտալու իմ հերթն էր Որքան էլ խորամանկ լինե՞ս Սթրիբլենդը, այնուամենայնիվ ինձ համար պարզ էր, թե ինչ նպատակ է հետապնդում: Նա պատճառներ ուներ թաքցնելու այն փաստը, որ կնոջ հետ էր եկել այստեղ, և ամեն տեսակի զգուշութուն էր գործադրում, որպեսզի թաքցնեք նրա հետքերը: Ես վճռականությամբ պատասխանեցի.

— Ձեր կինը երբեք չի բաժանվի ձեզանից: Նա այդպես է որոշել: Ոչ մի հույս չունենաք:

Սթրիբլենդը բուրբովին անկեղծ զարմանքով նայեց ինձ: Ժպիտը լքացավ նրա շրթունքներից և միանգամայն լուրջ տոնով ասաց.

— Բայց, աղափնյակս, ինձ համար միևնույն է, թե ինչ կլինի: Ես ծիծաղեցի:

— Դե լավ, մեզ այդքան էլ հիմար մի համարք: Մեզ հայտ- նի է, որ ինչ-որ կնոջ հետ եք եկել այստեղ:

Նա մի փոքր ցնցվեց, հետո քրքրաց: Այնքան վարակիչ էր նրա ծիծաղը, որ մոտիկ նստած մարդիկ մեզ նայեցին, և նրան- ցից մի քանիսը նույնպես ծիծաղեցին:

— Ես ոչ մի զվարճալի բան չեմ տեսնում դրանում:

— Խեղճ էմի. — ասաց նա ժպտալով:

Հետո նրա դեմքը արհամարհական արտահայտություն ստա- ցավ:

— Ինչ ոգորմեի արարածներ են այդ կանայք: Սեր: Միշտ սեր: Նրանց թվում է, թե տղամարդը հեռանում է կնոջից միայն հանուն ուրիշ կնոջ: Մի՞թե կարծում եք ես այնքան հիմար եմ, որ մի կնոջ համար նման քայլի դիմեի:

— Ուզում եք ասել, որ ձեր կնոջը թողել եք ոչ ի սեր ուրիշի:

— Իհարկե:

— Ազնվորե՞մ:

Զգիտեմ, թե ինչու երանից ազնիվ խոսք պահանջեցի, դուցե պարզամտութունից:

— Ազնվորեմ:

— Այդ դեպքում բացատրեք ինձ, ի սեր աստժո, ինչո՞ւ լքեցիք նրան:

— Ուզում եմ գեղանկարչությամբ զբաղվել:

Ես մի երկարատև հայացք գցեցի նրա վրա: Ոչինչ չէի հաս- կանում: Ինձ թվաց, թե նա խելագարվել է: Մի մոռանաք, որ ես շատ երիտասարդ էի և նրան տարիքն առած մարդ էի հա- մարում: Այնքան էի զարմացել, որ ամեն ինչ մոռացա:

— Բայց չէ՞ սր դուք քառասուն տարեկան եք:

— Հենց դրա համար էլ սրտեցի, որ սկսելու ժամանակն է:

— Երբե՞զ զբաղվե՞լ եք գեղանկարչությամբ:

— Երբ երեխա էի, երազում էի նկարիչ դառնալ, բայց հայրս ստիպեց առևտրով զբաղվել: Նա գտնում էր, որ արվեստով փող չես վաստակի: Նկարել սկսեցի մի քանի տարի առաջ, նույնիսկ գեղարվեստի երեկոյան դպրոց էի հաճախում:

— Ճի՞շտ է, որ միսիս Սթրիբլենդը կարծում էր, թե ակումբ եք գնում բրիչ խաղալու:

— Այո:

— Ինչո՞ւ նրան չէիք ասում:

— Ես նախընտրում էի լռել այդ մասին:

— Ձեզ հաջողվո՞ւմ է նկարել:

— Դեռ ոչ, բայց կսովորեմ: Դրա համար էլ այստեղ եմ եկել: Ես կոնդոնում չէի կարող գտնել ինչ որ ինձ պետք էր, դուցե այստեղ կարողանամ:

— Մի՞թե կարծում եք, որ այդ տարիքում սկսելով որևէ բան կհասնեք: Մարդիկ սովորաբար նկարել են սկսում տասնութ տա- րեկան հասակում:

— Հիմա ես կարող եմ ավելի շուտ սովորել, քան տասնութ տարեկանում:

— Ինչո՞վ եք համոզված, որ տաղանդ ունեք:

Սթրիբլենդն անմիջապես շպատախանեց: Նա հայացքը հա- ոնել էր անցնող ամբոխի վրա, բայց, ինչպես ինձ թվաց, չէր նկատում նրան: Նրա տված պատասխանը փաստորեն պատաս- խան չէր:

— Ես պետք է նկարեմ:

— Դուք ոխակի չե՞ք դիմում:

4— Կուսին և վերցնեսանց

Նա ուշադիր նայեց ինձ: Նրա աչքերը այնպիսի տարօրինակ արտահայտություն ունեին, որ ես վառ զգացի ինձ:

— Քանի՞ տարեկան եք Քսաների՞ք:

Ինձ թվաց, թե բոլորովին անտեղի էր այդ հարցը: Իմ տարիքում արկածներ որոնելը բնական էր, իսկ նրա երիտասարդությունն արդեն անցել էր. բորսային միջնորդ էր, հասարակական գիրքի, կնոջ ու երեխաների տեր: Այն, ինչ բնական էր ինձ համար, անթույլատրելի էր նրան: Ես ուզում էի բոլորովին անկեղծ լինել:

— Միգուցե հրաշք պատահի և մեծ նկարիչ դառնաք, բայց չպետք է մոռանաք, որ միլիոնից մի հնարավորություն ունեք: Մարտափելի կլինի, երբ այս ամենից հետո համողվեք, որ սխալ բան էր կատարել:

— Ես պետք է նկարեմ, — կրկնեց նա:

— Իսկ եթե միայն երրորդ կարգի նկարիչ դառնաք, արժե՞ ամեն ինչ զոհարելով դրա համար: Վերջապես կյանքում անհրաժեշտ չէ, որ ամեն ինչում մարդ առաջինը լինի. կարելի է հանգիստ ու խաղաղ ապրել, եթե նույնիսկ միջակություն ես, բայց միջակ նկարիչ դառնալ չի կարելի:

— Դուք պարզապես հիմար եք:

— Ձեզ հասկանում, թե ինչու բացահայտ ճշմարտություն ասելը հիմարություն է:

— Ձեզ ասում եմ, որ պետք է նկարեմ: Այլ կերպ չեմ կարող: Երբ մարդ ջուրն է ընկնում, ոչ մի նշանակություն չունի, լավ է լողում, թե վատ: Նա պետք է դուրս գա ջրից, այլապես կխեղդվի:

Նրա ձայնի մեջ իսկական կիրք դրացվեց, որը ինձ վրա մեծ սպառնալիցություն թողեց: Ինձ թվաց, թե ինչ-որ հզոր ու անհաղթահարելի բան էր փոթորկվում նրա մեջ, անկախ նրա կամքից՝ իշխում նրա վրա: Ես ոչինչ չէի հասկանում: Կարծես թե ինչ-որ զե էր մտել նրա մեջ, մի զե, որ ամեն վայրկյան կարող էր հռչակել ու կործանել նրան: Բայց արտաքնապես Սթրբլենդը չէր սովորական էր թվում: Ես հայացքս չէի կտրում նրանից, բայց դա բոլորովին չէր շփոթեցնում նրան: Հետաքրքիր է, մասնակցի ես, անծանոթ մարդն սովորեց կոչեր նրան, այդպես նստած իր հին բաճկոնով ու փռչուս գլխարկով, պարկանման անդրավարտիքով, կեղտոտ ձեռքերով, շտափրված ծնոտին ցցված շիկակարմիր մազերով, փոքրիկ աչքերով և խոշոր, հանդուգն,

կուպիա ու անտաշ քթով: Նրա բերանը խոշոր էր, շրթունքները՝ հաստ ու զգալուն: Ոչ, ինձ համար շատ դժվար էր բնորոշել նրան:

— Ուրեմն, չե՞ք վերադառնալու ձեր կնոջ մոտ, — ասացի ևս վերջապես:

— Երբեք:

— Նա պատրաստ է ամեն ինչ մոռանալ և նոր կյանք սկսել: Նա երբեք որեէ հանգիմանական խոսք չի ասի:

— Թող գրողի ծոցը կորչի:

— Ձեզ չի՞ մտահոգում, որ մարդիկ կատարյալ սրիկա կհամարեն ձեզ: Ձեզ չի՞ մտահոգում, որ ձեր կինն ու երեխաները ստիպված կլինեն ողորմություն խնդրել:

— Բոլորովին:

Ես լուցի մի պահ, որպեսզի հաշորդ դիտողությունս ավելի ծանրակշիռ դարձնեմ, և հետո վճռականությամբ ասացի.

— Դուք կատարյալ սրիկա եք:

— Ամեն ինչ ասացի՞ք, թեթևացաք, գե հիմա գնանք ճաշելու:

ԳԼՈՒԽ 13

Ինձ թվում է, թե ավելի պտտաճ կլինեի մերձել այդ առաջարկը: Գուցե պետք է արտահայտեի այն վրդովմունքը, որ ես իրականում զգում էի, և արժանանալի գնդապետ Մակ-Էնդրյուի գովասանքին, պատմելով նրան նման մարդու հետ միևնույն սեղանի շուրջը նստելու իմ հպարտ մերժման մտախն: Բայց այն վախը, որ նման զեպքերում չեմ կարողանում միևնույն վերջ իրագործել մտադրությունս, ինձ միշտ էլ խանգարել է բարոյախոսի դեր կատարելուց: Այս անգամ էլ, վստահ լինելով, որ իմ ազնիվ զգացմունքները Սթրբլենդի վրա ոչ մի ազդեցություն չեն թողնի, ստիպված եղա լուել: Միայն բանաստեղծը կամ սուրբը կարող է ջրել ասֆալտի փողոցը, միամտորեն հավատալով, որ նրա վրա շուշաններ կբացվեն և կհատուցեն իր աշխատանքը:

Ես վճարեցի մեր խմած օշինդրոլու համար և գնացինք էժանագին ռեստորան: Ռեստորանը լի էր մարդկանցով, և դահլիճում ընդհանուր աշխուժություն էր տիրում: Մենք հաճույքով ճաշեցինք՝ ես պատանու ախորժակով, իսկ Սթրբլենդը՝ քարա-

ցած խնձով մարդու Այնտեղից գինետուն զնացինք լիկյորով սուրճ խմելու:

Ես արգեն ասել էի նրան այն ամենը, ինչի համար եկել էի Փարիզ: Եվ շնայած ինձ թվում էր, որ խոսակցութեանը վերջ տալով դավաճանում եմ միսիս Սթրիբլենդին, բայց Սթրիբլենդի անտարբերության զեմ պայքարելու ուժ այլևս չունեի: Միայն կէնը կարող է միևնույն բանը նույն եռանդով տասն անգամ կրկնել: Ես ինձ մխիթարում էի, մտածելով, որ Սթրիբլենդի հոգեկան վիճակի մասին կարող եմ ավելի լավ պատկերացում կազմել: Այդ բանը ինձ թերևս ավելի շատ էր հետաքրքրում: Բայց դա այնքան էլ հեշտ չէր, որովհետև Սթրիբլենդը զրուցասիրութեամբ աչքի չէր բեկնում: Նա շատ զովարութեամբ էր արտահայտում իր մտքերը, կարծես նրա համար բառերը աշխարհի հետ հաղորդակցվելու միջոց չլինեին: Մնում էր նրա հոգեկան մղումների մասին գուշակել միայն այն կցկատար արտահայտություններից ու անորոշ շարժումներից, որ նա անում էր: Եվ շնայած որևէ նշանակալից բան չէր ասում, բայց ոչ մեկը չէր կարող նրան տաղտկալի անձնավորություն համարել: Հնարավոր է, որ նրա անկեղծությունն էր զրա պատճառը: Հավանաբար Փարիզն այնքան էլ չէր հետաքրքրում նրան, շնայած առաջին անգամն էր լինում այնտեղ, չհաշված կնոջ հետ կատարած կարճատև այցելությունը, և ամեն տեսակի նորություններին նայում էր առանց ամենափոքր զարմանքի: Ես շատ եմ եղել Փարիզում և միշտ էլ հիացել եմ նրանով: Նրա փողոցներով անցնելիս ինձ միշտ էլ թվացել է, թե որևէ հետաքրքիր արկածի կհանդիպեմ: Սթրիբլենդն անտարբեր էր մնում: Այդ ամենը վերհիշելով մտածում եմ, որ նա կույր էր ամեն ինչի նկատմամբ, բացի իր հոգու ինչ-որ անհանգիստ տեսիլներից:

Գինեառանը, որտեղ բազմաթիվ պոռնիկներ կային, մի ծիծաղելի դեպք տեղի ունեցավ: Աղջիկներից մի բանիսը նստած էին տղամարդկանց հետ, մի քանիսն էլ՝ մեռակ: Շուտով նկատեցի, որ նրանցից մեկը նայում է մեզ: Երբ նրա և Սթրիբլենդի հայացքները հանդիպեցին, նա ժպտաց: Ինձ թվաց, թե Սթրիբլենդը շնկատեց նրան: Աղջիկը վեր կացավ տեղից և դուրս եկավ, բայց անմիջապես վերադարձավ և մեր կողքով անցնելիս շատ բաղաջավարի կերպով խնդրեց հյուրասիրել իրեն խմիչքով: Նա նրստեց մեր սեղանի մոտ, և ես սկսեցի խոսել նրա հետ, շնայած համոզված էի, որ նրան հետաքրքրողը ես չեի, այլ Սթրիբլենդը:

Ես նրան բացատրեցի, որ Սթրիբլենդը ֆրանսերեն միայն մի բանի խոսք գիտե: Աղջիկը փորձեց նրա հետ խոսել մեկ նշաններով, մեկ կոտորակած ֆրանսերենով, չգիտեմ, թե ինչու կարծելով, որ այդպես Սթրիբլենդն իրեն ավելի լավ կհասկանար: Եվ վերջում օդտազործեց իր իմացած մի բանի անգլերեն արտահայտությունները: Նա ինձ ստիպեց թարգմանել այն, ինչ կարող էր արտահայտել միայն իր մայրենի լեզվով, և համարեն պահանջում էր, որ թարգմանեմ Սթրիբլենդի պատասխանների իմաստը: Սթրիբլենդը լավ տրամադրության մեջ էր, մի փոքր զվարթ, բայց ընդհանրապես անտարբեր:

— Ինձ թվում է, դուք հաղթանակ տարաք,— ծիծաղեցի ես: — Շոյված չեմ:

Նրա փոխարեն ես ինձ ավելի շփոթված և ավելի քիչ հանգիստ կզգայի:

Աղջիկն ուներ ծիծաղուն աչքեր և հրապուրիչ բերան: Ինձ հետաքրքրում էր, թե նա ինչ հետաքրքիր բան էր գտել Սթրիբլենդի մեջ: Աղջիկը չէր թարցնում իր ցանկությունները, և ես ստիպված էի թարգմանել:

— Նա ցանկանում է, որ իր հետ տուն գնաք:

— Ես կանանց հետ գործ չունեմ:

Աշխատեցի որքան հնարավոր է մեղմացնել նրա պատասխանը: Ինձ թվում էր, որ նման հրավերը մերժելն աննվազն անթաղաքավարություն էր, և Սթրիբլենդի մերժումը փողի պակասով բացատրեցի:

— Բայց նա ինձ դուր է գալիս, — ասաց աղջիկը: — Ասացեք նրան, որ փող չեմ ուզում:

Երբ թարգմանեցի աղջկա պատասխանը, Սթրիբլենդը անհամբերությամբ թոթվեց ուտերը:

— Ասացեք նրան, թող գրողի ծոցը կորչի:

Բառերից ավելի պերճախոս էր նրա խոսելու տոնը և աղջիկը, հանկարծ, հպարտորեն ետ գցեց գլուխը: Հնարավոր է նա իր շպարի տակ նույնիսկ կարմրեց: Նա վեր կացավ՝ ասելով.

— Monsieur n'est pas poli, — և դուրս եկավ գինետեղից:

— Ինձ թվում է, կարիք չկար վիրավորելու նրան: Վերջապես նա բողբոլի մեջ ձեռք է նկատել, — ասացի ես վրդովված:

— Այդպիսի կանայք զզվանք են պատճառում ինձ, — ասաց նա կոպտորեն:

Ես հետաքրքրությամբ նայեցի նրան: Նրա դեմքն իսկապես

զգվանք էր արտահայտում, բայց այնուամենայնիվ դա կուպիտու ռու զգայուն մարդու դիմք էր:

Ըստ երևույթին հենց դա էլ գրավել էր աղջկան:

— Եթե ես ցանկանայի, ուզածդ կհինք իմը կլինեիր Լոնդոնում: Ես դրա համար չեմ եկել այստեղ:

ԳԼՈՒԽ 14

Անգլիա վերադառնալիս, ճանապարհահին, ես շատ էի մտածում Սթրիքլենդի մասին և աշխատում էի կարգի բերել այն ամենը, ինչ պետք է ասեի նրա կնոջը: Ես գիտեի, որ միտիս Սթրիքլենդը գոհ չէր մնալու ինձանից, որովհետև ինքս էլ գոհ չէի: Սթրիքլենդը տարակուսանքի մեջ էր գցել ինձ. ես չէի հասկանում նրա վարքագծի շարժառիթները: Իմ հարցին, թե երբ առաջին անգամ միտք հղացում նկարիչ դառնալ, նա չկարողացավ կամ էլ չցանկացավ պատասխանել: Իսկ անձամբ ես ոչինչ չէի հասկանում զրանից: Ճիշտ է, աշխատում էի համոզել ինձ, որ նրա ծանրաշարժ մտքում աստիճանաբար վրդովմունքի ինչ-որ անորոշ զգացում էր ծնվել, բայց այդ ենթադրությունը անհիմն էր գտնում, երբ մտածում էի, որ փաստորեն նա երբեք չէր դժգոհել իր միտքինակ կյանքից: Եթե ամեն ինչ այնքան էր զգվեցրել Սթրիքլենդին, որ որոշել էր նկարիչ դառնալ, միայն թե աղատվեր այդ կապանքներից, դա հասկանալի և բավական տափակ կլիներ, սակայն նրան երբեք չէր կարելի տափակ մարդ համարել: Եվ քանի որ ես հոգով ուսմանտիկ էի, հորինեցի մի վարկած, որը, չնայած անհիմն թվաց ինձ, այնուամենայնիվ ինչ-որ բան բացատրում էր: Ես հարց էի տալիս ինձ՝ միգուցե Սթրիքլենդի հոգու խորքում բուն է դրել ստեղծագործական մի խոր բնազդ, որին կյանքի պայմանները խանգարել էին դրսևորվելու, բայց որը, այնուամենայնիվ, աճում է անողորմաբար, մինչև որ ամբողջովին կլաներ նրան ու գործողության մղեր: Այդպես կհղուն է ձուռն դնում ուրիշ թուշունի բնում, և երբ նրա ձագը մեծանում է, դուրս է նետում իր խորթ եղբայրներին և վերջում էլ քանդում բույնը, որ պատսպարել էր իրեն:

Տարօրինակ էր, որ ստեղծագործական բնազդը համակել է այդ տաղտկալի բորսային միջնորդին, գուցե կործանելու համար նրան և դժբախտացնելու նրա հարազատներին: Բայց մի՞-

թե ավելի տարօրինակ չէ, երբ հարուստ ու ամենակարող մարդկանց վրա է իջնում աստծո ոգին և համառոտ հետամուտ լինում նրանց մինչև վերջապես պարտվելով՝ նրանք հրամարվում են կյանքի հաճույքներից ու կանանց սիրուց՝ հանուն մենակյաց դաժան ապրելակերպի: Հայտնությունը տարբեր տեսքով կարող է հանդես գալ և տարբեր մարդիկ տարբեր ձևով են ընդունում այն: Ոմանք կարիք ունեն ուժեղ ցնցման՝ այդպես քարն է փշուր-փշուր լինում մոլեգին հեղեղից, ոմանց հետ էլ ամեն ինչ աստիճանաբար է տեղի ունենում՝ այդպես ջուրն է հղկում քարը: Սթրիքլենդը ուղղամիտ էր, ինչպես Ֆանատիկ, խստասիրտ՝ ինչպես առաքյալ:

Բայց ինձ մնում էր դեռ համոզվել, նրա ստեղծագործությունները արդարացնելու էին արդյոք այն կիրքը, որ համակել էր նրան: Երբ Սթրիքլենդին հարցրեցի, թե Լոնդոնի գեղարվեստի գիշերային դպրոցի ընկերները ինչ կարծիք ունենին իր աշխատանքների մասին, նա ժպտաց.

— Նրանց կարծիքով ես հիմարություններով էի զբաղված:

— Դուք այստե՞ղ էլ եք որևէ արվեստանոց հաճախում:

— Այո: Այդ տխմարը, — ես մեր մասնատրոյին նկատի ունեմ, — այսօր առավոտյան, երբ տեսավ իմ նկարը, միայն բարձրացրեց հոնքերն ու առաջ անցավ:

Սթրիքլենդը բարձրաձայն ծիծաղեց: Նա բոլորովին էլ վհատված չէր երևում: Ուրիշների կարծիքը բացարձակապես չէր հետաքրքրում նրան: Հենց դա էլ շփոթեցնում էր ինձ ամեն անգամ, երբ գործ էի ունենում նրա հետ: Մարդիկ մեծ մասամբ խաբում են իրենց, երբ ասում են, թե ուրիշների կարծիքը չի հետաքրքրում իրենց: Սովորաբար նրանք վարվում են այնպես, ինչպես ցանկանում են, միայն այն հույսով, որ իրենց տարօրինակ արարքների մասին ոչ ոք չի իմանա. երբեմն էլ վարվում են մեծամասնության կարծիքին հակառակ, որովհետև շրջապատի մարդիկ հավանություն են տալիս նրանց: Իհարկե, դժվար չէ արհամարհել հասարակական պայմանականությունները, եթե այդ արհամարհանքը մի պայմանականություն է, որն ընդունված է ձեր բարեկամների նեղ շրջանում: Այդ դեպքում մարդ մեծ հարգանքով է լցվում սեփական անձի նկատմամբ: Նա գոհ է իր բաշտությունից, առանց վտանգի ահաճ զգացողություն ունենալու: Բայց հավանության արժանանալու տենչը քաղաքակիրթ մարդու թեղև ամենաարմատացած բնազդն է: Ոչ ոք այնքան չի ձրգ-

տում պատկանելութեան քողով ծածկել իրեն, որքան անառակ կինը, որին զայրուցեալ հետապնդում է վերապորժած առաքինու- թյունը: Ես չեմ հավատում նրանց, ովքեր աշխատում են պնդել, թէ ոչ մի նշանակութիւն չեն տալիս շրջապատի մարդկանց կարծիքին: Դա անմիտ ճոխորտանք է: Իրականում նրանք չեն վախենում միայն թեթեւ զանցանքների համար արված նախա- տինքներից, համոզված լինելով, որ ոչ ոք չի իմանա դրանց մասին: Բայց այստեղ, իմ առջև էր մի մարդ, որին իսկապես չէր անձանդատացնում, թէ ինչ են իր մասին մտածում ուրիշ- ները: Պայմանականութիւնները ոչ մի իշխանութիւն չունեին նրա վրա: Սթրիքլենդը մարմինը չուղ քսած ըմբիշի էր նման, հնարավոր չէր բռնել և զա հանցագործութեան հասնող ազա- տութիւն էր տալիս նրան: Հիշում եմ, ես նրան ասացի.

— Եթէ բոլորը ձեզ նման վարվելին, աշխարհը կզաղարեր գոյութիւն ունենալուց:

— Հիմարութիւնն Ամեն մարդ չի ցանկանա ինձ նման վար- վել: Մեծամասնութեանը դուր է գալիս ամեն ինչ աջնպես անել, ինչպես բոլորը:

Ես փորձեցի գոնե մեկ անգամ խայթել նրան:

— Դուք, ըստ երևութիւն շեք ընդունում մաքսիմը, որն ասում է. «Վարվիր այնպես, որ յուրաքանչյուր արարող կարողանա համբողջանալ կանոնի հիմք դառնալ»:

— Կյանքումս առաջին անգամն եմ լսում: Հիմարութիւն է, որիչ ոչինչ:

— Ի միջի այլոց դրանք Կանտի խոսքերն են:

— Հետո ինչ: Հիմարութիւն է, որիչ ոչինչ:

Արժե՞ր նման մարդու խիղճը շարժելու փորձ անել: Դա միևնույնն էր, թէ փորձել սեփական արտացոլումը տեսնել առանց հայելու: Իմ կարծիքով, խիղճը յուրաքանչյուր անհատի մեջ դրված պահարան է, հսկելու համար այն կանոնները, որոնք հասարակութիւնը իր անվտանգութեան համար է մշակել: Դա ոստիկան է դրված մեր սրտերում, որպեսզի թույլ չտա խախ- տել հասարակութեան օրենքները: Այն խուզարկուի նման ևստած է մեր «Լես»-ի կենտրոնական ամբողջում: Իր ցեղակից- ների քաջալերանքին արժանանալու մարդու ձգտումն այնքան մեծ է և այնքան է սարսափում նրանց կողմից դառապարտ- վելուց, որ ինքն է շտապում իր մահացու թշնամու առջև բաց անել դռները: Եվ թշնամին կրնակոխ հետևում է նրան, անձ-

նախրաբար պաշտպանելով տիրոջ շահերը, հիմքում խեղդում հոտից ետ մնալու մարդու նույնիսկ ամենափոքր մտադրու- թյունը: Նա ստիպում է մարդուն հասարակութեան շահերը ավելի բարձր դասելու սեփական շահերից: Զափազանց ամուր են ան- հատին հասարակութեան հետ կապող շղթաները: Եվ մի անգամ համոզվելով, որ իր անձնական շահերից ավելի բարձր շահեր կան, մարդը դառնում է իր համոզմունքների գերին, գահ բարձ- րացնում այն և վերջում, պալատականի նման իր մեջքին իջած արքայական գավազանի տակ կոնալով, դեռ հպարտանում է իր դուրազզաց խղճով: Նա արգեն ամենադժման խոսքերով է նշավակում նրանց, ովքեր չեն ընդունում այդ իշխանութիւնը, բանի որ, հիմա որպես հասարակութեան անդամ, գիտակցում է, որ անզոր է նրա դեմ: Երբ տեսա, որ Սթրիքլենդը իրականում անտարբեր է այն վերաբերմունքի նկատմամբ, որ իր արարքները բնականաբար պետք է առաջացնեին մարդկանց մեջ, սարսա- փով ետ քաշվեցի մարդկային կեղտարանքը կորցրած այդ հրե- շից:

Բաժանվելիս նա ժպտաց.

— Ասացեք էմիին, որ չգա այստեղ: Միևնույն է, ես փոխելու եմ բնակարանս, և նրան չի հաջողվի ինձ գտնել:

— Անձամբ ինձ թվում է, որ նա պետք է շատ գո՞ լինի, որ ազատվեց ձեզանից.— պատասխանեցի ես:

— Սիրելիս, հուսով եմ, որ կկարողանաք նրան ստիպել հաս- կանալու դա: Ասենք, կանայք շատ անմիտ արարածներ են:

ԳՒՈՒՍ 15

Երբ կոնգոն հասա, պարզվեց, որ ինձ գրութիւն է սպասում՝ երեկոյան անհապաղ ներկայանալ միսիս Սթրիքլենդին: Նրա մոտ էր գնդապետ Մակ-Էնդրյուն իր կնոջ՝ միսիս Սթրիքլենդի ուղագ քրոջ հետ: Քույրերը նման էին իրար, և շնայած միսիս Մակ-Էնդրյուն բավական թառամած էր, այնպիսի մարտական տեսք ուներ, կարծես Բրիտանական ամբողջ կայսրութիւնը դրայանում էր պահում, մի տեսք, որ ընդորջ էր ավագ սպաների կանանց, և պայմանավորված բարձր կաստայի պատկանելու հպարտ ինքնագիտակցութեամբ: Նրա շարժումները հանդուգն էին. իսկ բարեկրթութիւնը հազիվ էր բավարարում, որպեսզի

բարձրաձայն շարտահայտի իր համոզմունքը, թե բոլոր նրանք, ովքեր գինվորական չեն, կամակատար են: Գվարդիականներին նա նույնպես չէր սիրում, համարելով նրանց ամբարտավան, իսկ նրանց կանանց մասին, որոնք մոռանում էին այցելություններ կատարել, նույնիսկ խոսել չէր ցանկանում: Նա հագել էր թանկարժեք և անճաշակ շրջագզեսու:

Միսիս Սթրիբլենդն ակնհայտորեն նյարդայնացած էր:

— Այսպես ուրեմն, ի՞նչ նորություններ եք բերել:

— Տեսա ձեր ամուսնուն: Ցավում եմ, բայց նա հաստատ որոշել է չվերադառնալ:— Ես լռեցի մի պահ:— Ցանկանում էր գեղանկարչությունը զբաղվել:

— Դրանով ի՞նչ եք ուզում ասել,— զարմանքից իրեն կորցնելով՝ բղավեց միսիս Սթրիբլենդը:

— Մի՞թե նման հակում երբեք չէք նկատել նրա մեջ:

— Նա բոլորովին ցնդել է,— բացականչեց գնդապետը:

Միսիս Սթրիբլենդը խոժոռեց հոնքերը: Նա փորձում էր իր հիշողությունը:

— Նախքան մեր ամուսնությունը Չարլին հաճույքի համար երբեմն ինչ-որ ներկերով էր զբաղվում: Բայց չէք կարող պատկերացնել, թե ինչպիսի խզբզանք էին գրանք: Մենք նույնիսկ ճաղրում էինք նրան: Նա բացարձակապես անտաղանդ է:

— Դա, իհարկե, միայն պատրվակ է,— միջամտեց միսիս Մակ-Էնդրյուն:

Միսիս Սթրիբլենդը որոշ ժամանակ խորասուզվեց մտքերի մեջ: Պարզ էր, որ շգիտեր ինչպես հասկանար իմ հաղորդած նորությունը: Հյուսիսային արգեն կարգի էր բերված, ըստ երևույթին միսիս Սթրիբլենդի մեջ անարարությունը հաղթել էր վշտին, և այն այլևս տիրոջն սպասող կահավորված սենյակի ճնշող տպավորություն չէր թողնում, ինչպես աղետից հետո կատարած իմ առաջին այցելության ժամանակ: Բայց հիմա, Փարիզում Սթրիբլենդին լավ ճանաչելուց հետո, այլևս չէի կարողանում պատկերացնել նրան այդ պայմաններում, «Մի՞թե երբեք նրանց մտքով չի անցել, թե որքան անհամապատասխան է նրան այս բոլորը»,— մտածեցի ես:

— Իսկ եթե ուզում էր նկարիչ դառնալ, ինչու էր լուռ,— հարցրեց միսիս Սթրիբլենդը վերջապես:— Ես ամենաանպետք կինը կլինեի, եթե անտարբեր մնայի նման ձգտման նկատմամբ:

Միսիս Մակ-Էնդրյուն սեղմեց շրթունքները: Նա հավանա-

րար միշտ էլ կշտամբում էր բոլոր արվեստի մարդկանց նկատմամբ ունեցած նրա մոլորությունը համար և ճաղրում նրա «կուլտուրական» բարեկամներին:

Միսիս Սթրիբլենդը շարունակեց.

— Ձե՛ որ, եթե նա փոքր-ինչ տաղանդ ունենար, առաջինը ես կբաշխեիք նրան, կգիմեի ամեն տեսակ զոհաբերություն: Ավելի կզերադասեի նկարչի կին լինել, քան բորսային միջնորդ: Եվ եթե երեխաները չլինեին, ոչ մի բանից չէի վախենա և Չելսիի որևէ խղճուկ արվեստանոցում ինձ նույնքան երջանիկ կզգայի, որքան այս բնակարանում:

— Դու ինձ համբերությունից հանում ես, հոգյակս,— բացականչեց միսիս Մակ-Էնդրյուն:— Մի՞թե ուզում ես ասել, որ հավատում ես այս ամբողջ անմտությունը:

— Բայց ես համոզված եմ, որ դա ճիշտ է,— մեջ մտա ես վախվորած:

Միսիս Մակ-Էնդրյուն բարեմիտ արհամարհանքով նայեց ինձ:

— Տղամարդը քառասուն տարեկան հասկում չի լքում իր աշխատանքը, կնոջն ու երեխաներին, որպեսզի նկարիչ դառնա, եթե այդ բանում մասնակից չէ կինը: Ինձ թվում է, որ ձեր «արտիստիկ շրջանի» կանանցից մեկը խելքահան է արել նրան:

Միսիս Սթրիբլենդի գունատ դեմքը հանկարծ շառագունեց:

— Արտաքինով նա ինչպիսի՞ն է:

Ես մի քիչ տատանվեցի: Համոզված էի, որ իմ ասածը ումբի պայթյունի նման ցնցելու էր նրանց:

— Կին չկա նրա հետ:

Գնդապետ Մակ-Էնդրյուն և նրա կինը հայտարարեցին, որ չեն հավատում զրան, իսկ միսիս Սթրիբլենդը վեր թուավ տեղից:

— Ուզում եք ասել, որ շտեսա՞ք նրան:

— Ո՛ւմ պիտի տեսնեի, երբ Սթրիբլենդը բոլորովին մենակ է:

— Հիմարություն,— բղավեց միսիս Մակ-Էնդրյուն:

— Ինքս պետք է գնայի,— ասաց գնդապետը:— Ես ամեն ինչ արագ կիմանայի նրա մասին:

— Ափսոս, որ ինքներդ չգնացիք Փարիզ,— պատասխանեցի ես մի փոքր կծու տոնով:— Անմիջապես կհամոզվեիք, որ ձեր

բոլոր ենթադրութիւնները սխալ են: Նա չի տեղավորվել շքեղ հյուրանոցում, այլ ապրում է մի փոքրիկ սենյակում ամենաաղքատիկ կյանքով, և տանից հեռացել է ոչ նրա համար, որ թեթևամիտ կյանք վարի: Նա ոչ մի կոպեկ չունի:

— Ուզում եք ստել, որ նա ինչ-որ հանցանք է գործել, որի մասին մենք ոչինչ չգիտենք, և թաքնվում է ոստիկանութունից: Նման ենթադրութիւնը հուշի ճառագայթ գցեց նրանց սիրտը, բայց ես ոչ մի բանով չէի կարող հաստատել այն:

— Եթե դա այդպես լինէր, հիմար հո չէր, որ հասցեն կոմպանիոնին տար,— նկատեցի ես խոցող տոնով:— Համենայն դեպս, ես մի բանում վստահ եմ, որ ոչ մի կին չկա նրա հետ, սիրահարոված չէ և նման բան մտքով էլ չի անցնում:

Տիրեց լուսնային նրանք մտածում էին իմ ասածների մասին:

— Դե, եթե ձեր ասածները ճիշտ են,— վերջապես լուսնայինը ընդհատեց միսիս Մակ-Էնդրյուն,— ուրեմն գործերն այնքան էլ վատ չեն, ինչպես կարծում էի:

Միսիս Սթրիբլենդը նայեց նրան, բայց ոչինչ չասաց: Նա շատ գունատ էր, և նրա գեղեցիկ հոնքերը խոթողվել էին: Նրա դեմքի արտահայտութիւնը անհասկանալի էր ինձ: Միսիս Մակ-Էնդրյուն շարունակեց.

— Եթե դա պարզապես քմահաճույք է, շուտով կանցնի:

— Դուք պետք է նրա մոտ գնաք, էմի,— համարձակվեց ասել գնդապետը:— Կապրեք նրա հետ մի տարի Փարիզում: Երբ-իտաներին մենք կնայենք: Համոզված եմ, որ միտքիսակ կյանքը ձանձրացրել է նրան, վաղ թե ուշ կենդան կվերադառնա և այս բոլորը կմոռացվի:

— Ես չեմ գնա,— ասաց միսիս Մակ-Էնդրյուն:— Ամբի լի լավ է գործելու լրիվ ազատութիւն տալ նրան: Նա կվերադառնա պոչն իրեն քաշած և կսկսի ապրել նորիկին կյանքով:— Միսիս Մակ-Էնդրյուն սառնութեամբ նայեց քրոջը:— Միգուց՝ դու միշտ չէ, որ խելացի ես վարվիլ նրա հետ, էմի: Տղամարդիկ տարօրինակ արարածներ են, նրանց հետ պետք է վարվել իմանալ:

Միսիս Մակ-Էնդրյուն կանանց մեծամասնութեան նման այն կարծիքին էր, որ սրիկա է այն տղամարդը, ով թողնում է իրէն նվիրված կնոջը, բայց կինն, այնուամենայնիվ, ավելի է մեղավոր: Le coeur a ses raisons que la raison ne connaît pas:

Միսիս Սթրիբլենդը հայացքը դանդաղ փոխանցեց մեղանից մեկից մյուսին և ասաց.

— Նա երբեք չի վերադառնա:

— Ախ, հոգյակս, հիշիր, թե քիչ առաջ ինչ լսեցիր նրա մասին: Նա վարժվել է հարժարավետ կյանքին և որ հոգ տանեն իր մասին: Մի՞թե կարծում ես, որ այդ խղճուկ հյուրանոցի խղճուկ սենյակում ապրելով երկար կզիմանսու: Բացի այդ, նա փող չունի: Նա պետք է վերադառնա:

— Քանի դեռ կարծում էի, որ Զարլին կնոջ հետ է փախել, հուշս ունեցի վստահ էի, որ դա երկար չի տևի: Երեք ամսում նա մահու շափ կձանձրանար այդ կնոջից: Իսկ եթե նրա հեռանալու պատճառը կինն չէ, ուրեմն, ամեն ինչ վերջացած է:

— Օ, դա շատ նուրբ հարց է,— նկատեց գնդապետը, վերջին բառի մեջ դնելով այն ամբողջ արհամարհանքը, որ նա զգում էր գինվորականի համար խորթ նման հասկացողութեան նկատմամբ:— Նա կվերադառնա, իհարկե, և ինչպես Գորոթին է ասում, այդ արտառոց արարքից ոչ մի վնաս չի կրի:

— Բայց ես չեմ ուզում, որ նա վերադառնա, — ասաց միսիս Սթրիբլենդը:

— Է՞մի:

Հանկարծ զայրույթի սառը մի մուրցք համակեց միսիս Սթրիբլենդին: Նա գունատվեց և սկսեց արագ, շնչակտուր լինելով խոսել:

— Ես կարող էի ներել, եթե նա թունդ սիրահարվեց մեկի՛ն և փախչեր նրա հետ: Դա բնական կհամարեի և չէի մեղադրի նրան: Կմտածեի, որ նրան ստիպել են փախչել: Տղամարդիկ թույլ են, իսկ կանայք՝ անեքես: Բայց սա բոլորովին այլ բան է: Ես ասում եմ նրան և երբեք չեմ ների:

Գնդապետ Մակ-Էնդրյուն և կինը սկսեցին իրար ընդհատելով համոզել միսիս Սթրիբլենդին: Նրանք պարզապես ապշել էին: Հավատացնում էին, որ նա խելագարվել է, հրաժարվում էին հասկանալ նրան: Միսիս Սթրիբլենդը հուսահատութեամբ դիմեց ինձ:

— Գոնե դուք հասկանո՞ւմ եք ինձ:

— Ոչ բոլորովին: Ուզում եք ասել, որ նրան կենեկիք, եթե նա ձեզ լքած լինէր հանուն ուրիշ կնոջ, բայց ոչ հանուն ինչ-որ գաղափարի: Հավանաբար, դուք կարծում եք, որ առաջին դեպ-

բում հնարավորութուն կունենայիր պայքարելու, իսկ երկրոր-
դում անդո՞ր եր:

Միտիս Սթրիբլենդը ոչ այնքան բարեկամական մի հայացք
դրեց ինձ վրա, բայց ոչինչ շատաց: Ըստ երևույթին ես ճիշտ
նշանակեալին էի խփել: Հետո ցածր, դողողուն ձայնով շարու-
նակեց.

— Երբք չէի կարծում, որ հնարավոր է այդքան տակ մե-
կին: Հասկանո՞ւմ եք, ես միթիթարում էի ինձ, մտածելով, որ
որքան էլ դա երկար տեի, այնուամենայնիվ նա ինձ մտ է վերա-
դառնալու: Ես գիտեի, որ մահվան մահճում նա ինձ էր կանչելու:
և պատրաստ էի դրան: Ես կխնամեի նրան, ինչպես մայր, և
չէրդին վայրկյանին կասեի, որ միշտ սիրել և ամեն ինչ ներում
եմ նրան:

Ինձ հաճախ է զարմանք պատճառել այն ասանձնահատուկ
էտանդը, որ իրենց սիրեցյալների մահվան մահճի մտոց ցուցա-
բերում են կանայք: Երբևմն նույնիսկ ինձ թվացել է, որ նրանք
ախտասանքով են նալում իրենց հարազատների երկարակեցու-
թյանը, որը գրկում է նրանց գեղեցիկ տեսարան սարքելու հնա-
րավորությունից:

— Բայց հիմա... հիմա ամեն ինչ վերջացած է: Նա ինձ
համար բոլորովին օտար մարդ է: Թող մեռակ, լքված, առանց
որևէ բարեկամի սովից մեռնի, ինձ համար միևնույն է: Հուսով
եմ, որ նա որևէ սարսափելի հիվանդությամբ կառուպի: Նա
ալլևս գոյություն չունի ինձ համար:

Այստեղ ես տեղին համարեցի հաղորդել նրան Սթրիբլենդի
խոսքերը.

— Եթե ցունկտնում եք բաժանվել նրանից, նա պատրաստ է
անել այն ամենը, ինչ դրա համար կպահանջվի:

— Ինչո՞ւ նրան աղատություն տամ:

— Իմ կարծիքով նա դրան չի էլ ձգտում: Նա պարզապես
մտածում է, որ ձեզ համար այդպես ավելի հարմար կլինի:

Միտիս Սթրիբլենդը անհամբերությամբ թռթկեց ուտերը: Ես
մի փոքր հիասթափվեցի: Այդ մամանակ ես կարծում էի, որ
մարդիկ ավելի ամբողջական բնավորություն ունեն, և այդպիսի
հմայիչ էակի վրեժխնդրությունը վշտացրեց ինձ: Ես չգիտեի,
թե որքան բազմազան են այն հատկանիշները, որոնցից կազ-
մված է մարդու բնավորությունը: Հիմա լավ եմ հասկանում,

որ մանրախնդրությունն ու վեհանձնությունը, շարությունն ու
զվտությունը, սերն ու ատելությունը կողք կողքի տեղ են
զբաղում միևնույն մարդկային սրտում:

«Կարո՞ղ եմ արդյոք որևէ խոսքով թեթևացնել նվաստացման
այն դասը զգացողությունը, որ տանջում է միտիս Սթրիբլեն-
դին», — մտածում էի ես, և որչեցի փորձել:

— Ինձ երբեմն թվում է, թե ձեր ամուսինը այնքան էլ պա-
տասխանավորություն չի դրում իր արարքների համար: Իմ
կարծիքով նա բոլորովին փոխվել է: Նա տարվել է մի կրթով,
որն իշխում է նրան: Ամբողջովին դրան նվիրվելով՝ նա զարձել է
անպնակամ, ինչպես մանձր սարգոտալնում: Կարծես թե ինչ-որ
մեկը կախարդել է նրան: Ակամայից հիշում ես այն խորհրդավոր
պատմությունը, թե ինչպես է երկրորդ «ես»-ը մանում մարդու
մեջ և դուրս մղում առաջինին: Ոգին մարդու մարմնի մամանա-
կավոր բնակիչն է և ընդունակ է խորհրդավոր կերպարանափո-
խությունների: Նախկինում կասեին, թե Չարլզ Սթրիբլենդի մեջ
գե է մտել:

Միտիս Մակ-Էնդրյուն ուղղեց շրջապահատը ծնկներին, և նրա
սովի աղբարանջանները ձնոթի վրայով ներքև սահեցին:

— Իմ կարծիքով այդ բոլորը դատարկ ստեր են, — ասաց
նա թթու ասունով: — Ես չեմ մխտում, որ էմին շափեց ավելի էր
գտահույսով ամուսնուն: Եթե նա քիչ զբաղված լիներ սեփական
գործերով, հնարավոր է, որ նկատեր, թե ինչ էր կատարվում:
Էնձ կարծում, որ Ալեքը կարող էր տարիներ շարունակ ինձանից
զուգունի ինչ-որ հանցավոր մտազրույթյունների ունենալ:

Տեղապատը աշխարհի ամենաառաքինի մարդու տեսքով աշ-
խարհ հասնեց դատարկ տարածություն:

— Բայց միևնույն է, Չարլզ Սթրիբլենդն անսիրտ անասուն
է: — Միտիս Մակ-Էնդրյուն խփտ հայացք դրեց վրաս: — Ես
կարող եմ ասել, թե ինչու նա թողեց իր կնոջը: — Էգիպտոսից և
միայն էգիպտոսից զորված:

— Դա, իհարկե, ամենապարզ բացատրությունն է, — պա-
տասխանեցի ես, մտածելով, որ դա ոչինչ էլ չի բացատրում:
Հետո վեր կացա, պատճառարանելով, որ հոգնած եմ, հրաժեշտ
ավելցի, և միտիս Սթրիբլենդը չփորձեց պահել ինձ:

Հետագա ղեկավարը ցույց տվեցին, որ միսիս Սթրիբլենդը հաստատակամ կին էր: Նա թարցնում էր իր տանջանքները, որովհետև լավ էր հասկանում, որ դժբախտությունների մասին արված մշտական պատմությունները ձանձրույթ են պատճառում մարդկանց, և նրանք հաճույքով են խուսափում տառապանքի տեսարանից: Որտեղ էլ որ նա հայտնվելու լիներ, — իսկ բարեկամները կարեկրանքից զրզված անընդհատ հրավիրում էին նրան, — իրեն կատարյալ արժանապատվությամբ էր պահում: Հագնվում էր ճաշակով, բայց պարզ, լինում էր ուրախ, բայց իրեն պահում էր համեստ և նախընտրում էր լսել ուրիշներին դաժնությունների, քան թե խոսել իր սեփական վշտի մասին:

Ամուսնու մասին միշտ կարեկցանքով էր հիշում: Սկզբնական շրջանում նման վերաբերմունքը զարմացնում էր ինձ: Մի անգամ նա ինձ ասաց.

— Ես համոզված եմ, որ դուք սխալվում եք, արժանահավատ ազդյուրներից իմացա, որ Չարլզը Անգլիայից մեկնակ չէ գնացել:

— Այդ ղեկավարում ես իր հետքերը թարցնելու մեջ իսկական հանճար է:

Նա շրջեց հայացքը և թեթևակի շիկնեց:

— Այնուամենայնիվ, եթե մեկը ձեզ հարցնի այդ մասին, խնդրում եմ, մի առարկեք, որ նա կնոջ հետ է փախել:

— Լավ:

Նա անփութորեն փոխեց խոսակցության թեման, կարծես դանդաղ առանձնապես չէր հետաքրքրում: Շուտով իմացա, որ միսիս Սթրիբլենդի ծանոթների շրջանում նմանօրինակ մի պատմություն էր շրջում, իբր Չարլզ Սթրիբլենդը սիրահարվել էր ֆրանսիացի մի գերասանուհու, որին առաջին անգամ տեսել էր Էմփայր թատրոնի բեմում և նրա հետ գնացել Փարիզ:

Թե որտեղից էր առաժվել այդ լուրը, ես այդպես էլ չիմացա, բայց այն մեծ համակրանք էր առաջացրել միսիս Սթրիբլենդի նկատմամբ և ամրապնդել նրա դիրքը հասարակության մեջ: Իսկ դա օգտակար եղավ այն մասնագիտության համար, որ նա մտադիր էր ձեռք բերել: Գնդապետ Մակ-Էնդրյուն բույրովին էլ չէր շահագործում, ասելով, որ նա առանց կոպակի է մնացել, նրան անհրաժեշտ էր սկսել իր ապրուստը վաստակել:

և որքան շուտ, այնքան լավ: Միսիս Սթրիբլենդը որոշեց օգուտ բազել գրողների հետ ունեցած իր լայն ծանոթությունից և ուսանց ծամանակ կորցնելու սկսեց սղապրություն ու գրամեքենայի վրա տպել սովորել: Նրա կրթվածությունը ստիպում էր ենթադրել, որ հիանալի մեքենագրուհի կդառնար, իսկ ընտանեկան դրաման նման ձգտումը դարձնում էր բավական հուզիչ: Բարեկամները խոստացան ապահովել նրան աշխատանքով և ներկայացնել իրենց ծանոթներին:

Մակ-Էնդրյունները, որոնք երեխաներ չունեին և սպասովիված էին, իրենց վրա վերցրին երեսաների խնամքը, և միսիս Սթրիբլենդին մնում էր հոգ տանել միայն իր մասին: Նա թույլեց բնակարանը և վաճառեց կահույքը: Տեղավորվելով Վեսթմինսթրում պտնվող երկու փոքրիկ սենյակում, միսիս Սթրիբլենդը նոր կյանք սկսեց, նա այնքան եռանդուն էր, որ կասկած չէր մնում իր նախաձեռնությունից մեջ հաջողության հասնելու վերաբերյալ:

Վերը նկարագրված ղեկավարից հինգ տարի հետո որոշեցի միաժամանակ Փարիզում ապրել: Լոնդոնն ինձ անձրացրել էր: Անտանելիսըն հոգնել էի ամեն օր նույն բանով զբաղվելուց: Ընկերներս համաշափորեն բնթանում էին իրենց կյանքի ճանապարհով, նրանք այլևս ոչ մի բանով չէին կարող զարմացնել ինձ: Հանդիպելիս արդեն նախօրոք գիտեի, թե ինչ էին ասելու, նույնիսկ նրանց սիրաչին գործերը իրենց վրա կրում էին ամուսնու վաղուցից, որոնք մի վերջնակալանիք շարժվում են մյուսը: Կարելի էր գրեթե ճշգրտությամբ հաշվել, թե քանի ուղևոր էին տեղափոխելու: Կյանքը շահագրանց խաղաղ էր անցնում, և ես խուճապի էի մատնվել: Հրաժարվեցի իմ փոքրիկ բնակարանից, վաճառեցի համեստ ունեցվածքս և որոշեցի ամեն ինչ նորից սկսել:

Մեկնելուց առաջ այցելեցի միսիս Սթրիբլենդին: Բավական երկար ժամանակ չէի տեսել նրան և փոփոխություն նկատեցի նրա մեջ, նա ոչ միայն ձերբացել և նիհարել էր, ոչ միայն նոր կնճիթներ էին սկսել նրա ղեկքը, այլ, ինչպես ինձ թվաց, փոփվել էր նաև բնավարությունը: Նա իր գործի մեջ նախընտրության

էր հասել և հիմա Չանսերի-լեյնի վրա գրասենյակ էր պահում։ Միսիս Սթրիբլենդը ինքը գրեթե չէր մեքենագրում, այլ միայն ստուգում էր իր մոտ ծառայող շորս աղջիկների աշխատանքները։ Աշխատելով իր արտագրանքին որոշակի նրբագեղություն տալ, նա առատորեն օգտվում էր կապույտ ու կարմիր թանաքից. պատճենները նա փաթափում էր մուսրե նրբերանգ թղթի մէջ և իր խնամքով ու նուրբ աշխատանքի համար լայն ճանաչման էր արժանացել։ Նա լավ փող էր աշխատում, շնայած չէր կարողանում ազատվել այն մտքից, որ սեփական ձեռքերով ապրուստ վաստակելը այնքան էլ պատվաբեր գործ չէ, և դա էր պատճառը, որ մեկ էլ տեսար գրուցակցին հիշեցնում էր, որ ինքը ծնունդով լեզի է։ Միսիս Սթրիբլենդը խոսակցութեան ժամանակ հիշատակում էր իր ծանոթների անունները, հատկապես հայտնի մարդկանց անունները, ապացուցելու, որ ինքը սոցիալական սանդուղքով ներքև չի իջել։ Նա իր խիղախութեանից ու գործարարութեանից փոքր-ինչ ամաչում էր, բայց ցնծութեան մեջ էր, որ վաղը ճաշելու էր հարավային Քենինգստոնում ապրող հայտնի փաստարանի մոտ։ Հաճույքով պատմելով, որ որդին Քեմբրիջում է սովորում, նա չէր մոռանում, իհարկե, թե թեև սակի մպիտով հիշեցնել պարի աջ անհամար հրավերգների մասին, որ սաանում էր աղջիկը, որ վերջերս էր սկսել ալցելութեաններ կատարել։ Ես շատ անտակա գտնվեցի, հարցնելով.

— Նա՞ էլ է ձեր աշխատանքով զբաղվելու։

— Օ, ոչ, ես թույլ չեմ տա, որ գրանով զբաղվի,— պատասխանեց միսիս Սթրիբլենդը։— Նա շատ լավիկն է և ես համոզված եմ, որ հաջող ամուսնություն կունենա։

— Ինչ թվում է, դա շատ կօգնի ձեզ։

— Շատերը գտնում են, որ բեմն է նրա տեղը, բայց ես, իհարկե, դեմ եմ գրան։ Մեր բոլոր լավագույն գրամատուրդները ծանոթ են ինձ, թեկուզ հենց վաղն էլ կարող եմ մի լավ դեղ վերցնել նրա համար, բայց չեմ ուզում, որ ամեն տեսակի մարդկանց հետ շփվի։

Նման մեծամիտ բծախնդրությունը շփոթեցրեց ինձ։

— Որքե՞ բան լսե՞լ եք ձեր ամուսնու մասին։

— Ոչ, ոչ մի բան։ Նա, երևի, մահացել է։

— Իսկ եթե պատահաբար հանդիպեմ նրան Փարիզում, հազորդե՞մ ձեզ նրա մասին։

Միսիս Սթրիբլենդը մի պահ վարանեց։

— Եթե նա շատ կարիքի մեջ է, կարող եմ մի քիչ օգնել։ Ես ձեզ որոշ գումար կուղարկեմ և հարկ եղած գեպրում աստիճանաբար կտաք նրան։

— Դուք շատ մեծահոգի եք,— ասացի ես։

Բայց գիտի, որ բարեսրտությունը չէր դրա դրոպատճառը ձեռն չէ, որ տառապանքը ազնվացնում է բնավորությունը, երբեմն այդ բանը հաջողվում է երջանկությունը, իսկ տառապանքը մեծ մասամբ մարդուն մանրախնդիր ու քինոտ է դարձնում։

ԳՆՈՒԵ 18

Փաստորեն երկու շաբաթ էլ չկար, ինչ Փարիզում էի, երբ հանդիպեցի Սթրիբլենդին։

Ես Ռյու դե Դամի վրա հինգերորդ հարկում մի փոքրիկ բնակարան ճարեցի և երկու հարյուր ֆրանկով գործածված կահույք գնեցի։ Դոնապանուհու հետ պայմանավորվեցի, որ նա ամեն առավոտ ինձ համար սուրճ էր եփելու և մաքրելու էր բնակարանը։ Տեղավորվելուց հետո գնացի իմ ծանոթ Դերկ Սթրյովին տեսնելու։

Դերկ Սթրյովը այն մարդկանցից էր, որոնց մասին ոմանք, նայած բնավորության, խոսում են արհամարհանքով քմծիծաղ տալով, ոմանք էլ տարակուսանքով ուսերը թոթվելով։ Բնությունը նրան խեղկատակ էր ստեղծել։ Նա նկարիչ էր, բայց շատ վատ նկարիչ։ Մենք ծանոթացել էինք Հոտմում, և ես լավ էի հիշում նրա նկարները։ Թվում էր, թե նա տափալուսություններ անելու սիրահար է։

Արվեստի նկատմամբ մեծ սեր ունենալով հանդերձ, նա Իսպանական հրապարակի վրա գտնվող Բերնիեիի աստիճանների հանգստացող հոտմեացիների էր նկարում, բնդ որում դրանց շահագանց աչքի բնկնող գեղապատկեր լինելը նրան բոլորովին չէր վհատեցնում։ Արդյունքն այն էր, որ Սթրյովի արվեստանոցը լիքն էր կտավներով, որոնցից ձեզ էին նայում բեղավոր, խոշորակն, սրածալր գլխարկներով գլուղացիներ, խայտաբղետ ցնցոտիներով տղաներ և փարթամ կիսազգեստներով կանայք։

Նրանք հանգստանում էին կամ նկեղեցու աստիճանների վրա, կամ էլ զովանում էին կիսաքարսների մեջ անամպ երկնքի տակ։ Երբեմն էլ տրվում էին սիրո հաճույքներին վերածննդի ժամանակների շատրվանի մոտ, կամ թափառում համապնայի դաշտերով եզներ լծած սայլակի կողքին։ Նրանք բոլորն էլ խնամքով նկարված էին և ոչ պակաս խնամքով ներկված։ Լուսանկարը ավելի ճշգրիտ չէր կարող լինել։ Մեղիչի վիլլայի նկարչներից մեկը Դիրկին անվանել էր Le Maître de la Boite a Chocolats¹։ Նրա նկարներին նայելիս կարելի էր կարծել, թե Մոնեն, Մանեն² և մնացած իմպրեսիոնիստները ընդհանրապես գոյություն չեն ունեցել։

— Իհարկե, ես մեծ նկարիչ չեմ, — ասում էր Դիրկը։ — Շատ հեռու եմ Միքելանջելո լինելուց, բայց, այնուամենայնիվ, ինչ-որ բան կա իմ մեջ։ Իմ նկարները վաճառվում են։ Ես ուսմանտիկա եմ մտցնում ամենատարբեր մարդկանց տները։ Դու պիտես, որ իմ կտավները գնում են ոչ միայն Լոլանդիայում, այլ նաև Նորվեգիայում, Շվեդիայում, Դանիայում։ Դրանք մեծ մասամբ առնում են վաճառականներն ու հարուստ առևտրականները։ Չես կարող պատկերացնել, թե ինչպիսի ձմեռներ են լինում այդ վայրերում, երկարատև, մութ, ցուրտ։ Նրանք սիրում են մտածել, որ Իտալիան իմ նկարներին է նման։ Հենց այդպիսին էլ նրանք պատկերացնում են Իտալիան։ Այդպիսին էի պատկերացնում նաև ես նախքան այստեղ գալու։

Իմ կարծիքով հենց այդ պատկերացումն էլ ամրապնդվել էր նրա մեջ մեկընդմիջա և այնքան կուրացրել նրան, որ այլևս ի վիճակի չէր տեսնելու ճշմարտությունը, և շնայած դուր փաստերին, Իտալիան նրա հոգու աչքերի համար շարունակում էր մնալ ուսմանտիկ ավաղակների և ղեղատեսիլ ավերակների երկիր։ Դիրկը շարունակում էր իղեպլ նկարել, խղճուկ, սովորական, ծեծված, բայց այնուամենայնիվ իղեպլ, և դա որոշակի հմայք էր տալիս նրան։

Ինձ համար Դիրկ Սթրյովը ոչ միայն ծաղրի առարկա էր։ Նրա նկարիչ ընկերները բացահայտ արհամարհանքով էին վերաբերվում նրա ստեղծագործություններին, բայց Դիրկը շատ փող էր վաստակում, և նրանք առանց քաշվելու օգտվում էին նրա քսակից։ Դիրկը առատաձեռն էր, և ավեր կարիք ունեին, ծիծաղելով իրենց ասեկոսեներին նկատմամբ ցուցաբերած

կրա միամիտ հավատի վրա, առանց խղճի խայթ զգալու պարտք էին վերցնում նրանից։

Դիրկ Սթրյովը շատ բարեսիրտ էր, բայց ինչ-որ անհեթեթ բան կար այդ բարեսիրտության մեջ, և դրա համար էլ առանց շնորհակալության զգացման էին ընդունում նրա սիրալիր վերաբերմունքը։ Փող վերցնել նրանից միևնույն էր, թե կողոպտել մի երեխայի, և միևնույն ժամանակ արհամարհում էին նրան, քանի որ այդքան հիմար էր։ Ինձ թվում է, որ իր ճարպիկ մատներով հպարտացող գրպանահատը պետք է գայրանա այն անփութ կնոջ վրա, որ կառքի մեջ է թողնել թանկարժեք իրերով ի իր պայուսակը։ Բնությունը ծիծաղելի էր ստեղծել նրան, բայց զգայունությունից չէր զրկել։ Նա գալարվում էր իր վրա տեղացող ամեն տեսակի ծաղր ու ծանակից, բայց թվում էր, թե կամավոր կերպով նորից ու նորից էր իրեն հարվածների տակ գնում։ Նրան միշտ ծաղրում էին, բայց այնքան բարեհոգի էր, որ չէր շարանում։ Օձը խայթում էր Դիրկին, իսկ փորձը ոչինչ չէր սովորեցնում նրան, և հազիվ էր ցավն անցնում, երբ նա նորից էր տաքացնում օձին իր կրծքին։ Դիրկի կյանքը վուլգար ֆարսի լեզվով գրված ողբերգություն էր։ Ես չէի ծաղրում նրան, և նա ուրախանալով, որ կարեկից գրուցակից ունի, վստահում էր ինձ իր անհամար գառնությունները։ Բայց ամենաշագվալին այն էր, որ որքան դրանք ավելի ողբերգական էին, այնքան ավելի էիք ուզում ծիծաղել։

Չնայած նա վատ նկարիչ էր, բայց արվեստի չափազանց նուրբ զգացողություն ուներ, և նրա հետ պատկերասրահներում շրջելը իսկական հաճույք էր։ Անկեղծ խանդավառությունը նրա մեջ զուգակցվում էր քննադատական սուր դիտողականության հետ։ Դիրկը կաթոլիկ էր։ Նա ոչ միայն կարողանում էր գնահատել հին վարպետներին, այլ նաև աշխույժ համակրանք էր ցուցաբերում ժամանակակից նկարիչների նկատմամբ, արագ հայտնաբերում էր նոր ազգանդների և մեծահոգաբար դատում նրանց մասին։ Ինձ թվում է, թե երբեք նրա նման անսխալական մարդու չեմ հանդիպել։ Դիրկ Սթրյովը շատ ավելի կրթված էր, քան նկարիչների մեծագույն մասը, և մյուս արվեստների քննադատում նրանց նման տգետ չէր։ Դիրկի երաժշտական ու գրական ճաշակը խորություն ու բազմազանություն էր տալիս գեղարվեստի մասին նրա դատողություններին։ Ինձ նման երիտասարդի

համար նրա խորհուրդներն ու բացատրութիւններն անգնահատելի արժեք ունենին:

Համից մեկնելուց հետո, ես նամակագրական կապ էի պահպանում նրա հետ և մտաւժորայես երկու ամիսը մեկ չորորդի-նակ անգլերենով նամակ էի ստանում նրանից, որն ինձ կարծես ստիպում էր նորից տեսնել ու լսել նրան՝ շնչակտուր, խանդավառ, աշխույժ շարժումներով: Իմ Փարիզ գալուց քիչ առաջ նա ամուսնացել էր մի անգլուհու հետ և հաստատվել Մոնմարտրի մի արվեստանոցում: Մենք շորս տարի չէինք տեսել իրար, և ես չէի ձանաչում նրա կնոջը:

ՅԻՒՆԻ 19

Իմ գալուստան մասին տեղյակ չէի պահել Սթրյուվին, և կրք նրա արվեստանոցի դռան զանգը տվեցի, բացելիս նա մի պահ շճանաչեց ինձ: Հետո ուրախ զարմանքի մի ճիշ արձակեց և ինձ քարշ տվեց ներս: Իրոք, որ հաճելի է, երբ քեզ այդքան խանդավառութիւնով են ընդունում:

Կինը նստած էր վառարանի մոտ և ինչ-որ բան էր կարում: Երբ ես ներս մտա, նա վեր կացավ տեղից: Դիրկը ներկայացրեց ինձ:

— Հիշո՞ւմ ես, — դիմեց նա կնոջը, — քեզ շատ եմ պատմել նրա մասին: — Հետո ինձ. — Ինչո՞ւ չգրեցիր, որ գալիս ես: Վաղո՞ւց ես այստեղ: Երկա՞ր ես մնալու: Եթէ մի ժամ առաջ գայիր, միասին կձաշեինք:

Հարցերի տարափ տեղաց զլիսիս, նա ինձ նստեցրեց բազկաթոռին, թիթիացրեց ուսիս, կարծես բարձ լինէի, գինի, սիգարետներ, բլիթներ հրամցրեց: Ինձ հանդիստ չէր տալիս, արհեստում էր, որ տանը միակի չկա, առաջարկում էր սուրճ եփել ինձ համար, չգիտեր ինչով հյուրասիրի, ուրախութիւնից փայլում էր, ծիծաղում և զգացմունքների առատութիւնից սաստիկ քրտնում:

— Դու բոլորովին չես փոխվել, — ասացի ես՝ ժպտալով նայելով նրան:

Դիրկը նույն անձնթիւն տեսնեմ ունեք. կորճահասակ, գեր, կարճ ոտքերով և չնայած դեռ երիտասարդ էր, — նա երեսուն տարեկան չկար, — ժամանակից շուտ էր ճաղատացիլ: Նրա գեմբը, որ աշօի էր ընկնում արտակարգ թարմութիւնով, բոլորովին

կլոր էր, մաշկը՝ սպիտակ, թշերը՝ վարդագույն, շրթունքները՝ կարմիր: Աշքերը կապույտ էին և նույնպես կլոր, իսկ հոնքերը այնքան բաց գույն ունեին, որ գրեթէ չէին երևում: Դիրկը միշտ ոսկե շրջանակներով խոշոր ակնոց էր կրում: Նա հիշեցնում էր այն գեր, կենսուրախ վաճառականներին, որոնց սիրում էր նկարել Թուրինսը:

Երբ Սթրյուվին ասացի, թե մտադիր եմ որոշ ժամանակ Փարիզում ապրել և արդեն բնակարան եմ վարձել, նա սաստիկ նախատեց ինձ, որ նախօրոք իմաց չեմ տվել իրեն: Նա ինքը բնակարան կձարեր ինձ համար, կահույք կտար, — միթե ես իրոք փող եմ ծախսել դրա համար, — և կոզներ ինձ տեղափոխվելու: Դիրկը իսկապես ոչ բարեկամական քայլ էր համարում, որ չեմ օգտվել նրա ծառայութիւնից: Մինչդեռ միսիս Սթրյուվը լուր շարունակում էր լցակարել իր գուլպան և հանգիստ ժպտով լսում այն ամենը, ինչ ասում էր ամուսինը:

— Ինչպես տեսնում ես, ամուսնացած եմ, — հանկարծ ասաց նա, — ի՞նչ կարծիքի ես կնոջս մասին:

Նա անսահման քնքշանքով նայեց կնոջը, ուղղեց ակնոցը, որը քրտինքից անընդհատ սահում էր քթի ծայրին:

— Ասա խնդրեմ, ի՞նչ ես ուզում, որ պատասխանեմ, — ծիծաղեցի ես:

— Հերիք է, Դիրկ, — միշտմտեց միսիս Սթրյուվը ժպտալով:

— Մի՞թե նա հրաշք չէ: Լսիր, բարեկամս, ժամանակ մի կորցնիր, ամուսնացիր և որքան հնարավոր է շուտ: Ըս մահկանացուներից ամենաերջանիկն եմ: Նայիր նրան: Մի՞թե իսկական պատկեր չէ: Շարդեն՛, չէ՞: Ըս տեսել եմ աշխարհի բոլոր գեղեցկուհիներին, բայց մազամ Սթրյուվից գեղեցիկ կին երբեք չեմ տեսել:

— Եթէ չլսես, Դիրկ, կհեռանամ:

— Mon petit choux², — ասաց նա:

Միսիս Սթրյուվը, շփոթված Դիրկի ձայնի մեջ արտահայտված կրքից, թեթևակի շիկնեց: Դիրկի նամակներից ես արդեն գիտեի, որ նա անսահման սիրահարված էր կնոջը, իսկ հիմա համոզվեցի, որ աշքը նրանից չէր կտրու՞մ: Իսկ թե կինը սիրո՞ւմ էր նրան, դժվարանում էի դատել այդ մասին: Խեղճ Պանտալոնեն հագիվ թե կարողանար սեր ներշնչել, սակայն միսիս Սթրյուվի աշքերը ժպտում էին քնքշանքով, և հնարավոր է, որ նրա զսպվածութիւնն ասիկ խոր զգացմունք էր թաքնված: Մէսի-

Սթրյուվը շուներ այն թողիչ գեղեցկութունը, որ Դիրկի սիրահար-ված աշքերն էին տեսնում, բայց ինչ-որ մեղմ հմայք կար նրա մեջ: Բավական լավ կարված, բայց համեստ, մոխրագույն շքե- ջագգեստը չէր թաքցնում նրա սլացիկ կազմվածքի գեղեցկու- թյունը: Ի միջի այլոց, այդ կազմվածքը պետք է որ ավելի շատ բանդակագործին գրավեր, քան դերձակին: Միսիս Սթրյուվը իր փարթամ, շագանակագույն մազերը սանրել էր հմայիչ պար- զությամբ. նրա դեմքը շատ գունատ էր, դիմագծերը՝ կանոնա- վոր, շնայած դրանք գեղեցկությամբ աչքի չէին ընկնում: Նրա շագանակագույն աչքերը ներքին հանգստություն էին արտահայ- տում: Ես չէի ասի, որ նա գեղեցկուհի է, ոչ էլ նույնիսկ սիրու- նիկ, բայց Սթրյուվը, այնուամենայնիվ, ոչ առանց հիմքի հիշա- տակեց Շարդենին: Միսիս Սթրյուվը զարմանալիորեն հիշեցնում էր կանացի գլխարկով ու գոգնոցով այն սիրունիկ տանտիրու- հուն, որին անմահացրեց մեծ նկարիչը: Դժվար չէր պատկերաց- նել նրան իր տան կահ-կարասիների մեջ զբաղված այնպիսի լրջությամբ, որը բարոյական արժեք է տալիս տնարարությանը, սվելին, դարձնում արարողություն: Հետաքրքիր և խելացի կնոջ տպավորություն նա չէր թողնում, բայց նրա հանդարտ լրջու- թյան մեջ ինչ-որ բան շարժեց իմ հետաքրքրությունը: Ինչ-որ խորհրդավորություն կար նրա լրջության մեջ, ինչ հետաքրքրում էր, թե ինչու էր նա ամուսնացել Դիրկի հետ: Եվ թեև անգուհի էր, ոչ մի կերպ չէի կարողանում պատկերացնել, թե որտեղից է, ինչ դասի է պատկանում, ինչ դաստիարակություն է ստացել և ինչպես է ապրել մինչև ամուսնությունը: Նա գրեթե միշտ լուռ էր, բայց երբ խոսում էր, ձայնը հաճելի էր, իսկ շարժու- ձևերը՝ բնական:

Ես Սթրյուվին հարցրեցի, աշխատում է նա արդյոք:

— Աշխատում: Հիմա ավելի լավ եմ նկարում, բուն երբևէ: Նա ձեռքով ցույց տվեց նկարակալի վրա դրված անավարտ նկարը: Ես ինքնաբերաբար ցնցվեցի: Դիրկը նկարում էր Կամ- պանյայի բնակիչների հագուստով մի խումբ իտալացի գյուղա- ցիների, որոնք հանգստանում էին եկեղեցու սանդուղքների վրա:

— Հիմա դրա՞ վրա ես աշխատում,— հարցրեցի նա:

— Այո: Եվ այստեղի իմ բնորոշները նույնքան հաջող են, որքան Հոմոսում:

— Շատ գեղեցիկ է, չէ՞,— ասաց միսիս Սթրյուվը:

— Խեղճ կինս կարծում է, թե ես մեծ նկարիչ եմ,— ասաց նա:

Նա բավական անհարողությամբ փորձեց ներողամտությու- ն հայցող ժիծաղի ետևում թաքցնել իր գոհունակությունը: Դիրկը հայացքը հառեց նկարակալին: Տարօրինակ բան, նրա քննադա- տական հոտառությունը, որ այդքան ճշգրիտ ախտախալական էր ուրիշ նկարիչների ստեղծագործությունների նկատմամբ, բա- վարարվում էր սեփական անհավատալիորեն տափակ ու գու- հիկ ստեղծագործություններով:

— Յույց տուր քո մյուս նկարները,— ասաց միսիս Սթրյուվը:

— Ուզո՞ւմ ես տեսնել:

Եվ Դիրկ Սթրյուվը, որին այդքան շատ տառապանք էր պատ- ճառել արվեստագետ ընկերների ծաղրը, գովասանքի ծարավով ու միամիտ գոհունակությամբ անմիջապես համաձայնվեց: Նա իմ առջև դրեց վեց խաղացող երկու գանգրահեր իտալացի սղա- ների մի նկար:

— Լավն են, չէ՞,— հարցրեց միսիս Սթրյուվը:

Նա ինչ ուրիշ նկարներ էլ ցույց տվեց և ես համոզվեցի, որ Դիրկը Փարիզում նկարում էր նույն ձևով, կեղծ գեղանկար- չական թեմաներով, ինչպես Հոմոսում: Այդ բոլորը շինձու էր, կեղծ, անպետք, շնայած աշխարհում Դիրկից ավելի ազնիվ, ան- կեղծ, մաքուր մարդ չկար: Ո՞վ կարող էր նման հակասություն- ներից գլուխ հանել:

Զգիտեմ, թե ինչու խելքիս փշեց հարցնել:

— Լսիր, Դիրկ, դու պատահաբար ոմն նկարիչ Չարլզ Սթրիք- լենդի չե՞ս հանդիպել:

— Մի՞թե դու ճանաչում ես նրան,— բղավեց նա:

— Ստոր մարդ է,— ասաց միսիս Սթրյուվը:

Դիրկը ժիծաղեց:

— Ma pauvre chérie! — Նա վազելով մոտեցավ և համբու- րեց կնոջ ձեռքերը: — Նա տանել չի կարողանում Սթրիքլենդին: Ուրբան տարօրինակ է, որ դու ճանաչում ես Սթրիքլենդին:

— Տանել չեմ կարող, երբ իրենց վատ են պահում,— ասաց միսիս Սթրյուվը:

Դիրկը շարունակելով ժիծաղել, շրջվեց գեպի ինձ:

— Հիմա քեզ կբացատրեմ, թե ինչն է պատճառը: Մի անգամ ես նրան խնդրեցի նայել իմ նկարները: Նա եկավ, և ես ցույց տվեցի, ինչ որ ունեի: — Սթրյուվը կմկմաց մի պահ և լռեց:

Չգիտեմ, թե ինչու նա սկսեց այդ պատմությունը, որ տհաճ էր նրա համար շարունակել մինչև վերջը:— Մթրիքլենդը նայեց իմ նկարներին և ուշիմ շատաց: Մտածեցի, որ իր կարծիքը վերջում է ուղում հայտնել: Այնուամենայնիվ, ես տաացի. «Ահա այն ամենը, ինչ որ ունեմ»: Իսկ նա թե. «Ես եկել եմ ձեզանից քսան ֆրանկ պարտք խնդրելու»:

— Եվ Դիրկը ավելց, — ասաց միտիս Մթրյովը վրդովված:

— Ճիշտն ասած, ես զարմանքից կորցրել էի ինձ: Բացի այդ, շեմ սիրում մերժել: Նա փողը խոթեց զրպանք, գլխով արեց, ասաց «Շնորհակալություն» և գնաց:

Երբ Դիրկը պատմում էր այդ մասին, նրա կյոք, հիմարավուն գեմքը անսուսման զարմանքի այնպիսի արտահայտություն էր ստացել, որ ես դժվարությամբ էի դապում ծիծաղա:

— Եթե ասեք, որ նկարներս վատն են, չէի վիրավորվի, բայց ես ուշիմ շատաց, ոչ մի բառ:

— Եվ դու դեռ պատմում ես այդ մասին, Դիրկ, — ասաց միտիս Մթրյովը:

Ամենացավալին այն էր, որ ես ավելի շատ ուզում էի ծիծաղել Դիրկի շփոթված կերպարանքի վրա, քան զայրանալ Մթրիքլենդի անմարդկային վարմունքից:

— Հուսով եմ, որ այլևս երբեք չեմ տեսնի նրան, — ասաց միտիս Մթրյովը:

Դիրկը ժպտաց և թոթվեց ուսերը: Նա նորից սովորականի պես բարեհոգի էր դարձել:

— Այնուամենայնիվ, նա մեծ նկարիչ է, շատ մեծ:

— Մթրիքլենդը, — բացականչեցի ես: — Ուրեմն զա ուրիշ Մթրիքլենդ է:

— Ենկ մորուքով, բարձրահասակ, Չարլզ Մթրիքլենդ: Անգլիացի:

— Երբ ես հանդիպեցի նրան, մորուք չունեք, իսկ եթե մորուք է թողել, հավանաբար շեկ կլինի: Ինձ ծանոթ Մթրիքլենդը ընդամենը հինգ տարի առաջ է սկսել զբաղվել գեղանկարչությունով:

— Ճիշտ է, նա մեծ նկարիչ է:

— Զի կարող պատահել:

— Ես երբևէ սխալվեցի եմ, — հարցրեց Դիրկը: — Քեզ ասում եմ, որ նա հանձար է: Ես համոզված եմ գրանում: Եթե մե

հարյուր տարի հետո հիշեն, զա կլինի միայն նրա համար, որ ճանաչել ենք Չարլզ Մթրիքլենդին:

Ես շափազանց զարմացել ու հուզվել էի: Հանկարծ հիշեցի իմ վերջին խոսակցությունը նրա հետ:

— Որտե՞ղ կարելի է տեսնել նրա նկարները, — հարցրեցի ես: — Հաջողություն ունե՞ր: Որտե՞ղ է ապրում:

— Ոչ, նա հաջողություն չունի: Ինձ թվում է, դեռ ոչ մի նկար չի վաճառել: Երբ խոսք է լինում նրա մասին, բոլորը միայն ծիծաղում են: Բայց ես համոզված եմ, որ նա մեծ նկարիչ է: Զէ որ իր ժամանակին Մանեթի վրա էլ էին ծիծաղում: Կորոնի իր կյանքի ընթացքում ոչ մի նկար չվաճառեց: Ես չգիտեմ Մթրիքլենդի հասցեն, բայց կարող եմ նրա հետ հանդիպում հաջողացնել: Ամեն երեկո ժամը յոթին նա Կլիշի փողոցի վրա գանվող սրճարանում է լինում: Կարող ենք հենց վաղն էլ գնալ այնտեղ:

— Ես վստահ չեմ, որ նա կցանկանա տեսնել ինձ: Ես կհիշեցնեմ նրան այն ժամանակների մասին, որ աշխատում է մոտանալ: Բայց, միևնույն է, կգամ: Իսկ կարո՞ղ ենք նրա նկարներից գոնե մեկը տեսնել:

— Իր մոտ՝ ոչ: Նա քեզ ուշիմ ցույց չի տա: Բայց ես պիտեմ մի առևտրականի, որի մոտ Մթրիքլենդի երկու, թե երեք նկար կա: Միայն առանց ինձ չգնաս, ուշիմ չես հասկանա: Ես ինքուցուց կտամ այդ նկարները:

— Գու ինձ համբերությունից հանում ես, Դիրկ, — ասաց միտիս Մթրյովը: — Ինչպե՞ս կարող ես գովարանել նրա նկարները այն ամենից հետո, ինչ պատահեց: — Միտիս Մթրյովը շրջվեց գեղյի ինձ: — Պատկերացնում եք, երբ ինչ-որ հուանդացիներ եկան մեզ մոտ նկարներ գնելու, Դիրկը սկսեց համոզել նրանց, որ ավելի լավ է գնեն Մթրիքլենդի նկարները: Եվ այնպե՞ս, որ այդ նկարները այստեղ բերեն:

— Իսկ դուք ի՞նչ կարծիք ունեք այդ կտավների մասին, — հարցրեցի ես ժողտալով:

— Մարտափելի են:

— Օ, հողյակս, դու ուշիմ չես հասկանում:

— Իսկ ինչո՞ւ էին այդ հուանդացիները այդքան զայրանելի ընդ վրա: Նրանք կարծեցին, թե ծաղրում ես իրենց:

Դիրկ Մթրյովը հանեց ակնոցը և սրբեց: Հուզմունքից նրա գեմքը ավելի էր կարմրել:

— Մի՞թե բո կարծիքով գեղեցկությունը, որ ամենաբան-

կործանք բանն է աշխարհում, ծովագիտն ընկած պատահական
բար է, որ ամեն անցորդ կարող է վերցնել: Գեղեցկությունը այն
զարմանահրաշն ու անհասանելին է, որ նկարիչը ստեղծում է
համաշխարհային բառսից հոգեկան ծանր տառապանքների
գնով: Եվ երբ այն ստեղծված է, ամեն մարդու տրված չէ ճանա-
չել այն: Գեղեցկությունը հասկանալու համար անհրաժեշտ է
վարժվել նկարչի խիզախումներին: Գեղեցկությունը մեղեդի է,
որ նա երգում է մեզ համար, և որպեսզի այն արձագանք գտնի
մեր սրտերում, գիտելիքներ, ընկալելու ունակություն և երևա-
կայություն է պետք:

— Ինչո՞ւ բո նկարները ինձ միշտ գեղեցիկ են թվացել, Դիրկի
Հենց սկզբից էլ նրանք հիացրել են ինձ:

Դիրկի շրթունքները փոքր-ինչ դողացին:

— Պառկիր բնելու, թանկագինս: Ես մի քիչ կուղեկցեմ մեր
բարեկամին և կվերադառնամ:

ԳԼՈՒԽ 20

Դիրկ Սթրյովը խոստացավ հաջորդ երեկոյան ինձ տանել այն
քրճարանը, որտեղ լինում էր Սթրիբլենդը: Ի դարձանս ինձ պարզ-
վեց, որ դա այն քրճարանն է, որտեղ Սթրիբլենդի հետ օշինդր-
օղի էինք խմել, երբ Փարիզ էի եկել նրա հետ խոսելու: Որ նա
սուսված պես այդտեղ էր լինում, վկայում էր իր սովորութանը
հավատարիմ լինելու մասին, և դա բնորոշ թվաց ինձ:

— Ահա նա, — առաջ Սթրյովը, հենց որ քրճարան հասանք
Չնայած հոկտեմբեր ամիսն էր, բայց երեկոն տաք էր և սե-
ղանների շուրջը, որոնք գրված էին ուղղակի մայիին, մեծ բաղ-
մություն էր նստած: Ես հայացքով փնտրեցի Սթրիբլենդին, բայց
չգտա:

— Նայիր արևտեղ, անկյունում շախմատ է խաղում:

Ես նկատեցի շախմատի տախտակի վրա կուսցած մի մար-
դու, բայց կարողացա տեսնել միայն նրա լայնեզր գլխարկն ու
շեկ մորուքը: Սեղանների միջով զժվարությունով անցնելով՝ մո-
տեցանք նրան:

— Սթրիբլենդ:

Նա վեր նայեց:

— Հեյո, գիրուկ: Ի՞նչ ևս ուզում:

— Հին ծանոթի եմ բերել: Ուզում ե՞տեսնել ձեզ:

Սթրիբլենդը նայեց ինձ, բայց, հավանաբար, շնանաչեց և
շարունակեց մտածել հաջորդ քայլը:

— Նստեք և մի աղմկեք, — փնթիկեց նա:

Նա շարժեց զինվորը և անմիջապես խորատուգվեց խաղի
մեջ, եեզճ Սթրյովը անհանգստությամբ ինձ նայեց, բայց ես
թույլ շտվեցի ինձ նման դատարկ բանից վրդովվել: Գինի պատ-
վիրեցի և հանգիստ սպասեցի մինչև Սթրիբլենդը վերջացներ:
Ուրախ էի, որ կարող եմ նման առիթից օգտվելով մի լավ զննել
նրան: Սթրիբլենդը անձանաչելի էր դարձել: Նստի նրա բրդոտ
ու գոգզված շեկ մորուքը ծածկել էր դեմքի մեծ մասը. մազերն
էլ էին երկարել, բայց նրան անձանաչելի էր դարձրել սարսափելի
նիհարությունը: Խոշոր քիթը ավելի էր դուրս ցցվել, այտերը փոս
էին ընկել, աչքերը ավելի մեծ դարձել: Քուրբերի մոտ փոսիկ-
ներ էին առաջացել: Մարմինը կմախքի էր նման: Նա հագել էր
նույն սերթուկը, որով տեսել էի նրան հինգ տարի առաջ, պա-
տըռված, կեղտի բծերով ծածկված, շափազանց մաշված, և այն-
պես էր կախվել վրայից, կարծես ուրիշի համար էր կարված
եզել: Ես երկար ժամանակ նայում էի նրա երկարած եղունգ-
ներով կեղտոտ ձեռքերին. ոսկոր ու կաշի, բայց խոշոր և ուժեղ,
խկ ես բուրդոտ մոտացել էի, որ նրանք այդքան գեղեցիկ էին:
Նայում էի նրան, խաղով կլանված, և մտածում այն մասին, թե
ինչպիսի ուժ է հորդում այդ սովահար մարդուց: Միայն չէի կա-
րողանում հասկանալ, թե ինչու էր հիմա այդ ուժը ավելի նը-
կատվում:

Վերջապես քայլն անելով, Սթրիբլենդը թիկնեց աթոռի մեջ-
քին և տարօրինակ ցրվածությամբ նայեց հակառակորդին: Նրա
հակառակորդը, որ մի գեր, մորուքավոր Ֆրանսիացի էր, գրու-
թյունը լավ կշռադատելուց հետո, անշար լուսանքների տարափ
տեղաց, անհամբեր շարժումներով հավաքեց քարերը տախտա-
կի վրայից և նետեց տուփի մեջ, հայհոյեց Սթրիբլենդին և, բոտ
երևութի թեթևություն զգալով, կանչեց մատուցողին և, վճա-
րելով, հեռացավ: Սթրյովն իր աթոռը մոտեցրեց սեղանին:

— Հիմա, ինձ թվում է, կարող եմք խոսել, — առաջ նա:

Նրա վրա հառած Սթրիբլենդի աչքերում ինչ-որ շարախինդ
սրտահայտություն կար: Ես պարզ զգում էի, որ նա Սթրյովին
ձողրելու առիթ էր փնտրում և ոչի՞տ չզտնելով՝ ստիպված լուսմ
էլ:

— Ես մի հին բարեկամ եմ բերել ձեզ տեսնելու, — կրկնեց Սթրյովը ուրախությունից փայլող դեմքով:

Սթրիբլենդը գրեթե մի բոպե մտախոհ նայում էր ինձ: Ես լուռ էի:

— Կյանքում հրեքը շեմ տեսել նրան, — ասաց նա վերջապես:

Չգիտեմ, թե ինչու դա ասաց, բայց նրա աչքերում փայլող կայծր վկայում էր, որ նա ճանաչեց ինձ: Բայց ես հիմա այդքան հեշտությամբ չէի շփոթվում, ինչպես մի բանի տարի առաջ:

— Մտտ օրերս ես տեսա ձեր կնոջը և համոզված եմ, որ հետաքրքիր կլինի թարմ նորություններ իմանալ նրա մասին:

Պատասխանը եղավ կարճատև մի ծիծաղ: Սթրիբլենդի աչքերը փայլեցին:

— Այն ժամանակ մենք լավ երեկո անցկացրինք, — ասաց նա: — Քանի՞ տարի առաջ էր:

— Հինգ:

Նա էլի օշինդրոզի ուզեց: Սթրյովը սկսեց շատախոսել, թե մենք ինչպես հանդիպեցինք և ինչպես խոսակցության ընթացքում պատահաբար պարզվեց, որ երկուսս էլ ճանաչում ենք Սթրիբլենդին: Սթրիբլենդը լուռ էր նրան արդյոք, չգիտեմ: Մի երկու անգամ նա մտախոհ ինձ նայեց, բայց մեծ մասամբ թաղված էր սեփական մտքերի մեջ, և, իհարկե, առանց Սթրյովի շատախոսության դժվար կլինեիր ինձ համար խոսակցությունը շարունակել: Կես ժամ հետո հուլանդացին նայեց ժամացույցին և ասաց, որ իր գնալու ժամանակն է: Նա հարցրեց՝ գնում եմ իր հետ արդյոք: Մտածեցի գուցե Սթրիբլենդի հետ մենակ մնալով որևէ բան գուրս բաշեմ, և որոշեցի մնալ:

Գիտուկի գնալուց հետո ասացի.

— Գիրկ Սթրյովը մեծ նկարիչ է համարում ձեզ:

— Իսկ ինչո՞ւ, գրողը տանի, դուք կարծում եք, թե դա հետաքրքրում է ինձ:

— Թույլ կտա՞ք տեսնել ձեր նկարները:

-- Ինչո՞ւ:

— Միգուցե որևէ մեկը գնեմ:

— Միգուցե ես չեմ ցանկանում վաճառել:

— Դուք երեխի լավ փող եք վաստակում, — ասացի ես ժրգուշալով:

Նա քմծիծաղ տվեց:

— Իմ արտաքինի՞ց է երևում:

— Դուք կհաստովահարի տեսք ունեք:

— Այդպես էլ կա:

— Այդ դեպքում գնանք ճաշելու:

— Ինչո՞ւ եք նման ստաջարկ անում:

— Համենայնդեպս ոչ խղճահարությունից. — պատասխանեցի ես սառնությամբ: — Ժիշտն ստած, ինձ բուրոսվին էլ չի մտահոգում սովից կմեռնեք, թե՛ ոչ:

Նրա աչքերը նորից լսնկվեցին:

— Որ այդպես է, գնանք: — Նա վեր կացավ տեղից: — Հաճելի բան է լավ ճաշը:

ԳԼՈՒԽ 21

Ռեստորանի ընտրությունը նրան թողնելով, ես ճանապարհին թերթ գնեցի: Մեզ համար ճաշ պատվիրելուց հետո բացեցի թերթը և հենկով այն Սեն Գիլմերի շշին, սկսեցի կարդալ: Ուտում էինք լուռ: Երբեմն զգում էի Սթրիբլենդի հայացքը, բայց ուշադրություն չէի դարձնում: Ես ցանկանում էի ստիպել նրան խոսակցության մեջ մտնել ինձ հետ:

— Որևէ հետաքրքիր բան կա՞ թերթում, — հարցրեց նա մեր լուռ ճաշի վերջում:

Նրա ձայնի մեջ թեթեակի գայությունը զգացվեց:

— Սիրում եմ թատրոնի մասին ֆելիետոններ կարդալ, — պատասխանեցի ես, ծալելով թերթը ու մի կողմ քնելով:

— Հաճույքով ճաշեցի, — նկատեց նա:

— Միգուցե այստեղ էլ սուրճ խմենք:

— Կարելի է:

Սիգար վառեցինք: Ես լուռ ծխում էի, բայց նկատում էի, որ նա թույլ ժպտում է, հրք նայում է ինձ: Ես համբերությամբ սպասում էի:

— Ի՞նչ էիք անում այսբան տարի, — հարցրեց նա վերջապես:

Ինչ կարող էի ասել իմ մասին: Դա կլինեիր ծանր աշխատանքի և ստեղծագործական փորձի խիզախամենքի պատմություն, այլ կամ այն ուղղության մեջ կատարած փորձերի, գրքերի ու

մարդկանց աստիճանական ճանաչման պատմությունն Ես իմ հերթին զգուշացա Սթրիբլենդին հարցնել իր սեփական գործերի մասին, ոչ մի հետաքրքրություն չցուցաբերեցի նրա անձի նըկատմամբ և վերջում վարձահատույց եղա նա ինքը սկսեց խոսել: Բայց պիբճախոսությունից բուրրովին զուրկ լինելով, իր անցած ճանապարհը նշեց միայն առանձին փուլերով, և ես ստիպված եղա բացերը սեփական երևակայությունից լրացնել: Տանտալուսյան տառապանք էր լսել, թե ինչպիսի կցկտոր ակնարկներով է խոսում մի մարդ, որ այդքան հետաքրքրում էր ինձ: Կարծես թե կարդում էի դժվար բնութհանրի մի ձեռագիր: Իսկ ընդհանրապես տպավորությունն այնպիսին էր, որ նրա կյանքը եղել է ամեն տեսակի դժվարությունների գեմ մղած մի տեսական ուսյաբար: Ինձ համար պարզ դարձավ, որ շատ բան, ինչ մարդկանց մեծամասնության համար սարսափելի կժվար, բուրրովին չէր վախեցնում նրան: Սթրիբլենդն իր հայրենակիցների մեծամասնությունից տարբերվում էր բարեկեցության նըկատմամբ ունեցած իր լիակատար անտարբերությամբ: Միշտ խզճուկ սենյակում ապրելը նրան բացարձակապես չէր անհանգրստացնում և իրեն գեղեցիկ իրերով շրջապատելու ոչ մի կարիք չէր զգում: Ես համոզված եմ, որ նա նույնիսկ չէր նկատում, թե որքան կեղտոտ էին իր սենյակի պատերի պատառները: Սթրիբլենդը բազկաթոռների կարիք չէր զգում և նախընտրում էր նստել խոհանոցի աթոռին: Նա ուտում էր ախորժակով, իսկ թե ինչ էր ուտում, միևնույն էր նրա համար. կերակուրը ծառայում էր նրան միայն քաղցի զգացողությունը բթացնելու համար, և երբ ուտելու բան չէր լինում, թվում էր, թե ի վիճակի է ապրելու առանց դրա: Ես իմացա, որ վեց ամիս շարունակ նա ապրել է օրը մի կտոր հացով ու մի շիշ կաթով: Բնությունը զգայուն լինելով, նա միևնույն ժամանակ անտարբեր էր ցանկասիրության առաջացնող բաների նկատմամբ: Կարիքը չէր ճնշում նրան, և որքան էլ դա զարմանալի թվա, ապրում էր լրիվ հոգևոր կյանքով:

Երբ այն փոքրիկ գումարը, որ Սթրիբլենդը բերել էր Լոնդոնից, վերջացավ, նա շվհատվեց: Նրա նկարները չէին վաճառվում, և իմ կարծիքով ինքն էլ ստանձնապես չէր ձգտում վաճառել և նախընտրում էր այլ կերպ փող վաստակել: Մտալ հուճորով նա ինձ պատմում էր այն ժամանակների մասին, երբ ստիպված էր եղել որպես գիգ հետաքրքրասեր լոնդոնցիներին

ծանոթացնել գիշերային Փարիզի հետ: Այդ դրադմունքը բիշ թե շատ համապատասխանում էր նրա սարգոնիկ քնավորությանը և նա կարողացավ ինչ-որ ձևով լայն գիտելիքներ ձեռք բերել քաղաքի եանախորշերի մասին: Նա պատմում էր, որ ժամեր շարունակ քայլում էր դե լա Մադլեն բուլվարով, փնտրելով անգլացիների, նախընտրելով խմածների, որոնք ցանկանում էին սյնպիսի բաներ տեսնել, ինչն արգելում էր օրենքը: Հաջողության դեպքում նա բավական փող էր վաստակում, բայց վերջում նրա հագուստներն այնքան էին մաշվել, որ վախեցնում էին զրոսաշրջիկներին, և քչերն էին համարձակվում վստահել ցնցատիավոր գիգին: Հետո նրան հաջողվեց ուրիշ աշխատանք գտնել՝ պատենտավորված գեղորայքների հայտագրեր էր թարգմանում, որոնք ուղարկվում էին Անգլիա, իսկ մի անգամ, գործազուրկ ժամանակ աշխատեց որպես տնօրի ներկարար:

Սակայն նա շթողեց իր արվեստը, միայն դադարեց արվեստանոցների հաճախելուց և աշխատում էր մենակ: Կտավների ու ներկաների համար փող միշտ էլ ճարվում էր, իսկ նրան ուրիշ բան պետք չէր: Որքան կարողացա իմանալ, նա մեծ դժվարությամբ էր նկարում և չցանկանալով որևէ մեկի օգնությանը դիմել, շատ ժամանակ էր կորցնում այն տեխնիկական պրոբլեմների լուծման համար, որ արդեն մշակել էին նախորդ սերունդները: Նա ձգտում էր ինչ-որ բանի, բայց ինչի՞, չգիտեի, և դժվար թե ինքն էլ իմանար: Եվ ես մի անգամ ևս ուսովի ուժեղ զրացի, որ իմ առջև մուգար է: Իսկապես, նա ոչ բուրրովին նորմալ մարդու տպավորություն էր թողնում: Ինձ նույնիսկ թվաց, թե չե ուզում իր նկարները ցույց տալ, որովհետև դրանք իրեն էլ չէին հետաքրքրում: Նա երազանքով էր ապրում և իրականությունը ոչ մի արժեք չունեց նրա համար: Ըստ երևույթին աշխատելով իր հզոր անշատականության ամբողջ ուժով, մոռանում էր ամեն ինչ, բացի նրանից, որ ձգտելով պոնդում էր այն, ինչ տեսնում էր իր երևակայությամբ, իսկ հետո, վերջացնելով հավանաբար ոչ թե նկարը (չգիտեմ թե ինչու ինձ թվում էր, որ նա հազվադեպ է ավարտում իր աշխատանքը), այլ իրեն այրող կիրքը, կորցնում էր ամեն տեսակի հետաքրքրություն դրա նկատմամբ: Նա երբեք չէր զսհանում ստեղծածով. նրա վրձնի տակից դուրս եկած ամեն գործ աննշան էր թվում նրան, համեմատած այն բանի հետ, որ երևակայությամբ էր տեսնում:

— Ինչու՞ չէք ցուցադրում ձեր նկարները — հարցուցի ես: — Ես չեմ և վերգիտանեց

Մի՞թե չեք ուզում իմանալ, թե ինչ են մարդիկ դրանց մասին մտածում:

— Դա չի հետաքրքրում ինձ:

Նա աննկարագրելի արճամարտանքով արտասանեց այդ բառերը:

— Դուք չե՞ք ձգտում փառքի: Հազիվ թե գտնվի մի նկարիչ, որ անտարբեր լինի փառքի նկատմամբ:

— Երեխայություն: Ինչպես կարելի է հաշվի առնել ամբոխի կարծիքը, երբ կոպեկի արժեք չունի մի մարդու կարծիքը:

— Բոլորը չէ, որ կարող են այդպես դատել. — ծիծաղեցի ինքն:

— Ովքե՞ր են ստեղծում փառքը: Քննադատները, գրողները, բոսային միջնորդները, կանաչը:

— Բայց չէ որ հաճելի է մտածել, որ մարդիկ, որոնց երբեք չես տեսել, նայելով քո սեփական ստեղծագործություններին, սաբոտում են հուզմունքից: Ո՞վ չի սիրում իշխանությունը: Ես չեմ կարող ավելի հրապուրիչ իշխանություն պատկերացնել, քան այն, որ ստիպում է մարդկանց սրտերին ահից կամ կարեկցանքից բաբախել:

— Մեկոդրամա:

— Բայց չէ որ ձեզ համար էլ միևնույնը չէ, լավ եք նկարում, թե՛ վատ:

— Միևնույն է, Ինձ համար կարևոր է նկարել միայն այն, ինչ տեսնում եմ:

— Իսկ ես, օրինակի համար, կասկածում եմ, որ կարող էի աշխատել որևէ անմարդաբնակ կղզում, համոզված լինելով, որ բացի ինձանից ոչ ոք չի տեսնելու իմ ստեղծածը:

Մթրիբլենդը երկար ժամանակ լուռ էր, բայց երա տշքերը տարօրինակ կերպով փայլում էին, կարծես նա տեսնում էր մի բան, որ բերկրանքով էր լցրել նրա հոգին:

— Երբեմն երգում եմ անսահման ծովում կորած մի կղզու մասին, որտեղ աչրից հետո մի հովառում, ինձ անծանօթ ծառերի մեջ կարող էի ապրել խաղաղությունում: Եվ այնտեղ, ինձ թվում է, կգտնեի այն, ինչ փնտրում եմ:

Իհարկե, նա այդպես շարտահայտվեց: Ածակասները փոխաբերենց շարժումներով ու կմկմաց: Ես իմ բառերով արտահայտեցի այն, ինչ նա, իմ կարծիքով, ուզում էր ասել:

— Հետագարձ հայացք գցելով անցած հինգ տարիների վրա, ձեր կարծիքով արժե՞ր նման զոհաբերություն անել:

Մթրիբլենդը նայեց ինձ հարցականորեն: Հստ երևույթին նա չէր հասկացել, թե ես ինչ նկատի ունեի: Ես բացատրեցի.

— Դուք հրաժարվեցիք հարմարավետ անից և մի կյանքից, որ ընդունված է երջանիկ համարել: Դուք ունեոր մարդ էիք, իսկ այստեղ Փարիզում գրկանքներ եք կրում: Եթե հնարավոր լինեոր ամեն ինչ փոխել, նորի՞ց նույն բանը կանեիք:

— Իհարկե:

— Իսկ գիտեք, որ ձեր կնոջ ու երեխաների մասին նույնիսկ ոչինչ չհարցրեցիք: Մի՞թե երբեք նրանց մասին չեք մտածում:

— Ո՛չ:

— Գրողը տանի, ավելի լավ կլիներ, որ ձեր պատասխանները այդքան միավանկ չլինեին: Դուք երբեք խղճի խայթ չե՞ք զգում այն բոլոր դժբախտությունների համար, որ պատճառել եք նրանց:

Մթրիբլենդը լայն ժպտաց և օրորեց գլուխը:

— Ինձ թվում է, որ դուք երբեմն-երբեմն պետք է որ մտածեք անցյալի մասին: Ես նկատի չունեմ յոթ-ութ տարվա անցյալը, այլ ավելի վաղ ժամանակները, երբ առաջին անգամ ծանոթացաք ձեր կնոջ հետ, սիրեցիք և ամուսնացաք: Մի՞թե չեք հիշում այն ուրախությունը, որով նրան առաջին անգամ ձեր բազուկների մեջ առաք:

— Ես անցյալի մասին չեմ մտածում: Ինձ համար նշանակություն ունի միայն հավերժական ներկան:

Ես մի սրահ մտածեցի: Պատասխանը անորոշ էր, բայց, այնուամենայնիվ, ինձ թվաց, թե տղոտ կերպով հասկացա զրա իմաստը:

— Դուք երջանի՞կ եք. — հարցրեցի ես:

— Այո:

Ես լռեցի և մտախոհ նայեցի նրան: Նա դիմացավ իմ հայացքին, և հետո սարդոնիկ մի ժպիտ փայլեց նրա տշքերում:

— Վատ են գործերը, հավանաբար դուք դատապարտում եք ինձ:

— Հիմարություն, — պատասխանեցի ես կտրականապես, — բոա-կոնստրիկտորին չի կարելի մեղադրել, բնդհակառակը, նրա հոգեբանությունը հետաքրքրություն է առաջացնում իմ մեջ:

— Նշանակում է դուք զուտ պրոֆեսիոնալ հետաքրքրություն ունեք իմ նկատմամբ:

— Այո, զուտ պրոֆեսիոնալ:

— Այդ գեղարվեստն ապագայի ձեռքով կարգվե՞ք, եթե չմեղադրե՞ք ինձ: Աստված գիտե, թե դուք ինչ եք:

— Գուցե դա է պատճառը, որ այդքան ազատ եք զգում ինձ հետ, — հաջող հակահարված տվեցի հս:

Նա շուր ժպտաց, բայց ոչինչ շատաց Ափսոս, որ չեմ կարող նկարագրել նրա ժպտը: Այն շեր կարելի հաճելի համարել, բայց լուսավորեց նրա դեմքը, տվեց այլ արտահայտություն, չմոռացեց ինչպես սովորաբար, այլ դարձրեց խորամանկ-չարախիճ: Դա հանդարտ ժպտ էր, որ սկսվեց, գուցե և վերջացավ աչքերի անկյուններում, շատ զգայուն, ոչ դաժան և ոչ էլ բարի, այլ ինչ-որ անմարդկային, սատիրիկ հատուկ ցնծություն արտահայտող ժպտ: Այդ ժպտը ստիպեց ինձ հարցնել.

— Փարիզ գալուց ի վեր չե՞ք սիրահարվել:

— Ժամանակ չեմ ունեցել նման հիմարություններով զբաղվելու: Կյանքը կարճ է և արվեստին ու սիրուն միանգամից չի բավարարի:

— Դուք մեծակյացի տեսք չունե՞ր:

— Այդ բոլորը զգվանք է պատճառում ինձ:

— Մարդն արատավոր է, այնպես չէ՞:

— Ինչո՞ւ եք ծաղրում ինձ:

— Արտհետև չեմ հավատում ձեզ:

— Ուրեմն կատարյալ հիմար եք:

Ես լռեցի և զննողաբար նայեցի նրան:

— Ինձ հիմարացնելու ի՞նչ կարիք կա, — ասացի ևս վերջացապես:

— Ձեմ հասկանում, թե ինչ եք ուզում ասել:

Ես ժպտացի.

— Հիմա կբացատրեմ: Դուք ամիսներ շարունակ ոչ մի նման բան չեք մտածում և հավատացնում եք ձեզ, որ զրա հետ մեկընդմիջտ հաշիվները փակել եք: Ազատություն եք վայելում և համոզված եք, որ ձեր հոգին վերջապես միայն ձեզ է պատկանում: Ձեզ թվում է, թե գլխով աստղերին եք հասնում: Իսկ հետո հանկարծ զգում եք, որ նման կյանք այլևս տանելի չե՞ք կարող և նկատում եք, որ ոտքներդ միշտ ցիխի մեջ է եղել: Եվ ցանկություն է առաջանում ձեր մեջ թավալվել այդ ցիխում:

Հանդիպում եք գոհճիկ, ստոր, անասնական կրքերի տեր մի կնոջ, որի մեջ մարմնավորված է սեռի ամբողջ սարսափը, և նեւում եք նրա վրա ինչպես վայրի գազան, արբենում նրանով՝ մինչև կատաղությունը կուրացնի ձեզ:

Մթերբլենդը ուշադրությամբ ինձ էր նայում, և նրա դեմքի ոչ մի մկան չէր շարժվում: Ես անթարթ նրա աչքերին էի նայում և խոսում էի շատ դանդաղ:

— Եվ ահա թե ինչ, որքան էլ դա տարօրինակ թվա, երբ ամեն ինչ վերջանա, դուք շափազանց մաքուր կզգաք ձեզ, ինչպես անմարմին ոգի և կթվա, թե այս րոպեին կդիպչեք գեղեցկությունը, կարծես այն շոշափելի լինի: Ձեզ կթվա, թե ձուլվում եք զեփյուռին, բողբոջներն արձակած ծառերին, գետի ուղախ ջրերին: Դուք ձեզ աստված կզգաք: Իսկ կարո՞ղ եք բացատրել թե ինչու:

Նա աչք չէր կտրում ինձանից մինչև որ վերջացրի, և հետո միայն շրջվեց: Դեմքին սառել էր տարօրինակ մի արտահայտություն: «Հավանաբար այդպիսի դեմք է ունենում խոշտանգումներից մահացած մարդը», — մտածեցի ես: Մթերբլենդը լուռ էր: Ես հասկացա, որ մեր զրույցն ավարտվել էր:

ԳԼՈՒԽ 22

Փարիզում հաստատվելուց հետո սկսեցի սլիկա գրել: Ես շատ կանոնավոր կյանք էի վարում. առավոտյան աշխատում էի, իսկ կեսօրին շրջում կուրսեմբուրգյան այգում կամ էլ թափառում փողոցներում: Բազմաթիվ ժամեր էի անցկացնում աշխարհի ամենահարպուրիչ թանգարան Լուվրում, որը միշտ խորհրդածիլու տրամադրություն է ստեղծում, կամ էլ շրջում էի ամենաբարձր կրթական խանութներում, թերթիլով հին դրքերը, որոնք զննելու մտադրություն չունեի: Ես մի բանի էջ կարգում էի այստեղից-այնտեղից և առաջ անցնում, այդպիսով ծանոթանալով բազմաթիվ գրքերի հետ, որոնք ուզում էի մանրամասն իմանալ: Երկրորդներն այցելում էի բարեկամներին: Հաճախ գնում էի Մթերբլենդի մոտ և պատահում էր այնպես, որ նրանց հետ կիսում էի իրենց համեստ ընթերցում: Դերկ Մթերբլենդը պարծենում էր խոսելու ևն էր: Երբեք չէր արտասանելու պատրաստելու իր հմտությունը, բայց ինքը էլ չէր ասուլանել, որ նրա սրբաբանի շատ ավելի

լավ էր, քան նկարները: Իսկական արքայական խնջույք էր, երբ նա ահագին ամանով տոմատով ներծծված մակարոն էր բերում, և մենք ուտում էինք այն տնական հիանալի հացով ու վրայից կարմիր գինի խմում: Ես ավելի մոտիկից ծանոթացա Քլանշ Սթրյովին, հնարավոր է այն պատճառով, որ անգլիացի էի, իսկ նա հայրենակիցներին քիչ էր հանդիպում, և իմ գալուստը ուրախացնում էր նրան: Նա սիրալիր էր, վարվեցողությամբ պարզ, շնայած գրեթե միշտ լուռ էր, և չգիտեմ թե ինչու, այնպիսի տպավորություն էր թողնում, կարծես ինչ-որ գաղտնիք է թաքցնում: Բայց գուցե դա միայն բնածին զսպվածություն էր, որ ավելի էր շեշտվում ամուսնու անկեղծ շատախոսությունից: Գիրկը ոչ մի բան չէր կարողանում թաքցնել: Ամենաինտիմ հարցերի մասին խոսում էր առանց քաշվելու: Նրա կինը ամաշու էր, բայց միայն մեկ անգամ նկատեցի, որ դուրս եկավ համբերությունից, երբ Գիրկը ցանկացավ ամեն գնով ինձ պատմել, որ լուծողական է խմել, և սկսեց մանրամասն պատմել այդ մասին: Կատարյալ լրջությունը, որով նա պատմում էր իր դժբախտության մասին, ստիպեց ինձ ծիծաղից գալարվել և վերջապես համբերությունից հանեց միսիս Սթրյովին:

— Չեմ հասկանում, ի՞նչ հաճույք ես ստանում հիմար ձեռնազով,— բացականչեց նա:

Երբ Գիրկը տեսավ, որ կինը զայրացած է, նրա կլոր աչքերը զարձան ավելի կլոր, իսկ հոնքերը տազնապով ցնցվեցին:

— Հոգյակս, ես տհաճություն պատճառեցի քեզ: Այլևս լուծողական չեմ ընդունի: Դա միայն լեղու տարածուից էր: Շատ նստակյաց կյանք եմ վարում, հարկավոր է ավելի շատ շարժվել: Պատկերացնում եք, երեք օր ես...

— Ի սեր աստծո, լութր,— ընդհատեց նա ամուսնուն զայրույթի արցունքներն աչքերին:

Դիրկի զեմքը ձգվեց, շրթունքները պատժված երեխայի շրթթունքների նման փրվեցին: Նա օգնություն աղերսող մի հայացք գցեց վրաս, բայց ես այլևս ի վիճակի չլինելով զսպել ինձ, ծիծաղից գալարվում էի:

Մի անգամ գնացինք նկարավաճառի խանութ, որտեղ, Սթրյովի ասելով, Սթրիբլենդի երկու, թե երեք նկար էր գտնվում, բայց նկարավաճառն ասաց, որ մոտ օրերին Սթրիբլենդը վերցրել է նկարները: Իսկ թե ինչու, չգիտեմ:

— Չկարծեք զրա համար շատ եմ ցավում: Ես զրանք վերց-

րել էի միայն սիրալիրությունից դրդված, մսյո Սթրյով, և իհարկե, խոստացել վաճառել, եթե հաջողվեր, շնայած...— նա թոթվեց ուտերը,— ես աշխատում եմ օգնել երիտասարդ նկարիչներին, բայց այստեղ voyons¹, մսյո Սթրյով, ինքներդ էլ գիտեք, որ տաղանդի մասին խոսք լինել չի կարող:

— Պատվով եմ կրդվում, մեր օրերում նրանից ավելի տաղանդավոր նկարիչ չկա: Հիշեք իմ խոսքերը, դուք շահավետ գործ եք կորցնում: Կգա ժամանակ, երբ այդ նկարները ավելի կարժեանան, քան այն ամենը, ինչ որ ունեք ձեր խանութում: Հիշեք Մոնեին, որին շահազուգեց վաճառել իր նկարները նույնիսկ հարյուր ֆրանկով: Իսկ ինչ արժեն զրանք հիմա:

— Ճիշտ է: Բայց Մոնեից ոչ պակաս տասնյակ նկարիչներ չկարողացան վաճառել իրենց նկարները, որոնք հիմա էլ արժեք չունեն: Ինչ իմանաս: Արդյոք արժանիքով է որոշվում հաջողությունը: Չհավատար: Du reste², պետք է դեռ ապացուցել, որ ձեր բարեկամը արժանիքներ ունի: Բացի ձեզանից, մսյո Սթրյով, ոչ ոք այդ կարծիքին չէ:

— Այդ դեպքում ինչպե՞ս եք որոշում արժանիքները,— հարցրեց Գիրկը, զայրույթից կարմրած:

— Միայն մի եզրանակով՝ հաջողությամբ:

— Ֆիլիստեր,— բղավեց Գիրկը:

— Հիշեք անցյալի մեծ նկարիչներին՝ Ռաֆայելին³, Միքելանջելոյին⁴, Էնգրին⁵, Գեյսկրուային⁶: Նրանք բոլորն էլ հաջողություն ունեին:

— Գնա՛նք,— ասաց Սթրյովը,— թե չէ ես կսպանեմ այս մարդուն:

ԳԼՈՒԽ 23

Ես հաճախ էի տեսնում Սթրիբլենդին և ժամանակ առ ժամանակ նույնիսկ շախմատ էի խաղում նրա հետ: Նա շատ անհավասարակշիռ մարդ էր: Կամ լուռ նստում էր անկյունում, ցրված և ոչ ոքի չնկատելով, կամ էլ լավ տրամադրության մեջ ընկնելով խոսում էր իրեն առանձնահատուկ կցկտուրությամբ: Ես նրանից ոչ մի անգամ առանձնապես խելոք բան չսեցի, բայց նրա դաժան հեգնանքը երբեմն հետաքրքիր էր, և ասում էր միայն այն, ինչ մտածում էր: Ուրիշների դյուրազգացությունը

բայտուցին չէր հետաքրքրում նրան և երբ վերավերվում էին իրենից, նա միայն ուրախանում էր: Գիրկ Սթրիվլին այնպիսի գառը վերավորանքներ էր հասցնում, որ սա փախչում էր, երզվելով այլևս երբեք նրա հետ չհանդիպել, բայց Սթրիվլինդի ուժեղ քնազվորութունը իրեն էր ձգում հաստիկ հողանդացուն, և նա վերադառնում էր ինչպես մեղավոր շուն՝ պոչն այս ու այն կողմ շարժելով, չնայած հիանալի գիտեր, որ իրեն աքացիով են դիմավորելու, մի բան, որից շատ էր վախենում:

Զգիտեմ, թե ինչու Սթրիվլինը հաճույքով էր բարեկամութուն անում ինձ հետ: Մեր հարաբերությունները յուրօրինակ բնույթ ունենին:

Մի անգամ նա ինձանից հիտուն ֆրանկ պարտք խնդրեց:

— Մտքովս էլ չի անցնում, — պատասխանեցի ես:

— Ինչո՞ւ:

— Իսկ ինչո՞ւ պետք է պարտք տամ ձեզ:

— Ես շատ դժվարին գրության մեջ եմ:

— Ինձ չի հետաքրքրում:

— Ձեզ չի հետաքրքրո՞ւմ, թե ես սովամահ կլինեմ:

— Իսկ ինչո՞ւ պետք է հետաքրքրի, — իմ հերթին հարցրեցի ես:

Նա մի երկու բուպեի շափ նայեց ինձ՝ խաղաղով իր զգողված մորուքի հետ:

Ես ժպտացի:

— Ի՞նչն է ձեզ զվարճություն պատճառու, — հարցրեց նա նրա աչքերը փայլում էին զայրույթից:

— Մի՞թե այդքան միամիտ եք: Զէ որ դուք ոչ մի պարտականութուն չեք ընդունում, ուրեմն ոչ ոք էլ ձեզ պարտական չէ:

— Իսկ լա՞վ կլինի, որ հիմա զնամ ու կախվեմ նրա համար, որ բնակարանի վարձը չեմ կարող տալ և ինձ փողոց են նետում:

— Ինձ բուրբուլին չի հետաքրքրում, թե ինչ կպատահի ձեզ: Նա ծիծաղեց:

— Պարծենկոտութուն: Եթե այդպիսի բան անեմ, խղճի խայթը կտանջի ձեզ:

— Փորձեք, կատաններ, — պատասխանեցի ես:

Ժպիտ փայլեց նրա աչքերում, և նա լուռ խմեց իր օշինդրով դին:

— Շախմատ շխաղա՞նք, — հարցրեցի ես:

— Զեմ առարկում:

Երբ քարերը շարեցինք, նա ինքնագոհ տեսքով նայեց տախտակին: Ուրախալի է տեսնել, որ զինվորներդ պատրաստ են նահատամարտի:

— Դուք իրո՞ք կարծում էիք, թե ես փող կտամ ձեզ, — հարցրեցի ես:

— Իսկ ինչո՞ւ ոչ:

— Դուք զարմացնում և միաժամանակ հիասթափեցնում եք ինձ:

— Ինչո՞ւ:

— Պարզվում է, որ հոգու խորքում դուք սենսիմենտալ եք: Ես ավելի կհամակրեի ձեզ, եթե այդքան պարզամտորեն փորձեր շարժել իմ զգացմունքները:

— Ես կարճամարհեի ձեզ, եթե դա հաջողվեր ինձ:

— Ուրեմն այդպես ավելի լավ է, — ծիծաղեցի ես:

Սկսեցինք խաղալ և երկուսս էլ տարվեցինք խաղով: Իսկ երբ վերջացրինք, տասցի.

— Ահա թե ինչ, եթե ձեր գործերն այդքան վատ են, ցույց տվեք ձեր նկարները: Եթե նրանցից մեկը դուր գա ինձ, կգնեմ:

— Կորեք գրողի ծոցը, — պատասխանեց նա և վեր կացավ ու շարժվեց դեպի դուռը: Ես կանգնեցրի նրան և ժպտալով ասացի.

— Դուք մոռացար վճարել օշինդրդու համար:

Նա հայհույեց ինձ, գրամը շարտեց սեղանին և հեռացավ:

Դրանից հետո մի բանի օր շտեռս նրան: Բայց մի երեկո, երբ սրճարանում նստած թերթ էի կարդում, նա ներս մտավ և նստեց կողքիս:

— Ինչպես երևում է դուք դեռ չեք կախվել, — նկատեցի ես:

— Ոչ, ես պատվեր եմ ստացել: Երկու հարյուր ֆրանկով մի թիթեղագործի դիմանկար՝ եմ նկարում:

— Ինչպե՞ս հաջողվեց:

— Մի կին հանձնարարեց, որից ես հաց եմ զնում: Թիթեղագործը ասել էր նրան, որ փնտրում է մեկին, ով կարող է նկարել իրեն: Հանձնարարականի համար ստիպված էի քսան ֆրանկ տալ այդ կնոջը:

— Իսկ ինչպիսի՞ն է այդ մարդը արտաքինով:

— Հիանալի: Կարմիր, ոչխարի ոտքի նման ճարպոտ մուգ, աչ աչոտին խոշոր, մազոտ խալ:

Մթրիբլենդը հիանալի տրամադրութեան մեջ էր, և երբ Մթրը-չովը ներս մտավ ու նստեց մեր կողքին, վայրենաբար քարեհոգութեամբ հարձակվեց խեղճի վրա: Ինձ համար անսպասելի ճարպկութեամբ նա փնտրում գտնում էր դժբախտ հոլանդացու ամենախոցելի տեղերը: Այս անգամ Մթրիբլենդը նեղում էր նրան ոչ թե հեգնանքի սուսերով, այլ լուտանքի մահակով: Հարձակումն այնքան անսպասելի էր, որ Մթրջովը հանկարծակիի գալով, անսպաշուտան գտնվեց, և վախեցած ոչխարի նման անիմաստորեն այս ու այն կողմ էր նետվում: Նա այնքան էր շշմել ու վախեցել, որ վերջապես արցունքներ սկսեցին հոսել նրա աչքերից: Բայց ամենացավալին այն էր, որ այդ գայրացուցիչ տեսարանի յուրաքանչյուր ականատես, Մթրիբլենդի նկատմամբ ունեցած իր ողջ տտելութեամբ հանդերձ, չէր կարող զսպել իր ծիծաղը: Դիրկ Մթրջովը մեկն էր այն դժբախտ մարդկանցից, որոնց ամենանվիրական զգացումները ծիծաղեցնում են ձեզ:

Բայց, այնուամենայնիվ, Փարիզում անցկացրած այդ ձմռան ամենահաճելի հիշողությունները Դիրկ Մթրջովի հետ էին կապված: Ինչ-որ հմայիչ բան կար նրա ընտանեկան համեստ օջախում: Մարդ հաճույք էր զգում այդ դուլգի տեսքից, իսկ կնոջ նկատմամբ ունեցած Դիրկի միամիտ սերը պարզապես ճառագայթում էր հոգատար քնքշութունից: Նրա անմիտ, բայց անկեղծ կիրքը ակամայից համակրանք էր ներշնչում: Ինձ համար հասկանալի էր, թե ինչպիսի զգացմունքներ պետք է տածեր Բլանշ Մթրջովը իր ամուսնու նկատմամբ, և ուրախանում էի տեսնելով նրա քնքուշ կապվածությունը: Եթե Բլանշը հումորի զգացում ունի, մտածում էի ես, նրան պետք է զվարճություն պատճառի, որ Դիրկը այնքան մեծարում է իրեն, բայց և ծիծաղելիս նույնիսկ նա չէր կարող շոյված ու գոհ չլինել:

Դիրկը միասեր տղամարդ էր, և եթե Բլանշը ծերանար ու կորցնէր մարմնաձևերի կլորությունն ու գեղեցկությունը, միևնույն է, նրա համար ամենագեղեցիկն ու երիտասարդը կմնար աշխարհում: Ինչ-որ մեղմ գրավչություն կար նրանց կյանքում: Բացի արվեստանոցից, նրանց բնակարանը ուներ մի ննջատենչակ և փոքրիկ խոհանոց: Տան ամբողջ գործը միսիս Մթրջովն էր անում: Մինչ Դիրկը վատ նկարներ էր նկարում, նա շուկա էր զննում, կերակուր եփում, կարում, մի խոսքով մրջյունի նման

աշխատում էր, իսկ երեկոյան նորից կարը ձեռքին նստում էր արվեստանոցում և լսում, թե ինչպես է ամուսինը դաշնամուր նվագում, շնայած Դիրկը լուրջ երաժշտություն էր սիրում, որը, հավանաբար, անհասանելի էր նրան: Նա ճաշակով, բայց յափից ավելի զգացմունքով էր նվագում, նվագի մեջ ներդնելով իր ողջ ավելի, զգայուն ու սիրառատ հոգին:

Նրանց կյանքը մի յուրօրինակ հովվերգություն էր, իսկապես գեղեցիկ հովվերգություն: Զավեշտականությունը, որի կնիքը զգացվում էր ամեն ինչի վրա, որ շրջապատում էր Դիրկ Մթրջովին, այդ հովվերգությունը յուրահատուկ երանգ էր հաղորդում, օտեղծում ինչ-որ աններդաշնակություն, որն այն գարձնում էր ու վե՛ր ժամանակակից ու մարդկային, ինչպես լուրջ տեսարանին նետած շար կատակ, և ավելի գոտնացնում այդ գեղեցկություն մեջ եղած անխուսափելի դատնությունը:

ԳՂՈՒՍ 24

Մենդյան տոներին քիչ առաջ Դիրկ Մթրջովը եկավ ինձ մոտ խնդրելու, որ միասին անցկացնենք տոները: Այդ օրը յուրահատուկ սենտիմենտալություն էր համակել նրան, և նա ուզում էր տոներն իր ընկերների շրջանում անցկացնել համապատասխան հանգիսավորությամբ: Երկուսս էլ մոտ մի ամիս չէինք տեսել Մթրիբլենդին. ևս որովհետև զրազված էի որոշ ժամանակով Փարիզ եկած ընկերներով, Մթրջովը որովհետև սովորականից ավելի էր վերավորվել և երգվել էր այլևս երբեք գործ չունենալ նրա հետ: Մթրիբլենդը անտանելի մարդ էր, և Մթրջովը նրա հետ այլևս չէր ուզում խոսել: Սակայն սկսվող տոները նորից բարի զգացմունքներ էին արթնացրել նրա մեջ և չէր կարողանում տանել այն միտքը, որ բացարձակ մենակության մեջ էր անցկացնելու Մթրիբլենդը ծննդյան տոները: Իր զգացմունքները նրան վերագրելով, Մթրջովը ասանել չէր կարողանում, որ այդ օրը, երբ բարեկամները հավաքվելու էին տունական սեղանի շուրջը, աղբատ նկարիչը մնալու էր մենակ իր մտայն մտքերի հետ: Նա տանաժառ էր գրել իր արվեստանոցում և ևս կասկածում էի, որ նրա զարդարված ճյուղերին արգեն կախված էին մեր յուրաքանչյուրի համար ամենատեսաճառագատասխան նվերներ: Հողու խոսքում նա, այնուամենայնիվ, վախենում էր հանգիսել Մթրիբ-

լենդին, հասկանալով, որ ստորացուցիչ է այդքան հեշտութեամբ ներել իրեն հասցված դաժան վիրավորանքը և դրա համար էլ ուզում էր, որ ես անպայման ներկա գտնվեմ իրենց հաշտութեան տեսարանին:

Մենք միասին գնացինք, բայց Սթրիբլենդը սրճարանում չէր երևա ցարտ էր, հնարավոր չէր դրսում նստել, և մենք տեղ գրավեցինք ներսում, կաշվե բազմոցի վրա, շվախենալով հեղձացիլ ու ծանր օդից, որը սիգարի ծխից գորշակապտավուն էր դարձել: Սթրիբլենդը չէր երևում, բայց շուտով նկատեցինք Ֆրանսիացի էկարլին, որի հետ նա երբեմն շախմատ էր խաղում: Մենք արդեն ծանոթներ էինք, և, տեսնելով մեզ, նա նրասեղ մեր սեղանի մոտ: Սթրյովը հարցրեց, թե երբ էր նա տեսել Սթրիբլենդին:

— Սթրիբլենդը հիվանդ է,— պատասխանեց նկարիչը,— մի՞թե չդիտուք:

— Եվ լո՞ւրջ հիվանդ է:

— Շատ, որքան ինձ հայտնի է:

Սթրյովի դեմքը սպիտակեց:

— Ինչո՞ւ նա չգրեց ինձ: Ինչ հիմարություն էր իմ կողմից նրա հետ կովելու: Պետք է անմիջապես դնայ նրա մոտ: Հավանորար նա ոչ մի խնամող չունի: Որտե՞ղ է նա ապրում:

— Շատ հեշտում իսկ չունեմ,— պատասխանեց Ֆրանսիացին:

Պարզվեց, որ մեղանից ոչ մեկը չգիտի ինչպես գտնել Սթրիբլենդին:

Դիրիք հուսահատութեան մեջ էր:

— Նա կարող է մեռնել, և ոչ մեկը չի խմանա այդ մասին: Սրտափելի է: Մտածելն իսկ սպրտափելի է: Մենք պարտավոր ենք անմիջապես գտնել նրան:

Ես աշխատում էի Սթրյովին համոզել, որ առանց մարդու հասցեն իմանալու անիմաստ է Փարիզով մեկ փնտրել նրան: Ե. ի հարկավոր է գործողութեան պլան մշակել:

— Բարի, բայց մինչ մենք կորոշենք ինչ անել, նա կարող է մեռնել, և երբ այնտեղ հասնենք, արդեն շատ ուշ կլինի:

— Դե լո՞իր վերջապես և թույլ տուր մտածել,— գոռացի ևս: Համարներս լինում հայտնի էր միայն «Հսկել զը Բեկժ»-ի հասցեն, բայց Սթրիբլենդը վաղուց էր հնացել այնտեղից և հարկի թե հիշեին նրան: Իսկ եթե նկատի առնենք նաև իր տեղը

Սթրյովին նրա սենեուն մտրեքը, գրեթե հույս չկար, որ հետանալիս ասած լինեք, թե ուր է դնում: Բացի այդ, հինգ տարուց ավելի էր անցել: Այնուամենայնիվ, ես համոզված էի, որ նա հետո չի գնացել, բանի որ, ինչպես առաջ, շարունակում էր հանախել նույն սրճարանը, ուր լինում էր «Հոթել» զը Բեկժ»-ում սպրիտ ծամանակ:

Հանկարծ ես հիշեցի, որ պիմանկարի պատվերը նա հացափածառուհու միջոցով էր ստացել: Ուրեմն նրանից էլ կարելի էր իմանալ Սթրիբլենդի հասցեն: Ես խնդրեցի հասցենների գիրքը և սկսեցի փնտրել հացի խանութների հասցենները: Մոտակայքում հինգ խանութ կար, մեկ մնում էր բոլորն էլ նայել: Սթրյովը գիտություններ հետևեց ինձ: Նա իր պլաններն ուներ՝ այցելել կլիշի փողոցին հարակից բոլոր փողոցների սնները և հարցնել սլոպակ չի՞ ապրում արդյոք Սթրիբլենդը: Էմ պարզ սխեման բոլորովին արգարացրեց իրեն, բանի որ երկրորդ խանութում փաճառասեղանի ետևում կանգնած կինն առաջ, որ ճանաչում է Սթրիբլենդին: Նա միայն վստահ չէր, թե դիմացի երեք տներից որում է ապրում: Բայց հաշտությունը մպտաց մեզ, և առաջին իսկ դոնապանուհին առաջ, որ Սթրիբլենդի սենյակը վերջին հարկում է գտնվում:

— Նա երևի հիվանդ է,— օգուտից Դիրիք:

— Հնարավոր է,— պատասխանեց դոնապանուհին անտարբեր:— En effet!, արդեն բանի որ է չեմ տեսել նրան:

Սթրյովը առաջ անցնելով՝ աստիճաններով վերև վազեց, և երբ հասա նրան, արդեն կանգնած խուռում էր ինչ-որ բաճկոնավոր բանվորի հետ, որի դուռը սխալմամբ բախել էր: Բանվորը առաջարկեց ձեռնակ հարկան գոտը: Այնտեղի կենվորը, թվում է, իրոք որ նկարիչ է: Բայց արդեն մի շարաթ կլինի, որ չի տեսել նրան: Սթրյովը պատրաստվում էր բախել դուռը, բայց հանկարծ դեմքի հուսահատ արտահայտությամբ շրջվեց դեպի ինձ:

— Իսկ եթե նա մեռել է:

— Դժվար թե:

Ես բախեցի դուռը: Պատասխան չեղավ: Սեղմեցի բռնակը, արթնացի, որ դուռը փակ չէ: Ներս մտա, Սթրյովը հետևեց ինձ: Ինչպե՞ս գտնեմ մութ էր: Դժվարությամբ կարողացա տեսնել, որ դա սպիտակ տանիքով ձեռնասենյակ է: Տանիքից թափանցող աղոտ լույսը հաղիվ էր ցրում սենյակի խավարը:

— Մթրիբլենդ,— ձայն տվեցի ես:

Պատասխան չեղավ: Դա իրոք որ տարօրինակ էր, և ինձ թվաց, թե իմ ետևում կանգնած Մթրյովը դողում է, ինչպես տենդի մեջ: Ես մի պահ չէի համարձակվում լույս վառել: Հազիվ կարողացա անկյունում մահճակալ նշարել և սարսուղացի «Բակեթե լույսի տակ պարզվի, որ մահճակալին դիակ է պառկած», — անցավ մտքովս:

— Լուցկի շուն՞ը, ինչ է, ապուշներ:

Մթության մեջ հնչող Մթրիբլենդի կոպիտ ձայնը սարսուղ պատճառեց ինձ:

— Աստված իմ,— բացականչեց Մթրյովը,— իսկ ես արդեն կարծում էի, որ մեռել էր:

Ես լուցկի վառեցի և շուրջս մոմ փնտրելիս հասցրեցի նկատել, որ դա մի փոքրիկ սենյակ է, որը միաժամանակ և բնակարան է, և արվեստանոց: Այստեղ մահճակալից, երեսով դեպի պատը շուռ սված կտավներից, նկարակալից, սեղանից ու աթոռից բացի ոչինչ չկար: Ոչ բուխարի, ոչ էլ հատակին գորգ: Ամեն տեսակի թափթիկներով, ներկերով ու գույներ խառնելու դանակներով բռնված սեղանի վրա մի այրված մոմի մնացորդ գտնվեց: Ես վառեցի այն: Մթրիբլենդը անհարմար դիրքով էր պառկած, որովհետև մահճակալը կարճ էր նրա համար, և վրան գցել էր իր ունեցած բոլոր հագուստները: Առաջին իսկ հայացքից պարզվեց, որ նա ուժեղ տենդ ունի: Մթրյովը նետվեց դեպի նա և հուզմունքից դողացող ձայնով ասաց.

— Օ, խեղճ բարեկամս, ի՞նչ է պատահել ձեզ: Ես ոչ մի պատկերացում չունեմ, որ հիվանդ եր: Ինչո՞ւ իմաց չարիք: Պետք է համոզված լինեիր, որ ամեն ինչ կանեի ձեզ համար: Մի՛ մտածեք այն մասին, ինչ այն ժամանակ ասացի ձեզ: Ես արգարացի չեի: Հիմարություն էր, որ վերավորվեցի:

— Կորիք գրողի ծոցը,— ասաց Մթրիբլենդը:

— Ողջամիտ եղիք: Թույլ տվեք հարմար պառկեցնել ձեզ: Մի՞թե որևէ մեկը չկա այստեղ, որ խնամի ձեզ:

Նա անհանդուրժյալ նայեց շուրջը՝ խզուկ ձեղնասենյակին, ուղղեց բարձն ու ծածկոցը: Մթրիբլենդը ծանր շնչելով մտալ լուրջուն էր պահպանում: Հետո գայրացած նայեց ինձ: Ես հանգիստ կանգնած դիտում էի նրան:

— Եթե ուզում եք որևէ բան անել ինձ համար, կա՞ր լինի

րեք,— ասաց նա վերջապես:— Ես երկու օր տանից դուրս գալ չեմ կարողացել:

Մահճակալի մոտ դրված էր կաթի մի շիշ և թերթի պատուհիկի մեջ փաթաթված հացի կտորտանք:

— Ի՞նչ եք կերել մինչև հիմա,— հարցրեցի ես:

— Ոչինչ:

— Երբվանի՞ց,— բղավեց Մթրյովը:— Մի՞թե Լբկու օր ոչինչ չեք կերել, ոչինչ չեք խմել: Սարսուղալի՞ է:

— Զուր եմ խմել:

Նա մի պահ հայացքը հառեց դավաթին, որին կարելի էր պառկած վիճակում ձեռքով հասնել:

— Հիմա կվազեմ ուտելիք բերելու,— ասաց Մթրյովը:— Ի՞նչ եք ուզում, որ բերեմ:

Ես միջամտեցի, ասելով, որ անհրաժեշտ է ջերմաչափ, մի բիշ իրողող ու հաց գնել: Մթրյովը ուրախանալով, որ կարող է սպասկար լինել, աստիճաններով ներքև վազեց:

— Անիծյալ հիմար,— քրթմնջաց Մթրիբլենդը:

Ես շոշափեցի նրա զարկերակը: Այն խփում էր թույլ ու հաճախակի: Մթրիբլենդը իմ հարցերին չպատասխանեց, իսկ երբ պնդեցի, զայրացած շրջվեց դեպի պատը: Ինձ մեռած էր միայն լուռ սպասել: Տասը րոպե հետո Մթրյովը շնչակաուր լինելով՝ վերադարձավ: Բացի իմ պատկերներից, նա գնել էր մօմ, մսուշուր, սպիրտայրոց և ուշիմ տանտիրոջ նման սկսեց կաթի եռացնել: Ես շափեցի Մթրիբլենդի շեղմունքները: Փառասուն աստիճանից բարձր էր: Նա լուրջ հիվանդ էր:

ԳԼՈՒԽ 25

Շուտով հեռացանք նրա մոտից: Մթրյովը պետք է ասել գրեթե ճաշելու, իսկ ես սասցի, որ բժիշկ կբերեմ: Բայց երբ դուրս եկանք փողոց, սրտեղ ձեզնասենյակի ծանր օդից հեռալ թեթև շունչ քաշեցինք, հուլանդացին ինդրեց ինձ իր հեռավատանոց գնալ: Նա ինչ-որ միտք է հղացել, իսկ թե ինչ, առայժմ չի ասի, բայց անպայման ես պետք է ուղեկցեմ իրեն: Ես չէի կարծում, որ սովյալ պահին բժիշկը կկարողանար ավելի անհել, քան մենք արեցինք, այդ իսկ պատճառով էլ համաձայնվեցի:

Երբ ներս մտանք, Բլանշ Մթրյովը սեղան էր գցում: Դիրկը փոսց ուղիղ դեպի նա և նրա ձեռքերն առավ իր փեղերի մեջ:

— Հուզյալս, ես ուզում եմ քեզանից մի բան խնդրել. — ասաց նա: Բլանշը նայեց ամուսնուն այն լուրջ ու զվարթ հայացքով, որը նրա հրապույցներից մեկն էր: Մթրյովի կարմիր դեմքը բրանդիի փայլում էր, նա ծիծաղելիության շափ հուզված անոթ ուներ, բայց նրա կտոր, միշտ զարմանք արտահայտող աչքերում վճռականություն էր երևում:

— Մթրիբլենդը ծանր հիվանդ է: Գուցե և մահվան շեմին: Նա ապրում է մեկնակ, առանց խնամքի, մի կեղտոտ ձեղնապսակում: Թույլ տուր մեզ մտա տեղափոխել նրան:

Բլանշը ձեռքերն արագ դուրս քաշեց նրա ձեռքերի միջև: Նա դեռ երբեք չէի տեսել նրան այդպիսի արագ շարժում անելիս: Նրա գունատ դեմքը շիկնեց:

— Օ, ոչ:

— Մի մերժիր ինձ, սիրելիս: Ես չեմ կարող նրան մեկնակ թողնել այնտեղ: Աչք չեմ փակի նրա մասին մտածելով:

— Գնա և խնամիր նրան, ես դեմ չեմ:

Նրա ձայնում ստոր զուգվածություն կար:

— Բայց նա կմեռնի:

— Թույլ մեռնի:

Զարմանքից Մթրյովի բերանը բաց էր մնացել: Նա սրբեց գեմքի բրտիկը և շրջեց դեպի ինձ օգնություն փնտրելով, բայց ես չգիտեի ինչ ասել:

— Նա մեծ նկարիչ է:

— Հեռո ինչ: Ես ատում եմ նրան:

— Սիրելիս, թանկազինս, այդպիսի բան մի՛ ախր: Թախանձողին խնդրում եմ քեզ, թույլ տուր բերել նրան: Մենք նրան կաեղավորենք այստեղ, գուցե փրկենք նրա կյանքը: Նա քեզ նեղություն չի պատճառի: Ես ինքս ամեն ինչ կանեմ: Կտեղավորեմ նրան արվեստանոցում: Չէ՛ որ չի կարելի թողնել, որ նա սատկի շան նման: Գա անմարդկային կլինի:

— Ինչո՞ւ չի կարելի հիվանդանոց տանել նրան:

— Հիվանդանոց: Նա սիրույ ու հոգատար ձեռքերի կտրիք ունի:

Ես զարմացա, տեսնելով, թե ինչպես է Բլանշը հուզվել: Նա շարունակեց սեղանը զյցել, բայց ձեռքերը դողում էին:

— Ինձ համբերությունից մի հանիր: Եթե դու հիվանդանալիք, Մթրիբլենդը քեզ համար մտոր մտաին չէր խփի:

— Ինչ կարեոր է: Գուցե կիմամեկի ինձ: Ես նրա օգնության կարիքը չէի զգա: Եվ, բացի այդ, իմ բանն ուրիշ է, ես առանձնապես մեծ բան չեմ ներկայացնում ինձանից:

— Գուցե մար չնիկի ես նման: Պատկում ես գեանին և թույլ ես տալիս, որ մարդիկ օտնատակ տան քեզ:

Մթրյովը բմծծառ տվեց: Նրան թվում էր, թե հասկանում է կնոջ զայրույթի պատճառը:

— Ազավնյալս, դու դեռ հիշում ես այն օրը, երբ նա եկավ այստեղ տեսնելու իմ նկարները: Ինչ մեծ դժբախտություն է, եթե նրան դուր չեկան իմ նկարները: Հիմարություն էր իմ կողմից դրանք ցույց առլը: Եվ բացի այդ, դրանք իրոք որ այնքան էլ լավը չեն:

Նա տրամազին հայացքով նայեց արվեստանոցին: Նկարակալին դրված անաճարտ կտավի վրա պատկերված էր ժպտալույց խալաչի մի գեղջուկ: Նա խաղողի ողիույզը պահել էր թխալյա մի աղջկա գլխավերևում:

— Եթե նույնիսկ դրանք նրան դուր չեկան, նա պարտավոր էր քաղաքավարի լինել: Ինչո՞ւ վիրավորեց քեզ: Որպեսզի ցույց տա, որ արհամարհո՞ւմ է քեզ: Իսկ դու պատրաստ ես նրա ձեռները լիզել: Օ, ես ատում եմ նրան:

— Ազավնյալս, չէ որ նա հանձար է: Մի՞թե կարծում ես, որ ես ինձ հանձարեղ նկարիչ եմ համարում: Իհարկե, ես կրանկանալի այդպիսի լինել: Բայց ես հանձարին շուտ եմ նկատում և ամբողջ հոգով խոնարհվում նրա առաջ: Ավելի հրաշալի բան չկա աշխարհում: Բայց դա ծանր բեռ է նրա համար: Եվ օժտված է դրանով: Պետք է հոգատար և համբերատար լինել հանձարեղ մարդու նկատմամբ:

Ես, ընտանեկան այդ տեսարանից փոքր-ինչ շփոթված, մի կողմ էի քաշվել և դարձանքով մտածում էի, թե ինչու Մթրյովը այդքան համառորեն էր պնդում, որ ես իր հետ գալիս նրա կնոջ աչքերն արդեն արցունքակալվել էին:

— Հասկացի՛ր, ես խնդրում եմ քեզ ընդունել նրան ոչ միայն նրա համար, որ նա հանձար է, այլ նրա համար, որ նա մարդ է, հիվանդ ու աղքատ մարդ:

— Ես նրան երբեք իմ տունը չեմ թողնի, կրքե՛ք:

Մթրյովը շրջվեց դեպի ինձ:

Գ - Լուսին և վեցպենսանդ

— Գոնե զու նրան բացատրիր, որ խոսքը կյանքի ու մահվան մասին է: Ձէ որ չի կարելի այդ անիծյալ որջում թողնել նրան:

— Իհարկե, հիվանդին այստեղ խնամելը շատ ավելի հեշտ կլինի,— ասացի ես,— բայց մյուս կողմից նեղութուն կպատճառի ձեզ: Նրան չի կարելի մենակ թողնել ոչ ցերեկը, ոչ էս գիշերը:

— Սիրելիս, չի կարող պատահել, որ դու վախենաս ու հրավարվես հիվանդ մարդուն խնամելուց:

— Եթե նա այստեղ գա, ես կհեռանամ,— զայրույթից իրեն կորցնելով, բացականչեց միտիս Սթրյովը:

— Ես չեմ հասկանում քեզ: Դու միշտ այնքան բարի ու մեծահոգի ես եղել:

— Ի սեր աստժո, հանդիստ թող ինձ: Դու ինձ խելագարության կհասցնես:

Վերջապես արցունքները հորվեցին նրա աչքերից: Նա ընկավ բազկաթոռի մեջ և ձեռքերով ծածկեց դեմքը: Նրա ուսերը ջղաձուրեն ցնցվում էին:

Դիրկը մի ակնթարթում հայտնվեց նրա ոտքերի մոտ, գրկեց, համբուրեց՝ ձեռքերը՝ ամեն տեսակի քնքուշ անուններով կոչելով նրան, և գորովանքի արցունքները հոսեցին նրա այտերից: Բլանշը ազատվեց նրա գրկից և սրբեց աչքերը:

— Թող ինձ,— ասաց նա մեղմացած, և, աշխատելով ժպտալ, դիմեց ինձ.— Հիմա ի՞նչ կմտածեք իմ մասին:

Սթրյովը ուզում էր ինչ-որ բան ասել, բայց վարանեց և հուսահատորեն նայեց կնոջը: Նրա ճակատը կնճռտովեց, և կարմիր շրթունքները փքվեցին: Չգիտեմ, թե ինչու նա ինձ վախեցած ծովախոզ հիշեցրեց:

— Ուրեմն «ո՞չ», սիրելիս:

Բլանշն արդեն ուժասպառ էր եղել և հոգնածությամբ միայն թափ տվեց ձեռքը:

— Արվեստանոցը բռն է, այստեղ ամեն ինչ բռն է, եթե ուզում ես բերել նրան, ինչպես կարող եմ արգելք լինել:

Գոհունակության հանկարծակի մի ժպիտ լուսավորեց Դիրկի դեմքը:

— Ուրեմն համաձայն ես: Օ, թանկագինս, ես այդպես էլ գիտեի:

Միտիս Սթրյովը հավաքեց իրեն և տանջահար հայացքով

նայեց ամուսնուն: Հետո ձեռքով սեղմեց սիրտը, կարծես ցանկանալով մեղմացնել նրա խիստցները:

— Օ, Դիրկ, ես ամբողջ կյանքում քեզանից երբեք որևէ բան չեմ խնդրել:

— Բայց դու գիտես, որ չկա մի բան աշխարհում, որ չանեի քեզ համար:

— Խնդրում եմ քեզ, Սթրիբլենդին մի՛ բեր այստեղ: Ում ուզում ես, բայց ոչ նրան: Թող դա լինի գող, հարբեցող, առաջին իսկ պատահած թափառաշրջիկը փողոցից, և ես խոստանում եմ քեզ ուրախությամբ խնամել նրան: Միայն ոչ Սթրիբլենդին, ազալում եմ քեզ, Դիրկ:

— Բայց ինչո՞ւ:

— Ես վախենում եմ նրանից: Չգիտեմ ինչու, նա սարսափեցնում է ինձ: Նա մեզ սարսափելի շարիք կպատճառի: Ես համոզված եմ դրանում: Չգուցե եմ: Եթե նրան այստեղ բերես, վերջը վառ կլինի:

— Ինչ անմտություն:

— Ոչ, ոչ: Ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Ինչ-որ սարսափելի բան կպատահի մեզ:

— Նրա համար, որ մենք բարի՞ք ենք գործում:

Միտիս Սթրյովը շնչահեղձ էր լինում, սարսափը աղավաղել էր նրա դեմքը: Ես չգիտեի, թե ինչ է նա մտածում, բայց զգում էի, որ ինչ-որ անորոշ սարսափ ստիպում է նրան դուրս գալ ինքնատիրապետումից: Բայց չէ որ նա սովորաբար այնքան հանգիստ էր պահում իրեն: Տվյալ դեպքում նրա հուզմունքը անհասկանալի էր: Սթրյովը որոշ ժամանակ նայում էր նրան զարմանքից քարացած:

— Դու իմ կիներն ես և աշխարհում բոլորից թանկ ինձ համար: Առանց քո համաձայնության ոչ մեկը այստեղ չի գա:

Միտիս Սթրյովը մի պահ փակեց աչքերը: Ինձ թվաց, թե նա կորցնում է գիտակցությունը: Ես չգիտեի, որ նա այդպիսի ջղաշին կլին է, և փոքր-ինչ զայրացա: Հետո նորից լսվեց Սթրյովի ձայնը, մի տեսակ տարօրինակորեն ճեղքելով լուսությունը:

— Մի՛թե դու մեծ դժբախտության մեջ չէիր, երբ օգնության ձեռք մեկնեցի քեզ: Եվ դու լավ գիտես, թե ինչ մեծ նշանակություն ունի դա: Մի՛թե չէիր ցանկանա մեկ ուրիշի ազատել նեղ վիճակից, երբ առիթ է ստեղծվել դրա համար:

Դրանք սովորական բառեր էին և այնքան խրատական թվա-

ցին ինձ, որ ես հազիվ գտայեցի ժպիտս: Դրանց թողած ազդեցութիւնը ապշեցրեց ինձ: Բլանշ Սթրյուվը ցնցվեց և սնեռուն հայացքով նայեց ամուսնուն: Դիրկը աչքերը հառեց հատակին և, ինչպես ինձ թվաց, շփոթվեց: Բլանշի այտերը փոքր-ինչ կարմրեցին, հետո մեռելային գունատութիւն երևաց դեմքին, թվում էր, թէ արյունը ստոեց նրա երակներում, նույնիսկ ձեռքերը գունատվեցին: Նա սկսեց զոզալ: Արվեստանոցի լուսթիւնը թանձրացավ, դարձավ գրեթէ նկատելի: Ես բոլորովին շվարել էի:

— Բեր Սթրիբլենդին, Դիրկ, ես նրա համար կանեմ այն ամենը, ինչ կարող եմ:

— Բանկադրինս,— ժպտաց Դիրկը և ուզում էր գրկել նրան, բայց Բլանշը խույս տվեց:

— Մարդկանց առաջ քնքշութիւնդ մի ցույց տուր, Դիրկ, չեմ սիրում, Հիմարութիւն է դա:

Նա նորից նախկին Բլանշն էր գործել և ոչ ոք չէր ապի, որ քիչ առաջ այդպիսի սաքսափելի հուզմունք էր ցնցել նրան:

ՔԼՈՒԵ 26

Հաջորդ օրը տեղափոխեցինք Սթրիբլենդին: Բավական շատ համառութիւն և էլ ավելի շատ համբերութիւն կարիք զգացվեց նրան տեղափոխելու համար, բայց նա իրոք շատ հիվանդ էր և ուժ չունէր դիմադրելու Սթրյուվի թախանձանքներին ու իմ վճռականութիւնը: Մենք հազցրինք նրան (ընդ որում նա թույլ ձայնով անընդհատ հայհոյում էր մեզ), աստիճաններով իջեցրինք, կառք նստեցրինք և տարանք Սթրյուվի արվեստանոց: Սթրիբլենդը այնքան էր հոգնել այդ բոլորից, որ առանց առարկելու թույլ տվեց պատկեցնել անկողին: Նա ամիսուկես հիվանդ մնաց: Օրեր էին լինում, որ մեզ թվում էր, թէ նա մի բանի ժամ էլ չի ապրի, և ես համոզված եմ, որ նա մահից պրծավ շնորհիվ Սթրյուվի անսովոր համառութիւնի:

Կլանքումս նրա նման ծանր հիվանդ չեմ տեսել: Նա պահանջիտ չէր, ոչ էլ քմահաճ, ընդհակառակը՝ երբեք չէր բողոքում, ոչինչ չէր պահանջում և միշտ լուռ էր, բայց մեր հոգատար խնամքը կարծես դայրույթ էր պատճառում նրան: Այն հարցին, թէ ինչպես է զգում իրեն և որն է բանի կարիք չունի, նա ծաղրով կամ հիշոցներով էր պատասխանում: Ես պարզա-

պես ատում էի նրան, և երբ վտանգն անցավ, առանց տատանվելու այդպես էլ ասացի:

— Կորեք դոզդի ծոցը,— եղավ նրա պատասխանը:

Դիրկը բոլորովին թողել էր իր գործը և նվիրված դաշակի նման խնամում էր նրան: Նա զարմանալի ճարպկութեամբ ուղղում էր նրա անկողինը և աջնախի խորամանկութեամբ էր ստիպում նշանակված դեղերն ընդունել, որ ես երբեք չէի նկատել նրա մեջ: Ոչ մի հոգսի ու զժմարութեան առաջ կանգ չէր առնում: Չնայած նրա միջոցները բավարարում էին կնոջ հետ միջակ կյանք վարելու, բայց ավելորդ ծախսեր անելու փող չունէր: Իսկ հիմա նա առատաձեռնորեն փող էր ծախսում ամեն տեսակի դելիկատեսների վրա, որոնք կարող էին գրգռել Սթրիբլենդի քմահաճ ախորժակը: Երբեք չեմ մոռանա, թէ ինչպիսի համբերատար քաղաքավարութեամբ էր Դիրկը համոզում նրան շատ ուտել: Սթրիբլենդի կոպիտ պատասխանները երբեք համբերութիւնից չէին հանում նրան: Եթէ դա մտայն գայրույթ էր միայն, Սթրյուվն աշխատում էր շնկատել, իսկ եթէ կովի առիթ տվող էր, ծիծաղում էր միայն: Երբ Սթրիբլենդը սկսեց կազդուրվել, նրա լավ տրամադրութիւնը արտահայտվեց Սթրյուվին ձեռ առնելով, իսկ սա դիտմամբ հիմարութիւններ էր անում, որպեսչի ուրախացնէր նրան, հետո էլ երբեմն երջանիկ հայացքով նայում էր ինձ՝ թէ գործերը լավ են գնում:

Սթրյուվը սքանչելի էր:

Բայց բոլորից շատ ինձ զարմացնում էր Բլանշը: Նա իրեն դրսևորեց ոչ միայն որպես ընդունակ, այլ նաև նվիրված հիվանդապահուհի: Դժվար էր հավատալ, որ նա այդքան կրթութեամբ դեմ է եղել Սթրիբլենդին արվեստանոցում տեղավորելու Դիրկի ցանկութեանը: Նա կամեցավ ամուսնուն հավատար հոգատարութիւն ցուցաբերել հիվանդի նկատմամբ: Այնպես պատրաստեց անկողինը, որ հնարավոր լինի սովանները փոխել առանց Սթրիբլենդին նեղութիւն պատճառելու: Կանում էր նրա հրեան ու ձեռքերը: Եվ երբ ես զարմանք հայտնեցի նրա հրատարկան մասին, ժպտաց իր մեղմ, հաճելի ժպիտով և ասաց, որ մի ժամանակ հիվանդանոցում է աշխատել: Նա ոչ մի բանով ցույց չէր տալիս իր անսահման ատելութիւնը Սթրիբլենդի նրկատմամբ: Քիչ էր խոսում նրա հետ, բայց գուշակում էր նրա բոլոր ցանկութիւնները: Երկու շաբաթ նույնիսկ գիշերները չէր կարելի մենակ թողնել Սթրիբլենդին, և Բլանշը ամուսնու հետ

հերթով նստում էր նրա անկողնու մաս: Ինչի՞ մասին էր նա մտածում Մթրիբլենդի կողքին ժամերով մթութջան մեջ նստած:

Սարսափելի էր նայել Մթրիբլենդին. նա պառկել էր բորբոքված աչքերը հառած դատարկութանը, սովորականից ավելի նիհար, շեկ գզգզված մորուրով, և հիվանդութունից անբնական նորին փայլող աչքերը ավելի խոշոր էին թվում:

— Նա գիշերը խոստ՞ւմ է ձեզ հետ,— հարցրեցի ես մի անգամ:

— Երբեք:

— Գուր առաջվա պես ասո՞ւմ եք նրան:

— Ավելի բան երբեք:

Նա իր մոխրագույն աչքերով հանդարտ ինձ նայեց: Այնքան անխոռվ էր նրա դեմքը, որ դժվար էր հավատար, թե այդ կինը ընդունակ է այդպիսի բուռն ասելություն, որ ես ականատես էի եղել:

— Իսկ գոնե մեկ անգամ նա շնորհակալութուն հայտնե՞լ է ձեզ այն ամենի համար, ինչ որ անում եք:

— Ոչ,— ժպտաց նա:

— Գա անմարդկային է:

— Եվ գարշերի:

Մթրյովն, իհարկե, հիացած էր և յգիտեր ինչպես շնորհակալ լիներ կնոջից այն անկեղծ պատրաստակամության համար, որով նա իր ուսերին էր վերցրել այդ ծանր բեռը: Նրան միայն շփոթմունք էր պատճառում այն վերաբերմունքը, որ ցուցաբերում էին Բլանշն ու Մթրիբլենդը իրար նկատմամբ:

— Հասկանում ես, նրանք ժամերով նստում են առանց մի խոսք փոխանակելու:

Մի անգամ (Մթրիբլենդն այնքան լավ էր գգում իրեն, որ պատրաստվում էր մի երկու օրից ոտքի ելնելու) մենք նստած էինք արվեստանոցում: Գիրկը ինչ-որ բան էր պատմում ինձ, միսիս Մթրյովը կարում էր, և ինձ թվաց, թե նա Մթրիբլենդի վերնաշապիկն է կարկոտում: Մթրիբլենդը պառկած էր մեջքի վրա և չէր խոսում: Պատահաբար նկատեցի, որ նա իր աչքերը ծաղրանքով ու հետաքրքրությունը հռոկ է Բլանշ Մթրյովի վրա: Զգալով նրա հայացքը, Բլանշը իր հերթին բարձրացրեց աչքերը, և մի պահ նրանք ուշադիր իրար նայեցին: Ես չկարողացա լրիվ հասկանալ, թե ինչ էր արտահայտում Բլանշի հայացքը: Ինչ-որ տարօրինակ ցրվածություն կար այդ հայացքում և աստված գիտե

թե ինչու՞ տաղնայա: Բայց Մթրիբլենդը շրջեց հայացքը և նորից շրջեց աննպատակ հռոկեց առաստաղին, իսկ Բլանշը շարունակում էր նայել նրան, այս անգամ դեմքի անհասկանալի ու խորհրդավոր արտահայտությամբ:

Մի բանի օր հետո Մթրիբլենդը ոտքի կլավ: Նրա ոսկորն ու կաշին էր մնացել, հագուստները խրովիլակի լաթերի նման կախվել էին վրայից: Գզգզված շեկ մորուքը, երկար մազերը, սովորականից խոշոր դիմագծերը, որ հիվանդութունից ավելի էին սրվել, տարբերակ տեսք էին սվել նրան, այնքան տարօրինակ, որ արդեն վանող արտաքին շուներ: Ինչ-որ մոնումենտալ բան կար նրա անձուներություն մեջ: Զգիտեմ ինչպես ճիշտ հազորդեմ ինձ վրա իրզամ նրա տարաբնույթությունը: Գա ոչ թե այն էր, որ հոգևոր կյանքը լրիվ թափանցել էր նրա մեջ, թե մարմնական թաղանթը թահանցիկ էր թվում,— աչք ծակող զգայնականություն էր երևում նրա դեմքին և այն, ինչ հիմա ես կասեմ, հնարավոր է, որ ծիծաղելի է, բայց դա վեհաշունչ զգայնականություն էր: Ինչ-որ նախապատմական բան կար Մթրիբլենդի մեջ, կարծես նրա մեջ զրված էր մի մասնիկ բնություն այն մութ ումեհից, որոնց հույները մարմնավորում էին կես մարդ կես կենդանու՝ սատիրի ու Փավնի կերպարներում: Ակամայից Մարսիսին՝ Տիշեցի, ո՞ին իր սեփական կաշվով հատուցեց այն բանի համար, որ համարձակվել էր երգարվեստում Ապոլլոնի հետ մրցել: Մթրիբլենդն իր սրտում բացառիկ պատկերներ ու արտասովոր հարմոնիաներ էր կրում, և ես կանխատեսում էի, որ տառապանքներով ու հուսահատությամբ լի վախճան է սպասվում նրան: «Նա գիվահար է եղել,— նորից մտածեցի ես.— բայց այդ դեռ շարժի ոգին չէ, դա նախապատմական ում է, որ գույություն է ունեցել նախքան շարն ու բարին»:

Մթրիբլենդը դեռ շատ թույլ էր նկարհյու համար և լուս նստում էր արվեստանոցում, տարված, աստված գիտե, թե ինչ անուրջնեղով, կամ էլ կարգում էր: Ես շատ անսպասելի գրքեր էի տեսնում նրա մոտ: Մալարմեի² բանաստեղծությունները նա կրթության նման շրթունքները անձայն շարժելով էր կտրում, և ինձ հետաքրքրում էր, թե ինչպիսի զգացմունքներ էին արթնացնում նրա մեջ այդ նրբագեղ կողմնակներն ու մութ տողերը: մի ուրիշ անգամ ես խորասուզված գտա նրան Գարսրիոյի³ դեռնակախիվ վեպի ընթերցանություն մեջ: Ինձ զվարճացնում էր այն միտքը, որ գրքերի ընտրությունն իսկ ցույց է տա-

լին նրա արատովը խառնվածքի հակասական կողմերը: Հետաքրքիր էր նաև, որ ֆիզիկապես թույլ լինելով, նա ոչ մի հոգատարություն չէր ցուցաբերում իր մարմնի նկատմամբ: Մթրյովը սիրում էր հարմարավետությունը, և արվեստանոցում դրված էին երկու փափուկ բազկաթոռ և մի մեծ բազմոց: Մթրիբլենդը նույնիսկ չէր մտաենում դրանց, ոչ թե ցուցադրական աստիցիդմից դրված,— մի անգամ էս նրան բոլորովին մենակ դատ անտեղ՝ նստած եռտանի աթոռին,— այլ պորզապես փոփոկակեցություն չէր սիրում, և խոհանոցի աթոռը գերազատում էր ամեն անակի բազկաթոռից: Իսկ դա զդանացնում էր ինձ: Ես երբեք չեմ անել մի մարդու, որ այդքան անտարբեր լիներ շրջապատի կահավորանքի նկատմամբ:

ՅԼԻԻՆ 27

Երկու թե երեք շաբաթ անցավ: Մի անգամ առավոտյան, երբ հանկարծ ընդհատվեց աշխատանքս, որոշեցի հանգիստ տալ ինձ և գնացի Լուվր Թափառելով սրահներում, նայում էի ինձ լավ ծանոթ նկարները, երևակայության գոհացում տալով այն զգացմունքներով, որ դրանք առաջացնում էին իմ մեջ: Մի երկար սրահով անցնելիս հանկարծ տեսա Մթրյովին: Ես ժպտացի, որովհետև հնարավոր չէր շփտալ՝ տեսնելով նրա կլորիկ կերպարանքը, բայց ավելի մոտենալով նկատեցի, որ, հակառակ իր սովորության, նա ընկճված տեսք ուներ: Նա ինչ-որ բանից ճնշված էր ելևում, բայց այնուամենայնիվ ծիծաղելի էր, ինչպես մի մարդ, որ հանկարծակի գետն է բեկել, և, մահից ազատվելով, գեռ վախից ուշքի չի եկել, սակայն հասկանում է իր սնահեթևի վիճակը: Երբ լուվրում նա ինձ նայեց, բայց ես զգացի, որ շտեպով: Ակնոցի տակից նրա կապույտ աչքերը տափնապոզ փայլեցին:

— Մթրյով, — ձայն տվեցի ես:

Նա փոքր-ինչ ցնցվեց, հետո ժպտաց, բայց ինչ-որ վշտախտան ժպիտով:

— Ինչ է սրբ, որոշել եք ծուլություն՞ մը զբաղվել, — հարցրեցի ես ուրախ:

— Վաղուց կույրում չեմ եղել: Որոշեցի տեսնել որևէ նորություն չկա՞ արդուր:

— Բայց չէ որ դու ասում էիր, որ այս շաբաթ պետք է վերադառնես նկարը:

— Իմ արվեստանոցում Մթրիբլենդն է աշխատում:

— Հետո ինչ:

— Ինքս առաջարկեցի: Նա գեռ շատ տկար է տուն վերադառնալու համար: Կարծում էի միասին կաշխատենք: Կատիսական թաղամասում շատերն են այդպես աշխատում: Ինձ թվում էր, թե այդպես ավելի հեռաքրքիր կլինի: Միշտ մտածում էի, որքան լավ է զրուցակից ունենալ, երբ հոգնում ես աշխատանքից:

Նա խոսում էր դանդաղ, կմկմալով, իր բարի հիմարավուն աչքերը վրաս հասնում: Նրա աչքերը լիքն էին արտասուցներով:

— Ես ինչ-որ չեմ հասկանում քեզ:

— Մթրիբլենդը չի կարողանում աշխատել, ևրբ արվեստանոցում ուրիշ մարդ կա:

— Բայց քեզ ինչ, գրողը տանի, չէ որ դա քս արվեստանոցն է:

Մթրյովը խղճալի հայացքով նայեց ինձ: Նրա շրթունքները դողում էին:

— Բացատրիր, թե բանն ինչումն է, — պահանջեցի ես:

Նա բոլորովին կարմրելով լուեց: Հետո դժբախտ տեսքով հայացքը հռոնց պատի նկարներից մեկին:

— Նա ինձ թույլ շտվեց նկարել: Ասաց, որ հետանամ:

— Իսկ ինչ՞ա ինքդ գրողի ծոցը շուղարկեցիր նրան:

— Նա ինձ վստեղեց: Հետը հս չէի կավելու: Գլխարկը շարտեց կտեխցս ու փակեց դուռը:

Ես պատրաստ էի հոշոտել Մթրիբլենդին, բայց ինձ վրա էլ էի զայրացած, որովհետև խեղճ Մթրյովին նայելիս, հազիվ էի զսպում ծիծաղս:

— Իսկ կինդ ի՞նչ ասաց:

— Նա գնացել էր գնումներ անելու:

— Իսկ նրան կթողնի՞:

— Զղիտեմ:

Ես շվարած նայեցի Դիրկին: Նա կանգնած էր ինչպես ուսուցչի կողմից հանցանքի մեջ բռնված պարոպական:

— Ուզո՞ւմ ես հենց հիմա գնամ ու վստեղեմ Մթրիբլենդին: Դիրկը թևթևակի ցնցվեց, և նրա փայլող կարմիր գեմքը ավելի կարմրեց:

— Այն Ազիլի լավ կլինի շխտանովես:
Նա գլուխ տվեց ու հեռացավ: Ես հասկացա, որ Սթրյուվը
ինչ-որ պատճառով չէր ուզում քննարկել այդ պատմությունը,
բայց թե ինչու, պարզ չէր ինձ համար:

ԳԼՈՒԽ 28

Մի շաբաթ հետո ամեն ինչ պարզվեց: Ռեստորանում հապ-
ճեպ ճաշելուց հետո տուն վերադարձա և նստեցի իմ փոքրիկ
հյուրասենյակում կարգալու: Ծրեկոյան մոտ ժամը տասին մի-
շանցքում լավեց զանգակի թրթռացող ձայնը: Բացեցի դուռը
իմ առջև կանգնած էր Սթրյուվը:

— Կարելի՞ է, — հարցրեց նա:

Սանդղահարթակի կիսախավարի մեջ ես չկարողացա լավ
տեսնել նրան, բայց նրա ձայնի մեջ ինչ-որ տարօրինակ բան
զգացվեց: Եթե շիմանայի, որ նա գինեծուծկալ մարդ է, կմտա-
ծեի, որ խմած է: Առաջնորդեցի հյուրասենյակ և նստեցրի
բազկաթոռին:

— Փառք ասածո, վերջապես տանը գտա քեզ, — բացական-
չեց նա:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեցի ես նրա հուսահատ տես-
քից զարմացած:

Միայն հիմա կարողացա լավ տեսնել նրան: Միշտ կոկիկ
հագնված Դիրկը այս անգամ թափթփված և նույնիսկ գզգզված
տեսք ունեւր: Ես ժպտացի, որոշելով, որ նա չափից ավելի է
խմել, և նույնիսկ ուզեցի ծաղրել նրան:

— Զգիտե՞իր ուր գնալ: Մի անգամ եկա, տանը չէիր, — ասաց
նա հուզված:

— Ուշ բնթրեցի:

Նոր հասկացա, որ խմիչքը չէր նրան հասցրել այդ վիճակին:
Նրա դեմքը, որ սովորաբար վարդագույն էր, ծածկված էր բոսո-
բազույն բծերով: Զեռքերը դողում էին:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեցի ես:

— Կինս լքեց ինձ:

Նա դժվարությամբ արտասանեց այդ բառերը, հուզմունքից
կմկմաց, և արցունքները սկսեցին հոսել նրա կլոր ալտերի վրա-
յով: Ես չգիտեի ինչ անել: Իմ առաջին միտքը այն եղավ, որ

Բլանդի համբերության բաժակը լցվել է, և Սթրիբլենդի շաբ-
աօթից զայրացած, պահանջել է, որ Դիրկը վճռի նրան: Ինձ
հայտնի էր, թե հանկարծական ինչպիսի պտթկումների և նս-
ընդունակ, շնայած արտաքնապես հանդիստ է: Իսկ եթե Սթրյուվը
չէր համաձայնվել դրան, նա հեշտությամբ կարող էր դուրս վա-
զած լինել արվեստանոցից, երգվելով այնու երբևր չվերադառ-
նալ: Ինչեհեց, խեղճն այնպիսի հուսահատության մեջ էր, որ
ես նույնիսկ չժպտացի:

— Այդքան մի վշտանա, բարեկամս, նա կվերադառնա: Կա-
րիք չկա զայրույթի պահին տասն կնոջ խոսքերը յուրը ընդունել:

— Դու շեւ հասկանում... Նա սիրահարվել է Սթրիբլենդին:

— Ի՞նչ, ես ապշեցի, բայց հենց որ գլխի բնկա, թե ինչ
է նա ասում, հասկացա, որ դա հիմարություն է: Ի՞նչ անմտու-
թյուն ես դուրս տալիս: Միթե ուզում ես ասել, որ խանդում ես
Սթրիբլենդին: Ես պատրաստ էի ծիծաղել: Դու ինձանից լավ
գիտես, որ Բլանդը տանել չի կարողանում Սթրիբլենդին:

— Դու ոչ մի բան չես հասկանում, — տնքաց նա:

— Դու հիստերիկ ավանակ ես, — բղավեցի ես անհամբերու-
թյամբ: Գնանք, սողայով վիսկի խմիր, քեզ ավելի լավ կզգաս:

Ինձ թվաց, թե այս կամ այն պատճառով, — չէ որ միայն
ասածուն է հայտնի, թե որքան հնարագետ է մարդը ինքնախոշ-
տանգման հարցերում, — Դիրկը գուցե է մտցրել, որ Սթրիբ-
լենդը դուր է գալիս կնոջը և ոչ տեղին արտաձայնովնու իր
զարմանալի շնորհքով վիրավորել նրան, իսկ Բլանդը նրան հա-
տուցելու համար ձեացրել է իբր Սթրյուվի կասկածները հիմ-
նավոր են:

— Ահա թե ինչ, — ասացի ես, — գնանք քեզ մոտ: Քանի որ
ինքդ ես չիսթ սարքել, ինքդ էլ ճաշակիր: Բլանդը իմ կարծիքով
անհիշաշար կին է:

— Բայց ինչպե՞ս վերադառնամ արվեստանոց, — պատաս-
խանեց Դիրկը հոգնածությամբ:

— Զէ՞ որ նրանք այնտեղ են: Ես նրանց եմ թողել արվես-
տանոցը:

— Ուրեմն ոչ թե կինդ է հետացել քեզանից, այլ դու նրա-
նից:

— Այդպես մի խոսիր, ի սեր ասածո:

Ոչ մի վայրկյան չհավատալով նրա խոսքերին, ես դեռ շա-

բունակում էի լուրջ շրնդունել նրա ասածները: Սակայն Դիրկը վշտից կորցրել էր իրեն:

— Դե բանի որ եկել ես ամեն ինչ կիսելու ինձ հետ, ուրեմն պատմիր մանրամասն:

— Այսօր ես զգացի, որ այլևս տանել չեմ կարող և Սթրիքլենդին ասացի, որ իմ կարծիքով նա բուլտրովին առողջ է և կարող է տուն վերադառնալ: Արվեստանոցը ինձ էլ է պետք:

— Սթրիքլենդից քացի աշխարհում, իրոք որ, չի գտնվի մեկը, որին կարիք լինի ր ասել այդ մասին, — նկատեցի ես: — Իսկ ի՞նչ պատասխանեց նա:

— Քմծծիձող տվեց: Քեզ հայտնի է, թե ինչպես է նա ծիծաղում, կարծես դիմացիներ կատարյալ հիմար լինի: Եվ ասելով, որ անմիջապես կհեռանա, սկսեց հավաքել իրերը: Հիշո՞ւմ ես, ես նրա սենյակից վերցրի այն ամենը, ինչ կարող էր պետք գալ նրան: Հետո Բլանշից թուղթ և թեյ խնդրեց:

Սթրյովը կմկմաց ու լռեց: Նա ընգհատումներով էր շնչում և ինձ թվաց, թե ուշագնաց է լինում: Անկեղծորեն ասած, ես այդպիսի պատմություն չէր, որ սպասում էի լսել նրանից:

— Բլանշը, որ շափազանց գունատ էր, բերեց ինչ որ պետք էր նրան: Սթրիքլենդը ոչինչ չասաց: Ակսեց շվշվացնել ու կապել իրերը, ոչ մի ուշադրություն չկարձնելով մեզ վրա: Նրա աչքերը ժպտում էին հումորով: Չես պատկերացնում, թե ինչպես էր ճմլվում սիրտս: Ինձ թվում էր, թե ինչ-որ սարսափելի բան է պատահելու, և զզջացի, որ խոսել եմ նրա հետ: Նա շուրջը նայեց, փնտրելով դիտարկելու Այստեղ Բլանշն ասաց. «Ես գնում եմ Սթրիքլենդի հետ, Դիրկ: Այլևս չեմ կարող բեզ հետ ապրել: Ցանկացա խոսել, բայց բռռերը դուրս չէին գալիս բերանիցս: Սթրիքլենդը լուռ էր: Նա շարունակում էր շվշվացնել, կարծես այդ բոլորը նրան չէր վերաբերվում:

Սթրյովը նորից լռեց և սրբեց դեմքի քրտինքը: Ես լուռ էի: Հիմա հավատում էի նրան և այդչև էի, բայց այնուամենայնիվ ոչինչ չէի հասկանում: Հետո նա ինձ պատմեց, — նրա ձայնը դողում էր, և արցունքները հոսում էին այտերի վրայով, — թե ինչպես է նետվել դեպի կինը, ցանկանալով գրգնել նրան, բայց նա թափով ետ է քաշվել, խնդրելով չդիպչել իրեն: Սթրյովը թախանձագին խնդրել է չբել իրեն, ասել է, թե որքան է սիրում նրան, աշխատել է հիշեցնել նրան միասին անցկացրած իրենց երջանիկ օրերը և այն հոգատարությունը, որով շրջա-

պատել է նրան, հավատացրել, որ նրա վրա չի բարկացել և ոչ մի բանում չի մեղադրում:

— Խնդրում եմ, Դիրկ, թող հանգիստ գնամ, — ասաց նա վերջապես: — Մի՞թե չես հասկանում, որ ես սիրում եմ Սթրիքլենդին, և կգնամ նրա հետ թեկուզ աշխարհի ծայրը:

— Բայց, հասկացիր, նա երբեք չի երջանկացնի քեզ: Հանուն քո իսկ բարօրության, մի գնա: Դու չգիտես, թե ինչ է սպասվում բեզ:

— Դա քո մեղքն է: Ինքդ պնդեցիր, որ նա այստեղ գա: Հետո նա նետվեց դեպի Սթրիքլենդը:

— Խղճացիք նրան, — աղևստեց նա: — Թույլ մի տվեր, որ այդպիսի խելագար քայլի դիմի:

— Նա ազատ է անելու այն, ինչ ցանկանում է, — պատասխանեց Սթրիքլենդը: — Ես չեմ ստիպում նրան ինձ հետ գալ:

— Իմ քնտրությունը կատարված է, — ասաց Բլանշը խուլ ձայնով:

Սթրիքլենդի վիրավորական հանգստությունը բուլտրովին ինքնատիրապետումից զրկեց Դիրկին: Կույր մուուցքի մեջ, արդեն չիմանալով, թե ինչ է անում, նա նետվեց Սթրիքլենդի վրա: Հանկարծակիի գալով, Սթրիքլենդը օրորվեց, բայց նա շատ ուժեղ էր, նույնիսկ հիվանդությունից հետո, և Դիրկը մի ակնթարթում, — թե դա ինչպես պատահեց ինքն էլ չիմացավ, — հայտնվեց հատակին:

— Միծաղելի մարդուկ, — ասաց Սթրիքլենդը:

Սթրյովը վեր կացավ: Նա տեսավ, որ կինը ամբողջ ժամանակ հանգիստ կանգնած է մնացել և, ծիծաղելի վիճակի մեջ ընկնելով, նրա առջև իրեն ավելի վիրավորված զգաց: Կույրիս նրա ակնոցը ընկել էր, և նա անօգնական շուրջն էր նայում: Բլանշը վերցրեց այն և լուռ տվեց նրան: Նա հանկարծ զգաց իր դժբախտության ամբողջ խորությունը և, շնայած գիտեր, ոչ ավելի ծիծաղելի վիճակի մեջ է ընկնում, սկսեց բարձրաձայն արտասվել: Դիրկը ձեռքով ծածկեց դեմքը: Իսկ նրանք երկուսով լուռ նայում էին նրան օրանց անդից շարժվելու:

— Օ, սիրելիս, — տնթաց նա վերջապես, — ինչպես կարող ես այդքան գաժան լինել:

— Ես չեմ կարող ստիպել ինձ, Դիրկ, — պատասխանեց Բլանշը:

— Ոչ մի կնոջ այնքան չեն պաշտել, որքան ես՝ քեզ: Եթե՛

որնէ բանում մեղավոր եմ քո առաջ, ինչո՞ւ չէիր ասում, ես կբա-
վեի մեղքս: Ես արեցի քեզ համար այն, ինչ կարող էի:

Բլանշը շպտատախանեց: Նրա դեմքին ոչ մի մկան չէր շարժ-
վում, և Սթրյովը տեսավ, որ միայն ձանձրույթ է պատճառու
նրան: Բլանշը հագավ վերարկուն, դրեց գլխարկը և շարժվեց
դեպի դուռը: Գիրկը հասկացավ, որ ևս մի վայրկյան, և նա կհե-
ռանա: Նա նետվեց դեպի Բլանշը, բռնեց նրա ձեռքերը, ծնկի
եկավ: Սթրյովը բուրբուխի զրկվել էր արժանապատվության զգա-
ցումից:

— Մի գնա, սիրելիս: Ես առանց քեզ ապրել չեմ կարող,
ինքնասպան կլինեմ: Եթե որնէ բանով վիրավորել եմ քեզ, աղա-
չում եմ, ներիր: Հնարավորութիւն տուր ներման արժանանալ:
Ես ամեն ինչ կանեմ, որպեսզի երջանկացնեմ քեզ:

— Վեր կաց, Գիրկ, խեղկատակութիւն մի արա:
Գիրկը օրորվելով վեր կացավ, բայց դեռ չէր ուզում թողնել
նրան:

— Ո՞ր ես գնում, — հարցրեց նա հուզմունքից շտապելով: —
Գու շեռ պատկերացնում, թե ինչպես է Սթրիբլենդը ապրում: Գու
այնտեղ շեռ կարող ապրել: Գա սարսափելի կլինի:

— Եթե ինձ համար միևնույն է, դու ինչո՞ւ ես անհանգստա-
նում:

— Մի բոպե էլ սպասիր: Ես պետք է ասեմ... Վերջապես շեռ
կարող արգելել ինձ...

— Ի՞նչ օգուտ: Ես ռոտել եմ, և ինչ էլ որ ասես, չեմ փոխի
արոշումս:

Նա փղձկաց և կարծես ցավը թեթևացնելու համար ձեռքը
տարավ դեպի սիրտը:

— Ես չեմ խնդրում քեզ փոխել որոշումդ, միայն լսիր ինձ:
Գա իմ վերջին խնդրանքն է: Մի՛ մերժիր:

Բլանշը կանգնեց և իր մտախոհ աչքերով, որոնք հիմա սառն
ու անտարբեր էին նրա նկատմամբ, նայեց Գիրկին, հեռացավ
դռան մոտից ու հենվեց սեղանին:

— Լսում եմ:

Սթրյովն իրեն հավաքելու համար մեծ ջանք գործադրեց:

— Գոնն մի քիչ խոհեմ եղիր: Օդով շեռ կարող սնվել: Սթրիբ-
լենդը կուպեկ շունի:

— Գիտեմ:

— Գու սարսափելի զրկանքներ կկրես: Գիտե՞ս, թե ինչու

... այդքան երկար ժամանակ չէր ապաքինվում: Ով դիտե որքան
... սոված մնացել:

— Ես կպահեմ նրան:

— Ինչո՞ւ:

— Զգիտեմ: Մի բան կմտածեմ:

Մի սարսափելի բան անցավ խեղձ հուլանդացու մտքով. նա
հենց վեց:

— Երեի խելագարվել ես: Ի՞նչ է պատահել քեզ:

Բլանշը թոթվեց ուսերը:

— Հիմա կարո՞ղ եմ գնալ:

— Մի վայրկյան էլ սպասիր:

Գիրկը նայեց իր շուրջը: Նա սիրում էր Բլանշին, որովհետև
նրա ներկայութիւնը շրջապատում ամեն ինչ բարետես ու հար-
մարավետ էր դարձնում: Նա փակեց աչքերը, նորից բացեց և
այնպես նայեց կնոջը, կարծես ցանկանում էր նրա պատկերը
մեկընդմիջտ տպավորել իր հիշողութիւն մեջ: Հետո վերցրեց
գլխարկը:

— Ոչ, կհեռանամ ես:

— Գո՞ւ:

Բլանշը ապշել էր և ոչինչ չէր հասկանում:

— Ես չեմ կարող թույլ տալ, որ դու այդ կեղտոտ ձեղնա-
հարկում ապրես: Վերջին հաշվով այս տունը, որքան իմն է,
նույնքան էլ բոնն է: Այստեղ քեզ համար ավելի լավ կլինի: Գոնն
ամենասարսափելի զրկանքներից կազատվես:

Նա բացեց պահարանը և այնտեղից մի քանի բանկնոտներ
հանեց:

— Այստեղ եզածի կեսը քեզ եմ տալիս:

Նա փողերը սեղանին դրեց: Սթրիբլենդն ու Բլանշը լուռ էին:
Հետո նա ավելացրեց.

— Խնդրում եմ հավաքել իրերս ու հանձնել դոնապանուհուն:

Վաղը կգամ տանելու: — Նա փորձեց ժպտալ: — Մնաս բարով,
սիրելիս: Ենթահակալութիւն այն երջանկութիւն համար, որ դու
պարգևեցիր ինձ անցյալում:

Գիրկը զուրս եկավ և իր ետևից ծածկեց դուռը: Հանկարծ ես
պարզ պատկերացրի, թե նրա հետանալուց հետո ինչպես Սթրիբ-
լենդը գլխարկը սեղանին նետեց, նստեց և սկսեց սիգարետ ծխել:

Ես որոշ մամանակ յուս խորհում էի Սթրյուդի պատմածի մասին: Բնձ համար դժվար էր տանել նրա փոքրագույնությունը, և նա զգում էր այդ:

— Երկուսս էլ լավ գիտենք, թե ինչպես է ապրում Սթրիքլենդը:— Կուսից նա դողացող ձայնով:— Ես չէի կարող Սույլ տալ, որ Բլանշն էլ ապրեր այդ պայմաններում... պարզապես չէի կարող:

— Դա քո գործն է, — պատասխանեցի ես:

— Իսկ դու ինչպե՞ս կվարվիիր:

— Բլանշը գիտե, թե ինչ բայի է դիմում: Եվ եթե ստիպված է դժվարություններ տանել, դա իր անձնական գործն է:

— Ճիշտ է, բայց դու չես սիրում նրան:

— Իսկ դու գեա սիրում ես:

— Օ, ավելի քան երբևէ: Սթրիքլենդը այն տղամարդկանցից չէ, որոնք երջանկացնում են կնոջը: Դա երկար չի տևի: Թող Բլանշն իմանա, որ ես երբեք չեմ լքի իրեն:

— Ինչպես հասկանալու Ուզում ես տեսլ, որ պատրաստ ես ընդունել նրան:

— Ոչ մի վայրկյան չեմ տատանվի: Չի որ նա հիմա իմ կարիքը կդդա ավելի, քան ատալ: Սարսափելի կլինի, եթե նա մենակ մնա, ստորոցված ու հուսախարված և գնալու տեղ չունենա:

Նա նույնիսկ վիրավորված չէր զգում իրեն: Իսկ ես, բնականաբար, դաշտանում էի նրա փոքրագույնության վրա: Բայտ երևույթին նա զուշակում էր, թե ես ինչ եմ մտածում, քանի որ հարցրեց.

— Ես չէի կարող հուսալ, որ նա կսիրի ինձ այնպես, ինչպես ես՝ նրան: Ես խեղդատակ եմ: Կանաչը այդպիսիններին չեն սիրում: Դա ես միշտ էլ հասկացել եմ: Եթե նա սիրահարվել է Սթրիքլենդին, ես իրավունք չունեմ մեղազրելու նրան:

— Դու բարբոսիկն զուրկ ես ինքնասիրությունից, դա հազվագույն երևույթ է:

— Ես նրան ավելի շատ եմ սիրում, քան ինձ: Ինձ թվում է ինքնասիրությունը խառնվում է սիրուն միայն այն ժամանակ, երբ բեզ ավել ես սիրում: Վերջապես ամուսնացած տղամարդիկ ու կանայք նրապարզում են ուրիշ կանանցով, իսկ ճեռտ ամեն ինչ անջնում է, և նրանք վերագտնում են իրենց կանանց մոտ,

և մարդիկ դա բարբոսիկն բնական են համարում: Ինչո՞ւ կասեցեց Տեա այլ կերպ պետք է լինի:

— Բավական սքոմարտուսկուն է, — մարտացի ես, — բայց ու լամարդկանց սեծ մասը այլ կերպ է ստեղծված, նրանք չեն կարող ներել:

Սթրյուդի հետ խոսելիս ես ստորակուսանքով էի մտածում պատահածի հանկարծակիություն մասին: Մի՞թե նա ոչինչ չէր կասկածել: Չիղեցի Բլանշ Սթրյուդի աչքերում բնական տարրինակ արտահայտությունը: Դուրեք գեա այն ժամանակ նա աղետ կերպով հասկանում էր, որ շարքաստիկ զգացմունք է ծնվում իր սրտում:

— Իսկ մինչև այսօր դու որևէ բան չե՞ս նկատել նրանց միջև, — հարցրեցի ես: Սթրյուդը շղատասխանեց: Նա սեղանի վրայից մի մատիտ վերցրեց և ծծանի վրա ինչ-որ գլուխ նկարեց:

— Եթե իմ հարցերը տհաճ են քեզ, խնդրում եմ, ասա:

— Ոչ, ինձ ավելի հեշտ է խոսել... Օ, եթե իմանալիր, թե ես ինչ սարսափելի տանջանքներ էի ապրում:— Նա մի կողմ նետեց մատիտը:— Այո, արգեն երկու շաբաթ էր, որ գիտեի այդ մասին: Գիտեի ավելի շուտ, քան Բլանշը:

— Իսկ ինչո՞ւ չվերջեցիր Սթրիքլենդին, որոչք տանի:

— Ես չէի հավատում: Դա այնքան անհավանական էր թվում: Բլանշը տանել էր կարողանում նրան: Ավելին, դա պարզապես անհավատալի էր: Ես կարծում էի, թե դա միայն խոսեց էլ Հասկանո՞ւմ ես, ես միշտ խանդոտ եմ եղել, բայց ինձ վարժեցրել եմ ցույց շատ այն: Ես խանդում էի մեր ծանոթ բոլոր աղամարդկանց, խանդում էի նաև քեզ: Ես գիտեի, որ նա ինձ չի սիրում այնպես, ինչպես ես՝ նրան: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Բայց նա թույլ էր տալիս, որ սիրեմ իրեն, և դա բավական էր, որ ես երջանիկ զգայի ինձ: Ես ստիպում էի ինձ ժամեր շարունակ ճեռանալ անից, սրպեղի մենակ թողնեմ նրանց, այդ ձևով էի պատժում ինձ անվայել կասկածանքների համար, իսկ երբ վերագտնում էի, նկատում էի, որ դա տհաճ է նրանց... ավելի ճիշտ Բլանշին: Սթրիքլենդի համար միևնույն էր ամեն եմ ես, թե ոչ: Բլանշը ցնցվում էր, երբ մտանում էի համարելու: Երբ վերջապես համոզվեցի, չգիտեի ինչ անել: Տեա քո՞ն ոտքերը: Նրանք միայն կծիծաղեին ինձ վրա: Եվ մտածել, եթե լուծեմ և ձևացնեմ իբր ոչինչ չեմ նկատում, դուրեք ամեն ինչ շարք-

ձ— Լուսին և վեցսեռանոց

վի: Գրան հասնելու նամար որոշեցի հանդիսա, առանց որևէ վեճի սասանել: Օ, էթև իմանայիր, թե ինչպես էի տանջվում:

Հետո Գիրկը ինձ նորից պատմեց, թե ինչպես է խնդրել Սթրիբր-լենդին հեռանալ: Նա հարմար պահ էր ընտրել և աշխատել այդ խնդրանքը հնարավորին շատ անփույթ արտահայտել, միայն չէր կարողացել տիրապետել իր ծայնին և զգացել էր, որ բառերի մեջ, որոնք պետք է թեթև ու բարեկամական հնչեին, խանդո՛ւ պատմություն է սողոսկել: Նա չի սպասել, որ Սթրիբր-լենդը կակտի անմիջապես հալածել իրերը, և Քլանշն էլ կորոշի հեռանալ նրա հետ: Ես տեսնում էի, թե ինչպես էր հիմա ափսոսում, որ խոսել է Սթրիբր-լենդի հետ: Խանդի տառապանքները նա գերազասում էր բաժանման տառապանքներից:

— Ես ուզում էի սպանել նրան, բայց միայն ծաղրի առարկա դարձա:

Նա երկար ժամանակ լռեց, հետո ասաց այն, ինչ սպասում էի լսել նրանից:

— Եթե շտապեի, գուցե ամեն ինչ այդպես էլ անցներ: Զպետք է այդքան անհամբեր լինել: Օ, խեղճ աղբիկ, ինչ օրի հասցրի նրան:

Ես միայն թոթվեցի ուսերս: Քլանշ Սթրյոփին չէի համակրում, բայց ասել, թե ինչ էի մտածում նրա մասին, կնշանակեր նոր ցավ պատճառել նրան:

Նա այնքան գրգռված էր, որ այլևս չէր կարողանում լռել: Կրկին ու կրկին վերադառնում էր այդ շարաբաստիկ տեսարանին, կամ էլ ինչ-որ բան էր հիշում, որ դեռ չէր հասցրել հաղորդել ինձ, դատողություններ էր անում, թե ինչ պետք է ասած լինե՞ր Քլանշին, և հետո բողբոլում իր կուրությունից: Ցավում էր, որ վարվել է այսպես և ոչ թե այնպես: Մինչդեռ արդեն շատ ուշ էր և ես նրանից պոկաս չէի հոգնել:

— Ի՞նչ ես մտադիր անել այսուհետև, — հարցրեցի ես վերջապես:

— Ի՞նչ եմ մտադիր: Կսպասեմ, մինչև որ Քլանշը կանչի ինձ:

— Ինչո՞ւ չես գնում այստեղից, թեկուզ միառժամանակ:

— Ոչ, ոչ, ես կարող եմ պետք գալ նրան և անհրաժեշտ է, որ տեղում լինեմ:

Նա բուրբուրում կորած մարդ էր: Ոչ մի հեռանկար չուներ: Երբ ասացի, որ քնելու ժամանակն է, նա առարկեց, թե մինևույն է, չի կարող քնել: Ուզում էր գնալ և մինչև լույս թափառել փողոց-

ներում: Նա այնպիսի վիճակի մեջ էր, որ չէր կարելի նրան մենակ թողնել: Վերջապես հաջողվեց համոզել նրան գիշերելու ինձ մաս, և ես նրան պառկեցրի իմ անկողնում: Հյուրասենյակում մի բազմոց ունեի, որի վրա կարելի էր հիանալի քնել: Գիրկը այնքան էր տանջվել, որ դիմադրելու ուժ չուներ: Որպեսզի գոնե մի քանի ժամ մոռացություն մեջ ընկներ, ես վերստին մի բավական մեծ դոզա ավելցի նրան: Գրանից ավելի լավ նառարություն ես չէի կարող մատուցել:

ԳԼՈՒԿ 30

Պարզվեց, որ բազմոցը քնելու համար այնքան էլ հարմար չէ, և ես ավելի շատ դժբախտ հուանդացու մասին մտածեցի, քան քնեցի: Քլանշի վարմունքը ինձ այնքան էլ չէր շփոթեցնում, զա ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցանկատարության մղում: Նա բոս էր-վույթին երբեք լրջորեն չէր սիրել Գիրկին, և այն, ինչ ես սեր էի համարել, եղել էր միայն կանացի պատասխան այն հոգատարու-թյան ու խնամքի նկատմամբ, որ կանանց մեծ մասը սիրո տեղ է ընդունում: Դա մի պասսիվ զգացմունք է, որ ընդունակ է արթնանալու յուրաքանչյուր օրյակտի նկատմամբ, ինչպես խաղողի որթը յուրաքանչյուր ծառի: Մարդկային իմաստությունը բոս արժանվույն է գնահատում այդ հատկությունը, այլապես ինչպե՞ս բացատրել, երբ աղջկան ստիպում են ամուսնանալ մի մարդու հետ, որը ցանկանում է նրան, համոզված լինելով, որ սիրո հետ կծնվի: Նման զգացմունքը առաջանում է բարեկեցության նկատմամբ ունեցած հաճելի զգացողությունից, սեփականատիրուհի դառնալու հպարտությունից, ցանկալի լինելու բավականությունից, ընտանիք ունենալու ուրախությունից, և կանայք միայն փառամտությունից զրդված են հոգևոր արժեք վերագրում դրան: Այս զգացմունքը անպաշտպան է կրքի դեմ: Ես կասկածում էի, որ Սթրիբր-լենդի նկատմամբ Քլանշ Սթրյոփի ցուցաբերած բուռն ատելության մեջ սկզբից ևեթ սեռական հակման ինչ-որ տարրեր կային: Բայց ո՞վ եմ ես, որ ջանամ սևուի խճճված առեղծվածը լուծել: Հնարավոր է, որ Սթրյոփի կիրքը զրգում էր նրան առանց բավարարություն տալու, և Քլանշը ատում էր Սթրիբր-լենդին զգալով, որ նա կարող է տալ իրեն այն, ինչ փափագում էր: Նա հավանաբար բուրբուրում անկեղծորեն էր ըմբոստանում Սթրիբր-լեն-

դին իրենց մտքերի ու ամուսնու ցանկութեան դեմ: Մթրիքլենդը վախեցնում էր նրան, իսկ թե ինչու, ինքն էլ չգիտեր, բայց դժբախտությունը կանխազգում էր: Այն սարսափը, որ նա զգում էր Մթրիքլենդի նկատմամբ, ըստ երևույթին սարսափ էր իր նրկատմամբ, բանի որ Մթրիքլենդը այդքան անսովոր հուզմունք էր պատճառել իրեն: Նկարիչը տարօրինակ ու կոպիտ արտաքին ունեւր, աչքերը նայում էին անտարբերութեամբ, իսկ բերանը ցանկատարութեամբ էր արտահայտում: Նա բարձրահասակ, ուժեղ տղամարդ էր, հավանական է անսանձ կրքերի տեր, և բացառված չէ, որ Քլանշը նույնպէս զգում էր նրա մեջ այն կույր բնազդը, որը ստիպեց ինձ մտածել նախապատմական վայրի արարածների մասին, որոնք իրենց նախնական կապը չէին խզել երկրի հետ, բայց արդեն սեփական բանականություն ունեին: Եթե նա հուզել էր Քլանշին, ուրեմն Քլանշը անխուսափելիորեն պետք է սիրեր կամ ատեր նրան: Նա ատում էր Մթրիքլենդին: Եվ բացի այդ, հիվանդի հետ ունեցած ամենօրյա շփումը, հավանական է, նույնպէս անսովոր կերպով հուզել էր նրան: Մթրիքլենդին կերակրելու համար Քլանշը բարձրացնում էր նրա զուխքը, զգում գրա ծանրությունը իր ձեռքին, հետո սրբում էր նրա զգայուն բերանը, շեկ մորուքը: Նա լվանում էր Մթրիքլենդի թալամազ ձեռքերը և սրբելիս զգում, որ շնայած հիվանդ վիճակին, դրանք ուժեղ ու մկանուտ էին: Մթրիքլենդը ուներ երկար, նկարչի ստեղծագործող զգայուն մատներ, և ով գիտէ, թե ինչ անհանգիստ մտքեր էին դրանք արթնացնում Քլանշի ուղեղում: Նա շատ հանգիստ էր ընում, առանց որևէ շարժում անելու, կարծես մեռած լինէր, հիշեցնելով երկարատև որսից հետո հանգստացող վայրի գազանի, իսկ Քլանշը կողքին նստած աշխատում էր գուշակել, թե ինչ տեսիլներ էին երևում նրան երազում: Գուցե Մթրիքլենդը նրազում Հունաստանի անտառներով սուրացող հավերժահարս էր տեսնում, և նրան անդադար հետևող սատիրու վախեցած հավերժահարսը սլանում էր խենթի պես, սակայն նրանց միջև եղած տարածությունը զնալով քշանում էր, և արդեն սատիրի տաք շունչը այրում էր հավերժահարսի պարանոցը, բայց նա լուռ շարունակում էր վազել, սատիրը նույնպէս, և երբ վերջապէս սատիրը հասավ նրան, ով գիտէ, սարսափից, թե ինքուսումուսացումից բարբախեց նրա սիրտը:

Դաժան բաղքը տանջում էր Քլանշ Մթրյովին: Միգուցե նա դեռ ատում էր Մթրիքլենդին, սակայն միայն նա կարող էր հա-

զեցում տալ այդ բաղքին, և այն ամենը, ինչ որ եղել էր Քլանշի կյանքում, այլևս ոչ մի նշանակություն չունէր նրա համար: Նա արդեն բարդ բնավորութեամբ, բարի ու դուրսաբորոք, նրբանկատ ու անխոհ կին չէր: Նա բարսուսի էր, համակ ցանկություն:

Բայց գուցե այս բոլորը երևակայութեան ծնունդ է. գուցե նա պարզապէս ձանձրացել էր ամուսնուց և միացել Մթրիքլենդին սնախրտ հետաքրքրությունից զրոգված: Հնարավոր է, որ առանձնապէս խոր զգացմունք չունենալով Մթրիքլենդի նկատմամբ, գիշերը նրա ցանկութեանը, որովհետև անգործ ու ցանկասեր էր, իսկ հետո խճճվեց սեփական խարդավանքի ցանցում: Որտեղից իմանայի, թե ինչպիսի մտքեր ու զգացմունքներ էին թաքնված այդ անխոռով ճակատի ու մոխրագույն աչքերի ստոր հայացքի տակ:

Մարդն այնքան հեղհեղուկ արարած է, որ, ըստ երևույթին, հնարավոր չէ նրա մասին որևէ բան իմանալ, բայց այնուամենայնիվ զժվար չէր ճշմարտանման բացատրություն գտնել Քլանշ Մթրյովի վարքագծի համար: Իսկ ինչ վերաբերում է Մթրիքլենդին, ևս նրանից ոչինչ չէի հասկանում: Որքան էլ շանում էի, միևնույն է, ոչ մի կերպ բացատրություն չէի կարողանում գտնել նրա կատարած բալլի համար, որը ուղղակի հակասում էր նրա մասին ունեցած իմ պատկերացմանը: Ինձ համար տարօրինակ չէր, որ նա այդքան անսրտորեն շարաշահեց ընկերոջ վստահությունը, և առանց տատանվելու մեծ զժբախտություն պատճառեց նրան, միայն թե բավարարեր իր քմահաճույքը: Այդպիսին էր նրա խառնվածքը: Նա ոչ մի պատկերացում չունէր երախտագիտութեան մասին, և բոլորովին զուրկ էր կարեկցանքից: Այն զգացմունքները, որ հատուկ են մեզ բոլորիս, գոյություն չունենին նրա համար, և մեղադրել նրան դրանում նույնքան անխուսափ էր, որքան վագրին վայրագ դաժանութեան համար: Բայց հենց այդ քմահաճույքն էր, որ անհասկանալի էր ինձ: Ես չէի կարողանում հավատալ, որ նա սիրահարվել է Քլանշ Մթրյովին: Եվ չէի հավատում, որ ընդհանրապէս ընդունակ էր սիրելու: Սկզբ մեզ զգացմունք է, ուր էական դեր է կատարում քեքշանքը, մի բան, որ Մթրիքլենդը չունէր ոչ իր և ոչ էլ ուրիշների նկատմամբ: Գթասրտություն կա սիրո մեջ, սիրած էակին պաշտպանելու ցանկություն, բարիք գործելու, հաճույք պատճառելու ձգտում, և եթե սերը անձնազոհություն չէ, ապա բոլոր դեպքերում հիանալիորեն քողարկված եսասիրություն է, սակայն որոշակի երկչո-

տութունն էլ կա սիրո մեջ: Ո՛չ, Սթրիբլենդի մեջ ոչ մի նման բան չկար: Սերը ամենակույ՛ն զբացմունք է, որ զրկում է մարդուն ինքնուրույնությունից, և նուշնիակ ամենախորաթափանց մարդը, շնայած գիտե, որ այդպես էլ կլինի, իրականում չի կարող պատկերացնել, որ կանցնի իր սերը: Սերը պատրանքով է պարուրում մարմինը, և մարդը հասկանալով, որ դա պատրանք է, այնուամենայնիվ այն ավելի է սիրում, քան իրականությունը: Սերը մարդուն դարձնում է ավելին, քան նա կա, և միաժամանակ փոքր-ինչ պակաս: Մարդը դադարում է իրեն հավատարիմ լինելուց, այլևս անհատ չէ, այլ առարկա, իր «ես»-ին օտար նպատակի հասնելու գործիք: Սիրուն միշտ էլ հատուկ է որոշակի սենտիմենտալություն, իսկ Սթրիբլենդը միակն էր ինձ ծանոթ մարդկանցից, որ քիչ էր ենթակա այդ թուլությունը: Ես չէի կարողանում հավատալ, որ Սթրիբլենդը կենթարկվի սիրո կապանքներին, նա ոչ մի լուծ չէր տանի: Ես գիտեի, որ նա կպոկի իր սրտից (գուցե սարսափելի տանջանքներով, որն ուժասպառ ու արյունաքամ կանի նրան), այն ամենը, ինչ կկանգնի նրա ու այն անհասկանալի ձգտման միջև, որը ոչ ցերեկը, ոչ էլ գիշերը հանգիստ չէր տալիս նրան: Եթե ինձ հաջողվել է կերտել Սթրիբլենդի կերպարը իր ողջ բարդությունը, ուրիմն համարձակվում եմ ասել նաև, որ Սթրիբլենդը շափազանց մեծ էր սիրո համար և միաժամանակ շատ փոքր:

Իմ կարծիքով ամեն մարդ կրթի մասին պատկերացում է կազմում, ելնելով իր խառնվածքից, հետևաբար, այն տարբեր մարդկանց մոտ տարբեր է լինում: Սթրիբլենդի նման մարդը իր ձևով պետք է սիրեր: Այդ իսկ պատճառով իմաստ չունեն նրա զգացմունքների համար բացատրություն փնտրել:

ԳԼՈՒԽ 31

Հաջորդ օրը, շնայած իմ բոլոր հորդորանքներին, Սթրյովը հեռացավ իմ մոտից: Ես առաջարկեցի գնալ նրա ճամպուկը բերելու, բայց նա պնդեց, որ անձամբ է ուզում գնալ: Իմ կարծիքով նա գեռ հույս ուներ, որ նրանք մոռացել են կապել իրերը և առիթ կունենար մի անգամ էլ տեսնելու կնոջը, և գուցե համոզւնք նրան վերադառնալու: Բայց Գրիվը իր իրերը դանապանուհու մոտ գտավ: Գոնապանուհին ասաց, որ Բլանշը տանը չէ: Շատ

հավանական է, որ նա շղիմացավ նրա հետ իր վիշտը կիսելու: Կայծակողությունը Սթրյովը այդ մասին պատմում էր իր բոլոր ծանոթներին. նա կարեկցանք էր փնտրում, բայց միայն ծաղրի էր արժանանում:

Գրիվն իրեն շատ հիմար ձևով էր պահում: Իմանալով, թե երբ էր կինը գնումներ անում, և այլևս ի վիճակի չլինելով այդ բան երկար ժամանակ շտեմել նրան, մի անգամ դարանամուտ եղավ փողոցում: Բլանշը շցանկացավ խոսել նրա հետ, բայց նա պնդեց, որ գոնե լսի իրեն: Ներողություն հայցող ինչ-որ խոսքեր փնթփնթաց այն բանի համար, որ երբեք վշտացրել է նրան, սասց, թե ինչպիսի նվիրվածություն է սիրում, խնդրեց վերադառնալ: Բլանշը չէր պատասխանում և քայլում էր առանց շուրջը նայելու, արագացնելով քայլերը: Ես պատկերացնում էի, թե նա ինչպիսի ջանք էր դործադրում՝ իր կարճ ու շաղիկ տաբերով հասնելու նրա ետևից: Արագ քայլելուց շնչակտուր լինելով, նա ասում էր, թե որքան զժբախտ է ինքը, աղերսում էր խղճալ իրեն, խոստանում էր անել այն ամենը, ինչ նա կցանկանա, միայն թե ներս իրեն: Առաջարկում էր իր հեռ սրբէ հեռու տեղ գնալ, զգուշանում, որ շուտով կձանձրացնի Սթրիբլենդին: Երբ նա պատմեց ինձ այդ գարշելի տեսարանի մասին, կայրությունից ես կորցրեցի ինձ: Այդքան էլ առողջ դատողությունից ու արժանապատվության ինձ: Այդքան էլ առողջ դատողությունից ու արժանապատվության ինձ: Այդքան էլ առողջ դատողությունից ու արժանապատվության ինձ: Այդքան էլ առողջ դատողությունից ու արժանապատվության ինձ: Այդքան էլ առողջ դատողությունից ու արժանապատվության ինձ:

Այդ մասին պատմելիս Սթրյովը ձեռքը այտին տարավ, կարծես գեռ զգում էր հարվածի պատճառած ցավը: Այդ պահին սրտակեղծ թախիծ ու զվարճալի տարակուսանք կար նրա ուղեկրում: Նա ծեծված դպրոցականի էր նման, և շնայած ես խղճում էի նրան, բայց հազիվ էի զսպում ծիծաղու:

Գրանից հետո նա սկսեց թափանել այն փողոցում, որով կ'ներ ամեն օր խանութներից գնումներ կատարելու էր գնում, և, կանգ-

նելով փողոցի հանդիպակաւ: ց անկունում, նայում էր, թե ինչպե՛ս է նա անցնում: Դիրկն՝ ալլես չէր համարձակվում խոսել նրա հետ, բայց աշխատում էր իր կլոր աչքերով արտահայտել այն սմբողջ թախանձանքը, որով լի էր նրա սիրտը: Թվում էր, թե նա գեւ հուշս ունի, որ իր տանջալից տեսքը կմեղմացնի Բլանշին, բայց Բլանշը պարզապէս չէր նկատում Դիրկին: Նույնիսկ նեղութիւն չէր պատճառում իրեն այլ ճանապարհով գնալու կամ փոխելու գնումներ կատարելու ժամերը: Քիչ դաժանութիւն չկար նրա անտարբերութիան մեջ, և հնարավոր է, որ նույնիսկ դուր էր գալիս իրեն, որ տանջում է Դիրկին: Ես չէի հասկանում, թե նա ինչու է այդքան ատում ամուսնուն:

Ես թախանձանքով խնդրեցի Դիրկին խելքի գալ: Վերջապէս լի կարելի այդքան փալաս լինել:

— Նման ձևով վարվելով ոչ մի օգուտ չես ստանա, — ասացի ես: — Ավելի լավ կլինի մի լավ ծեծես նրան: Այն ժամանակ նա կզազարի քեզ ատելուց:

Ես նրան խորհուրդ տվեցի որոշ ժամանակով տուն գնալ: Սթրյովը հաճախ էր ինձ պատմել Հուանդիայում գտնվող այն փոքրիկ ու խաղաղ քաղաքի մասին, որտեղ դեռ ապրում էին նրա ծնողները՝ չափազանց համեստ մարդիկ: Դիրկի հայրը ատաղձագործ էր: Նրանք ապրում էին մի հին, կարմիր աղյուսից պատրաստված մարտր ու կոկիկ տնակում, որը գտնվում էր լքված ջրանցքի ափին: Այնտեղ փողոցները լայն էին ու դատարկ: Արդեն երկու հարյուր տարի էր, ինչ քաղաքը մահանում էր, բայց տները դեռ պահպանում էին հին բարի ժամանակների վսեմ պարզութիւնը: Նրանց մեջ մի ժամանակ հանգստութեան ու լիութեան մեջ ապրում էին հարուստ վաճառականներ, որոնք իրենց ապրանքները հեռավոր Հնդկաստան էին ուղարկում, և խարխուլած շինութիւնները թվում էր, թե դեռ պահպանում էին իրենց փառավոր անցյալի բուրմունքը: Զրանցքի երկայնքով կարելի էր կանաչ մարգագետիններ դուրս գալ, ուր այս ու այնտեղ հողմադացներ էին երևում, իսկ սև-սպիտակ խալերով կովերը ծուլորեն արածում էին: Ինձ թվաց, թե մանկական հիշողութիւններով լի այդ վայրերում Դիրկ Սթրյովը կկարողանաք մտածանալ իր գծրախտութիւնը: Բայց նա չէր ուզում գնալ:

— Ես պետք է այտեղ լինեմ: Նա զուցե իմ կարիքը զգա, — պնդեց Դիրկը: — Մարտափելի կլինի, եթե որևէ գծրախտութիւն պիտանի, և ես այստեղ չլինեմ:

— Իսկ ի՞նչ կարող է պատահել քո կարծիքով:

— Զգիտեմ, բայց վախենում եմ:

Ես թոթվեցի ուսերս:

Չնույժ արամբողջ վշտին, Դիրկ Սթրյովը կոմիկական ֆիզիոնոմ էր մնում: Եթե մի փոքր նիհարեր ու դալկանար, գուցե գոյի առաջացներ: Բայց ոչ մի նման բան չէր պատահում նրան: Առաջվա պես գեր էր ու կլորիկ, կարմիր աչտերը փայլում էին հասած խնձորների նման: Զէր կորցրել կոկիկ հագնվելու իր սերը և նախկինի պես նրբագեղ սև կոստյում էր հագնում ու ելրուպական կոշտ գլխարկ էր դնում, որը մի ցիլ փոքր էր գալիս նրան և մի տեսակ պլորոն աշխուժութեամբ նստում գլխին: Դիրկը սկսել էր փոքր գցել, և նրա դառնութիւնները բուրբուրում էլ չէին ազդում դրա վրա: Հիմա ավելի քան երբևէ շրջիկ գործակատարի էր նմանվում: Շատ ցավալի է, երբ մարդու արտաքինը այդքան թշ է համապատասխանում նրա հոգեկանին: Տվյալ դեպքում Ռոմեոյի կիլոքը հուրհուրում էր սրը Թոթի Բելչի՝ մարմնում: Դիրկը քնքուր, վեհանձն սիրտ ուներ և խեղկատակի վարքագիծ, գեղեցկութեան անսխալական զգացողութիւն և տափակ նկարներ ստեղծելու կարողութիւն, հոգեկան զարմանալի նրբագացողութիւն և գոհճիկ վարվելաձև: Նա բավականաչափ տակտով էր, երբ խոսքը ուրիշների գործերին էր վերաբերում, բայց զարմանալի անտակտութիւն էր ցուցաբերում սեփական գործերի նկատմամբ: Ինչպիսի գաժան խաղ էր խաղացել ծեր բնութիւնը, երբ այդքան հակասական գծեր էր դրել մի մարդու մեջ և թողել նրան անողոր ու անապրեք տիեզերքին դեմ հանդիման:

ԳԼՈՒԽ 32

Մի քանի շաբաթ չէի տեսել Սթրիքլենդին: Ես նողկանք էի զգում նրա նկատմամբ և առիթի դեպքում մեծ հաճույքով կարտահայտելի կարծիքս, սակայն ինձ ավելորդ էր թվում այդ նպատակով փնտրել նրան: Ես միշտ էլ երկյուղ եմ կրել հանդես գալ որպէս բարոյականութեան ջատագով, որովհետև մարդ միշտ էլ ինքնազոհ է դառնում նման դեպքում, իսկ դա տհաճ է նրանց համար, ովքեր զուրկ չեն հումորի զգացումից: Իսկ եթե ծիծաղելի դրութեան մեջ ընկնելու ռիսկի եմ դիմում, դա լինում է միայն հանուն շատ թանկագին մի բանի: Սթրիքլենդին հատուկ

էր խոցող անմիջականութիւնը, որը ինձ ստիպում էր խուսափել այն ամենից, որ թեկուզ շնչին շափով պոզայի էր նման:

Բայց մի երեկո, երբ անցնում էի Կիշի փողոցում գտնվող Սթրիքլենդի սիրած սրճարանի մոտով, որտեղ այլևս չէի հաճախում, անսպասելիորեն հանդիպեցի նրան: Սթրիքլենդը Բլանշոյ հետ էր: Նրանք գնում էին այն անկյունը, որտեղ սիրում էր նստել Սթրիքլենդը:

— Գրողը ձեզ տանի, որտե՞ղ էիք այսօրան ժամանակ: Ես արդեն մտածում էի, որ գնացել եք այստեղից:

Դատելով նրա սրտատուչ տոնից, նա գիտեր, որ չէի ցանկանում խոսել իր հետ: Սթրիքլենդը այն մարդկանցից չէր, որոնց հետ արժէր քաղաքավարութիւն բանեցնել:

— Ոչ մի տեղ էլ չէի գնացել:

— Իսկ ինչո՞ւ չէիք գալիս այստեղ:

— Փարիզում շատ ուրիշ սրճարաններ կան, որտեղ կաբլի է մի երկու ժամ նստել:

Բլանշը ձեռքը ինձ մեկնեց և բարի երեկո մաղթեց: Զգիտեմ թե ինչու, ես համոզված էի, որ նա փոխվել է, բայց նա հագել էր նույն մոխրագույն գեղեցիկ ու համեստ շրջագետք, որով ես վարժվել էի տեսնել նրան, և ճակատն էլ նույնքան մաքուր էր ու աչքերը՝ անխռով, ինչպես այն ժամանակ, երբ նա Սթրիքլի արվեստանոցում տնային գործերով էր զբաղված լինում:

— Գնանք մի պարտիա շախմատ խաղանք, — առաջարկեց Սթրիքլենդը:

Զգիտեմ թե ինչու, բայց ես շկարողացա հրաժարվել և հետեւեցի նրան դեպի այն սեղանը, որտեղ միշտ նստում էր: Սթրիքլենդը պատվիրեց բերել շախմատի տախտակն ու քարերը: Նրանք իրենց այնպես էին պահում, կարծես թե ոչինչ չէր պատահել, և ես զգացի, որ հիմարութիւն կլինի իմ կողմից, եթե այլ կերպ վարվեմ: Միտիս Սթրիքլը անխռով դեմքով հետևում էր խաղին: Նա լուռ էր, բայց նա միշտ էր լուռ: Ես նայում էի նրա շրթունքներին: Գուցէ դրանց միջոցով կարողանայի իմանալ, թե ինչ է զգում: Աշխատում էի նրա աչքերում սարսափի կամ դառնութիւն որևէ նշան տեսնել, նայում էի ճակատին, գուցէ ակնթարթային որևէ կնճիռ վկայեր թաքնված հուզմունքի մասին: Նրա դեմքը ոչինչ շատող դիմակ էր: Զեռքերը հանդիստ դրել էր ծնկներին: Ես արդեն գիտեի, որ նա մեծ կրքերի տեր կին է, և այն սարսա-

փելի հարվածը, որ նա հասցրել էր Գիրկին, մի մարդու, որն այդքան նվիրվածութեամբ սիրում է նրան, վկայում էր, որ ընդունակ է հանկարծակի պոթկման ու սարսափելի դաժանութեան: Բլանշը թողեց հուսալի ապաստանը, բարի ամուսնուն, խաչ քաշեց ապահով կյանքի վրա, հանուն վաղանցիկ, — նա այդ չէր կարող չիմանալ, — սիրային արկածի: Եթե նկատի առնենք, որ նա փութաջան տնտեսուհի ու օրինակելի տանտիրուհի է, ավելի պարզ կերևա նրա խելացնորութիւնը, կարիքի ու զրկանքների մէջ ապրելու պատրաստակամութիւնը: Ըստ երևույթին նա բարդ խառնվածքի տեր կին էր, և ինչ-որ ողբերգական հակասութիւն կար նրա համեստ արտաքինի ու վարքագծի միջև:

Այդ հանդիպումը խոտվել էր ինձ և մինչ աշխատում էի կենտրոնանալ խաղի վրա, երևակայութիւնս տենդագին գործում էր: Ես միշտ էլ ձգտում էի հաղթել Սթրիքլենդին, որովհետեւ նա այն խաղացողներից էր, որոնք արհամարհում են պարտված հակառակորդին, նրա բացահայտ հրճվանքը ավելի անտանելի էր զարժնում պարտութիւնը: Բայց պետք է խոստովանել, որ սեփական պարտութիւնը կատարյալ հանգստութեամբ էր տանում: Որպես հաղթող նա անտանելի էր, իսկ որպես պարտվող՝ հիանալի: Նրանք, ովքեր գտնում են, որ մարդու բնավորութիւնը ավելի ցայտուն է երևում խաղի մեջ, այստեղից կարող են բաժանվան նուրբ հետևութիւններ անել:

Խաղը վերջացնելուն պես կանչեցի մատուցողին, վճարեցի խմիչքի համար և հեռացա: Մեր հանդիպումը բոլորովին անհետաքրքիր անցավ: Ոչ մի բառ չասվեց, որ մտածելու առիթ ստար, և ինչպիսի ենթադրութիւններ էլ որ արեցի, ոչ մի բանով չհաստատվեց: Ես խճճվել էի ենթադրութիւնների մեջ: Ինչպե՞ս էր ընթանում նրանց կյանքը: Ես շատ բան կտայի, միայն թե կարողանայի անմաքմի նողու նման թափանցել արվեստանոցի պատերից ներս և լսել, թե ինչի մասին են խոսում նրանք: Բայց չկար մի այնպիսի բան, որից կառչեք երևակայութիւնս:

Երկու օր հետո Գիրկ Սթրիքլը այցելեց ինձ:

— Լսել եմ, որ տեսել ես Բլանշին, — ասաց նա:

— Որտեղի՞ց իմացար:

— Մի ծարդ ասուց, որ տեսիլ է բեզ սրճարանում նրանց հետ
նստած: Ինչո՞ւ ինձ չէ՞ր ասում:

— Չէի ուզում վշտացնել բեզ:

— Գտտարի բան: Գու գիտես, որ ես ուզում եմ ամեն ինչ
իմանալ նրա մասին, ամեն մանրուք:

Ես պատրաստվեցի պատասխանել նրա հարցերին:

— Ինչպիսի՞ տեսք ունի նա:

— Բարձրավուն չի փոխվել:

— Քո կարծիքով նա երջանի՞կ է:

Ես թոթվեցի ուսերս:

— Ինչ կարող եմ ասել: Արճարանում նստած շախմատ էինք
խաղում: Նրա հետ խոսելու առիթ չեղավ:

— Մի՞թե գեմբից ոչինչ չէր պահպանում:

Ես բուցատարար շարժեցի գլուխս: Ինձ մնում էր միայն կրքի-
նել, որ նա ո՛չ բառերով և ո՛չ էլ վերաբերմունքով ցույց չափեց
իր զգացմունքները նա ինձանից ավելի լավ գիտեր, թե ինքնա-
տիրապետման ինչպիսի մեծ կարողություն ունի Բլանշը:

Նա ճնշեց ձեռքերը:

— Ս, ես շատ եմ վախենում: Համոզված եմ, որ ինչ-որ սար-
սափելի բան է պատահելու, և ես սնկարող եմ կանխել այն:

— Բայց ի՞նչ: — հարցրեցի ես:

— Չգիտեմ, — անբաց նա՝ գլուխն աննկելով ձեռքերի մեջ: —
Սարսափելի աղետ եմ կանխազգում:

Սթրյուվր միշտ էլ հեշտությունք էր հուզվում, իսկ հիմա պար-
զասեա կորցրել էր իրեն և ոչ մի պատճառաբանություն չէր
ուզում չեղի: Ինձ թվում էր, որ շուտով Սթրիբլենդի հետ ապրիլը
Բլանշի համար անտանելի կղանա: Միավրում են, երբ ասում
են, թե ինչ որ ցանես, այն էլ կհնձես: Կյանքի փորձք ցույց է
տալիս, որ շատ հաճախ մարդիկ ամեն ինչ անում են, որպեսզի
փորձանք բերեն պիսնեղին, բայց հետո ինչ-որ ձևով հաջողաց-
նում են խուսափել իրենց խելացնորություն հետանքներից:
Սթրիբլենդի նա գլուխուց հետո Բլանշը ստիպված կլիներ թող-
նել նրան, իսկ նրա ամուսինը խոնարհաբար սպասում էր ամեն
ինչ ներկայու ու մոտանալու: Խոստովանում եմ, Բլանշը ինձ ոչ
համակրանք և ո՛չ էլ կարեկցանք էր ներշնչում:

— Այո, բայց դու չես սիրում նրան, — կրկնեց Սթրյուվր:

— Իսկ ինչո՞ւ պետք է ենթադրել, որ նա գժբախտ է: Որդ,

բան ինձ հայտնի է, այդ զույգը բավական հաջող է տեղավոր-
վել:

Սթրյուվր վշտալից աչքերով նայեց ինձ:

— Իհարկե, այդ բոլորը չի մասհանում բեզ, բայց ինձ հա-
մար կարևոր է, շատ կարեւոր:

Ես խղճի խայթ գրացի, որ այդքան թեթևամտորեն կույր
էի վարվել:

— Կարո՞ղ ես իմ մի խնդրանքը կատարել, — հարցրեց
Սթրյուվր:

— Հաճույքով:

— Կգրե՞ս Բլանշին իմ անունից:

— Իսկ ինչո՞ւ դու չես գրում:

— Մի անգամ չէ, որ գրել եմ նրան: Բայց սրտս սխա՞ն չեմ
ստացել: Նա երևի չի էլ կարգում իմ նամակները:

— Գու մոտանում էս կնոջ հետարքրափրովյան մասին:
Մի՞թե կարծում ես, որ նա կցիմանա դայթակցությունը:

— Այո, բանի որ գոյթակցությունը իմ կողմից է:

Ես նայեցի նրան: Նա խոնարհեց աչքերը: Նրա պատասխանը
չափազանց ստորացույցի թվաց ինձ: Գիրկը դիտել, որ Բլանշը
շատ անտարբեր է իր նկատմամբ, որ նույնիսկ բաց չի անում իր
նամակները:

— Եվ դու հավատո՞ւմ ես, որ նա երբեք կվերադառնա բեզ
մոտ, — հարցրեցի ես:

— Թող իմանա, որ եթե շատ վատ գիճակի մեջ ընկնի, կու-
րող է հույսը ինձ վրա դնել:

Ես մի թուզի վերցրեցի:

— Ի՞նչ ես ուզում, որ գրեմ, ասա:

Եվ գրեցի.

«Սիրելի միսիս Սթրյուվր,

Գիրկը խնդրում է ինձ ասել, որ եթե Լորեկոն էրա կարիքը
զգար, իրեն երջանիկ կհամարի, որ հնարավորություն ունի ծա-
ռայելու ձեզ: Նա ոչ մի շարահամ պայցմունք չունի ձեր նկատ-
մամբ այն ամենի համար, որ պատահել է: Անուավս ձան է նրա
սերը: Գուք նրան կգտնեք հետևյալ հասցեով...»

Չնայած եւս Սթրյովից պակաս համոզված չէի, որ Սթրիբլենդի որ Բլանշի կապը վատ վտանգան կունենա, այնուամենայնիվ նման ողբերգական վերջավորութիւն չէի սպասում: Եկամ տոթակեղ ու հեղձուցիչ ամառը: Նույնիսկ գիշերը հանգիստ չէր բերու՛մ գերլարված ներվերին: Արեւից շիկացած փողոցները թվում էր, թէ անդրադարձում են օրվա ամբողջ տապը, և անցորդները հագիվ են քարշ տալիս ոտքերը: Ես վազուց չէի տեսել Սթրիբլենդին: Ուրիշ գործերով զբաղված լինելով, բոլորովին մոռացել էի նրան: Գիրկը ձանձրացրել էր ինձ իր անիմաստ տրտունջներով, և ես խուսափում էի նրանից: Շատ տհաճ էր այդ պատմութիւնը, և ես այլևս մտադիր չէի զբաղվել դրանով:

Մի առավոտ գիշերազգեստով նստած աշխատում էի: Մտերևութեամբ էին հեռունները. մտածում էի Բրետանի արեաշատ ծովափերի, ծովի թարմ օդի մասին: Իմ կողքին սեղանի վրա գրված էր դատարկ սրճամանը, որով դանապանուհին café au lait էր բերում, և բուլկու մնացորդը: Լսում էի, թէ ինչպես դանապանուհին կողքի սենյակում բաց է թողնում լողաբանի ջուրը: Հնչեց գանգի ձայնը: Դանապանուհին բաց արեց դուռը: Սթրյովն էր, որ հարցնում էր տո՞նն եմ ես, թէ ոչ: Տեղիցս վեր շիկնալով, ձայն տվեցի նրան: Նա ներս մտավ արագ և մոտեցավ ինձ:

— Բլանշը ինքնասպանութիւն է գործել,— ասաց նա խեղճ-վող ձայնով:

— Ի՞նչ ես ուզում ասել դրանով,— գոռացի ես ցնցված:

Սթրյովը շարժեց շրթունքները, բայց այլևս ոչ մի հնչյուն չուրս չեկավ այնտեղից: Հետո նա խելագարի նման սկսեց ինչ-որ անկապ բաներ ասել: Սիրտս արագ բարախում էր և, չգիտեմ թէ ինչու, հանկարծ գայրացա:

— Վերջապէս հավաքիր քեզ: Ի՞նչ ես դուրս տալիս:

Նա հուսահատ շարժումներ էր անում ձեռքերով, բայց բառերը սուսովա նման դուրս չէին գալիս բերանից, կարծես /կորցրել էր խոսելու բնդունակութիւնը: Չգիտեմ, թէ ինչ պատահեց ինձ հետ, բռնեցի նրա ուսերից և ուժեղ ցնցեցի: Ես, իհարկեւ, տհաճութիւնով եմ հիշում այդ ամենը, բայց վերջին անգուն գիշերները, ըստ երևույթի, ավելի էին քայքայել ջղերս, քան ես կարծում էի:

— Թույլ տուր նստել,— շնչահեղձ լինելով ասաց նա վերջապէս:

Մի բաժակ գինի լցրեցի և ուղում էի տալ նրան, բայց ստիպված եղա խմեցնել ինչպես երեխայի՝ բաժակը շրթունքներին մոտեցնելով: Նա դժվարութեամբ մի կում արեց, և մի քանի կաթիլ թափվեց կրծքակալին:

— Ո՞վ է ինքնասպանութիւն գործել:

Չգիտեմ, թէ ինչու տվեցի այդ հարցը, ստանց այդ էլ եւ լավ գիտեի, թէ խոսքը ում մասին է:

Նա ջանաց հավաքել իրեն:

— Երեկ երեկոյան նրանք կովի են իրար հետ, և Սթրիբլենդը հեռացել է նրանից:

— Բլանշը մահացե՞լ է:

— Ոչ, հիվանդանոց են տարել:

— Ուրեմն ինչի մասին է խոսքը,— համբերութիւնից դուրս գալով բղավեցի ես:— Ինչո՞ւ ես ասում, որ նա ինքնասպան է եղել:

— Մի բարկունա ինձ վրա... ես ոչինչ չեմ կարող ասել, երբ դու այդպես...

Ես ամուր սեղմեցի բռունցքներս, աշխատելով զսպել ինձ, և նույնիսկ ինձ ստիպեցի ժպտալ:

— Ներքի: Ես չեմ շտապեցնում քեզ: Հանգստացիր, և ամեն ինչ պատմիր ինչպես հարկն է:

Գիրկի կլոր, կապուշտ աչքերը լի էին սարսափով: Ակնոցի ապակիները ավելի սարսափելի տեսք էին տալիս դրանց:

— Այսօր առավոտյան, երբ դանապանուհին վեր էր բարձրացել նամակը հանձնելու, նրա զանգին չէին պատասխանել: Ներսից անթոյններ էին լսվել: Դուրս փակ շօտնելով, նա ներս էր մտել: Բլանշը սարսափելի վիճակում պատկած էր եղել անկողնում, իսկ սեղանին թրթիշկաթթվի մի շիշ:

Սթրյովը ձեռքերով ծածկեց գեմքը և հեկեկալով ետ ու առաջ անձվեց:

— Գիտակցութիւնը տե՞ղն էր:

— Այո, օ՛, եթէ իմանայիր, թէ ինչպես էր տանջվում: Ես չեմ կարող տանել, չեմ կարող:

Նրա ձայնը ճիշի էր նման:

— Քեզ ինչ կա տանելու, գրողը տանի,— բղավեցի ես զայրացած:— Նու պետք է տանի:

— Ինչ դաժանն ես:

— Հետո՞:

— Ուղարկեցին բժշկի ու իմ հետևից, տեղեկացրին ոստիկանությունը: Ես զոնապանուհուն բան ֆրանկ էի տվել և խընդելի, որ եթև որեէ բան պատահի, տեղեկացնի ինձ:

Դիրկը շունչ քաշեց մի պահ, և ես զգացի, թև որբան դժվար էր նրա համար պատմել այն ամենը, ինչ որ պետք է ասեր:


— Երբ ես եկա, նա շցանկացավ խոսել հետս: Ասաց, որ դուրս հանեն ինձ: Երգվեցի, որ ամեն ինչ ներել եմ նրան, բայց չսեց: Փորձեց գլուխը պատին խփել: Բժիշկը ասաց, որ ինձ չի կարելի նրա հետ մնալ: Նա շարունակում էր պնդել, «Դուրս քարեք նրան»: Ես դուրս եկա և սպասեցի արվեստանոցում: Երբ եկավ շտապօգնությունը և պատգարակին դրին նրան, ինձ ստիպեցին խոհանոց գնալ, որպեսզի նա չիմանա, որ այնտեղ եմ:

Մինչ հագնվում էի, — Սթրյովն ուզում էր, որ իր հետ անմիջապես հիվանդանոց գնամ, — նա ասաց, որ հաջողացրել է Բլանշի համար առանձին հիվանդասենյակ ստանալ, որպեսզի գոնև հիվանդանոցային եռուզեռից պաշտպանի նրան: Ճանապարհին նա ինձ բացատրեց, թև ինչու եմ իրեն պետք: Եթև Բլանշը նորից շցանկանա տեսնել իրեն, միզուցե ինձ ներս թողնի: Նա խնդրեց նորից ասել Բլանշին, որ դեռ սիրում է նրան, որ ոչ մի բանում չի կշտամբի և միայն մի բան է ցանկանում՝ օգնել նրան: Նա ոչ մի բան չի պահանջում և երբեք չի ստիպի վերադառնալ: Նա բոլորովին ազատ կլինի:


Բայց երբ հիվանդանոց եկանք, — դա մի մոայլ, անհրապույտ շինություն էր, որի միայն տեսքը բավական էր, որ մարդ վատ զգար իրեն, — և անվերջ հարցուփորձերից, աստիճաններով ու միջանցքներով թափառելուց հետո դտանք բուժող բժշկին, նա հայտարարեց, որ հիվանդը չափազանց թույլ է և այսօր ոչ մեկին բնդունել չի կարող: Սպիտակ խալաթով և կոպիտ շարժուձևերով կարճահասակ, մորուքավոր բժշկի համար Բլանշի դեպքը շատ սովորական բան էր, իսկ հուզված հարազատները՝ ձանձրալի խնդրողներ, որոնց հետ պետք էր խիստ լինել: Եվ վերջապես ի՞նչ արտակարգ բան կար դրանում: Հէստերիկ կին, որ գժովելով սիրեկանի հետ, թույն էր խմել. դա հաճախ է պատահում: Սկզբում նա կարծեց, թև Դիրկն էր գժբախտության պատճառը և անիրավաբար իրեն կոպիտ վարվեց նրա հետ: Երբ բացատ-




Ինքնանկար




Թաիլյան բնապատկեր



Նրբեք



Նաթա Ֆոա Լրօթօ. (Ն՛րբ Եւ անուանալու)



TA MATETE

Ta Matete. (Շուկա)



Որտեղի՞ց ենք եկել: Ովքե՞ր ենք: Ո՞ր ենք գնում:

Սպիտակ ձի ➤

րեցի, որ նա ամուսինն է, պատրաստ ամեն ինչ ներելու, բժիշկո հետաքրքիր ու զննող հայացքով նրան նայեց: Ինձ թվաց, որ այդ հայացքում նշմարվեց նաև հեգնանք: Իրոք որ, Դիրկը իրենից ներկայացնում էր խաբված ամուսնու դասական տիպ: Բժիշկը թոթվեց ուսերը:

— Առայժմ վտանգ չկա, — պատասխանեց նա մեր հարցերին: — Բայց մեզ հայտնի չէ, թե որքան թրթնչկաթթու է խմել: Հնարավոր է, որ հենց վախով էլ վերջանա, կանայք հաճախ են փորձում սիրո պատճառով ինքնասպանություն գործել, բայց սովորաբար այնպես են անում, որ շատ շտուժեն: Որպես կանոն՝ դա մի ժեստ է, որով ուզում են վախեցնել կամ շարժել սիրականի գույթը:

Սառը արհամարհանք էր զգացվում նրա տոնի մեջ: Պարզ երևում էր, որ Բլանշ Սթրյուվը մի միավոր է նրա համար, որ պիտի ավելացնեն այն մարդկանց թվին, որոնք ընթացիկ տարում ինքնասպանության փորձ են արել Փարիզում: Նա մեզ հետ երկար խոսելու ժամանակ շուներ և ասաց ո՞ր ժամին գալ հաջորդ օրը. եթե հիվանդը լավ զգա իրեն, ամուսնուն թույլ կտա տեսնել նրան:

ԳԼՈՒԽ 35

Զգիտեմ, թե ինչպես անցավ այդ օրը: Սթրյուվը ոչ մի բուպե մենակ մնալ չէր կարողանում, և ես կաշվիցս դուրս էի գալիս, աշխատելով զբաղեցնել նրան: Տարա կուլը: Չևացնում էր իբր թե նկարներին է նայում, բայց տեսնում էի, որ մտքով կնոջ մոտ է: Ստիպեցի որևէ բան ուտել և նախաճաշից հետո Չամոզեցի պառկել, բայց քնել չկարողացավ: Նա սիրով ընդունեց մի քանի օր ինձ մոտ մնալու առաջարկս: Կարողալու գրքեր տվեցի, բայց մի երկու էջ ընթերցելուց հետո գիրքը մի կողմ էր դրնում և հայացքը աննպատակ հառում դատարկ տարածություն: Երեկոյան պիկետի բազմաթիվ պարտիա խաղացինք և նա, որպեսզի իմ ջանքերը զուր չանցնեին, քաջաբար ձևացնում էր, թե խաղը հետաքրքրում է իրեն: Վերջում քնաբեր դեղ տվեցի, և նա սուղվեց անհանգիստ քնի մեջ:

Հաջորդ օրը նորից հիվանդանոց գնացինք, և Բլանշին խնամող քույրն ասաց, որ հիվանդը համեմատաբար լավ է զգուժ — Լուսին և վեցպենսանոց

իրենն ենդրեցինք իմանալ կցանկանա արդոյք Բլանշը տեսնել ամուսնունն: Դուան հետեկց ձայներ լսվեցին: Շուտով հիվանդապահուհին վերադարձավ և ասաց, որ հիվանդը հրաժարվում է որե՛ն մեկին տեսնել: Ասացինք, որ եթե չի ուզում Գիրկին տեսնել, գուցե համաձայնվի ինձ ընդունել, բայց նա մերժեց նաև գալ Գիրկի շրթունքները դողում էին:

— Ես չեմ կարող ստիպել նրան, — ասաց հիվանդապահուհին: — Հիվանդը շատ թույլ է: Գուցե մի երկու օրից հետո փոխի միտքը:

— Միգուցե նա ինչ-որ մեկին է ուզում տեսնել, — ցածր ձայնով, գրեթե շշուկով ասաց Գիրկը:

— Նա միայն մի բան է ցանկանում, որ հանգիստ թողնեն իրեն:

Գիրկի ձեռքերը տարօրինակ կերպով ցնցվում էին, կարծես ոչ մի կապ չունենին մարմնի հետ:

— Խնդրում եմ, ասացեք նրան, որ եթե ուզում է ուրիշ մեկին տեսնել, կբերեմ նրան: Ես միայն մի բան եմ ցանկանում, որ նա երջանիկ լինի:

Հիվանդապահուհին նայեց նրան իր հանդարտ ու բարի աչքերով, որոնք տեսել էին աշխարհի ողջ դառնությունն ու ցավը, բայց նրա աչքերը անվրդով մնացին, որովհետև լի էին մի այլ անմեղսագործ աշխարհի տեսիլներով:

— Երբ նա մի փոքր հանդարտվի, կասեմ:

Կարեկցանքով լցված Գիրկը խնդրեց նրան հենց հիմա հարցնել:

— Գուցե դա ապաքինող ազդեցություն ունենա նրա վրա: Ուղղակի խնդրում եմ, հիմա հարցրեք:

Կարեկցանքի թույլ ժպիտ խաղաց հիվանդապահուհու դեմքին. նա շրջվեց ու ներս մտավ: Լսվեց նրա ձայնը, հետո մի այլ, ինձ անծանոթ ձայն պատասխանեց.

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ!

Հիվանդապահուհին դուրս եկավ և շարժեց գլուխը:

— Այդ նա՞ է խոսում, — հարցրեցի ես: — Զճանաչեցի նրա ձայնը:

— Ըստ երևույթին հիվանդի ձայնալարերը խիստ այրվել են:

Գիրկը հուսահատական մի թույլ ձիւ արձակեց: Ես նրան ասացի, որ ինձ սպասի ներքևում: Ուզում էի հիվանդապահուհու հետ

առանձին խոսել: Նա շհարցրեց պատճառը և լուռ դուրս եկավ: Գիրկը կորցրել էր կամքի վերջին մնացորդները և դարձել ինչպես հնազանդ երեխա:

— Բլանշը բացատրե՞լ է ձեզ. թե ինչու այդ բայլին դիմեց. — հարցրեցի ես:

— Ոչ, նա խոսել չի ուզում: Բուլտովին հանգիստ պառկած է մեջքի վրա, երբեմն ժամեր շարունակ ոչ մի շարժում չի անու: Բայց միշտ լաց է լինում: Նրա բարձր շարունակ թաց է: Նա շատ թույլ է թաշկինակից օգտվելու համար, արցունքները հոսում են այտերի վրայով:

Կարծես խոցեցին սիրտս: Այդ վայրկյանին ես պատրաստ էի սպանել Սթրիբլենդին, և հավատացած եմ, որ ձայնս դողաց, երբ հրածեղտ սովեցի հիվանդապահուհուն: Գիրկ Սթրյովը աստիճանների վրա ինձ էր սպասում: Թվում էր, թե նա շրջապատում ոչինչ չէր տեսնում և իմ մտտենայր ընկատեց միևնույն շփոթած և անբխի: Մենք լուռ քայլեցինք փողոցով: Ես աշխատում էի պատկերացնել, թե ինչը ստիպեց այդ խեղճ կնոջը նման սարսափելի քայլի դիմելու: Ենթադրում էի, որ ամեն ինչ հաշտնի է Սթրիբլենդին և հավանաբար ստիկանությունից արգեն հղել են նրա մոտ և հարցաքննել: Որտե՞ղ էր նա: Երևի վերադարձել էր իր ձեռնասենյակը, որը որպես արվեստանոց էր ծառայում: Տարօրինակ էր, որ Բլանշը չէր ուզում տեսնել Սթրիբլենդին: Միգուցե վախենում էր կանչել նրան, որովհետև գիտեր, որ չի գալ: Ինչպիսի անհուն դաժանություն էր նա տեսել, որ դրանից հետո հրաժարվել էր ապրելուց:

Հաջորդ շաբաթը սարսափելի էր: Սթրյովը կնոջ վիճակը իմանալու համար օրը երկու անգամ հիվանդանոց էր գնում, սակայն Բլանշը առաջվա պես չէր ցանկանում տեսնել նրան: Սկզբում Գիրկը վերադառնում էր այնտեղից հույսերով լի ու թեթևացած, որովհետև հիվանդի դրությունը թվում էր, թե դեպի լավն է գրեցնում, իսկ հետո՝ հուսահատված, բանի որ այն բարդությունը, որից միշտ վախենում էր բժիշկը, զրկեց նրան վերջին հույսից: Հիվանդապահուհին կարեկցում էր նրա վշտին, բայց ոչ մի մխիթարական բան չունեցր ասելու: Խեղճ կինը անշարժ պառկած

հրաժարվում էր խոսելուց: Մի կեսի հասած նրա աչքերը կարծես թե տեսնում էին մոտալուտ մահը: Գա արդեն երկու-երեք օրվա հարց էր, ոչ ավելի: Եվ երբ երրորդ օրը ուշ երեկոյան Սթրյովը ինձ մոտ եկավ, ես հասկացա, որ Բլանշը մահացել է: Դիրկը բուրոսովին ուժասպառ էր եղել: Նրա սովորական շատախոսու-թյան հետքն իսկ չէր մնացել: Նա լուռ փովեց բազմոցին: Ես հանգիստ թողեցի նրան, քանի որ գիտեի, որ մխիթարական խոս-քերն ավելորդ են: Վախենալով, որ անսիրտ կհամարի ինձ, շհամարձակվեցի կարգով և ծխամորձը բերանիս նստեցի պատու-հանի մոտ, մինչև որ նա ուժ կգտներ խոսելու:

— Դու շատ բարի եղար իմ նկատմամբ,— ասաց նա վեր-ջապես:— Բուրոն էլ շատ բարի եղան...

— Հիմարություն,— ասացի ես մի փոքր շփոթված:— Հիվանդանոցում ասացին, որ սպասեմ: Ախր ու տվեցին, և ես նստեցի նրա դռան մոտ, միջանցքում: Երբ նա գիտակցությունը կորցրեց, ինձ ներս թողեցին: Նրա բերանը ու կզակը այրված էին: Սարսափելի էր տեսնել, թե ինչպես էր այլանդակվել նրա հիանալի մաշկը: Բլանշը շատ հանգիստ մահացավ, նույնիսկ ես շիմացա, թե երբ մահացավ, մինչև որ հիվանդապահուհին շա-սաց:

Դիրկը շափազանց հոգնած էր լաց լինելու համար: Նա բուռ-բուռովին թուլացած պառկել էր մեջքի վրա, կարծես ուժերը ամ-բողջովին լքել էին մարմինը, և ես շուտով նկատեցի, որ նա քնել է: Ամբողջ շաբաթվա ընթացքում նա առաջին անգամն էր հան-գիստ քնում: Երբեմն այդքան դաժան քնությունը մերթ քնդ մերթ գթասիրտ է դառնում: Ես ծածկեցի նրան և հանգրթի լույսը: Առա-վոտյան, երբ արթնացա, Դիրկը դեռ քնած էր: Նա նույնիսկ չէր փոխել իր դիրքը, և ոսկե շրջանակներով ակնոցը առաջվա պես դեռ թթին էր:

ԳԼՈՒԽ 37

Բլանշ Սթրյովը այնպիսի հանգամանքներում մահացավ, որ նախքան նրան հողին հանձնելը ստիպված էինք բազմաթիվ զզվելի ձևականությունների միջով անցնել: Ես և Դիրկը դանդաղ ընթանում էինք գիտկառքի հետևից մինչև գերեզմանատուն, բայց վերադարձանք արագ, որովհետև մեր առջևից գնացող կառքի

կառապանը այնպիսի փութաշանությամբ էր մտրակում ձիերին, որ թվում էր, թե աշխատում է թոթափել իր վրայից նույնիսկ հանգուցյալի մասին մնացած հիշողությունը: Սարսափելի ու ան-մոռանալի տեսարան: Ես նույնիսկ անհաղթահարելի ցանկություն ունեցա մոռանալու այդ ամբողջ պատմությունը: Իրականում ինձ հետ ոչ մի առնչություն չունեցող այդ ողբերգությունը, ճիշտե ասած, սկսել էր ձանձրացնել ինձ, և ձևացնելով իբր Դիրկի հա-մար եմ անում, թեթևության զգացումով խոսք բացեցի այլ նյու-թի մասին:

— Մտադիր չե՞ս որոշ ժամանակով հեռանալ,— ասացի ես:— Հիմա քեզ ոչ մի բան Փարիզին չի կապում:

— Նա շաատասխանեց, բայց ես անողորաբար շարունակեցի:

— Դու մոտ ապագայի որն է պլան ունե՞ս:

— Ոչ:

— Դու պետք է փորձես ամեն ինչ նորից սկսել: Ինչո՞ւ չես ուզում Իտալիա գնալ և սկսել աշխատել:

— Նա նորից շաատասխանեց, բայց այս անգամ կառապանք օգնության հասով ինձ: Մի պահ դանդաղեցնելով բնթացքը, նա կոացավ և ինչ-որ բան ասաց, բայց թե ինչ, չսեցի, և գլուխս դուրս հանեցի կառքի լուսամուտից: Նա հարցնում էր, ուր տա-նել մեզ:

— Մի բույս սպասեք,— պատասխանեցի ես:— Ավելի լավ է միասին գնանք նախաճաշելու,— դիմեցի ես Դիրկին:— Կասեմ նրան, որ մեզ Պիզա հրապարակ տանի:

— Ոչ, ես արվեստանոց կղնամ:

— Ուզո՞ւմ ես քեզ հետ գամ:

— Ոչ, ավելի լավ է մենակ մնամ:

— Լավ:

Ես կառապանին ասացի հասցեն, և մենք լուռ շարունակեցինք մեր ճանապարհը: Այն շաբաթաօտիկ առավոտից ի վեր, երբ Բլանշին հիվանդանոց տարան, Դիրկը դեռ արվեստանոցում չէր եղել: Ես ուրախ էի, որ նա մենակ է ուզում մնալ, և, մինչև դուռը ճանապարհ գնելով, թեթևության զգացումով հրաժեշտ տվեցի նրան: Ես նորից հաճույք զգացի Փարիզի փողոցներից և ժպիտով նայեցի այս ու այն կողմ շատապու մարդկանց: Պայծառ, արևոտ օր էր, և կյանքի ուրախությունը փոթորկվում էր իմ մեջ: Ես չէի կարող ընդդիմանալ դրան, մոռացության տվեցի Սթրյովին ու նրա վիշտը: Ես ցանկանում էի ուրախանալ:

Ես գրեթե մի շաբաթ շտեաւ Սթրյովին: Բայց մի երեկո, ժամը յոթից հետո, նա եկավ իմ հետեից և քարշ տվեց ճաշելու: Նա ամբողջովին սև էր հագել և գլխարկին լայն սև ժապավեն էր կապել: Նույնիսկ թաշկինակը սև եզրանախշերով էր: Նրա տխուր հագուստին նայելիս կարելի էր կարծել, որ մի աղետի ժամանակ միանգամից կորցրել է բոլոր հարազատներին, և նույնիսկ ինչ-որ հեռավոր գարմիկ էլ չի մնացել: Դիրկի կլորիկ մարմինն ու թմբիկ, կարմիր այտերը բոլորովին չէին համապատասխանում նրա սգո զգեստին: Դժբախտ ճակատագիր: Դիրկ Սթրյովի անսահման դժբախտության մեջ նույնիսկ խեղկատակության ինչ-որ նրբերանց կար:

Նա ինձ ասաց, որ որոշել է գնալ ոչ թե Իտալիա, ինչպես ես էի խորհուրդ տվել, այլ Հոլանդիա:

— Վաղը մեկնում եմ: Շատ հնարավոր է, որ այլևս երբեք չաեսնվենք:

Ես փորձեցի ինչ-որ առարկություն անել, բայց նա թույլ ժպտաց:

— Հինգ տարի տանը չեմ եղել: Ինձ թվում էր, թե ամեն ինչ մոռացել եմ, այնքան էի խորթացել հարազատ վայրերից, որ նույնիսկ ինձ վախեցնում էր ժամանակավորապես այնտեղ գնալու միտքը, իսկ հիմա տեսնում եմ, որ դա է իմ միակ ապաստարանը:

Նա շափազանց տանջված ու ընկճված էր, և մտովի շարունակ վերադառնում էր իր քնքուչ ու սիրող մոր մոտ: Միծաղելիությունը, որ նա տարիներ շարունակ համբերութեամբ էր տարել, հիմա թվում էր վերջնականապես ճզմել է նրան: Վերջին հարվածը, որ հասցրել էր Բլանշ Սթրյովի դավաճանությունը, նրան զրկել էր այն կենսունակությունից, որը օգնել էր զվարթությունամբ համակերպվելու դրան: Նա այլևս չէր կարողանում ծիծաղել նրանց հետ միասին, ովքեր ծիծաղում էին իր վրա: Նա թշվառական էր դարձել: Դիրկը ինձ պատմեց իրենց մաքուր ու ազյուսաշեն տնակում անցկացրած իր մանկության մասին, այն մասին, թե ինչպիսի կրքոտություններ է սիրում իր մայրը կարգ ու կանոնը: Նրա խոհանոցը իր մաքրություններ ու փայլով իսկական հրաշք էր: Ոչ մի տեղ փոշու հետք չէր գտնի, և ամեն ինչ իր տեղում էր: Նրա մաքրասիրությունը մոլորություն էր

հասնում: Ես մտովի տեսնում էի հոգսերի մեջ թաղված վարդադույն այտերով այդ փորրիկ ծեփ կնոջը, որն իր ամբողջ կյանքում առավոտից մինչև գիշեր աշխատում էր, որպեսզի իր տունը փայլեր մաքրությունով: Դիրկի հայրը՝ բարձրաստակ, նիհար, առիթների աշխատանքից կոշտացած ձեռքերով մի ծերուկ, երեկոները բարձրաձայն թիրթի էր կարգում, իսկ նրա կինն ու աղջիկը (նա այժմ ամուսնացած էր երկկայմ ձկնորսական նավի կապիտանի հետ), որպեսզի ժամանակ չկորցնեին, կար էին անում: Քաղաքակրթության կեղծից ետ շարաված այդ փորրիկ ըստաբուն երբեք որեէ բան չէր պատահում, և տարիներն անցնում էին իրար հետևից, մինչև որ գար մահը, ինչպես հարազատ ընկեր, հանգիստ բերելով նրանց, ովքեր այդքան ջանասիրաբար աշխատել էին:

— Հայրս ուզում էր, որ ես էլ աստղծաղործ դառնայի: Այդ արհեստը մեզ է անցել հինգ սերնդի միջով, հորնից որդի: Միգուցե նրանում է կյանքի իմաստությունը, որ հորդ հետքերով գնաս, ոչ աչ նայես, ոչ էլ ձախ: Երբ փոքր տղա էի, ասում էի, որ կամուսնանամ մեր հարեան թամբագործի աղջկա հետ: Նա կապույտ աչքերով և ծղոտագույն մուգերով փոքրիկ աղջիկ էր: Նա տունս հաշելու նման մաքուր կոլահեր, իսկ մեր որդին կշարունակեր իմ արհեստը:

Սթրյովը հոգոց հանեց ու լռեց: Նրա մտքերը տարվում էին այն ամենով, ինչ կարող էր լինել, և այն րարեկեցիկ կյանքը, որին մի ժամանակ արհամարհանքով էր վերաբերվել, թախիծով էր լցնում նրա սիրտը:

— Կյանքը կոպիտ է ու դաժան: Ոչ ոքի հայտնի չէ, թե ինչու ենք այստեղ և ուր ենք գնում: Մենք շատ խոնարհ պետք է լինենք: Պետք է գնահատենք հանգստի գեղեցկությունը: Պետք է այնքան համեստ ապրենք, որ ճակատագիրը չնկատի մեզ: Եվ պետք է սեր փնտրենք պարզ ու հասարակ մարդկանց մոտ: Նրբանց անգիտությունը ավելի լավ է, քան մեր բոլոր գիտելիքները: Մոռ լինենք լուռ, բավարարվենք մեր համեստ անկյունով, լի-հենք նրանց նման հեղ ու բարի: Մա է կյանքի ամբողջ իմաստությունը:

Ես հասկանում էի, որ ընկճված հոգին էր խոսում նրա մեջ, և ըմբոստացա նման ինքնաստորացման դեմ: Բայց բարձրաձայն ուրիշ բան ասացի:

— Իսկ ի՞նչը գրդեց քեզ նկարիչ դառնալ:

Նա թոթովեց ուսերը:

— Պարզվեց, որ ես նկարչական քննություններուն ունեմ գարոցում պարզենեի էի ստանում այդ առարկայից: Խեղճ մայրս շատ էր հպարտանում իմ տաղանդով և մի անգամ ջրաներկերի մի տուփ նվիրեց ինձ: Նա բժշկին, պատարիս ու դատավորին ցույց տվեց իմ ուրվանկարները: Նրանք էլ Ամստերդամ ուղարկեցին ինձ գեղանկարչական դպրոցում քննություն հանձնելու: Ես հաջող հանձնեցի քննությունները: Խեղճ կին, որքան էր հրապարտանում: Ինձանից բաժանվելու մտքից սիրտը կտոր-կտոր էր լինում, բայց ժպտում էր և ցույց չէր տալիս իր վիշտը: Շատ էր ուրախանում, որ իր որդին նկարիչ է դառնալու: Նրանք կուպեկ-կուպեկ խնայել էին և բավական փող էին հավաքել, որ ես կարողանամ ապրել Ամստերդամում, իսկ երբ ցուցադրվեց իմ առաջին նկարը, նրանք բոլորով Ամստերդամ եկան, հայրս, մայրս ու քույրս: Մայրս նայում էր նկարին ու լաց էր լինում:— Գիրկի բարի աչքերը թրջվեցին:— Եվ հիմա մեր հին տնակում չկա մե պատ, որից կախված չլինի իմ նկարներից մեկը գեղեցիկ, ոսկե շրջանակի մեջ:

Գիրկի դեմքը փայլում էր երջանիկ ժպտից: Ես հիշեցի նրա նոճիների կամ էլ ձիթենիների տակ նստած գունազեղ գյուղացիներ պատկերող ժանրային սառը տեսարանները: Ի՞նչ տարբերակ տեսք պետք է ունենային դրանք իրենց կուպիտ շրջանակներով գյուղական տնակի պատերին:

— Ազնիվ հոգի, նա կարծում էր, թե նկարիչ դարձնելով, բարիք է անում ինձ, բայց զուցն ավելի լավ կլինեի, որ ենթարկվեի հորս կամքին և հիմա պարզապես մի ազնիվ ատաղձագործ լինեի:

— Իսկ այժմ, երբ դիտես, թե ինչ է արվեստը տալիս մարդուն, կարո՞ղ ես այլ ճանապարհով գնալ: Կարո՞ղ ես հրաժարվել այն հաճույքից, որ նրա շնորհիվ ես զգացել:

— Արվեստից բարձր ոչինչ չկա աշխարհում,— պատասխանեց Գիրկը փոքր-ինչ լռելուց հետո:

Նա երկար ու մտախոհ նայեց ինձ, հավանաբար տատանվում էր, բայց հետո ասաց.

— Գիտե՞ս, որ ես հանդիպել եմ Սթրիբլինդին:

— Դո՞ւ:

Ես ապշել էի: Ինձ թվում էր, թե Սթրիբլի համար անտանելի կլինեի տեսնել նրան: Նա թույլ ժպտաց:

— Քեզ արդեն հայտնի է, որ ես բոլորովին զուրկ եմ հպարտությունից:

— Ի՞նչ նկատի ունես:

Եվ նա մի զարմանալի պատմություն պատմեց:

ԳԼՈՒԽ 39

Երբ խեղճ Բլանշի թաղումից հետո բաժանվեցինք, Սթրիբլը ծանր սրտով տուն մտավ: Ինքնաձագկման ազոտ ձգտումը նրան ուրվեստանոց մղեց, շնայած սարսուռ էր զգում այն-տանջանքներից, որ սպառվում էին այնտեղ: Նա աստիճաններով հազիվ վեր բարձրացավ (ուտքերը չէին ենթարկվում իրեն) և նախքան ներս մտնելը երկար ժամանակ կանգնած մնաց դռան մոտ, չհամարձակվելով ներս մտնել: Նա իրեն վատ էր զգում: Քիչ մնաց վազեի իմ հետևից խնդրելու, որ վերադառնամ, նրան թվում էր, թե սենյակում ինչ-որ մեկը կա: Հիշեց թե բանի-բանի սնգամ է կանգ առել արվեստանոցի դռան մոտ աստիճաններով բարձրանալուց հետո մի փոքր շունչ առնելու, և ինչպես Բլանշին տեսնելու անհամբեր ցանկությունից նորից էր շունչը կտրվել: Բլանշին տեսնելը մի երջանկություն էր, որ երբեք չէր խամրում, և տնից նույնիսկ կես ժամով բացակայելիս այնպես էր տեսակցություն ձգտում, կարծես մի ամբողջ ամիս չէին տեսնվել: Հանկարծ նրան թվաց, թե Բլանշը չի մահացել, ինչ որ պատահել էր երազ է միայն, սարսուփելի երազ, և հիմա, երբ շրջի բախալին, բաց անի դուռը, կտեսնի նրան փոքր-ինչ կուսացած սեղանին Շարդինի Benedicite-ի՛ կնոջ նագելի դիրքով, որը նրան միշտ էլ կնոջ գեղեցկություն տրպար էր թվացել: Նա բանալին արագ հանեց գրպանից, բաց արեց դուռը և ներս մտավ:

Արվեստանոցը լքված տեսք չուներ: Բլանշի կոկիկությունը նրա այն գծերից մեկն էր, որ այդքան զերել էր Գիրկին: Մաքրասիրտության և կարգ ու կանոնի նկատմամբ ունեցած սերը Գիրկի մեջ դեռ մանկուց էր դաստիարակվել և երբ նկատեց, որ Բլանշը բնազդաբար ամեն ինչ իր տեղն է դնում, ջերմությունը լցվեց նրա սիրտը: Ննջասենյակը այնպիսի տեսք ուներ, կարծես Բլանշը նոր էր դուրս եկել այնտեղից: Զարդասեղանին դրված էր երկու խոզանակ և մի սաեր նրանց միջև: Ինչ-որ մեկը հարդարել էր անկողինը, որի վրա Բլանշը անց էր կացրել իր վերջին գիշերը:

արվեստանոցում, և բարձին, ասեղնագործ ծրարի մեջ դրված էր նրա գիշերանոցը: Անհնարին էր հավատալ, որ նա այլևս չի մտնելու այդ սենյակը:

Դիրկի կոկորդը շորացել էր, և նա զնաց խոհանոց ջուր խմելու: Այստեղ նույնպես ամեն ինչ իր տեղում էր: Դարակին գրված էին մաքուր լվացված փսակները, որոնք նրանք օգտագործել էին վերջին գիշերը, գծապիտոց առաջ: Գանակներն ու աատառաքաղները դրված էին դարակում: Մածկոցի տակ պանրի մնացորդներ կային, թիթեղյա տուփի մեջ՝ մի կտոր շոր հաց: Բլանշը գնումներ էր կատարում ամեն օր և այնքան, որքան պետք էր, այնպես որ հաջորդ օրվան ոչինչ չմնար: Ուտիկանու-թյան արձանագրութունից Սթրյուվը գիտեր, որ Սթրիբլենդը տնից հեռացել է ճաշից անմիջապես հետո, և սարսուռ էր այն մտքից, թե ինչպիսի քաջութուն է ունեցել Բլանշը ամեն ինչ լվանալու և տեղավորելու ինչպես միշտ: Նրա մեթոդիկ վերաբեր-մունքը մի անգամ ևս ապացուցում էր, թե որքան մտածված է նա գործի: Իրեն տիրապետելու նրա կարողությունը պարզապես ահավոր էր: Մի հանկարծակի ցավ համակեց Դիրկին, ծնկները ծալվեցին: Նա մի կերպ ննջարան հասավ և սկսեց կանչել՝ «Բլանշ, Բլանշ»: Բլանշի տառապանքների մասին մտածելը անտանելի ցավ էր պատճառում նրան, և հանկարծ պարզ պատկե-րացրեց, թե ինչպես նա կանգնած է խոհանոցում, — խոհանոցը չափազանց փոքր էր, — լվանում էր փսակները, բաժակները, պատառաքաղները, գալսները, փայլելու աստիճան մաքրում դանակները, հետո ամեն ինչ դնում իր տեղը, լվանում լվացա-րանի կոնքը և կախում սրբիչը շորանալու, — այն դեռ կախված էր տեղում, քթբլված գորշագույն այդ կտորը, — և նայում էր շուրջը, արդյոք ամեն ինչ իր տեղում է: Դիրկը տեսնում էր, թե ինչպես է նա իրեցնում քշտած թևքերը, հանում զոգնոցը, — ահա այն կախված է մեխից, դռան հետևում, — վերցնում թրթնջկաթթվի շիշը և դնում ննջասենյակ:

Այլևս չկարողանալով դիմանալ այդ տանջանքներին, նա վեր ցատկեց անկողնուց և դուրս վազեց, մտավ արվեստանոց: Այն-տեղ մոթ էր, ինչ-որ մեկը քաշել էր մեծ պատուհանի վարա-գույրները: Սթրյուվը արագ բաց արեց դրանք, և սենյակին զցած սուաչին իսկ հայացքից հեկեկոցը խեղդեց նրան: Որքան երջանիկ էր ելել նա այնտեղ: Այստեղ նույնպես ամեն մի իր անփոփո-ր էր մնացել: Սթրիբլենդը անտարբեր էր իր շրջապատի նկատմամբ:

և ապրել էր ուրիշի արվեստանոցում՝ ոչ մի բան չփոխելով այն-տեղ: Սթրյուվը արվեստանոցը կահավորել էր արվեստագետի իր ճաշակին համապատասխան: Պատերին այս ու այնտեղ հին դիպակ էր, դաշնամուրը ծածկված մի կտոր գեղեցիկ ու գունա-թափված մետաքսով: Մի անկյունում միլուսյան վենետիկ պատ-ճենն էր, մյուսում՝ Մեդիչիների վենետան: Դելֆոյան՝ հախճա-պակով դրվազազարդված երկու իտալական պահարան, մի քանի հարթաքանդակ: Այստեղ էր նաև վելասկեսի «Բնեոկեն-տի—10»-ի պատճենը ոսկե շրջանակում, որ Սթրյուվը արեց էր Հոմերոս, և Սթրյուվի բազմաթիվ կտավները այնպես էին կախ-ված, որ ավելի մեծ տպավորություն գործեն, նույնպես հրաշալի շրջանակներում: Սթրյուվը միշտ էլ շատ էր հպարտանում իր ճա-շակով: Նա շատ էր սիրում նկարչի արվեստանոցի ոտմանտիկ մթնոլորտը, և շնայած հիմա այդ բոլորը սիրտը մխրձված դա-նակի ցավ էր պատճառում, նա մեխանիկորեն թեթևակի փոխեց կյուղովիկոս 15-ի ծամանակների ռճով պատրաստված իր սե-ղանի գիրքը, որը նրա զանձերի թվին էր պատկանում: Հանկարծ նրա ուշադրությունը դրավեց երեսով դեպի պատը շրջված մի կտավ, որն իր չափսերով ավելի մեծ էր, քան այն կտավները, որոնք սովորաբար օգտագործում էր ինքը: Կտավը հետաքրքրեց Դիրկին, և նա մտտեցավ ու շրջեց այն: Կտավի վրա մերկ կին էր պատկերված: Դիրկի սիրտը սկսեց արագ բարախել: Նա ան-միջապես հասկացավ, որ դա Սթրիբլենդի աշխատանքն է: Նա ևս չպարտեց նկարը: Ինչու էր նա այդ կտավը թողել այստեղ: Դիրկի արագ շարժումից նկարը գետին ընկավ երեսով դեպի հատակը: Կարևոր չէր, թե դա ում նկարն էր, Դիրկը չէր կարող այն փոշու մեջ թողնել և բարձրացրեց, բայց այստեղ հետա-քրքրափոթությունը հաղթեց նրան: Որպեսզի ավելի լավ տեսնի, նա նկարը դրեց նկարակալին և մի քանի քայլ ետ գնաց:

Նրա շունը կարվեց: Նկարում պատկերված էր բազմոցին պռակած մի կին, մի ձեռքը դիտատակին դրած, մյուսը՝ պարզած մարմնի երկարությամբ, մի ծունկը փոքր-ինչ ծալած, մյուսը պարզած: Դասական դիրք: Դիրկի գլուխը սլաղեկ: Դա Բլանշն էր: Վիշտը, խանգն ու կատաղությունը խեղդում էին նրան: Նա սկսեց անհողաբաշխ ձայնով ղղավել, սեղմել բուռնցքները և սպառնալ անտեսանելի թշնամուն: Հետո նորից գոռաց անմարդ-կային ձայնով: Նա կորցրել էր իրեն: Դա արդեն չափից ավելի էր, այլևս տանել չէր կարող: Նա խնիակորույս շուրջը նայեց,

փնտրելով մի բան, որով կարողանար կտոր-կտոր անել նկարը, անմիջապես ոչնչացնել, բայց ոչ մի համապատասխան բան չգտավ: Փորփրեց իր նկարչական իրերը, նույնպես իզուր, նա խելագարվում էր: Վերջապես գտավ ինչ փնտրում էր, մեծ մածկիչը, և հողմալուսն ճիշտով ճանկեց այն ու դաշույնի նման թափահարելով՝ ևնտվեց դեպի նկարը:

Պատմելիս Սթրյովը նորից հուզվեց և սեղանի վրայից վերցնելով ճաշի դանակը՝ սպառնացին թափահարեց: Հետո բարձրացրեց ձեռքը կարծես հարվածելու պատրաստ, բայց անմիջապես բաց թողեց դանակը, որը զնգոցով ընկավ հատակին: Դիրկը մեղազուր ժպիտով նայեց ինձ ու լռեց:

— Ծարունակիր, — ասացի ես:

— Զգու՛տեմ, թե ինչ պատահեց ինձ հետ: Ես պատրաստվել էի պատռել նկարը, երբ հանկարծ տեսա այն:

— Ի՞նչ տեսար:

— Նկարը: Դա արվեստի իսկական գործ էր: Ես չկարողացա դիպչել դրան: Վախեցա:

Նա նորից լռեց և բերանը բաց ինձ նայեց: Նրա կապույտ աչքերը թվում էր, թե ուր որ է դուրս կգան բներից:

— Դա զարմանալի, հիասքանչ նկար էր: Ակնածանթի սարսուռ համակեց ինձ: Քիչ մնաց սարսափելի հանցանք գործելու: Ես փոքր-ինչ ետ քաշվեցի ավելի լավ տեսնելու նկարը և ոտքս մածկիչին դնելով, սայթաքեցի: Սարսափելի էր:

Ինչ-որ շափով Սթրյովի հուզմունքը ինձ վրա էլ տարածվեց: Նրա պատմությունը տարօրինակ ազդեցություն գործեց վրաս: Հանկարծ ինձ թվաց, թե տեղափոխվել եմ մի աշխարհ, ուր տեղաշարժ են եղել բոլոր արժեքները, և ես կանգնել եմ շվարած, ինչպես օտարական մի անծանոթ երկրում, որտեղ մարդիկ բոլորովին այլ կերպ, բոլորովին այլ ձևով են արձագանքում ամենասովորական երևույթներին: Սթրյովն աշխատում էր պատմել նկարի մասին, բայց նրա խոսքերն այնքան անկույտ էին, որ ստիպված էի դուռակել, թե ինչ է ուզում ասել: Սթրիբլենդը ազատվել էր իրեն կաշկանդող բոլոր կապանքներից: Նա գտել էր ոչ թե իրեն, ինչպես ընդունված էր ասել, այլ իր նոր հոգուն, հագեցած այնպիսի ուժերով, որոնց մասին ոչ ոք չէր կասկածում: Դա ոչ միայն դժանկարի համարձակ պարզեցում էր, որ այգթան լավ ու անկրկնելիորեն էր արտահայտում նկարչի անհատականությունը, ոչ միայն նկարչական արվեստը, չնայած մարմինը

կրթտ զգացմունքով էր նկարված, որտեղ ինչ-որ հրաշք բան կար, ոչ միայն նյութի հաղթանակը, չնայած ռեալ կերպով զգացվում էր այդ տարածված մարմնի ծանրությունը, այլ Սթրիբլենդի նկարը ներթափանցված էր նաև հոգևորությամբ, նոր ձևով լինելով արագիցվով, որը երևակայությունը տանում էր նոր, անհայտ ճանապարհներով դեպի ամայի հեռուները, օրտեղ խավարը ճեղքում են միայն հավերժական աստղերը, և որտեղ հողմն, ամբողջովին մերկ, սարսուռով է ձեռնամուխ լինում նոր առեղծվածների լուծմանը:

Ես ճոռոմարանության մեջ ընկա, որովհետև Սթրյովը ինքն էլ էր ճոռոմարանում: (Ով չգիտե, որ մարդ հուզմունքի պահին վկայ հերոսի նման է արտահայտվում): Նա աշխատում էր արտահայտել մի զգացմունք, որ առաջ անհայտ էր իրեն, և, շիմախաղով սովորական բուռերով ներկայացնել դա, նմանվեց այն միստիկին, որը ջանում է նկարագրել անասելի: Բայց նրա ասածներից մի բան էր ինձ պարզ. մարդիկ թեթևամտորեն են խոսում գեղեցկության մասին և այդ բանը այնքան անփութորեն են օգտագործում, որ այն կորցնում է իր արժեքը, և առարկան, որ պետք է արտահայտեր, անջատելով իր անունը հարյուրավոր սովորական հասկացություններից, կորցնում է իր արժեքը: Նրանք «գեղեցիկ» են կոչում շրջազգեստը, շանը, քարոզը և երբ երես առ երես հանդիպում են Գեղեցկությանը, շեն կարողանում ճանաչել այն: Նրանք աշխատում են կեղծ պաթոսով քողարկել իրենց շնչին մաքրել և դրանով բխցնում են իրենց ընկալունակությունը: Նման այն շառվատանին, որ կեղծում է ևրբե՛կ զգացած իր հոգևոր ուժը, նրանք շարաշահում են իրենց հոգևոր ուժերը և կորցնում դրանք: Բայց Սթրյովը, այդ անզուսպ խեղդատակը, իր անկեղծ ու ազնիվ հոգով, նույնքան ազնվորեն ու անկեղծորեն էր սիրում և հասկանում արվեստը: Նրա համար արվեստը այնպիսի նշանակություն ուներ, ինչպես աստված հավատացյալի համար, և երբ տեսնում էր այն, սարսափում էր:

— Ի՞նչ ասացիր Սթրիբլենդին, երբ տեսար նրան:

— Առաջարկեցի ինձ հետ Հոլանդիա գնալ:

Ես շշմել ու ապշահար տեսքով նայում էի Սթրյովին:

— Մենք երկուսս էլ սիրում էինք Բլանշին: Մորս տանը մի սենյակ կգտնվեր նրա համար: Ինձ թվում էր, թե ազրատ ու հասարակ մարդկանց հարեանությունը կհանգստացներ նրա

Հոգին: Եվ մտածում էի, որ նրանցից շատ օգտակար բան կսովորեր:

— Իսկ նա ի՞նչ ասաց:

— Ժպտաց և իմ կարծիքով մտածեց, որ ես հիմար եմ: Հետո ասաց, որ ժամանակ չունի դատարկ բաներով զբաղվելու:

Ես կցանկանայի, որ Սթրիբլենդը իր մերժումը այլ կերպ արտահայտեր:

— Նա ինձ տվեց Բլանչի դիմանկարը:

Ես դարմացել էի, թե ինչու էր Սթրիբլենդը այդպես վարվել, բայց ոչինչ չասացի: Երկուսս էլ երկար ժամանակ լուռ էինք:

— Իսկ ի՞նչ կարգադրություններ ես արել քո իրերի վերաբերյալ, — հարցրեցի ես վերջապես:

— Մի հրեա գնորդ ճարեցի և նա վատ չվճարեց: Նկարենոս տանում եմ հետս: Գրանցից բացի հիմա ես ոչինչ չունեմ, մի ճամպրուկ հագուստ և մի քանի զրթեր են մնացել:

— Ուրախ եմ, որ տուն ես գնում:

Ես հասկանում էի, որ նրա համար միակ փրկությունը անցյալի հետ կապերը խզելն էր: Հնարավոր է, նրա վիշտը, ու հիմա դեռ անտանելի էր, ժամանակի ընթացքում կմեղմանար, և բարեհաճ մոռացությունը կօգներ նրան նորից իր վրա վերցնելու կյանքի բեռը: Գիրկը դեռ երիտասարդ էր և մի քանի տարի հետո թախիժով, բայց ոչ ասանց հաճույթի կհիշեր իր դժբախտության մասին: Վաղ թե ուշ կամուսնանար մի ազնիվ հոյանդուհուհու հետ և կերջանկանար: Ես ժպտացի այն մտքից, թե մինչև իր կյանքի վերջը նա քանի վատ նկար է նկարելու:

Հաջորդ օրը ես ճանապարհ գրեցի նրան Ամստերդամ:

ՉՎՈՒՆ 40

Սեփական գործերով զբաղված լինելով, մի ամբողջ ամիս ես չհանդիպեցի որևէ մեկին, որ հիշեցներ ինձ այդ տխուր սրտամոլթյան մասին, և աստիճանաբար մոռացա այն: Բայց մի ֆեղեցիկ օր, երբ ինչ-որ գործով շապուում էի, փողոցում հանդիպեցի Սթրիբլենդին: Նրա տեսքը ինձ հիշեցրեց այն սարսափելի չեղքը, որ այդքան հաճույթով մոռացել էի, և ես հանկարծ գաղջանք զգացի այդ ամենի մեղավորի նկատմամբ: Գլխով բարեկեղծ, — երեխայություն կլիներ շքարեկիլը, — արագացրի

բալլերս, բայց մի բույս անց զգացի, որ մեկը ձեռքով ուսիս դիպավ:

— Շա՛տ եք շտապում, — բարեհոգաբար հարցրեց Սթրիբլենդը:

Նրան շատ բնորոշ էր սրտառուչություն ցուցաբերել այն մարդկանց նկատմամբ, ովքեր խուսափում էին իրենից, իսկ իմ սառը բարևը դրանում ոչ մի կասկած չէր թողել:

— Այո, — պատասխանեցի ես շրուջամբ:

— Ես մի փոքր կուղեկցեմ ձեզ, — ասաց նա:

— Ինչո՞ւ:

— Որպեսզի վայելիմ ձեր ընկերակցությունը:

Ես չպատասխանեցի, և նա լուռ քալեց կողքիցս: Մենք շարունակեցինք այդպես գնալ գրեթե քառորդ մղոն: Գրությունն ինձ մի փոքր կոմիկական թվաց: Վերջապես հայտնվեցինք գրասենյակային իրերի մի խանութի մոտ, և ես մտածեցի, չէ որ ինձ կարող է թուղթ պետք գալ: Դա նրանից ազատվելու լավ պատրվակ էր:

— Ես այստեղ եմ գնում: Տեսություն:

— Ես կսպասեմ ձեզ:

Թոթվեցի ուսերս ու մտա խանութ: Անմիջապես մտածեցի, որ ֆրանսիական թուղթը ոչ մի բանի պետք չէ և քանի որ խորամանկությունս շանցավ, շարժեր գնել մի բան, որի կարիքը չէի զգում: Ես այնպիսի բան խնդրեցի, որ գիտեի չկար և դուրս եկա փողոց:

— Գնեցի՞ք, ինչ որ ուզում էիք:

— Ոչ:

Մենք նորից շարունակեցինք լուռ քալել, մինչև որ դուրս եկանք մի հրապարակ, ուր մի քանի փողոցներ էին խաչաձևվում: Ես կանգնեցի ու հարցրի.

— Ո՞ր կողմ եք գնում:

— Որտեղ դուք, — ժպտաց նա:

— Ես տուն եմ գնում:

— Ես կանցնեմ ձեզ մոտ ծխամորձ ծխելու:

— Ավելի լավ կլիներ սպասեիք հրավերի, — սառը պատասխանեցի ես:

— Իհարկե, եթե հույս ունենայի, որ կհրավիրեր:

— Տեսնո՞ւմ եք ձեր դիմացի պատը, — հարցրեցի ես:

— Տեսնում եմ:

— Այդ դեպքում, իմ կարծիքով պետք է տեսնեք նաև այն, որ ես չեմ ցանկանում ձեր ընկերակցութիւնը:

— Խոստովանում եմ, ես արդեն կասկածում էի:

Ես չզիմացա և փոթկացրի: Իմ բնավորութեան թույլ կողմերից մեկն այն է, որ չեմ կարողանում ատել նրանց, ովքեր ստիպում են իմ ծիծաղել: Բայց անմիջապես հավաքեցի ինձ:

— Գուր գարշելի արարած եք: Ավելի զզվելի կենդանու եք բարեբախտաբար չեմ հանդիպել իմ կյանքում: Ինչո՞ւ եք փրկու-րում մի մարդու ընկերակցութիւն, որն ատում և արհամարհում է ձեզ:

— Ազգայնակս, իսկ ինչու եք ենթադրում, որ ինձ հետաքրքրում է իմ մասին ունեցած ձեր կարծիքը:

— Գրողը տանի, — ասացի ես զայրացած, որովհետև զգացի, որ իմ պատճառաբանութիւնները այնքան էլ պատիվ չեն բերում ինձ, — ես պարզապէս չեմ ուզում ճանաչել ձեզ:

— Վախենում եք փշացնե՞մ ձեզ:

Նրա տոնը զգացնել տվեց ինձ, որ ծիծաղելի եմ դառնում: Նայում էր ինձ շեղակի, իր սարդոնիկ ժպիտով:

— Ըստ երևույթին ծանր վիճակի մեջ եք, — նկատեցի ես լպիրշորեն:

— Ես շափազանց հիմար պետք է լինեի, որ հուսայի, թե կարող եմ պարտք վերցնել ձեզանից:

— Ըստ երևույթին շատ նեղն եք ընկել, որ սկսել եք շո-ղորոթել:

Նա լայն ժպտաց:

— Այնուամենայնիվ, դուք չեք կարողանում ատել ինձ, որով-հետև երբեմն-երբեմն սրամտելու հնարավորութիւն եմ տալիս ձեզ:

Ես կծեցի շրթունքներս, որպեսզի չծիծաղեմ: Նա ճակատա-գրակաւ: Ճշմարտութիւն ասաց: Ինձ դուր են զալիս այն մար-դիկ, որոնք թեկուզ արատավոր են, բայց խոսքի տակ չեն մնում: Ես արդեն սկսում էի զգալ, որ Սթրիբլենդի նկատմամբ ունեցած ատելութիւնս միայն կամքի լարումով կարող եմ պահպանել: Ես ընդունում էի իմ բարոյական թուլութիւնը և գիտեի, որ Սթրիբլենդին նախատելը իմ կողմից ինչ-որ լավով պողա է հի-շնջնում, և եթե ես էի զգում այդ, ուրեմն նա իր անսխալական ընազգով զգում էր առավել ևս: Նա անկասկած ծաղրում էր

ինձ: Ես շառարկեցի նրան և փորձեցի ուսերս թոթովելով ու գե-րեզմանային լուսթիւն պահպանելով փրկել արժանապատու-թիւնս:

ՊԼՈՒՆ 41

Մտածանք այն տանը, որտեղ ես ապրում էի, բայց ես շա-ռարկեցի նրան ներս գալ և լուս բարձրացա աստիճաններով: Սթրիբլենդը կրնկակոխ հետևեց ինձ: Նա առաջին անգամ էր ինձ մոտ լինում, բայց ոչ մի ուշադրութիւն չդարձրեց սենյակի կահավորանքին, չնայած քիչ շանք չէի թափել, որպեսզի աչքի համար հաճելի դարձնեի այն: Սեղանի վրա մի տուփ ծխախոտ կար, նա հանեց իր ծխամորճը, լցրեց և նստեց ոչ թե բազկա-թոռներից մեկին, այլ միակ հասարակ աթոռին, այն էլ կող-քանց:

— Եթե որոշել եք տեղավորվել այստեղ, ինչպես տանք, ինչո՞ւ չեք նստում բազկաթոռին, — հարցրեցի ես բորբոքված:

— Իսկ ինչո՞ւ եք այդքան անհանգստանում իմ հարմարու-թեան մասին:

— Ոչ թե ձեր, այլ իմ: Երբ որևէ մեկը անհարմար աթոռ է նստում, ես ինձ անհանգիստ եմ զգում:

Նա փոթկացրեց, բայց տեղից չշարժեց և լուս շարունակեց ծխել, ըստ երևույթին սուզված իր մտքերի մեջ և չնկատելով ինձ: Ինձ հետաքրքրում էր, թե ինչու է նա եկել:

Մինչև որ երկարատև սովորութիւնը չբացնի գրողի զգա-լունակութիւնը, նա ինքն է երկշտում այն բնազդից, որն այն-քան մեծ հետաքրքրութիւն է առաջացնում նրա մեջ մարդկային բնութեան տարօրինակութիւնների նկատմամբ, որ ի վիճակի չէ դատապարտելու և երես թեքելու դրանցից: Այն գեղարվեստա-կան հաճույթը, որ նա ստանում է շարիքը մտահայելուց, փոքր-ինչ վախեցնում է նրան: Բայց ազնվութիւնը ստիպում է նրան խոստովանել, որ նա ոչ այնքան պարսավում է ինչ-որ անվայել արարքներ, որքան ձգտում է դրանց պատճառներն իմանալ: Սրիկան, որին գրողը սրամաքանորեն զարգացած ու կատարյալ բնավորութեամբ է ստեղծել, հակառակ օրինականութեան ու կարգ-կանոնի, գրավում է նրան: Իմ կարծիքով. Շեքսպիրը Յագոյին ավելի մեծ հաճույթով է ստեղծել, քան Դեզդեմոնային,

որին կարծես լուսնի լուսից է հշուտել: Ընարավոր է, որ սրիկա-
ների ու խարդախների կերպարներ ստեղծելով, գրողը բավարա-
բութուն է տալիս բնագրների, որով նրան օժտել է բնությունը,
բայց քաղաքակիրթ աշխարհի սովորություններն ու օրենքները
ես են մղել դրանք զեպի ենթագիտակցության խորհրդավոր
զաղտնարանները: Կենդանություն տալով իր երեակայության
ծնունդին, նա կարծես ինքնուրույն կյանք է պարգևում իր «ես»-ի
այն մասին, որն այլ կերպ չի կարող արտահայտել իրեն: Նրա
ուրախությունը ազատագրման ուրախություն է:

Գրողը ավելի շատ կոչված է իմանալու, քան դատելու:

Մթրիքլենդը իսկական սարսափ և միաժամանակ սառը հե-
տաքրքրություն էր ներշնչում ինձ: Նա շփոթեցնում էր ինձ, բայց
ես շատ էի ուզում իմանալ նրա արարքների շարժառիթներն ու
վերարձեցմանը մի ողբերգության նկատմամբ, որ պատճառել
էր մարդկանց, որոնք այդքան բարի էին եղել նրա հանդեպ:

Ես համարձակորեն խրեցի հերձազանակը:

— Մթրյովն ասաց, որ նկարը, որի բնորոշ էին նրա կինն է,
ձեր ւտեղծագործություններից լավագույնն է:

Մթրիքլենդը ծխամորճը հանեց բերանից. նրա աչքերում
մպիտ փայլեց:

— Այո, շատ զվարճալի էր նրան նկարելը:

— Ինչո՞ւ Մթրյովին տվեցիք նկարը:

— Ես վերջացրել էի, այլևս պետք չէր ինձ:

— Գիտե՞ք, որ քիչ մնաց Գիրկը ոչնչացնելու արջ:

— Այդ նկարը այնքան էլ հաջող չատացվեց:

Նա լսեց, հետո նորից բերանից հանեց ծխամորճը և քմծի-
ծաղ տվեց:

— Իսկ գիտե՞ք, որ այդ մարդուկը ինձ մոտ եկավ:

— Մի՞թե նրա առաջարկը չհուզեց ձեզ:

— Այ, եմ կարծիքով դա հիմարություն ու սենտիմենտալու-
թյուն էր:

— Գուք, ըստ երևույթին, մոռացել եք, որ կործանեցիք նրա
կյանքը, — նկատեցի ես:

Նա մտախոհ շոյեց մորուքը:

— Նա շատ վատ նկարիչ է:

— Բայց և շատ յավ մարդ:

— Եվ հիանալի խոհարար, — քմծիձաղով ավելացրեց Մթրիքլե-
նդը:

Ինչ-որ անմարդկային բան կար նրա անգթություն մեջ, և ես
բոլորովին էլ մտադիր չէի փափկանկատ լինել նրա հետ:

— Իսկ ասացեք, ես զուտ հետաքրքրությունից դրդված եմ
հարցնում, Բլանշ Մթրյովի մահից հետո գոնե մի փոքր խղճի
խայթ զգացի՞ք:

Ես ուշադիր հետևում էի նրա դեմքի արտահայտությանը,
բայց այն բոլորովին չփոխվեց:

— Իսկ ինչո՞ւ պետք է խղճի խայթ զգալի:

— Ես ձեզ մի բանի փաստ կբերեմ: Գուք մահանում էիք,
և Գիրկը տեղափոխեց ձեզ իր մոտ: Նա մոր նման խնամեց ձեզ,
զոհաբերեց իր ժամանակը, հարմարությունները, փողերը: Նա
ազատեց ձեզ մահվան ճիրաններից:

Մթրիքլենդը թոթվեց ուսերը:

— Ողորմելի մարդը մեծ բավականություն է ստանում ուրիշ-
ների համար որևէ բան անելով: Դա է նրա կյանքը:

— Ենթադրենք դուք շնորհապարտ չէիք նրան, բայց ինչո՞ւ
խլեցիք նրա կնոջը: Նախքան ձեր հայտնվելը նրանք երջանիկ
էին: Ինչո՞ւ նրանց հանդիստ լիողեցիք:

— Իսկ ինչո՞ւ եք կարծում, որ նրանք երջանիկ էին:

— Դա անհնար էր:

— Ինչ խորաթափանց եք: Ձեր կարծիքով Բլանշը երբևիցե
կներեր Գիրկին այն ամենը, ինչ նա արել է նրա համար:

— Ի՞նչ եք ուզում ասել:

— Ձեզ հայտնի՞ է, թե ինչպես նա ամուսնացավ Բլանշի
հետ:

Ես բացասարար շարժեցի գլուխս:

— Նա Հոսմում ինչ-որ իշխանի տանը զատախարակուհի էր:
Իշխանի որդին գայթակղել էր նրան: Բլանշը կարծում էր,
որ նա կամուսնանա իր հետ, բայց նրան ցուրտ շարտեցին: Նա
հղի էր և փորձեց ինքնասպանություն գործել: Մթրյովը գտավ
նրան և ամուսնացավ հետը:

— Դա շատ բնորոշ է նրան: Ես երբեք նման փափկասիրտ
մարդու չեմ հանդիպել:

Ես հաճախ էի զարմանում, թե ինչը կարող էր այդքան ան-
համապատասխան երկու մարդկանց իրար միացնել, բայց նման
լացատրություն երբեք մտքովս չէր անցել: Գուցե գա էր կնոջ
նկատմամբ ունեցած Գիրկի անսովոր սիրտ պատճառը: Բլանշին

ցուցարեբա՞ծ նրա վերաբերմունքի մեջ ինչ-որ ավելի բան կար, բան կիրթը: Եվ, հիշում եմ, նրա զսպվածութիւնն մեջ էլ ինչ-որ թաքնված բան կար, որ չէի կարողանում պատկերացնել, միայն նոր հասկացա. դա լուկ խալտառակ գաղտնիքը թաքցնելու ձրգտումը չէր: Նրա հանգստութիւնը հիշեցնում էր մի կղզու անգորբութիւն, որի վրայով փոթորիկ էր անցել: Նրա ուրախութիւնը հուսահատութիւնն ուրախութիւնն էր: Մթրիքլենդը ընդհատեց մտքերս մի դիտողութեամբ, որն իր ցինիզմով ապշեցրեց ինձ:

— Կինը տղամարդուն կարող է ներել շարիքը, որ նա պատճառն է իրեն, բայց զոհարելութիւնները երբեք չի ների:

— Անհոգ եղեք, վրեժխնդրութիւն վտանգ չի սպառնում ձեզ:

Հաղիվ նշմարելի ժպիտ խաղաց նրա շրթներին:

— Հանուն սրամիտ խոսքի դուք միշտ պատրաստ եք զոհարել ձեր սկզբունքները, — ասաց նա:

— Իսկ ի՞նչ պատահեց երեխային:

— Երեխան մեռած ծնվեց, նրանց ամուսնութիւնն էր երեք, թե շորս ամիս հետո:

Այստեղ ես հարցրի այն մասին, ինչ միշտ էլ ամենաանհասկանալին էր եղել ինձ համար:

— Ասացեք խնդրեմ, իսկ ինչո՞ւ հետաքրքրվեցիք Բլանշ Մթրիքլով:

Նա երկար ժամանակ չէր պատասխանում, այնպես որ քիչ մնաց կրկնել հարցս:

— Ինչ իմանամ, — պատասխանեց նա վերջապես: — Նա տանել չէր կարողանում ինձ, իսկ դա զվարճալի էր:

— Հասկանալի է:

Հանկարծ Մթրիքլենդը զայրացավ:

— Գրողը տանի, ես ցանկանում էի նրան:

Բայց նա անմիջապէս ուշքի եկավ և ժպտալով նայեց ինձ:

— Սկզբում նա սարսափեց:

— Դուք նրան ասացի՞ք:

— Կարիք չկար, առանց այդ էլ նա տխուր: Ես ոչ մի բառ չասացի: Նա վախեցած էր: Վերջապէս տիրացա նրան:

Նրա խոսքերից զգացվեց, թե որքան մոյզգին է եղել նրա կիրթը: Ես անկախ ինձանից ցնդվեցի: Նա անսովոր նյութակալ:

գրկանքներ էր կրել իր կյանքում, և, հավանաբար, մարմինն ժամանակ առ ժամանակ դաժանորեն վրեժ էր լուծում նրա հետո: Բլանշին հանդիպելիս սատիրը հանկարծակի պուխ էր բարձրացրել նրա մեջ և անզոր մնալով ճանկերում մի բնագոյի, սրը հզոր էր ինչպէս բնութիւն վայրի ուժերը, նա անկարող էր արգեն դիմադրել իր ցանկութեանը, բանի որ ոչ խոհեմութիւնն և ոչ էլ երախտագիտութիւնն համար տեղ չէր մնացել նրա հոգում: — Բայց ինչո՞ւ որոշեցիք Բլանշին ձեզ հետ տանել, — հետաքրքրվեցի ես:

— Ես չէի ցանկանում, — պատասխանեց նա մտայնելով: — Եվ երբ Բլանշն ասաց, թե ինձ հետ է գալիս, Մթրիքլից պակաս չգարմացա: Ես նրան ասացի, երբ ձանձրացնի ինձ, ստիպված կլինի հեռանալ: Նա համաձայնվեց: — Մթրիքլենդը մի պահ լռեց: — Բլանշը հրաշալի մարմին ուներ, իսկ ես ուզում էի սերկ մարմին նկարել: Երբ վերջացրի նկարը, նա ինձ այլևս չէր հետաքրքրում:

— Բայց չէ որ նա ձեզ սիրում էր ամբողջ սրտով:

Մթրիքլենդը արագ ոտքի կլավ և սկսեց բայլել սենյակում:

— Ես սիրո կարիք չունեմ: Ժամանակ չունեմ դրա վրա կորցնելու: Սերը թուլութիւնն է: Բայց ես տղամարդ եմ և երբեմն կին եմ ցանկանում: Կիրքս բավարարելուց հետո մտածում եմ այլ բաների մասին: Ես չեմ կարող հաղթահարել ցանկութիւնս, բայց ատում եմ այն: Յանկութիւնը կապանքների մեջ է պահում հոգիս: Ես երազում եմ այն ժամանակների մասին, երբ սգաւ կլինեմ ամեն տեսակի ցանկութիւններից և կկարողանամ ամբողջովին նվիրվել աշխատանքիս: Քանի որ կանայք սիրելուց բացի ուրիշ բան չեն կարողանում անել, ծիծաղելի կարեորութիւն են տալիս դրան: Նրանք ցանկանում են համոզել մեզ, որ սերն է միակ կարևոր բանը կյանքում: Բայց սերը կյանքի միայն աննշան կողմն է: Ես ընդունում եմ սեռական ցանկութիւնը, այն բնական է ու առողջ, իսկ սերը հիվանդութիւնն է: Կանայք իմ հաճույքի համար գոյութիւն ունեն, բայց տանել չեմ կարող օգնական, բարեկամ, ընկեր լինելու նրանց հավանութիւնը:

Ես երբեք չէի տեսել, որ Մթրիքլենդը միանգամից այդքան շատ ու այդքան կրքոտ վրդովմունքով խոսեր: Բայց ոչ այստեղ և ոչ էլ որե՛ն տեղ ես մտադիր չեմ ճշգրտորեն վերաբաղակցել նրա բառերը: Նրա բառապաշարը շատ աղբատիկ էր, պերճախոսութիւնն էր բոլորովին զուրկ, այնպես որ ստիպված էի նրա

մտքերը ձևակերպել ձայնարկություններից, դեմքի արտահայտություններից, ժեստերից ու կցկատուր բացականչություններից:

— Դուք պետք է ապրեիք այն ժամանակներում, երբ կանայք ստրկուհիներ էին, իսկ տղամարդիկ՝ ստրկատերեր, — ասացի ես:

— Ես պարզապես նորմալ տղամարդ եմ:

Այդ դիտողությունը այնքան լուրջ արվեց, որ հնարավոր չէր շփոթազել: Բայց նա շարունակեց վանդակում փակված գազանի նման այս ու այն կողմ քայլել, աշխատելով հնարավորին շափ հասկանալի ձևով արտահայտել իր զգացածը:

— Երբ կիրնը սիրում է ձեզ, չի բավարարվում միևնույն շտրիքով: Ես ձեր հոգուն: Ես թույլ է և դրա համար էլ կրքոտորեն լիքշխանություն է ձգտում: Պակասի համաձայն չէ: Քանի որ հավի ուղեղ ունի, ատում է վերացականը, որն անընդունակ է հասկանալու նա զբաղված է կենցաղային մանրուքներով և ամեն իդեալական բան խանդ է առաջացնում նրա մեջ: Տղամարդու հոգին սլանում է տիեզերքի ամենաբարձր ոլորտները, իսկ կիրնը աշխատում է հաշվեմատյանի շրջանակներում պահել նրան: Հիշո՞ւմ եք կնոջս: Աստիճանաբար Բլանշն էլ սկսեց նույն հնարքներին դիմել: Անսահման համբերատարությամբ նա պատրաստվում էր ծուղակը գցել ու կապել ինձ, նա ցանկանում էր իր մակարդակին իջեցնել ինձ: Իմ մասին չէր էլ մտածում, միայն ուզում էր, որ ամբողջովին իրեն պատկանեմ: Եվ պատրաստ էր կատարել իմ յուրաքանչյուր ցանկությունը, բացառությամբ մի բանից՝ պոկ գալ ինձանից:

Ես որոշ ժամանակ լուռ էի:

— Իսկ ձեր կարծիքով ինչ պետք է նա աներ, երբ լքեցիք նրան:

— Կարող էր Սթրյովի մոտ վերագտնալ, — ասաց նա զրուգրոված: — Սթրյովը պատրաստ էր ընդունել նրան:

— Դուք մարդկայնությունից զուրկ եք, — պատասխանեցի ես: — Ասենք նման բաների մասին խոսել: Ընդհանուր, միևնույն է, թե կույր ծնված մարդուն նկարագրես մայրամուտի գեղեցկությունը:

Նա կանգնեց աթոռիս մոտ և դեմքի զարմացական արհամարհանքի արտահայտությամբ նայեց երեսիս:

— Ընդհանուր իրո՞ք միևնույն չէ Բլանշ Սթրյովը մահացել է, թե՛ ոչ:

Ես փոքր-ինչ մտածեցի, որովհետև բոլոր դեպքերում ուզում էի ճիշտ պատասխանել այդ հարցին:

— Հնարավոր է, որ ես խստասիրտ մարդ եմ, քանի որ նրա մահը առանձնապես չի վշտացնում ինձ: Կյանքը դեռ շատ բան ուներ նրան տալու: Եվ սարսափելի է, որ այդ ամենը այդքան անիմաստ դաժանությամբ խլվեց նրանից, և ի ամոթ ինձ, պետք է ասեմ, որ նրա ողբերգությունը իրականում չի մտահոգում ինձ:

— Զեր հայացքները համարձակ են, բայց համարձակություն չունեք պաշտպանելու դրանք: Կյանքը արժեք չունի: Բլանշ Սթրյովը ինքնասպանություն գործեց ոչ թե նրա համար, որ ես լքեցի նրան, այլ նրա համար, որ անհավասարակշռված և հիմար կին էր: Բայց հերիք է նրա մասին խոսենք, նա այնքան էլ կարևոր անձնավորություն չէր: Գնանք, ես ձեզ ցույց կտամ իմ նկարները:

Նա խոսում էր ինձ հետ, ինչպես մի երեխայի հետ, որի ուշադրությունը պետք էր շեղել: Ես զայրացել էի, բայց ավելի շատ ինձ, քան նրա վրա: Ես մտածում էի այն երջանիկ կյանքի մասին, որ Սթրյովները անց էին կացրել Մոսմարտի իրենց հարմարավետ արվեստանոցում, նրանց պարզության, բարեսրտության ու հյուրասիրության մասին: Ափսոս, որ անողորմ պատահականությունը դաժանորեն խորտակեց այդ ամենը: Բայց ամենադաժանն այն էր, որ կյանքը շարունակում էր ընթանալ իր հունով և անցողիկ զժբախտությունը ոչ մեկի հոգում հետք չէր թողել: Ես մտածում էի, Դիրկը, որ ավելի շուտ բուռն, քան խոր զգացմունքների տեր մարդ էր, շուտով կմոռանա իր վիշտը, բայց Բլանշը, միայն աստուծուն է հայտնի, թե ինչպիսի պայծառ հույսեր ու անուրջներ է ունեցել պատանեկան հասակում, ավելի լավ կիրներ, որ երբեք ծնված չլիներ: Այդ բոլորը շափուղանց անիմաստ ու դատարկ էր թվում:

Սթրիքլենդը գտել էր իր գլխարկը և սպասողական դիրքով նայում էր ինձ:

— Գալի՞ս եք:

— Ինչո՞ւ եք ծանոթություն պահպանում ինձ հետ, — հարցրեցի ես: — Զգիտեք, որ ես ատում ու արհամարհում եմ ձեզ:

Նա բարեհոգաբար քմծիծաղ տվեց:

— Դուք զայրանում եք միայն այն պատճառով, որ ինձ համար ոչ մի արժեք չունի, թե ինչ եք մտածում իմ մասին:

Ես զգացի, թե ինչպես անսպասելի զայրույթից կարմրեց ղեմքս: Այլ, պարզապես անհնարին էր նրան հասկացնել, որ միայն իր անգութ էգոիզմն է ստեղծելու առաջացնում: Ես ձգտում էի խոցել նրա կատարյալ անտարբերության զրահը: Բայց, այնուամենայնիվ, դիտեի, որ նրա ասածների մեջ ճշմարտություն կա: Գուցև անգիտակցաբար, բայց ուրիշների վրա ունեցած մեր իշխանությունը մենք չափում ենք նրանով, թե ինչպես են նրանք վերաբերվում իրենց մասին ունեցած մեր կարծիքին, և սկսում ենք ասել նրանց, ովքեր շեն են թարկվում մեր ազդեցությունը: Ավելի դժգոհ վիրավորանք չկա մարդկային հպարտության համար: Բայց ես չէի ուզում ցույց տալ, որ Սթրիբլենդի բռնությունը խոցել էին ինձ:

— Հնարավո՞ր է արդյոք բոլորովին հաշվի շառնել ուրիշներին, — հարցրեցի ես, ավելի շուտ ինձ, քան նրան: — Մարդ ամեն ինչով կախված է ուրիշներից: Ինքդ քեզ հետ և միայն քեզ համար ապրելու փորձերը դատապարտված են անհաջողության: Վաղ թե ուշ, ծերացած, հողմած ու հիվանդ դուք կտ եք սողալու ղեպի նախիր: Եվ երբ ձեր սիրտը հանգստի ու կարեկցանքի ձգտի, կամաչեք: Գուք փնտրում եք անհնարինը: Նորից եմ ասում, վաղ թե ուշ մարդ արարածը ձեր մեջ կսկսի կարոտել այն կապանքներին, որոնք կապում են նրան մարդկությանը:

— Գնանք նկարներս տեսնելու:

— Գուք երբևէ մտածե՞լ եք մահվան մասին:

— Ինչո՞ւ պետք է մտածեմ: Մահը շարժն զրան:

Ես զարմացած նրան նայեցի: Նա անշարժ կանգնած էր իմ առջև, քմծիծաղն աչքերում, և շնայած այդ ամենին, ես հանկարծ կռահեցի նրա մեջ մի բոցաշունչ, տառապյալ ոգի, որ ավելի բարձր նպատակի էր ձգտում, քան այն ամենը, ինչ կաշկանդված էր մարմնական կապանքներում: Ես մի պահ ականատես եղա անասելի որոնումների: Նայում էի մաշված հագուստներով, մեծ քթով, փայլող աչքերով, շեկ մորուքով ու զզզված մազերով այդ մարդուն և տարօրինակ կերպով իմ առջև տեսնում էի ոչ թե նրա մարմնական թաղանթը, այլ անմարմին ոգին:

— Գնանք տեսնենք ձեր նկարները, — ասացի ես:

Չգիտեմ թե ինչու, Սթրիբլենդը հանկարծ որոշեց ցույց տալ ինձ իր նկարները: Բայց ես շատ ուրախացա: Մարդն իր աշխատանքով է հիշում: Աշխարհիկ հարաբերություններում նա ցուցադրում է իրեն այնպես, ինչպես ցանկանում է երևալ, և նրա մասին ճիշտ գաղափար կարող ենք կազմել միայն նրա մանր ու չգիտակցված արարելներով և դեմքի արտահայտությունների ակամա փոփոխություններով: Այս կամ այն դիմակն ընդունելով, երբեմն մարդ այնպես է վարժվում դրան, որ իրոք զտնում է այն, ինչ սկզբում ցանկանում էր երևալ: Բայց իր գրքում կամ նկարում նա մերկ է ու անպաշտպան: Նրա հավակնտությունը ցույց կտա միայն նրա դատաբեկությունը: Փայտը մնում է փայտ, թեկուզ երկաթագույն ներկես: Օրիգինալ երեսալու ոչ մի ճիգ չի թաքցնի միջակությունը: Խորաթափանց դիտողը նույնիսկ ամենասովորական ստեղծագործության մեջ կտեսնի նկարչի հոգու ամենանվիրական գաղտնիքները:

Երբ բարձրանում էի Սթրիբլենդի ապրած տան անվերջանալի աստիճաններով, խոստովանում եմ, հուզվել էի: Ինձ թվում էր, թե զարմանալի հայտնագործության շեմին եմ գտնվում: Ներս մտնելով, ես հետաքրքրությամբ շուրջս նայեցի: Սենյակն ինձ ավելի փոքր ու մերկ թվաց, քան առաջ: Ինձ հետաքրքրում էր, թե ինչ կասեին իմ ծանոթ նկարիչները, որոնք աշխատում էին հսկայական արվեստանոցներում և հայտարարում, թե շեն կարող ստեղծագործել, եթե շրջապատող պայմանները իրենց ճաշակով շեն:

— Ավելի լավ կլինի կանգնեք այնտեղ, — ասաց Սթրիբլենդը՝ մատնացույց անելով այն տեղը, որտեղից նրա կարծիքով ևս ավելի լավ կարող էի տեսնել նկարները:

— Ըստ երևույթին չեք ուզում, որ ես խոսեմ, — հարցրեցի ես:

— Իհարկե, դուրը տանի, ավելի լավ կլինի լռել:

Նա մի նկար դրեց նկարակալին, թողեց որ մի երկու բոպե նայեմ, հետո հանեց և դրեց ուրիշը: Նա ցույց տվեց մոտ երեսուն նկար: Դա Սթրիբլենդի վեց տարիների աշխատանքի արդյունքն էր, այսինքն այն օրվանից, ինչ սկսել էր նկարել: Նա ոչ մի նկար չէր վաճառել: Կտավները տարբեր մեծության էին:

Փորձերը նատյուրմորտներ էին, իսկ ավելի մեծերը՝ բնապատկերներ: Սթրիբլենդն ուներ նաև մոտ վեց դիմանկար:

— Այսքանն է,— ասաց նա վերջապես:

Ես շատ կցանկանայի ասել, որ անմիջապես կոահեցի դբանց գեղեցկությունն ու արտակարգ ինքնատիպությունը: Եվ հիմա, երբ գրանցից շատերը նորից եմ տեսել, իսկ մնացածին ծանոթ եմ ռեպրոդուկցիաներից, զարմանում եմ, որ առաջին հայացքից դառն հիասթափություն պարեցի: Ես չգիտեի այն առանձնահատուկ սարսուռը, որ իսկական արվեստն է պատճառում: Սթրիբլենդի նկարները շփոթեցնում են գեղեցիկ ինձ, և ես չեմ կարողանում ինձ ներել, որ նույնիսկ մտքովս չանցավ գնել զրանցից զոնե մեկը: Ես բաց թողեցի երջանիկ պատահականությունը: Այդ նկարների մեծ մասը թանգարաններ ընկան, մնացածը զարգարում են հարուստ գիլետանաների կոլեկցիաները: Ես աշխատում եմ արդարացում գտնել ինձ համար: Ինձ թվում է, որ լավ ճաշակ ունեմ, միայն ինքնատիպությունն է պակասում: Արվեստից քիչ բան եմ հասկանում և միշտ այն ճանապարհով եմ գնում, որն ուրիշներն են հայրվել ինձ համար: Այդ ժամանակ ես խոնարհվում էի իմ պրոֆեսորների առջև: Երազում էի ձեռք բերել Սիալեյի¹ ու Գեգայի² ստեղծագործությունները, պաշտում էի Մանեին: Նրա «Օլիմպիան» ինձ թվում էր նորագույն ժամանակների մեծագույն ստեղծագործությունը, իսկ «Նախաճաշ խոտերի վրա» կտավը հուզում էր ինձ մինչև հոգուս խորքը: Ինձ թվում էր, որ այդ գործերը արվեստի վերջին խոսքն են:

Ես չեմ նկարագրի Սթրիբլենդի ցույց տված նկարները: Նման նկարագրությունները միշտ էլ ձանձրալի են, և բացի այդ նրա նկարները հայտնի են բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են գեղարվեստով: Հիմա, երբ Սթրիբլենդի արվեստը այդքան վիթխարի ազդեցություն է թողել ժամանակակից գեղանկարչության վրա և երբ այն անհայտ երկիրը, որի առաջին ուսումնասիրողներից մեկը նա եղավ, արդեն, այսպես ասած, քարտեզագրված է, ովքեր առաջին անգամ տեսնում են Սթրիբլենդի նկարները, ներքնապես ավելի լավ են նախապատրաստված դրան, իսկ ես երբևէ նման բան չէի տեսել: Առաջին հերթին ինձ տալեցրեց նրա տեխնիկան, որն ինձ անճոռնի թվաց: Վարժված լինելով հին վարպետների նկարներին և համոզված լինելով, որ հնգրը նոր ժամանակների մեծագույն գծանկարիչն է, ես սրտընցի, որ Սթրիբլենդը չափազանց վատ է նկարում: Ոչ մի պատ-

կերացում չունեի, որ պարզեցումն էր նրա նպատակը: Հիշում եմ, թե ինչպես զայրացա, որ նատյուրմորտներից մեկում կուր փսեկն տն է և նրա մեջ գրված նարինջները՝ ծուռ կողքերով: Դիմանկարները բնական շափսերից ավելի մեծ էին և վանող տպավորություն էին թողնում: Այդ դեմքերը ծաղրանկար էին հիշեցնում: Նրանք ինձ համար բոլորովին նոր եղանակով էին նկարված: Բնանկարները ավելի մեծ տարակուսանք պատճառեցին ինձ: Դրանցից մի երկուսում պատկերված էր անտառ: Ծոռտեմբյուրում, մի քանիսում էլ Փարիզի փողոցները: Առաջին հայացքից այնպիսի տպավորություն ստացա, կարծես հարբած կառապան է նկարել: Ես պարզապես ապշել էի: Չափազանց աչք ծակող գույներ և բնդհանուր առմամբ ինչ-որ անհեթեթ, անհասկանալի ֆարս: Հիշելով այդ ամենը, ես ավելի եմ զարմանում Սթրյուվի նուրբ հոտառության վրա: Նա առաջին իսկ հայացքից հասկացավ, որ այստեղ խոսքը արվեստի մեջ կատարվող հեղաշրջման մասին է, և գրեթե սաղմնային վիճակում ձանաչեց մի հանճարի, որին հիմա ամբողջ աշխարհն է ընդունում:

Թեև շվարել ու շփոթվել էի, այնուամենայնիվ, տպավորությունը ցնցող էր: Նույնիսկ ես, իմ սարսափելի տգիտությունը հանդերձ, զգացի, որ այստեղ մի մեծ ուժ է ուզում արտահայտել իրեն: Հետաքրքրությունից բոլորովին հուզվել էի: Ես պարզ զգում էի, որ այդ նկարները ինչ-որ բան ունեն ասելու, որ շատ կարևոր էր ինձ համար, բայց թե ինչ, դեռ չգիտեի: Դրանք այլանդակ էին թվում ինձ, բայց ինչ-որ մեծ ու չվերձանված գաղտնիք, ինչ-որ անսովոր կերպով հուզող ու տանջող բան կար դրանց մեջ: Ես չկարողացա վերլուծել այն զգացմունքները, որ այդ նկարները առաջացրին իմ մեջ: Թառեքն անգոր էին այստեղ: Ինձ թվաց, թե Սթրիբլենդը նյութական առարկաների մեջ աղոտ կերպով ինչ-որ հոգևոր իմաստ է տեսել, որ այնքան անսովոր էր, որ կարողացել էր միայն անորոշ սիմվոլներով ակնարկել այդ մասին: Կարծես նա տիեզերքի բառսում գտել էր մի նոր ձև և աշխատել էր հոգեկան անսահման անձկության մեջ վերարտադրել այն: Ես տեսա մի տառապալալ հոգի, որ փորձել է արտահայտել իրեն և դրանով ազատագրվել:

Ես շրջվեցի դեպի Սթրիբլենդը:

— Իմ կարծիքով դուք արտահայտման սխալ միջոց եք ընտրել:

— Ինչ եք դուրս տալիս, գրողը տանի:

— Հավանաբար դուք աշխատում եք ինչ-որ բան ասել, իսկ թե ինչ, չգիտեմ, բայց չեմ կարծում, որ դրա արտահայտման լավագույն միջոցը գեղանկարչությունն է:

Նա սխալվում էի, ենթադրելով, որ Սթրիբլենդի նկարները տեսնելով, կգտնեմ նրա ասարթինակ անձը հասկանալու բանալին: Իրականում դրանք միայն պիկացրիին իմ զարմանքը: Այժմ ես բոլորովին ոչինչ չէի հասկանում: Միակ բանը, որ պարզ էր ինձ համար, — հնարավոր է, որ դա էլ էր երևակայության խաղ, — այն էր, որ նա ձգտում էր ազատվել իր վրա իշխող ինչ-որ ուժից: Բայց թե ինչ ուժ էր դա և ինչ էր նշանակում ազատվել գրանից, մնում էր անորոշ: Մեզանից յուրաքանչյուրը մենակ է այս աշխարհում, փակված պղնձե աշտարակում և իր նմանների հետ կարող է հաղորդակցվել միայն նշաններով: Բայց այդ նշանները ընդհանուր չեն բոլորի համար, այդ իսկ պատճառով նրանց իմաստը ազոտ է ու անորոշ: Մենք հուսահատորեն ձգտում ենք ուրիշներին հաղորդել մեր սրտի գանձերը, բայց նրանք ի վիճակի չեն ընդունել դրանք, դրա համար էլ մենակ թափառում ենք աշխարհում, մեր նմանների հետ կողք կողքի, բայց ո՛չ նրանց հետ միասին, առանց նրանց հասկանալու և հասկացվելու նրանցից: Մենք նման ենք այն մարդկանց, որոնք ասորում են մի երկրում, որի լեզուն գրեթե չգիտեն, և չնայած ուզում են շատ գեղեցիկ ու խորիմաստ մտքեր արտահայտել, բայց գատապարտված են ասելու միայն պատրաստի ֆրազներ գրուցագրքից: Նրանց ուղեգրները լիքն են հետաքրքիր գաղափարներով, բայց կարող են միայն ասել. «Պարտիզպանի հորաբույրը տանն է մոռացել իր հովանոցը»:

Այսպիսով Սթրիբլենդի նկարների թողած հիմնական տպավորությունն այն էր, որ նա անհավասարի ջանք էր գործադրում ինչ-որ հոգեվիճակ արտահայտելու և այդ ջանքերի մեջ, մտածեցի ես, պետք է փնտրել այն ամենի բացատրությունը, որ այդքան ապշեցրել էր ինձ: Պարզ էր, որ գույներն ու ձևերը առանձնահատուկ նշանակություն ունեին Սթրիբլենդի համար: Նա անհավասարելի պահանջ ուներ արտահայտելու այն, ինչ զգում էր, և միայն այդ նպատակով էր ստեղծում գույներն ու ձևերը: Նա առանց տատանվելու պարզեցնում, նույնիսկ ազավաղում էր թե գույնը և թե ձևը, եթե գա նրան մոտեցնում էր այն անիմանալիին, որ փնտրում էր: Փաստերը ոչ մի նշանակություն չունեին նրա համար, քանի որ դատարկ պատահականու-

թյունների հետևում աշխատում էր տեսնել այն, ինչ կարևոր էր համարում: Թվում էր, թե նա ճանաչել է տիեզերքի ոգին և պարտավոր է արտահայտել այն: Չնայած այդ նկարները առաջին հայացքից շփոթմունք ու տարակուսանք էին պատճառում, բայց և հուզում էին մարդու եվ չգիտեմ, թե ինչու ևս բոլորովին անսպասելիորեն անսահման կարեկցանք զգացի Սթրիբլենդի նկատմամբ:

— Հիմա ինձ թվում է հասկանում եմ, թե ինչու անձնատուր եղաք Բլանչ Սթրյոփի նկատմամբ ունեցած ձեր ղզացմունքներին, — ասացի ես:

— Ինչո՞ւ:

— Արիությունը լքեց ձեզ: Ձեր մարմնական թուլությունը փոխանցվեց ձեր հոգուն: Չգիտեմ, թե ինչ անսահման թախիծ է համակել ձեզ, որ այդպես մղում է վտանգավոր ու միայնակ որոնումների մի նպատակի, ուր վերջնական աղատագրում եք սպասում ձեզ տանջող ոգուց: Դուք նման եք այն հավերժական ուխտագնացին, որը ձգտում է մի սրբության, որ հավանաբար գոյություն էլ չունի: Չգիտեմ ինչ անհասանելի նիրվանայի եք ձգտում: Հավանաբար, ինքներդ էլ չգիտեք: Միգուցե ճշմարտություն ու Ազատություն եք փնտրում և մի պահ ձեզ թվաց, թե սերը բաղձալի ազատություն կրերի: Իմ կարծիքով, ձեր հոգնած հոգին հանգիստ էր փնտրում կնոջ բազուկների մեջ, բայց երբ չգտաք այն, ատեցիք այդ կնոջը: Դուք անողորմ եղաք նրա նկատմամբ, որովհետև անողորմ եք նաև ձեր նկատմամբ: Դուք վախեց սպանեցիք նրան, որովհետև դեռ գոզում էիք այն վտանգից, որից հենց նոր էիք խուսափել:

Նա սառը ժպտաց և շոյեց մորուքը:

— Այ թե սենտիմենտալն եք, հա, բարեկամս:

Մի շաբաթ հետո պատահաբար լսեցի, որ Սթրիբլենդը Մարսել է գնացել: Այլևս երբեք չտեսա նրան:

Նախապես զգում եմ, որ այն ամենը, ինչ գրել եմ Սթրիբլենդի մասին, կարող է շատ անբավարար թվալ: Ես նկարագրել եմ որոշ դեպքեր, որոնց ակնատեսն եմ եղել, բայց դրանք անորոշ են մնացել, որովհետև չգիտեմ դրանց սկզբնապատճառները:

Դեպքերից ամենատարօրինակը՝ Սթրիքլենդի նկարիչ դառնալու որոշումը, իմ պատմութեան մեջ պատահական է թվում, չնայած Սթրիքլենդը նման որոշում կայացնելու հիմնավոր պատճառներ պետք է ունենար, բայց թե որն էր այդ պատճառը, չգիտեմ: Նրա սեփական խոսքերից ես ոչինչ չկարողացա պարզել: Եթե ես վեպ գրեի և ոչ թե վերապատմեի արտասովոր մարդու մասին ինձ հայտնի փաստերը, ամեն տեսակի բացատրություն կհորինեի նրա հոգևոր հեղաշրջման մասին: Հավանաբար կպատմեի, թե ինչպիսի մեծ հակում ուներ նա գեպի գեղանկարչությունը, թե ինչպես այն ճնշվեց հոր կամքով մանկական տարիներին կամ էլ զո՛հ դարձավ մի կտոր հաց վաստակելու անհրաժեշտությունը: Կպատկերեի, թե ինչպիսի զայրույթով էր նա վերաբերվում կյանքի պահանջներին և արվեստի նկատմամբ ունեցած կրքոտ սիրո ու բորսային միջնորդի իր մասնագիտության միջև եղած պայքարը նկարագրելով, նույնիսկ ընթերցողի համակրանքը կարջնացսեի նրա նկատմամբ: Ես բավական պատկառազուտ ֆիզուրա կդարձնեի նրան: Հնարավոր է, որ ինչ-որ մեկը նույնիսկ նոր Պրոմեթեոս տեսներ նրա մեջ, և այնպես ստացվեր, որ ես ժամանակակից վարկած ստեղծեի մի հերոսի մասին, ով հանուն մարդկության բարօրության կրեց պրոմեթեոսյան նզովքի բոլոր տառապանքները: Իսկ դա միշտ էլ հետաքրքրաշարժ սյուժե է:

Նույն հաջողությամբ ես կարող էի գտնել ընտանեկան հարաբերություններում ունեցած նրա վարքագծի դրդապատճառները: Այստեղ ես ձեռքիս տակ մեկ տասնյակից ավելի տարբերակ կարող էի ունենալ: Օրինակ, թաքնված տաղանդը ի հայտ է գալիս շնորհիվ գրողների ու նկարիչների հետ ունեցած ծանոթության, որոնց հասարակության մեջ մուտք ունի նրա կինը, կամ, չհամակերպվելով ընտանեկան կյանքին, նա ինքնամոռի է դառնում, կամ էլ սիրային պատմությունը բոցակեզ հրգեհի է վերածում այն կրակը, որն իմ պատկերմամբ, սկզբում հագիվ էր առկայծում նրա հոգում: Այդ դեպքում ես ըստ երևույթին ստիպված կլինեի բոլորովին այլ կերպ պատկերելու միսիս Սթրիքլենդին: Անտեսելով փաստերը, ես նրան կգարձնեի ամուսնու հոգևոր ուշահանգնեք չհասկացող փնթիմիս, ծանձրալի կամ էլ կեզձ բարեպաշտ կին: Սթրիքլենդի ամուսնությունը կպատկերեի որպես տևական մի տառապանք, որից ազատվելու միակ ելքը փախուստն էր: Հավանաբար վառ գույներով կնկարագրեի

այն համբերատար վերաբերմունքը, որ նա ցուցաբերում էր հոգեպես իրեն օտար կողակցի նկատմամբ և այն խզճահարությունը, որը երկար ժամանակ թույլ չէր տալիս նրան ազատվելու կնոջ հետ ապրելու ծանր բեռից: Երեխաներին, իհարկե, բոլորովին կանտեսեի:

Կարելի էր նաև բավական տպավորիչ պատմություն ստեղծել, ծանոթացնելով Սթրիքլենդին մի ծնր նկարչի հետ, որին կամ կարիքը, կամ էլ հարստության տենչը մի ժամանակ ստիպել են հրաժարվել իր կոշումից: Եվ Սթրիքլենդի մեջ նկատելով այն հնարավորությունները, որ մի ժամանակ կորցրել էր ինքը, ծերունին համոզում է նրան վերջ տալ նախկին կյանքին և ամբողջովին նվիրվել արվեստի սրբազան բռնակալությանը: Հարստության ու բարձր դիրքի հասած այդ ծերունուն, որն աշխատում է ուրիշի միջոցով ապրել այն ամենը, ինչի համար ինքը քաջություն չի ունեցել, չնայած հասկացել է, որ արվեստն է մարդու լավագույն բաժինը, պետք է փոքր-ինչ հումորով ներկայացնել:


Փաստերն առանձնապես մեծ նշանակություն չունեն: Սթրիքլենդը դպրոցն ավարտելուց հետո անմիջապես ընդունվեց բարսայական միջնորդի գրասենյակ, առանց բարոյական տենչանք զգալու: Նախքան ամուսնանալը նա ապրում էր ինչպես իր տարիքի բոլոր երիտասարդները: Դերքի կամ օքսֆորդյան ու քեմբրիջյան խաղերի ժամանակ փոքր-ինչ խաղում էր բորսայում, պատահում էր մի երկու սովերեն տարվում: Ազատ ժամանակ բուցքամարտով էր պարապում: Իսկ նրա բուխարիկի վրա դրված էին միսիս Լանգթրիի՝ ու Մերի Անդերսոնի² լուսանկարները: Նա կարգում էր «Փանջ» և «Սփորթինգ թայմս»-ը: Գնում էր Հեմփսթեյ պարտիս:

Առանձնապես մեծ նշանակություն չունի, որ ես Սթրիքլենդին երկար ժամանակ կորցրեի տեսադաշտից: Այն տարիները, որ նա անցկացրեց նկարչական դժվարին արվեստում վարպետության հասնելու պայքարի մեջ, բավական միապաղաղ եղան: Իսկ թե ինչով էր նա ստիպված գրադվել իր ապրուստը հայթայթելու համար, զժվար թե որևէ հետաքրքրություն ներկայացնի իրենից: Եվ պատմել այդ մասին կնշանակեի պատմել ուրիշ մարդկանց կյանքի մասին: Բացի այդ չեմ կարծում, թե այդ ամենը որևէ ազդեցություն է թողել նրա բնավորության վրա: Սթրիքլենդը այնպիսի տեսարանների էր ակննատես եղել, որոնք կարող էին


հիանալի նյութ դառնալ ժամանակակից Փարիզի մասին խաբեբայապատում մի վեպի համար, բայց դրանք երբեք չէին հետաքրքրել նրան, և իր խոսքերից դատելով, Փարիզում անցկացրած այդ տարիների կյանքը ոչ մի տպավորություն չէր թողել նրա վրա: Միգուցե երբ այստեղ եկավ, արդեն բավական ծեղ էր և դրա համար էլ զոհ չդարձավ մեծ քաղաքի կախարհանքներին: Ամենատարօրինակն այն էր, որ Սթրիբլենդը ոչ միայն միշտ պրակտիկ, այլև բացառապես գործարար մարդ էր թվում: Այդ տարիներին նրա կյանքը, անկասկած, լի էր ուսման-տիկայով, բայց նա չէր նկատում դա: Որպեսզի մարդ զգա կյանքի ուսմանտիկան, ըստ երևույթին, պետք է փոքր-ինչ դերասան լինի և կարողանա ինքն իրենից դուրս գալով անաշտորեն և մխտամանակ խոր հետաքրքրությամբ հետևել իր գործողություններին: Բայց Սթրիբլենդը բառացիորեն ընդունակ չէր նրման երկատման: Ես երբեք չեմ հանդիպել մեկին, որ նրա պես քիչ զբաղված լիներ սեփական անձով: Գծբախտաբար չեմ կարող նկարագրել այն փշոտ ճանապարհը, որով նա հասավ իր արվեստի բարձրությանը: Եթե կարողանալի ցույց տալ, թե ինչպիսի խիզախությամբ էր նա տանում անհաջողությունները, ինչպիսի արիություններ էր դիմագրավում հուսահատությունը, ինչպիսի համառություններ էր պայքարում նկարչի ամենաերգվյալ թշնամի կասկածանքների դեմ, հավանաբար համակրանք կշարժեր մի մարդու նկատմամբ, որ— ես դա լավ եմ հասկանում— բոլորովին անհամակրելի է թվում: Բայց ես ոչինչ չունեմ այդ մասին ասելու: Երբեք Սթրիբլենդին աշխատելիս չեմ տեսել, ինչպես հավանաբար ոչ ոք չի տեսել: Իր պայքարի գաղտնիքը նա ոչ ոքի չէր ասում: Եթե արվեստանոցի միայնության մեջ նա նույնիսկ հուսահատ գոտեմարտի էր բռնվում տիրոջ հրեշտակի հետ, միևնույն է, ոչ մի կենդանի հոգի չէր իմանում նրա տառապանքների մասին:

Այժմ, երբ խոսքը Բլանշ Սթրյուվի հետ ունեցած նրա կապին է վերաբերում, ցավոք սրտի, բացի առանձին, իրար շկապակցվող փաստերից տրամադրությանս տակ ուրիշ ոչինչ չունեմ: Պատմությունս կուռ դարձնելու համար պետք է նկարագրեի նրանց ողբերգական միության ընթացքը, բայց ոչինչ չգիտեմ նրանց երեք ամսվա համատեղ կյանքի մասին: Չգիտեմ, թե ինչպես էին անցկացնում ժամանակը և ինչի մասին խոսում: Օրը քսանչորս ժամ ունի, իսկ զգացմունքը հազվադեպ պահերի







Маһана Но Атуа. (Աստվածորդան օր)



Te Reioa. (Մրազ)



Faa Iheihe. (Զարդարանք)



Contes Barbareo. (Քարրարական պատմություններ)

է հասնում իր գազաթնակետին: Ես կարող եմ միայն երևակա-
յել, թե ինչ էին անում նրանք մնացած ժամանակը: Քանի դեռ
լույս էր, և Բլանշը ուժասպառ չէր եղել, Սթրիբլենդը նկարում էր
նրան, իսկ Բլանշը գայրանում էր՝ տեսնելով Սթրիբլենդին աշ-
խատանքի մեջ խորասուզված: Բլանշը նրա համար գոյություն
ունենր որպես բնորոշի և ոչ թե սիրուհի: Հետո դեռ շատ ազատ
ժամեր էին մնում, և նրանք կողք կողքի ապրում էին լիակատար
լուսթյան մեջ: Գա ըստ երևույթին վախեցնում էր Բլանշին Երբ
Սթրիբլենդն առաջ, թե Բլանշ Սթրիբլը իր մոտ գալով կարծես
վրեժ է լուծել Գիրկից, որն օգնության էր հասել նրան կյանքի
ողբերգական վայրկյանին, դրանով նա առիթ տվեց բազմաթիվ
կասկածանքների: Բայց հուսով եմ, որ նա սխալվում էր, այլա-
պես դա սարսափելի կլիներ: Չնայած ո՞վ կարող է թափանցել
մարդկային սրտի գաղտնիքների մեջ: Իհարկե ոչ նրանք, ովքեր
պարկեշտ ու նորմալ զգացմունքներ են սպասում նրանից: Երբ
Բլանշը հասկացավ, որ, բացի կրքի պահերից, Սթրիբլենդը օտար
է մնում իրեն, հավանաբար հուսահատության մեջ ընկավ, և երբ
նրա համար պարզ դարձավ, որ Սթրիբլենդի համար ինքը ոչ
քե անհատ է, այլ հաճույքի գործիք, սկսեց նրան իրեն կապելու
խղճուկ փորձեր անել: Աշխատեց կոմֆորտով շրջապատել նրան,
առանց նկատելու, որ կոմֆորտը ոչ մի արժեք չուներ այդ մարդու
համար: Ամեն տեսակի հնարամտություն էր գործադրում նրա
համար համեղ կերակուրների պատրաստելու համար, չնկատելով,
որ նա բոլորովին անտարբեր է ուտելիքի նկատմամբ: Նա վախե-
նում էր մենակ թողնել Սթրիբլենդին, իր ուշադրությունով հե-
տապնդում էր նրան, և երբ նրա կիրքը մարում էր, աշխատում
էր նորից բորբոքել այն, որովհետև նման պահերին պատրանք
էր ունենում, իբր Սթրիբլենդը իրեն է պատկանում: Միգուցե
Բլանշը մտովի հասկանում էր, որ շղթաները, որոնցով կապել
էր նրան, միայն կործանման բնազդ են արթնացնում Սթրիբ-
լենդի մեջ, ինչպես երբ տեսնում ես պատուհանի հայելանման
ապակին, ցանկություն ես ունենում քար նետել վրան, բայց
նրա սիրտը խուլ էր մնում բանականության ձայնին և շարու-
նակում էր գնալ մի ճանապարհով, որը (այստեղ նա չէր
սխալվում) ճակատագրական էր լինելու: Նա պետք է որ շատ
դժբախտ լիներ: Բայց կույր սերը ստիպում էր հավատալ մի
բանի, որն ուզում էր, որ իրականություն լիներ, և այնքան էր
11 — Լուսին և վեցպենտանոց

ւերում Մթրիբլենդին, որ Բլանշին անհնարին էր թվում, Բլանշը Մթրիբլենդը չէր արձագանքելու իր սիրուն:

Բայց դժբախտությունն այն է, որ Մթրիբլենդի մասին շարժ իմ պատմությունը ավելի շատ թերություններ ունի, քան նրա կյանքի մասին եղած փաստերի սլակասոր: Ես շատ եմ գրել կանանց հետ ունեցած նրա հարաբերությունների մասին: Չնայած զրանք շատ ուշագրավ էին, բայց աննշան դեր խաղացին նրա կյանքում: Իրոք որ ճակատագրի ծագը էր դա և կանանց համար, որոնք ճանաչում էին նրան, այդ հարաբերությունները ողբերգական էին զառնում: Իրականում Մթրիբլենդի կյանքը բաղկացած էր պատրանքներից ու տիտանական աշխատանքից:

Շենց այստեղ էլ սկսվում է գրական կեղծիքը: Մերը, որպես կանոն, մարդու կյանքի դրվագներից մեկն է, իսկ վերջերում մեծ տեղ են տալիս զրան, որը չի համապատասխանում իրական կյանքին: Քիչ տղամարդ կգտնվի, որոնց համար ամենակարևոր բանը աշխարհում սերն է, և զրանք մեծ մասամբ անհետաքրքիր սղամարդիկ են: Նրանց արհամարհում են նույնիսկ կանայք, որոնց համար սերը վեր է ամեն ինչից: Երկրպագելը շոյում է կանանց, հուզում, բայց նրանք ներքնապես զգում են, որ այդ օրհայի տղամարդիկ խղճուկ արարածներ են: Նույնիսկ այն կարճատև պահերին, երբ տղամարդը սիրում է, նա զբաղված է նաև այլ գործերով, որոնք շեղում են նրա միտքը սիրո սուրբալիցի: Մեկի ուշադրությունը գրավում է աշխատանքը, որ նրան ապրուստի միջոցներ է տալիս, մյուսը տարված է սպորտով, մի ուրիշը՝ արվեստով: Տղամարդկանց մեծամասնությունը իրենց գործունեությունը ծավալում են տարբեր բնագավառներում: Նրանք ընդունակ են ամբողջովին կենտրոնանալու միայն այն բանի վրա, որ ավելի զեպրում հետաքրքրում է նրանց, և արտանդում են, երբ մեկը խանգարում է մյուսին: Միտք մեջ տղամարդու և կնոջ տարբերությունն այն է, որ կինը ամբողջ օրն է սիրում, իսկ տղամարդը՝ երբեմն:

Յանկասիրությունը շատ քիչ տեղ էր զբաղում Մթրիբլենդի կյանքում: Գա նրա համար երկրորդական և ձանձրացնող բան էր, որսովհետև հոգին այլ հորիզոնների էր ձգտում: Նա բուռն կրթների տեր էր, և ցանկասիրությունը երբեմն այնպես էր տիրում, որ նետվում էր տուփանքի օրգիալի մեջ, բայց ատում էր այդ բնագոյը, որը զրկում էր նրան ինքնատիրապետումից: Ինձ թվում է, որ նա ատում էր նույնիսկ կրթի խրախճանքն իր հետ

խառը կնոջը: Եվ երբ ուշքի էր դալիս, զղվանք էր զգում այդ կնոջ նկատմամբ, որ քիչ առաջ հաճույք է պատճառել իրեն: Նրա մտքերը անմիջապես հրեղեն երկինք էին սլանում, և այնպիսի արտաք էր զգում կնոջ նկատմամբ, ինչպես ծաղիկից ծաղիկ խոշոր խալտարակա թիթեռնիկը անհրապույր հարսնյակի նկատմամբ, որից նա քիչ առաջ էր հաղթականորեն ծնունդ անել: Իմ կարծիքով արվեստը սեռական բնագոյի դրսևորում է: Միևնույն զգացմունքն է հուզում մարդու սիրտը, երբ տեսնում է մի գեղեցիկ կնոջ, նեպոլիտանական ժոցը լուսնկա դիշերին և Տիցիանի «Փաղումը»: Շատ ննարավոր է, որ Մթրիբլենդը ատում էր սեռական բնագոյի նորմալ դրսևորումը, որովհետև զեզարվեստական ստեղծագործությունից ստացած հաճույքի հետ համեմատած դա ստոր էր թվում նրան: Ինձ համար էլ է տարօրինակ, որ նկարագրելով դաժան, եսամուլ, կուպիտ ու զգայուն մարդու, վերջապես դալիս եմ այն եզրակացություն, որ նա մեծ իրեալիստ է: Բայց փաստը մնում է փաստ:

Նա ավելի աղքատ էր ապրում, քան որեւէ արհեստավոր Աշխատում էր շատ, բուրբուլին շենաքերքիկով այն ամենով, ինչ մարդկանց մեծամասնությունը կյանքի զարդն է համարում: Փողի նկատմամբ անտարբեր էր, փառքի՝ նույնպես: Բայց շարժե գովերգել նրան, որ դիմացավ գայթակցությանը և հասարակությունից հեռ կոմպրոմիսի մեջ մտնելու ոչ մի բայ շարժեց, մի բան, որ մենք բուրբուլ էլ մեծ սիրով ենք անում: Գայթակցությունը խորթ էր նրան: Երբեք մտքով չէր անցնում կոմպրոմիսի հնարավորությունը: Նա Փարիզում ավելի մենակ էր ապրում, քան ճգնավորը Թեբեսի անտղատում: Բացի իրեն հանգիստ թողնելուց, ուրիշ ոչինչ չէր պահանջում մարդկանցից: Միայն մի նպատակ էր ձգտելով, նա զրան հասնելու համար պատրաստ էր դժարերել ոչ միայն իրեն (շատերն են ընդունակ զրան), այլ նաև ուրիշներին: Նա երազանք ուներ:

Այո, Մթրիբլենդը վատ մարդ էր, բայց միաժամանակ և մեծ մարդ:

ԳԼՈՒԽ 44

Արվեստի վերաբերյալ նկարչի հայացքները որոշակի նշանակություն ունեն, այդ իսկ պատճառով ես տեղին եմ համարում մի քանի խոսք ասել, թե ինչ կարծիք ուներ Մթրիբլենդը անց-

չալի մեծ վարպետների մասին: Իհարկե, ես շատ բան չեմ
իմանում: Մթրիբլենդը զրուցասեր չէր, և ինչ որ ուզում էր ասել,
չէր կարողանում լսողի համար հիշելի ու ճիշտ բաներով արտա-
հայտել: Նա սրամիտ չէր: Նրա հումորը, ինչպես վերջ շարու-
ղրվածից է երևում (իհարկե, եթե ինձ հաջողվել է որոշ
չափով վերարտադրել նրա խոսելու ոճը) սարդանիկ բնույթ
էր կրում: Մթրիբլենդը կուպտորեն էր սրամտում: Երբևի՛ն ստի-
պում էր զրուցակցին ծիծաղել ճշմարտությունը ասելով, բայց
հումորի այդ տեսակը միայն իր անսովոր ուժով է արժևաբար-
եթե ճշմարտությունը հաճախակի սովեր, ոչ որ չէր ծիծաղի:

Մթրիբլենդը, ես կասեի, այնքան էլ աչքի չէր ընկնում իր խել-
քով, և արվեստի մասին ունեցած նրա հայացքները սովորա-
կանից ոչնչով չէին տարբերվում: Ես երբեք չեմ տեսել, որ նա
խոսեր այն նկարիչների մասին, որոնց ստեղծագործությունները
որոշակի բնոճանություն ունեին նրա գործերի հետ: Օրինակ,
Սեզանի՞ կամ Վան Գոգի՞ մասին: Ես նույնիսկ կուսկածում եմ,
որ նա երբեք տեսել է նրանց նկարները: Իմ գրեսիտիստներով
առանձնապես չէր հետաքրքրվում: Ընդունում էր նրանց սեխ-
նիկան, բայց իմ կարծիքով իմպրեսիոնիստական նկարչական
դասերի էր համարում: Մի անգամ, երբ Մթրյուզը փառաբանում
էր Մոնեին, նա ասաց. «Ես նախընտրում եմ Վինտերհայտերին»³:
Բայց նա երևի զու ասաց Մթրյուզին զայրացնելու համար և,
իհարկե, հասավ նպատակին:

Շատ եմ ափսոսում, որ չեմ կարող հին վարպետների մասին
արած նրա որևէ գաղափարություն մեջ բերել: Այնքան տարօրի-
նակություն կար այդ մարդու բնավորության մեջ, որ ավագ
վրձնակիցների մասին արած վրդովեցուցիչ արտահայտություն-
ները կարող էին կատարյալ դարձնել նրա զիմանկարը: Ես շատ
կցանկանալի իր նախորդների մասին արած որևէ ֆանտաստիկ
թեորիա վերագրել նրան, բայց դժբախտաբար պետք է խոստո-
վանեմ, որ նրա հայացքները ընդ բանով էին տարբերվում ընդ-
հանուր կարծիքից: Չեմ կարծում, թե Մթրիբլենդը զիտեր էլ
Գրեկոյին, բայց ինչ-որ անհամբեր հիացմունք ուներ Վելասկեսի
նկատմամբ: Շարդենը գմայլում էր նրան, իսկ Ռեմբրանդը Լքս-
տազի մեջ գցում: Նա այնպիսի կուպտուրյամբ էր արտահայտ-
վում Ռեմբրանդի իր վրա թողած ապավորություն մասին, որ
դժվարանում եմ կրկնել նրա բառերը: Բոլորից անսպասելի
այն էր, որ միակ նկարիչը Բրեյգել-ավագն՝ էր, որ հետաքրք-

քրրում էր նրան: Այդ ժամանակ ես թիչ բան դիտելի այդ նկարչի
մասին, իսկ Մթրիբլենդը չէր կարողանում ինչպես հարկն է ար-
տահայտել իր մտքերը: Միայն նրա համար եմ հիշում նրա
տասածը, որ ոչ մի բացատրություն չէր տալիս:

— Նա արիչ է.— ասաց Մթրիբլենդը:— Գրագ կգամ, որ
նա զոժոխային տանջանքներով է նկարել:

Հետագայում, երբ Վինենայում տեսա Պիտեր Բրեյգելի մի
բանի նկարները, ինձ թվաց հասկացա, թե ինչու է նա գրավել
Մթրիբլենդի ուշադրությունը: Բրեյգելն էլ նրա պես ինչ-որ չու-
բատեսակ աշխարհ էր տեսել: Ես մտադրվել էի զրել նրա մասին
և որոշ նշումներ էի արել ինձ մոտ, բայց կորցրեցի դրանք, և
հիշողությանս մեջ մնացել է միայն այն զգացմունքը, որ առա-
ջուցրին իմ մեջ այդ նկարները: Մարդիկ ծիծաղելի ու այլանդակ
էին թվում Բրեյգելին, և նա զայրանում էր, որ նրանք ծիծաղելի
ու այլանդակ են: Կյանքը ծիծաղելի ու վազիր արարքների հա-
մադրություն է, արժանի միայն ծիծաղի, բայց այնուամենայնիվ
Բրեյգելը զանուրթյամբ էր ծիծաղում: Ինձ միշտ էլ թվացել է,
թե Բրեյգելը միայն մի արվեստի միջոցով է աշխատում արտա-
հայտել այն, ինչ ավելի լավ կհաջողվեր մի ուրիշ արվեստի
որտահայտամիջոցներով: Հնարավոր է, որ զրա աղոտ դպրո-
ղությունն է, որ Մթրիբլենդին ձգում էր դեպի նա: Ըստ երևույ-
թին, նրանք երկուսով էլ ուզում էին գեղանկարչության մեջ
այնպիսի գաղափարներ դնել, որ ավելի հարմար էին գրակա-
նություն:

Այդ ժամանակ Մթրիբլենդը մոտ քառասունյոթ տարեկան
էր:

ԳԼՈՒԿ 35

Ես արդեն տեսել եմ, որ եթե Ռաբիթի կատարած իմ պատա-
հական ճանապարհորդությունը չլիներ, երբեք չէի գրի այս գիր-
քը: Երկար թափառումներից հետո Չարլզ Մթրիբլենդը Ռաբիթի
կազմ և յայտնող էր, որ ստեղծեց իր այն նկարները, որանք և
հիմնականում փառք բերեցին նրան: Իմ կարծիքով ոչ մի նկարչի
գիտակցած չէ ամբողջովին իրականացնելու այն երազանքը, որ
իշխում է նրան, և Մթրիբլենդը տեխնիկայի հետ մղո՞ծ պայ-
քարից շափազանց հոգնած, արեց գուցե ավելի թիչ, քան ուրիշ-

ները, արտահայտելու համար այն տեղիքը, որ իր հոգու աշ-
խարհով էր տեսնում: Բայց թախիծում հանգամանքները բարե-
նպաստ եղան: Իր ներշնչանքը բեղմնավոր դարձնելու համար
նա շատ բան գտավ այդ նոր աշխարհում, և նրա վերջին նկար-
ները որոշակի պատկերացում են տալիս, թե ինչ էր նա փրկու-
թյուն: Գրանք ինչ-որ նոր ու տարօրինակ բան են հաղորդում
մեր երևակայությանը: Կարծես այդ հեռավոր երկրում նրա հո-
գին, որ մինչև այդ անմարմին թափառել էր աշխարհով մեկ
հանգրվան փնտրելով, վերջապես կարողացավ մարմին ստանալ:
Ինչպես բնզունված է ասել, Սթրիբլենդը այստեղ գտավ իրեն:

Ի՞նչու է, թե պաղով այս հեռավոր կղզին, ևս պետք է անմի-
ջապես հիշեի Սթրիբլենդին, որ ժամանակին այդքան հետա-
քրքրել էր ինձ, բայց ամբողջովին տարվեցի աշխատանքով
(բացի դրանից, ոչ մի բանի մասին չէի մտածում), և միայն մի
բանի օր հետո հիշեցի, որ նրա անունը թախիծի հետ է կապված:
Ի միջի սյուռ, և տասնհինգ տարի չէի տեսել նրան, և ինք
տարի էր արգեն, ինչ նա մահացել էր: Գրանից բացի, թախիծից
ստացած տպավորությունները մոռացության տվեցին նույնիսկ
այնպիսի կարևոր բաներ, որոնք անմիջապես ինձ էին վերա-
բերվում, և նույնիսկ մի շարաթ հետո հազիվ ուշքի եկա: Հի-
շում եմ, առաջին օրը նոր էր լույսը բացվել, երբ ևս դուրս եկա
հյուրանոցի պատշգամբ: Այն մի կենդանի շունը չէր երևում:
Պնացի խոհանոց, բայց փակ էր. դռան մոտ, նստարանի վրա,
մի բնիկ տղա էր քնած: Առայժմ ստիպված էի թողնել նախա-
ճաշելու հույսը և իջա ներքև՝ ծովափ: Չինացիները արդեն բա-
ցել էին իրենց կրպակները: Երկինքը դեռ դժգույն էր, և ծովա-
լճակի վրա խորհրդավոր լուսվում էր տիրում: Տասը մղոն հե-
ռավորության վրա Արբազան Սկիհի՝ անսասանության վեր էր
խոյացել Մուրեա կղզին՝ պահպանելով իր գաղտնիքը: Ես բո-
լորովին չէի հավատում աչքերիս: Անլինպտոնից մեկնելուց հետո
անցած օրերը շատ արտակարգ ու անսովոր էին թվում: Անլինպ-
տոնը մաքուր, տիպիկ անգլիական քաղաք է և հիշեցնում է հա-
բավային Անգլիայի ծովափնյա քաղաքներին: Երեք օր ծովը
փոթորկում էր: Գորշ ամպերը մեկը մյուսի հտեկից ձգվում էին
երկնքում: Հետո բամբակ դադարեց, ծովը խաղաղվեց և դարձավ
կապույտ: Խաղաղ օվկիանոսը մյուս ծովերից ավելի ամառի է,
անսահման են թվում նրա տարածությունները, և նրանով կա-
տարած ամենատոբարական ճանապարհորդությունը արկածի

լղացողություն է առաջացնում: Մեր շնչած օդը կենսահարմար է,
որ նախապատրաստում է մեզ անսպասելիին:

Թախիծի տվերին մոտենալիս մարդ այնպիսի դրացողություն
է տեսնում, կարծես իրեն միայն մի անգամ է շնորհված լողա-
լու դեպի երևակայության ոսկե թագավորությունը: Երևում է
նաև հարևան կղզին, երևակայության ստեղծված կախարդական
դավադանի նման ջրե անապատից խորհրդավոր կերպով վեր
խոյացող քարե հրաշք Մուրեան: Իր խիստ կտրտված ուրվա-
գծերով այն շատ նման է խաղաղ օվկիանոսի Անտուսերաոին,
և ձեզ կարող է թվալ, թե պոլինեզյան ասպետները արտասովոր
ծեսերով մարդկանցից սրբազան գաղտնիքներ են թաքցնում
այնտեղ: Կղզու դեզեյկությունը երևում է այն ժամանակ, երբ
նրանից ձեզ բաժանող տարածությունը գնալով նվազում է, և
ավելի որոշակի են դառնում նրա սքանչելի գագաթների կտր-
վածքները, բայց բավական է մոտենալ նրան, որ նա քարե ան-
հաս ու անմատչելի խտություն մեզ կծկվելով խնամքով թաքցնի
իր գաղտնիքը: Եվ մինչ խուժեթի մեջ անցում եք փնտրում, եթե
նա հանկարծ անհետանա և ձեր առջև տեսնեք միայն օվկիանոսի
կապույտ ամառությունը, թող դա ձեզ շարժացնի:

Թախիծի բարձրադիր կանաչ կղզի է, ծածկված ավելի մուգ
կանաչ գույններով, որոնցում կարող եք լուսկայաց հովիտներ
գտնել. նրանց մոտ ու խորհրդավոր խորքերում կարկաչում և
ճզփում են սառնորակ գետակներ, և զգում ես, որ այց ստվերա-
խիտ հովիտներում կյանքը անհիշելի ժամանակներից միշտ էլ
անհիշելի ճանապարհներով է ընթացել: Ինչ-որ թախիծ ու սար-
սափ կա այդ զգացման մեջ: Բայց այդ վայրկենական տպավոր-
ությունը միայն ավելի է սրում ուրախության պահը: Դա նման
է այն տխրությանը, որ մի անկնթարթ փայլում է ծագածուր
աչքերում, երբ զվարճասերների խումբը ծիծաղում է նրա սրա-
մբուտությունների վրա, նրա շրթունքները ծպտում են, կատակ-
ներն ավելի ուրախ են դառնում, սակայն նրա մենակությունը
դառնում է ավելի անտանելի: Թախիծն ծայրով է բնզունում ձեզ:
նա նման է մի դրավիչ կնոջ, որ վստանում է իր հմայքն ու գե-
ղկցությունը, և աշխարհում ոչ մի բան այնքան հաճելի չէ, որ-
բուն մուտքը Պապետեի նավահանգիստ: Նավահանգստում խա-
րիսխ զցած առաքատանավերը փայլում են մաքրությունից:
Ծովափի երկայնքով տարածված քաղաքը սպիտակ է ու դեզա-
տես, իսկ կապույտ երկնքի ֆոնի վրա բողկնող բուսորդույն

հնգկարմամբենիները անդուսդ են, ինչպես կոթի ճիշդը: Նրանք այնքան զգայուն են իրենց անամոթ մոլուցքի մեջ, որ մարդու շունչ է կտրվում: Շոգհնավ գիմավորելու համար նավամատուց է հավաքվում սերխա, կենսախինդ ամբոխ: Դա արմկոտ, զվարթ անհանգիստ շարժումներով բազմություն է, շագանակագույն դեմքերի մի ծով: Կարծես երկնքի շինչ կապույտ ֆոնի վրա ծփում է բազմերանց մի այլիք: Այստեղ ամեն ինչ մեծ աղմուկով է կատարվում՝ ծանրոցների բեռնաթափումը, մաքսատան ստուգումը, և թվում է, թե բոլորն էլ ծայտում են քեզ: Անտանելի տոթ է, շլացնող խայտաբղետություն:

ԳՆՈՒՆ 46

Նոր էի Քաիթի ժամանել, երբ ծանոթացա կապիտան Նիկոլային հետ: Մի տասվաթ, երբ նախանշում էի հյուրանոցի պատշաճ գամբում, նա ներս մտավ և ներկայացավ ինձ: Լսելով, որ ես հետաքրքրվում եմ Զարլզ Սթրիքլենդով, կապիտանը եկել էր խոսելու ինձ հետ: Քաիթիում նույնքան են սիրում բամբասել, որքան անգլիական գյուղում, և Սթրիքլենդի մասին արած իմ մի քանի հարցուփորձերի լուրը կայծակի արագությամբ էր տարածվել:

Ես կապիտանին հարցրեցի, թե նա նախանշանք էլ է արդյոք — Այո, — պատասխանեց նա, — ես շուտ եմ սուրճ խմում, բայց մի քիչ վիսկիից չեմ հրաժարվի:

Կանչեցի շինացի տղային:

— Գուցե չարժե այսքան շուտ խմել, — ասաց կապիտանը:

— Դե, այդ մասին ձեր լյարդին հարցրեք, — պատասխանեցի ես:

— Զիշան ասած, ես գինեծուծկալ մարդ եմ, — ասաց նա մի ամբողջ կես բաժակ կանազական վիսկի լցնելով:

Նա ծիծաղեց, ցուցադրելով իր դեղնած ու կոտրված ատամները: Կապիտանը շատ նիհար, միջահասակ, կարճ կտրված սպիտակ մազերով և սպիտակած ցից բեղերով մարդ էր: Պարզ երևում էր, որ երկու օր չի սափրվել: Մշտապես արևի տակ ցտնվելուց նրա սևացած դեմքը ակոսվել էր խոր կնճիռներով, իսկ փոքրիկ կապույտ աչքերը զարմանալի խորամանկություն էին արտահայտում: Նրանք անհանգիստ շարժվում էին, հետևելով իմ յուրաքանչյուր շարժմանը և բավական խարդախարար

տեսք էին տալիս կապիտանին, շնայած այդ պահին նա ամբողջովին բարեհոգություն էր ներկայացնում իրենից: Կապիտանը հարկ էր խակի գույնի կեղտոտ կոսություն, իսկ ձեռքերը լվանալու խիստ կարիք էին զգում:

— Ես լավ էի ճանաչում Սթրիքլենդին, — ասաց նա, վառելով սիգարը, որը ես էի առաջարկել նրան, և ավելի հարմար նստեց բազկաթոռին: — Իմ շնորհիվ էր, որ նա այս կղզիները հկավ:

— Որտե՞ղ հանդիպեցիք նրան, — հարցրեցի ես:

— Մարսելում:

— Ի՞նչ էիք անում այնտեղ:

Նա հաճոյակատարությամբ ժպտաց:

— Դե, ճիշտն ասած, անգործ էի:

Գատելով իմ նոր ծանոթի արտաքինից, նա հիմա էլ լավ դրույթյան մեջ շէր: Ես արգեն պատրաստվել էի հաճելի ծանույնություն ստեղծել նրա հետ: Նման գատարկապորտները միշտ էլ հատուցում են մեզ այն փոքրիկ նեղությունների համար, ու ստիպված ենք կրել նրանց հետ շփվելիս: Նրանք հեշտությամբ են մտերմանում և խոսակցություն մեջ սիրալիք են: Մեծամտությունը խորթ է նրանց, իսկ նրանց սիրտը զրավելու լավագույն միջոցը խմիչքն է: Նրանց հետ մտախոսություն հաստատելու համար ձեզանից ոչ մի ջանք չի պահանջվում, բավական է լսեք նրանց ասեկոտները և կշահեք ոչ միայն նրանց վստահությունը, այլ՝ նաև երախտագիտությունը: Կյանքի ամենամեծ հաճույթը նրանք գտնում են գրուցելու մեջ, մինևույն ժամանակ պարծենում են, որ կրթված մարդիկ են, և պետք է խոստովանել, որ մեծ մասամբ հիանալի պատմողներ են: Նրանց մեծ փորձառությունը հաճելիորեն հավասարակշռվում է կենդանի երևակայության հետ: Իհարկե, չի կարելի ասել, որ նենգությունը օտար է նրանց, բայց նրանք հարգում են օրենքը, երբ այն ուժի վրա է հիմնվում: Վտանգավոր է նրանց հետ փոկեր խաղալ, բայց այն հնարամտությունը, որով խաղում են նրանք սշխարհի այդ լավագույն խաղը, լրացուցիչ հմայք է տալիս զյան: Մինչև Քաիթիից մեկնելը ես բավական լավ ճանաչեցի կապիտան Նիկոլային, և այդ ծանոթությունը, անկասկած, հարբստացրեց ինձ: Միգարներն ու վիսկին, որոնց համար միշտ էլ ես էի վճարում (որպես գինեծուծկալ մարդ, նա մեկընդմիջում հրաժարվեց կոփոնիլից) և մի քանի դուրբը, որ կապիտանը փոխ

վերցրեց ինձանից մի այնպիսի տեսքով, որ սարգ ասում էր, թե գրանով նա մեծ շնորհ է անում ինձ, բոլորովին էլ համարժեք չէին այն բանին, ինչ ստացա նիկոլսից: Նա զվարճացնում էր ինձ, և ես սարտք եմ նրան ու իրավունք չունեմ միայն մի քանի բառով գուշոս ազատել նրանից:

Զգիտեմ ինչու, կապիտան Նիկոլսը հեռացավ Անգլիայից: Նա համառորեն լուռ էր այդ մասին, իսկ նրա նման մարդուն հարց ասելը անխոհեմություն կլիներ: Նա ակնարկեց ինչ-որ դժբախտության մասին, որ անարժան կերպով պատահել էր իրեն, և անկասկած, անարդարության զոհ էր համարում իրեն: Ինձ թվաց, թե խոսքը ինչ-որ խարդախությունների ու բռնությունների մասին է և հաճույքով համաձայնվեցի նրա հետ. այո, ժեռ Մնգլիայում դատական պաշտոնյաները անուղղելի ձևապաշտներ են: Բայց հաճելի էր տեսնել, որ շնայած ամեն տեսակի տհաճություններին, որոնք կապիտանը տեսել էր իր հայրենիքում, այնուամենայնիվ կրակոտ հայրենասեր էր մնացել: Նա հաճախ էր հայտարարում, որ աշխարհի լավագույն երկիրը Մնգլիան է և իրականում զգում էր իր առավելությունը ամերիկացիներին, գաղութաբնակներին, ամեն տեսակի դաժանների, հույանգացիների ու կանականների նկատմամբ:

Այնուամենայնիվ, չեմ կարծում, թե կապիտանը երջանիկ մարդ էր: Նա տառապում էր մարսողության խանգարումից և հաճախ պեպսինի հարեր էր կուլ տալիս: Առավոտները նա սխորժակ չէր ունենում, որն, ի միջի այլոց, չէր ազդում նրա տրամադրությունների վրա: Նա կյանքից դժգոհելու ավելի մեծ պատճառ ուներ: Ութը տարի առաջ կապիտանը հապճեպորեն ամուսնացել էր: Կան մարդիկ, որոնց բարեգութ նախախնամությունը ամուրիի կյանք է կանխատեսել, բայց նրանք քմահաճությունից կամ էլ հանգամանքների պատահական բերումով խախտում են այդ կամքը: Աշխարհում չկա ավելի խղճալի բան, քան ամուսնացած ամուրիին: Իսկ կապիտան Նիկոլսը այդպիսին էր: Ես ճանաչում էի նրա կնոջը: Նա քսանյոթ տարեկան էր: Ի միջի այլոց նա այն կանանցից էր, որոնց տարիքը դժվար է որոշել: Հավանաբար նա այդպիսին էր քսան տարեկանում և քոռասունում հագնված թե ավելի տարիքով երևար: Միսիս Նիկոլսը այնպիսի տպավորություն թողեց վրաս, կարծես ամբողջովին ձգված լիներ: Զգված էր նրա տափակ նեղ շրթունքներով դեմքը, մաշկը կիպ ձգված էր ոսկորներին, երբ ժպտում

էր, ձգվում էին շրթունքները, մաղերը ձիգ հանգուցված էին, ձգված էր շրջազգեստը, իսկ սպիտակ չաթանը, որից կարված էր այն, սե բումազեի տպավորություն էր թողնում: Ոչ մի կերպ չէի կարողանում պատկերացնել, թե ինչու էր կապիտան Նիկոլսը ամուսնացել նրա հետ, իսկ ամուսնանալուց հետո ինչու չէ՞ր փախել: Նրա մեկամաղձատու թյունը հենց նրանով էր բացատրվում, որ այդպիսի փորձերը միշտ էլ ձախողվել էին: Որքան հեռու էլ որ նա փախչեր, որտեղ էլ որ թաքնվեր, ես համոզված եմ, որ միսիս Նիկոլսը անողոր ինչպես ճակատագիրը, անդրովելի ինչպես խիղճը, անմիջապես կհասներ նրան: Կապիտանը չէր կարող ազատվել նրանից, ինչպես պատճառը՝ հետևանքից:

Սրբիկան գերասանի, գուցե և ջենտլմենի նման, ոչ մի դասակարգի չի պատկանում: Նրան ոչ արքունիքի խոտաբարո էտիկետը կշիտթեցնի, ոչ էլ թագադրողի սանձարձակությունը: Բայց միսիս Նիկոլսը, այսպես ասած, միջինից ավելի ցածր դաս էր պատկանում: Նրա հայրը ոստիկան էր և ես համոզված եմ, բավական ճարպիկ ոստիկան: Զգիտեմ, թե ինչով էր նա կապիտան Նիկոլսին իրեն կապել, բայց չեմ կարծում, որ սիրով: Ես երբեք ոչ մի բառ չէի լսել միսիս Նիկոլսից, շնայած շատ հնարավոր է, որ տանը նա բավական շատախոս կին էր: Համենայն դեպս, կապիտանը մահու շափ վախենում էր նրանից: Երբեմն, երբ մենք նստած էինք լինում հյուրանոցի պատշգամբում, հանկարծ Նիկոլսը նկատում էր, որ կինը անցնում է փողոցով: Միսիս Նիկոլսը չէր կանչում նրան, ոչ մի բանով ցույց չէր տալիս, թե տեսնում է նրան, այլ անվրդով ես ու առաջ էր քայլում: Այդ ժամանակ տարօրինակ անհանգստություն էր համակում կապիտանին. նա սկսում էր նայել ժամացույցին և հուզոց հանել:

— Գե, գնալու ժամանակն է,— ասում էր նա:

Եվ նրան ոչ մի բանով հնարավոր չէր լինում պահել, նույնիսկ մի բաժակ վիսկիով: Բայց չէ որ նա այնպիսի մարդ էր, որ անվեհերորեն փոթորիկների ու թայֆունների էր հանդիպել և միայն ատրճանակով զինված առանց տատանվելու կովել էր տասից ավելի անգն նեղրիթի հետ: Երբեմն միսիս Նիկոլսը հյուրանոց էր ուղարկում իր յոթ տարեկան գունատ, խոժոռոգեմ աղջկան:

— Մայրիկը կանչում է քեզ,— ասում էր նա լալկան ձայնով:

— Լավ, լավ, աղջիկս, գալիս եմ, — պատասխանում էր կապիտանը:

Նա անմիջապես ստաբի էր հչնում և հետևում աղջկան: Նյութի վրա հոգու հողթանակի հիանալի օրինակ, և հետևաբար շեղումը, որ ես թույլ տվեցի ինձ, իր մեջ ծայրահեղ դեպքում բարոյախոսական է կրում:

Գլուխ 47

Ես աշխատել եմ որոշակի կապ ստեղծել այն ամենի մեջ, ինչ պատմեց կապիտան Նիկոլսը Սթրիբլենդի մասին, և կհորձեմ հնարավորին չափ հետևողականորեն շարագրել գրանց: Նրանք ծանոթացան նույն տարվա ձմռանը, երբ ես վերջին անգամ տեսա Սթրիբլենդին Փարիզում: Թե նա մեր հանդիպումից հետո ինչպես անցկացրեց այդ ամիսները, չգիտեմ, հավանաբար, շատ ծանր վիճակի մեջ էր, քանի որ կապիտան Նիկոլսը հանդիպեց նրան օթևանատանը: Այդ ժամանակ համընդհանուր գործադուլ էր Մարսելում, և Սթրիբլենդը առանց միջոցների մնալով, չէր կարողանում վաստակել նույնիսկ այն փոքրիկ գումարը, որ անհրաժեշտ էր իր գոյությունը պահպանելու համար: Մենաստանին կից այդ օթևանատունը մի մեծ բարե շինություն էր, որտեղ աղքատներն ու գործազուրկները կարող էին բնելու տեղ գտնել, եթե նրանց փաստաթղթերը կարգին լինեին և նրանք կարողանային ապացուցել վանականներին, որ իրենք անանձնագիր քաղաքապետի շին: Դռների մոտ սպասող ամբոխի մեջ կապիտան Նիկոլսը նկատեց Սթրիբլենդին, որն իր հասակով ու անսովոր արտաքինով առանձնանում էր բոլորից: Նրանք լուս սպասում էին, մի բանիսը ետ ու առաջ էին բալլում, մի բանիսը հենվել էին պատին, շատերն էլ նստել էին ճանապարհի եզրին, ոտքները առվի մեջ կախած: Երբ գրասենյակ մտան, կապիտանը լսեց, թե ինչպես նրա փաստաթղթերը ստուգող կրոնավորը անգլիերենով զիմեց Սթրիբլենդին: Բայց կապիտանին չհաջողվեց խոսել նրա հետ: Երբ նրանց ընդհանուր սենյակ թողեցին, վիթխարի կտակարանը ձևաբան մի կրոնավոր եկավ և ամբիոնից, որը սենյակի ծայրին էր, սկսեց իր բարոյը, որն այդ խեղճները պետք է չսեին, ի հատուցում այն բանի, որ օթևան են տվել իրենց: Կապիտանին ու Սթրիբլենդին օտարեր սենյակներում տեղավո-

րեցին, և երբ առավոտյան ժամը հինգին մարմնեղ կրոնավորը սրբնացրեց նրան, և կապիտանն սկսեց հարգարել տնկողինն ու լվացվել, Սթրիբլենդն արգեն անհետացել էր: Կապիտանը մոտ մի ժամ փողոցներում ցրտից զոգալով թափառելուց հետո դնաց Վիկտոր Ժելյուսի հրապարակ, որտեղ սովորաբար հավաքվում էին գործազուրկ նավաստիները: Նա նորից տեսավ Սթրիբլենդին, որ հուշարձանի պատվանդանին հենված նիրհում էր: Կապիտանը արացի տալով արթնացրեց նրան:

— Գնանք նախաճաշելու, բարեկամ:

— Կորիք գրողի ճայր, — պատասխանեց Սթրիբլենդը:

Ես ճանաչեցի Սթրիբլենդի արտահայտվելու ձևը և որոշեցի, որ կարելի է հավատար կապիտան Նիկոլսի վկայությունը:

— Երբեք ես ճանձաղո՞ւար, — հարցրեց կապիտանը:

— Չբժիք այստեղից, — պատասխանեց Սթրիբլենդը:

— Գնանք ինձ հետ, ես բեղ համար նախաճաշ կհարեմ:

Փոքր-ինչ տատանվելուց հետո, Սթրիբլենդը ստաբի ելավ և նրանք գնացին «Մի պատառ հաց» ճաշարան, որտեղ սովյալներին մի կտոր հաց էին տալիս, պայմանով, որ տեղում ուտեն: Արդեվում էր հացը դուրս տանելու Այնտեղից նրանք զնային «Մի զգալ սուպ»: Այնտեղ առավոտյան ժամը տանձեկին և կեսօրվա շորսին աղքատները կարող էին մի օփոն աղի վոփ ստանալ: Այդ ճաշարանները քաղաքի տարբեր ծայրերում էին գտնվում, այնպես, որ նման նախաճաշը կարող էր միայն ծայրահեղ սոված մարդուն հրապույրել: Դրանով էլ սկսվեց Չարլզ Սթրիբլենդի ու կապիտան Նիկոլսի յուրօրինակ բարեկամությունը:

Նրանք չորս ամիս միասին անցկացրին Մարսելում: Կյանքը ընթանում էր առանց որևէ արկածի, եթե արկած ասելով անսպասելի ու ցնցող զեպե նկատի ունենանք, քանի որ նրանք ամբողջ օրը զբաղված էին աշխատանք որոնելով, որպեսզի կարողանան օթևանատանում գիշերելու տեղի համար վճարել և մի կտոր հաց ճարել քաղցի տանջանքները խլացնելու: Շատ կցանկանալի վերաբուրադրել այն գունազեղ ու բնորոշ պատկերներին, որոնք կապիտան Նիկոլսի աշխույժ պատմության ընթացքում անցնում էին իմ առջևով: Կապիտանն ու Սթրիբլենդը այնպիսի բաներ էին տեսել նավահանգստային այդ բազաբի «հատակում», որ դրանից մի հիանալի պիքը կստացվեր, իսկ կապիտանի պատմության հերոսների խոսքերը սրբալեզվի լիա-

կատար բառարան կազմելու համար հրաշալի նյութ կարող էին ծառայել: Բայց, ցավոք, ես պետք է բավարարվեմ միայն մի բանի դրվագ բերելով այստեղ: Նախ այդ պատմությունը վայրագ, կոպիտ, գունազեղ և կենսունակ մի կյանքի տպավորություն թողեց ինձ վրա: Եվ Մարտելը, որին ես գիտեի, Մարտելը, որը լեցուն էր կուշտ ամբոխով, հարմարավետ հյուրանոցներով ու ռեստորաններով, սկսեց ճղճիմ ու զորշ թվալ ինձ: Աս նախանձում էի մարդկանց, որոնք իրենց սեփական աշխարհով էին տեսել այն ամենը, ինչ նկարագրեց կապիտան Նիկոլսը:

Երբ օթևանատան դռները փակվեցին նրանց առջև, Նիկոլսն ու Մթրիքլենդը որոշեցին դիմել Անսանձ Բիլլի հյուրընկալությանը: Անսանձ Բիլլը նավաստիների պանդոկի տերն էր, մի հսկա մուլաթ, որը գործադուրկ նավաստիներին օթևան ու կերակուր էր տալիս և ինքն էլ աշխատանք փնտրում նրանց համար: Մթրիքլենդն ու կապիտան Նիկոլսը մոտ մի ամիս ապրեցին նրա մոտ. քնում էին ուրիշ նավաստիների՝ շվեդների, նեգրերի, բրազիլացիների հետ միասին հատակին, երկու բոլորովին դատարկ սենյակում, որ Անսանձ Բիլլը իր կենսական համար էր նախատեսել: Ամեն օր նրանք Բիլլի հետ գնում էին Վիկտոր Ժելյուի հրապարակ, որտեղ նավերի կապիտանները գալիս էին աշխատող ձեռք փնտրելու: Անսանձ Բիլլը ամուսնացած էր մի ճարպակալած ու թափթփված ամերիկուհու հետ, աստված գիտե ինչպես հասնելով նման անկման, և ամեն օր կենսականը ստիպված էին հերթով օգնել նրան տնտեսության մեջ: Կապիտան Նիկոլսի ասելով Մթրիքլենդը ճարպկորեն խուսափեց այդ աշխատանքից, նկարելով Բիլլի դիմանկարը: Վերջինս ոչ միայն վճարեց կտավի, ներկերի ու վրձիներին համար, այլ նաև մաքսանենգություն մեծ գեղարվեստ մի ֆունտ ծխախոտ ավեց Մթրիքլենդին: Կարծում եմ մինչև օրս էլ այդ նկարը գարդարում է Ժողովուրդի առափնյա փողոցից ոչ այնքան հեռու գտնվող կիսախարխուլ սնակի հյուրասենյակը, և հիմա, հավանաբար, հազար հինգ հարյուր ֆունտ արծե: Մթրիքլենդը երազում էր Ալստրալիա կամ Նոր Զելանդիա մեկնող որևէ նավի վրա տեղավորվել և այնտեղից էլ Մամոա կամ Թաիթի գնալ: Թե ինչու էին հարավային ծովերը հրապուրում նրան, չգիտեմ, շնայած հիշում եմ, որ վաղուց նրա երևակայության մեջ պատկերվել էր կանաչապատ ու արևոտ մի կղզի, շրջապատված ծովով, որն ավելի կապույտ էր, քան հյուսիսային շրջանների ծովերը: Եվ, հավա-

նաբար, այն պատճառով կապվեց կապիտան Նիկոլսին, որ սալով ծանոթ էր այդ հեռավոր վայրերին: Եվ կապիտան Նիկոլսն էր, որ համոզեց նրան հասկապես Թաիթի գնալ:

— Զէ որ Թաիթին ֆրանսիացիներին է պատկանում,— բալաստրեց նա,— իսկ ֆրանսիացիները այդքան անիծյալ ձևաշարներ չեն, որքան անգլիացիները:

Սա հասկացա, թե ինչ նկատի ունեք կապիտանը:

Մթրիքլենդը անհրաժեշտ թղթեր չունեի, բայց նման դատարկ բաները այնքան էլ չէին անհանգստացնում Անսանձ Բիլլին, երբ իրաքը շահին էր վերաբերում (նա նավաստիներից, որոնց տեղավորում էր նավերի վրա, վերցնում էր առաջին ամսվա աշխատավարձը): Բիլլը Մթրիքլենդին տվեց մի անգլիացի հնոցապանի փաստաթղթերը, որը կարծես ճիշտ ժամանակին մահացավ նրա պանդոկում: Բայց նրանք երկուսն էլ՝ և կապիտանը, և Մթրիքլենդը դեպի արևելք էին ձգտում, իսկ աշխատանք. կարծես դիմամբ գտնվում էր միայն արևմուտք մեկնող նավերի վրա: Մթրիքլենդը երկու անգամ հրաժարվեց Միացյալ Նահանգների գնացող նավի վրա աշխատելուց, իսկ երրորդ անգամ՝ նշուքալ մեկնող ածխանավից: Անսանձ Բիլլը տանել էր կարողանում համառությունը, որի պատճառով կարող էր վնաս կրել և առանց որևէ ավելորդություն նրանք երկուսին էլ դուրս շարժեց իր անից: Նրանք նորից անհաջողության մեջ ընկան:

Անսանձ Բիլլի տված սնունդը հազվադեպ էր բավարարում, նրա կենսականը սեղանից վեր էին կենում գրեթե նույնքան սոված, որքան սեղան նստելիս, բայց, այնուամենայնիվ Մթրիքլենդն ու կապիտանը մի քանի օր շարունակ ափսոսանքով էին հիշում այդ ճաշերը: Հիմա նոր էին զգում, թե ինչ է նշանակում սովը: «Մի գզալ սուպ»-ը և օթևանատունը փակվել էին նրանց համար, և նրանք պահպանում էին իրենց գոյությունը միայն նրանով, ինչ տալիս էր «Մի պատառ հաց»-ը: Քնում էին որտեղ պատահեր, երբեմն կայարանի պահեստային գծերին կանգնած դատարկ վագոններում, երբեմն մթերանոցների հետևում կանգնած սալերի մեջ, բայց սարսափելի ցուրտ էր և մի երկու ժամ կես-րուն, կես-արթուն մնալուց հետո սկսում էին նորից վազել փողոցներով: Նրանք ամենից շատ ծխախոտի պակասից էին սնանդվում, և կապիտան Նիկոլսը, որ բոլորովին չէր կարողանում առանց ծխելու մնալ, գնում էր գարեջրատուն՝ ծխախոտի մնացորդների «որսի»:

— Աստծուն է հայտնի, թե ինչով էի լցնում ծխամորճս,—
ասաց կապիտանը փիլիսոփայությունն թռթկելով ուտերը, իմ առա-
ջարկած տուփից մի գույգ սիգար վերցնելով, մեկը բերանը դրեց,
մյուսը՝ գրպանը:

Երբեմն նրանց հաջողվում էր մի քիչ փող ձեռք գցել: Երբ
ժամանում էր փոստային շոգենավը, կապիտան Նիկոլսը հաջո-
ղացնում էր ծանոթանալ բոցմանի հետ և երկուսի համար բեռ-
նաթափողի աշխատանք ստանալ: Երբ որևէ անգլիական նավ
էր ժամանում, նրանք թափանցում էին նավի բաքը, և անձնա-
կազմը առատ հյուրասիրում էր նրանց: Գրանոլ նրանք նավի
սպաներից մեկին պատահաբար հանդիպելու և մի լավ արացի
ուտելով նախասանդուղքով ներքև գլորվելու պիտի էին դիմում:

— Երբ փսրդ լիքն է, հետույթիդ բացի ստանալը այնքան էլ
սարսափելի չէ.— ասաց կապիտան Նիկոլսը,— և անձամբ ես
դրանից երբևք չեմ վերավորվել: Սպան պետք է հետևի կախա-
պահությանը:

Ես վառ կերպով պատկերացրի, թե ինչպես էր կապիտանը
նեղ սանդուղքով գլխիվայր գլորվում և, որպես խսկական անգ-
լիացի, հիանում անգլիական առևտրական նավատորմի կարգա-
պահությանը:

Հստակ նրանք անսովոր աշխատանք էին անում ձկների շու-
կայում, իսկ մի անգամ նավամատուցում թափված նարինջ-
ներից լիքը անհաշիվ արկղերը ապրանքների տախտակամածին
բեռնելու համար մեկական ֆրանկ ստացան: Մի օր էլ նույնիսկ
բախտը ժպտաց նրանց. ծանոթ «ստերերից» մեկը վարձեց նրանց
ներկելու Մադագասկարից եկած մի նավ, որը շրջանցել էր Բարե-
հուս հրվանդանը և մի քանի օր անընդատ ճոճի մեջ կախված
ներկում էին ժանգոտված նավակողերը: Այդ դրուժյունը պետք
է որ առիթ տված լիներ Սթրիբլենդին սարդոնիկ դիտողություն-
ներ անելու: Ես կապիտանին հարցրեցի, թե ինչպես էր Սթրիբ-
լենդը պահում իրեն այդ փորձությունների ժամանակ:

— Ոչ մի անգամ նույնիսկ կոպիտ խոսք չասաց,— պատաս-
խանեց կապիտանը.— Միայն երբեմն մոռացվում էր, բայց երբ
առավոտից մինչև իրիկուն բերաններս ոչինչ չէինք դնում և գի-
շերելու համար փող չէինք ունենում լինացուն վճարելու, ծիծա-
ղում էր միայն:

Դա չգարմացրեց ինձ: Անբարենպաստ պայմանները երբեք

չէին վհատեցնում Սթրիբլենդին, իսկ թե դա նրա անխոով բնա-
վորությունից էր, թե հպարտությունից, դժվարանում եմ ասել:

Նավահանգստային խուժանը «Չինացու գլուխ» էր անվանում
Բուտերի փողոցի վրա գտնվող պանդոկը, որը միաշքանի շի-
նացուն էր պատկանում: Այնտեղ վեց սուռվ կարելի էր մահ-
ճակալ ստանալ, իսկ երեքով՝ քնել հատակին: Այստեղ նրանք
բարեկամացան իրենց նման անհուսալի դրուժյան մեջ գտնվող
մարդկանց հետ, և երբ ոչ մի կոպեկ չէին ունենում, իսկ փո-
ղոցում սարսափելի ցուրտ էր, առանց քաշվելու մի քանի սու-
պարտք էին վերցնում որևէ մեկից, ով պատահաբար մի ֆրանկ
էր վաստակել, որպիսով վճարեին գիշերելու համար: Այդ թա-
փառաշրջիկները առատաձեռն էին և ով փող էր ունենում, առանց
տատանվելու բաժին էր հանում նաև մյուսներին: Նրանք Մաբսել
էին եկել աշխարհի բոլոր ծայրերից, բայց դա չէր խանգարում,
որ բարեկամական լինեին իրար նկատմամբ. բուրն էլ իրենց
զգում էին որպես միասնական մի երկրի ազատ մարդիկ, կոկախ-
ել մեծ երկրի մարդիկ:

— Բայց երբ Սթրիբլենդը զայրացած էր լինում, սաբաս-
փելի էր.— ասաց կապիտան Նիկոլսը մտախոհ:— Մի անգամ
մենք մտանք Անսանձ Բիլլի որջը, և նա պահանջեց, որ Չարլիս
վերագարձնի իրեն տված փաստաթղթերը:

— Եթե ուզում ես, փորձիր վերցնել.— ասաց Չարլիս:

Անսանձ Բիլլը շատ ուժեղ մարդ էր: Չարլիի տեսքը այնքան
էլ դուր չեկավ նրան և սկսեց ամեն տեսակի հայհուցանքներ տե-
ղալ նրա գլխին: Իսկ երբ Բիլլը հայհուցում էր, ճիշտ որ, հետա-
քրքիր էր լսել նրան: Դե, Չարլիս էլ համբերեց, համբերեց,
հետո մոտեցավ և ուղղակի ասաց. «Կորիք այստեղից, արյու-
նալքու խոզ»: Կարևորն այն չէ, թե ինչ ասաց, այլ այն, թե ինչ-
պես ասաց: Բիլլը ծպտուն շհանեց, ամբողջովին սփրթնեց և
ախպես լքվեց, կարծես ժամադրություն էր շտապում:

Կապիտան Նիկոլսի ասելով Սթրիբլենդը բոլորովին այլ կերպ
արտահայտվեց, բայց քանի որ այս գիրքը նախատեսված է
ընտանեկան ընթերցանության համար, ես որոշեցի ավելի լավ
կլինի ի վնաս ճշմարտության նրա շրթունքներին այնպիսի բա-
ռեր դնել, որոնք ընդունված են ընտանեկան շրջանում:

Բայց Անսանձ Բիլլը նրանցից չէր, որ տաներ հասարակ նա-
վաստուց կրած վերավորանքը: Նրա իշխանությունը համբավից

էր կախմած, և լուր տարածվեց, որ երգվել է սպանել Սթրիք-լենդին:

Մի անգամ երեկոյան կապիտան Նիկոլան ու Սթրիքլենդը նստած էին Բուտերի փողոցի վրա գտնվող մի փոքրիկ գինե-տանը: Բուտերին միայն մեկ սենյականոց մի հարկանի տներով նեղ փողոց է: Տները տունավաճառի կամ էլ գազանանոցի վան-գակների են նմանվում: Յուրաքանչյուր դռան առաջ մի կին է կանգնած: Նրանցից մի քանիսը դռան կողափայտին հենված ինչ-որ երգ են մրմնջում կամ խոսում: Ճայնով կանչում անցորդ-ներին, մյուսները լուր կարգում են: Նրանց մեջ կան Ֆրանսուսի-ներ, իտալուհիներ, իսպանուհիներ, ճապոնուհիներ և թխամորթ կանայք: Ամանք գեր են, ոմանք էլ նիհար: Թանձր շպարք, ներկ-ված հոնքերն ու կարմիր շրթունքները չեն թաքցնում ժողովների և անառակության հետքերը: Նրանցից մի քանիսը սև վերնա-շապիկ ու մարմնագույն գույպաներ են կրում, մի քանիսն էլ ջահել աղջիկների նման կարճ բեհեզ շրջագգեստ են հագել, իսկ շեկ ներկված մազերը՝ գանգրացրել: Բաց դռնից երևում է հախ-ճատալիկներով պատած հատակը, լայն փայտե մահճակալը, փոքրիկ սեղանի վրա դրված սափորն ու լազանը: Խայտաբղետ ամբոխը թրևում է փողոցով՝ Տնդիկ նավաստիներ, շիկահեր հյուսիսացիներ շվեդական ասագաստանավից, բազմանավից իջած ճապոնացիներ, անգլիացի նավաստիներ, իսպանացիներ, պճնա-զգեստ ֆրանսիացիներ՝ հաժանավից, ամերիկյան առևտրական նավի նեղր նավաստիներ:

Յերեկը Բուտերի փողոցը կեղտոտ է ու խղճուկ, իսկ երեկո-յան, լուսավորվելով միայն խրճիթների լամպերի լույսով, ինչ-որ շարագուշակ գեղեցկություն է ստանում: Սոսկալի հեշտասիրու-թյունը, որ տարածված է օդում, ճնշող է ու սարսափելի, և այնուամենայնիվ, ինչ-որ խորհրդավոր բան կա այդ տեսարա-նում, որը գրավում ու անհանգստացնում է մարդու Այստեղ ամեն ինչ նախապատմական ուժով է հագեցած, որ գարշանք է ներշնչում և միաժամանակ հրապուրում: Ունահարված են քա-ղաքակրթության բոլոր պայմանականությունները, և մարդն այս-տեղ դեմ առ դեմ կանգնած է մտալ իրականության հետ: Մթնո-լորտը լարված է ու ողբերգական:

Փոքրիկ գինետանը, որտեղ նստած էին Սթրիքլենդն ու Նի-կոլան, պիանոյան բարձրաձայն պարային երաժշտություն էր նվագում: Պատերի տակ սեղանների շուրջը սաստիկ հարբած

նավաստիներ ու մի խումբ դիմադրողներ էին նստած: Կենտրո-նում խոնաված պարում էին զուգերը: Մորուքավոր արևահար գեմբերով և խոշոր կոշտակավոր ձեռքերով նավաստիները աղ-ջիկներին սամուր գրկած պարում էին: Կանայք բացի վերնաշա-պիկներից ուրիշ ոչինչ չէին հագել: Երբեմն երկու նավաստի վեր էին կենում իրենց տեղից և միասին պարում: Խլացուցիչ աղմուկ էր տիրում: Բոլորը երգում, բզավում ու ծիծաղում էին: Եվ երբ նրանցից մեկը երկար համբուրում էր իր ծնկներին նստած աղջ-կան, անգլիացի նավաստիները խլացնելու շափ բարձրաձայն մյավում էին: Տղամարդկանց երկարաճիտ կոշիկներից հանած փոշուց օդը ծանրացել էր և ծխից դարձել գորշակապտավուն: Անտանելի շոգ էր: Վաճառասեղանի ետևում նստած մի կին կերակրում էր կրծքի երեխային: Ցածրահասակ, պղուկներով ծածկված գեմբով երիտասարդ մատուցողը ետ ու առաջ էր վա-զում գարեջրի գավաթներով լիքը մատուցարանը ձեռքին: Շու-տով, երկու նեղրերի ուղեկցությամբ այնտեղ հայանվեց Անտան Քիլլը: Դժվար չէր նկատել, որ նա արդեն բավականին կոնծել է: Քիլլը անմիջապես սկսեց կոփի առիթ փնտրել: Հրեց սեղանը, որի մոտ երեք նավաստի էին նստած, և շրջեց դարեջրի գավաթը: Կատաղի կովտոց սկսվեց, և գինետան տեղը, որ մի ամբողջով տղամարդ էր և տանի չէր կարողանում հաճախողների հիմար արարքները, առաջացավ և առաջարկեց Քիլլին հետանալ: Քիլլը երկմտեց, իմաստ չունեց գլուխ դնել գինեպանի հետ, ուստի-կանությունը միշտ էլ նրա կողմն էր, և Քիլլը թունդ հայհուցելով դնաց գեպի դուռը: Հանկարծ նա տեսավ Սթրիքլենդին: Ոչ մի բառ չասելով նա նեավեց գեպի Սթրիքլենդը և թրեց նրա երե-սին: Սթրիքլենդը ճանկեց գարեջրի գավաթը և նետեց Քիլլի վրա: Պարզվեցր կանգնեցին: Մի պահ քար լուռություն տիրեց, բայց երբ Անտան Քիլլը նետվեց Սթրիքլենդի վրա, կոփի ծարավը հա-մակեց բոլորին, և մի վայրկյան հետո ծեծկատուքն սկսվեց: Երջվում էին սեղանները, գավաթները փշուր-փշուր էին լինում՝ գարնվելով հատակին: Դժոխային աղմուկ բարձրացավ: Կո-նայք իրար հրմշտելով նետվեցին գեպի դուռը և վաճառասեղանի կտր: Փողոցից ներս վազեցին անցորդները: Բոլոր լեզուներով հիշոցներ էին լսվում, հարվածներ, ճիչեր: Սենյակի մեջտեղում առաից ավելի նավաստիներ կոփում էին ամբողջ թափով: Հան-կարծ հայանվեց ոստիկանությունը, և ով կարող էր գուր-կարծ հայանվեց ոստիկանությունը, և ով կարող էր գուր-կարծ հայանվեց Երբ գինետանը քիչ թե շատ դատարկվեց, հատակին

պատկած մէջց գլխակցութիւնը կարցրած Անտոնձ Բիլլը՝ դիւին խոր վերքի Կապիտան Նիկոլսը փողոց քարը տվեց Սթրիբլեննի, նրա ձեռքը փրավորված էր, դեմքն ու բզկտված շորերը՝ առ- յունտոված: Կապիտանի շարդված քթից արյուն էր հոսում:

— Լավ կլինի ծլկես Մարտելից, քանի դեռ Բիլլը հիվանդա- նոցում է,— տասց նա Սթրիբլենդին, երբ հասան «Ջինադու գլուխ» և կարգի բերեցին իրենց:

— Արտրակովից ավելի թունդ կոխվ էր,— նկատեց Սթրի- լենդը:

Եւ պատկերացրի նրան սարդոնիկ ժպտը դեմքին:

Կապիտան Նիկոլսը տագնապի մէջ էր: Նրան լավ հայտն էր Անտոնձ Բիլլի վրեժխնդրութիւնը: Սթրիբլենդը երկու անգամ հաղթել էր մուլաթին, իսկ երբ Բիլլը խմած չէր, ավելի լավ էր գործ յունենայ նրա հետ: Հիմա նա գործելու էր թարուն: Նա չի շտապի, բայց մի գեղեցիկ գիշեր Սթրիբլենդը դանակի հար- ված կատանա թիկունքին և երկու օր հետո անտեսն թափա- ուղղրջիկի մարմինը դուրս կհանեն նավահանդատի կեղտոտ չրե- րից: Հաշորդ օրը երեկոյան կապիտանը գնաց Անտոնձ Բիլլի տուն հետախուզութիւն: Բիլլը դեռ հիվանդանոցում էր, բայց կինը, որ այցելել էր նրան, տասց, որ նա երգվել է տուն վերա- գանալուն պէս սպանել Սթրիբլենդին:

Անցավ մի շաբաթ:

— Ես միշտ էլ ասել եմ,— շարունակեց կապիտանը մտա- խոհ,— երբ խփում ես մեկին, ոչնչպէս իսկիւր, որ հետո ժամա- նակ ունենաս մտածելու, թե ինչ անես:

Բայց Սթրիբլենդի բախտը բերեց: Անտրալիտ մեկնող մի նավ հնոցուպահի պահանջ ներկայացրեց նավաստիներ հավա- քագրող բշուրո, քանի որ նախկին հնոցուպանը սպիտակ տենդի նոպայի ժամանակ Ջիբրալթարի մոտ ծովն էր նետվել:

— Արագ, վագիր նավահանգիստ և պայմանագիր կնքիր,— ստաց կապիտանը:— Փաստաթղթեր, փառք աստժո, ունես:

Սթրիբլենդը անմիջապէս հետևեց խորհրդին, և նրանք այլևս չհանգիպեցին իրար: Նավը միայն վեց ժամ մնաց նավահան- դրատում, և երեկոյան, երբ այն ճեղքում էր ծովի սառը սլիթ- ները, կապիտան Նիկոլսը արևելքում նրա անհետացող ծուխը միայն տեսավ:

Ես աշխատեցի հնարավորին շափ լավ շարագրել այն ամենը, ինչ լսեցի կապիտան Նիկոլսից, որովհետև այդ գեղաբերի և էլշի-

Մարդենում անցկացրած Սթրիբլենդի կյանքի միջև եղած հա- նդարութիւնը զրափեց ուշադրութիւնս, երբ նա զբաղված էր բարասլին գործունեութիւնը: Բայց միաժամանակ գիտեմ, որ կա- պիտան Նիկոլսը հայտնի ստախոս էր և հնարավոր է, որ նրա պատմածների մէջ ոչ մի ճշմարտութիւն չկար: Ես չէի զարմա- նա, եթէ հանկարծ լսեի, որ նա երբեք չէր տեսել Սթրիբլենդին և Մարտելի մասին արած իր պատմութիւնները ինչ-որ ամ- սադրից էր վերցրել:

Գլուխ 48

Սրանով էլ ես մտադրվել էի վերջացնել գիրքս: Սկզբում ուզում էի նկարագրել Սթրիբլենդի կյանքի վերջին տարիները թաթիւում և նրա սարսափելի վախճանը, հետո նոր անդրա- դառնալ այն ամենին, ինչ ինձ հայտնի էր նրա առաջին բայ- լերի մասին որպէս նկարիչ: Եվ դա ոչ թէ նրա համար, ու այդպէս էի ցանկանում, այլ նրա համար, որ գիտակցաբար էի ուզում բաժանվել Սթրիբլենդից այն ժամանակ, երբ նա պատ- բանքներով չի հոգով թողեց մայրցամաքը և մեկնեց անհայտ կղզիներ, որոնք վաղուց բոթրոթել էին նրա երեւակայութիւնը: Ինձ դուր էր դալիս, որ բառասունյոթ տարեկան հասակում, մե տարիք, երբ ուրիշները կանոնավոր ու համաշափ կյանք են վա- բում, նա ճանապարհ ընկավ նոր աշխարհ փնտրելու: Ես արդեն տեսնում էի հյուսիսային սառը հողմերից փրփրացող գորշ ծովը և Սթրիբլենդին՝ նավի տախտակամածին կանգնած հեռվում ան- հետացող Տրանսիայի ափերին նայելիս, որոնց այլևս երբևէ վիճակված չէր տեսնելու, և մտածում էի, որ, այնուամենայնիվ, նա անվեհեր հողի ունեւ: Այսպիսով ես ըստականում էի լավա- տեսական վերջավորութիւն տալ գրքիս: Դա կշեշտեր, թե որ- բան անպարտելի է մարդկային հոգու ուժը: Բայց ոչինչ շատաց- վեց: Չգիտեմ, թե ինչու պատմութիւնն ու չէր ստացվում և մի քանի փորձերից հետո հրաժարվեցի այդ մտքից: Եվ դիրքս սկսեցի, ինչպէս ընդունված է, սկզբից, որոշելով ընթացողի հետևողականորեն պատմել այն փաստերը, որ գիտեի Սթրի- լենդի կյանքի մասին:

Բայց իմ տրամադրութիւնն տակ միայն կողատուր տեղեկու- թիւններ կային: Ես գտնվում էի մի կենսաբանի վիճակում, որ

միայն մի ոսկորով պետք է վերականգնի նախապատմական կենդանու ոչ միայն արտաքինը, այլ նաև այրելիակերպը:

Մթերլենդը առանձնապես մեծ աւրավորութիւն շնորհեց Քաթիթում նրա հետ շփվող մարդկանց վրա նրանց համար նա պարզապէս մի քափառաշրջիկ էր, որ միշտ կարիքի մեջ է և մյուս քափառաշրջիկներից տարբերվում է միայն նրանով, որ ինչ-որ տարօրինակ նկարներ է նկարում: Եվ նրա մահից մի քանի տարի հետո միայն, երբ Փարիզից ու Բեռլինից խոշոր նկարավաճառների գործակալները եկան Տուսալով, որ Մթերլենդի նկարներից որևէ բան կգտնեն այստեղ, նոր գլխի ընկան, որ կարող էին շնչին գնով այնպիսի նկարներ գնել, որոնք հիմա հսկայական գումար արժեն, և շատ էին ափսոսում, որ բաց են թողել այդպիսի հնարավորութիւն: Տեղի բնակիչների մեջ Կոհեն անունով մի ֆրանսիացի հրեա կար, որի մոտ պատահաբար գտնվեց Մթերլենդի նկարներից մեկը: Բարեհոգի աշխերով և սիրալիր ծախսով ծերուկը, կես-նավաստի, կես-սոսորական, իր սեփական առագաստանովով շրջում էր Պաու-մոտի ու Մարկիզյան կղզիների միջև, ամեն տեսակի ապրանք բերելով այնտեղ և իր հետ տանելով կոպրա, սագամի և մարգարիտ: Գնացի նրան տեսնելու, ինձ ասել էին, որ նա էժան գներով մի մեծ սև մարգարիտ է վաճառում: Երբ պարզվեց, որ մարգարիտը գնելն իմ կարողութիւնից վեր է, խոսք բաց արի Մթերլենդի մասին: Մերուկը լավ էր ճանաչում Մթերլենդին:

— Դիտեք ինչ, ես հետաքրքրվեցի նրանով, որովհետև նա նկարիչ էր, — ասաց ծերուկը: — Մեզ մոտ, կղզիներում հազվադեպ է նկարիչ լինում, և ես խղճացի նրան, որովհետև շատ թույլ նկարիչ էր: Ես առաջինը նրան աշխատանք տվեցի: Թերակղզու վրա մի պլանտացիա ունեմ և սպիտակ վերակացուի կարիք ունեի: Բնիկներին շեռ աշխատեցնի, մինչև որ սպիտակ վերակացու շինի նրանց գլխին: Ես ասացի նրան. «Դուք նկարելու շատ ժամանակ կունենաք և մի փոքր էլ փող կվաստակեք»: Գիտեի, որ քաղցած է, դրա համար էլ լավ վարձատրութիւն առաջարկեցի:

— Զեմ կարծում, որ նա լավ վերակացու լիներ, — ասացի ես ծպտալով:

— Ես մասնների արանքով էի նայում դրան, որովհետև միշտ էլ սիրելի եմ նկարիչներին: Դա մեր արշան մեջ է: Բայց նա միայն

մի քանի ամիս մնաց ինձ մոտ: Երբ բավականաչափ փող ունեցավ ներկեր ու կտավ գնելու, հեռացավ: Տեղի բնութիւնը հիացնում էր նրան, և նա նորից թափառելու ցանկութիւն ունեցավ: Բայց ես շարունակում էի երբեմն հանդիպել նրան: Մի քանի ամիսը մեկ նա վերադառնում էր Պապետե և մի քանի օր ապրում այնտեղ, իսկ հետո, երբ նրան հաջողվում էր որևէ մեկից փող ճարել, նորից էր անհետանում: Եւ ման այցելութիւններից սեկի ժամանակ նա ինձ մոտ եկավ և փոխարինաբար երկու հարյուր ֆրանկ խնդրեց: Նա այնպիսի տեսք ուներ, կարծես մի ամբողջ շաբաթ ոչինչ չէր կերել, և ես շկարողացա մերժել նրան: Այդ փողի վրա, իհարկե, խաշ քաշեցի: Եվ հանկարծ մի տարի հետո նա եկավ ինձ տեսնելու, մի նկար էլ հետք: Պարտքի մասին ոչինչ չասաց, միայն թե, «Ահա ձեր պլանտացիայի բնակատեղիքը, ձեզ համար եմ նկարել»: Իս նայեցի նկարին և շղիտեի ինչ ասել, բայց, իհարկե, շնորհակալութիւն հայտնեցի, և երբ նա գնաց, նկարը ցույց տվի կնոջս:

— Իսկ ի՞նչ նկար էր այդ, — հարցրեցի ես:

— Էլ մի՞ հարցնեք: Ես դրանից գլուխ չհանեցի: Երբեք նման բան չէի տեսել կյանքումս: «Ի՞նչ անենք այս», — հարցրեցի կնոջս: «Հնարավոր չէ պատից կախել, — պատասխանեց կինս: Մարդիկ կծիծաղեն մեզ վրա»: Նա ձեզնահարկ տարավ նկարը, որտեղ ամեն տեսակի անպետք բաներ էինք պահում, որովհետև կինս չէր կարողանում որևէ բան դուրս պցել: Դա նրա մոլուցքն է: Պատկերացնում եք իմ զարմանքը, երբ եզբաբա պատերազմից առաջ Փարիզից գրեց. «Որևէ բան գիտե՞ս անգլիացի մի նկարչի մասին, որը Քաթիթում է ապրել: Պարզվում է, որ նա հանձար է, և նրա նկարները շատ բարձր գին ունեն: Եթե կարող ես որևէ բան ձեռք գցել, ուղարկիր ինձ: Կարելի է լավ փող շահնել: Ես էլ կնոջս ասացի. «Ինչ եղավ այն նկարը, որ Մթերլենդը նվիրեց ինձ: Միգուցե դեռ այնտեղ է»: «Իհարկե այնտեղ է, — ասաց կինս, — դու գիտես, որ ես ոչ մի բան չեմ գցում, դա իմ մոլուցքն է»: Միասին բարձրացանք ձեզնահարկ և այնտեղ ամեն տեսակի տնայետք իրերի մեջ, որ կուտակվել էր մեր նրեսուն տարվա կյանքի ընթացքում, բնկած էր այդ նկարը: Ես նորից նայեցի նկարին և ասացի. «Ում մտքով կ'անցնենք, որ իմ պլանտացիայի վերակացուն, որին երկու հարյուր ֆրանկ պարտք էի տվել, հանձար է: «Որևէ բան հասկանո՞ւմ ես այս նկարից»: «Ոչ, — ասաց կինս, — մեր պլանտացիային բոլո-

րովին էլ նման չէ, և ես երբեք կապույտ տերևներով կոկոսյան արմավենի չեմ տեսել: Բայց Փարիզում բոլորը խելքները թողրել են, գուցե եզբորդ հաշողվի վաճառել երկու հարյուր ֆրանկով, որ քեզ պարտը մնաց Սթրիբլենդը: Այդպես էլ արեցինք: Փաթաթեցինք նկարը և ուղարկեցինք: Շուտով եղբորիցս նամակ ստացանք: Եվ ինչ եք կարծում, ինչ էր նա գրում. «Նկարդ ստանալով ես սկզբում կարծեցի, թե որոշել ես խաղ խաղալ զխիս: Ես զրա համար նույնիսկ փոստի ծախսերը չէի տա: Ես նույնիսկ վախենում էի ցույց տալ նկարը այն մարդուն, որը խելքել էր գրել քեզ: Պատկերացնում ես զարմանքս, երբ նստաց, թե դա զլուսգործոց է և երեսուն հազար ֆրանկ առաջարկեց: Երևի նա ավել կտար, բայց, անկեղծորեն ասած, ես աչքսան էի շլմել, որ համաձայնվեցի, նախքան ուշքի կգալի»:

Եվ հետո մտայն Կոնենք մի հիանալի բան տասց:

«Ահաստ, որ խելք Սթրիբլենդը շտեմով այդ օրը: Պատկերացնում եմ, թե որքան կզարմանար, երբ իր նկարի համար քսանհինգ հազար ութ հարյուր ֆրանկ տալի»:

ԳԼՈՒԿ 49

Ես «Դե լա Չելեր» հյուրանոցում էի ապրում և հյուրանոցի տիրուհի միսիս Զոնսոնը մի տխուր պատմություն պատմեց այն մասին, թե ինչպես է բաց թողել երջանիկ պատահականությունը: Սթրիբլենդի մահից հետո նրա ունեցվածքի մի մասը աճուրդի հանվեց Պապետեի շուկայում: Միսիս Զոնսոնն էլ դնաց շուկա, որովհետև Սթրիբլենդի իրերի մեջ մի ամերիկյան վառարան կար, որը շատ էր ցանկանում ձեռք բերել: Նա քսանյոթ ֆրանկով գնեց վառարանը:

— Այնտեղ կար նաև տասից ավելի նկար,— ասաց նա,— բայց առանց շրջանակների, և ոչ ոք չէր առնում: Մի քանիսր ասար ֆրանկով ծախվեցին, իսկ մեծամասնությունը՝ հինգ-վեց ֆրանկով: Պատկերացնում եք, եթե գնեի, հիմա հարուստ կիսկլինեի:

Բայց Տիարե Զոնսոնը ոչ մի գեպրում հարուստ կին չէր դառնա: Նա փող պահել չգիտեր: Տիարեն թախիթում հաստատված մի անգլիացի կապիտանի և բնիկ կնոջ աղջիկ էր: Երբ ծանոթացա նրա հետ, մոտ հիսուն տարեկան կլինեի, բայց իր

վիթխարհ շահերի պատճառով ավելի տարիքով էր երեսուն: Բարձրահասակ և շափազանց գեղ լինելով, նա խիստ պատկառազու տեսք կունենար, եթե նրա դեմքը բացի բարեհոգությունից կարողանար այլ բան արտահայտել: Միսիս Զոնսոնի ձեռքերը ոչխարի ազդեր էին հիշեցնում, իսկ կուրծքը՝ կաղամբի հսկայական գլուխներ: Լալի, մոտո դեմքը, չգիտես ինչու՝ անպարկեշտորեն մերկ էր թվում, իսկ կղակի աճագին ծալքերը,— թե լանիսն էին դրանք, դժվարանում եմ ասել,— հուշարգում էին մեկը մյուսին, թաղվելով հսկայածավալ կրծքում: Նա ամբողջ օրը վարդագույն խալաթ ու ծղոտե լայնեզր գլխարկ էր կրում: Իսկ երբ արձակում էր իր երկար, թուխ ու գանգուր մազերը, մի բան, որ նա հաճախ էր անում, որովհետև պարծենում էր իր մազերով, չէր կարելի չհիանալ դրանցով, և աչքերն էլ երիտասարդ ու կրակոտ էին մնացել: Ես երբեք չեմ լսել, որ որևէ մեկը աչքքան վարակիչ ծիծաղեք, որքան նա: Նրա ծիծաղը, որ սկսվում էր ցածր որոտով ինչ-որ տեղ կոկորդում, գնալով ավելի էր բարձրանում մինչև որ նրա հսկայական մտքմինչը ամբողջովին ցնցվում էր: Տիարեն ամենից շատ երեք բան էր սիրում՝ ուրախ կատակ, մի բաժակ գինի և գեղեցիկ տղամարդ: Նրա հետ ծանոթ լինելն իսկական բավականություն էր:

Տիարեն կզգու լավագույն խոհարարուհին էր և պաշտում էր համեղ կերակուրները: Առավոտից մինչև ուշ երեկո նա նստում էր խոհանոցի ցածր աթոռին, շրջապատված շինացի խոհարարով ու երեք տեղացի աղջիկներով, բոլորի հետ ուրախ շաղակրատելով կարգապարտություններ էր անում ու համահունչ իր իսկ հնարած բարկահամ կերակուրները: Երբ ցանկանում էր բարեկամներից որևէ մեկին պատիվ տալ, անձամբ ինքն էր կերակուր պատրաստում: Հյուրասիրությունը նրա տարերքն էր, և կզգում չկար մեկը, որ առանց ճաշի հեռանար «Դե լա Չելեր»-ից, եթե այնտեղ ուտելու որևէ բան էր գտնվում: Տիարեն վարձ շտալու համար երբեք չէր վճարում իր կենվորներին, հուսալով, որ երբ կարողանան, կվճարեն: Նրանցից մեկը դժբախտության մեջ ընկավ, և Տիարեն մի քանի ամիս բնակարանի ու սննդի համար ոչինչ չվերցրեց նրանից, իսկ երբ շինական վաճառատանը մերժեցին նրա շորերը անվճար վանալ, ուղարկեց իրենի հետ «Չի կարելի թողնել, որ խելք տղան կեղտոտ վերնաշապիկով ման գա»,— ասաց Տիարեն, և քանի որ նա տղամարդ է, իսկ սղամարդուն ծխել է պետք, օրը մի ֆրանկ էր տալիս ծխա-

խոտի համար: Այնուհանդերձ նա նույնքան քաղաքավարի էր նրա հետ, որքան մյուսներին:

Տարիքն ու գիրությունը անընդունակ էին դարձրել Տիարեին սիրելու, բայց նա աշխույժ հետաքրքրություն էր ցուցաբերում երիտասարդների սիրալին գործերի նկատմամբ: Նա սերը բնական զբաղմունք էր համարում աղամարդու և կնոջ համար, և իր ընդարձակ փորձից ելնելով՝ միշտ պատրաստ էր խորհուրդներ ու ցուցումներ տալու:

— Ես տեսնեցիք տարեկան էլ չկայի, երբ հայրս իմացավ, որ սիրած ունեմ,— ասաց Տիարեն մի անգամ:— Նա Քերեկարձային թուշնա-ի կապիտանի երրորդ օգնականն էր, մի շատ ցեղեցիկ տղամարդ:

Միտիա Զոնսոնը հոգոց հանեց: Ասում են կանայք միշտ էլ բնորոշում են հիշում իրենց առաջին սերը, բայց արդյո՞ք նրանց միշտ է հաշտովում հիշել, թե ով էր առաջինը:

— Հայրս խելոք մարդ էր:

— Եվ ի՞նչ արեց,— հարցրեցի նա:

— Սկզբում սպանելու շափ ծեծեց, իսկ հետո ամուսնացրեց կապիտան Զոնսոնի հետ: Ես շտաբկեցի: Իհարկե, նա ինձանից սովելի մեծ էր, բայց նույնպես սիրուն տղամարդ էր:

Տիարեն— հայրը նրան անուշահոտ սպիտակ ծաղկի անունն էր տվել (Թախթիկներն ասում են, ով թեկուզ մի անգամ առել է նրա հոտը, որքան էլ հեռու գնա, միևնույն է, կվերադառնա Բախթի)— լավ էր հիշում Սթրիբլենդին:

— Նա երբեմն այստեղ էր գալիս, բացի զբանից ես հաճախ էի տեսնում նրան Պապետեի փողոցներում: Ես խղճում էի նրան: Շատ նիհար էր և միշտ էլ փող չէր ունենում: Երբ իմանում էի, որ քաղաքում է, տղային ուղարկում էի նրան ճաշի կանչելու: Մի երկու անգամ նույնիսկ աշխատանք ճարեցի նրա համար, բայց նա մի տեսակ ոչ մի բանի չէր կարողանում կաշել: Միաժամանակ հետո անտառը նորից էր ձգում նրան, և մեկ էլ տեսար անհետանում էր:

Սթրիբլենդը Թախթի հասավ Մարսելից դուրս գալուց վեց ամիս հետո: Նա իր ճանապարհածախսը վաստակեց Օբլենդից Սան Ֆրանցիսկո մեկնող նավի վրա որպես նավաստի ծառայելով և ափ իջավ իր ներկայանակով, նկարակալով ու մե դյուծին կտավներով: Նա գրպանում մի քանի Ֆուլետ ստեռլինգ ուներ, որ վաստակել էր Սիդնեյում, և տեղավորվեց բնիկների

մոտ մի փարթիկ սենյակում, բաղաբից դուրս: Հավանաբար Սթրիբլենդը հասնելով նա իրեն զգաց ինչպես տանը: Տիարեի պատմելով, մի անգամ Սթրիբլենդն ասաց նրան:

— Ես տախտակամածն էի լվանում, և հանկարծ նավաստիներից մեկն ասաց. «Ահա և հասանք»: Ես վեր նայեցի, տեսա կղզու ուրվագծերը և անմիջապես հասկացա, որ դա այն տեղն է, որ ես փնտրել եմ ամբողջ կյանքում: Եվ երբ մոտեցանք, ինձ թվաց, թե ճանաչեցի այդ կղզին: Հիմա էլ, երբ շրջում եմ այստեղ, ամեն ինչ ինձ ծանոթ է թվում: Կարող եմ երգվել, որ ինչ-որ ժամանակ ապրել եմ այստեղ:

— Դա պատահում է,— ասաց Տիարեն:— Ես գիտեի մարդկանց, որոնք մինչև նավը բեռնավորվելը մի քանի ժամով ափ էին իջնում և երբեք չէին վերադառնում: Շատերն էլ գալիս էին այստեղ մի տարի ծառայելու և դնալիս անիծում էին Թախթին, երգվելով, որ սովելի լավ է կախվեն, քան վերադառնան այստեղ, իսկ վեց ամիս հետո նորից էին երևում նավահանգստում: Եվ ասում էին, որ ուրիշ տեղ այլևս չեն կարող ապրել:

Գլուխ 50

Ինձ թվում է, կան մարդիկ, որոնք ծնվում են ոչ այնտեղ, որտեղ պետք է ծնվեին: Պատահականությունը նրանց պատճառ է այս կամ այն երկիրը, բայց նրանք միշտ էլ տանջվում են իրենց սահմայտ հայրենիքի կարոտից: Նրանք օտարականներ են իրենց ծննդավայրում, և մանկությունից ծանոթ ստվերախիտ ծառուղիները, ինչպես նաև մարդաշատ փողոցները, որտեղ խաղացել են, մնում են ճանապարհի լուկ ժամանակավոր հանգրվան: Նրանք ապրում են իրենց հարազատների շրջանում որպես օտարականներ, օտարականներ են մնում իրենց հարազատ վայրերում: Միգուցե այդ օտարացման զգացողությունն է, որ մղում է նրանց դեպի հեռուն, փնտրելու ինչ-որ հաստատուն բան, որին կարողանան կապվել: Միգուցե ինչ-որ խոր ու թաքնված ատավիզմ ըջում է այդ հավերժական թափառաշրջիկներին դեպի ետ այն երկրները, որ նրանց նախնիները թողել են պատմության հեռավոր անցյալում: Երբեմն պատահում է, որ մարդ ոտք է դնում մի երկիր, որին կապված է խորհրդավոր կապերով: Ահա այն տունը, որ նա փնտրում էր, և այնպիսի ցանկություն է

ունենում նստելու բնութիւն մեզ, որն սուտը իրեն անծանօթ էր, լինելու մարդկանց մեջ, որոնց կրքեր չի տեսել, կարծես գա իր խակական հայրենիքը լինելու Աշխատեղ էլ նա վերջապես հանգիստ է դառնում:

Ես Տիրաւորն պատմեցի այն մարդու պատմութիւնը, որի հետ ծանոթացել էի Լոնդոնի «Սուրբ Քոմաս» հիվանդանոցում: Նա Աբրահամ անունով մի հրեա էր, խարտիչահեր, ամբակազմ կրիստոսարդ, ամաշկատ ու շատ համեստ, բայց հաղվազուտ ստղանդի տեր: Բնատիտար խոշակ էր տալիս նրան և ուսման հինգ տարիների ընթացքում նա մնաց լավագոյն ուսանողը: Բժշկական ֆակուլտետն ամառակուց հետո Աբրահամին պահեցին հիվանդանոցում աշխատելու որպէս վիրաբույժ ու թերապևտ: Նրա փայլուն տաղանդը ընդունում էին բոլորը: Շուտով Աբրահամը մշտական պաշտան ստացավ, նրա ապագան ապահովված էր: Եթէ կարելի է մարդու մասին ընդհանրապէս կանխազուշակութիւններ անել, ուրեմն, Աբրահամին վստահորեն կարելի էր մեծ ապագա զուշակել: Նրան մեծարանք ու հարգատիւն էր սպասվում: Նախքան իր նոր պարտականութիւններին անցնելը, նա որոշեց արձակուրդ վերցնել, և քանի որ միջոցներ չունէր, Լեանտ մեկնող մի նավի վրա վիրաբույժ ընդունվեց: Նավի վրա առանձնապէս բժշկի կարիք չունէին, բայց հիվանդանոցի ավագ բժիշկներէջ մեկը ծանօթ էր շոգենավային հաղորդակցութիւն դժի գիրեկտորի հետ, և Աբրահամը աշխատանքի տեղավորվեց:

Մի քանի շաբաթ հետո գիրեկցիան մի նամակ ստացավ, որով Աբրահամը հայտնում էր, որ երբեք հիվանդանոց չի վերադառնա: Դա մեծ զարմանքի և ամեն տեսակ յուրերի առիթ սովեց: Երբ մարդ որեւէ անսպասելի արարք է կատարում, մարդիկ ամենաշարժարեկիչ շարժումներ են վերագրում դրան: Բայց շուտով գովեց մեկը, որ պատրաստ էր դրավել նրա անզոր, և Աբրահամին մոտացան: Այլևս ոչինչ չովեց նրա մասին:

Միայն մտաւորապէս տասը տարի հետո, երբ մի առափոս մեր նավը Ալեքսանդրիայի նավահանգիստ մտավ, մյուս ուղեւորների հետ ես ես բժշկական քննութիւն ենթարկվեցի: Բժիշկը, որ մաշված կոստյումով մի դեր մարդ էր, երբ պարտիք հանեց, նկատեցի, որ բոլորովին ճաղատ է: Ինձ թվաց, թէ ինչ-որ տեղ հանգիստ էմ նրան: Հանկարծ հիշեցի:

— Աբրահամ, — ասացի ես:

Նա տարակուսանքով շրջեց իմ կողմը, նայեց, ճանաչեց ու շերտերն սեղմեց ձեռքու: Զարմացական հայացքներ փոխանակուց հետո, իմանալով, որ մտադիր եմ Ալեքսանդրիայում գիրեկուց, նա հրաժիբեց ինձ Անդրիական տեղում: Ընդունու երեկոյան, երբ նորից հանդիպեցինք, հարցրեցի, թէ ինչպէս է այստեղ բնկել: Նա շատ համեստ պաշտոն էր գրավում և պարզ երևում էր, որ նյութապէս նեղ պրոսթիւն մեջ է: Աբրահամը պատմեց ինձ իր պատմութիւնը: Երբ Միջերկրական ծովով ճանապարհորդութիւն մեկնեց, նա մտած էր, որ կվերագտնու Լոնդոն և կանցնի իր աշխատանքին: Բայց մի գեղեցիկ առափոս նրանց նավը մտնեցավ Ալեքսանդրիային, և Աբրահամը ստիտակամածից տեսավ արեւի տակ փայտը սպիտակ բուլբուլ ու ծովափին հավաքված ամբոխը, տեսավ ցնցոտիավոր բնիկներին, սուղանցի ներքերին, աղմկոտ հուլներին և խաղաղիւնէրէն: Ֆեռավոր ամբարտաւան թուրքերին, պայծառ արեն ու կուրուլա էրկիները, և ինչ-որ անհասկանալի բան պատահեց արան, որ մնարավոր չէր բացատրել: «Դա կայծակի հարվածի էր ձեռքը» — ասաց նա, և չբավարարվելով գրանով, ավելացրեց, — ավելի միշտ հայտնութիւն: Նրա սիրտը ճնշեց, հետո հանկարծակի բերկանքի ու սրանչիկ ազատութիւն զգացում համակեց նրան: Աբրահամին թվաց, թէ այստեղ է իր հայրենիքը և անմիջապէս որոշեց մինչև կյանքի վերջը Ալեքսանդրիայում ապրել: Նավի վրա առանձնապէս խոշոնդոտներ չեղան և բանջար մամ հետո նա արի իջավ իր բոլոր իրերով:

— Կապիտանը ձեզ, իհարկե, խելագարի տեղ գրեց, — ասացի ես ծպտալով:

— Ինձ համար միևնույն էր, թէ ինչ կմտածեն իմ մասին: Այդ ես չէ, որ գործում էի, այլ ինչ-որ անհավանարելի ուժ, որ իմ մեջ էր: Որոշեցի մի հունական համեստ հյուրանոց դնալ, և մինչ փնարում էի, հանկարծ հասկացա որտեղ դառնել այն և ուղիղ այնտեղ դնացի, իսկ երբ տեսա հյուրանոցը, անմիջապէս ճանաչեցի:

— Դուք սուտը եղել էիք Ալեքսանդրիայում:

— Այ, մինչ այդ ես երբեք զուրս չէի եկել Անդրիայից:

Շուտով նա պետական ծառայութիւն անցավ և աշգրտեա էլ մնաց այդ աշխատանքում:

— Դուք երբեք զոջուցե՞լ էք ձեր արարքի համար:

— Երբեք, ոչ մի վայրկյան: Ես բավական վստակում եմ:

գոյութիւնս պահպանելու համար և զոճ եմ: Ճակատագրից ավելին չեմ խնդրում մինչև մահ և մեռնելիս կասեմ, որ հիանալի կյանք ապրեցի:

Հաջորդ օրը մեկնեցի Ալեքսանդրիայից, մոռացա Աբրահամին մինչև որ վերջերս ինձ նորից բախտ վիճակվեց ճաշելու մի այլ ծանոթի՝ (նույնպես բժիշկ) Ալեք Քարմայքի հետ, որը Անգլիայում մեծ հաջողութիւն ունեւր: Ես նրան պատահաբար հանդիպեցի փողոցում և շնորհավորեցի բարոնետի տիտղոս ստանալու առթիվ, որ նրան շնորհվել էր պատերազմի ժամանակ մատուցած մեծ ծառայութիւնների համար: Ի պատիվ անցած օրերի, որոշեցիք երեկոն միասին անցկացնել, ընդ որում նա առաջարկեց ուրիշ ոչ մեկի չհրավիրել, որպեսզի անկաշկանդ գրուցեմք: Ալեքը մի հրաշալի տուն ունեւր Քազուհի Աննայի փողոցի վրա, որ մեծ նաշակով էր կահավորել: Ծաշասեղյակի պատերին տեսա մի հիանալի Բելլետտո՝ և Զոֆանիսի՝ երկու նկար, որոնք շարժեցին իմ նախանձը: Երբ Ալեքի բարձրահասակ, գեղեցիկ, սկզբած դիպակե զոհատ հագած կինը մնգ մեծ նակ թողեց, և ծիծաղելով նկատեցի նրա կյանքում կատարված փոփոխութիւնները այն ժամանակից ի վեր, երբ մենք բժշկական ֆակուլտետի ուսանողներ էինք: Ուսանող եղած ժամանակ մենք ճոխութիւն էինք համարում Վեստմինսթր Բրիջ Ռոուզի վրա պանվոզ իտալական խղճուկ ուստորանում ճաշելու Այժմ Ալեքը մի քանի հիվանդանոցների հասարկում էր գտնվում և հավանաբար տարին տասը հազար ֆունտ ստեռլինգ է ստանում, իսկ բարոնետի տիտղոսը առաջինն էր այն մեծարանքներից, որ անկասկած սպասում էին նրան:

— Այո, ես հաջողութեան եմ հասել,— ասաց նա,— բայց ամենաաւարորինակն այն է, որ այս բոլորով ես պարտական եմ երջանիկ պատահականութեանը:

— Ի՞նչ նկատի ունես:

— Հիշո՞ւմ ես Աբրահամին: Նրան էր փայլուն ապագա սպասվում: Երբ ուսանող էինք, նա ամեն ինչով գերազանցում էր ինձ: Աբրահամն էր արժանանում այն բոլոր պարգևներին ու թոշակներին, որոնց ձգտում էի ես: Նրա մոտ ես միշտ էլ երկրորդ ջութակ էի մնում: Եթե հիվանդանոցում մնար, հիմա նա՛ կգրավեք այս դիրքը, ոչ թե ես: Աբրահամը հանճարեղ վիրաբույժ էր: Ոչ մեկը չէր կարող մրցել նրա հետ: Երբ նրան վերդրին «Սուրբ Թոմաս» հիվանդանոց, ես ոչ մի շանս չունեի այն-

տեղ ընդունվելու: Ես ստիպված պիտի լինեի պարզապէս պրակտիկ բժիշկ դառնալ, առանց հույս ունենալու, որ երբէք գուրս կգամ միջակութիւնից: Բայց Աբրահամը հեռացավ և նրա տեղն ինձ մնաց: Դա էլ եղավ իմ առաջին հաջողութիւնը:

— Բերես դու ճիշտ ես:

— Երջանիկ պատահականութիւն: Աբրահամը, իմ կարծիքով, ինչ-որ տարօրինակ մարդ էր: Եեզը բոլորովին բնկել էր ուսնիտարական բժշկի պէս մի բան է Ալեքսանդրիայում և կուլեկներ է ստանում: Ասում են մի տգեղ ու ծեր հույն կնոջ հետ է ապրում, որը կէս գլուխն զննծախտավոր երեխաներ է պարգևել նրան: Իրոք որ միայն խելք ունենալը բաշխական չէ: Կարեւորը բնավորութիւնն է: Աբրահամը թույլակամ մարդ էր:

Բնավորութիւն: Իսկ ես կարծում եմ, որ շատ ուժեղ բնավորութիւն պետք է ունենալ, որ կեսածայա մտորումներից հետո խաշ քաշես փայլուն ապագայի վրա միայն նրա համար, որ քո առջև տեսնում ես ապրելու մի այլ և ավելի կարեւոր ճանապարհ: Եվ ավելի ուժեղ բնավորութիւն պետք է ունենալ, որ երբեք չզղջու՛ նման հոնկարծական քայլի համար: Բայց ես շատ քակեցի, և Ալեք Քարմայքը մտախոհ շարունակեց:

— Իհարկե, կեղծավորութիւն կլինեք իմ կողմից, եթե ձեացնեի իբր ափսոսում եմ, որ Աբրահամը այդպիսի քայլի դիմեց: Վերջապէս քիչ շահեցի դրանից:— Նա հաճույքով ներս քաշեց թանկագին սիգարի ծուխը:— Իսկ եթե իմ անձնական շահագրգռվածութիւնը շինեք, կափսոսայի, որ նման տաղանդը կորավ: Մա՛րդ էլ այդպէս կործանի իրեն:

Ես չէի կարծում, թե Աբրահամը կործանել է իր կյանքը: Միթե անել այն, ինչ ուզում ես, ապրել այնպէս, ինչպէս ցանկանում ես, առանց ներքին անհամաձայնութեան, նշանակում է կործանել իրեն: Այնքան էլ մեծ երջանկութիւն չէ հայտնի վիրաբույժ լինելը, տարին տասը հազար ֆունտ ստեռլինգ եկամտով, և գեղեցիկ կին ունենալը: Իմ կարծիքով ամեն ինչ այսլանակովոված է նրանով, թե ինչ ես փնտրում կյանքում, և ինչ ես պահանջում քեզանից ու հասարակութիւնից: Բայց ես նորից լեզուս ինձ պահեցի, որովհետև ով եմ ես, որ առարկեմ բարոնետին:

Երբ Տիարեին պատմեցի այս պատմութիւնը, նա գովեց ինչ զսպվածութիւնս համար, և հաշորդ մի քանի բոպեններին մենք սիսես էինք կճպում: Հետո նրա հայացքը, որ միշտ ուշադիր էր խոհանոցային գործերի նկատմամբ, կանգ առավ շինացի խոհարարի ինչ-որ անփութութեան վրա, որը վայրույթի պոռթկում առաջացրեց նրա մեջ: Նա լուտանքների տարտի տեղաց խոհարարի գլխին: Չինացին պարտքի տակ շմնաց, և սկսվեց աշխույժ իրարանցում: Նրանք գոռգոռում էին բնիկների լեզվով, — բացի մի քանի բառից եւ ոչինչ չգիտեի այդ լեզվով, — և այնպես, որ թվում էր, թէ ուր որ է կսկսվի աշխարհի վերջը, բայց շուտով խաղաղութիւնը վերականգնվեց, և Տիարեն սիգարետ առաջարկեց խոհարարին: Նրանք սկսեցին լուռ ծխել:

— Իսկ դուք գիտե՞ք, որ ես կին ճարեցի նրա համար, — հանկարծ ասաց Տիարեն, և նրա ամբողջ լայնածավալ դեմքը ողողվեց ծպիտով:

— Խոհարարի՞ համար:

— Ոչ, Սթրիբլենդի:

— Բայց նա ամուսնացած էր:

— Նա ինձ աղագես էլ ասաց, իսկ ես պատասխանեցի, որ այն կինը Անգլիայումն է, իսկ Անգլիան՝ աշխարհի մյուս ծայրին:

— Ճիշտ է, — համաձայնվեցի ես:

— Նա Պապեա էր գալիս երկու երեք ամիսը մեկ, երբ ներկերի, ծխախոտի կամ փողի կարիք էր ունենում, և անտուն ջան նման թափառում էր փողոցներում: Ես շատ էի խզում նրան: Մի աղախին ունեի այստեղ, Աթա էր անունը: Նա իմ հեռավոր ազգականուհին էր. նրա ծնողները մահացել էին, և ես վերցրել էի նրան ինձ մոտ ապրելու: Սթրիբլենդը երբեմն մեզ մոտ էր գալիս մի լավ ճաշելու կամ տղաներից մեկի հետ շախմատ խաղալու: Ես նկատել էի, որ Աթան նրան է նայում և հարցրեցի, դո՞ւր է գալիս իրեն Սթրիբլենդը: Նա պատասխանեց թէ՛ շատ: Դե, դուք լավ գիտեք այդ աղջիկներին, նրանք միշտ էլ պատրաստ են սպիտակ տղամարդու հետ գնալու:

— Աթան տեղացի՞ էր, — հարցրեցի ես:

— Իհարկե, գաղբյուր բնիկ: Այսպես, ուրեմն, Աթայի հետ խոսելուց հետո մարդ ուղարկեցի Սթրիբլենդի ետևից և ասացի

նրան, «Ժամանակն է, որ լրջանաս, Սթրիբլենդ: Թո տարիներն սողական չէ քարչ գալ ծովափի աղջիկների հետ: Նրանք մատ ողջիկներ են և լավ բան մի սպասիր նրանցից: Դու փող չունես և ոչ մի աշխատանքում երկու ամսից ավելի չմնացիր: Հիմա էլ ոչ մեկը աշխատանք չի տա քեզ: Ասում ես կարող ես գոյությունը պահպանել անտատում այս կամ այն տեղացի կնոջ հետ սպրելով. նրանք ուրախութեամբ են ընդունում քեզ, քանի որ սպիտակ տղամարդ ես, բայց դա վայել չէ սպիտակ տղամարդուն: Իսկ իմա ուշադիր լսիր ինձ, Սթրիբլենդ...»:

Տիարեն ֆրանսերեն ու անգլերեն բառերը իրար էր խառնում, որովհետեւ երկու լեզվով էլ վարժ էր խոսում, ընայած երդող ստոգանութեամբ, բայց հաճելի լինելուց ոչ զուրկ նրան լսելիս թվում էր, թէ աղբյուր, հավանաբար, կիսուր թաշուր, Լիկ կարողանար անգլերեն խոսել:

— Ի՞նչ կասես Աթայի հետ ամուսնանալու մասին: Նա լավ աղջիկ է, ընդամենը տասնյոթ տարեկան: Նա այդ աղջիկների թայր չէ, շմանայան է, կապիտան կամ սառչին օգնական դեռ ոչինչ, բայց ոչ մի բնիկ ձեռք չի տվել նրան: Elle se respecte, vois-tu! «Թա՛հու»-ի ծախսարարը, երբ վերջին անգամ այստեղ էր, ասաց, որ կզգինքնում Աթայի պես գեղեցիկ աղջիկ չի տեսել: Ժամանակն է, որ նա ընտանիք կազմի, և բացի դրանից, կապիտաններն ու օգնականներն էլ են բազմազանութիւն սիրում: Ես երկար չեմ պահում իմ աղջիկներին: Աթան Տարավաում, հրվանդանի հենց մուտքի մոտ, մի հողակտոր ունի, կոպրայի ներկայիս գների պայմաններում կարող էք շատ հանգիստ ապրել: Այնտեղ տուն կա, և կարող ես նկարել սրբան օւղենաս: Հը, ի՞նչ կասես:

Տիարեն մի փոքր շունչ առավ:

— Հենց այդ ժամանակ էլ նա ինձ պատմեց Անգլիայում ապրող իր կնոջ մասին: «Սթրիբլենդ, — պատասխանեցի ես նրան, — բայց տղամարդիկ էլ ինչ-որ տեղ կին ունեն, դրա համար էլ փախչում են մեզ մոտ՝ կղզիները: Աթան խեղահաս աղջիկ է և բազմազգի մոտ արարողութեան կարիք չունի: Նա բողոքական է, իսկ բողոքականները, ինչպես գիտես, այդ բուրբին այլ կերպ են նայում, բան կաթողիկոսները: Այստեղ նա ասաց, «Իսկ ի՞նչ կարծիքի է Աթան», — «Ինչքան գիտեմ, ես սնտարբեր չէ բո նկատմամբ, — ասացի ես, — կհամաձայնվի, եթէ դու ցանկանում ես: Կանչե՞մ նրան»: Սթրիբլենդը մի անասկ

տարօրինակ շորութեամբ քմծիծաղ տվեց,— նա այդպիսի սովորութիւն ունէր,— և ես կանչեցի Աթալին: Աթան, շարածճին, գիտե՞ր, թէ ինչի մասին էի խոսում Սթրիբլենդի հետ, ես աչքի ծայրով տեսնում էի, նա լսում է մեզ, շնայած ձևացնում էր իբր բլուզն է արդուկում: Աթան մտեցաւ. նա ծիծաղում էր ու փոքր-ինչ ամաչում: Սթրիբլենդը լուռ նայում էր նրան:

— Նա լավի՞կն էր,— հարցրեցի ես:

— Ոչինչ: Երևի տեսած կլինէր նրա նկարները: Սթրիբլենդը շատ էր նկարում նրան, երբեմն պարեռով, երբեմն էլ բոլորովին մերկ: Այո, նա բավական լավիկն էր, և լավ էլ կերակուր էր եփում: Ես էի սովորեցրել նրան: Տեսնե՞մ Սթրիբլենդը մտածմունքի մեջ է ընկել, ես ասացի. «Աթալին ես լավ եմ վարձատրել, և նա հավաքել է այդ փողերը, բացի այդ, կապիտաններն ու առաջին օգնականներն էլ երբեմն տալիս էին նրան, այնպես որ հիմա մի քանի հարյուր ֆրանկ ունի: Նա շուրջ իր շեկ մորուքն ու ժպտաց: «Գե, Աթա, — ասաց նա, — պատկերացնո՞ւմ ես ինձ ամուսնու դերում»: Աթան ոչինչ չպատասխանեց, միայն ծիծաղեց քթի տակ: «Ասում եմ չէ, իմ խեղճ Սթրիբլենդ, որ աղջիկը անտարբեր չէ քո նկատմամբ» — պնդեցի ես: «Ես կծեծեմ քեզ», — ասաց Սթրիբլենդը նայելով Աթալին: «Ուրիշ ոնց իմանամ, որ սիրում ես ինձ», — պատասխանեց աղջիկը:

Տիարեն ընդհատեց իր պատմութիւնը և հետո մտախոհ ասաց.

— Իմ առաջին ամուսինը՝ կապիտան Զոնտոնը միշտ ձեռնում էր ինձ: Նա իսկական տղամարդ էր, գեղեցիկ, բարձրահասակ՝ վեց ֆուտ երեք դույմ, և երբ խմած էր լինում, հնարավոր չէր դուպել նրան: Այդպիսի օրերին ամբողջ մարմինս կապուսած էր լինում: Երբ նա մահացավ, ինչքա՞ն էի լաց լինում: Թվում էր չեմ գիմանա: Բայց երբ ամուսնացա Զորը Ռեյնիի հետ, նոր հասկացա, թէ ինչ էի կորցրել: Մինչև մեկի հետ աղ ու հաց չուտես, չես ճանաչի: Ես երբեք տղամարդուց այդքան չէի հիասթափվել, որքան Զորը Ռեյնիից: Նա էլ էր աչքի բնկնող աղամարդ, ճիշտ է, կապիտան Զոնտոնից մի փոքր ցածրահասակ էր, բայց տեսքով ամբողջով էր: Բայց միայն տեսքով: Երբեք չէր խմում, ձեռք չէր բարձրացնում վրաս: Նրան քարոզիչ կսպե՞ր: Ես սիրաբանում էի բոլոր նավերի սպաների հետ, որոնք այստեղ էին գալիս. իսկ Զորը Ռեյնին ոչինչ էր նկատում: Վերջապես զզվեցի նրանից ու բաժանվեցի: Ինչիս էր պետք

այդպիսի ամուսինը: Մարսափելի է, թէ ինչպես են որոշ տղա՛վ մարդիկ վարվում կանանց հետ:

Ես մի քիչ ախտավառ արեցի Տիարեի հետ և սրտատուչօրեն նկատեցի, որ տղամարդիկ ի սկզբանե խաբեբաներ են, և հետո խնդրեցի շարունակել Սթրիբլենդի պատմութիւնը:

— Լավ, ասացի նրան, շտապելու կարիք չկա: Ամեն ինչ լավ կշտադատիր: Աթան կողաշենքում մի գեղեցիկ սենյակ ունի: Ապրիք նրա հետ մի ամիս և տես, կհամարձակես նրան: Կարող ես ինձ մոտ ճաշել: Իսկ ամսվա վերջին, երբ որոշես ամուսնանալ նրա հետ, տեղափոխվիր նրա տունը և ապրիք այնտեղ: Նա համաձայնվեց: Աթան շարունակում էր տան գործերն անել, իսկ նա, ինչպես խոստացել էի, ինձ մոտ էր ճաշում: Աթալին մի քանի տեսակ ճաշեր պատրաստել սովորեցրի, որ սիրում էր Սթրիբլենդը: Այդ ժամանակ Սթրիբլենդը քիչ էր նկարում. թափառում էր լեռներում և գետում լողանում: Հաճախ նստում էր ասիին, նայում ծովալճակին, իսկ երեկոները գնում էր Մուրեա կղզուն նայելու, կամ էլ ձուկ էր որսում: Նա սիրում էր թափառել նավահանգստում և գրուցել բնիկների հետ: Սթրիբլենդը պատվական, հանգիստ մարդ էր: Ամեն երեկո Աթալի հետ կողաշենք էին գնում: Ես արդեն զգում էի, որ անտառը նորից է ձգում նրան և ամսվա վերջին հարցրեցի, թէ ինչ է որոշել անել: Նա պատասխանեց, եթէ Աթան համաձայն է, պատրաստ է նրա հետ գնալ: Ես հարսանիքի ճաշ տվեցի նրանց համար, իմ ձեռքով սիսեռի ապուր, օմար, à la portugaise, կերրի և կոկոսյան ընկուզի սալաթ՝ պատրաստեցի, — ի դեպ, դուք դեռ ինձ մոտ չեք փորձել այդ սալաթը: Անպայման պետք է հյուրասիրեմ ձեզ քանի այստեղ եք, — և վերջում էլ պաղպաղակ տվեցի: Ինչքան շամպայն խմեցինք, հետո էլ լիկյոր: Որոշել էի փառասէն կեքուխում սարքել: Հետո հյուրասենյակում պարեցինք: Ես դեռ այսքան չազ չէի և շոտ էի սիրում պարել:

«Հոթնի գե լա Ֆլիր»-ում որդես հյուրասենյակ էր ծառայում մի փոքրիկ սենյակ, որտեղ մի հին դաշնամուր և պատերի տակ խնամքով դասավորված գրողմատիպ թավիշով երեսպատված մահոդանի կահույք կար: Կտր սեղաններին լուսանկարների պատկեր էին դրված, իսկ պատերին փակցված էին Տիարեի և նրա ամուսնու՝ կապիտան Զոնտոնի մեծադիր լուսանկարները: Զնայած Տիարեն առդեն ծեր էր ու ճարպակալ, մի անգամ մենք հավաքեցինք բրյուսելյան դորը, աղջիկ՝ Էլիս և Տիարեի մի քանի

ծառայողների կանչեցինք և պարեցինք, ճիշտ է, այս անգամ գրամիլիոնի ճղճղան ձայնի տակ: Պատշգամբում օդը հագեցած էր սխաբի հաճելի բուրմունքով, իսկ մեր գլխավերևում, անամպ երկնքում փայլում էր Հարավային հաշի համաստեղությունը: Տիւրքն մեղմորեն ժպտաց, հիշելով անցած օրերի զվարճությունները:

— Պարեցինք միևնույն երեքը, — շարունակեց նա իր պատմությունը, — և երբ գնացինք քնելու, դեռ հարբած էինք: Ես նրանց ասացի, քանի ճանապարհը լավ է, գնան իմ երկանիվ սայլակով, որովհետև դրանից հետո դեռ երկար ճանապարհ պետք է անցնենք ոտքով: Աթաշի հողամասը պտնվում էր հեռու լեռներում: Նրանք դուրս եկան յույսը նոր բացված, և տղան, որին նրանց հետ էի ուղարկել, վերադարձավ միայն հաշորդ օրը:

Ահա թե ինչպես ամուսնացավ Սթրիբլենդը:

ԳԼՈՒԿ 52

Հաշորդ երեք տարիները, հավանաբար, Սթրիբլենդի կյանքի ամենաերջանիկ տարիները եղան: Աթաշի տնակը գտնվում էր էլզզին գոտեկորոզ ճանապարհից ոչի կիլոմետր հեռու և այնտեղ հասնելու համար պետք էր անցնել արևադարձային ծառերի փարթամ սաղարթով ստվերածածկ ոլորապտույտ արահետով: Չնեղված փայտից պատրաստված այդ բունգալուն միայն երկու սենյակ ուներ, Գրում ծածկի տակ տեղավորված էր խոհանոցը: Տան ամբողջ կահավորանքը մի քանի խսիրներից էր բաղկացած, որոնք որպես անկողին էին ծառայում, և պատշգամբում դրված մի ճոճաթոռից: Ազամաթղենիները իրենց ջրբերված սնազին տերևներով, որոնք վտարանգի կաշարհու պատանուված հագուստներ էին հիշեցնում, անել էին տան շուրջը: Կար է մի տանձի ծառ ու բազմաթիվ կոկոսյան արձավենիներ (այդ մարերում կոկոսյան ընկույզը եկամտի հիմնական աղբյուրն է): Աթաշի հայրը իր հողամասի շուրջը կրստոնների թիկն էր տընկել, որոնք շարժամորեն անկում, նմանվել էին տոնական ուրախ կրակներից կազմված ցանկապատի: Մի մտնողի ծառ էր բարձրանում տան առջև, իսկ բացառի ծայրին երկու կից աճած ճեղկարմավ իրենց բուսորդուն ծաղիկներով մրցում էին կուկոսյան ընկույզների ոսկերանդ գույների հետ:

Այստեղ էր ապրում Սթրիբլենդը, բավարարվելով այն ամենով, ինչ տալիս էր հողը, և միայն հազվագեպ էր դնում Պասպետե նրանց տան մոտով մի փոքրիկ գետակ էր հստում, որտեղ նա լողանում էր: Պատահում էր, որ գետակով վեր էին բարձրանում ծովաձկների վտաններ: Այդ ժամանակ հավաքվում էին եռածանիններով զինված բնիկները և աղմուկ աղաղակով դրանցով խոցում խոշոր, վախեցած ձկներին, որոնք ևս՝ գեպի ծով էին շտապում: Երբեմն Սթրիբլենդը հրվանգուն էր գնում և այնտեղից վերադառնում էր՝ իր հետ բերելով օմար կամ գամբյուրը լիքը մանր գունավոր ձկներ, որոնք Աթան տապալում էր կոկոսյան ընկույզի յուղով: Աթան համեղ կերակուրներ էր պատրաստում նաև ցամաքային խեցեանից, որ այդ վայրերում հաճախ է մարդու ոտքի տակ հայտնվում: Լեռներում վայրի նարինջներ էին աճում, և Աթան ժամանակ առ ժամանակ հարեան գյուղի մի քանի կանանց հետ գնում էր այնտեղ ու տուն վերադառնում կանաչ, քաղցր, հյութեղ պտուղներով բունգալում: Երբ հասնում էին կոկոսյան ընկույզները, Աթաշի ազգականները (ինչպես բոլոր բնիկները, այնպես էլ Աթան մեծ քանակությամբ բարեկամներ ուներ) բարձրանում էին ծառերը և ցած գցում խոշոր հասուն պտուղները: Նրանք բացում էին ընկույզները և դնում աբի տակ շորանալու: Հետո կտրում էին կոպրան և լցնում պարկերը, և կանայք տանում էին ծովալճակի մոտ գտնվող գյուղ, մեծաքանակ զնորդի մոտ, իսկ փոխարենը ստանում բրինձ, օճառ, մսի պահածո և մի բիլ էլ փող: Երբեմն որևէ տանակատարություն տոխիով խոզ էին մորթում գյուղում և տանաերին ու հյուրերը ուտում էին տրաքվելու շափ, պարում և կրոնական երգեր երգում: Բայց Աթաշի տունը գյուղից հեռու էր, իսկ թախիցիները ծուլ են: Նրանք սիրում են վրոսնել, բամբասել, բայց ստրով ման գալը նրանց համար չէ, և պատահում էր, որ Սթրիբլենդն ու Աթան շաբաթներով բոլորովին մենակ էին ապրում: Սթրիբլենդը նկատում էր, կարգում, իսկ երբ մթնում էր, նստում էին պատշգամբում և նայում գիշերին: Հետո Աթան երեխա ունեցավ և պառավը, որ օգնել էր նրան ծննդաբերության ժամանակ, մնաց նրանց մոտ ապրելու: Շուտով պառավի մոտ եկավ նրա թոռնիկը, հետո մի պատանի, ոչ որ չգիտեր, թե ով էր նա և որտեղից, բայց նա էլ սուսնց բաշվելու տեղավորվեց նրանց մոտ և ապրեցին նրանք բոլորը միասին:

— Tenez, voilà le capitaine Brunot¹, — ասաց մի օր Տիա-
բեն, երբ ևս աշխատում էի ի մի բերել այն ամենը, ինչ նա
պատմեց էր Մթրիբլենդի մասին: — Կապիտանը լավ է ճանաչում
Մթրիբլենդին և եղև է նրա տանը:

Իմ տաշն կանգնած էր միջին տարիքի լայնաթավ մարտով,
որի մեջ արգեն սպիտակ մուգեր էին հայտնվել, արևահար գեմ-
չով ու խոշոր փայլուն աչքերով մի Ֆրանսիացի նա հագել էր
ձյունասպիտակ քաթանն կոստյում: Ես նկատել էի նրան դեռ
նախաճաշի ժամանակ, իսկ Ա-Լին, լինացի տղան, ինձ ասաց,
որ նա այսօր Պատմության եկած նավով է ժամանել: Տիարեն
ժանոթացրեց մեզ: նա մեկնեց ինձ իր այցեստմար, որի վրա
գրված էր՝ «Ռենե Բրյունո», իսկ ներքևում՝ «Հեռավոր նավար-
կության կապիտան»: Մենք նստած էինք խոհանոցի կողքի
փոքրիկ պատշգամբում: Տիարեն զրազված էր ազախիներից
սեղի շրջազգեստը ձեռքով: Կապիտանը նստեց մեզ մոտ:

— Այո, ես Մթրիբլենդին լավ էի ճանաչում, — ասաց նա: —
Ես շախմատի մեծ սիրահար եմ, իսկ Մթրիբլենդը միշտ էլ հա-
նուչքով էր խաղում: Տարին երեք շորս անգամ գործով Քաիթի
էի գալիս, և եթե նա Պապեստում էր լինում, զալիս էինք «Հոթել
դե լա Ֆլեր» խաղալու: Երբ Մթրիբլենդը ամուսնացավ, — կա-
պիտան Բրյունոն մտաալով թոթվեց ոսկեր, — enfin², և զնաց
ապրելու այն աղքատ հետ, որ Տիարեն սաղացրել էր նրա վրա,
ինձ իր մոտ կանչեց: Ես նրա հարսանիքի հյուրերից մեկն էի: —
Կապիտանը նայեց Տիարեին և նրանք երկուսով էլ ծիծաղեցին: —
Մոտավորապես մի տարի հետո, չեմ հիշում թե ինչու, ևս պա-
տահարար ընկա կղզու այդ մասը և գործերս վերջացնելուց հետո
ինքս ինձ ասացի. «Voyons³, ինչու չգնամ ինձ Մթրիբլենդին
տեսնելու»: Մի քանի րնիկների հարցումները արեցի, թե որևէ
բան գիտե՞ն նրա մասին, և իմացա, որ նա իմ գտնված տեղից
մոտ հինգ կիլոմետր հեռու է ապրում: Գև ևս էլ գնացի: Երբեք
չեմ մոռանա այն տպավորությունը, որ ինձ վրա թողեց այդ
այցելությունը: Ես աթուղում եմ ապրում, — դա մի ցածր հո-
ղաշերտ է, որ շրջապատում է ծովախորշը, և զրա ամբողջ գե-
ղեցկությունը կազմում են ծովն ու երկինքը, ծովալճակի փոփո-
խական գույներն ու կոկոսյան արմավենիների գեղատաղանթու-
նը: Բայց այն տեղը, որտեղ Մթրիբլենդն էր ապրում, զրախո-

էր: Ախ, եթե ես կարողանայի նկարագրել այդ վայրի ամբողջ
գեղեցկությունը, աշխարհից թաքնված, կապույտ երկինքն ու
փարթամորեն աճած ծառերը: Դա մի տեսակ գույների խախ-
ճանք էր: Ծղր անուշաբույր էր ու զով: Բառերով անհնարին է
նկարագրել այդ զրախտը: Այնտեղ էր ապրում Մթրիբլենդը,
մոռացված աշխարհից ու աշխարհը մոռացած: Եվրոպական աշ-
քերի համար այդ բոլորը զարմանալիորեն խղճուկ կթվար: Տունը
կիսախարչու էր և ոչ այնքան մարտու: Երբ մոտեցա, պատըշ-
ղամբում մի քանի րնիկներ էին պտակած: Ձեզ հայտնի է, թե
որքան են նրանք սիրում իրար գլխի համարվել: Մի տղա հա-
սակով մեկ պտակել էր հատակին ու սիդորիտ էր ծխում, բացի
պարոտից ոչինչ չկար նրա վրա: Պարեն սպիտակ նախշերով
կարմիր կամ կապույտ շթի կտոր է: Բնիկները այն փաթաթում
են ազգերի շուրջը այնպես, որ առջևում կախվում է մինչև
ծնկները:

— Մոտ տասնհինգ տարեկան մի աղջիկ պանդանուսի տե-
րեններից գլխարկ էր գործում, — շարունակեց կապիտան Բրյու-
նոն, — իսկ մի պտուղ ծալապտուիկ նստած ձխամորձ էր ծխում:
Հետո տեսա Աթալին: նա կուրծք էր տալիս նորածնին, մյուս
երեխան, բոլորովին մերկ, խաղում էր նրա ոտքերի մոտ: Երբ
տեսավ ինձ, ձայն տվեց Մթրիբլենդին, և նա հայտնվեց զոան
մոտ: Մթրիբլենդը նույնպես միայն պարեռյով էր: Իրոք որ հնա-
րավոր չէ մոռանալ նրա արտասովոր կերպարանքը՝ գզգզած
մազերը, շեկ մորուրը, լայն մազու կուրծքը: նրա ոտքերը
ծածկված էին կոշտուկներով ու քերծվածքներով: Ես հասկացա,
որ նա միշտ բարբոթել է ման գալիս: Մթրիբլենդը իսկական
րնիկ էր դարձել: Տեսնելով ինձ, նա բոտ երևույթին ուրախացավ
և Աթալին պատվիրեց ձաշի համար ճուտ մորթել: Հետո տուն
տարավ ինձ ցույց տալու այն նկարը, որի վրա աշխատում էր:
Սենյակի սենյուկում գրված էր անկողինը, իսկ մեջտեղում
նկարակալը, վրան կտավ: Ես խղճացի Մթրիբլենդին և Յրան-
սիայում դոմովոդ իմ բարեկամների ու ինձ համար փոքրիկ գու-
մարով մի քանի նկար գնեցի: Չնայած կարեկցանքից զրզվալ
գնեցի այդ նկարները, բայց աստիճանաբար սկսեցի սիրել
զրանը: Ազնիվ խոսք, ևս ինչ-որ տարօրինակ գեղեցկություն է՝
տեսնում այդ նկարների մեջ: Բոլորը խելագար էին համարում
ինձ, բայց պարզվեց, որ ևս ճիշտ էի: Ես նրա առաջին երկր-
ույ գուն էի կղզիներում:

Կապիտանը շարախինդ ժպիտով նայեց Տիարեին, որը նորից ախ ու վախ անելով պատմեց, թե ինչպես Սթրիբլենդի իրերի վաճառքի ժամանակ ուշադրություն չէր դարձրել նկարների վրա, ալլ քսանյոթ ֆրանկով սմբերիկյան վառարան էր գնել:

— Դեռ ձեզ մո՞տ են այդ նկարները, — հարցրեցի էս:

— Այո, ես պահում եմ դրանք մինչև աղջիկս ամուսնանալու տարիքի հասնի: Այն ժամանակ կվաճառեմ նկարները և փողերը օժիտ կտամ նրան:

Հետո նա շարունակեց Սթրիբլենդին կատարած իր այցի պատմությունը:

— Երբեք չեմ մոռանա այդ երեկոն: Ես մտադիր չէի մի ժամից ավել մնալ, բայց համառորեն խնդրեց զիշերել իր մոտ: Ես օտարանվում էի, ճիշտն ասած ինձ այնքան էլ դուր չէր գալի: Խոսիքների տեսքը, որոնց վրա նա ստաջարկում էր բնել, բայց վերջապես համաձայնվեցի: Երբ տուն էի օարրում Պաուստում, շարախներով ավելի վատ անկողնում էի քնում, պատասպարվելով միայն արևադարձային վայրի թփերի ճյուղերի տակ, իսկ ինչ վերաբերում է միջատներին, կաշիս հաստ է և խայթոցներից չի վախենում:

Մինչ Աթան ճաշ կպատրաստեր, զնացինք գետ լողոնալու, իսկ ճաշելուց հետո նստեցինք պատշգամբում: Միտում ու շատախոսում էինք: Բնիկ պատանին կոնցերտինոյի վրա երգեր էր նվագում, որոնք մյուզիկ-հոլլերում տասը տարի ասուջ էին երգում: Գրանք բազմական տարօրինակ էին հնչում քաղաքակրթությանից հաղարամբ մզոն հեռավորություն վրա, արևադարձային գիշերվա մեջ: Ես հարցրեցի Սթրիբլենդին, թե այդ խառնամբոխի մեջ ապրելը չի ճնշում իրեն: Այ, ասաց նա, ինքը սիրում է ձեռքի տակ բնորոցներ ունենալ: Ետևով բարձրաձայն հորանջելով բնիկները գնացին բնելու, թողնելով մեզ մենակ: Ես չգիտեմ ինչպես նկարագրել այդ զիշերվա անսահման լուսությունը: Մեզ մոտ Պաուստում այդպիսի կատարյալ լուսություն չի լինում: Սովափին անթիվ անհամար կենդանիների շրջուն է ահրում, և խեցգետինները խշխշոցով միտում են ավազի մեջ: Երբեմն լավում է, թե ինչպես է ձուկը դուրս դատկում ծովալճակում կամ շտապ, աղմկոտ ճողփչունով փախչում են ձրկները՝ փրկելով իրենց կտանքը շնածկից: Եվ այդ բոլորի վրա իշխում է այլբախտության հավերժական խուլ աղմուկը: Բայց այստեղ ոչ մի բան չէր խախտում լուսությունը, օդը հազվեցած էր

զիշերային սպիտակ ծաղկի բուրմունքով: Այնքան սքանչելի էր այդ գիշերը, որ թվում էր, թե մարդու հոգին հագիվ է մնում մարմնական կապանքներում: Պարզ զգացվում էր, ուր որ է, այն կթռչի դեպի եթերային աշխարհ, և նույնիսկ մահը այստեղ բարեկամի կերպարանք էր օտանում:

Տիարեն հոգոց հանեց:

— Ախ, երանի թե նորից տասնհինգ տարեկան լինեի:

Հանկարծ նա նկատեց խոհանոցի սեղանին դրված մաճր խեցեախններով լիքը սկուտեղին մոտեցող կառվին, ճարպկութեն գիրքը շարտեց նրա հետևից և լուսանքների կարկուտ տեղաց նրա գլխին:

— Ես Սթրիբլենդին հարցրեցի, երանի՞կ է նա Ալմայի հետո «Աթան հանգիստ է թողնում ինձ, — պատասխանեց նա, — ուտելիք է պատրաստում ինձ համար և խնամում երիտաներին: Անում է այն, ինչ ասում եմ, տալիս այն, ինչ ես պահանջում եմ կնուջիցս: — Երևի երբեք չե՞ք զզջացել, որ հետացել եք եվրոպայից: Չե՞ք կարոտում Փարիզի կամ Լոնդոնի փողոցների լույսերը, ձեր ընկերներին, ձեզ հավասար մարդկանց, que sais-je!, թաւրոնները, թեթիքը: Չե՞ք ուզում լսել, թե ինչպես են աղմուկով անցնում օմնիբուսները գետաքարե սալահատակի վրայով: Ես երկար ժամանակ լուռ էր, հետո պատասխանեց. «Ես այստեղ կմնամ մինչև իմ մահը» — «Բայց մի՞թե երբեք ձանձրույթ կամ մենակություն չեք զգում», — հարցրեցի էս: Ես բթի տակ ծիծաղեց: «Mon pauvre ami², դուր հավանաբար չդիտեր, թե ինչ է նշանակում նկարիչ լինել»:

Կապիտան Բրունոն մեզմ ժպտաց և նրա մուգ, բարի աչքերում տարօրինակ սրտահալալուսություն երևաց:

— Սթրիբլենդն անարդարացի էր իմ նկատմամբ, ես էլ գիտեմ, թե ինչ բան է երազանքներ ունենալը: Ես էլ իմ երազանքներն ունեմ: Ես էլ ինձ համար եմ նկարիչ:

Լսեցինք: Տիարեն իր մեծածավալ գրպանից մի տուփ ծխախոտ հանեց և ամենբնի մի ծխախոտ փռեց: Երեքս էլ սնունդից ծխել: Վերջապես Տիարեն ասաց.

— Քանի որ ce monsieur այդքան հետաքրքրվում է Սթրիբլենդով, ինչո՞ւ նրան բոխիկ Կուտրայի մոտ չեք տանում: Թեիշիկ կարող է որևէ բան ասել նրա հիվանդության ու մահվան մասին:

— Volontiers³, — ասաց կապիտանը, հայելով ինձ:

Ես շնորհակալութիւն հայտնեցի: Կապիտանը նայեց ժամացույցին:

— Վեցն անց է: Եթէ հիմա գնանք, նրան տանը կգտնենք: Առանց հապաղելու ես ոտքի ելա, և մենք շարժվեցինք բժշկի ստուն տանող ճանապարհով: Նա քաղաքից դուրս էր ապրում և քանի որ «Հոթել դե լա Ֆլեր»-ը ծայրամասում էր գտնվում, մենք արագ դուրս եկանք քաղաքից: Պղպեղի ծառերը հովանի էին գարձել լայն ճանապարհի վրա, որի երկու կողմերում տարածվել էին կոկոսյան արմավենու և վանիլի պլանտացիաները: «Մովանեն» կոչված թռչունները ծվլում էին արմավենիների տերևների մեջ: Սակավաջուր գետի քարե կամուրջն անցնելուց հետո մենք կանգ առանք դիտելու լողացող աղաներին: Նրանք բարձրաձայն գոռալով ու ծիծաղելով վազում էին իրար հետևից, և նրանց թաց շապանակազույն մարմինները փայլում էին արևի տակ:

ԳԼՈՒԽ 54

Քայլելիս ես մտածում էի, թե ինչն էր վերջերս, երբ այդքան բան լսեցի Սթրիբլենդի մասին, ինքնարևաբար գրավել ուշադրությունս: Այս հեռավոր կղզում, բոտ երևույթին, նրան այնքան շարժվածք չէին վերաբերում, որքան իր հայրենիքում, բնդհակառակը, համբերությամբ տանում էին նրա բոլոր ըմբռնությունները: Այն մարդկանց համար, բնիկ թե եվրոպացի, նա տարօրինակ մարդ էր, բայց տարօրինակ մարդը նորություն չէր նրանց համար: Նրանք բնական էին համարում, որ աշխարհը լիքն է տարօրինակ արարքներ կատարող տարօրինակ մարդկանցով: Միգուցի նրանք գիտեին, որ մարդն այն չէ, ինչ որ ուզում է լինել, այլ այն, ինչ չի կարող լինել: Անդրիսյում ու Ֆրանսիայում Սթրիբլենդը իր տեղում չէր, իսկ այստեղ տեղ էր գտնվում ամեն տեսակի մարդկանց համար, որոնք ոչ մի շփոթանք չէին համապատասխանում: Թախծիւմ նա շարժվելով ալիլի մեղմ, պակաս եսամոլ, այլ հանդամանքներն էին ավելի բարենպաստ: Եթե նա իր ամբողջ կյանքը այստեղ անցկացնեք, ուրիշներից վատ չէր համարվի: Այստեղ նա ստացավ այն, ինչ ոչ սպասում և ոչ էլ ցանկանում էր իր հայրենակիցների համակերպել:

Ես աշխատեցի կապիտան Բրունդին բացատրել, թե ինչու էր այդ բոլորը գարմացնում ինձ: Նա որոշ ժամանակ լուռ էր: — Զարմանալու ոչինչ չկա, — ասաց նա վերջապես: — Ես բարեկամական վերաբերմունք ունեի Սթրիբլենդի նկատմամբ. չէ որ մենք, շնայած մեղանից ոչ մեկն էլ չէր կասկածում, միևնույն նպատակին էինք ձգտում:

— Ի՞նչ ընդհանուր ձգտում կարող են ունենալ երկու այդքան տարբեր մարդիկ, ինչպիսին դուք և Սթրիբլենդն եք, — հարցրեցի ես ժպտալով:

— Գեղեցկության ձգտումը:

— Թավական լայն հասկացողություն է դա, — մրմնջացի ես:

— Միթե չգիտեք, որ սիրով տարված մարդիկ կույր ու խուլ են դառնում ամեն ինչի նկատմամբ աշխարհում, բացի իրենց սիրուց: Նրանք նույնքան են իրենց պատկանում, որքան թխրանի նստարաններին շղթայված ասրուկները: Սթրիբլենդին համակել էր սիրուց ոչ պակաս բռնակալ մի կերբ:

— Որքան տարօրինակ է, որ այդպիսի բան եք ասում, — բացականչեցի ես: — Ես վաղուց էի մտածում, որ Սթրիբլենդը դիվանար է եղել:

— Գեղեցկություն ստեղծելու կիրքն էր համակել նրան: Դա հանգիստ չէր տալիս Սթրիբլենդին, ըրում էր երկու-երկիր: Անողոր էր նրա մեջ նստած դեր, և Սթրիբլենդը հավերժական ուրախության գարձավ. աստվածային հույսնարտղծությունն էր տանջում նրան: Կան մարդիկ, որոնց մեջ ճշմարտության ծաբավքն ոչնչան մեծ է, որ դրան հասնելու համար պատրաստ են ցնցել ու շխարհի հիմքերը: Այդպիսին էր նաև Սթրիբլենդը, միայն նրա մոտ ճշմարտությանը փոխարինում էր գեղեցկությունը: Ես միայն խոր կարեկցանք էի պզում նրա նկատմամբ:

— Դա էլ է տարօրինակ: Այն մարդը, որին Սթրիբլենդը բաժանորեն վերապորել էր, մի անգամ ինձ ասաց, որ խոր կարեկցանք է զգում նրա նկատմամբ: — Ես մի պահ լսեցի: — Մի՞չեք դուք գտել եք բացառությունը մի մարդու, որն ինձ միշտ էլ անհասկանալի է թվացել: Ինչպե՞ս հասցովեց ձեզ:

Նա ժպտալով շրջվեց իմ կողմը:

— Միթե ձեզ չասացի, որ ես էլ իմ ձեռք եմ նկարել: Ինչ էլ նույն ցանկությունն էր համակել, ինչ որ Սթրիբլենդին: Բայց

արտահայտման միջոցը նրա համար գեղանկարչությունն էր, իսկ ինձ համար՝ կյանքը:

Հետո կապիտան Բրունոն մի պատմություն պատմեց, որ պետք է կրկնեմ, որովհետև, թեև կուզեմ մի հակադրություն, այն ինչ-որ բան էր պակասացում Սթրիբլենդի մասին ունեցած իմ պատկերացմանը: Իմ կարծիքով այդ պատմությունը ունի նաև իր յուրօրինակ գեղեցկությունը:

Կապիտան Բրունոն, ծնունդով բրետանցի, ծառայել էր Ֆրանսիական նավատորմում: Ամուսնանալուց հետո նա թողել էր ծառայությունը և հաստատվել Քեմպիի մոտ գտնվող իր փոքրիկ կալվածքում, որպեսզի խաղաղությամբ անցկացնեք իր կյանքի մնացած օրերը, բայց նրա գործերը վարող նոտարի հանկարծակի անանկացման պատճառով մնացել էր առանց կուպակի: Եվ ոչ նա, ոչ էլ նրա կինը այլևս չէին ցանկացել աղքատ կյանք վարել մի տեղում, որտեղ աչքի ընկնող դիրք էին գրավել հասարակության մեջ: Ժամանակին կապիտանը լողացել էր հարավային ծովերում և որոշեց երջանկություն փնտրել այնտեղ: Պլաններ կազմելու և փորձ ձեռք բերելու համար նա մի քանի ամիս ապրեց Պապետոնում: Հետո Ֆրանսիայում գրտնրվող մի ընկերության պարտք վերցրեց և մի կղզի գնեց Պաու-մոտում: Դա խոր ծովալճակի շուրջն ընկած մի նեղ հողակտոր էր, անմարդաբնակ և միայն մացառներով ու վայրի գուռավայրով ծածկված: Նա ափ իջավ այդ կղզին իր երիտասարդ խիզախ կնոջ ու մի քանի բնիկների հետ և սկսեց տուն կառուցել, մաքրեց մացառներն ու թփերը արժավենու պլանտացիայի համար: Դա քսան տարի առաջ էր, իսկ հիմա այդ ամայի կղզին ծաղկուն այգի էր դարձել:

— Սկզբում շատ ծանր էր մեր աշխատանքը, կնոջս հետ ուժասպառ լինելու շափ աշխատում էինք: Ամեն օր վեր էի կենում արևածագին, մաքրում, տնկում ու աշխատում տանս վրայ և գիշերը անկողին էի ընկնում ու մեռածի պես քնում մինչև առավոտ: Կինս աշխատում էր ինձ հետ հավասար: Հետո երեխաներ ծնվեցին, սկզբում տղա, հետո աղջիկ: Մենք սովորեցրինք նրանց այն ամենը, ինչ դիտեինք: Ֆրանսիայից դաշնամուր բերել տվեցի, և կինս նրանց նվագել ու անգլիերեն խոսել սովորեցրեց, իսկ ես՝ լատիներեն ու մաթեմատիկա: Բոլորս միասին պատմական գրքեր էինք կարդում: Իմ երեխաները կարողանում են առագաստանավակ ղեկավարել, լողում են բնիկներից ոչ

սակաու: Եվ չկա կղզում մի բան, որ չիմանան: Իմ պլանտացիայի ծառերը առատ բերք են տալիս, իսկ ծովայնակում սաղափ կա: Եվ հիմա Թաիթի եմ կելլ առագաստանավ գնելու: Այնքան սաղափ կարող եմ արտադրել, որ արժե դրա համար շարշարվել, և ով գիտե, գուցե մարդարիտ էլ գտնեմ: Այնտեղ, որտեղ ոչինչ չկար, հիմա ամեն ինչ ծաղկում է: Ես էլ եմ գեղեցկություն ստեղծել: Ախ, դուք չեք հասկանում, թե ինչ է նշանակում նայել այդ բարձր, ամուր ծառերին և մտածել, որ յուրաքանչյուր ծառ քո ձեռքով ես տնկել:

— Թույլ տվեք մի հարց տալ ձեզ, որ ժամանակին ինքներդ տվեցիք Սթրիբլենդին: Դուք երբեք չե՞ք կարտում Ֆրանսիան և Բրետանում գտնվող ձեր հին տունը:

— Մի գեղեցիկ օր, երբ աղջիկս մարդի գնա, իսկ տղաս ամուսնանա և կարողանա փոխարինել ինձ այստեղ, մենք կնոջս հետ հայրենիք կվերագտնանք և մեր վերջին օրերը այնտեղ կանցկացնենք, այն հին տանը, որտեղ ես ծնվել էմ:

— Եվ կհիշեք այստեղ անցկացրած երջանիկ կյանքը, — նկատեցի ես:

— Evidemment¹, զվարճություններ չկան իմ կղզում, մենք աշխարհից շատ հեռու ենք ապրում, նույնիսկ Թաիթի հասնելու համար շորս օր է պետք, բայց երջանիկ ենք: Քիչ մարդկանց է հաջողվում աշխատանք սկսել ու վերջացնել: Մեր կյանքը պարզ է ու մաքուր: Մենք չգիտենք, թե ինչ բան է փառասիրությունը և պարտանում ենք միայն նրանով, որ քաղում ենք սեփական ձեռքերի աշխատանքի պտուղները: Ոչ շարությունը և ոչ էլ նախանձն է տանջում մեզ: Ախ, mon cher monsieur², հաճախ էս իրոտում աշխատանքի պատճառած երջանկության մասին, բայց դրանք սովորաբար դատարկ Ֆրազներ են, իսկ ինձ համար այն լավագույն խոր իմաստ ունի: Ես երջանիկ մարդ եմ:

— Ես համոզված եմ, որ դուք արժանի եք դրան, — ասացի ես ժպտալով:

— Ես կցանկանայի այդպես կարծել: Բայց չգիտեմ, ինչու էլ եմ արժանացել այնպիսի կնոջ, որը եղել է իսկական ընկեր, օգնական, հիանալի սիրուհի և հրաշայի մայր:

Իս որոշ ժամանակ մտածում էի կապիտանի պատմածները մասին:

— Պարզ է, որ նման խիստ կյանք վարելու և մեծ հաջողու-

Յշան հասնելու համար երկուսդ էլ պետք է ունենա կամ քննարկութիւն ունենայիր:

— Հնարավոր է, բայց առանց մի այլ կարևոր հանգամանքի մենք ոչ մի բանի չէինք հասնի:

— Եվ ո՞րն է դա:

Նա լսեց և ինչ-որ թատերական շարժումով երկարեց ձեռքը:

— Հավատ անսո՞ժո նկատումա՞ր: Առանց դրա կկործանվեինք...

Մենք մտտեցել էինք բժիշկ Կուտրաշի տանը:

ՊԱՌԻՆ 55

Բժիշկ Կուտրան վիթխարահասակ ու շափազանց գիր մի ֆրանսիացի էր: Նրա մարմինը բարդ հսկայական ձևի էր նմանվում, իսկ խաբաթափանց, կապույտ, բարեհազի աչքերը հաճախակի ինքնարավականորեն հառում էր իր հսկայական փորին: Գեմքը վարդագույն էր, մազերը՝ սոխափափ: Նա այն մարդկանցից էր, որոնք առաջին իսկ հայացքից համակրանք են ներշնչում: Բժիշկ Կուտրան մեզ ընզուենց մի սենյակում, որ կարելի էր տեսնել Ֆրանսիայի գավառական քաղաքի յուրաքանչյուր տան, իսկ պոլիտեխնիկական մի բանի հազվագյուտ իրեր բաժանարարինակ տեսք ունեին այնտեղ: Նա իր երկու ահագին ձեռքերով ամուր սեղմեց ձեռքս և բարեկամական մի հայացք զցեց վրաս, որն ինձ շափազանց խորամանկ թվաց: Կապիտան Քրուսոյի ձեռքը սեղմելիս նա քաղաքավարութեամբ հարցուիորձ արեց նրա կնոջ ու երեխաների մասին: Մի բանի թույլ նրանք հաճախախուսթյուններ փոխանակեցին, հետո փոքր-ինչ բամբասեցին, քննարկեցին կուտրաշի ու վանիլի բերքի հեռանկարները, և նոր անգրքագրածանք իմ այցելութեան նպատակին:

Այն, ինչ լսեցի բժիշկ Կուտրաշից, կպատմեմ իմ և ոչ թե նրա րատերով, որովհետև հույս չունեմ, թե կկարողանամ ճշտութեամբ հաղորդել նրա աշխույժ պատմութիւնը: Նա ցածր, հնչող ձայն ունեւր, որ շատ էր համապատասխանում նրա խոշոր կազմվածքին, և գիրտասնական ձերք: Նրան լսելն ավելի հեռաբերէր էր քան թե թատրոնում նստելը:

Մի անգամ Կուտրան Տարավառ գնաց մի հիվանդ ծեր ապաւորդուհու նայելու, — նա վառ գույներով էր նկարագրում,

ինչպես այդ գիր պանամը թխամորթ մերձագործների քաղվածքով շքարավառված, պահած հսկայական անկողնում սրգարես էր ծխում: Հիվանդին նայելուց հետո նրան մի ուրիշ սենյակ տարան և պատկեցին հաշով հոսմ ձուկ, տապակած բանան և ձուռ — que sais-je!, բնիկների սիրած ուտելիքներով — և ճաշելիս նա նկատեց մի երիտասարդ լացալիումած աղջկա, որին գոնից գուրս էին վոնդել: Նա առանձնապես ուշադրութեամբ շարժեց, դրա վրա, բայց երբ դուրս-եկավ նստելու իր երկանիվ սալլակը տուն դնարու, նորից տեսավ աղջկան, որ մի կողմի վրա քաշված կանգնել էր: Աղջիկը անմխիթարական մի հայացք զցեց նրա վրա, և արցունքները նորից հոսեցին նրա աչքերի վրայով: Բժիշկը ինչ-որ մեկին հարցրեց, թե ինչ է պատահել այդ աղջրկան, նրան պատասխանեցին, որ եկել է լեռներից և խնդրում է իրեն, որ գնա ծանր հիվանդ մի սպիտակ մարդու մոտ: Աղջկան ասել էին, որ չի կարելի բժշկին անհանգստացնելու նա իր մոտ կանչեց աղջկան և հարցրեց, թե ինչ է ցանկանում: Աղջիկն ասաց, որ կարմիրը հիվանդ է, որ իրեն ուղարկել է Աթան, նա, որ աշխատում էր գին լա Տիրս հյուրանոցում: Նա բժշկի ձեռքը խոթեց ճանթված թղթի մի կտոր, որի մեջ հարյուր ֆրանկանոց քանկնառ կար:

— Ո՞վ է Կարմիրը, — հարցրեց Կուտրան կանգնածներից մեկին: Նրան ասացին, որ դա այն անգլիացի նկարիչն է, որ Աթանջ հետ անցրում է հովտում, այդտեղից յոթ կիլոմետր հեռու: Նկարագրելով նա ճանաչեց Սթրիբլենդին: Հովիտ կարելի էր գնալ միայն ոտքով, իսկ բժշկին վայել չէր ոտքով գնալ, դրա համար էլ վոնդել էին աղջկան:

— Ընդուն ասած, ես տատանվեցի, — ասաց բժիշկը՝ շրջելով իմ կողմը: — Ինձ համար այնքան էլ հաճելի չէր լեռնային արահետով տասնչորս կիլոմետր անցնել, և հույս չկար, թե այդ երեկո կկարողանայի Պապետե վերագառնալ: Բացի այդ, ես այնքան էլ չէի համակրում Սթրիբլենդին: Մույլ ձրիակիրը նստելուտրում էր ապրել բնիկ կնոջ հետ, քան իր ապրուստը վաստակել, ինչպես բոլորս: Mon Dieu, որտեղից իմանայի, որ մի զեղեցիկ օր աշխարհը հանձար էր համարելու նրան: Ես աղջկան հարցրեցի, մի՞թե նա այնքան հիվանդ է, որ չէր կարող գալ: Հարցրեցի նաև, թե ինչ է պատահել նրան: Բայց նա շատասխանեց: Ես ստիպեցի, թեև դա յուրույթով, բայց նա խոնարհեց աչքերը և սկսեց արտասվել: Թոթվեցի ուսերս, վերջին հաշվով իմ պարտք:

էր գնալ, և շատ վատ տրամադրութեան մեջ հետեւեցի նրան:

Կուտրայի տրամադրութեանը, իհարկն, չլավացալ, հոր նա քրտինքի մեջ կորած ու ծարավ տեղ հասալ: Աթան արդեն սպասում էր նրան և արահետով ընդառաջ գնաց նրան:

— Նախ խմելու բան տվեք ինձ,— բղավեցի ես,— եթե ոչ՝ կմեռնեմ ծարավից: Pour l'amour de Dieu¹, կոկոսյան ընկույզ տվեք:

Աթան ձայն տվեց: Վաղելով մի տղա եկալ, բարձրացալ ծառը և հասած կոկոսյան ընկույզ գցեց: Աթան ծակեց կեղևը, և բծիշկը ազատութեամբ խմեց թարմացնող հլուքը: Հետո մի ծխախոտ փաթաթեց, և տրամադրութեանը բարձրացալ:

— Հը, ս'ըր է ձեր Կարմիրը,— հարցրեց նա:

— Նա տանը նկարում է: Ես չեմ ասել նրան, որ գալու եք: Խնդրում եմ քննեք նրան:

— Իսկ ինչի՞ց է բողոքում: Եթե ի վիճակի է աշխատել, ինչո՞ւ Տարավառ չեկալ, ազատելով ինձ այս անխճայ ճանապարհից: Ինձ թվում է, իմ ժամանակը նրանից պակաս թանկ չէ:

Աթան շպտաստխանեց և տղայի հետ միասին բժշկի հետեւից գնաց դեպի տուն:

Ազրիկը, որ բերել էր նրան, արդեն նստած էր պատշգամբում, որտեղ պատի տակ պառկած մի ծեր կին բնիկների ձեռով սիգարետներ էր փաթաթում: Աթան ցույց տվեց դուռը: Կուտրան, դարձանալով նրանց տարօրինակ վարքից, ներս մտալ և տեսալ Սթրիբլենդին, որ ներկայանալը մաքրելով էր զբաղված: Նկարակալին զբված էր մի նկար: Սթրիբլենդը կանգնած էր թիկունքով դեպի դուռը: Նրա վրա բացի պարեոլից ոչինչ չկար: Երբ նա ոտնաձայներ լսեց, շրջվեց և ունբարյացակամորեն նայեց Կուտրային: Այդպիսի ներխուժումը գարմանք և դայրույթ էր պատճառել նրան: Կուտրայի շունը կտրվեց, ոտքերը կարծես թև կպան հատակին. նա աչքերը չոսած նայում էր Սթրիբլենդին: Այդպիսի բան նա չէր սպասում: Նա սարսափահար էր եղել:

— Ներս եք խուժում առանց քաշվելու,— ասաց Սթրիբլենդը:— Ինչո՞ւ կարող եմ օգտակար լինել:

Բժիշկը ուշքի եկալ, բայց մեծ դժվարութեամբ կարողացալ տիրապետել ձայնին: Նրա ամբողջ գայրույթն անցալ և նա,— et bien, oui, je ne le nie pas², անսահման կարեկցանք զգաց:

— Ես բժիշկ Կուտրան եմ: Տարավառ էի դնացել մի հիվանդ առաջնորդուհու տեսնելու: Աթան էր ուղարկել ինձ կանչելու:

— Աթան հիմար է: Ես մի քիչ ցավեր ու տենդ ունեի, բայց դատարկ բան է, շուտով կանցնի: Երբ Պապեստ գնացող լինե՞ր, կխնդրեմ խինին բերի:

— Նայեք ձեզ հայելու մեջ:

Սթրիբլենդը նայեց բժշկին, ժպտաց և մոտեցալ պատից կախված նեղ փայտե շրջանակով էժանագին հայելուն:

— Հետո՞ ինչ:

— Մի՞թե տարօրինակ փոփոխություն չեք նկատում ձեր դեմքին: Չե՞ք նկատում, որ ձեր դիմագծերը հաստացել են և նմանվում են... ինչպես ձեզ քացատրեմ... դրբերում դա «տոյու՞ր դեմք» են անվանում: Mon pource ami, կարիք կա՞ տեսնու, որ դուք սարսափելի հիվանդություն ունեք:

— Ե՛ս:

— Նորից նայեք հայելուն և դուք կտեսնեք բորոտության քնորոշ ախտանշաններ:

— Կատակում եք,— ասաց Սթրիբլենդը:

— Ես ինձ երջանիկ կհամարեի, եթե կարողանայի կատակել:

— Ուզում եք ասել, որ ես բորոտությո՞ւն ունեմ:

— Դժբախտարար կասկած չկա դրանում:

Կուտրան շատերին էր մահվան դատաւճիտ կայացրել, բայց, այնուամենայնիվ, չկարողացալ հաղթահարել իրեն համակած սարսափը: Ամեն անգամ, նա զգում էր, թե ինչպիսի անսահման ատելություն էր լցվում դատապարտչալը, երբ համեմատում էր իրեն ծաղկուն առողջության տեր բժշկի հետ, որն ապրելու անգնահատելի առավելություն ուներ: Սթրիբլենդը լուռ նրան էր նայում: Նրա դեմքը, որ արդեն այլանդակվել էր սարսափելի հիվանդությունից, ոչ մի հուզումնք չէր արտահայտում:

— Նրանք գիտե՞ն,— հարցրեց նա վերջապես, ցույց տալով պատշգամբում նստած մարդկանց կողմը, որոնք հիմա անսովոր ու խորհրդավոր լուծություն էին պահպանում:

— Բնիկները լավ գիտեն այդ հիվանդության նշանները,— պատասխանեց բժիշկը:— Նրանք պարզապես վախենում էին ձեզ ասել:

Սթրիբլենդը քալեց դեպի դուռը և դուրս նայեց: Ըստ երեվույթին ինչ-որ սարսափելի բան կար նրա դեմքին, որովհետև նրանք հանկարծակի բոլորը միասին սկսեցին աղաղակել ու սղբալ, հետո բարձրաձայն լաց եղան: Սթրիբլենդը լուռ էր: Մի

քանի վայրկյան նրանց նայելուց հետո նա վերադարձավ սենյակի:

— Ձեր կարծիքով ինչքան կզիմանամ:

— Ով գիտե: Երբեմն հիվանդութիւնը քսան տարի է տևում: Երբանկութիւնն է, երբ այն արագ է ընթանում:

Մթրիքլենդը մտտեցավ նկարակալին և մտախոհ նայեց նրա վրա դրված նկարին:

— Դուք երկար ճանապարհ եք անցել: Նա, ով կարևոր լուր է բերել, պետք է բոտ արժանվուն վարձատրվի: Վերցրեք այս նկարը: Հիմա սա ձեզ համար ոչ մի արժեք չունի, բայց շատ հնարավոր է, որ մի գեղեցիկ օր ուրախանաք դրա համար:

Բժիշկ Կուտրան բողբոջեց. ոչ մի վարձատրութիւնն պետք չէ նրան, նա արդեն հարյուրֆրանկանոց բանկնոսր վերադարձրել էր Աթալին, բայց Մթրիքլենդը պնդում էր վերցնել նկարը: Հետո նրանք միասին պատշգամբ դուրս եկան: Բնիկները բարձրաձայն լաց կին լինում:

— Հանգստացիր, կին: Մթրիքլենդը արցունքներդ. — ասաց Մթրիքլենդը Աթալին, — վախենալու ոչինչ չկա: Ես շուտով կթողնեմ քեզ:

— Նրանք քեզ չեն խլի ինձանից:

Այդ ժամանակ դեռ կղզիներում օրեր չկար բորոտներին մեկուսացնելու մասին, և հիվանդները կարող էին ազատ շրջել:

— Ես կհետանամ լեռները, — ասաց Մթրիքլենդը:

Աթան վեր կացավ տեղից և ուղիղ նրա աչքերին նայեց:

— Եթե ուզում են, թող նրանք գնան, ես քեզ չեմ թողնի: Դու իմ ամուսինն ես, ես՝ քո կինը: Եթե հետանա ինձանից, կկախվեմ տան հետևի ծառից: Երդդում եմ ասածով:

Ինչ-որ շափազանց սպառնալից բան կար նրա խոսքերում: Նա այլևս այն խոնարհ ու մեղմ բնիկ աղջիկը չէր, այլ վճռական և ուժեղ կին: Աթան անճանաչելի էր դարձել:

— Ինչո՞ւ ես ուզում ինձ հետ մնալ: Կարող ես Պապետե վերադառնալ և շուտով ուրիշ սպիտակ տղամարդ կգտնես: Պապալը կխնամի երեխաներիդ, իսկ Տիարեն հաճույքով կընդունի քեզ:

— Դու իմ ամուսինն ես, ես՝ քո կինը, որտեղ գու, այնտեղ էլ ես:

Մի պահ Մթրիքլենդի ուժերը դավաճանեցին իրեն, աչքերը

արցունքով լցվեցին և այտերի վրայով սկսեցին դանդաղ ներքև հոսել: Հետո նա ժպտաց իր սովորական սարգոնիկ ժպիտով:

— Զարմանալի արարածներ են կանայք, — ասաց նա Կուտրային: — Նրանց հետ կարող ես վարվել ինչպես շների հետ, ծեծել մինչև որ ձեռքերդ ցավեն, միենույն է, կսիրեն քեզ: — Նա թռթկեց ուսերը: — Քրիստոնեութիւնն ամենաանհեթեթ պատրանքներից մեկն է, որ կանայք իբր թե հոգի ունեն:

— Այդ ի՞նչ ես ասում բժշկին, — հարցրեց Աթան կասկածամտորեն, — չե՞ս գնա:

— Եթե չես ուզում, կմնամ, փոքրիկս:

Աթան ծնկի եկավ նրա տոչն, գրկեց ուսերն ու համբուրեց: Մթրիքլենդը թույլ ժպիտով նայեց Կուտրային:

— Վերջապես նրանք հնազանդեցնում են ձեզ և անգոր եք մնում նրանց ձեռքերում: Սպիտակ թե թխամորթ, նրանք բոլորն էլ նույնն են:

Բժիշկ Կուտրան զգաց, որ անմտութիւնն կլինի նման սարսափելի գժբախտութիւնն կապակցութիւնով միութարական խոսքեր ասել և լուռ հետացավ: Մթրիքլենդը պատվիրեց Տանեին ուղեկցել Կուտրային մինչև գյուղ: Բժիշկ Կուտրան լոնց մի պահ, և հետո, դիմելով ինձ, ավելացրեց.

-- Ես արդեն ասել եմ ձեզ, որ չէի համակրում նրան: Մթրիքլենդը դուր չէր դուրս ինձ: Բայց, երբ դանդաղ քայլերով իջնում էի Տարավառ, աչամայից հիացմունքով էի մտածում այդ մարդու արիւթիւնն մասին: Ինչպիսի անվեհերութիւնով էր նա տանում մարդկային գժբախտութիւններից դուրս ամենասարսափելին: Երբ բաժանվում էի Տանեից, ասացի նրան, որ զեզոքաչք կուզարկեմ: Կարող էր օգտակար լինել նրան, չնայած այնքան էլ հույս չունեի, որ Մթրիքլենդը կընդուներ այն, և ավելի պակաս հույս ունեի, որ այդ դեղերը կօգնեին նրան: Ես այդ տղային պատվիրեցի հաղորդել Աթալին, որ, երբ էլ մարդ ուղարկի իմ հետևից, կգամ: Կյանքը դաժան է, և բնութիւնը երբեմն դաժանորեն է ծագում իր դավակներին: Ես ծանր սրտով վերադարձա Պապետեի իմ հարմարավետ տունը:

Երկար ժամանակ մեղանից ոչ մեկը չէր խոսում:

— Բայց Աթան մարդ չուղարկեց իմ հետևից, — վերջապես շարունակեց բժիշկը, — և այնպես սպառահեղ, որ ես բավական երկար ժամանակ չգնացի կղզու այդ մասը: Մթրիքլենդից ոչ մի անգլեկութիւն չունեի: Մի երկու անգամ լսեցի, որ Աթան Պա-

պետե է եկել ներկեր գնելու, բայց նրան տեսնելու առիթ չեղավ: Նախքան նորից Տարափառ գնալս երկու տարուց աճիլի անցավ, այն էլ ծեր առաջնորդուն նորից տեսնելու առիթով: Այնտեղ ես նրանց հաբարեցի, թե որեէ բան գրտնն Մթրիբլենդի մասին: Արդէն բուրբին հայտնի էր, որ նա բորոտ է: Առաջինը Տաննն հեռացավ տնից, հետո պատավն ու իր թոռը: Մթրիբլենդն ու Աթան բուրբուրի մենակ մնացին երեխաների հետ: Ոչ մեկը չէր մտեհնում պլանտացիային: Չեր պատկերացնում, թե ինչպիսի սարսափ են զգում բնիկները այդ հիվանդութիւնն նկատմամբ: Առաջներում, երբ որեէ մեկի մտա բորոտութիւնն էր նկատում, պարզապէս սպանում էին նրան: Երբեմն, երբ գլուղի տղաները բարձրանում էին լեռները, տեսնում էին զգզզված շեկ մորուքով սպիտակ մարդուն պլանտացիայում շրջելիս: Նրանք սարսափահար փախչում էին: Երբեմն գիշերը Աթան գլուղ էր իջնում, արթնացնում խանութպանին նրանից ամենաանհրաժեշտ բաներ գնելու: Նա գիտեր, որ մարդիկ նաչում էին իր վրա նույն սարսափով ու նեղկանքով, ինչպէս Մթրիբլենդի վրա և աշխատում էր խուսափել նրանցից: Մի անգամ մի քանի կանայք պատահաբար մտա գտնվելով պլանտացիային, տեսան նրան գետում սպիտակեղեն լվանալիս և բարեք նետեցին վրան: Գրանից հետո խանութպանին պատվիրեցին հազարգէլ Աթային, որ եթէ մի անգամ էլ գետակում սպիտակեղեն լվանա, գլուղի տղամարդիկ կայրեն նրա տունը:

— Գազաններ,— ասացի ես:

— Mais non, mon cher monsieur¹, մարդիկ միշտ էլ նույնն են: Սարսափը դաժան է դարձնում նրանց... Ես որոշեցի այցելել Մթրիբլենդին և հիվանդ առաջնորդուն նայելուց հետո խրնդրեցի ուղեկից տալ ինձ: Բայց ոչ մեկը շցանկացավ ուղեկցել ինձ, և ես ստիպված մենակ գնացի:

Երբ բժիշկ Կուտրան պլանտացիա հասավ, մի անհանգիստ զգացում համակեց նրան: Եվ շնայած քալչելուց ջերմացել էր նրա մարմինը, բայց դողում էր: Ինչ-որ շարագուշակ բան էր պտտվում օդում, խանդարելով նրան առաջ գնալու, կարծես թե ինչ-որ խորհրդավոր ուժեր կտրել էին նրա ճանապարհը: Ինչ-որ մեկի անտեսանելի ձեռքերը թվում էր. թե ես էին քաշու² նրան: Այլևս ոչ մեկը չէր դալիս այստեղ կոկոսյան ընկուղ հավաքելու և դրանք դեսնին թափված փշանում էին: Շրջապատում ամայութիւնն էր տիրում: Փարթամորեն աճել էին թփուտ-

ները և թվում էր, թե շուտով կուտական անտառը նորից էր գրավելու այդ փոքրիկ հողակտորը, որն այդքան ծանր աշխատանքի գնով էր խլվել անտառից: «Տառապանքի մենաստան»,— մտածեց բժիշկը: Եվ երբ մտեցավ տանը, ոչ երկրային լուսնուր ճնցեց նրան, և նրա առաջին միտքն այն եղավ, որ առնջ լքված է: Հետո նա տեսավ Աթային: Նա ծայապատիկ նստած էր այն ծածկի տակ, որը որպէս խոհանոց էր ծառայում, և ինչ-որ բան էր եփում: Նրա կողքին մի երեխա լուռ խաղում էր ցելթ մեջ: Աթան շժպտաց, երբ տեսավ բժիշկին:

— Ես եկել եմ Մթրիբլենդին նայելու,— ասաց նա:

— Գնամ ասեմ նրան:

Աթան զնայ գեպի տուն, աստիճաններով բարձրացավ պատըզամբ և ներս մտավ: Բժիշկ Կուտրան հետեց նրան, բայց դրան մտա կանգնեց՝ ենթարկվելով Աթայի արած նշանին: Երբ Աթան քացեց դուռը, մի զարշելի քաղցրաբույր հոտ փչեց նրա վրա, որը բորոտի ներկայութիւնը անտանելի է դարձնում: Բժիշկը լսեց, թե ինչպէս Աթան ինչ-որ բան ասաց, հետո լսեց Մթրիբլենդի պատասխանը, բայց չճանաչեց նրա ձայնը, որք խուսափում և անհասկանալի էր դարձել: Կուտրան բարձրացրեց հոնքերը: Նա խելույն հասկացավ, որ հիվանդութիւնը արդէն խուճել էր ձայնալարերի վրա: Աթան նորից դուրս եկավ:

— Նա չի ուզում տեսնել ձեզ: Գուք պետք է հեռանաք:

Բժիշկը պնդեց, բայց Աթան ներս շփողեց նրան: Կուտրան թոթվեց ուսերը, մտածեց մի պահ և ետ դարձավ: Աթան զնայ նրա հետեց: Կուտրան զգում էր, որ նա էլ էր ուզում ազատվել իրենից:

— Ուրեմն ես ոչինչ չեմ կարող անել ձեզ համար,— հարցրեց նա:

— Կարող եք ներկեր ուղարկել նրան,— պատասխանեց Աթան:— Նա ուրիշ ոչինչ չի ուզում:

— Գեւ կարողանում է աշխատել:

— Տան պատերի վրա է նկարում:

— Խեղճ գավակս, ինչ սարսափելի կյանք է ձեր կյանքը: Վերջապէս Աթան ժպտաց, և նրա աչքերում գերմարդկային լեր ճառագեց: Կուտրան զարմանքից ապշել էր: Նա խոր ակնածանք դրաց այդ կնոջ նկատմամբ և ոչինչ չկարողացավ ասել:

— Նա իմ ամուսինն է,— ասաց Աթան:

— Իսկ ո՞ր է ձեր մյուս երեխան,— հարցրեց նա— Երբ անչայ անգամ այստեղ էի, նրանք երկուսն էին:

— Մահացավ: Թողնցինք մանգոյի ծառի տակ:

Բժշկի հետ մի փոքր գնալուց հետո Աթան ասաց, որ պետք է վերադառնա: Կուտրան հասկացավ, որ նա վախենում է գլուզից որևէ մեկին հանդիպելու: Նա նորից ասաց, որ եթե իր կարիքը զգացվի, թե՛ղ մարդ ուղարկի իր հետևից, և ինքը սնմիջապես կգա:

ԳԼՈՒԽ 56

Անցավ ևս երկու, գուցե և երեք տարի, բանի որ ժամանակը Թաթթիում անցնում է աննկատելի և գծվար է դրա հաշվի՛ր սահել: Վերջապես բժիշկ Կուտրային յուր հասավ, թե Սթրիբլենդը մահանում է: Աթան կանգնեցրեց Պապետն գնացող փոստակառորը և կառուցանին խնդրեց բժշկի մոտ անցնել: Բայց բժիշկը տանը շէ՛ր, և տխուր յուրը միայն երեկոյան հասավ նրան: Այդքան ուշ ժամի գնալն անհնարին էր, և նա ճանապարհ ընկավ միայն հուշորդ օրը յուտարացին: Կուտրան հասավ Տարափոտ և փերջին սնդում մինչև Աթայի տուն յոթ կիլոմետր ոտքով գնաց: Արահաք ծածկվել էր թփերով և պարզ երևում էր, որ վերջին տարիներին ոչ ոք չէր անցել այդտեղով: Դժվար էր գտնել նաև ապարհ: Երբեմն Կուտրան ստիպված էր լինում սուլթարելով անցնել շորացած օտվակի հունով, երբեմն էլ՝ խիտ ու փռտ մացանները միջով: Հաճախ իր գլխավերևում ծառերից կախված իշամեղրի բներից խուսափելու համար նա մազիցում էր մայրաբեկորների վրա: Շրջապատում գերեզմանային լուսնուց էր տիրում: Կուտրան թեթևացած շունչ բուռեց, երբ միջրջապես մոտեցավ շներկված փոքրիկ տանը, որն այժմ շափազանց խարխուլվել ու անուշադրության էր մասնավել: Ալառեղ նուշնպես անտանելի լուսնուն էր տիրում: Նա մոտեցավ, և արևի տակ սնդուներն իրազացող փոքրիկ տղան տեսնելով նրան, արագ փախավ: Յուրաքանչյուր անձանթ թշնամի էր նրա համար: Բժիշկ Կուտրային թվաց, թե երեխան ծառի հետևից թաքուն իրեն է հետևում: Գուռը կրկնի վրա բաց էր: Նա ձայն տվեց, բայց ոչ ոք չպատասխանեց: Կուտրան ներս մտավ, մեծեց գուռը, նորից ոչ մի պատասխան: Նա սեղմեց գոտն բռնաչը և ներս

մտավ: Գարշահոտութունը, որ փչեց բժշկի երեսին, սրտխառնուք պատճառեց նրան: Նա թաշկինակը սեղմեց քթին և ստիպեց իրեն ներս մտնել: Սենյակը թաղված էր կիտախավարի մեջ և արևի պայծառ լուսոյից հետո Կուտրան մի քանի վայրկյան ոչինչ չտեսավ: Հետո նա ցնցվեց: Չէր կարողանում հասկանալ, թե որտեղ է գտնվում: Նրան թվաց, թե հանկարծակի մտել է կախարդական մի աշխարհ: Աղոտ կերպով երևում էր կուսական մի անտառ, որտեղ մեղի մարդիկ շրջում էին ծառերի տակ: Հետո հասկացավ, որ դրանք պատի վրա նկարված նկարներ են:

— Mon Dieu, միթե արևահար եմ եղել,— փնթփնթաց նա:

Թեթևակի մի շարժում գրավեց նրա ուշադրութունը, և Կուտրան տեսավ հատակին պատկած յուր արտասովոր Աթային:

— Աթա՛,— ձայն տվեց նա,— Աթա՛:

Աթան ոչ մի ուշադրութուն չգարձրեց նրա վրա: Գարշահոտութունը նորից ուշաթափվելու աստիճան սրտխառնուք պատճառեց նրան, և նա սիգարետ վառեց: Կուտրայի աչքերը վարժվեցին մթությանը, և հիմա, երբ տեսավ նկարազարդված պատերը, անհաղթահարելի մի հուզմունք համակեց նրան: Նա գեղանկարչութունից ոչինչ չէր հասկանում, բայց այդ նկարում կար ինչ-որ բան, որ արտակարգ տպավորութուն թողեց նրա վրա: Հատակից մինչև առաստաղը պատերը ծածկված էին բարձր արտասովոր կոմպոզիցիա ունեցող մի նկարով: Այն աննկարագրելիորեն հրաշալի էր ու խորհրդավոր: Հուզմունքից Կուտրայի շունչը կտրվեց: Նրան համակել էր մի գգացում, որը ո՛չ կարող էր հասկանալ, ո՛չ էլ բացատրել: Նա յգվել էր պատկառանքով ու հիացմունքով մի մարդու, որը հանկարծ տեսնում է աշխարհի արարումը: Դա վիթխարի էր, զղայական ու կրթոտ, բայց միաժամանակ ինչ-որ սարսափելի բան կար դրանում, որը ահարեկեց նրան: Դա ստեղծագործութունն էր մի մարդու, ով թափանցել էր բնության խորքերը և հաշտեցրեց յայնպիսի գաղտնիքներ, որոնք սրտնչելի էին և մեծամանակ սարսափելի: Դա ստեղծագործութունն էր մի մարդու, ով այնպիսի բաներ էր իմացել, որ սրբապղծութուն էր մարդու համար իմանալ: Դրանում ինչ-որ կուսական ու սարսափելի բան կար: Ավելին, դա գերմարդկային էր: Կուտրան ակամաչից հիշեց սև մոգության մասին: Դա գեղեցիկ էր և միաժամանակ անպատկառ:

— Mon Dieu, նա հաճաք է,— արտաստեղեց նա ինքնալեզարար:

Հետո նրա հայացքը կանդ առավ անկյունում դրված խսիր-
ների վրա. մտտեցավ ու տեսավ սարսափելի, խեղճած ու ալ-
յանդակված մի մարմին, որը մի ժամանակ Սթրիբլենզն էր:
Նա մեռած էր: Բժիշկ Կուտրան ջանք գործադրելով կուսցավ այ-
լանդակված դիակի վրա: Հանկարծ նա ցնցվեց, և սարսափից
սիրտն սկսեց արագ բաբախել. նրան թվաց, թե ինչ-որ մեկը
կանգնած է իր շենտում: Աթան էր նա չէր լսել, թե ինչպես է
Աթան վեր կացել ու մոտեցել իրեն: Աթան նրա կողքին կանգ-
նած նայում էր աշխտեղ, որտեղ Կուտրան:

— Աստված իմ, չղերս լրիվ բայջայվել են,— ասաց բժիշ-
կը:— Դուք մահու լափ վախեցրիք ինձ:

Նա նորից մի հայացք գցեց դիակի վրա և վախեցած ետ
ընկրկեց:

— Նա կուրացե՞լ էր:

— Այո, նա կուրացավ մետ մի տարի առաջ:

ՊԱՌԽ 57

Բայց այստեղ մազամ Կուտրայի հայտնվելով ընդհատվեց
մեր զրույցը: Նա այցելություններից էր վերադառնում: Մազամ
Կուտրան, բավական պատկառազոր մի կին, բարձրահասակ,
հաղթանդամ, փարթամ կրծքով, պարարտ մարմինը ձեզ սեղ-
միրանով կաշկանկոված, ներս սահեց ինչպես բոլոր առադաստ-
ները պարզած մի նավ: Նա խոշոր կեռ թիթ ուներ և եռածալ
կզակ, իրեն շատ ուղիղ էր պահում, ոչ մի վայրկյան չէր ենթարկ-
վում արեազարձային դատու ընդարձացնող հոսանքներին, ընդհա-
կառակը, ավելի գործունյա էր, ավելի սկիտիվ ու վճռողան, բան
կարելի է պատկերացնել մի այլ կնոջ, որը մեղմ կլիմայական
պայմաններում է ապրում: Չափազանց շատախոս լինելով, նա
անմիջապես նորությունների ու մեկնաբանությունների հեղեղ
սեղաց մեզ վրա: Մեր զրույցը, որ մազամ Կուտրայի գալուց թիչ
առաջ էր տեղի ունեցել, սկսեց շափազանց հեռավոր ու անիրա-
կան բան թվալ մեզ:

Վերջապես, բժիշկ Կուտրան շրջվելով իմ կողմը, ընդհատեց
նրան:

— Իմ աշխատասենյակում զեռ կախված է Սթրիբլենզի տված
նկարը: Ուզո՞ւմ եք տեսնել:

— Հաճույքով:

Մենք վեր կացանք, և բժիշկը ուղեկցեց ինձ պատշգամբ, որը
չբջապատում էր նրա տունը: Այնտեղ մենք փոքր-ինչ կանգնե-
ցինք նայելու նրա պարտեզում փարթամորեն աճած ծաղիկներին:

— Երկար ժամանակ մտքիցս չէր հեռանում այդ արտասովոր
նկարը, որ Սթրիբլենզը իր տան պատերին էր նկարել,— ասաց
Կուտրան մտախոհ:

Ես էլ էի այդ մասին մտածում: Ինձ թվում էր, որ Սթրիբ-
լենզը վերջապես արտահայտեց այն, ինչ վաղուց հանգիստ չէր
տալիս նրան: Աշխատելով խաղաղություն մեջ և իմանալով, որ
դա իր վերջին հնարավորությունն է, նա, իրօք որ, ասաց այն
ամենը, ինչ մտածում էր կյանքի մասին, այն ամենը, ինչ հաս-
կացել էր: Եվ, ով գիտե, զուցե այստեղ էլ նա վերջապես հան-
գիստ գտավ: Այն գեթ, որ իշխում էր նրա վրա, զուրս մղվեց
վերջապես, և աշխատանքի ավարտի հետ միասին, որի համար
նրա ամբողջ կյանքը մի տանջալից հախապատրաստություն էր
եղել, հանգիստ իջավ նրա տառապյալ ու խռովահոգ հոգուն:
Նա պատրաստ էր մահվան, որովհետեւ արգեն հասել էր իր նպա-
տակին:

— Իսկ ի՞նչ էր արտահայտում այդ նկարը:

— Դժվար է ասել: Այն տարօրինակ էր ու ֆանտաստիկ:
Կարծես թե նա տեսել էր աշխարհի սկիզբը, Դրախար, Ազամի
ու Եվային — *quæ sains-jc!* — դա մարդկային մարմնի, կնոջ ու
տղամարդու գեղեցկության հիմն էր, բնության փառաբանություն,
զենմ, անտարբեր, հմայիչ ու դաժան: Տարածություն անասն-
մտնություն և ժամանակի տնվախճանություն զգաղորդությանից
մարդու շունչ էր կտրվում: Սթրիբլենզը ծառեր էր նկարել, որ ևս
տեսնում էի ամեն օր՝ կոկոսյան արմավենիներ, բանջարենի-
ներ, հնդկարմավենիներ, ավիատանձենիներ, որոնք դրանից հե-
տո այլ կերպ են երևում ինձ, կարծես թե կենդանի հողի ունեն
և մի գաղտնիք, որին ևս պատրաստ եմ ամեն վայրկյան հաս-
նելու, բայց որն, այնուամենայնիվ, խույս է տալիս ինձանից: Ինձ
յուզ ծանոթ էին նաև գույները, բայց միաժամանակ և անսովոր:
Դրանք ունեին իրենց սեփական, միայն իրենց հատուկ նշա-
նակությունը: Իսկ այդ մերկ տղամարդիկ ու կանայք նրանց
հողեղեն էին, սակայն ինչ-որ ստավամային կայծ կար նրանց
մեջ: Զեղ երևում էր մարդը իր կուսական բնազդների սեղ մե-

կուլյամբ, և դա ահաբեկիչ էր, որովհետև տեսնում էիք ինք-
ներդ ձեզ:

Բժիշկ Կուտրան թոթովեց ուսերն ու ժպտաց:

— Դուք կծիծաղեք ինձ վրա: Ես մատերիս չիտեմ, ծան-
րամարմին, գեր, Ֆուլտաֆ գուցի: Լիրիկան չի սաղում ինձ:
Ես ծիծաղելի գրուկյան մեջ եմ ընկնում, բայց գեղանկարչու-
թյունը երբեք այգայիսի տպավորություն չէր թողել ինձ վրա:
Tenez¹, նույն զգացողությունն ունեցա, երբ Հոսմում այցելեցի
Միքստինյան մատուռ: Այնտեղ նույնպես խոր ակնածանք զգացի
այն մարդու մեծությունն նկատմամբ, որ նկարագրող էր մա-
տուռի առաստաղը: Դա հանճարեղ ու վիթխարի էր: Ես անշուն
ու ընչին զգացի ինձ: Բայց մենք նախապատրաստված ենք
Միքստինյան մեծությունը: Իսկ Տարսիսի վերևում գտնվող
լեռնային կիրճում, բաղաբարթությունից հետո, բնիկի մի խոր-
ճիթում հայտնված հրաշքը անսպասելի էր ինձ համար: Միքե-
լանչելոն նորմալ է ուսուցող: Նրա ստեղծագործությունները
վսեմ անգործություն են արտահայտում, իսկ այստեղ, շնայած
գեղեցիկությանը, ինչ-որ բան խոտովում էր մարդու հոգին: Չգի-
տեմ հատկապես ինչ, բայց ես անհանգիստ էի գգում ինձ: Ինչ-
պե՞ս բացատրեմ այդ զգացողությունը: Կարծես նստած լինես
գուան մոտ մի սենյակի, որտեղ գիտես, որ մարդ չկա, բայց
չգիտես թե ինչու սարսափով ես մտածում, որ այնուամենայնիվ
ինչ-որ մեկը կա այնտեղ: Հանդիմանում ես քեզ, համոզված ես,
որ նյարդեքդ են... և այնուամենայնիվ... Մի երկու վայրկյան
հետո այլևս չես կարողանում պայքարել քեզ համակած վախի
դեմ, և անհասկանալի սարսափը պատում է քեզ: Այո, ճիշտ
ասած, ես այնքան էլ չափսոսացի, երբ իմացա, որ այդ տարու-
րինակ գրուկործոցները ոչնչացել են:

— Աչնչացել:

— Mais oui², մի՞թե չգիտեիր:

— Որտեղից իմանայի: Առաջ ես երբեք չէի լսել գրունց մա-
սին, բայց ձեզ լսելուց հետո կարծեցի, թե որե՛կ կողեկցիտներք
ձեռք են ընկել: Զէ որ մինչև հիմա դեռ գոյություն չունի Միքի-
լենդի ստեղծագործությունների լրիվ ցուցակը:

— Սրբ նա կուրբ ցավ, ժամերով նստում էր այդ երկու փոք-
րիկ սենյակներում, որ նկարագրող էր, կուրբ աշքերով նայում
էր իր ստեղծագործություններին և տեսնում գուցե ավելի շատ,
բան առաջ, ավելի՞ բան իր ողջ կյանքի ընթացքում: Աթան ասաց,

որ Միքիլենդը երբևք չէր բողոքում ճակատագրից, երբեք չէր
կորցնում արիությունը: Մինչև վերջին վայրկյանը նրա միտքը
պարզ ու խաղաղ մնաց: Բայց նա պահանջեց Աթայից խոստա-
նալ, որ երբ թաղի իրեն, — կարծեմ ձեզ չասացի, որ իմ ձեռ-
քերով գերեզման փորեցի նրա համար, որովհետև բնիկներից ոչ
մեկը չէր համարձակվում մոտենալ վարակված տանը, և մեկը
Աթայի հետ միասին Միքիլենդի մարմինը իրար կտրված երեք
պարեոյի մեջ փաթաթեցինք և թաղեցինք մանուշիկ մուռի տակ, —
ուրեմն, պահանջեց Աթայից խոստանալ, որ կայրի տունը և չի
հետանա, մինչև որ շայրվի վերջին շչուրը:

Ես որոշ ժամանակ լուռ խորհում էի, հետո ասացի.

— Նշանակում է նա մինչև վերջին վայրկյանը չփոխվեց:

— Այդպե՞ս եք կարծում: Իսկ ես իմ պարսրը համարեցի
համոզել Աթային հրաժարվել այդ իսկազար մտքից:

— Նույնիսկ այն բանից հետո, ինչ քիչ առաջ պատմեցիք:

— Այո, Զէ՞ որ դա հանճարի ստեղծագործություն էր, ես
մտածեցի, որ իրավունք չունեինք խելու աչք մարդկությունից:
Բայց Աթան լսե՞լ անգամ չուղեց: Նա խոստացել էր եմ ևս
հետացա, չէի կարող ակնհասել լինել նման բարբարոսական
սրբարքի, ու միայն հետո իմացա, որ Աթան կատարել է Միքի-
լենդի կամքը: Հատկապես ու պանդանուս խելքներն պարաֆին
էր լցրել և կրակ տվել: Կես ժամ հետո անից միայն մարդ
կրակներ էին մնացել, արվեստի պոստորոծոցը այլևս գոյություն
չունեիր:

— Իմ կարծիքով Միքիլենդը սեռեր, որ դա գուցե հարձակ
է: Նա հասել էր իր նպատակին: Ստեղծել էր մի ամբողջ աշ-
խարհ և, անհնչելով, որ դա գեղեցիկ է, հպարտությունից ու մե-
ծամտությունից ոչնչացրել էր այն:

— Ժամանակն է, որ ձեզ ցույց տամ նկարը: — ասաց բժիշկ
Կուտրան՝ սուս անցնելով:

— Իսկ ի՞նչ էլզան Աթան ու երեխան:

— Գնա ցուց Մարկիլյան կղզիներ: Աթան աղդակների բաներ
այնտեղ: Լսել եմ, որ նրա որդին ինչ-որ առաջապատանավի վրա
է ծառայում: Ասում են, շատ է նման հորը:

Աշխատասենյակի գոտն մոտ բժիշկը կանգնեց:

— Դա մրգերով նաւլորմորտ է, — ասաց նա ժպտալով: —
կամածեք, որ դա այնքան էլ հարմար չէ բժշկի սխալատեսնե-
լակի համար, բայց կ'ենա չի ուզում այդ նկարը հյուրասենյակում

տեսնելու նրա կարծիքով դա շափազանց անպարկեշտ նկար է։
— Անպարկեշտ։ Բայց չէ որ դա նատյուրմորտ է,— բացա-
կանչեցի ևս դարմացած։

Մտանք աշխատասենյակ, և նկարը անմիջապես գրավեց
ուշադրութիւնս։ Ես երկար ժամանակ նայում էի դրան։ Դա
ճանդոսների, բանտների, նարինջների և ինչ-որ պտուղների կույտ
էր, առաջին հայացքից բավական անմեղ նատյուրմորտ։ Պոստ-
իմպրեսիոնիստների ցուցահանդեսում անհոգ այցելուն կրնդու-
նէր այն որպէս այդ դպրոցին բնորոշ, բայց ոչ լավագույն նմուշ-
ներից մեկը, իսկ հետագայում նա կմտածէր զարմանքով, թէ
ինչո՞ւ Սակայն ալլես երբեք չէր մոռանա։

Գուշներն այնքան անսովոր էին, որ դժվար է բառերով ար-
տահայտել այն խոտմահույզ զգայմունքները, որ առաջացնում
էին դրանք։ Մուգ կապույտ, մութ նրբերանգներ, ինչպէս լազու-
րիտե նրբաբանդակ գավաթի վրա, որոնց դողողացող փայլում
սակայն կյանքի խորհրդավոր թրթիռ էր զգացվում։ Բոսորագույն
երանգները, սարսափելի ինչպէս քայքայվող հում միսը, մի այն-
պիսի զգայուն կրքոտութիւն էին հուրհրում, որ Հելիոգաբալի՝
ժամանակների հոռոմեական կայսրութեան տարտամ հիշողու-
թյուններ էին արթնացնում։ Փշարմավի հատապատուղների նման
վառ կարմիր գուշները հիշեցնում էին ծննդյան տոները Անգլիա-
յում, ձյուն, խնդրվյուն, երկխաների զվարթ ճիչեր, բայց ինչ-որ
կախարդանքով զնայով մեզմանում էին, դառնում ավելի քրն-
քուշ, քան ազգայնու կրծքի ազվամազը։ Թանձր գեղիներ անբնա-
կան կրքոտութիւնով ձուլվում էր մի կանաչի հետ, որ քաղցրա-
բույր էր ինչպէս գարունը, թափանցիկ, ինչպէս լեռնային վտակի
կայծկլտացող ջուրը։ Ինչպիսի հիվանդագիտ երևակայութիւն էին
ստեղծել այդ մրգերը։ Դրանք Հեապերիզները՝ պոլիսեզյան այգում
էին աճել։ Ինչ-որ սարսփնակ կենդանութիւն կար այդ մրգերի
մեջ, կարծես ստեղծվել էին հողագնդի պտտմութեան այն մութ
ժամանակներում, երբ առարկաները չէին հաստատվել իրենց
ձևի մեջ։ Արտակարգ ճոխ էին դրանք, ծանրաբեռնված արևա-
դարձային անուշահոտութեամբ։ Եվ թվում էր, թէ լցված էին
ինչ-որ մուսլ կրքոտութեամբ։ Դրանք կախարդական պտուղներ
էին, և ճաշակել այդ մրգերը նշանակում էր, տեսվո՞՞մ գիտե՞,
դիպչել մարդկային հոգու ինչպիսի գաղտնիքների, թափանցել
երևակայութեան ինչպիսի խորհրդավոր ամբողջներ։ Դրանք լի էին
անսպասելի վտանգներով, և նա, ով մի անգամ ճաշակեր այդ

մրգերը, կդառնար գազան կամ աստված։ Այն ամենը, ինչ
առողջ էր ու բնական, ինչ հակված էր բարուն ու սովորական
մարդկանց սովորական ուրախութիւններին, սարսափով ետ էր
քաշվելու այդ պտուղներից, բայց, այնուամենայնիվ, անհաղթա-
հարելի ձգողական ուժ կար դրանց մեջ և ինչպէս շարի ու բարու
իմացութեան ծառի պտուղ, դրանք հզի էին Անհայտի ամեն
սեռակի հնարավորութիւններով։

Վերջապէս ես շղիմացա և հայացքս շրջեցի։ Հիմա դգացի,
որ Մթիբլենդը իր հետ գերեզման է տարել իր զաւրանիքը։

— Voyons, René, mon ami! — լալեց մազամ Կուտրայի
բարձր, զվարթ ձայնը։ — Այդ ի՞նչ եք անում այդպեղ այդքան
ժամանակ։ Ապերիտիվները ձեզ են սպասում։ Մոռցի՞ն հարցրու,
ի՞՞ ցանկանա արդո՞ք մի բաժակ Կենկինա Դյուրանի խմելու։

— Volontiers, մազամ, — պատասխանեցի ևս՝ դուրս գալով
պատշգամբ։ Կախարդանքն անցավ։

ԵՆՈՒՆ 58

Եկավ Քաթիից մեկնելու ժամանակը։ Կողու գեղեցիկ սո-
վորութեան համաձայն, բուրբ, ուժ ճանաչում էի, նվերներ մա-
տուցեցի ինձ՝ կոկոսյան արմավենու տերևներից հյութալի
զամբուղներ, պանգանուս խտրներ, հովհարներ։ Տխարեն երեք
փոքրիկ մարգարիտ և իր սեփական չալիկ ձևորէրով պատ-
րաստած երեք տուփ գուլմայի զոնդող նվիրից։ Երբ Վելինգ-
տոնից Սան Ֆրանցիսկո գնացող փոստանավոր, որ քանաչորս
ժամով կանգ էր առել Քաթիում, հնչեցրեց իր վերջին սուղոջը՝
ուղեորներին տախտակամած կանչելով, Տխարեն սեղմեց ինձ իր
հսկայական կրծքին (ինձ թվաց, թաղվեցի այնծուփ ծովի ալիք-
ների մեջ) և ամուր համբուրեց շրթունքներս։ Արասուրներ փայ-
լեցին նրա աչքերում։ Եվ երբ դանդաղ ընթացքով, խուժեցից
խուսափելով ծովաճակից բաց ծով դուրս եկանք, սիրտս թա-
խարդական բուրմունքը։ Քաթիին շատ է հետու, և էս գիտելի, որ
այլևս երբեք չեմ տեսնի այն։ Կյանքիս մի դուլին էլ ավարու-
վից, և ես ավելի մոտ գագացի ինձ մահվանը։

Մի ամիս հետո ես արգեն Լոնդոնում էի։ Ամենամահաժող
գործերս կարգավարելուց հետո դրեցի միտիս Մթիբլենդին, Լն-

բարեկամ, որ նրան հետաքրքիր կլինեն լսել իր ամուսնու կյան-
հի վերջին տարիների մասին: Վերջին անգամ ես նրան տեսել
էի պատերազմից շատ առաջ և ստիպված եղա հեռախոսազրույց
վերսրել նրա հասցեն: Միսիս Սթրիբլենդը օր նշանակեց և ես
հասցի Քենստոն Հիլում գտնվող նրա փոքրիկ գեղեցիկ առևտր,
որտեղ հիմա նա ապրում էր: Միսիս Սթրիբլենդը արդեն վաթ-
սունին մոտ կլիներ, բայց տարիների բեռը հեշտութամբ էր
տարել և ոչ մեկը հիսունից ավել չէր տա նրան: Նրա նիհար և
ոչ այնքան կենսուոված դեմքը այն դեմքերից էր, որոնք շնայած
բարեխառն են մնում և թվում է, թե երիտասարդ հասակում գե-
ղեցիկ կին էր եղել, մի բան, որ իրականում այդպես չէր: Մա-
ղբը, որ դեռ շատ չէին սպիտակել, նա սանրել էր պճնագեղո-
րեն, իսկ սև շրջագծեսը կարված էր վերջին մոդայով: Ինչ-որ
մեկը ինձ ասել էր, և ես հիմա հիշեցի, որ նրա բուլբը՝ միսիս
Մակ-Էնդրյուն ամուսնուց հետո երկու տարի ապրելով, միսիս
Սթրիբլենդին էր թողել իր կարողությունը: Դատելով տան տես-
քից և զուրք բաց անող սպասուհու արտաքինից, այրու համար
դա բավական մեծ գումար էր եղել՝ վաչելու կյանք վարելու
համար:

Երբ հյուրասենյակ մտա, պարզվեց, որ միսիս Սթրիբլենդը
ուրիշ հյուր էլ ունի, և իմանալով ով է նա, ես հասկացա, որ
կանխամտածված էին ինձ հրավիրել այդ ժամին: Միսիս Սթրիբ-
լենդն այնպիսի հմայիչ ժպիտով ներկայացրեց ինձ միսսր Վան-
Քուլ-Թեյլորին, որ կարծես իմ փոխարեն ներողություն էր խղճո-
րում այդ հարգարժան ամերիկացուց:

— Մենք անգլիացիներս այնքան սարսուփելի տգետներ ենք:
Ներեցեք, որ ստիպված եմ բացատրել:— Նա շրջվեց դեպի ինձ:—
Միսսր Վան-Քուլ-Թեյլորը ամերիկյան նշանավոր քննադատ է:
Նիս շեք կարդացել նրա գրքերը, մեծ բաց է ձեր կրթության
համար, և պետք է անմիջապես լրացնեք այդ բացը: Հիմա միսսր
Թեյլորը մեր սիրելի Չարլիի մասին է գրում և եկել է ինձ մոտ
խնդրելու, որ որևէ բանով օգնեմ իրեն:

Միսսր Վան-Քուլ-Թեյլորը շափազանց նիհար, խոշոր, ճա-
ղատ գլխով մարդ էր, որից նրա խոր կենդանիքով ակոսված
զուսնառ դեմքը բուրդովին փոքր էր թվում: Նա խոսում էր ամե-
րիկյան առողանությունը և շափազանց զուսպ ու քաղաքավարի
էր: Նայելով նրա սառը հանդարտությունը, ես ակամայից հաղց
սվեցի ինձ, թե որ սատանան է նրան դրդել հետաքրքրվել:

Չարլզ Սթրիբլենդով: Ինձ փոքր-ինչ զվարճալիս և պատճառեց
այն քնքշությունը, որով միսիս Սթրիբլենդը հիշատակեց իր
ամուսնու անունը, և մինչ նրանք խոսում էին, ես զննեցի սեն-
յակը: Միսիս Սթրիբլենդը ետ չէր մնում ժամանակից: Անհետա-
ցել էին խիստ կրեմոններն ու Մորիսի զարդապատասանները,
անհետացել էին նաև էրանդելի փորագրանկարները, որոնք մի
ժամանակ զարդարում էին էլլի-Դարդենի վրա գտնվող նրա
հյուրասենյակը: Հիմա վառ գույներն էին փայլում այնտեղ, և
ինձ հետաքրքրեց, դիտելով արդյոք միսիս Սթրիբլենդը, որ մո-
դայով նախատեսված այդ ֆանտաստիկ գույները իրենց առա-
ջացմամբ պարտական են հարավային ժողովրդում գտնվող հեռա-
վոր կղզու խեղճ նկարչի երազանքներին: Միսիս Սթրիբլենդն
ինքը պատասխանեց այդ հարցին:

— Ինչ հիանալի բարձեր ունեք,— ասաց միսսր Վան-Քուլ-
Թեյլորը:

— Ձեզ դ՞ուր են գալիս,— հարցրեց միսիս Սթրիբլենդը
ժպտալով:— Բակաս՝ է:

Իսկ պատերին կախված էին Սթրիբլենդի լավագույն նկար-
ների մի քանի գունավոր ռեպրոդուկցիաներ, որոնք Բեռլինյան
ինչ-որ հրատարակիչ էր լույս բնծայել:

— Նկարների՞ս եք նայում,— ասաց միսիս Սթրիբլենդը, հե-
տևելով հայացքիս:— Օրիգինալներն, իհարկե, անմատչելի են
ինձ համար, բայց ես ուրախ եմ, որ գոնե այդ պատճեններն
ունեմ: Հրատարակիչն է ուղարկել: Դա մեծ մխիթարություն է
ինձ համար:

— Պետք է որ շատ հաճելի լինի ապրել շրջապատված այդ
նկարներով,— նկատեց միսսր Վան-Քուլ-Թեյլորը:

— Այո, այնքան դեկորատիվ են դրանք:

— Իմ ամենախոսր համոզմունքներից մեկն այն է,— ասաց
միսսր Վան-Քուլ-Թեյլորը,— որ իսկական արվեստը միշտ էլ
գեղարատիվ է:

Նրա և միսիս Սթրիբլենդի հայացքները կանգ առան երե-
խային կերակրող մեղկ կնոջ վրա: Կնոջ կողքին ծնկի եկած
երիտասարդ աղջիկը ծաղիկ էր մեկնել նրան շնայող երեխային:
Նրանց էր նայում ծեր, կենոտոս դեմքով մի վճուկ: Դա սուրբ
ընտանիքի սթրիբլենդյան վարկածն էր: Ես կասկածեցի, որ այդ
ֆիգուրաների նախատիպ են ծառայել Սթրիբլենդի թախիժյան
ընտանիքի անդամները, իսկ երեխայով կինը Աթան էր՝ իր անդ-

բանիկ սրդու հետ: «Իսկ միսիս Սթրիբլենդը որևէ քան զիստ ալ մասին», — հարցրեցի ես ինքս ինձ:

Խոսակցութիւնը շարունակվեց: Ինձ մնում էր միայն հիանալ միտքով Վան-Քուլ-Քեյլորի նորանկատուութիւնը, որով նա խոստովանում էր այն ամենից, ինչ կարող էր շփոթեցնել տանտիրուհուն, և զարմանալ միսիս Սթրիբլենդի ճարակութեան վրայ, — առանց որևէ սուտ խոսք ասելու նա զգուշորեն հասկացնում էր ամերիկացուն, որ ամուսնու հետ միշտ էլ հիանալի հարարերութիւնների մեջ է եղել: Վերջապես միտքով Վան-Քուլ-Քեյլորը վերկացավ հրաժեշտ տալու: Բռնելով տանտիրուհու ձեռքը, նա ամենանրբին ու զեղեցիկ հաճոյախոսութիւններով շնորհակալութիւն հայտնեց ու դուրս եկավ:

— Հուսով եմ նա շատ շնորհակալ էր ձեռքիս, — ասաց միսիս Սթրիբլենդը, երբ դուրս փակվեց նրա հետևից: — Իհարկե, դա երբեմն հոգնեցուցիչ է, բայց ես իմ պարտքն եմ համարում մարդկանց պատմել Չարլիի մասին այն ամենը, ինչ կարող եմ: Քիչ պատասխանատու բան չէ հանձարի կին լինելը:

Նա ինձ նայեց իր պարզ ու անկեղծ հայացքով, ինչպես քան տարի առաջ: «Զի՞» ծիծաղում արդյոք ինձ վրայ», — մտածեցի ես:

— Իհարկե, դուք թողել եք ձեր նախկին աշխատանքը, — ասացի ես:

— Օ, այո, — պատասխանեց նա անփութորեն: — Այն ժամանակ ես ավելի շատ ձանձրութեան էի զբաղվում այդ գործով, քան որևէ այլ պատճառով, և երեխաները համոզեցին ինձ վաճառել գրասենյակը: Նրանք գտնում էին, որ ես չափից ավելի եմ հոգնում:

Միսիս Սթրիբլենդը պարզապես մոռացել էր, որ ժամանակին այնքան է «նվաստացել», որ ստիպված է եղել իր ձեռքով սեփական ապրուստ վաստակելու: Գեղեցիկ կնոջ անսխալական բնազդը թելադրել էր նրան, որ միայն ուրիշի հաշվին կտրելի է պատշաճորեն ապրել:

— Հիմա երեխաներն այստեղ են, — ասաց նա: — Մտածեցի, որ նրանց համար հետաքրքիր կլինի լսել իրենց հոր մասին: Հիշո՞ւմ եք Ռոբերտին: Կարող եմ պարծենալ: Նրան զինվորական խաչի են ներկայացրել:

Նա բաց արեց դուռը և կանչեց երեխաներին: Ներս մտավ խաչի հազած, բայց պատուրի օձիբով, փոքր-ինչ ծանրամար-

մին, զեղեցիկ ու բարձրահասակ մի տղամարդ, նույն անկեղծ աչքերով, որ նա ուներ զիստ երեխա ժամանակ: Նրա հետևից ներս մտավ քույրը: Նա, հավանաբար, այն տարիքում էր, ինչ մայրը, երբ առաջին անգամ ծանոթացա նրա հետ, և շատ էր նման Մորը: Նրա տեսքից նույնպես թվում էր, թե փոքր հասակում լիքաւ լավիկն է եղել, շնայած իրականում այդպես չէր:

— Հատ երևույթին, դուք նրանց բոլորովին չեք հիշում, — ասաց միսիս Սթրիբլենդը, հպարտ ծափտով: — Հիմա ազգիկս միսիս Ռոնալդսոնն է: Նրա ամուսինը հրետանու մայր է:

— Նա իսկական զինվոր է, — ասաց միսիս Ռոնալդսոնը զվարթութեամբ: — Դրա համար էլ մայրը մնաց:

Սա հիշեցի, թե ինչպես ժամանակին համոզված եմ եղել, որ նա զինվորականի հետ կամուսնանա: Դա անխուսափելի էր: Նա ուներ զինվորականի կնոջ բոլոր հատկանիշները: Շատ սիրալիր ու համեստ լինելով հանդերձ, միսիս Ռոնալդսոնը, այնուամենայնիվ, չէր կարողանում թաքցնել իր այն համոզմունքը, որ ինքը այնպիսին չէ, ինչպես բոլորը: Ռոբերտը անբռնազրոսիկ էր պահում իրեն:

— Ինչ լավ եղավ, որ ձեր վերադարձն ու իմ Լոնդոնում գրանցվելը համընկան, — ասաց նա: — Սա միայն երեք օրվա արձակուրդ ունեմ:

— Նա շատ է ուզում զորամաս վերադառնալ, — ասաց մայրը:

— Չեմ թաքցնում, ես բազմաթիվ լավ բարեկամներ ունեմ և հիանալի ժամանակ եմ անցկացնում այստեղ: Դա իսկական կյանք է: Պատեքազմն, իհարկե, սաղոսափելի բան է, և այն և այլն, բայց այն երևան է բերում մարդու լավագույն հատկանիշները, դա կասկածից դուրս է:

Սա նրան պատմեցի այն ամենը, ինչ լսել էի Չարլզ Սթրիբլենդի մասին Քաթիից: Մտածեցի, որ կարծիք չկա խոսել Աթալի ու նրա երեխայի մասին, բայց մնացած բոլոր հարցերում աշխատեցի հնարավորին չափ ճշգրիտ լինել: Պատմութեանս վերջացրի Սթրիբլենդի ողբերգական մահով: Մի քանի բույլ խոսք լուսթիւն տրեց: Հետո Ռոբերտ Սթրիբլենդը լրիակացրեց լուցկին ու սիգարետ վառեց:


— Աստծո ազորեք թեև դանդաղ, բայց շատ մանր է տղում, — ասաց նա ազգեցիկ տոնով:

Միսիս Սթրիբլենդն ու միսիս Ռոնալդսոնը բարեպաշտութեամբ
95 — Լուսին և վեցպենսանց 225

խոնարհեցին աչքները, որ պարզապես նշանակում էր (ես համոզված էի գրանում), թե այդ ասույթը Սուրբ գրքից էր բերված: Ինձ թվաց, թե նույն մոլորության մեջ էր նաև Ռոբերտ Սթրիբլենդը: Չգիտեմ թե ինչու, ես հանկարծ մտածեցի Սթրիբլենդի որդու և Աթալի մասին: Թախթիում ինձ ասել էին, որ նա ուրախ ու բարեսիրտ պատանի է: Ես մտովի տեսնում էի նրան առաքաստանավի վրա, կիսամերկ, միայն կարճ անդրավարտիքով: Նրա օրն անցնում է աշխատանքի մեջ, իսկ երեկոյան, երբ առաքաստանավը ընթացիկ թեթև քամուց սահում է այիթների վրայով, երբ նավաստիները հավաքվում են տախտակամածի վրա, և մինչև կապիտանը օգնականների հետ հանգստանում է շեզլոնգների մեջ, ծխամորճ ծխելով, նա կոնցերտինոյի ճղճղան հնչյունների տակ խելահեղորեն պարում է մի այլ պտտանու հետ: Նրանց գլխավերևում կապույտ աստղալից երկիճփն է և, որքան աչքը տեսնի, խաղաղ օվկիանոսի անապատը:

Կտակարանից մի ասույթ լեզվիս ծայրին էր, բայց ես զրպեցի ինձ, համոզված լինելով, որ հոգևորականները սրբապղծություն են համարում, երբ հասարակ մահկանացուները ներխուժում են նրանց տիրույթները: Քեոխ՝ Հենրին, որ քսանյոթ տարի Ուիսթերլի փոխերեց էր եղել, նման դեպքերում սովորություն ուներ ասել, որ սատանան իր նպատակների համար միշտ էլ կարող է մեջբերում անել Սուրբ գրքից: Նա հիշում էր այն ժամանակները, երբ մի շիլլինգով կարելի էր տասներեք գաղութարնակ գնել:

Վատամիլանդներ





Հին և նոր



որին համարյա քնելու ժամն էր, իսկ երբ հաջորդ առավոտյան արթնանային, ավին արդեն պիտի Լ-րևարու Բժիշկ Մաքֆելլը վառնց իր ծխամորճը և, հենվելով բազրիքին, սկսեց երկնքում Հարավային Խաչի համաստեղությունը որոնելու Ռազմաճակատային երկու տարիներից և ստացած վերքից հետո, որի առողջանալը սպասածից երկար տևեց, նա ուրախ էր, որ գոնե մի աստիճանով ամիս պիտի Ափիայում հանգիստ ապրի, և ծովային ուղևորությունն էլ արդեն բավական օգուտ էր սվելու Քանի որ ուղևորներից սմանք հաջորդ օրը Փագո-Փագոյում պիտի իջնեն, նրանք մի փոքրիկ պարերեկո էին կազմակերպել, և մեխանիկական դաշնամուրի սուր հնչյունները դեռևս ծաղկում էին բժշկի ականջը: Սակայն հիմա վերջապես

ուստակամածի վրա խաղաղություն տիրեց: Քիչ հետո բժիշկը նկատեց իր կնոջը, որը, բազկաթոռին նստած, զրուցում էր Դեիզուրենների հետ, և անշտապ բայցեց այդ կողմ: Երբ նա նստեց լույսի տակ և հանեց գլխարկը, երեսցին շիկակարմիր մազերը, դազաթի ճաղատը և կարմիր, պեպեկոտ մաշկը՝ շիկակարմիր մազերի անբաժան ուղեկիցը. նա կլիներ բառասուն տարեկան, նիշար էր, հյուծված դեմքով, ճշտապահ ու բավական բժախնդիր և խոսում էր շոտլանդական ստոդանությունը՝ շատ ցածր, հանգիստ ձայնով:

Մաքֆելլների և Դեիզուրենների միջև, որոնք միսիոներներ էին, նավով ճանապարհորդողներին հատուկ մտերմություն էր ծագել, որն ավելի շուտ հարեանություն, և ոչ թե ճաշակների ընդհանրության հետևանք է: Նրանց գլխավորապես կապում էր հակակրանքն այն մարդկանց նկատմամբ, որոնք իրենց օրերն ու գիշերներն անցկացնում էին ծխասենյակներում փոկեր կամ բրիջ խաղալով ու խմելով: Միսիս Մաքֆելլն իրեն բավական շոքված էր զգում այն մտքից, որ ինքն ու իր ամուսինը նավի վրա միակն են, որոնց հետ Դեիզուրենները կամենում են շփվել, և անգամ բժիշկը, ամաչկոտ, բայց ամենևին էլ ոչ հիմար այս անձնավորությունը, կիսագիտակցորեն նույնն էր զգում: Եվ միայն նրա անհանգիստ, ամեն բանի հետ վիճել սիրող միտքն էր պատճառը, որ գիշերը, սեփական նավասենյակում, նա իրեն թույլ տվեց փնթփնթալ:

— Միսիս Դեիզուրենն ասում էր, որ չգիտե, թե ինչ կանեն իրենք, և թե մենք չլինեինք,— ասաց միսիս Մաքֆելլը, զգուշորեն հանելով կեղծամը:— Նա ասում է, որ մենք այս նավի վրա միակն ենք, որոնց իրենք կուզեին ճանաչել:

— Մտքովս չէր անցնի, թե միսիոներն այնքան երեկի անձ է, որ կարող է գոռոզանալ:

— Դա գոռոզություն չէ: Ես հիանալի հասկանում եմ, թե նա ինչ նկատի ունի: Այնքան էլ լավ չէր լինի, եթե Դեիզուրենները ստիպված խառնվեին ծխասենյակի այդ խաժամուժին:

— Նրանց կրոնի հիմնադիրն այդքան խստապահանջ չէր,— փոթկացրեց բժիշկ Մաքֆելլը:

— Ես քեզ քանի անգամ եմ խնդրել կրոնի շուրջ կատակներ չանել,— պատասխանեց կինը:— Զեի ուղի բո բնավորությունն ունենալ, Այլք: Դու երբեք մարդկանց մեջ լավը չես փնտրում: Բժիշկն իր բաց կապույտ աչքերով կողքանց նայեց կնոջը,

բայց չպատասխանեց: Շատ տարիների համատեղ կյանքից հետո նա հասկացել էր, որ խաղաղությունը պահպանելու համար ավելի լավ է վերջին խոսքը թողնի կնոջը: Նա միտիս Մաքֆելլից շուտ հանվեց և, մազլցելով վերին մահճակը, սկսեց քնելուց առաջ կարգալ:

Երբ հաջորդ օրը բժիշկը տախտակամած ելավ, ափն արդեն մոտ էր: Նա կարոտ աչքերով էր նայում ափին: Արժաթափալ ծովեզրի բարակ շերտը ձգվում էր մինչև լեռները, որոնք լանջից գազաթ պատած էին ճոխ բուսականություններ: Կոկոսյան արմավենիների կանաչ, խիտ սաղարթների մեջ, որ հասնում էին համարյա չոր բերանը, երևում էին սամոացիների խոտն հյուղակները, իսկ մերթնդմերթ սպիտակին էին տալիս փոքրիկ եկեղեցիները: Միտիս Գեիզսընը եկավ և կանգնեց բժշկի կողքին: Նրա հագին սև զգեստ էր, վզին ոսկե շղթա, որի վրա մի փոքրիկ խաչ էր օրորվում: Դա մի փոքրամարմին կին էր, շագանակազույն, փայլատ մազերը մեծ խոնամքով հարդարված էին, և առանց շրջանակի պենսնեի տակից երևում էին դուրս ընկած կապույտ աչքերը: Միտիս Գեիզսընը ոչխարի նման երկար գեմբուներ, սակայն նա հիմարի տպավորություն չէր թողնում, ավելի շուտ լարվածություն ու զգուշավորություն կար նրա ողջ տեսքում, իսկ շարժումներն արագ էին՝ թուխային: Ամենաանսովորը նրա ձայնն էր՝ բարձր, մետաղե, հաստատուն, որ մարդու սկանչը ճնշում էր ծանր միապաղաղություններ, նյարդերի վրա ազդելով ինչպես պենամտիկ գայլիկների անգույթ դողողը:

— Այստեղ ձեզ կզգաք ինչպես տանը,— ասաց բժիշկ Մաքֆելլը իր բռնազրոսիկ, արհեստական ժայտը դեմքին:

— Գիտեք, մեր կողմերը ցածր են, ոչ սրանց նման: Կորույան: Սրանք հրաբխային են: Մինչև մեզ մոտ հասնելը դեռ մի տասը օրվա ճանապարհ ունենք:

— Այս կողմերում դա համարյա նույնն է, ինչ Անգլիայում հաջորդ փողոցը,— կատակեց բժիշկ Մաքֆելլը:

— Դե, այդպես ասելը չափազանցություն է, բայց իրոք Հասթվային ծովերում հեռավորություններն այլ կերպ են մարդու աչքին երևում: Այդ մեկը ճիշտ է:

Բժիշկ Մաքֆելլը կամացուկ հառաչեց:

— Ես ուրախ եմ, որ այստեղ չենք մնալու,— շարունակեց կինը:— Ասում են, այս կողմերում աշխատելը շատ դժվար է:

Նավերի մոտիկությունը խելքահան է անում մարդկանց, և հետո ուսումնական նավահանգիստ կա, դա վատ է բնիկների համար: Մեր տեղամասում մենք այդպիսի դժվարությունների հետ չենք ընդհանրվում: Իհարկե, այնտեղ մի երկու առևտրական կա, բայց մենք հոգ ենք տանում, որ նրանք իրենց կարգին պահեն, իսկ եթե չեն հնազանդվում, մենք նրանց այն օրն ենք պցում, որ իրենք են ուրախ լինում թողնել զնալ:

Քթի վրա ուղղելով ակնոցը, նա մի անողոք հայացք հռանց կանաչ կղզուն:

— Այստեղի միսիոներների դորժը գրեթե անհույս է: Երբեք չեմ դադարում աստծուն փառք տալ, որ գոնե դրանից է ազատել մեզ:

Գեիզսընի տեղամասը բազկացած էր Սամոայից հյուսիս ընկած կղզիների մի խմբից. դրանք իրարից ահագին հեռու էին, և միտիս Գեիզսընը հաճախ ստիպված էր լինում մակույլով երկար տարածություններ կտրել: Այդ դեպքում կինն էր մնում նրանց շտաբում և ղեկավարում միտիսի գործերը: Բժիշկ Մաքֆելլի սիրտը նվաղեց՝ նա պատկերացրեց, թե անտարակույս ինչպիսի «համություններ» է այդ կինը ղեկավարում: Բնիկների ընչազրկության մասին նա խոսում էր ոչինչ չթաքցնող ձայնով, բայց և վերին աստիճանի կեղծ-բարեպաշտական սարսափով: Նրա նրբազգացությունը շատ յուրատեսակ էր: Հազիվ մի քանի օրվա ծանոթներ էին, երբ մի առիթով բժշկին ասել էր.

— Գիտեք, երբ մենք նոր էինք բնակություն հաստատել կղզում, նրանց ամուսնական սովորություններն այնքան նողկալի էին, որ ես երևի չկարողանամ ձեզ նկարագրել: Բայց ես կպատմեմ միտիս Մաքֆելլին, իսկ նա ձեզ կպատմի:

Հետո բժիշկը տեսել էր իր կնոջը և միտիս Գեիզսընին կողք կողքի նստած, շուրջ երկու ժամ ամենայն լրջությամբ զրուցելիս: Երբ ընդարմազեթ լինելու համար մի քանի անգամ նրանց կողքով ետ ու առաջ էր գնացել, լսել էր միտիս Գեիզսընի զրբզրոված փսփսոցը, որ ասես լեռնային արագահոս վտակի հեռավոր խոխոչյուն լինեք, և տեսնելով իր կնոջ բաց բերանն ու դուռնատ դեմքը, հասկացել էր, որ սա բավական լուրջ ապրումների մեջ է: Գիշերը նավախցիկում նա ամուսնուն շնչակտուր պատմել էր ամեն ինչ:

— Դե, ի՞նչ էի ձեզ ասում,— հաջորդ օրը ցնծալից բացականչեց միտիս Գեիզսընը: Երբեք ավելի ահավոր բան լսել էիք:

Պարզ է, չէ՞, որ ինքս չէի կարող ձեզ պատմելու նույնիսկ շնա-
յած այն բանին, որ դուք բժիշկ եք:

Միսիս Դեիդսընն ուշադիր նայեց բժշկի դեմքին: Նա տեն-
չում էր տեսնել, թե ինքը հասե՞լ է արդյոք սպասած էֆեկտին:

— Զարմանալի չէ, որ երբ առաջին անգամ այնտեղ գնա-
ցի՞նք, քիչ մնաց կորցնենք մեզ: Դուք դժվար թե հավատար, բայց այդ գյուղերից ոչ մեկում հնարավոր չէր գտնե մի լավ
սղջիկ գտնել:

Նա չափ բառն օգտագործում էր խիստ տեխնիկական իմա-
տով:

— Միստր Դեիդսընը և ես խոսակցություն ունեցանք դրա
շուրջ և որոշեցինք, որ առաջին անելիքը պարերին վերջ տալու
է: Բնիկները խելագարվում էին պարերի համար:

— Ինքս էլ շահել ժամանակ չէի խորշում պրանցից.— ասաց
բժիշկ Մաքֆելլը:

— Ես դա գուշակեցի, երբ անցյալ գիշեր լսեցի, թե ինչպես
էիք դուք միսիս Մաքֆելլին հարցնում, արդյոք ձեզ հետ մի եր-
կու պատւոյտ չի՞ անի: Չեմ կարծում, թե շատ վատ է, երբ մարդ
պարում է իր կնոջ հետ, բայց ես ինձ թեթևացած զգացի, երբ
նա մերժեց: Ներկա հանգամանքներից ելնելով, մտածեցի, որ
ավելի լավ կլինի, եթե մենք մեզ առանձնացած պահենք:

— Ի՞նչ հանդամանքներ:

Միսիս Դեիդսընը պենսնեի տակից մի արագ հայացք նետեց
բժշկի վրա, սակայն հարցին չպատասխանեց:

— Բայց սպիտակ մարդկանց մոտ դա մի քիչ ուրիշ կերպ
է,— շարունակեց նա,— թեև պիտի ասեմ, որ համաձայն եմ
միստր Դեիդսընի հետ, որն ասում է, թե ինքը չի հասկանում,
ինչպես կարող է ամուսինը կանգնել տեսնել իր կնոջն ուրիշ
մարդու գրկում, և ինչ վերաբերվում է ինձ, ապա ես ամուսնանա-
լուց հետո ոչ մի անգամ չեմ պարել: Սակայն բնիկների պարերը
բոլորովին այլ բան են: Դրանք ոչ միայն ինքնին անբարոյական
են, այլև պարզապես մղում են դեպի անբարոյականություն:
Ինչէ՛, շնորհակալ եմ ասածուն, որ մենք այդ պարերն արմա-
տախիլ արեցինք, և չեմ սխալվի, եթե ասեմ, որ մեր տեղամա-
սում ու՞ր տարի ոչ ոք չի պարել:

Այժմ նրանք հասել էին նավահանգստին, և միսիս Մաքֆելլը
միացավ նրանց: Նավը կտրուկ թեքվեց և դանդաղ ներս լողաց:
Պա մի հսկա փակ նավահանգիստ էր, այնքան մեծ, որ կբա-

վականացներ ռազմականների մի տորմիդի: Շուրջըսընը կանաչին
էին տալիս ուղղաբերձ սարերը: Հենց մուտքի մոտ, առես ծո-
վային քամիների խաշմերուկում, կանգնած էր նահանգապետի
տունը՝ շրջապատված այգով: Աստղերն ու գծերը պարկոտ ծա-
ծանվում էին ամերիկյան դրոշի վրա: Նրանք անցան Երկու թե
Երեք կոկիկ հյուղակների, հետո թեկոսի հրապարակի կողքով և
մտան պահեստներով յի նավամատուցքը: Միսիս Դեիդսընը
մատնացուց արեց երկու-երեք հարյուր յարդ այն կողմ խա-
րիսիս գցած առագաստանավը, որ պետք է իրենց Ափիա տաներ:
Այնտեղ կղզու բոլոր կողմերից անհամբեր, աղմուկոտ և բարյա-
ցակամ բնիկների ամբոխ էր հավաքվել, ոմանք հետաքրքրու-
սիրությունից, մյուսները Միդնեյ ուղևորվող ճանապարհորդների
հետ առևտուր անելու համար: Նրանք հետները բերել էին անա-
նաս, բանանի հսկա կապուկներ, թափա՛, խեցիներից և շնա-
ձկան ատամներից վզնոցներ, կավաչով՝ տակառիկներ և ուղ-
ձական մակուկների մոդելներ: Ամերիկյան ծովայինները, բա-
րետես ու կոկիկ, մարուր սափրած կենսախիղ դեմքերով,
անշտապ զբոսնում էին նրանց միջով, նաև եկել էր իշխանու-
թյան ներկայացուցիչների մի փոքր խումբ: Մինչ ուղևորներն
ափ կիցեցնեմին, Մաքֆելլինը և միսիս Դեիդսընը ամբոխն էին
դիտում: Բժիշկ Մաքֆելլը նայում էր ֆրամբեզիայի հետևանքնե-
րին: Երեխաների ու պատանիների մեծ մասն այդ հիվանդության
նշաններն էր կրում՝ այլանդակ խոցեր, և նրա՛ մասնագետի
աչքերը փայլատակեցին, երբ առաջին անգամ իր պրակտիկա-
յում փրկարություն դեպքեր տեսավ՝ հսկայական, ծանրացած
ձևերով կամ ահագին տևե ոտքերով մարդիկ: Թե կանանց, թե
տղամարդկանց հագին լավա-լավներ՝ էին:

— Պա շատ անպատշաճ հագուստ է,— ասաց միսիս Դեիդ-
սընը:— Միստր Դեիդսընը կարծում է, որ պետք է օրենքով ար-
գելի դա: Էլ ինչպե՞ս կարելի է հուսալ, որ մարդիկ բարոյական
լինեն, երբ նրանք, բացի մի կտոր փալասից գոտակտեղի շուրջ
բան չունեն հագած:

— Այս կլիմային բավական հարմար է,— ասաց բժիշկը,
մարքելով ճակատի քրտինքը:

Հիմա, երբ նրանք արդեն ցամաքի վրա էին, թեև վաղ առա-
վոտ էր, շոգն արդեն անտանելի էր դարձել: Ամեն կողմից սա-
րևրով շրջապատված Փագո-Փագո օդի շունչ չէր հասնում:

— Մեր կղզիներում,— միսիս Դեիդսընը շարունակեց նույն

նշողան տոնով,— մենք փաստորեն արմատախիլ ենք արել լավա-լավաները: Մի քանի ծերունիներ զեռես շարունակում են հազնել, բայց դրանով էլ վերջանում է: Կանայք բոլորը բալախոն են հազնում, իսկ տղամարդիկ՝ շապիկ ու շալվար: Մեր հաստատվելու առաջին օրերին միտոր Գեիգսընն իր հաշվեավու-թյուններից մեկում գրել էր. «Այս կողմների բնակիչները երբեք հիմնավորապես չեն քրիստոնեանա, մինչև ամեն մի տասը տարեկանից մեծ ողա հարկադրված չլինի շալվար հագնել»:

Այս ասելիս միսիս Գեիգսընը մի երկու անգամ իր ծոտյին հայացքն ուղղեց ծանր գորշ թուխակրին, որ լողում էին դեպի նավահանգիստ: Անձրև սկսեց կաթել:

— Լավ կանենք մի ծածկ դռներ, — ասաց նա:

Նրանք բոլորի ետևից գնացին դեպի մեծ երկաթե տանիքը: Անձրևը վերածվեց տեղատարափի: Որոշ ժամանակ կանգնեցին այնտեղ: Շուտով նրանց միացավ միտոր Գեիգսընը: Նա ճանապարհորդության ընթացքում հարկ եղածի շափ քաղաքավարի էր եղել Մաքֆելյանների հետ, բայց, շունչնալով կնոջ մարդամոտությունը, օրվա մեծ մասն անց էր կացրել ընթերցելով: Միտոր Գեիգսընը լուսկյաց, բավական մոայլ անձնավորություն էր: Զգացվում էր՝ նրա սիրալիրությունը մի պարտականություն էր, որ հենց ինքն էր քրիստոնեաբար ստանձնել, մինչդեռ ի բնե զուսպ էր և անգամ մոայլ: Ինքնատիպ արտաքին ուներ նա: Շատ բարձրահասակ էր ու նիհար, երկար, հեռու-հեռու վերջավորություններով, փոս ընկած այտերով և զարմանալիորեն գուրացված այտուկներով: Կանգնելիս դիակալին տեսք ուներ, որ մարդ զարմանում էր, տեսնելով, թե ինչ լիքը և զգայական էին նրա շուրթերը: Մաղբերը շատ երկար էին: Մուգ, խոր ընկած սչեքեր խոշոր էին ու մեղամաղձոտ, իսկ մեծ, երկար մատներով գեղեցիկ ձեռքերը մեծ ուժի, ատնականության տպավորություն էին ստեղծում: Մականյն ամենաաղեցուցիչը միտոր Գեիգսընի մեջ թաքնված կրակն էր: Դա տպավորել էր և մի փոքր վախեցնող: Նա այն մարդկանցից չէր, որոնց հետ որևէ տեսակի մտափոխություն հնարավոր լիներ:

Հիմա նա անուրախ նորություններ էր բերել: Կողմում կարմրուկի համաճարակ էր տարածված՝ լուրջ և հաճախ մահացու հիվանդություն կանականների մեջ, և մի դեպք էլ նկատվել էր այն առաջատանավի անձնակազմում, որով նրանք պիտի շարունակեին ճանապարհորդությունը: Հիվանդն ափ էր բերվել և մե-

կուսացվել հիվանդանոցում կարանտինի համար, բայց Ափիայից հեռագրով հայտնել էին, որ առաջատանավին թույլ չի տրվի նավահանգիստ մտնել, քանի հաստատ չէ, որ անձնակազմից ուրիշ վարակածներ չկան:

— Նշանակում է, ամենաքիչը տասը օր ստիպված կլինենք այստեղ մնալ:

— Բայց Ափիայում ես անհետաձգելիորեն պետք եմ, — ասաց բժիշկ Մաքֆելյը:

— Անհնար է որևէ բան անել: Եթե ուրիշ դեպքեր չհայտնվեն, առաջատանավին թույլ կարվի տանել սպիտակ ուղևորների, բայց բոլոր բնիկներին ելքը ամիս արգելվում է երթևեկել:

— Այստեղ հյուրանոց կա՞, — հարցրեց միսիս Մաքֆելյը: Գեիգսընը ցածրաձայն քմծիծաղ տվեց.

— Այ, չկա:

— Հապա ի՞նչ պիտի անենք:

— Ես խոսեցի նահանգապետի հետ: Ափից ոչ հեռու մի անուտրական է ապրում, որը սենյակներ ունի և վարձով է տալիս դրանք: Ես առաջարկում եմ անձրևը կտրվելուն պես գնալ ու տեսնել, թե ինչ կարող ենք անել: Կոմֆորտ չսպասեք: Դուք պետք է շնորհակալ լինեք, եթե անկողին ճարենք և տանիք՝ մեռ գլխավերևում:

Բայց անձրևը դադարելու միտք չուներ, և ի վերջո, հովանոցներով ու անձրևանոցներով պաշտպանված՝ նրանք շարժվեցին: Դա քաղաք չէր, այլ պարզապես մի կամ երկու հարկանի պետական շինությունների խումբ, իսկ քիչ այն կողմ՝ կոկոսյան արմավենիների և պլանտացիաների մեջ, տեղացիների մի քանի հյուղակներ կային: Նրանց որոնած տունը նավամատուցից մոտ հինգ րոպեի ճանապարհի վրա էր: Դա երկհարկանի սովորական տուն էր, երկու հարկերում էլ լայն պատշգամբներով և երկաթե տանիքով: Տնօրենը՝ Հորն անունով մի խառնածին, կանգնած էր իր կնոջ կողքին, որը շրջապատված էր շագանակազույն փոքրիկ ելեխաներով: Նա առաջին հարկում խանութ ուներ, որտեղ պահածոներ և կտորեղեն էր վաճառում: Սենյակները, որ Հորնը ցույց տվեց, կահույքից համարյա զուրկ էին: Մաքֆելյանների մոտ ոչինչ չկար, բացի մոծակի մաշված ցանցով պատած աղքատիկ մահճակալից, մի խարխուլ աթոռից և լվացարանից: Նրանք շփոթված՝ շուրջները նայեցին: Անձրևը հորվում էր առանց ընդհատվելու:

— Ես ճամպրուկներից կհանեմ ուղիղ այնքան, ինչքան անհրաժեշտ է,— ասաց միսիս Մաքֆելլը:

Միսիս Դեկորընը սենյակ մտավ, երբ նա մի ճամպրուկ էր բացում: Շատ աշխույժ էր ու կայտառ: Շրջապատի անուրախ տեսքը վրան բոլորովին չէր ազդել:

— Եթե խորհուրդս լսեք, թե ու ասեղ կճարեք ու հենց հիմա կսկսեք մոծակի ցանց գործել,— ասաց նա,— թե չէ այս գիշեր չեք կարողանա աչք փակել:

— Շատ կանհանգստացնեն,— հարցրեց բժիշկ Մաքֆելլը:

— Հիմա դրանց սեզոնն է: Երբ ձեզ Ափիսյում երեկույթի կհրավիրեն նահանգապետի մոտ, դուք կնկատեք, որ բոլոր տիկնանց բարձի երեսներ են տրվում իրենց... իրենց ստորին վերջավորությունները մեջը գնելու համար:

— Գոնե մի բոստոնցի դագարեր անձրևը,— ասաց միսիս Մաքֆելլը:— Ես ավելի սրտով կփորձեի տեղը հարմարավետ դարձնել, եթե արևը շողար:

— Օ՛, եթե դրան սպասելու լինեք, երկար պիտի սպասեք: Փագո-Փագոն երեկ խաղաղ օվկիանոսի ամենամանձրևոտ տեղն է: Այս լեռներն ու ծովածոցը ջուրն իրենց կողմն են քաշում, և տարվա այս եղանակին այսպես թե այնպես պետք է անձրև սպասել:

Նա նայեց սկզբից Մաքֆելլին, հետո նրա կնոջը և տեսնելով, որ սրանք անօգնական կանգնել են սենյակի տարրեր կողմերում, ինչպես կորուսյալ հոգիներ, կնճռտովեց: Հասկացավ, որ պետք է նրանց իր ձեռքն առնի: Նրան ջղայնացնում էր այդպիսի անօգնականությունը, բայց մյուս կողմից ձեռքերը բոլոր էին գալիս իրեն բաժին ընկած ամեն բան տեղը բերելու ցանկությունից:

— Այսպես, ուրեմն, ինձ թեև ու ասեղ տվեք, ես ձեր ցանցը կգործեմ, մինչև դուք ճամպրուկները կդատարկեք: Ծաշը ժամը մեկին է: Միստր Մաքֆելլ, լավ կանեք զնաք նավամատուց և հետևեք, որ ձեր ճամպրուկները չոր տեղ դրվեն: Այս թնիկներին ես լավ գիտեմ, դրանցից սպասելի է, որ դենն հենց հորդ անձրևի տակ:

Բժիշկը նորից վրան զցեց անձրևանոցը և ներքև գնաց: Դուան մոտ միստր Հորնը կանգնած զրուցում էր իրենց քիչ առաջ տեղ հասցրած նավի ղեկակալի և երկրորդ կարգով ճանապարհորդող մի ուղևորուհու հետ, որին բժիշկ Մաքֆելլը մի քանի անգամ

տեսել էր նավի վրա: Ղեկակալը՝ կարճահասակ, շորուցամաք, մինչև մազերի ծայրը կեղտոտ մի մարդ, դիտով արեց նրան:

— Այ թե փորձանք էր էս կարմրուկը, դու՛ք,— ասաց նա:— Տեսնում եմ արդեն տեղավորվել եք:

Նրա տոնը բժշկին շափից ավելի անավարի թվաց, բայց նա երկշտ մարդ էր և շուտ նեղացողներից չէր:

— Այո, վերնում մի սենյակ ենք վերցրել:

— Միսս Քոմփսընը ձեզ հետ Ափիս է գնում, ես էլ նրան բերեցի էստեղ:

Ղեկակալը մատնացույց արեց կողքին կանգնած կնոջը: Կինը կլինեք քսանվեց տարեկան, գիրուկ էր և մի տեսակ կոպիտ գեղեցկություն ուներ: Հազին սպիտակ զգեստ էր և լայն սպիտակ գլխարկ: Նրա բամբակե սպիտակ գուլպաներով պարարտ սրունքները դուրս էին պրծել սպիտակ, փափուկ, հարթ կաշվե ճաշակոշիկներից: Կինը մի հմայիչ ժպիտ պարզեց Մաքֆելլին:

— Մա ուզում է ինձանից մեկուկես դուլար պոկել մի փոքր, քոսոտ սենյակի համար,— ասաց նա խոսքոտ ձայնով:

— Ես քեզ ասում եմ՝ նա իմ ընկերուհին է, Ձո,— ասաց ղեկակալը:— Նա մի դուլարից ավել չի կարող տալ, պիտի էդ բանով համաձայնվես:

Առևտրականը գեր էր ու հանգիստ, դեմքին անվրդով ժպիտ:

— Դե եթե հարցն այդպես է դրված, միստր Սուան, ես մի բան կմտածեմ: Կիսոսեմ միսիս Հորնի հետ, և եթե մենք գտնենք, որ դա հնարավոր է, ապա կգիշենք:

— Իմ հետ էդ հանաքները չեն անցնի,— ասաց միսիս Քոմփսընը:— Հենց հիմա հարցը կլուծենք: Դու էդ սենյակի համար օրը մի դուլար կստանաս ու ոչ մի գրոշ ավել:

Բժիշկ Մաքֆելլը ժպտաց: Նրան դուր էր գալիս անպատկառությունը, որով կինը սակարկում էր: Ինքն այն մարդկանցից էր, որոնք միշտ վճարում են, ինչքան որ ասեն: Նա գերադասում էր ավել վճարել, քան վիճաբանել: Առևտրականը հառաչեց:

— Դե լավ, միստր Սուանին շնորհակալությամբ համար կհամաձայնվեմ:

— Այ դա ուրիշ բան,— ասաց միսս Քոմփսընը:— Դե հենց հիմա ներս գնանք ու մի-մի բաժակ խմենք: Ես մի քիչ հացի լավ օղի ունեմ էն պայտուսակի մեջ, եթե դուք էստեղ բերեք, միստր Սուան: Դուք էլ համեցեք, բժիշկ:

— Այ, ոչ, շնորհակալ եմ,— պատասխանեց Մաքֆելլը:— Եւ պիտի գնամ տեսնեմ իրերն ինչ եղան:

Թժիշկը քայլեց դուրս, անձրևի տակ: Այն ամբողջ թափով հորդում էր նավահանգստի կողմից, ու գիմացի ամբողջ բուրգով լի էր երևում: Նա անցավ հովանոց բռնած կրկու-երեք բնիկներու կողքով, որոնց հագին լավա-լավալից բացի բան չկար: Նրանք բայում էին գեղեցիկ, սնշտապ, գլուխները բարձր պահած և ժպտում ու իրենց տարօրինակ լեզվով ողջունում էին բժշկին՝ վերջինիս կողքով անցնելիս:

Արդեն համարյա ճաշելու ժամ տնակն էր, երբ Մաքֆելլը վերադարձավ: Ուտելիքը զրկած էր առևտրականի հյուրասենյակում: Մյուս սենյակը նախագծվել էր ոչ թե ապրելու, այլ տանտիրոջ հեղինակութունը բարձր պահելու համար և այդ պատճառով էլ բարբոսանած էր, տխուր: Պատերի երկարութիւնը թափուց աթոռներ էին խնամքով շարված, իսկ առաստաղից կախված էր մի ոսկեջրած ցահ, որը ճանճերից պաշտպանելու համար փաթաթել էին ծխախոտի դեղին թղթով: Գեղարքը շէր եկել:

— Ես գիտեմ, որ նա գնաց նահանգապետին այցելելու,— ասաց միտիս Գեիզընը,— և եթազրում եմ, որ նրան պահել են ճաշելու:

Մի փոքրիկ բնիկ աղջիկ համբուրգյան ձևով տապակած միս բերեց, իսկ թիչ անց առևտրականը ներս եկավ, որ տեսնի, թե մի բան պակաս չէ՞ արդյոք:

— Տեսնում եմ հարեանուհի ունենք, միտքը Հորն,— ասաց բժիշկ Մաքֆելլը:

— Նա սենյակ է վարձել, այդքան մի բան,— պատասխանեց առևտրականը:— Առանձին է ուտելու:

Հորնը բծնաքով նայեց երկու կանանց:

— Ես նրան տեղավորեցի ներքուստ, որ ձեր ճամփի վրա չլինի: Նա ձեզ բոլորովին չի խանգարի:

— Մեր նավով եկածներին՞ց է,— հարցրեց միտիս Մաքֆելլը:

— Այո, մեմ, երկրորդ կարգում: Ափիս էր գնում: Նրան այնտեղ զանձապահի պաշտոն է սպասում:

— Ա՛,

Առևտրականի գնալուց հետո Մաքֆելլն ասաց.

— Դժվար թե նրան առանձին հաճույք պատճառի իր սենյակում ուտելը:

— Եթե նա երկրորդ կարգով էր ճանապարհորդում, ապա

ինչո՞ւ չէ,— պատասխանեց միտիս Գեիզընը:— Չեմ կարողա- նում տեղը բերել, թե դա ո՞վ կարող է լինել:

— Ես տեսա, թե ինչպես ղեկակալը բերեց նրան: Ազդանու- նը թոմփսքն է:

— Հո այն կինը չէ՞, որ անցյալ գիշեր պարում էր ղեկակալի հետ,— հարցրեց միտիս Գեիզընը:

— Պետք է որ նա լինի,— ասաց միտիս Մաքֆելլը:— Այն ժամանակ մտքովս անցավ, տեսնես ինչպե՞ս է այս կինը: Այ- քիս շատ թեթևադիպ էր երեսը:

— Այո, մի բան չէր,— ասաց միտիս Գեիզընը:

Նրանք սկսեցին ուրիշ նյութից խոսել և ճաշից հետո բա- ժանվեցին ու գնացին քնելու, հոգնած էին՝ վաղ էին արթնացել: Երբ արթնացան, թեև երկինքը դեռ դուր չէր, իսկ ամպերը՝ ցածր, բայց անձրևը կտրվել էր, և նրանք գնացին զրոսնելու ճանա- պարհով, որ գցել էին ամերիկացիները ծովախորշի երկայնքով: Հետո վերադարձան: Գեիզընը հենց նոր էր ներս եկել:

— Կարող է ստիպված լինենք երկու շաբաթ այստեղ մնալ,— զղաչանքով ասաց նա:— Ես վիճեցի այդ մասին նահանգապետի հետ, բայց նա ասաց, որ ոչինչ հնարավոր չէ անել:

— Միտքը Գեիզընը ծարավի է իր աշխատանքին վերադառ- նալու,— ասաց նրա կինը, մտահոգված հայացք գցելով յուր ամուսնու վրա:

— Մի տարի է այնտեղ չենք,— ասաց Գեիզընը, պատշգամ- բում ետուռառջ քայլելով:— Միտիսն բնիկ միսիոներներին հույ- սին է թողնված, և ես ահավոր անհանգստանում եմ, որ հան- կարձ գործերը բարձիթողի արված կլինեն: Նրանք լավ մարդիկ են, նրանց դեմ բան չունեմ ասելու. աստվածավախ, բարեպաշտ, նվիրված քրիստոնյաներ են, նրանց նվիրվածությունը մեր հայրենիքի շատ այսպես կոչված քրիստոնյաների կարող է ստի- պել, որ կարմրեն, բայց, ցավոք, բավականաչափ եռանդուն չեն: Նրանք կարող են հաստատուն մնալ մի անդամ, երկու ան- գամ, բայց չեն կարող հաստատուն մնալ անվերջ: Եթե միտիսն բնիկ միսիոներին հույսին ես թողնում, որքան էլ վստահարժան թվա այդ մարդը, որոշ ժամանակից կտեսնես, որ թույլ է տվել շարաշահումները սկսեն գլուխ բարձրացնել:

Միտքը Գեիզընը ձիգ կանգնել էր: Նրա բարձրահասակ, նի- հար կերպարանքը և հսկայական, վառվռուն աչքերով գունա-

դեմքը ազդեցիկ էին: Կրակոտ շարժումները և կրծքային զրնգուն ձայնը վկայում էին խոսողի անկեղծությունը:

— Կարծում եմ, շատ գործ ունեմ այնտեղ անելու: Պիտի գործեմ, ընդ որում, գործեմ անհապաղ: Եթե ծառը փտած է, այն պիտի կտրվի և կրակին հանձնվի*:

Իսկ երեկոյան, երբ վերջին անգամ թեյիցին փրունատես հյուրասենյակում, և կանայք գործ էին անում, իսկ Մաքֆելլը վառել էր իր ծխամորճը, միսիոները պատմեց կղզիներում իր աշխատանքի մասին:

— Երբ մենք այնտեղ գնացինք, նրանք մեղքի զգացողություն բացարձակապես չունեին,— ասաց նա:— Խախտում էին պատվիրանները մեկը մյուսի ետևից, առանց հասկանալու, որ սխալ են իրենք: Եվ ես կարծում եմ, որ իմ աշխատանքի մասնադժվար մասը դա էր՝ բնիկների մեջ մեղքի զգացողություն ներարկելը:

Մաքֆելլներն արդեն գիտեին, որ Դեիզսընը մինչև իր կնոջը հանգիստը հինգ տարի աշխատել է Սողոմոնյան կղզիներում: Միսիս Դեիզսընը միսիոներ էր եղել Չինաստանում, և նրանք ծանոթացել էին Քոսթոնում, որտեղ երկուսն էլ իրենց արձակուրդի մի մասը նվիրել էին միսիոներների կոնգրեսին մասնակցելու: Ամուսնանալուց հետո նշանակվել էին աշխատելու կղզիներում, որտեղ և տքնաչան գործում էին ցայսօր:

Միտքը Դեիզսընի հետ ունեցած զրույցներից մի բան էր ակնհայտ զարձեղ՝ այդ մարդու անսասան արիությունը: Նա բժիշկ-միսիոներ էր և մեկն թույլ կարող էր կանչ ստանալ որևէ կղզուց: Նույնիսկ որսամակույկն առանձնապես հուսալի փոխադրամիջոց չէ խաղաղ օվկիանոսում անձրևային սեզոնին, մինչդեռ Դեիզսընը հաճախ սովորական մակույկով էր գնում, իսկ դա արդեն շատ վտանգավոր էր: Հիվանդության կամ դժբախտ պատահարի դեպքում նա երբեք չէր տատանվում: Տասնչափ անգամներ նա ողջ գիշերն անցկացրել էր յուր կյանքի համար մաքառելով, և մի անգամ չէ, որ միսիս Դեիզսընը կտրել էր հույսը, համարելով, որ ամուսնուն կօրցրել է:

— Երբեմն ես նրան ազալել եմ չգնալ,— ասաց կինը,— կամ գոնե սպասել, մինչև եղանակը մի փոքր հանդարտվի, բայց նա ինձ չի լսել: Համառ է, եթե մի անգամ որոշեց, անհնար է ետ կանգնեցնել:

— Ինչպե՞ս կարող եմ պահանջել բնիկներից հույսը կապել ասածո հետ, եթե ինքս վախենամ դա անել,— բացականչեց Կեիզսընը:— Եվ ես չեմ վախենում, ոչ: Նրանք գիտեն, եթե ինձ կանչեն փորձանքի ժամին, ես մարդկային ուժերից կախված ամեն ինչ կանեմ, որ դամ: Եվ մի՞թե դուք կարծում եք, աստված կլքի ինձ, և երբ ես իր համար եմ գործում: Քամին փչում է նրա ուզածով, և ծովն ալեկոծվում կամ հանդարտվում է նրա մի խոսքով:

Բժիշկ Մաքֆելլը երկշոտ մարդ էր: Նա երբեք չէր կարողացել ընտելանալ իրամատի կողքը պայթող սուրբերին ու փամփուշտներին և, երբ վիրահատություն էր կատարում ռազմաճակատի առաջնային գծում՝ վիրակապման կայանում, թրտինքը ծորում էր նրա հոնքերի միջով և մշուշով ծածկում ակնոցը, թրտինք, որ անհաստատ ձեռքն իրեն ենթարկելու ճիգի հետևանք էր: Նրա մարմնով թեթև ասարսուռ անցավ միսիոներին նայելիս:

— Երբեք կարողանալի ասել, որ երբեք չեմ վախեցել,— ասաց նա:

— Երբեք կարողանալիք ասել, որ հավատում եք ասածուն,— պարտքի տակ լմնաց մյուսը:

Մակայն, շփոտե ինչու, այդ երեկո միսիոների մտքերը վերադառնում էին ետ, դեպի այն առաջին օրերը, որ ինքն ու իր կիսն անց էին կացրել կղզիներում:

— Երբեմն միսիս Դեիզսընն ու ես նայում էինք մեկմեկու, և արցունքները ողողում էին մեր դեմքերը: Աշխատում էինք անդադար, օր ու դիշեր, իսկ առաջընթաց չէր զգացվում: Զգիտեմ ինչ պիտի անեի առանց նրա այն ժամանակ: Երբ զգում էի այլևս սիրտս չի դիմանում, շատ մոտ եմ հուսահատություն, նա էր, որ խիզախություն ու հույս էր ներշնչում ինձ:

Միսիս Դեիզսընն աչքերը հատել էր ներքև, ձեռքի գործին: Թույլ կարմրությունը պատեց նրա հյուծված այտերին: Ձեռքերը թեթևակի դողացին: Հուզմունքից չէր համարձակվում խոսք ասել:

— Մենք ոչ մի օգնող չունեինք: Միայնակ էինք, հազարաձոր մղոններ հեռու մեր մարդկանցից, շրջապատված խավարով: Երբ ես հուսալքված էի լինում և ուժասպառ, նա մի կողմ էք դնում իր ձեռքի գործը, վերցնում էր Ավետարանը ու կարդում, քանի դեռ խաղաղությունը չէր գալիս ու տիրում ինձ, ինչպես բունը՝ մանկան կուպիթին, և երբ ի վերջո փակում էր գիրքը, ասում էր. «Մենք կփրկենք նրանց՝ իրենց իսկ հակառակ»: Եվ

* փոփոխված մեջբերում Ավետարանից

ես նորից զգում էի Տիրոջ ներկայութունն ու ասում էի. «Այս, աստօ՞՞ն օգնությամբ ես կփրկեմ Նրանց: Ես պետք է փրկեմ նրանց»:

Նա մոտեցաւ և կանգնեց սեղանի դիմաց, ասես այն գրքա-կալ լիներ:

— Բանն այն է, որ նրանք ի բնէ այնքան անառակ էին, որ ոչ մի դեպքում չէին տեսնի սեփական մոլությունը: Մենք պետք է մեղքի վերածենք այն, ինչ իրենք համարում էին բնական արարք: Մեղքի պիտի վերածենք ոչ միայն ամուսնական անհավատարմությունը, սուտն ու գողությունը, այլ և մերկ մարմինը ցուցադրելը, պարելը և եկեղեցի շքնալը: Ես մեղք դարձրի աղջկա համար յուր կուրծքը ցուցադրելը և տղամարդու համար՝ անդրավարտիք շճագնելը:

— Ինչպե՞ս. — ոչ առանց զարմանքի հարցրեց բժիշկը:

— Ես տուգանքներ սահմանեցի: Ակներևարար, միակ ձեռք մարդկանց հասկացնելու, որ արարքը մեղսական է, պատժելն է: Ես նրանց տուգանում էի եկեղեցի շքնալու համար, տուգանում էի պարելու համար: Տուգանում էի, եթե անպատշաճ էին հագնել: Ես հարկացուցակ ունեի, ամեն մի մեղք պիտի հատուցվեր փողով կամ աշխատանքով: Եվ վերջապես ես նրանց հասկացրի:

— Բայց մի՞թե նրանք չէին հրաժարվում վճարել:

— Այդ ինչպե՞ս հրաժարվեին, — հարցրեց միսիոները:

— Մարդ պետք է շատ քաջ լինի, որպեսզի փորձի միատո Գեիդարնին հակառակ կանգնել, — ասաց նրա կինը՝ շուրթերն իւար սեղմելով:

Բժիշկ Մաքֆելլը մտահոգված նայեց Գեիդարնին: Լսածը ցնցել էր նրան, սակայն նա տատանվում էր ցույց տալ իր անհավանությունը:

— Չպետք է մոռանաք, որ ծայրահեղ դեպքում ես կարող էի գրկել նրանց եկեղեցու անդամ լինելուց:

— Իսկ ինչ է, նրանք շա՞տ էին դեմ:

Գեիդարնը կամացուկ ծիծաղեց և անաղմուկ իրար շփեց ձեռքերը:

— Նրանք չէին կարողանում իրենց կույրան վաճառել: Երբ միասին ձկնորսություն էին անում, բռնածից բաժին չէին ստանում: Դա նշանակում էր համարյա սովամահ լինել: Այո, նրանք շատ դեմ էին:

— Պատմիր Ֆրեդ Օլսընի մասին, — ասաց միսիո Գեիդարնը:

Միսիոներն իր կրակոտ աչքերը հառեց Մաքֆելլին:

— Ֆրեդ Օլսընը դանիացի առևտրական էր, որը երկար տարիներ ապրել էր կղզիներում: Առևտրականի համար բավական հարուստ մի մարդ էր և այնքան էլ գո՞չ չէր մեր գալստյան առթիվ: Բանն այն է, որ նա վարվում էր այնպես, ինչպես խելքը կփշեր: Ինչքան կամենար, այնքան էլ բնիկներին վճարում էր կույրայի համար, բնդ որում, ապրանքով և վիսկիով: Բնիկ կին ուներ, բացահայտորեն անհավատարիմ էր նրան: Հարբեցողի մեկն էր: Ես նրան հնարավորություն տվեցի ուղղվելու, բայց նա չօգտվեց զրանից: Ծիծաղում էր ինձ վրա:

Գեիդարնի ձայնը վերջին խոսքերն արտասանելիս զարձավ կրծքային, թափ, և նա մի երկու րոպե լուռ մնաց: Լուսնային ծանր էր, սպառնալի:

— Երկու տարուց նա սնանկացավ: Կորցրեց այն ամենը, ինչ ետ էր գցել բառորդ զարի ընթացքում: Ես նրան աղքատացրի, և ի վերջո, այդ մարդը ստիպված էր մորացկանի նման գալ ինձ մոտ աղերսել, որ մինչև Միգենչ ճանապարհածախս տամ:

— Կուզեի, տեսնեիք նրան, կրք կկավ միտքը Գեիդարնի մոտ, — ասաց միսիոներին կինը: — Առաջ գեղեցիկ, սուսական տղամարդ էր, հզոր ձայնով, մարմնեղ, բայց հիմա ասես երկու տակ էր եղել և զողում էր ողջ մարմնով: Միանգամից ծերունի էր դարձել:

Գեիդարնը իր վերացած հայացքը հառեց զուրս, գիշերային երկնքին: Անձրևը նորից էր գալիս:

Հանկարծ ներքեից ձայն լսվեց, և Գեիդարնը շրջվեց ու հարցական նայեց կնոջը: Դա գրամոֆոնն էր, որ խոսվոտ ու բարձր ինչ-որ ընդհատուն մեղեդի էր ճղճաղացնում:

— Սա ի՞նչ բան է, — հարցրեց նա:

Միսիո Գեիդարնն ուղղեց ջրի վրա թեթևակի տեղաշարժված պենսնին:

— Երկրորդ կարգի ուղևորներից մեկը սենյակ է վարձել այս տանը: Ենթադրում եմ ձայնն այնտեղից է:

Նրանք ականջ դրեցին, և լուսնային մեջ շուտով պարելու ձայն լսվեց: Հետո երաժշտությունը դադարեց, և նրանց հասան խըցանների թխկոցներ ու աշխույժ գրուցող ձայներ:

— Իմ կարծիքով, նա հրաժեշտի երեկո է կազմակերպել նավը

վրայի իր բնկերների համար,— ասաց բժիշկ Մաքֆեյլը:—
Նրանք կարծեն տասներկուսին մեկնում են, չէ՞:

Դեկտրները շատասխանեց, այլ նայեց իր ժամացույցին:

— Դու պատրաստ ես,— հարցրեց նա կնոջը:

Վերջինս ելավ տեղից ու ծալեց ձեռքի գործը:

— Այո, կարծես թե,— պատասխանեց նա:

— Դեռ վաղ չէ՞ քնելու համար,— հարցրեց բժիշկը:

— Մենք ահագին կարգալու բան ունենք,— քայտարեց միտեա
Դեկտրները:— Արտեղ էլ լինենք, մենք Ավետարանից մի գլուխ
կարդում ենք բուն մտնելուց առաջ, հետո ուսումնասիրում ծա-
նութագրություններով ու մանրամասնորեն քննարկում: Ուղեղի
համար հիանալի մտքանք է:

Չույզերը միմյանց բոքի գեղեր մաղթեցին: Բժիշկը և միսիս
Մաքֆեյլը մենակ մնացին: Երկու-երեք րոպե ոչ մեկը չստանա:

— Կնամ խաղաթղթերը բերեմ,— վերջապես ասաց բժ-
ժիշկը:

Միսիս Մաքֆեյլը վարանումով նայեց ամուսնուն: Դեկտրնե-
րների հետ ունեցած խոսակցությունը մի փոքր անհարմար վիճակ
էր ստեղծել, բայց նա չէր ուզում ասած լինել, որ շարժե թուզ
խաղալ, երբ Դեկտրներին ամեն րոպե կարող են ներս գալ:
Մաքֆեյլը բերեց թղթերը և կինը, ճիշտ է, իրեն մի քիչ մեղավոր
զգալով, սկսեց դիտել, թե ամուսինն ինչպես է փայտանս բա-
ցում: Ներքևից շարունակ կերտխումի ձայներ էին գալիս:

Հաջորդ օրը եղանակը բավական լավ էր, և Մաքֆեյլները,
դատապարտված երկու շաբաթ Փագո-Փաղոյում պարապ մնալու,
միջոցներ ձեռք առան վիճակն ավելի տանելի դարձնելու: Գնա-
ցին նավահանգիստ և ճամպրուկներից մի քանի դիրք հանեցին:
Բժիշկն այցելեց հոսպիտալի գլխավոր վիրաբույժին և նրա հետ
զննեց հիվանդներին: Իրենց այցելումը թողեցին նահանգա-
պետին: Ծանապարհին հանգիստեցին միսս Թոմֆսոնին: Բժիշկը
հանեց գլխարկը, իսկ նա բարձր, կենսուրախ ձայնով պատաս-
խանեց. «Թարի առավոտ, զոր»: Հագին, ինչպես նախորդ օրը,
սպիտակ շրջագոտն էր ու փայլիտուն, ճերմակ բարձրակրունչ
ճտքակոշիկները, և պարարտ սրունքները, որ ոտել ու գուրս
էին պրծել կոշիկներից, արաստովոր էին թվում այդ էկզոտիկ
վալրում:

— Իմ կարծիքով, այնքան էլ հարմար չի հագնված,— ասաց

միսիս Մաքֆեյլը: Զափեց գուրս անպատշաճ տեսք ունի, ըստ
խոս:

Երբ տուն վերադարձան, միսս Թոմֆսոնը պաշտամբում
խաղ էր անում առևտրականի թխամաշկ երեխաներից մեկի
հետ:

— Մի բան ասա նրան,— Մաքֆեյլը շշեշաց կնոջը:— Նա
այստեղ մեն-մենակ է, անխղճություն է բանի տեղ չգնելը:

Միսիս Մաքֆեյլն ամաշկոտ էր, բայց սովոր էր ամուսնու
ասածներն անել:

— Եթե չեմ սխալվում, մենք հարևաններ ենք,— բավական
հիմար ձեռով սկսեց նա:

— Մարսափելի բան է, չէ՞, էսպիսի լուցկու տուփի մեջ ապ-
րելը,— պատասխանեց միսս Թոմֆսոնը:— Ու ասում են, զեռ
բախտս բերել է, որ սենյակ եմ գտել: Չեմ պատկերացնում,
ոնց պիտի բնիկի տանն ապրեի, իսկ մի քանիսը ստիպված են
եղել: Չեմ հասկանում, ինչի հյուրանոց չունեն:

Նրանք մի քանի բառ ևս փոխանակեցին: Միսս Թոմֆսոնը՝
աղմկոտ և շատախոս այդ կինը, ակնհայտորեն ուզում էր բամ-
բասել, բայց միսիս Մաքֆեյլի ասելիքի պաշարը շուտով վեր-
ջացավ, և նա ասաց.

— Դե, մենք պիտի վերև գնանք:

Երեկոյան, երբ վերջին անգամ բուրբ միասին թեյում էին,
Դեկտրները ներս եկավ և ասաց.

— Այդ կինը ներքևում նստած է երկու նավաստու հետ:
Ծեսնես և՞րը է հասցրել ծանոթանալ:

— Այնքան էլ խտրաբարո չի երևում,— ասաց միսիս Դեկ-
տրը:

Բուրբն էլ բավական հոգնած էին օրն անցործ, աննպատակ
անցկացնելուց:

— Եթե երկու շաբաթ այսպես շարունակվի, չգիտեմ, թե
վերջում ինչ օրի կլինենք,— ասաց բժիշկ Մաքֆեյլը:

— Միակ ճիշտ բանը օրը տարբեր անելիքների համար մա-
սերի բաժանելն է,— պատասխանեց միսիսները:— Ես պիտի
մի քանի ժամ հատկացնեմ ուսումնառությանը և մի քանի ժամ՝
զբոսանքին, անկախ այն բանից, եղանակը լավ է, թե՞ վատ,—
անձրևային սեզոնին անձրևին ուշադրություն դարձնելն անի-
մաստ է,— մի քանի ժամ էլ՝ հանգստին:

Բժիշկն ինչ-որ վատ կանխազգացումով նայեց իր զրուցակ-

ցին: Դեկտրնի ծրագիրը ճշեց նրան: Նորից համբուրգյան ձևով տապակած միս էին ուտում: Դա հավանաբար խոհարարի իմացած միակ ճաշտեսասկն էր: Հետո ներքևում կրկին հնչեց գրամոֆոնը: Դեկտրնը ցնցվեց, սակայն ոչինչ շասաց: Լսվեցին աղամարդկանց ձայներ: Միսս Քոմֆուրնի հյուրերը բոլորը միասին մի հայտնի երգ էին երգում, և շուտով հնչեց նաև նրա ձայնը՝ բարձր ու խոպոտ: Բոլորը գոռգոռում ու ծիծաղում էին: Վերևում գտնվող շորսը փորձում էին զրուցել, բայց իրենցից անկախ լսում էին բաժակների զնգոցն ու աթոռների ճռճոցը: Ըստ ամենայնի, էլի մարդիկ էին եկել: Միսս Քոմֆուրնը երեկույթ էր կազմակերպել:

— Զարմանում եմ, թե այդքանին ինչպես է տեղավորել, — ասաց միսիս Մաքֆելլը, հանկարծ խառնվելով միսիոնների և իր ամուսնու բժշկական գրույցին:

Դա ցույց տվեց, թե ուր էին թափառում նրա մտքերը: Դեկտրնի դեմքի ցնցումը վկայեց, որ, շնայած խոսում էր գիտական հարցերից, նրա միտքն էլ նույն ուղղությամբ էր զբաղված: Հանկարծ, մինչ բժիշկը բավական անգույն պատմում էր ֆլանդրիական ռազմաճակատի իր պրակտիկայից, նա վեր թռավ՝ ինչ-որ ճիշ արձակելով:

— Ի՞նչ եղավ, Ալֆրեդ, — հարցրեց միսիս Դեկտրնը:

— Իհարկե՛: Ինչպե՞ս մտքովս չէր անցել: Նա Իվելեյից է:

— Չի կարող պատահել:

— Նա նավ նստեց Հոնոլուլուում: Դա ակնհայտ է: Եվ նա այստեղ է բերել իր արհեստը: Այստե՛ղ:

Դեկտրնը վերջին խոսքն արտասանեց ցասումով:

— Ի՞նչ բան է Իվելեյը, — հարցրեց միսիս Մաքֆելլը:

Միսիոններն իր մթազնած աչքերը հռոնց նրան, և ձայնը դուզաց նողկանքից:

— Հոնոլուլուի ժանտախտի բույնը: Կարմիր լույսերի թաշամասը: Դա բիծ էր մեր քաղաքակրթության վրա:

Իվելեյը քաղաքի ծայրամասում էր: Գնում էիր նավահանգրեստի կողքի մութ փողոցներով ներքև, անցնում խարխուլ կամրջով, մինչև հասնիր մի ամայի ճանապարհի, ամբողջովին զարուհոսերով ծածկված, և հետո հանկարծ հայտնվում էիր լույսերի մեջ: Ծանապարհի երկու կողմերում մեքենաների կանգնեատեղեր կային, և փողոցը լի էր լուսավոր ու աչքի զարնոզ պանդոկներով, որտեղից մեխանիկական դաշնամուրի ձայնը

էին գալիս: Երևում էին վարսավիրանոցներ ու ծխախոտի կըրպակներ: Ամենուր իրարանցում էր տիրում, և ուրախ անորոշություն կար տգում: Երջվում էիր գեպի նեղ ծառուղին՝ աչ կամ լախ, քանի որ փողոցը Իվելեյը բաժանում էր երկու մասի, և հայտնվում էիր թաղամասում: Այնտեղ իրար կողքի շարված էին յոկիկ, խնամքով կանաչ ներկված հյուղակիներ, իսկ արանքը ճանապարհը լայն էր և ուղիղ: Ասես ամառանոցային քաղաք լիներ: Այդ պատկանելի համաշխարհայինը, կարգուկանոնն ու մաքրությունը սարսափազդու, վանող տպավորություն էին թողնում, քանզի նրանք սիրո փնտրուտքը չի եղել այդ աստիճան սրտեմավորված ու կարգավորված: Մայթերին վառվում էին սակավաթիվ լապտերներ, բայց դա չէր բավականացնի, եթե հյուղակիների բացած պատուհանների լույսը չլիներ: Տղամարդիկ պարապ քարշ էին գալիս, նայում պատուհանների մոտ նստած ընթերցող կամ կար անող կանանց, որոնք անցորդներին սովորաբար չէին էլ նկատում: Թե տղամարդիկ, թե կանայք ամենատարբեր ազգությունների էին: Դրանց մեջ պատահում էին նավահանգստում հանգրվանած ամերիկյան նավերի ծովայիններ և ռազմականների նավաստիներ՝ անհույս կերպով հարբած, կզզում տեղակայված գնդերի սպիտակամորթ և սևամորթ զինվորներ, երկու-երեք հոգով զբոսնող ճապոնացիներ, հավայացիներ, երկարափեշ խալաթներով շինացիներ և անհեթեթ գլխարկներով ֆիլիպինցիներ: Բոլորը լուռումունջ էին, մի տեսակ խեղճացած: Ցանկությունը միշտ էլ սխուր է:

— Դա խաղաղովկիանոսյան կղզիների ամենաճշացող խայտառակությունն էր, — պաթոսով բացականչեց Դեկտրնը: — Միսիոններները տարիներ շարունակ ագիտացիա էին մղում դրա դեմ, մինչև վերջապես տեղական մամուլն էլ նրանց ձայնակցեց: Ոստիկանությունը հրաժարվում էր խառնվել: Դե, դուք գիտե՞ք նրանց փառատարկները: Նրանք ասում են, որ անբարոյականությունն անխուսափելի բան է, և միակ հնարավոր անելիքը՝ դա սահմանափակելն է ու հսկողության տակ պահելը: Ըշմարտությունն այն է, որ նրանց վճարում էին: Վճարում: Վճարում էին պանդոկատերերը, վճարում էին պոռնկապահները, վճարում էին հենց իրենք՝ կանայք: Ի վերջո, նրանք ստիպված էին գոնն մի բան անել:

— Ես այդ մասին կարդացի Հոնոլուլուում նավ բերված լրագրերում, — ասաց բժիշկ Մաքֆելլը:

— Ի վերջերս, իր մեղսագործութիւններով և ամոթարեւ-
թյամբ, դադարեց գոյութիւն ունենալ հենց մեր տեղ հասնելու
օրը: Ողջ բնակչութիւնը պատասխանատուութեան կանչվեց: Չեմ
հասկանում, ինչպէս ես միանգամից գլխի շքեկա, թե ով էր
այդ կինը:

— Հիմա, որ դուք պատմեցիք, — սասց միսիս Մաքֆելլը, —
եւ հիշեցի ինչպէս նա նախ բարձրացավ շարժվելուց մի քանի
րոպէ առաջ: Հիշում եմ, դեռ մտածեցի, որ լավ հասցրեցի:

— Ինչպե՞ս է նա համարձակվել այստեղ դալ, — ցատումով
գոռաց Դեիդարնը: — Ես այդ բանը թույլ չե՛մ տա:

Նա նետովեց դեպի դուռը:

— Ի՞նչ եք մտադիր անել, — հարցրեց Մաքֆելլը:

— Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պիտի անեմ: Պիտի վերջ տալ
դրան: Ես չեմ թողնի, որ այս տունը վերածվի, վերածվի...

Նա կանանց լսողութիւնը չվիրավորող բառ էր որոնում:
Աչքերը բոցկլտում էին, և գունատ դեմքը հուզմունքից ավելի
էր գունատվել:

— Ձայնեքից դատելով, ներքեում երեք թե շորս տղամարդ
կա, — սասց բժիշկը: — Ձեզ չե՞ թվում, որ հիմա այնտեղ մանկը
բավական անխոհեմ կլինի:

Միսիոները արգահատանքով լի մի հույսացք նետեց նրա վրա
և տունը խոսքի դուռս թռավ սենյակից:

— Դուք շատ վատ գիտեք միստր Դեիդարնին, եթե կարծում
եք, որ սեփական անձի համար վախը կարող է նրան ետ պահել
իր պարտքը կատարելուց, — սասց Դեիդարնի կինը:

Նա նստել էր ձեռքերը ջղաձգորեն իրար սեղմած, դուրս բն-
կած այտուկներին կարմիր բծեր էին հայտնվել՝ ականջ էր դրել,
թե ներքեում ինչ էր տեղի ունենալու: Բոլորն էին աւանջ դրել:
Նրանք լսեցին, ինչպէս միսիոները փայտե աստիճաններով ցած
վազեց և թափով բաց արեց դուռը: Երգը հանկարծակի ընդ-
հատվեց, սակայն գրամոֆոնը շարունակում էր իր անձաշակ
հնչումներն արձակել: Հետո լավեց Դեիդարնի ձայնը, որին հե-
տեկ ծանր դրմփոց: Երամշտութիւնը դադարեց: Միսիոները
գրամոֆոնը գետնին էր շարտել: Նորից լավեց նրա ձայնը, բայց
բառերը չէին հասկացվում, գրան հետեկց միսս Թոմփսոնի
բարձրաձայն ճղճղոցը և ապա խառը աղմուկ, ասես մի բանի
մարդ միանգամից իրենց թոքերի ողջ զորութեամբ բղավելիս
լինեին: Միսիս Դեիդարնը, բերանը կիսաբաց, ավելի ամուր

եղմեց ձեռքերը: Բժիշկն անվճռականորեն հայացքը նրանից
խոխադրեց իր կնոջը: Նա շէր ուզում ներքե գնալ, սակայն կաս-
կածում էր, որ իրենից դա եւս սպասում: Հետո տուրուզմփոցի
նմանվող մի բան սկսվեց: Ձայնեքն ավելի որոշակի դարձան:
Ննարավոր է, որ Դեիդարնին սենյակից դուրս էին շարտում: Դուռը
չբխկոցով փակվեց: Մի վայրկյան լուսթիւն տիրեց, և ապա
լավեց աստիճաններով բարձրացող Դեիդարնի բայելրի ձայնը: Նա
դնաց իր սենյակը:

— Դնամ մոտը, — սասց միսիս Դեիդարնը:

Նա տեղից ելավ ու դուրս գնաց:

— Եթե պետք լինեմ, անմիջապէս կանչեք, — սասց միսիս
Մաքֆելլը և, տեսնելով, որ սա արդեն հեռու է, ավելացրեց: —
Հուսով եմ, որ վնասված չի լինի:

— Ինչ է, չէ՞ր կարող ուրիշի գործերին շխտանվել, — սասց
Մաքֆելլը:

Նրանք լուռումունջ նստեցին մեկ թե երկու րոպէ, և հետո
հանկարծ երկուսն էլ վեր թռան, բանի որ գրամոֆոնը նորից
սկսեց նվագել, ասես ջգրու, և ծաղրական ու խուպոտ ձայները
մի անպատկառ երգ սկսեցին բղավել:

Մյուս օրը միսիս Դեիդարնը գունատ էր ու հոգնած: Դանգատ-
վում էր գլխացավից և ծերացած ու թառամած տեսք ունեւ: Նա
միսիս Մաքֆելլին սասց, որ միսիոները բոլորովին չի քնել,
ամբողջ գիշեր ահա՛վոր անհանգիստ է եղել և ժամը հինգին վեր
է կացել ու տնից դնացել: Դեիդարնի վրա մի բաժակ գարեջուր
էին թափել, և նրա շորերը կեղտոտ էին ու գարշահոտ: Բայց մի
մտայլ կայծ փայլատակեց միսիս Դեիդարնի աչքերում, երբ նա
խոսեց միսս Թոմփսոնի մասին:

— Նա զանոնորեն կզղջա այն օրվա համար, երբ ինքը ծի-
ծաղեց միստր Դեիդարնի վրա: Միստր Դեիդարնը հիանալի սիրտ
ունի, և չկա մեկը, որ փորձանքի մեջ գնա նրա մոտ և միսի-
թարութիւնը շատանա, սակայն նա չի խնայում մեղսագործին,
և նրա արդարացի գայրույթը սարսափելի է:

— Լավ, իսկ նա ի՞նչ կանի, — հարցրեց միսիս Մաքֆելլը:

— Չգիտեմ, բայց չէի ուզի այդ արարածի տեղը լինել, եթե
անգամ ողջ աշխարհի բարիքներն ինձ տային:

Մարտուտ անցավ միսիս Մաքֆելլի մարմնով: Ինչ-որ տուգ-
նապահարուց բան կար այդ փոքրամարմին կնոջ հաղթական
ինքնավստահութեան մեջ: Երկու կանայք այդ օրը պիտի միասին

գրասենյակ գնալին, և նրանք կոպր կոպրի աստիճաններով իջան: Միսս Քոմփսոնի դուստր բաց էր, նա կեղտոտ խալաթը հագին ինչ-որ բան էր տապակում թավալի մեջ:

— Բարի լո՛ւս, — գոչեց նա: — Միստր Դեկզսընն այս առաւմտ սո՛նց է, ավելի լա՞վ է:

Կանայք լուռ անցան նրա կողքով, քթները վեր տնկած, ասես սա բոլորովին էլ գոյութուն չունենար: Եվ, այնուամենայնիվ, նրանք կարմրեցին, երբ այդ կինը սկսեց բարձրաձայն ու հեգնորեն քրքշալ: Միսս Դեկզսընը հանկարծակի շրջվեց նրա կողմը:

— Զհամարձակվեք ինձ հետ խոսել, — ճշաց նա: — Եթե դուք ինձ վիրավորեք, ես ձեզ այստեղից վռնդել կտամ:

— Լսեք, ես միստր Դեկզսընին խնդրե՞լ էի իմ մոտ հյուսդ գալ:

— Մի՛ պատասխանեք նրան, — արագ-արագ շնչաց միսս Մաքֆելլը:

Քալեցին այնքան, որ նա արդեն չէր կարող լսել իրենց:

— Անպատկա՛ռ, լիտի՛ մեկը, — միանգամից պայթեց միսս Դեկզսընը:

Նա դայրուցից շնչահեղձ էր լինում:

Ետ գալուց կանայք նորից տեսն նրան, այս անգամ նավամատուցի մոտ զբոսնելիս: Ունեցած-չունեցած ամենալավ բաները հագին էին: Հսկայական սպիտակ գլխաքիզ, իր անճաշակ, աչք ծակող ծաղիկներով, ասես ծաղր լիներ: Նա ուրախ ձայն տվեց կողքով անցնելիս, և մոտակայքում կանգնած երկու ամերիկացի նավաստիները ժպտացին, մինչդեռ տիկնայք սառցային արասհայտություն ընդունեցին: Նրանց տուն հասնելուն պիս անձրևը վերսկսվեց:

— Նրա գեղեցիկ շորերը, իմ կարծիքով, կփչանան, — գտոր հեգնանքով ասաց միսս Դեկզսընը:

Դեկզսընը ներս եկավ, երբ բոլորն արդեն վաղուց սկսել էին ճաշել: Նա ամբողջովին թաց էր, բայց շորերը չփոխեց: Նստեց լուռ ու մռայլ, մի քիչ ուտելուց հետո հրաժարվեց ճաշելուց և հայացքը հառեց թեքահար անձրևին: Երբ միսս Դեկզսընը նրան պատմեց միսս Քոմփսոնի հետ երկու հանդիպումների մասին, նա չպատասխանեց: Միայն էլ ավելի խոժոռված դեմքը ցույց տվեց, որ միսսիններ լսել է:

— Ըիշտ չի՛ լինի, եթե միստր Հորնին ստիպենք նրան այս-

տեղից վռնդել, — հարցրեց միսս Դեկզսընը: — Մենք չենք կասող թույլ տալ, որ նա մեզ վիրավորի:

— Նա ուրիշ գնալու տեղ կարծես թե չունի, — ասաց Մաքֆելլը:

— Կարող է ընդհանրից մեկի մոտ ապրել:

— Այսպիսի եղանակին բնիկի խրճիթը պետք է որ ապրելու համար բավական անհարմարավետ լինի:

— Ես այդպիսի խրճիթում տարիներով եմ ապրել, — ասաց միսսինները:

Երբ փոքրիկ բնիկ աղջիկը ներս բերեց խորոված բանանները, որ նրանց ամեն օրվա աղանդերն էր, Դեկզսընը շրջվեց նրա կողմը:

— Հարցրու միսս Քոմփսոնին, թե նրան երբ է հարմար ինձ տեսնելը, — ասաց նա:

Աղջիկն ամոթխած գլխով արեց և դուրս գնաց:

— Ինչո՞ւ ես ուզում նրան տեսնել, Ալֆրեդ, — հարցրեց կինը:

— Իմ պարտքն է նրան տեսնել: Ես չեմ գործի, մինչև նրան բոլոր հնարավորություններն ընձևած չլինեմ:

— Դու չգիտես, թե նա ինչն է: Կվիրավորի քեզ:

— Թող վիրավորի ինձ: Թող թքի վրաս: Նա անմահ հոգի ունի, և ես պիտի իմ ուժերի սահմաններում ամեն ինչ անեմ արն փրկելու համար:

Միսս Դեկզսընի ականջներում զեռես զեպում էր պոռնիկի ծաղրական քրքիչը:

— Նա շատ հեռու է գնացել:

— Ետո հեռու աստժո գթություն համար: — Միսսինների աչքերը հանկարծ բռնկվեցին, և ձայնը դարձավ մեղմ ու քնքուշ: — Երբեք: Մեղսագործը կարող է մեղքի մեջ թաղված լինել ավելի խոր, քան ինքը՝ դժոխքը, սակայն Տեր Հիսուսի սերը, միեւնույն է, կհասնի նրան:

Աղջիկը վերադարձավ՝ մի գրություն բերելով:

«Միսս Քոմփսոնը ողջունեներ է հղում, և եթե հայր սուրբ Դեկզսընը չգա աշխատանքի ժամին, ուրախ է նրան ընդունել ցանկացած ժամանակ»:

Հավաքվածները պատասխանն ընդունեցին քար լուսթյամս, և Մաքֆելլը շտապ թաքցրեց իր ժպտը: Նա գիտեր, որ կինը

կըզաչնանար, եթե տեսներ, որ միսս Քոմփսընի անպատկառութիւնը զվարճալի է թվում իրեն:

Լուս վերջացրին ճաշը: Կանայք ելան տեղներից և վերցրին իրենց ձեռքի գործերը (միսիս Մաքֆեյլը հշուտում էր մեկն այն անհաշիվ շարֆերից, որ սկսել էր պատերազմից ի վեր), իսկ բժիշկը վառեց ծխամորճը: Քայց Դեկոսընը մնաց նստած իր աթոռին՝ վերացած հայացքը հառած սեղանին: Վերջապես նա տեղից հլավ և առանց մի խոսքի սենյակից դուրս գնաց: Լավեզ, թե ինչպես ներքև իջավ և հետո միսս Քոմփսընի հանդուգն «մտեք»-ը՝ ի պատասխան դրան թակցիցին: Միսիոններն այնտեղ մտա մի ժամ մնաց: Իսկ բժիշկ Մաքֆեյլն անձրեն էր դիտում: Այդ անձրեն արդեն սկսում էր նշարգայնացնել նրան: Այն նման չէր անդիական փափուկ անձրեհին, որ մեղմորեն թափվում է գետնին, այն անզուժ էր և մի տեսակ սարսափելի. մարդ զգում էր բնութիւն վայրի ուժերի շարութիւնը: Այդ անձրեք չէր հորդում, այլ ողողում էր: Ասես երկնային ջրհեղեղ լինէր. այնպիսի հաստատուն համառութիւն էր շառաշում, զարկվելով երկաթե տանիքին, որ կարելի էր խանգարվել: Ինչ-որ կատաղութիւն կար այդ անձրեհի մեջ: Եվ մերթնդմերթ զգում էիր, որ եթե շղագարի, կսկսես գոռալ, իսկ հետո հանկարծ քեզ անում էիր զգում, կարծես ոսկորներդ անսպասելիորեն փափկած լինեին, և դու թշվառ էիր ու հուսահատ:

Մաքֆեյլը գլուխը շրջեց միսիոնների կողմը, երբ նա ներս եկավ: Կանայք նույնպես բարձրացրին աչքները:

— Ես նրան ընձեռեցի բոլոր հնարավորութիւնները: Ես նրան կոչ արեցի զըջալու նա մեղավոր կին է:

Դեկոսընը զազար տվեց, և բժիշկը տեսավ, թե ինչպես նրա աչքերը մթնեցին, և գունատ դեմքը դարձավ խիստ ու մոռալ:

— Այժմ ես կդիմեմ մտրակին, որի օգնութիւնով Տեր Հիստոն Անենարարձրայի Տաճարից դուրս քաշեց վաշխառուներին ու դամափոխներին:

Նա սենյակով ետուտաջ էր քայլում: Շրթունքները վճռական հպվել էին իրար, իսկ սև հոնքերը խոժոռ էին:

— Եթե այդ կինը աշխարհի ծայրը փախած լինէր, ես կհետապնդեի նրան:

Հանկարծակի մի շարժումով միսիոնները ետ շրջվեց և, ոտքերը լայն-լայն զցելով, արագ դուրս քայլեց սենյակից: Նորից լսվեցին ներքև իջնող ոտնաձայներ:

— Ի՞նչ է անելու, — հարցրեց միսիս Մաքֆեյլը:
— Զգիտե՛մ:— Միսիս Դեկոսընը հանեց պենսնեն և մաքրեց տպակիները:— Երբ նա Տիրոջ գործն է կատարում, ես երբեք հարցեր չեմ տալիս:

Նա կամացուկ հառաչեց:
— Ի՞նչ է պատահել:

— Հալումաշ կլինի: Բոլորովին չլիտի իրեն խնայել:
Բժիշկ Մաքֆեյլը միսիոնների գործունեութիւնն առաջին արդյունքների մասին իմացավ խառնածին առևտրականից, որի տանը կենում էին: Վերջինս բժշկին կանգնեցրեց, երբ սա անցնում էր խանութի կողքով, և շեմի մտա սկսեց խոսել: Նրա գեր դեմքը հուզված արասահայտութիւն ուներ:

— Հայր սուրբ Դեկոսընը խոսեց վրաս միսս Քոմփսընին սենյակ տալուս համար, — ասաց նա, — բայց այն ժամանակ ես չգիտեի, թե դա ինչ կին է: Երբ մարդիկ գալիս ու հարցնում են, թե ես կարո՞ղ եմ վարձով սենյակ տալ, ինձ մի բան է չէտաքրքրում՝ վճարելու փող ունե՞ն, թե չէ: Իսկ միսս Քոմփսընը շաբաթվա վարձը միանգամից տվեց:

Բժիշկ Մաքֆեյլը չէր ուզում որոշակի դիրք գրավել:
— Ի՞նչ որ է, դա ձեր տունն է: Մենք շատ պարտական ենք ձեզ, որ մեզ բնոհանրապես ներս եք թողել:

Հորը կասկածանքով նրան նայեց: Նա դեռ հաստատ չէր պարզել, թե Մաքֆեյլը որքանով է կանգնած միսիոնների կողմը:

— Միսիոններները բոլորն էլ խոսքները մեկ են, — տատանվելով ասաց նա:— Ու թե որ մի առևտրականի հետ շունեցան, նա կարող է սուտուփուս իր խանութը փակել:

— Ինչ է, ուզում էր, որ այդ կնոջը վանդեի՞ր:

— Չէ, նա ասում է, որ չի կարող այդպիսի բան պահանջել, քանի դեռ միսս Քոմփսընն իրեն կարգին է պահում: Ասում է, որ ուզում է ինձ հետ արդարացի վարվել: Ես խոսք տվեցի, որ այդ կինն էլ այցելուներ չի ունենա: Հենց նոր գնացի ու նրան զգուշացրի:

— Ինչպե՞ս ընդունեց ձեզ:

— Անպատկեց:

— Դե, իմ կարծիքով, նա կտեղափոխվի: Չեմ կարծում, թե կմնա այստեղ, եթե ոչ ոքի չկարողանա ընդունել:
— Նա զնալու տեղ չունի, բացի տեղացիների տներից, և ոչ

մի բնիկ նրան հիմա չի վերցնի, այն բանից հետո, որ միսիս-
նեղներն ընկել են նրա ետևից:

Բժիշկը նայեց դուրս, անձրևին:

— Էհ, կարծում եմ, իմաստ չունի սպասել, որ եղանակը
բացվի:

Երեկոյան, հյուրասենյակում, Դեկդորնը պատմում էր բուլե-
շում անցկացրած իր երիտասարդ տարիների մասին: Նա միջոց-
ներ չէր ունեցել և գծվարությունները հաղթահարել էր արձա-
կուրդների ժամանակ պատահական աշխատանքներ անելու շը-
նորհիվ: Նեղքում լուսվում էր: Միսս Քոմփսընը մենակ նըս-
տած էր իր փոքրիկ սենյակում: Բայց հանկարծ գրամոֆոնը
սկսեց նվագել: Նա չգրու, իր մենակությանը մարտահրավեր նե-
տելու համար էր աշխատեցրել այն, սակայն երգող չկար, և
նվագը թախծոտ հնչողություն ուներ: Ասես օգնության կանչ
լինի: Դեկդորնն ուղադրություն չդարձրեց: Նա մի երկար անկե-
ղտի կեսին էր հասել և շարունակեց՝ առանց արտահայտությու-
նը փոխելու: Գրամոֆոնը շարունակում էր նվագել: Միսս
Քոմփսընն իրար ետևից փոխում էր ձայնապնակները: Լուսվու-
նը կարծես ազդում էր նրա նյարդերի վրա: Գիշերը տոթ էր, օդն՝
անշարժ: Մաքֆեյնի պառկեցին, բայց չէին կարողանում
քնել: Լայն բացած աչքերով, կողք կողքի պառկած մամուսիներն
սկանջ էին դնում վարպույրից այն կողմ մոծակների անողորմ
երգին:

— Սա ի՞նչ է, — վերջապես շնչաց միսիս Մաքֆեյլը:

Նրանք ձայն լսեցին՝ Դեկդորնի ձայնը փայտե միջնորմի
ետևից: Չայնը միապաղաղ, լուրջ ու նպատակամետ երանգ ուներ:
Նա բարձրաձայն աղոթում էր: Աղոթում էր միսս Քոմփսընի
հոգու համար:

Երկու թե երեք օր անցավ: Այժմ արդեն, երբ փողոցում հան-
դիպում էին միսս Քոմփսընին, սա այլևս առաջվա հեղանական
չբերմություն կամ ժպիտով չէր ողջունում, այլ անցնում էր քի-
թը վեր տնկած, շպարված խոտո դեմքին մռայլ-փրված ար-
տահայտություն, ձևացնելով, թե չի էլ նկատել նրանց: Առևտրա-
կանը Մաքֆեյլին ասաց, որ միսս Քոմփսընը փորձել է մի ուրիշ
տեղ սենյակ վարձել, սակայն ապարդյուն: Երեկոյան նա առաջ-
վա նման հերթով դնում էր բուրբ ձայնասկավառակները, բայց
այժմ ակնհայտ էր, որ զվարթությունը կեղծ է: Ինքքայնը հըն-
չում էր սուր, հուսահատ, ասես հուսաբեկության ուսանքների լի-

ներ: Երբ նա կիրակի օրը լարեց գրամոֆոնը, Դեկդորնը Հոր-
նին ուղարկեց խնդրելու, որ անմիջապես դադարի, քանզի կի-
րակին Տիրոջ օրն է: Պարը դադարեց, և տանը լուսվում տիրեց,
որն ընդհատվում էր միայն երկաթե տանիքին հարվածող անձրևի
կանոնավոր կտկտոցով:

— Ինձ թվում է, նա մի քիչ զրգոված է դարձել, — հաջորդ
օրը Մաքֆեյլին ասաց առևտրականը: — Զի իմանում, թե միսսը
Դեկդորնի ուզածն ինչ է, և զա վախեցնում է նրան:

Մաքֆեյլն առավոտյան հանդիպել էր միսս Քոմփսընին և
ապշել էր, տեսնելով, թե նրա ամբարտաժան արտահայտու-
թյունն ինչպես է փոխվել: Հետապնդվածի հայացք ուներ այժմ
այդ կիսը: Խառնածինը թեք նայեց Մաքֆեյլին:

— Գուք երևի չգիտեք, չէ՞, թե միսսը Դեկդորնն ինչ է մտա-
դիր անել, — վերջապես ռիսկ արեց նա հարցնել:

— Ոչ, չգիտեմ:

Հետաքրքիր էր, որ Հորնն այդ հարցը տվեց, քանի որ բժշկին
էլ էր թվում, թե միսիսներն ինչ-որ խորհրդավոր աշխատանք
է տանում: Այն տավարությունն ուներ, թե միսիսներն ան-
դադար, զգուշորեն ցանց է հյուսում այդ կնոջ շուրջը և հան-
կարծ, երբ ամեն ինչ պատրաստ լինի, թեև երբ կտրուկ կբաշի:

— Ինձ ասաց, նրան հաղորդեմ, — շարունակեց առևտրա-
կանը, — որ ցանկացած ժամանակ, երբ իր կարիքը զգա, թող
միայն կանչի, և ինքը կգա:

— Իսկ նա ի՞նչ պատասխանեց:

— Ոչ մի բան: Ես չսպասեցի: Միայն ասացի ինչ որ ինձ
ասել էին ու զնացի: Վախեցա, սկսի լաց լինել:

— Զեմ կասկածում, որ մենակությունն ազդում է նրա նյար-
դերի վրա, — ասաց բժիշկը: — Էլ չեմ ասում անձրևը: Դա բավա-
կան է, որ մարդ գծվի, — զրգոված շարունակեց նա: — Ինչ է,
այս անիծյալ տեղում դրան վերջ չկա՞:

— Անձրևոտ սեղոնին շատ հաճախ է գալիս: Տարին այստեղ
երեք հարյուր դրոյմ տեղումներ են լինում: Գիտեք, ծովածոցի
ձևն է պատճառը, ասես այն հաղաղ օվկիանոսի բուրբ ծայրե-
րից անձրևն իր կողմն է ձգում:

— Գրողի ծոցը այդ ծովածոցի ձևը, — ասաց բժիշկը:

Նա քրքեց մոծակների կծած տեղերը: Շատ ջղային վիճակում
էր: Երբ անձրևը դադարեց, և արևը շողաց, շուրջը շուրջը նմանվեց
չերմոցի՝ եռացող, խոնավ, տոթ, հեղձուկ. և արտասովոր մի

զգա ջու՛մ էիր ունենում՝ թե ամեն ինչ աճում է վայրի կատա-
ղույնամբ: Բնիկները, որոնց մասին ասում էին, թե անհոգ ու
մանկական բնավորություն ունեն, իրենց դաշվածքներով ու ներ-
կած մաղերով շարագուշակ տեսք էին ստացել, և էրբ հանկարծ
եսուն՝ լսում էիր նրանց բորիկ ոտքերի թփթփոցը, բնազդաբար
ես էիր նայում: Զգում էիր, որ ամեն բույե կարող են արագ
մոտ գալ ու մի երկար դանակ խրել թիկունքդ: Անհնար էր գու-
շակել, թե ինչ մութ մտքեր են թաքնված նրանց յայն, իրարից
հեռու աչքերի մեջ: Նրանց հայացքը մի քիչ նման էր տաճար-
ների պատերին նկարած հին եգիպտացիների հայացքին, և ան-
նկարագրելիորեն հինավուրց ու սարսափելի բան կար նրան-
ցում:

Մխիթները գալիս էր ու նորից գնում: Նա զբաղված էր,
սակայն Մաքֆեյնները չգիտեին, թե ինչով: Հորնը բժշկին ասաց,
որ նա ամեն օր տեսնում է նահանգապետին, և մի օր Դեիդսընն
քնքը խոսեց նրա մասին:

— Տեսքից թվում է, թե շատ վճռական մարդ է,— ասաց
նա,— բայց հրբ հասնում ես գործի էությանը, տեսնում ես, որ
ողնաշար չունի:

— Ասել կուզի, նա ձեր ուզածը անվերապահորեն լի՞ անում,
հա՞,— կատակի տվեց բժիշկը:

Մխիթները ժպտաց:

— Ես ուզում եմ, որ նա անի այն, ինչ ճիշտն է: Մարդուն
չպետք է անհրաժեշտ լինի համոզել, որ անի ճիշտը:

— Բայց կարող են տարբեր տեսակետներ լինել, թե ինչն
է ճիշտ:

— Եթե մարդու ոտքը ոսկրախտով հիվանդ է, դուք կհան-
դուրժեի՞ք, որ մեկը տատանվեր անդամահատել այն:

— Ոսկրախտը կոնկրետ բան է:

— Իսկ շարի՞քը:

Թե ինչ էր Դեիդսընն արել, շուտով հայտնի դարձավ: Զորսով
հենց նոր ճաշել վերջացրել էին, և տիկնայք ու բժիշկը դեռ չէին
բաժանվել կեսօրյա հանգիստը վայելելու, որ տապն էր պար-
տադրում նրանց: Դեիդսընն այդ քնքշակեցություն կողմնակիցը
չէր: Դուռը հանկարծ կտրուկ բացվեց, և միսս Քոմֆսընը ներս
եկավ: Նա նայեց բոլորին, հետո մոտեցավ Դեիդսընին:

— Դու, կեղտոտ, ի՞նչ ես իմ մասին ասել նահանգապե-
տին:

Նա կատաղությունից կակաղում էր: Մի բույե լուսթյուն տի-
լեց: Հետո մխիթները ամոռ առաջ քաշեց:

— Խնդրում եմ, նստեցեք, միսս Քոմֆսըն: Ես հուսով էի, որ
մի անգամ ես առիթ կունենամ ձեզ հետ զրուցելու:

— Սուր շունչանորդի:

Դրան հետևեց վերավորական խոսքերի մի ամբողջ հեղեղ՝
կեղտոտ ու հանդուգն: Դեիդսընն իր լրջախոս աչքերը հասել էր
նրան:

— Ես անտարբեր եմ ծանուկությունների հանդեպ, որ դուք
հարմար եք դունում թափել ինձ վրա, միսս Քոմֆսըն,— ասաց
նա,— սակայն սղուշում եմ ձեզ հիշել, որ այսուեղ տիկնայք են
ներկա:

Այժմ արդեն արցունքներն էին պայթարի մեջ մտել պա-
րույթի հետ: Դեմքը կարմրել էր և ուռել, ասես խեղդվում էր:
— Ի՞նչ է պատահել,— հարցրեց բժիշկ Մաքֆեյլը:

— Մեկը հենց նոր եկավ ու ասաց, որ ես պիտի մյուս նա-
վով էսանդից գնամ:

Մխիթների աչքերը փայլատակեցին՝ արդյոք: Դեմքը մնաց
անկիրք:

— Հանդամանքներն այնպիսին էին, որ դուք զգվար թե սպա-
սեիք, թե նահանգապետը կթողնի այստեղ մնալ:

— Դու ես արեւ,— ճշաց կինը:— Պոչ մի խաղացրու: Դու
ես արել:

— Ես չեմ ցանկանում ձեզ խորել: Ես հարկադրեցի նահան-
գապետին կատարել իր պարտականությունների համապատաս-
խան միակ հնարավոր բայը:

— Ինչ է, չի՞ր կարող ինձ հանգիստ թողնել: Հո քեզ վնաս
չեմ տալիս:

— Համոզված եղեք, որ եթե ինձ վնաս տված լինեիք, ես
ամենևին չէի դայրանա ձեր արարքից:

— Չլինի՞ կարծում ես, թե ես ուզում եմ էս քոտոտ քաղաք
կոշվածում մնալ: Ի՞նչ է, վայրենու նմա՞ն եմ:

— Այդ դեպքում ես չեմ հասկանում ձեր բողոքի պատճա-
ռը,— պատասխանեց նա:

Կինը զայրույթի մի անպարզահոնչ ճիշտ արձակեց և սենյա-
կից դուրս նետվեց: Կարճատև լուսթյուն տիրեց:

— Թեթևացած եմ զգում, իմանալով, որ նահանգապետը
դործել է վերջապես,— ասաց Դեիդսընն ի վերջո:— Թույլ մարդ

է և չէր կարողանում վճիռ կայացնել: Ասում էր, որ նա, ինչևհից, չնդամենը երկու շաբաթ է այստեղ լինելու, և որ, եթե Ափրիա է գնում, ապա դա բրիտանական իրավասութիւնների մէջ է և իրեն չի վերաբերում:

Միսս Քոմփսընը ոտքի թռավ և սկսեց սենյակով ետ ու առաջ գնալ:

— Ահա՛վոր է, թե ինչպես մարդիկ, որոնց իշխանութիւնն է տրված, ձգտում են փախչել պատասխանատուութիւններից: Այնպես են խոսում, կարծես իրենց տեսողաշտից դուրս մնացած շարիքը շարիք չէ: Այդ կնոջ գոյութիւնն արդեն ինքնին խայտառակութիւնն է, և այդ խայտառակութիւնն ուրիշ կղզի տեղափոխելը գրութիւնը չի լավացնի: Ի վերջո, ես ստիպված էի ուղիղ խոսել:

Դեկտեմբերը հոնքերը կիտեց և առաջ ցցեց իր ամուր կզակը: Վայրագ ու վճռական տեսք ունեւր:

— Ի՞նչը նկատի ունեք դրանով:

— Մեր միսիան Վաշինգտոնում ազգեցութիւններից այնքան էլ գուրկ չէ: Ես նահանգապետին նշեցի, որ նրան օգուտ չի բերի, եթե բողոք գնա այն մասին, թե նա ինչպես է այստեղ գործերը վարում:

— Ե՛րբ է նա մեկնելու, — հարցրեց բժիշկը, մի փոքր դազարից հետո:

— Ման Ֆրանցիսկոյի նախը Սիգնելից այստեղ կժամանի հաջորդ երեքշաբթի: Դրանով նա պիտի գնա:

Մնում էր հինգ օր: Հենց հաջորդ օրը, հոսպիտալից վերադառնալիս, որտեղ պարապ շմնալու համար Մաքֆելլին անց էր կացնում իր առավոտների մեծ մասը, խառնածինը աստիճանների վրա կանգնեցրեց նրան:

— Ներեցեք, բժիշկ, Մաքֆելլ, միսս Քոմփսընը հիվանդ է Զէլե՛ք նայի նրան:

— Իհարկե՛ն:

Հորնը բժշկին առաջնորդեց կնոջ սենյակը: Մա անգործ-անբան նստած էր աթոռին, ոչ կարգում էր, ոչ կար անում, հայացքը հատել էր դատարկութիւնը: Հագին սպիտակ զգեստն էր, գլխին՝ ծաղկակերով զարդարված սպիտակ լայնեզր գլխարկը: Մաքֆելլը նկատեց, որ նրա մաշկը դիմափոշու տակ դեղին է ու խամրած, իսկ աչքերն ուռած են:

— Ցավում եմ, որ լավ չեք զգում, — ասաց նա:

— Ահ, ես իսկականից հիվանդ չեմ: Ես ուղղակի էզպե՛ս

արեցի, որովհետև պիտի ձեզ տեսնեի: Ես Ֆրիսկո տանող մյուս նավով պիտի գնամ:

Միսս Քոմփսընը նայեց բժշկին, և վերջինս տեսավ, որ նրա աչքերում հանկարծ վախ հայտնվեց: Նա ջղաձգորեն բացուխուփ արեց ձեռքերը: Առևտրականը, գուան մոտ կանգնած, լսում էր — Ես դիտեմ, — ասաց բժիշկը:

Միսս Քոմփսընը թուրք կուլ տվեց:

— Ինձ համար հիմա Ֆրիսկո գնալն էդքան էլ հարմար չի: Երեկ ցերեկը գնացի նահանգապետին տեսնելու, բայց մոտք չընկա: Քարտուզարին տեսա, ասաց, որ պիտի նավով գնամ ու վէրջ, էլ ոչ մի խոսք: Ես անսպասման ուզում էի նահանգապետին տեսնեի, դրա համար էսօր առավոտ նրա տան մոտ սպասեցի, որ երբ դուրս գար, հետք խոսեի: Զէր ուզում հետս խոսել, բայց ես չթողեցի, որ ինձնից գլուխն ազատի, նա էլ վերջն ասաց, թե ինքը դեմ չի մինչև Սիգնելի նավն իմ մնալուն, եթե հայր Դեկտեմբերը համաձայնվի:

Նա դադար տվեց և անհանգիստ նայեց բժիշկ Մաքֆելլին:

— Զգիտեմ, թե ինչ կարող եմ անել, — ասաց բժիշկը:

— Դե, ես ասացի, կարող է դուք նրան խնդրեք: Աստված վկա, եթե թողնի մնամ, ոչ մի բան չեմ անի: Տնից դուրս չեմ գա, եթե դա է ուզածը: Եղած-չեղածը երկու շաբաթ է:

— Կխնդրեմ:

— Նա չի համաձայնի, — ասաց Հորնը: — Քեզ երեքշաբթի օրը կողարկի, ավելի լավ կանես հաշտվես էդ մտքին:

— Ասեք, որ ես Սիգնելում կարող եմ աշխատանք ստանալ: այսինքն՝ ազնիվ աշխատանք: Հո շատ բան չեմ ուզում:

— Ես կանեմ, ինչ որ կկարողանամ:

— Ու եկեք ինձ միանգամից ասեք, հա՛: Մինչև չիմանամ ինչ եղավ, ոչ մի բան չեմ կարողանա անել:

Այդ հանձնարարութիւնն այնքան էլ բժշկի սրտովը չէր, և հատկաւնշական է, որ նա զօրծեց անուղղակիորեն: Ասաց իր կնոջը, թե ինչ է լսել միսս Քոմփսընից և խնդրեց խոսել միսիս Դեկտեմբերի հետ: Միսիսընը իրեն բռնապետի նման էր պահում. առանձին վնաս չկար, եթե աղջկան թույլ տրվեր երկու շաբաթ ևս Փազո-Փազոյում մնալ: Սակայն նրա դիվանագիտութիւնը արդյունքներն անսպասելի էին: Միսիսընը ինքն անմիջապես եկավ:

— Միտն Պիկոսըն ինձ ասաց, որ Քոմիսընը խոսել է ձեզ հետ:

Մաքֆիլը, հանկարծակիի եկած, զայրույթ զգաց, ինչպէս լինում է ամաշկոտ մարդկանց հետ, երբ նրանց ստիպում են բաց խաղալ: Արշունը գլխին խփեց, և նրա երեսը շառագունեց:

— Տարբերութիւն չեմ տեսնում, եթէ նա Միդնէյ գնա Ման Տրանցիսկոյի փոխարեն, մանավանդ որ խոստացել է իրեն այստեղ կարգին պահել, զրո՞ղը տանի, նրան հետապնդելն արդեն չափից դուրս է:

Միտններն իր խիստ հայացքը մխրճեց նրա մեջ:

— Ինչո՞ւ նա չի ուզում ետ գնալ Ման Տրանցիսկոյ:

— Ես չհետաքրքրվեցի, — գրգռված պատասխանեց բծիշկը: — Եւ կարծում եմ, ամեն մեկը լավ կանի իր սեփական գործերով զբաղվի:

Ըստ երևույթին, դա այնքան էլ պատշաճ պատասխան չէր:

— Նահանգապետը նրան կարգադրել է կղզուց մեկնող առաջին իսկ նավով ուղևորվել: Նա ընդամենը կատարել է յուր պարտքը, և ես չեմ խառնվի: Այդ կենդն այստեղ թողնելը վտանգավոր է:

— Ըստ իս, դուք շատ դաժան և բռնակալ անձնազորութիւն եք:

Երկու տիկնայք որոշ տազնապով բժշկին նայեցին, բայց վեճից վախենալու պատճառ չկար, քանզի միտնները ժպտում էր անխոռով:

— Ես շատ եմ արհեստում, որ դուք այդպիսի կարծիք ունեք իմ մասին, բժիշկ Մաքֆիլ: Հաճատացե՛ք, իմ սիրտը կարասովում է դժբախտ կնոջ համար, սակայն ես ընդամենը փորձում եմ կատարել իմ պարտքը:

Բժիշկը չպատասխանեց: Նա պատուհանից մտայլ դուրս նայեց: Անձրեք միանգամից դադարել էր, և ծովածոցի երկարութեամբ երևում էին ծառերի մեջ պատասպարված բնիկների հյուղակները:

— Ես երեխ օգտվեմ անձրեխ կարվելուց և դուրս գնամ, — ասաց նա:

— Խնդրում եմ, թշնամանք մի տածեք իմ նկատմամբ, որ չկարողացա համաձայնել ձեք ցանկութեանը, — տխուր ժպտով ասաց Պիկոսընը: — Ես ձեզ շատ եմ հարգում, բժիշկ, և կցուզեմ, եթէ իմ մասին վատը մտածեք:

— Ես չեմ կասկածում, որ դուք ձեր մասին բավական լավ կարծիք ունեք, որպեսզի անվերջութեամբ բնդուներ իմը, — հայպաղեց պատասխանել Մաքֆիլը:

— Սխտեղ ես ինձ պարտաված եմ հանաչում, — ծիծաղեց Պիկոսընը:

Երբ բժիշկ Մաքֆիլը, շարացած ինքն իր վրա, որովհետեւ անտեղի կոպիտ գտնվեց, իջնում էր աստիճաններով, տեսա՞վ, որ միտն Քոմիսընը դուռը կիսարաց արած իրեն է սպասու՞մ:

— Հը՞, — հարցրեց նա, — խոսեցի՞ր հետը:

— Այո, ցավում եմ, բայց նա ոչինչ չի ուզում անել, — պատասխանեց Մաքֆիլը, շփոթմունքից խոսակցուհուն շնայելով: Սակայն հետո, փղձկոց լսելով, մի արագ հայացք նետեց կնոջ վրա ու տեսավ, որ նրա դեմքը սարսափից սպիտակել է: Դա վախեցրեց բժշկին: Եվ հանկարծ նրա գլխում մի միտք ծագեց:

— Բայց դեռևս հայանե՞րդ մի կտրեր: Զե՞ղ հետ այդպեւ վարվելն, իմ կարծիքով, ամոթալի բան է, և ես ինքս կգնամ կտեւեւեմ նահանգապետին:

— Հիմա՞:

Նա գլխով արեց: Միտն Քոմիսընի դեմքը պայծառացավ:

— Դուք շատ բարի եք: Ես հաստատ գիտեմ, որ եթէ դուք խոսեք, կթողնի մնամ: Ես ոչ մի էնպիսի բան չեմ անի, քանի էստեղ եմ:

Բժիշկ Մաքֆիլն ինքն էլ կարգին չգիտեր, թե ինչու որոշեց գիմել նահանգապետին: Նա կատարելապես անտարբեր էր միտն Քոմիսընի գործերի նկատմամբ, սակայն միտնները զայրացրել էր նրան, իսկ բժշկի զայրույթը երկար էր տևում:

Նահանգապետը տանն էր: Դա մի լայնաթիկունք, գեղեցկադեմ տղամարդ էր՝ նախկին նավաստի, սպիտակ ցից-ցից բեղե՛րով, հագին ձյունապիտակ համազգեստ:

— Ես եկել եմ ձեզ մոտ մի կնոջ կապակցութեամբ, որը բընակվում է այն տանը, որտեղ և մենք, — ասաց Մաքֆիլը: — Նրա ազգանունը Քոմիսըն է:

— Ես նրա մասին արդեն բավականաչափ լսել եմ, բժիշկ Մաքֆիլ, — ասաց նահանգապետը ժպտալով: — Ես նրան կարգադրել եմ հաջորդ երեքշաբթի մեկնել. և դա այն ամենն է, ինչ կարող եմ անել:

— Ես ուզում էի ձեզ հարցնել, թե չէ՞ք կարող արդյոք ծամկետը երկարացնել և թույլ տալ նրան մնալու այստեղ, մինչև

հազը Ման Յրանցիսկոյից գա, որպէսզի կարողանա գնալ Միդ-
նել: Ես երաշխավորում եմ, որ իրեն լավ կպահի:

Նահանգապետը շարունակում էր ժպտալ, սակայն աչքերը
փոքրացան ու լրջացան:

— Շատ ուրախ կլինեի ձեր խնդրանքը կատարել, բժիշկ
Մաքֆելլը, բայց կարգադրութիւնն արվել է և պիտի ի կատար
ածվի:

Բժիշկը, որքան կարող էր, համոզիչ փաստարկներ բերեց,
սակայն նահանգապետը բոլորովին դադարեց ժպտալ: Մտաւ
լուում էր, աշխատելով գրուցակցին շնայել: Մաքֆելլը տեսավ,
ոչ ինքը տպավորութիւն չի գործում:

— Ես չէի ուզի որևէ տիկնոջ տհաճութիւն պատճառել, բայց
նա պետք է մեկնի երեքշաբթի, մեկնի և վերջ:

— Սակայն ի՞նչ տարբերութիւն:

— Ներեցեք, բժիշկ, բայց ես պարտավոր չեմ իմ արարքնե-
րի համար բացատրութիւն տալ ոչ մեկին, բացի իմ ղեկավար-
ներից:

Մաքֆելլը մի թափանցող հայացք նետեց նրա վրա: Հիշեց
Դեկդսընի ակնարկը, որ սպառնալիքներ է գործադրել, և նա-
հանգապետի պահելաձևի մեջ անսովոր շփոթվածութիւն կար-
դաց:

— Գրողի տարած Դեկդսընը սիրում է ուրիշի գործերին խա-
նըվել, — տաքացած ասաց նա:

— Մեր մեջ ասած, բժիշկ Մաքֆելլ, չէի ասի, թե շատ բա-
րենպաստ կարծիք եմ կազմել միտք Դեկդսընի մասին, բայց
պիտի խոստովանեմ, որ նա իրավունք ունի ինձ նշելու այն
վտանգը, որ կարող է պարունակել միսս Թոմփսընի նման համ-
բավ ունեցող կնոջ ներկայութիւնը այսպիսի տեղում, որտեղ
շատ գինվորականներ են բնակվում տեղի բնակիչների մոտ:

Նա ոտքի կանգնեց, և բժիշկ Մաքֆելլը ստիպված էր նույնը
անել:

— Խնդրում եմ, ներքե ինձ: Ես ժամադրութիւն ունեմ: Իմ
կողմից՝ բարևներ միսիս Մաքֆելլին:

Բժիշկը վճատված բաժանվեց նրանից: Նա գիտեր, որ միսս
Թոմփսընը սպասում է իրեն, և չէր ուզում խոստովանել, ոչ
անհաշտութիւն է կրել, ուստի տուն մտավ ետեի դռնից և գո-

ղուեի բարձրացավ աստիճաններով, ասես ինչ-որ բան ունենաք
Քաքցնելու:

Ընթրիքին նա լուռ էր և անտրամադիր, մինչդեռ միսիսները
կենսուրախ էր ու աշխույժ: Բժիշկ Մաքֆելլին թվաց, թե նրա
աչքերը հաճախ հաղթական ուրախութիւններ իր վրա են կանգ
առնում: Հանկարծ նրան պարզ դարձավ, որ Դեկդսընը գիտե
նահանգապետին արած իր այցելութիւնն և դրա անհաշտութիւն
մասին: Բայց ինչպե՞ս կարող էր լսած լինել: Այդ մարդու հզո-
րութիւնն ինչ-որ շարագույժ բան ունէր իր մեջ: Ընթրիքից հետո
Մաքֆելլը պատշգամբում տեսավ Հորնին և, իբր հենց այնպէս
գրուցելու համար, դուրս եկավ:

— Նա ուզում է իմանալ, նահանգապետի հետ խոսե՞լ եք,
թե ոչ, — շնչաց առևտրականը:

— Այո: Նա ոչինչ չի անի: Շատ եմ ցավում, դրանից ավել
ոչինչ չեմ կարող:

— Ես գիտեի, որ չի անի: Նրանք չեն համարձակվում մի-
սիսներենքի դեմ գնալ:

— Ինչի՞ մասին եք խոսում, — բարեկամարար հարցրեց
Դեկդսընը, միանալով նրանց:

— Ասում էի, որ առեւտրային շաբաթ էլ Ափիա գնալու հնա-
րավորութիւն չեք ունենա, — միանգամից, առանց շփոթվելու
պատասխանեց առևտրականը:

Նա հեռացավ, իսկ երկուսը վերադարձան հյուրասենյակ
Միտք Դեկդսընն ամեն անգամ ուտելուց հետո մի ժամ նվի-
րում էր հանգստին: Քիչ հետո մեկն անհամարձակ դուռը թա-
կեց:

— Ներս եկեք, — սուր ձայնով ասաց միսիս Դեկդսընը:

Գուրք բաց շէր: Նա ելավ տեղից և բացեց: Միսս Թոմփսընն
էր կանգնած շեմին: Բայց նրա արտաքինն անսովոր կերպով
փոխված էր: Դա այլևս այն պճնված թեթևալիկը չէր, որ փո-
ղոցում ծիծաղում էր նրանց վրա, այլ մի խեղճացած, վախեցած
կին: Մազերը, սովորաբար խնամքով հարդարված, անխնամ
թափված էին ուսերին: Ըստին տնային շտեղծ էին, կիսաշրջա-
զգեստ և վերնաշապիկ: Դրանք ճմռթված էին ու կեղտոտ: Նա
կանգնել էր դռան մոտ, արտասուքները հոսում էին աչքերից,
և չէր համարձակվում ներս գալ:

— Ի՞նչ եք ուզում, — կուպտորին հարցրեց միսիս Դեկդսընը:

— Կարո՞ղ եմ խոսել միտք Դեկտրանի հետ, — ընդհատուն ձայնով ասաց միսս Քոմիսարնը:

Միսիոնները տեղից վեր ելավ և մտեցավ նրան:

— Ներս եկեք, միսս Քոմիսարն, ներս եկեք, — շերմորեն հրա-
վիրեց նա: — Ինչո՞վ կարող եմ ծառայել:

Նա մտավ սենյակ:

— Լսեք, ես ներողություն եմ խնդրում երեկվա ասածիս, ու... ու մնացած բաների համար: Ես մի քիչ տաքացած էի: Կներե՞ք:

— Օ՛, ոչինչ, ոչինչ: Իմ մեջքը բավականաչափ ամուր է մի քանի ծանր խոսք տանելու համար:

Կինը մի քայլ արեց դեպի նա: Ողջ նրա տեսքն իր մեջ աճա-
վոր ստրկամիտ ինչ-որ բան էր պարունակում:

— Գուք ինձ խեղճացրի՞ք: Ես տարված եմ: Հետ չեք ուղարկի
Ձերիս, չէ՞:

Միսիոնների բարեհոգությունը վայրկենաբար անհետացավ,
և ձայնը միանգամից դարձավ խիստ ու ազդու:

— Ինչո՞ւ չեք ուզում ետ գնալ այնտեղ:

Նա ամբողջովին կծկվեց:

— Մերոնք կարծեմ հնտեղ են: Չեմ ուզում ինձ էս վիճակում
տեսնեն: Ուրիշ ուր ասեք՝ կգնամ:

— Ինչո՞ւ չեք ուզում ետ գնալ Սան Ֆրանցիսկո:

— Ասացի:

Դեկտրանն առաջ թեքվեց՝ հայացքը նրան հառած, և նրա
հսկայական փայլուն աչքերն ասես փորձում էին թափանցել դե-
մացիների հոգին: Նա հանկարծ կտրուկ շունչ քաշեց:

— Ուղղի՛ր տուն:

Կինը ճշաց, հետո ծնկի եկավ ու գրկեց միսիոնների ոտքերը:
— Ետ մի ուղարկեք ինձ: Երբվում եմ աստծու առաջ, որ լավ
էին կղաճանամ: Վերջ կտամ սրան:

Նա սկսեց աղաչանքներ հեղեղել, և արցունքները հոսեցին նրա
ներկած աչակրով: Դեկտրանը կոպցավ, բարձրացրեց կնոջ դեմ-
քը՝ ստիպելով վերջինիս իրեն նայել:

— Ուղղի՛ր տուն, այո՞:

— Ես փախա, ու ինձ չհասցրին բռնել, — շնչակտուր ասաց
նա: — Ծների ձեռքը որ ընկա, երեք տարի ունեմ:

Միսիոնները բաց թողեց կնոջը, և նա թավալվեց գետնին,
դառը հեկեկալով: Բժիշկ Մաքֆեյլը տեղից բարձրացավ:

— Դա գործը քիվ փոխում է, — ասաց նա: — Այս իմանալուց
հետո դուք չեք կարող ստիպել նրան ետ գնալ: Մի հնարավորու-
թյուն էլ տվեք: Չէ՞ որ ուզում է նոր կյանք սկսել:

— Ես նրան կտամ ամենահիանալի հնարավորությունը, որ
նա երբևէ ունեցել է: Եթե զղջում է, թող ընդունի յուր պատիժը:
Կինը սխալ հասկացավ այդ խոսքերը և գլուխը բարձրացրեց:
Հույսի մի շող բոցկլտաց նրա ուսած աչքերում:

— Կթողնե՞ք, որ մնամ...

— Ոչ, Գուք պիտի երեքշաբթի Սան Ֆրանսիսկո մեկնեք:

Կինը սարսափի տեսք հանեց և հետո սկսեց բղավել ցածր,
խուպոտ, համարյա անարդկային ձայնով, գլուխը թափով խփե-
լով հատակին: Բժիշկ Մաքֆեյլը վեր թռավ տեղից և բարձրաց-
րեց նրան:

— Հարկավոր չէ, զսպեք ձեզ: Ավելի լավ է գնաք ձեր սեն-
յակ, պառկեք: Ես ձեզ դեղ կտամ:

Նա կնոջը ոտքի հանեց և կիսաբաշելով, կիսահրելով ներքև
տարավ: Կատաղած էր միսիս Դեկտրանի ու իր կնոջ վրա, որ
օգնելու ոչ մի փորձ չարեցին: Խառնածինը հարթակին կանգնած
էր, և նրա օգնությանը մի կերպ հաջողվեց միսս Քոմիսարնին
պանկեցնել մահճակալին: Նա գոռում էր ու լաց լինում: Համար-
յա անզգայացել էր: Բժիշկը մի հանգստացնող սրկում արեց
Երբ նորից ետ վերադարձավ, շարացած էր և ուժասպառ:

— Պառկեցրի՛ք, որ հանգստանա:

Կանայք և Դեկտրանը նույն դիրքում էին, ինչ որ իր գնա-
լուց: Հագիվ թե այդ ընթացքում շարժված կամ մի խոսք ասած
լինեին:

— Ես ձեզ էի սպասում, — ասաց Դեկտրանը տարօրինակ,
հետու ձայնով: — Ուզում եմ, որ բոլորդ ինձ հետ աղոթեք մեր
մեղավոր քրոջ հոգու համար:

Նա գրադարակից վերցրեց Ավետարանը և նստեց սեղանի
մոտ, որի վրա քիչ առաջ ընթրել էին: Այն գեղ հավաքված չէր,
և միսիոնները մի կողմ հրեց թեյնիկը: Հզոր, խոր և արձագանք-
վող ձայնով նա կարգաց այն գլուխը, որտեղ պատմվում է Հի-
սուս Քրիստոսի հանդիպման մասին ամուսնուն դավաճանան՝
կնոջ հետ:

— Այժմ ծունկ չոքեք ինձ հետ և եկեք աղոթենք մեր սիրելի
քրոջ, Սեղի Քոմիսարնի հոգու համար:

Ապա հետևեց մի երկար, կրթոտ աղոթք, որում նա աստծուն

աղաչում էր խնայել այդ մեղսապործ կնոջը: Միսիս Մաքֆելլը և միսիս Դեիգսընը փակ աչքերով ծունկ շոքեցին:

Բժիշկը, վարմանքից հանկարծակիի եկած, անճարակորեն ու մտխոյրած նույնպես ծնկի եկավ: Միսիոնների ազոթքը վայրի պերճախոսության մի նմուշ էր: Նա ծայրաստիճան հուզված էր և երբ խոսում էր, արցունքներ էին վազում այտերով: Դրսում սնկիզճ անձրեր թափվում էր, թափվում անզաղար, կատաղի շարուձյամբ, որ միայն մարդուն է հատուկ:

Վերջապես միսիոնները զաղար տվեց: Նա մի պահ լսեց, հետո ասաց.

— Այժմ մենք կասենք «Հայր մերը»:

Բոլորն ասացին ազոթքը և այսպե, հետևելով Դեիգսընին, ելան ասրի: Միսիս Դեիգսընի դեմքը գունատ էր և հանդատացած: Նա հանդարտված էր ու բավարարված, սակայն Մաքֆելլները հանկարծ երկնչեցին: Զգիտեին ինչ անել:

— Ես ներքև գնամ և տեսնեմ, թե հիմա իրեն ինչպես է զգում, — ասաց բժիշկ Մաքֆելլը:

Դուրը բացեց Հորնը: Միսիս Թոմփսընը ճոճաթոռում նստած կամացուկ հեծկոտում էր:

— Այդ ի՞նչ եք անում, — բացականչեց Մաքֆելլը: — Ես ձեզ ասացի, որ պտակեր:

— Ես չեմ կարող պտակել, ևս ուզում եմ միսսը Դեիգսընին տեսնեմ:

— Խեղճ մանկիկ, զրանից ի՞նչ օգուտ պիտ ւնենաս: Դու էրան երբեք չես խղճահարեցնի:

— Նա ասաց, որ կգա, թե որ հետևից մարդ ուզարկեմ:

Մաքֆելլը զիտով արեց առևտրականին:

— Գնացեք բերեք նրան:

Նրանք լուռ սպասում էին, մինչ առևտրականը վերև գնաց: Երբ եկավ Դեիգսընը:

— Ներողություն, որ խնդրեցի էստեղ գաք, — ասաց կինը, լռժոռելով հայացքը:

— Ես սպասում էի, որ ինձ կկանչեք: Գիտեի, որ աստված կպատասխանի իմ ազոթքին:

Մի րոպե նրանք սեղանին իրար նայեցին, և հետո միսս Թոմփսընը հայացքը մի կողմ տարավ: Նա սկսեց խոսել անընդհատ երբից կզգմ նախելով:

— Ես վատ կի՛ն եմ եղել: Ուզում եմ զզման պալ:

— Փառք ասածո, փառք ասածո: Նա լսել է մեր ազոթքները:

Միսիոնները շրջվեց դեպի տղամարդիկ:

— Ինձ մենակ թողեք նրա հետ: Ասեք միսիս Դեիգսընին, որ մեր ազոթքները պատասխան են ստացել:

Նրանք դուրս գնացին և դուրս ետևներից փակեցին:

— Էսպիսի բաներ, — ասաց առևտրականը:

Այդ գիշեր երկար չէր կարողանում քնել, և երբ նա լսեց, թե միսիոններն ինչպես է վեր բարձրանում, նայեց իր ժամացույցին: Ժամը երկուսն էր: Քայց նույնիսկ այդ ժամանակ Մաքֆելլը միանգամից անկողին շմտավ, բանդի սենյակները բաժառնող փայտե միջնորմից այն կողմ լավում էր բարձրաձայն աղոթող Դեիգսընի ձայնը: Վերջապես, խիստ հոգնած, նա ննջեց:

Երբ հաջորդ առավոտյան տեսավ միսիոններին, զարմացավ վերջինիս տեսքից: Նա սովորականից ավելի գունատ էր, հոգնած, սակայն աչքերը փայլում էին ինչ-որ անմարդկային կրակով: Այնպիսի տեսք ուներ, սակայն լցված լինելու անսահման մի խնդուձյամբ:

— Ես ուզում եմ, որ դուք անմիջապես դնաք և տեսնեք Սեդիին, — ասաց նա: — Չեմ կարող հուսալ, որ նրա մարմինն ավելի լավ է, բայց հոգին... հոգին վերափոխված է:

Բժիշկն իրեն ուժասպառ էր զգում և նյարդայնացած էր:

— Երեկ գիշեր շատ երկար մնացիք մոտը, — ասաց նա:

— Այո, նա լսել անգամ չէր ուզում իմ գնալու մասին:

— Այնպես եր ուրախացել, տեսե աշխարհը ձեզ են տվել, — զրգոված ասաց բժիշկը:

Դեիգսընի աչքերը ոգևորությունից փայլեցին:

— Մեծ շնորհ է արվել զիս: Անցյալ գիշեր ինձ բախտ վիճակվեց մի մոլորված հոգի ետ բերել Հիսուսի գորովայնից գիրկը:

Միսս Թոմփսընը դարձյալ ճոճաթոռի մեջ էր: Անկողինը հարզարված չէր: Սենյակը թափթփված վիճակում էր: Նա ննդուձյուն չէր քաշել հագնվելու, բայց վրան մի կեղտոտ խալաթ էր զցել, իսկ մաղբը փնթիտուն կապել: Քաց սրբիչով շփել էր երեսը, սակայն, միևնույն է, այն ամբողջովին ուռած ու ամբած էր լաց լինելուց: Ասես մի հալումաշ եղած պոռնիկ լինելու:

Նա բխացած հայացքն ուղղեց բժշկին, երբ վերջինս ներս եկավ: Վախեցած էր ու հուսալքված:

— Որտե՞ղ է միսսը Դեիգսընը, — հարց տվեց նա:

— Հենց որ կարիքը զգաք, անմիջապես կգա,— խայթող շարութեամբ պատասխանեց Մաքֆեյլը:— Ես եկա տեսնեմ՝ ինչպես եք:

— Ոչինչ, լավ եմ: Պետք չի անհանգստանալ:

— Մի բան կերե՞լ եք:

— Հորընը սուրճ է բերել:

Միսս Թոմփսընն անհամբերութեամբ դռանը նայեց:

— Ի՞նչ եք կարծում, շո՞ւտ ներքև կգա: Երբ որ ինքը հետս է էղբան սարսփելի չէ:

— Այնուամենայնիվ, երեքշաբթի գնալո՞ւ եք:

— Հա, նա ասում է՝ պիտի գնամ: Ինչպե՞ս եմ, ասե՞ք՝ հենց հիմա գա: Դուք ոչ մի բան չեք կարող անել: Մենակ ինքը հիմա կարող է ինձ օգնել:

— Ես ա՛լ չեմ, — ասաց բժիշկ Մաքֆեյլը:

Հալոթը Լրեք օրը միսիտները համարյա ամբողջ իր ժամանակը Անգլի Թոմփսընի հետ էր անցկացնում: Մյուսներին միանում էր միայն ուտելիս: Մաքֆեյլը նկատեց, որ նա բերանը համարյա բան չի գնում:

— Նա ուժասպառ է անում իրեն, — ցավով ասում էր միսիս Գեիգսընը:— Եթե չհետևի, գերհոգնածություն կստանա, բայց նա իրեն չի խնայում:

Ինքը՝ տիկինը սպիտակ էր, դուրսուրտ: Նա միսիս Մաքֆեյլին ասաց, որ բոլորովին չի քնում: Երբ միսիտները միսս Թոմփսընի մոտից վերև էր գալիս, նա աղոթում էր մինչև ուժասպառ լինելը, սակայն անգամ դրանից հետո երկար չէր քնում: Մեկ կամ երկու ժամից վեր էր կենում, շորերը հագնում և գնում ծովածոցի մոտ Թափառելու: Նա արտառոց երազներ էր տեսնում:

— Այս առաջուտ ինձ ասաց, որ երազում ներբասկայի սարերն է տեսել, — ասաց միսիս Գեիգսընը:

— Հետաքրքիր է, — ասաց բժիշկ Մաքֆեյլը:

Նա հիշեց, թե ինչպես էր գնացրի պատահանից տեսել այդ սարերը, երբ անցնում էր Ամերիկայով: Դրանք ասես խլուրդի հսկայական բներ լինելին, կտր ու հարթ, և կարող վեր էին ցցված հարթավայրի մեջ: Բժիշկը հիշեց, թե ինչպես էր իրեն ապշեցրել դրանց նմանությունը կանաչի ստիպաներին:

Գեիգսընի անհանդիստ վիճակն անսուսնիկ էր նույնիսկ իր համար: Բայց մի բերկրալից արբեցում ոգեշնչում էր նրան: Նա արմատախիլ անկողն՝ մի կողմ էր շարտում խեղճ կնոջ հոգու

խորքերում պահ մտած մեղքի վերջին մնացորդները: Կարգում էր նրա հետ և աղոթում նրա հետ:

— Սա հրաշալի բան է, — մի օր ընթրիքի ժամանակ ասաց միսիտները:— Սա մի իսկական վերածնունդ է: Նրա հոգին, որ գիշերվա պես սև էր, այժմ անաղաքտ է ու ճերմակ, ինչպես նորեկ ձյունը: Ես խոնարհ եմ ու վախվորած: Ես արժանի չեմ նրա զգեստի փեշին կաշվու:

— Եվ ձեք խիղճը թույլ կտա՞ նրան ետ ուղարկել Սան Ֆրանցիսկո, — ասաց բժիշկը:— Երեք տարի Ամերիկայի բանտերում: Ըստ իս, դուք նրան կարող էիք փրկել դրանից:

— Ախ, բայց մի՞թե ինքնևրդ չեք տեսնում: Դա անհրաժեշտ է: Կարծում եք սիրոս արյունաբամ չի՞ լինում: Ես սիրում եմ նրան ինչպես իմ կնոջը կամ քրոջը: Այն ամբողջ ժամանակ, որ նա բանտում լինի, ես նրա հետ պիտի տանեմ իր բոլոր ցավերը:

— Անմտություն, — բղավեց համբերությունը կորցրած բժիշկը:

— Դուք չեք հասկանում, բանգի կույր եք: Նա մեղք է գործել և պիտի տառապի: Ես գիտեմ, թե ինչ տառապանքներ պիտի կրի: Նա սոված կմնա, շարշարանքների կենթարկվի և կստորացվի: Ես ուզում եմ, որ այդ կինը մարդկային պատիժն ընդունի որպես զոհաբերություն աստծուն: Ուզում եմ հրճվածքով ընդունի այն: Նրան մի հնարավորություն է տրված, որ մեզնից շատ ջշերին է քնձեռվում: Աստված անսահման բարի է ու գթասիրտ:

Գեիգսընի ձայնը հուզմունքից զողացի, նա հագնվեց և արտաբերում բառերը, որ կրքոտ թափվում էին նրա շուրթերից:

— Ամբողջ օրը ես աղոթում եմ նրա հետ և երբ հեռանում եմ նրանից, նորից եմ աղոթում, աղոթում եմ ուժերիս ողջ գորությունը, որպեսզի Հիսուսն այս մեծ շնորհը պարգևի նրան: Ես ցանկանում եմ նրա հոգու մեջ արմատավորել պատմված լինելու կրքոտ իղճը, որպեսզի վերջում, եթե նույնիսկ առաջարկեմ չգնալ, ինքը մերժի: Ուզում եմ զգա, որ բանտ կոշիկը դառք պատիժը վարձահատությունն է, որը նա գնում է մեք օրհնյալ Տիրոջ ոտքերի առջև, Տիրոջ, որը յուր կյանքն է տվել նրա համար:

Օրերը դանդաղ էին անցնում: Տան բոլոր բնակիչները, որոնց ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր թշվառ, տանջված

կնոջ վրա, մի տեսակ անբնական հուզմունք էին ապրում: Նա
ասես մի զոհ լինէր, որին պատրաստում էին արշունոտ, վայրի
կռապաշտական ծեսերի համար: Սարսափից փայտացած վիճա-
կում էր այդ կինը: Մի բուսի անգամ չէր դիմանում առանց
Գեհգարնի. միայն վերջինիս հետ էր վերստանում քաշությունը,
և նա ամբողջ ժամանակ սարկային հավատարմությամբ կառ-
չում էր միսիոներին: Շատ էր լաց լինում, Ավետարան կարդում
և աղոթում: Երբեմն դառնում էր ուժասպառ ու անտարբեր: Այդ-
ժամ նա իրոք սկսում էր տենչալ, որ շուտ գա փորձությունը,
քանզի դա ուղղակի ու կոնկրետ փախուստի ձև էր կարծես առա-
ջարկում իր կրած շարժարանքներից: Այլևս չէր կարողանում դի-
մանալ իրեն պատող անորոշ սարսափներին: Յուր մեղքերի հետ
այդ կինը մի կողմ էր դրել նաև հոգատարությունն իր հան-
դեպ, և նա քարչ էր գալիս սենյակով մեկ՝ անճաշակ խալաթը
հագին, փնթի ու բրոնձ: Չորս օր էր, ոչ գիշերանոցն էր հանել,
ոչ հագել գուլպաները: Սենյակը կեղտոտ էր ու թափթփված:
Մինչդեռ անձրևը շարունակում էր տեղալ անզուժ համառու-
թյամբ: Մարդ մտածում էր, որ վերջապես երկնքում եղած ջրի
պաշարը պիտի սպառվի, բայց տեղատարափը շարունակում էր
խենթացնող միապաղաղությամբ հարվածել թիթեղյա տանիքին՝
ուղիղ ու ծանր: Ամեն ինչ թաց էր ու կաշուն: Բորբոս էր բռնում
պատերին և հատակին զրված կոշիկներին: Անբուն գիշերներին
մոծակներն իրենց դայրացած երգն էին բզզում:

— Եթե գտնեմ մի կենտ օր դադարեք անձրև գալ, այսքան վատ
չէր լինի. — ասաց Մաքֆելլը:

Բուլոբն անհամբեր սպասում էին երեքշաբթի օրվան, երբ
Սան Տրանցիսկոյի նավը պիտի Սթոնհեյից ժամաներ: Լարվածու-
թյունն անտանելի էր: Եվ քանի որ բժիշկ Մաքֆելլը կապ ուներ
այդ ամենի հետ, անբախտ կնոջ ձեռքից ազատվելու ցան-
կությունը նրանից մի տեսակ դուրս էր մղել խղճահարություն՝
ու գայրույթը: Անխուսափելին պիտի ընդունվի: Նա զգում էր,
որ ավելի ազատ կշնչի, երբ նավը հեռանա: Սեդի Թոմփսոնին
մինչև նավ նահանգապետի գրասենյակի պաշտոնյաներից մեկը
պիտի ուղեկցեր: Այդ անձնավորությունը եկավ երկուշաբթի երե-
կոցան և ասաց, որ միսս Թոմփսոնն առավուրդ տասնմեկին
ուստրաստ լինի: Գեհգարնը Սեդիի հետ էր:

— Սա կհետևեմ, որ ամեն ինչ պատրաստ լինի: Ինքս միայն
ունեմ նրա հետ նավ գնալ:

Միսս Թոմփսոնը շտտեց:

Երբ բժիշկը հանգրեց մոմը և զգուշորեն սողաց-մտավ իր
մոծակներից պաշտպանող վարագույրի տակ, նա մի թեթևացած
հոգոց արձակեց.

— Գե, փառք աստծո, վերջացավ: Վաղն այս ժամին քնա-
ցած կլինի:

— Միսս Գեհգարնը նույնպես ուրախ կլինի: Ասում է, ամու-
սինը ուժասպառ է եղել, — ասաց միսս Մաքֆելլը: — Նա ուրիշ
կին է հիմա:

— Ո՞վ:

— Սեդին: Կյանքում չէի մտածի, որ դա հնարավոր է: Մարդ
ուղղակի պապանձվում է:

Բժիշկ Մաքֆելլը լպտտախանեց և շուտով քոնն մտավ: Նա
հոգնած էր և քնեց սովորականից խոր:

Առավոտյան Մաքֆելլն արթնացավ թեկն զգացած հպումից
և վեր թոշելով, իր մահճակալի կողքին տեսավ Հորնին: Առե-
տրականը մատը մոտեցրեց շրթունքներին, շրթունելով, որ բը-
ժիշկը ձայն հանի և գլխի շարժումով հրավիրեց հետևել իրեն:
Նա, որպես կանոն, մաշված պարուսինն շալվար էր հագնում,
բայց հիմա ոտաբորիկ էր և վրան, բնիկի պես, միայն լավա-
լավա էր պցել: Հանկարծ միանգամից վայրենի տեսք էր ստա-
ցել, և բժիշկը մահճակալից վեր կենալով տեսավ, որ նրա ամ-
բողջ մարմինը դաջված է: Հորնը նշան արեց, որ նա պատշգամբ
գա: Բժիշկ Մաքֆելլը վեր կացավ և հետևեց առևտրականին:

— Աղմուկ մի արեք, — շնչաց սա: — Չեք կարիքը կա: Վե-
րարկու հագեք ու կոշիկներ: Արագ:

Բժիշկ Մաքֆելլը առաջին հերթին մտածեց, թե Սեդի Թոմփ-
սոնին բան է պատահել:

— Ի՞նչ է եղել: Գործիքներս վերցնե՞մ:

— Արագ, խնդրում եմ արագ:

Բժիշկ Մաքֆելլը մատների ծայրերի վրա ետ գնաց ննչա-
բան, պիժամաչի վրայից անձրևանոց հագավ, իսկ ոտքերին՝
կառուչկի ներբանով կոշիկներ: Հետո միացավ առևտրականին,
և երկուսը միասին զգուշորեն իջան աստիճաններով: Փողոց տա-
նող դուռը բաց էր, և վեց-յոթ բնիկ հավաքվել էին դռան մոտ:

— Ի՞նչ է եղել, — կրկնեց բժիշկը:

— Եկեք ինձ հետ, — ասաց Հորնը:

Նա քայլեց դուրս, և բժիշկը հետևեց նրան: Բնիկները փոքր

խումբ կազմած հեռակցին նրանց: Կտրեցին անցան փողոցը և հասան ծովի ափ: Բժիշկը նկատեց ընդհանրի բազմություն՝ հավաքված ջրի բերանին ընկած ինչ-որ առարկայի շուրջ: Շատ անցան մնացած մի քանակից յարդ տարածությունը, և ընդհանրը բժշկի մտանալուն պես մի կողմ քաշվեցին Առևտրականն առաջ հեղե բժշկին: Եվ այդամ նա տեսավ կես ջրի մեջ, կես դուրս մի անսովոր առարկա՝ Դեկորանի մարմինը: Բժիշկ Մաքֆեյը կռացավ (նա անսպասելիությունից պուխը կորցնողներից չէր) և շատ ավելի մարմինը, Կոկորդն ահանջից ականջ կտրած էր, իսկ աջ ձեռքը շարունակում էր պահել ածելին, որով այդ բանը կռաբվել էր:

— Նա բաշխեան սառն է,— ասաց բժիշկը:— Ըստ երևույթի, վաղուց է մահացել:

— Տղաներից մեկը աշխատանքի զնայիս ճամփին տեսել էր նրան և եկավ ու ինձ ասաց: Կարծում եք, ի՞նքն է իրեն սպանել:

— Այո: Մեկը պիտի ոստիկան կանչի:

Հորնը տեղական լեզվով ինչ-որ բան ասաց, և երկու պատանի անմիջապես պոկվեցին տեղներից:

— Մեկը պետք է նրան թողնենք այստեղ, մինչև գան, — ասաց բժիշկը:

— Իմ տուն թող շտանեն: Ես չեմ թողնի, որ իմ տուն բերեն:

— Կանեք այն, ինչ իշխանությունները կկարգադրեն, — կտրուկ պատասխանեց բժիշկը:— Բայց կարծում եմ, նրան դիտարան կտանեն:

Նրանք տնջարժ կանգնած սպասում էին: Առևտրականն իր լավա-լավաջի ծալքերից սիգարետ հանեց և մեկը ավելի բժշկին: Միտում էին, հայացքները հառած դիակիրն: Բժիշկ Մաքֆեյը ոչինչ չէր հասկանում:

— Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ այդպիսի բան արեց, — հարցրեց Հորնը:

Բժիշկն ուտերը թոթվեց: Քիչ անց մի գինձորական նավաստու հրամանատարությունը ընդհանրապես հեռանալու պատգարակ, իսկ դրանից անմիջապես հետո՝ երկու ծովային սպա և նավատորմի մի բժիշկ: Նրանք զործնական տեսքով սկսեցին կարգադրություններ անել:

— Իսկ կի՞նք, — հարցրեց սպաներից մեկը:

— Հիմա որ դուք եկաք, ես կվերադառնամ տուն և մի քանի րան կգցեմ: Կհետեմ, որ նրան հաղորդեն: Քանի դիտելը մի քիչ կարգի չեն բերել, ավելի լավ է նա շտանի:

— Կարծում եմ, որ ճիշտ է, — ասաց ռազմական բժիշկու Նրը բժիշկ Մաքֆեյը գնաց տուն, տեսավ, որ կիներ համարյա հագնվել վերջացրել է:

— Միտի Դեկորանն ահավոր անհանգստանում է իր ամուսնու համար, — բժշկի հայտնվելուն պես սկսեց նա:— Դեկորանն ամբողջ գիշեր շի պանկել: Միտի Դեկորանը լսել է, թե նա ինչպես է գնացել միտի Ռոմֆուրնի մոտից գիշերվա երկուսին, բայց ոչ թե իր սևնյակ, այլ դուրս: Եթե նա մինչև հիմա քայլում է, ապա պիտի հոգնածությունից մեռած լինի:

Բժիշկ Մաքֆեյն ասաց, թե ինչ է պատահել և խնդրեց տեղի ունեցածի բոթը հասցնել միտի Դեկորանին:

— Բայց ինչո՞ւ է այդպիսի բան արել, — սարսափած հարցրեց կինը:

— Չգիտեմ:

— Բայց ես չեմ կարող: Չեմ կարող:

— Պետք է կարողանաս:

Միտի Մաքֆեյը վախեցած հայացք գցեց ամուսնու վրա և դուրս գնաց: Մաքֆեյը լսեց, թե նա ինչպես մտավ միտի Դեկորանի սենյակը: Մի բույս կանգնեց, որ ինքն իրեն հավաքի, իսկ հետո սկսեց օստիվել ու լվացվել: Հագնվելուց հետո նստեց մահճակալին և սկսեց սպասել կնոջը: Վերջապես նա եկավ:

— Ուզում է նրան տեսնել:

— Տարել են դիտարան: Լավ կանենք. միտի Դեկորանի հետ գնանք: Ինչպե՞ս ընդունեց:

— Ինձ թվում է, նա շղմած է: Լաց չեղավ: Բայց դողում էր տերևի նման:

— Պետք է հենց հիմա գնալ:

Դուրը թակեցին, և միտի Դեկորանը դուրս եկավ: Շատ գուհատ էր, բայց այբերը շոր էին: Բժշկին թվաց, որ նա անբնականորեն հանգիստ է: Առանց մի խոսք փոխանակելու դուրս եկան ու ճամփա բնկան: Նրը հասան դիտարան, միտի Դեկորանը խոսեց:

— Ես մենակ կգնամ և կտեսնեմ նրան:

Ամուսինները մի կողմ քաշվեցին: Մի բնիկ բացեց դուրս և փակեց նրա ետևից: Մաքֆեյները նստեցին ու սկսեցին սպասել:— Լուսին և վերանալուն

սել: Երկու-երեք սպիտակամորթ մարդիկ մտեցան և կիսա-
ձայն սկսեցին խոսել նրանց հետ: Բժիշկ Մարֆիլլը մի անգամ
ևս պատմեց ինչ գիտեր այդ ողբերգութեան մասին: Վերջապէս
զուրը կամացուկ բացվեց, և միսիս Գեիդսընը դուրս եկավ:
Միանգամից լռութիւն տիրեց:

— Այժմ ես պատրաստ եմ, գնանք, — ասաց նա:

Չաջնք խիստ էր ու հաստատուն: Բժիշկ Մարֆիլլը շէր կա-
րողանում հասկանալ նրա աչքերի հայացքը: Գունատ գեմքը
շատ մոռլ էր: Նրանք ետ դարձան, գանդաղ, առանց մի բառ
ասելու, մինչև վերջապէս հասան շրջադարձին, որի ետևում
գտնվում էր նրանց տունը: Միսիս Գեիդսընը բերանն ապշած բաց
արեց, և մի բոպե բոլորը լուռ կանգնած էին: Մի աննկարագրելի
ազմուկ ծակեց նրանց ականջները: Գրամֆոնը, որ այգքան Եր-
կար լսել էր, նվագում էր, նվագում մի տեղիայն՝ բարձր ու կո-
պիս:

— Սա ի՞նչ է, — սարսափահար դռնեց միսիս Մարֆիլլը:

— Գնանք, — ասաց միսիս Գեիդսընը:

Նրանք աստիճաններով բարձրացան ու նախասենյակ մտան:
Միսս Թոմփսընը, կանգնած դռան մոտ, շատախոսում էր մի
զինվորականի հետ: Հանկարծակի մի փոփոխութիւն էր տեղի
ունեցել նրա մեջ: Այլևս այն վերջին օրերի վախկնցած խեղճու-
կրակը չէր: Նորից հագել էր իր ամենալավ շորերը՝ սպիտակ
շրջագլխուտը, բարձրակրունկ փայլուն ճտքակոշիկները, որանցից
դուրս էին պրծել սպիտակ գուլպա հագած պարարտ սրունք-
ները, մազերը խնամքով կարգի էին բերված, իսկ գլխին հրա-
կայական դիտարկն էր, վրան վառ, անճաշակ ծաղիկներ: Երեւել
չպարված էր, հոգեբարձ մտց սև, շրթունքներն՝ այ կարմիր:
Իրեն շատ ձիգ էր պահում: Դա նույն առաջին օրերի լկառ
թեթևութիկն էր: Տեսնելով ներս եկողներին, նա սկսեց ծիծաղել
բարձրաձայն, թունտա և հետո, եւր միսիս Գեիդսընն ակամա
կանց ատուժ, թուրք հովարեղ բերանում ու թրեց: Միսիս Գեիդ-
սընը ետ ընկրկեց, այտերին հանկարծ երկու կարմիր բծեր
հայտնվեցին: Հետո, դեմքը ձեռքերով ծածկելով, տեղից պոկ-
վեց և աստիճաններով արագ վեր վագեց: Բժիշկ Մարֆիլլը
դաշտույթից իրեն կսրցրեց: Նա հրեց Թոմփսընին ու մտով նրա
սենյակը:

— Ի՞նչ եք անում, գրողը տանի, — գոռաց նա: — Կանգնեց-
րեք այդ անիծված մեքենան:

Նա մտեցավ գրամֆոնին և ձայնասկավառակը շարունակ մի
կողմ: Կիներ շրջվեց նրա կողմը:

— Լսի, դոք, վագն անցի: Ի՞նչ ես խցկվել սենյակս:

— Ի՞նչ էք ուզում ասել, — գոռաց նա: — Ի՞նչ եք ուզում
գրանով ասել:

Կիներ լարվեց, իրեն կարգի բերեց: Անհնար է նկարագրել
արհամարհանքի հետ խառը ատելութիւնը, որ հնչեց նրա պա-
տասխանի մեջ:

— Դուք, տղամարդի՛կ: Գարշելի, կեղտոտ խոզն՛ք: Բոլորդ
մեկ եք, բոլո՛րդ: Խոզն՛ք, խոզն՛ք:

Բժիշկ Մարֆիլլը բերանը ապշած բաց արեց: Նա հասկա-
ցավ:



Մեծամասնությունը



Չափինը՝ Ասիայի «Մետրոպոլ» հյուրանոցի տերը, ինձ ծանոթացրեց կուսերնի հետ, ևս առանձնապես ուշադրություն չդարձրի վերջինիս Մենը սրահում հստակ առավույցան կոկտեյլն էինք խմում, և ևս բավականություն լսում էի կղզու վերջին բանաստեղծները:

Չափինը հետաքրքիր անձնավորություն էր: Մասնագիտությամբ հանրախոր-ինժեներ էր ու թերևս սրան բնորոշ էր բնականություն հաստատել մի վայրում, որտեղ իր մասնագիտական կարողությունները որևէ դարձնական արժեք չունեին: Եվ, այնուամենայնիվ, բոլորը սովորաբար ասում էին, թե նա չափազանց խելացի հանրախոր-ինժեներ է: Չափինը ջանքաշատ մարդ էր՝ ոչ գեր, ոչ էլ նիհար: Թեթևակի մտադաս գաղափիր թույլ մտքերը սկսել էին ձերմակել, իսկ բեզիբր փսփ էին, անհետև: Դեմքը, չգիտես արևից, թե խմելուց: Կարմիր էր:

Չափինը, սակայն, անսենյակ էր միայն հյուրանոցի տերը, քանզի այդ հյուրանոց կառվածը, որ շնչում իր անպարզագուստ

անվանը, բնագույնը մի երկհարկանի փայտե շինություն էր, գտնվում էր նրա կենց՝ քառասունհինգ տարեկան, բարձր աստակ, նիհար, ազդեցիկ ու վճռական անարժ մի ավստրալոստ ձևորում: Այդ փոքրիկ աղամարդը՝ գլուխը գլխու ու համարի իր միջրից բխեցան, սարսափում էր նրանից, և կղզի մասնում ամեն մի անձանով շուտով իմանում էր նրանց բնածնական վեճերի մասին, որոնց մամանակ տեղիներ դործի էր դնում բրտունցքներն ու սուրբը, սրպեսզի հնազանդ պատի ամսունուն: Հայտնի է, թե ինչպես մի անգամ գիշերը հարբելու համար նա Չափինին բանջարածամյա բանաստեղծության էր դատապարտել սեփական սենյակում, և մարդիկ տեսել էին, թե ինչպես վերջինս իր պատշգամբում կանգնած՝ շամարձակվելով վերստիջնից դուրս գալ, խեղճացած դիմում էր փողոցի անցուղիներին:

Չափինը ինքնաստիպ անձնավորություն էր, և ևս հետաքրքրություն էր լսում նրա հիշողությունները իր բազմաճարտաս կյանքից, անկախ այն բանից՝ որտեղ ծնվել էին, թե ոչ: Եվ էր կուսերնը ներս կգալ, ևս սրտնեղեցի, բանի որ ճերմական պատմությունն ընդհատվեց: Թեև զեռ առանձնակար չկար, պարզ էր, որ արդեն բավական կաննել էր, և ևս առանց որևէ ոգևորական տեղի ավելի ու համամայնեցի նրա հետ մի կոկտեյլ խմել: Արդեն գիտեի, որ Չափինը շատ է գլուխը կորցնում: Հուշերը բաժակը, որ բաղադրարկությունից զրգված սկոթ է ուղարկում ևս առանձնիկ, բավական էլիսես նրան չափից դուրս սշխուժացնելու համար, և մեխի: Չափինը ինչուսական հայտնիներ այդպիսի գրեթե միայն:

Եվ հետո՝ կուսերնի արտաքինում էլ ոչ մի գրավիչ բան չըկար: Նա մի ջանքաշատակ, նիհար մարդ էր՝ երկար, ղեղնած գեմբով, նեղ, թույլ կրակով, առողջ չթով՝ լայն ու սակրատ Հսկայական թափ հոնքերը առանձնահատուկ տեսք էին հազարգում նրան: Հիշողի սրբեր տներ՝ շատ խոշոր ու մաղ: կուսերը դժար էր, բայց նրա գվարթությունն ինձ անկեղծ թվաց, դա բող էր, գիտեի, որի միջոցով նա կաննում էր աշխարհին խաբել, և ևս կասկածեցի, որ դրա տակ ստոր հագի է թարնված: կուսերը ակնհայտորեն ձգտում էր զխարհ ազատ երևալ և իրեն մտերմավորել էր պահում: Սակայն ինձ, չգիտեմ ինչու, թվաց, թե նա խորամանկ է և ոչ հուսալի: Նա էր խոսում, խոսում ձայնով, և Չափինի հետ իրար բնականորեն մի ոչ մի

պատմում էին առասպելական դարձած քեֆերի, անզիական ահու՛մբում անցկացրած գիշերային գինարբուքների, որսորդական արշավների մասին, որոնց ժամանակ վիսկիի անշափելի քանակություն էր կլանվել, խոսում էին ուրախ ուղևորություններից Միգնել, հիմնականում հպարտանալով, որ սկսած ափ իջնելու պահից մինչև վերադառնալը ոչինչ չեն հիշում: Մի զույգ լակած խոզ: Բայց նույնիսկ հարբած վիճակում (քանզի շորսական կոկտեյլ խմելուց հետո ոչ մեկն էլ սթափ չէր) մեծ տարբերություն կար կոպիտ ու գոեհիկ Չափլինի և Լոուսընի միջև, այս վերջինս թեկուզ խմած էր, բայց անտարակույս մնում էր ջենարլմեն:

Ի վերջո նա մի փոքր օրորվելով վեր կացավ աթոռից:

— Դե, ես տուն գնամ,— ասաց նա:— Մինչև ճաշ կտեսնըվենք:

— Տիկինը լա՞վ է,— ասաց Չափլինը:

— Այո:

Լոուսընը դուրս գնաց: Նրա միավանկ պատասխանի մեջ մի առանձնահատուկ երանգ կար, որ ինձ ստիպեց զուլիս բարձրացնել:

— Լավ տղա է,— համոզված ասաց Չափլինը, երբ Լոուսընը դռնից դուրս եկավ արևով ողողված փողոցը:— Ամենալավերից մեկը: Ափսոս խմում է:

Նման դիտողությունը Չափլինի շուրթերին բավական զվարճալի էր հնչում:

— Իսկ երբ խմած է, կոփ է ման գալիս:

— Իսկ հաճա՞խ է խմած լինում:

— Շաբաթը երեք-չորս անգամ ուզածիդ պես: Կողմն արեց, մեկ էլ էթելը:

— Էթելն ո՞վ է:

— Էթելը նրա կինն է: Խառնածինի հետ է ամուսնացա՛ծ ծերուկ Բրեալդի աղջկա: Էստեղից տարավ: Ճիշտ էլ արեց: Բայց կինը շղիմացավ ու նորից հետ եկավ: Էսոր վաղը կկախվի, թե որ դրանից առաջ խմելուց լճեոնի: Լավ տղա է: Խմած ժամանակ շատ է փոխվում:

Չափլինը ուժեղ բխկաց:

— Գնամ զուլիս մտցնեմ ցնցողի տակ: Էն վերջին կոկտեյլն իզուր խմեցի: Միշտ վերջինն է համը հանում:

Մտքին դնելով ուղղություն վերջնել գեպի հարմարավե ո

լոգարանը, նա անվտանգ նայեց աստիճաններին, հետո անքնականորեն լուրջ տեսքով ոտքի ելավ:

— Լոուսընի հետ ընկերություն արեք, չեք տուժի,— ասաց նա:— Կարգին կարգացած տղա է: Լուրջ ժամանակ որ տեսնեք, կդարձանաք: Համ էլ խելոք է: Արժի հետը խոսել:

Այդ մի քանի խոսքով Չափլինը փաստորեն ամեն ինչ պատմեց:

Երբ ես երեկոյան կողմ ծովափին կատարած գրասանքից հետո եկա հյուրանոց, Լոուսընը կրկին այնտեղ էր: Նա ծանր սուզվել էր հյուսիսե՛ն բազկաթոռի մեջ՝ սրահում, և ինձ նայեց սպակե աչքերով: Պարզ էր, որ ամբողջ օրը խմել էր: Նա թմբած էր, իսկ հայացքը մուռլ էր ու շար: Մի բույն աչքերը կանգ առան ինձ վրա, բայց զգացի, որ չճանաչեց: Երկու-երեք հոգի նստած զառ էին խաղում, իսկ Լոուսընին շէին էլ նկատում: Ակնհայտաբան նրա վիճակը շափից ավելի սովորական էր, որպեսզի ուշադրություն գրավեր: Ես նստեցի ու միացա խաղացողներին:

— Չուտնված համերաշխ տղաներ եք,— ասաց Լոուսընը հանկարծ:

Նա աթոռից վեր կացավ և, օրորվելով ու ծնկները ծալելով, բայցեց դեպի դուռը: Զգիտեմ, այդ տեսարանն ավելի շատ ծիծաղելի՞ էր, թե զղվելի: Երբ դուրս գնաց, տղամարդկանցից մեկը քմծիծաղեց:

— Լոուսընը լավ լակել է այսօր:

— Եթե ինձ վրա խմիչքն այդպես ազդեր,— ասաց մյուսը,— կյանքումս բաժակ չէի առնի ձեռքս:

Ո՞ւմ մտքով կանցներ, թե այդ թշվառականը մի լուրատեսակ ումանտիկ կերպար է, կամ որ նրա կյանքն իր մեջ ունի խղճահարություն ու սարսափի այն տարրերը, որոնք, ըստ տեսաբանի*, անհրաժեշտ են ողբերգական էֆեկտի հասնելու համար:

Երկու թե կրեք օր Լոուսընին շահաս:

Մի օր Երեկոյան նստած էի հյուրանոցի առաջին հարկի պատըշվամբում, որը նայում էր փողոցին, երբ Լոուսընը ներս եկավ և նստեց կողքիս բազկաթոռին:

Նա միանգամայն սթափ էր: Մի ինչ-որ բան ասաց իբր հենդ ալիպես, իսկ հետո, երբ ես բավական անտարբեր պատասխան

* Ալաուի և Նի Երեստուելին՝ նրա «Պատերազմի» այնատուժությունը

սովի, ավելացրեց ծիծաղով, որը իր մեջ ներդրութիւնն հայցող երանդ ունէր:

— Այն օրը լավ լսկած էի:

Ես շպատասխանեցի: Հիբրավի, ասելու բան չկար: Մոծակներին բշուռ զուր հուշտով եռանդագին փստացնում էի ծխամորճս և նայում աշխատանքից տուն դարձող բնիկներին: Նրանք գնում էին լայն քայլերով, դանդաղ, զգուշորեն ու արժանապատուությամբ, և նրանց բոքիկ ոտքերի մեղմ թփթփուցը տարօրինակ էր հնչում: Նրանցից շատերն իրենց մուգ մազերը՝ գանգուր կամ ուղիղ, կրով սպիտակեցրել էին, և դա վերին աստիճանի ինքնատիպ տեսք էր հաղորդում նրանց: Բնիկները բարձրահասակ էին ու բարեկազմ: Նրանց ետևից երգելով անցան պայմանագրով աշխատող մի խումբ Մողոմոնյան կղզեցիներ: Նըրանք ավելի կարճ էին ու նվազ, բան սամոացիները, ամուսի պես սև մաշկով, հսկայական գլուխների ճուր ու փափուկ մազեր: Կարմիր ներկած: Մերթընդներթ երկտեղանի կառքի մեջ նըստած մի սպիտակամորթ էր անցնում հյուրանոցի մտտով կամ մտնում բակ: Մովալճակում երկու թե երեք առադաստանավ հիանում էին իրենց արտացոլմամբ խաղաղ ջրում:

— Զգիտեմ, այսպիսի տեղում լակելուց բացի ի՞նչ կարելի է անել:— վերջապես ասաց Լոուսընը:

— Չե՞ք հավանում Սամոան, — հենց այնպես, մի բան ասած լինելու համար խոսեցի ևս:

— Սիրուն է, չէ՞, — հարցին հարցով պատասխանեց Լոուսընը:

Նրա ընտրած բառն այնքան անհամապատասխան թվաց կրղզու աներևակաչելի գեղեցկութունը բնորոշելու համար, որ ես ժպտացի ու ժպտալով գլուխս շրջեցի նրա կողմը: Եվ ապշեցի, տեսնելով նրա հսկայական մուգ աչքերում դրոշմված անտանելի ստանշանքի արտահայտութիւնը: Երբեք չէի կարծի, թե Լոուսընն ընդունակ է այդպիսի ողբերգական, խոր սպրումներ: Սակայն այդ արտահայտութիւնն անմիջապէս անհետացավ, և նա ժըպտաց, ժպտոք հասարակ էր ու մի քիչ միամիտ: Դա այնքան փոխեց Լոուսընի դեմքը, որ իմ առաջին հակակրանքի զգացումը սասանվեց:

— Գալուս հենց առաջին օրը սիրահարվեցի այս տեղին, — ասաց նա:

Մի րպէ նա լուս էլ:

— Երեք տարի առաջ դնացի այստեղից, բայց հետո վերադարձաւ:— Լոուսընը կմկմացւ:— Կինս ուզեց ետ գալ: Բանն այն է, որ նա այստեղ է ծնվել:

— Ա՛:

Լոուսընը նորից լսեց, իսկ հետո համարձակութիւնը ժողովեց ու ինչ-որ միտք հայտնեց Ռորերտ Լուիս Սթիվենսընի մասին: Հարցրեց, եղե՞լ եմ արդո՞ք Վալիմայում: Ինչ-ինչ պատուճառներով նա ջանում էր դուր գալ ինձ: Սկսեց խոսել Սթիվենսուհի գրքերից և շուտով խոսակցութիւնը դարձավ Լոնդոնին:

— Քովենթ Գարդընն առաջվա՞նն է, — ասաց նա:— Ամենից ավելի օպերային եմ կարոտել: Դուք տեսե՞լ եք «Տրիստան և Իզոլդան»:

Լոուսընն այնպէս հարցրեց, ասես պատասխանն իրոք կարեւոր լինէր իր համար, և երբ ես մի քիչ անփութորեն ասացի, թե տեսել եմ, թվաց ուրախացավ: Սկսեց խոսել Վագներից, ո՛չ ինչպէս երաժիշտը, այլ հասարակ մարդու պես, որը էմօցիոնալ բավականութիւնն է ստանում և շի կարող վերլուծել իր զգացածը:

— Ա՛յ, արժեր Բայրիյթ գնալ, — ասաց նա:— Երբեք փողջ չի հերձել, էլ չեմ խոսում բախտ բերելուց: Բայց իհարկե, Քովենթ Գարդընն էլ վատ չէ՛ շահեր, հոյակապ հագնված կանայք ու երաժշտութիւն: «Վալկիրիայի» առաջին գործողութիւնը լավն է, չէ՞: Հապա «Տրիստանի» վե՞րջը: Ի՞նչ կասեք:

Լոուսընի աչքերը փայլում էին, իսկ երեսն այնպէս էր պաշտառացել, ասես ուրիշ մարդ լինէր: Դեղնած, ներս ընկած աչտերին շատագույն հայտնվեց, և ես մոռացա, որ նրա ձայնը խապտո է ու ահա՛: Այդ մարդու մեջ նույնիսկ որոշ հմայք կար:

— Ա՛յ թե կուզեի այսօր երեկոյան Լոնդոնում լինել: Դուք դիտե՞ք Փել-Մելի՛ ռեստորանը: Ես այնտեղ շատ էի գնում: Փիքազրլի Արրքըսն իր լուսավոր իւնտութիւնով և մարդիկ, մարդիկ... Ենթի պես սիրում եմ այնտեղ կանգնել ու նայել, թե ինչպէս են սլանում տաքսիներն ու ավտոբուսները, ասես երբեք կանգ չեն առնի: Սթրենդն էլ եմ սիրում: Ինչպե՞ս են այն տողերը աստծո ու Զարինգ Քրոսի մասին:

Ես շափազանց զարմացա:

— Թոմփսընի՞, ուզում եք ասել, — հարցրի և արտասանեցի:

Եվ երբ ուժգին է վերան անբուժելի,
Կորուստիդ համար արտասվիր անխոս,
Ու վառ կշողա սանդուղքն Հակոբի՝
Երկնքից իշած մինչև Զարինգ Քրոս:

Նա կամացուկ հառաչեց.

— Ես կարդացել եմ «Դրախտի կերբերը», շատ լավն է:

— Սովորաբար բոլորին դուր է գալիս,— մրմնջացի էս:

— Այստեղ չեք գտնի մեկին, որ գտնե մի բան կարգացած լինի: Նրանք դա անթույլատրելի շքեղություն են համարում:

Թախե՛ծ կար լոուսընի աշքիրում, և ինձ թվաց, որ դուշակում եմ, թե ինչ զգացմունքներ են ստիպել նրան ինձ մոտ գալ: Ես կապող օդակ էի այն աշխարհի հետ, որի կորստյան համար ջգովում էր նա, և կյանքի, որն ինքն այլևս չէր ապրելու Քանի որ բոլորովին վերջերս եղել էի իր սիրելի լոնդոնում, լոուսընը նստում էր ինձ ակնածանքով ու նախանձով: Երևի հինգ բույս էր շէր անցել մեր խոսակցության սկզբից, երբ նա հանկարծ պոռթկաց այն բառերը, որոնք ինձ ցնցեցին իրենց ուժգնությամբ:

— Մինչև կոկորդ կուշտ եմ,— ասաց նա:— Այստեղս է հասել:

— Այդ գեպքում ինչո՞ւ չեք թողնում գնում,— հարցրեցի էս:

Նրա դեմքը մոռավեց:

— Թոքերս մի քիչ հիվանդոտ են: Հիմա այլևս չեմ դիմանա անգրիական ձմռանը:

Այդ պահին մի ուրիշը միացավ մեզ պատշգամբում, և լոուսընը սուզվեց մոռյլ լուսության մեջ:

— Կոկորդը թրջելու ժամանակն է,— ասաց նորեկը:— Ո՛վ հետո մի բաժակ վիսկի կխմի: Լոուսը՞ն:

Լոուսընն ասես ետ եկավ մի հեռավոր աշխարհից: Նա ոտքի ելավ:

— Գնանք բար,— ասաց նա:

Երբ հեռացավ, իմ մեջ նրա հանդեպ ավելի բարի զգացում մնաց, քան կարելի էր սպասել: Լոուսընը թե՛ տարակուսանք էր առաջացնում, թե՛ հետաքրքրություն: Իսկ մի բանի օր հետո հանդիպեցի նրա կնոջը: Գիտեի, որ հինգ թե վեց տարվա ամուսնացածներ են և զարմացա, տեսնելով, որ նա դեռ արտակարգ երիտասարդ է: Երբ լոուսընն ամուսնացել էր հետը, երևի հա-

գիվ տասնվեց տարեկան եղած լինելու Դյուբիշ, սիրունիկ էսկ էր: Իսպանուհուց ավելի թուխ չէր, շատ գեղեցիկ կազմվածք ուներ, փոքրիկ ձեռքեր ու ոտքեր և ճկուն, հեղ իրան: Դիմագծերը գուրեկան էին, սակայն իմ մեջ ամենից ավելի սպաւորվեց նրա նրբագեղությունը. խառնածինները, որպես կանոն, որոշ կոշտություն են ունենում, մի փոքր կոպիտ կառուցվածք, բայց լոուսընի կինը այնպիսի առանձնահատուկ նրբություն ուներ, որ շունչը կարվում էր նայելիս: Ինչ-որ արտակարգ քաղաքակիրթ բան կար այդ կնոջ մեջ, այնպես որ զարմանում էիր, տեսնելով նրան այդ միջավայրում և ակամա հիշում էիր նա. պոլիտե 3-րդի արքունիքի հայանի գեղեցիկուհիներին, որոնք ողջ աշխարհին ստիպել էին խոսել իրենց մասին: Այնպիսի վայելչազեղությունը էր կրում անպաճույճ մուսիխն գլխատն ու ծղոտի գլխարկը, որ միանգամից զգում էիր՝ այս կինը գուրե է հանում: Նորածնությունից: Առաջին անգամ լոուսընի հետ հանգիստելիս նա ըստ երևույթին սյարզապես շքնաղ էր եղել:

Լոուսընը ոչ այնքան վաղուց ժամանել էր Անգլիայից, որպեսզի գլխավորեր անգրիական մի բանկի տեղական մասնաճյուղը և, Սամոա հասնելով շտաբին սեզոնի սկզբին, սենյակ էր վարձել հյուրանոցում: Նա շատ արագ ծանոթացավ բոլորի հետ: Կղզում կյանքը հաճելի է ու հեշտ: Լոուսընին բավականություն էին պատճառում հյուրանոցի սրահի երկար, պարսպասարապ խոսակցությունները և անգրիական ակումբի ուրախ երկունքը, որտեղ տղամարդիկ խումբ կաղմած բիլիարդ էին խաղում: Ծովալճակի շուրջն անկանոն ձգվող Ափիան՝ իր խանութներով, խրճիթներով ու գյուղերով, դուր էր գալիս նրան: Հետո ուխտեղները, երբ գնում էր այս կամ այն պլանտացիոն տուն և մի երկու գիշեր անցկացնում սարերում: Լոուսընն սուաջներում երբեք չէր իմացել, թե ինչ բան է ազատությունը կամ ազատ ժամանակը: Ու հիմա արթել էր արևից: Երբ ձին հեծած անցնում էր թփուտանկրով, դուրսը թեթևակի պատվում էր շքեղատուտող գեղեցիկությունից: Հողն այդ երկրում աննկարագրելիորեն արգավանդ էր: Տեղ-տեղ անտառը պահպանել էր յուր կուսականությունը, արտասովոր ծառերը, փթթող բուսականությունն ու խաղողի ողկույղները միասին տարրելիակ ու հանելուկային տպավորություն էին թողնում:

Բայց առանձնապես լոուսընին գրավում էր Ափիայից երկու մղոն այն կողմ մի գետախորշ, ուր հաճախ երեկոները գնում էր

լողանալու: Այնտեղ, ժայռերի կողքին, մի փոքրիկ վտակ էր աշխույժ խորշոռում և հետո, խոր գետախորշ առաջացնելով, շարունակում վազիլ՝ ծանծաղ ու զուլալ: Բնիկները հաճախ այստեղ էին գալիս լողանալու կամ լվացք անելու: Կոկոսի արմավենիները՝ թեթևամիտ ու նրբազեղ, խիտ աճել էին ափերի մոտ, վարդարված բնքեր շուրջը փաթաթվող բուսականությունը և նայում էին կանաչավուն ջրի մեջ իրենց արտացոլմանը: Ճիշտ այդպիսի տեսարան կարելի է Դիվընշայրի սարերում տեսնել, և, այնուհանդերձ, աարբերություն կար, քանզի այստեղ ամեն ինչ արևադարձային փարթամություն ուներ, կրքոտություն, մի անսակ սիրտ հալեցնող քնքշանվաղություն: Զուրը սառնորակ էր, բայց ոչ սլաղ, և ախորժալի էր կեսօրվա տապից հետո: Այդտեղ լողանալը թարմացնում էր ոչ միայն մարմինը, այլև հոգին:

Այն ժամին, երբ Լոուսընն էր գալիս, գետախորշում մարդկային շունչ անգամ չէր լինում, և նա երկար մնում էր այնտեղ՝ մերթ անշտապ լողում ջրի մեջ, մերթ շորանում երեկոյան արևի տակ՝ վայելելով մենություն և քնքուշ լուսնյան հաճույթը: Այդ ժամանակ նա չէր ափսոսում ոչ Լոնդոնը և ոչ էլ նախկին կյանքը, քանզի այն իր նոր ձևով թվում էր լիարշույն ու կատարյալ: Այստեղ էր, որ առաջին անգամ տեսավ էթելին:

Մի օր Լոուսընը, որ մինչև ուշ երեկո զբաղվել էր հաջորդ օրը մեկնող նավով առարկելիք նամակները գրելով, գետախորշ հասավ, երբ համարյա մութն ընկել էր: Զին կապեց և անշտապ քայլեց դեպի ափ: Մի աղջիկ էր նստած այնտեղ: Աղջիկը նայեց Լոուսընի կողմը և անաղմուկ սահեց ջրի մեջ: Անհետացավ, ինչպես մահկանացուի տեսքից վախեցած հավերճահարս: Լոուսընը դարմացած էր ու հափշտակված: Տեսնես ո՞ր թարքվեց,— մտածեց նա: Հետո ինքն էլ մտավ ջուրը, լողաց հոսանքի ուղղությամբ և շուտով տեսավ աղջկան՝ մի ժայռի վրա նստած: Աղջիկն առանց հետաքրքրության նայեց նրան: Լոուսընը սառնեց: Ողջունի բացակայություն արեց.

— Թալո՞՞ֆա:

Աղջիկը, անսպասելի ժպտալով, պատասխանեց նրան, իսկ հետո նորից նետվեց ջուրը: Նա հարպկորեն լող էր տալիս, և մազերը փովում էին ջրի երեսին: Լոուսընը նայում էր, թե նա ինչպես կտրեց գետախորշը և հետո ափ մազլցեց: Բալախոնը, որն աղջիկը բոլոր բնիկների նման հազին էր լողում, թրջվել կպել էր նրա բարակ մարմնին: Իսկ երբ սկսեց մազերը անհոգ

քամել, առաջվանից ավելի շատ նմանվեց ջրերում կամ անտառներում քնակվող մի վայրի արարածի: Այժմ Լոուսընը տեսավ, ու նա խառնածին է: Լող տվեց նրա կողմը և, ափ դուրս գալով, անզիտեղ զննեց.

— Ուշ եք գալիս լողանալու:

Աղջիկը գուլիք թափով ետ տարավ, և մազերը փարթամ գանգուրներով փովեցին ուսերին:

— Սիրում եմ մենակ լողանալ:

— Ես էլ:

Աղջիկը ծիծաղեց բնիկներին հատուկ մանկական անկեղծությամբ: Հետո գլխին քաշեց մի շոր բալախոն և թացը ներքև թողնելով, դուրս սահեց միջից: Բալախոնը քամեց ու արդեն պատրաստ էր գնալու: Մի բուպե անվճռական կանգ առավ, ապա անշտապ քայլեց: Գիշերը հանկարծակի վրա հասավ:

Լոուսընը ետ գնաց հյուրանոց ու, նկարագրելով աղջկա արտաքինը, սրահում նստած զառ խաղացող տղամարդկանցից շուտով իմացավ նրա ով լինելը: Աղջկա հորը՝ Բրեալը ազգանունով մի նորվեգացու, հաճախ կարելի է տեսնել «Մետրոպոլ» հյուրանոցի բարում ջրով ոտ խմելիս: Դա մի փոքրամարմին ծերուկ էր՝ հինավուրց ծառի պես ճլորված ու ծոմոված: Նա կղզի էր եկել քառասուն տարի առաջ, երբ մի նավում նավապետի օգնական էր: Եղել էր դարբին, առևտրական, պլանտատոր և մի ժամանակ կարգին ունեոր էր, բայց ինսուլինական թվականների հրեշավոր փոթորիկից սնանկանալով, հիմա ապրուստի ոչ մի այլ միջոց չունեց, բացի կոկոսյան արմավենիների փոքրիկ պլանտացիայից: Չորս բնիկ կին էր ունեցել և, ինչպես ինքն էր ասում ընդհատ քմծիծաղով, այնքան երեխա, որ հաղվել չի լինի: Սակայն զրանց մի մասը մահացել էր, մյուս մասն էլ՝ սրվել աշխարհով մեկ, այնպես որ տանը միայն էթելն էր մնացել:

— Ուտելու բան է,— ասաց նեյսընը՝ «Մոանայի» սուպերկարդոն:— Մի երկու անգամ աչքս գցել եմ վրան, բայց օգուտ չկա:

— Սերուկ Բրեալին այդքան հիմար չէ, տղաս,— մեջ ընկավ մի ուրիշը, Միլլեր ազգանունով:— Նա այնպիսի փեսա է ուզում, որը պատրաստ լինի իրեն տաքուկ պահել օր ծերություն:

Լոուսընին տհաճ էր աղջկա մասին այդ տեսակի խոսակցություններ լսելը: Նա խոսք գցեց մեկնող փոստատար նավի

Մասին և այդպիսով շեղեց նրանց ուշադրությունը: Բայց հաջորդ օրը երկկոշան նորից գնաց գետախորշ: Էթելն այնտեղ էր, և մայրամուտի առեղծվածային հմայքը, ջրի խորհրդավոր լուս-
թյունը, արմավենիների հեղանկուն նագանըր՝ այդ ամենը միա-
ցել էին աչքիս գեղեցկությունը՝ հաղորդելով զրան խորություն
ու կախարհանք, որանք սրտում անծանոթ հույզեր էին առա-
ջացնում: Այս անգամ Լոուսընը, չգիտես ինչու, չէր կամենում
խոսել աչքիս հետ Իսկ էթելը չէր էլ նկատում նրան: Անգամ
նրա կողմը չէր նայում: Լողանում էր կանաչ գետախորշում,
սուզվում, ափին հանգստանում, ասես մեն-մենակ լինեք: Լուս-
ընին մի արտասովոր զգացում էր համակել, թե ինքն անտեսա-
նելի է: Այնպես որ սովորած բանաստեղծության կտորներ ու զպրոցում
մի կերպ: Երբեք մտաբերած հունական գրականության տար-
տամ արձագանքներ էին լողում նրա հիշագրության մեջ: Երբ
էթելը փոխեց իր թաց շորերը և անշտապ հեռացավ, Լոուսընը
նրա եզած տեղում միայ մոլորալարդ գտավ: Դա այն ծաղիկն
էր, որը նա կրում էր մազերի մեջ, երբ եկել էր լողանալու և,
ջուրը մտնելուց առաջ հանելով, մոռացել կամ չէր ուզել նորից
զրիսին ամրացնել: Լոուսընը ծաղիկն առավ ձեռքերի մեջ և խոր
հուզմունքով նայեց: Մի վայրկյան բնազդաբար կամեցավ պա-
հել մոտը, ահաջն հետո, սեփական սենտիմենտալությունից
նեղարսած մի կողմ շարժեց: Միտը կամացուկ գարկեց, երբ
սեռավ, թե ինչպես և հոսանքը բշտած ծաղիկը:

Լոուսընը տարակուսում էր, թե հոգու ի՞նչ առեղծված է ազ-
ջրկան ստիպում գալ այդ թաքուն գետախորշը, երբ մեկնում եկին
հանդիպելու ոչ մի հավանականություն չկա: Կողու բնիկները շատ
են կապված ջրին: Կրանք լողանում են ամեն օր, որտեղ հաջողի,
անպայման մեկ, հաճախ երկու անգամ, բայց լողանում են խրմ-
բերով, ծիծաղելով ու զվարթ աղմկելով, միանգամից ամբողջ
բնականորով: Հաճախ տեսնում էիր, թե ինչպես բնիկ ու խառ-
նածին ազգիկները, խումբ կազմած, իրար վրա ջուր են ցայում
ժանձարտենքում, իսկ ծառերի արանքից արեն է ձիկրակում՝
խողովով նրանց մարմինների վրա: Թվում էր, թե այս գետա-
խորշում ինչ-որ գաղտնիք կա, որը պահում է էթելին՝ հակառակ
իր իսկ կամքի:

Հիմա վրա էր հասել գիշերը՝ հանելուկային ու լռիկ: Լուս-
ընը կամացուկ մտավ ջուրը ու ծուլորեն լող տվեց տար մթու-
նյան մեջ: Զուրը, լվում է, գետ պահպանում էր բարախիկ աղջ-

կական մարմնի քաղցր բույրը: Աստղերն ուղեկցում էին առև
դարձող Լոուսընին: Նա իրեն սիրահարված էր զգում սղջ աշ-
խարհին:

Հիմա Լոուսընն ամեն երեկո գետախորշ էր գնում և ամեն
երեկո ատնում էր էթելին: Ծուլով նա հաղթահարեց աչքիս
ամաչկալությունը: Էթելը դարձավ զվարթ ու բնկերական: Միա-
սին նստում էին գետախորշի վերեկ ապաստաններին, որտեղ ջուրն
առանձնապես տրագ էր հոսում, կամ կողք կողքի պսակում
դիմացի Էլուստին, դիտելով, թե վրա հասնող մթնշաղջն ինչպես
է գետախորշը պարսպում խորհրդավորությամբ: Նրանց հան-
գիտումների մասին պիտի անխոսափելիորեն իմացվեր, հարու-
վային ծովերում բոլորը գիտեն միմանց գործերի մասին, և Լուս-
ընը դարձել էր հյուրանոցի տղամարդկանց կուպիտ կատակների
թիրախը: Նա ծպտում էր ու թույլ տալիս, որ խոսեն: Չարձեր
անգամ հերքել նրանց գուհիկ ակնարկները: Լոուսընի զգաղ-
մանքները բացարձակապես մաքուր էին: Նա սիրում էր էթելին
ինչպես բանաստեղծ կսիսեր լուսինը: Կրա մասին մտածում
էր ոչ թե սրպես կնոջ, այլ որպես մի տարաշխարհիկ արարած:
Էթելը գետախորշի ոգին էր:

Մի օր հյուրանոցում, բարձր մոտով անցնելիս՝ Լոուսընը տե-
սավ ծերուկ Բրեալդին՝ ինչպես միշտ հնամաշ երկնագույն առ-
տահագուստը հագին: Քանի որ դա էթելի հայրն էր, Լոուսընի
մեջ ցանկություն առաջացավ խոսել նրա հետ, ուստի մոտեցավ
վաճառատեղանին, գլխով բարեկց և, իր համար խմիրք պատվի-
րելով, ասես պատահաբար շատ եկավ ու հրավիրեց ծերունուն
միանալ իրեն: Մի քանի րոպե շատախոսեցին տեղական գոր-
ծերի մասին, և Լոուսընը տաճարային գրաք, որ նորվեկացին
խորամանկ կապույտ աչքերով պնդում է իրեն: Բրեալդն անգու-
շարժուձեք ունեւր, նա սկիհայտորեն բծում էր, և այսուհան-
դերձ հակառակորդ հետ անհավասար պայքարում ջարդախոված
այդ ծերունու ստրկամիտ պահելով իր ստիպանով: Էին
նախկին վայրագության հետքերը: Լոուսընը հիշեց, որ նա մի
ժամանակ ստրկավաճառությունը զբաղվող առաջատար առևտրի
նավապետ է Լոնդոնի կենտրոնի որսացող, ինչպես նրանց անվանում
են իսկաղջ օվկիանոսում: Բրեալդը կրծքին լայն հողվածք ունեւր՝
Սոդոմոնյան կղզեցիների հետ բնիհարումներից մեկի: Նեանանքը:
Հնչեց երկրորդ նախաճաշի զանգը:

— Դե, ես պետք է գնամ, — ասաց Լոուսընը:

— Ինչո՞ւ մի անգամ մեր տունը չեք գալիս, — խուստ ձայնով
ասաց Բրեւալզը: — Շատ շքեղ շենք ապրում, բայց ուրախ կլինե՞նք
ձեզ տեսնել: Էթեյն էլ ճանաչում եք:

— Հաճույքով կգամ:

— Ամենահարմարը կիրակի ցերեկն է:

Բրեւալզի խրճիթը՝ խարխուլ ու կեղտոտ, գտնվում էր կոկոսի
ծառերի պլանտացիայում՝ Վալլիմա տանող զխալոբ ճանա-
պարհից քիչ այն կողմ: Շուրջը բանանի հսկայական ծառեր էին
աճում: Պատառտված տերևները զրանց ցնցոտիներ հագած սի-
րունիկ կնոջ ողբերգական գեղեցկություն էին հաղորդում: Ամեն
բան փնթի ու անխնամ էր: Բակում վազվզում էին փոքրիկ, սև
խոզերը՝ նիհար ու մեղքները դուրս ցցված, իսկ հավի ճտերն
ազմուկով կլկլում էին, երբ հաջողվում էր այս ու այնտեղ թափ-
թրված մնացորդներից փախցնել: Երեք-չորս բնիկ փովել էին
պատշգամբում: Երբ կուսընթ հարցրեց, թե Բրեւալզն ուր է, ծե-
րունի իր ղոզողուն ձայնով կանչեց, և նա ներս գնաց ու վեր-
ջինիս գտավ հյուրասենյակում՝ հավամրգի արմատից սարքած
մի հին ծխամորե ծխելիս:

— Նստեք ու զգացեք ձեզ ինչպես տանը, — ասաց ծերուկը: —
Էթեյը դեռ սիրունանում է:

Ներս եկավ էթեյը: Նա կիսաշրջազգեստ ու բլուզ էր հագել
և մազերը սարքել հվրոպական ձևով: Թեև հիմա շունի ամեն
երեկո գետախորշ եկող աղչկա վայրի, ամաչկոտ նրբագեղու-
թյունը, բայց թվում էր ավելի սովորական ու համապատասխա-
նորեն ավելի մատչելի: Նա և կուսընթ իրար ձեռք սեղմեցին:
Առաջին անգամ կուսընթ դիպավ նրա ձեռքին:

— Հուսով եմ, մեզ հետ մի բաժակ թեյ կլիմեք, — ասաց նա
կուսընթ դիտեր, որ էթեյը միսիոներական դպրոց է հաճա-
խել, և զոհ էր ու միաժամանակ զգացված, որ հանուն իրեն
աղջիկը աշխատում է բարձրաշխարհիկ կնոջ շարժումներ քնո-
օրինակել: Սեղանը պատրաստ էր, և մի բուպից Բրեւալզի շոր-
քորդ կինը ներս բերեց թեյնիկը: Այդ գեղեցիկ, արդեն ոչ այն-
քան երիտասարդ բնիկուհին հաղիվ մի քանի բառ էր անգլերեն
խոսում: Միայն ժպտում էր ու ժպտում: Թեյը բավական հան-
դիսավոր ճաշկերույթի էր վերածվել՝ մեծ քանակությամբ հաց
ու կարագով և տարբեր տեսակի շատ քաղցր կարկանդակներով,
զրույցն էլ ձևական բնույթ էր կրում: Հետո մի էնճոտոված ծեք
կին անձայն ներս եկավ:

— Դա էթեյի տատիկն է, — ասաց ծերուկ Բրեւալզը, ազմու-
կով թքելով գետնին:

Պատավը նստեց աթոռի ծայրին, այնքան անճարակորեն, որ
երեսաց, թե ինչքան անսովոր է դա նրա համար և ինչքան ավելի
լավ կզգար իրեն հատակին, ու մնաց լուռ նստած՝ անշարժ,
ըզացող աչքերը հառած կուսընթին: Խրճիթի ետևը՝ խոհանո-
ցում, ինչ-որ մեկը սկսեց կոնցերտինո նվագել, և երկու թե երեք
ձայն միացան ու մի սաղմոս ձիգ տվին: Բայց երգում էին ավե-
լի շուտ բավականություն ստանալու համար, քան թե ասովա-
ծափախուժյունից:

Երբ կուսընթ վերադառնում էր հյուրանոց, նա անսովոր եր-
ջանիկ էր զգում իրեն: Այդ մարդկանց խառնափնթոր ապրելու ձևը
հուզել էր նրան, իսկ միսիս Բրեւալզի ժպտուն բարեհոգության,
փոքրիկ նորվեգացու Ֆանտաստիկ կյանքուղու և ծեր տատի
հանելուկային փայլվույն աչքերի մեջ նա ինչ-որ տարաշխար-
հիկ ու գրավիչ բան էր գտնում:

Կուսընթ պատկերացրեց, թե հեռանում է հյուրանոցից, որն
արդեն սկսել էր զվզեցնել, և բնակություն հաստատում իր սե-
փական փոքրիկ խրճիթում՝ կոկիկ ու սպիտակ, ծովի գիմաց,
այնպես, որ բազմազույն ու խալտաբեղտ ծովալճակն անբնդհատ
աչքի առաջ լինի: Նա սիրում էր այդ գեղեցիկ կղզին: Այլևս
կնդոնն ու Անգլիան ոչինչ էին կուսընթի համար, նա ուրախ
կլինեք իր օրերի մնացած մասն անցկացնել այս մոտացված
տեղում, այդքան հարուստ կյանքի բարիքներով՝ սիրով ու եր-
ջանկությամբ: Կուսընթ որոշեց, ինչ խոչընդոտներ էլ լինեն՝
իրեն ոչինչ չպիտի ետ պահի էթեյի հետ ամուսնանալուց:

Սակայն խոչընդոտներ չկային: Բրեւալզի տանը նա միշտ էլ
ցանկալի հյուր էր: Երբուրեք շատ սիրալիք էր, իսկ միսիս Բրեւալ-
զը ժպտում էր անդադար: Երբին ինչ-որ բնիկներ էին աչքի
բնկնում, որոնք կարծես թե այդ տան անդամներն էին, իսկ մեկ
անգամ լավ-լավ հագած բարձրահասակ մի երիտասարդի
հանդիպեց՝ մարմինը դաշված, մազերը կրով սպիտակեցրած,
նստած Բրեւալզի կողքին: Ինչպես բացատրեցին, դա միսիս
Բրեւալզի եղբոր տղան էր: Բայց մեծ մասամբ բնիկները կու-
սընթի աչքից հեռու էին մնում: Էթեյն իրեն շատ զվարթ էր պա-
հում: Կուսընթ խանդավառությամբ էր լցվում, տեսնելով, թե
աղչկա աչքերն ինչպես են փայլում իրեն տեսնելիս: Էթեյը հմա-
լիչ էր ու պարզամիտ: Կուսընթ հիացած ունկնդրում էր միսիո-
ՍՉ—Լուսին և վեցպենսանց

ներական դպրոցի և բուրձրի մասին նրա պատմութիւններին՝ Միսսիս, ամեն երկու շաբաթը մեկ, երբ նոր ֆիլմ էր գալիս, կինոթատրոն էին գնում, իսկ հետո՝ մնում պարելու։ Կղզու բուրձր մասերից այդտեղ եկողներ կային, քանի որ զվարճալիքները սակավաթիվ էին Ուփոլուում, ուստի այնտեղ կարելի էր հանգիպել տեղի ողջ ընտիր հասարակութանը, — սպիտակ տիկնայք, որոնք իրենց շատ առանձնացած էին պահում, խառնածիներ՝ շատ պիւրճալու իրենց ամերիկյան հագուստներով, և բնիկներ՝ բալախոն հագած թուխ աղջիկներ ու երիտասարդներ՝ իրենց համար անսովոր սպիտակ շավարներով ու կոշիկներով։ Ամեն ինչ շատ ճոխ էր և ուրախ։ Էթիլը գոհունակութամբ իր բնկերուհիներին ցուցադրում էր սպիտակամորթ երկրպագուին, որն իրենից ոչ մի բայլ չէր հեռանում։ Շուտով լուր տարածվեց, թե Լոուսընը պատրաստվում է նրա հետ ամուսնանալ, և էթիլը բնկերուհիները նախանձով էին նայում նրան։ Խառնածիներ համար սպիտակամորթ ամուսին ճարելը մեծ բան էր, նույնիսկ հենց այնպես կապվելը շեղածից լավ էր, թեև հաստատ չէր կարելի ասել, թե վերջում ինչ գուրք կգա։ Իսկ Լոուսընը, շնորհակալ լինելով իր դիրքի՝ բանկի տնօրեն, գտնում էր կղզու ամենարդհիվ իր փեսացուներից մեկը։ Եթե նա էթիլով այդքան կլանված լիներ, կնկատեր իրեն հետաքրքրությամբ նայող բազմաթիվ աչքերը, կտեսներ նաև սպիտակամորթ տիկնանց հայացքները և կնկատեր, թե ինչպես են նրանք գլուխները մոտեցնում իրար ու բամբասում։

Հետո, մի օր, երբ հյուրանոցում ապրող տղամարդիկ քնից առաջ վիսկի էին խմում, Նելսընը հանկարծ հայտարարեց.

— Լսեք, ասում են, Լոուսընն այն աղջկան պետք է առնի։
— Ուրեմն հիմարի մեկն է, — ասաց Միլլերը։

Միլլերը գերմանական ծագումով ամերիկացի էր, նրա ազգանունն առաջ Մյուլլեր էր եղել։ Նա խոշոր տղամարդ էր՝ գեթ ու ճաղատ, կլոր, մաքուր սափրած երեսով։ Աչքերին ոսկե շքանակներով ակնոց էր գնում, որը նրա հայացքին մեղմութիւն էր հաղորդում, իսկ շավարը միշտ մաքուր էր ու սպիտակ։ Միլլերը թունդ խմող էր՝ մշտապես պատրաստ «տղերքի» հետ ամբողջ գիշերն անցկացնելու սեղանի շուրջը, սակայն նա երբեք չէր հարբում՝ զվարթ էր ու սիրալիր, բայց միշտ հավաքված։ Նրա գործը ոչ մի դեպքում չէր տուժում, — Միլլերը Սան Ֆրանցիսկոյի մի ֆիրմա էր ներկայացնում, որ ամեն տեսակ ապրանք

էլ ներմուծում կղզի՝ լիթ, մեքենաներ ու էլ ինչ ասես, և նրա բնկերավարութիւնը առեւտրական բազմաթիվ հնարքներից մեկն էր։

— Զգիտի, թե իրեն ինչ է սպասում, — ասաց Նելսընը։ — Մեկը պիտի նրան խելքի բերի։

— Ինձ որ լսես, շեխ խառնվի, քո ի՞նչ գործն է, — ասաց Միլլերը։ — Երբ մարդու խելքին փշում է հիմարութիւն աննի, ճար չկա՝ պիտի թողնես, որ անի։

— Ես երկու ձեռքով կողմնակից եմ տեղացի աղջիկների հետ լավ ժամանակ անցկացնելու, բայց երբ բանը համնում է ներանց առնելուն, ասում եմ, չէ՛, ինձ կներհեք։

Զափիւնը, որ այնտեղ էր, խոսեց.

— Ես շատ եմ տեսել էդպիսի բան անողների՝ վերջը լավ չի եղել։

— Լավ կաների հետը խոսեիր, Զափիւն, — ասաց Նելսընը։ — Դու նրան բոլորից լավ ես ճանաչում։

— Զափիւնն ինձ որ լսի, ոչ մի բանի էլ չի խառնվի, — ասաց Միլլերը։

Նույնիսկ այն օրերին Լոուսընն առանձին ժողովրդականութիւն չէր վայելում, և ոչ մեկն այնքան չէր հետաքրքրվում նրանով, որ իրեն նեղութիւն պատճառեր։ Միսսիս Զափիւնը երկուերեք սպիտակամորթ տիկնանց հետ խոսեց այդ մասին, սակայն նրանք բավարարվեցին ափսոսանք հայտնելով, իսկ երբ Լոուսընը հաստատ տեղեկացրեց, որ պատրաստվում է ամուսնանալ, արդեն շափազանց ուշ էր մի բան անել։

Մի տարի Լոուսընը երջանիկ էր։ Նա ծովածոցի մոտ մի խրճիթ գնեց՝ բնիկների գյուղից ոչ հեռու։ Խրճիթը գտնվում էր արմավենիների մեջ ու նայում էր Խաղաղ օվկիանոսին։ Էթիլը սքանչելի քայլվածք ուներ՝ հեղաճկուն ու նրբագեղ, ասես անտառային մի գազանիկ լիներ։ Նա զվարթ էր։ Շատ էին ծիծաղում և դատարկ բաներից խոսում։ Երբեմն հյուրանոցի քնակիչներից մեկնումեկը գալիս և երեկոն նրանց հետ էր անցկացնում, իսկ հաճախ էլ կիրակի օրերը գնում էին որևէ պլանտատորի մոտ, որ բնիկի հետ էր ամուսնացել։ Մերթընդմերթ Ափիայի խառնածին խառնութեաներից մեկը երեկույթ էր կազմակերպում, և նրանք ներկա էին լինում։ Խառնածինները Լոուսընին հիմա միանգամայն ա՛յլ կերպ էին վերաբերվում։ Ամուսնութիւն չընորհիվ Լոուսընը գարձել էր նրանցից մեկը, և նրան հիմա Բեր-

Քի էին անվանում: Թեանցուկ էին անում և մեզրը թփթփացնում: Լոուսընը սիրում էր այդ հավաքությունների ժամանակ էթելին նայել: Վերջինիս աչքերը շողում էին, և նա ծիծաղում էր: Լոուսընին հաճույք էր պատճառում այդ շլացնող կենտուրալությունները: Երբեմն էթելի ազգականներն էին գալիս՝ ոչ միայն ծիրուկ Բրեւալդն ու մայրը, այլև զարմիկներն ու զարմուհիները՝ բալախոն հազած բարալիկ բնիկուհիներ և լավու-լավալով սղամարդիկ ու աղաներ՝ մազերը շիկակարմիր ներկած և մարմինները խնամքով դաշած: Բանկից վերադառնալով, Լոուսընը տեսնում էր նրանց իր տանը նստած և ներողամտորեն ծիծաղում էր.

— Վերջը մեզ ոտքով գլխով կույ են տալու,— ասում էր նա:

— Նրանք իմ հարազատներն են: Երբ ինձ մի բան են խնդրում, չեմ կարող շահել:

Լոուսընը գիտեր, ու երբ սպիտակամորթին ամուսնանում է բնիկուհու կամ խառնածինի հետ, պետք է պատրաստ լինի, որ վերջինիս հարազատներն իրեն ոսկու հանքի տեղ դնեն: Նա ավերի մեջ էր առնում էթելի գեմքը և համբուրում էր նրա ալ շուրթերը: Դժվար էր էթելին հասկացնել, որ եթե իր ուժիկը մի բան էլ շատ էր ամուրիի համար, ապա տուն ու կին պահելու համար այն պետք է մի քիչ խնայողաբար ծախսել: Հետո էթելը տղա ունեցավ:

Ահա այդ ժամանակ, երբ Լոուսընը բազուկների մեջ առավ մանկանը, նրա սիրտը հանկարծ ցավեց: Չէր սպասում, որ իր զավակն այդքան թխամաշկ կլինի: Ի վերջո երեխայի արյան մի քառորդն էր միայն բնիկի, ախր ինչու պիտի սովորական անգլիացի մանկան նման չլիներ: Մինչդեռ իր գրկում կծկված, դեղնավուն, դուխն արդեն թուխ աղվամազերով ծածկված, հսկայական սև աչքերով այդ երեխան հեշտությամբ կարող էր բնիկի տեղ անցնել:

Ամուսնությունն առաջին իսկ օրից գաղութարնակ սպիտակամորթ կանայք սկսել էին արհամարհել նրան: Երբ Լոուսընը հանդիպում էր այն տղամարդկանց, որոնց տներում սովոր էր ճաշել ամուրի ժամանակ, վերջիններս մի փոքր շփոթվում էին և շափազանց ջերմություն ցուցաբերելով փորձում բողբոջել գա:

— Միսիս Լոուսընը լա՛վ է,— ասում էին նրանք:— Բախտավոր մարդ էր: Չտեսնված սիրուն ազգիկ է:

Սակայն եթե իրենց տիկնանց հետ էին լինում Լոուսընին ու

էթելին հանդիպելիս, անհարմար դրություն մեջ էին ընկնում, երբ կանայք էթելին ողջունում էին գլխի գոտող շարժումով: Լոուսընը ծիծաղում էր.

— Ախր նրանք առաջինից մինչև վերջինը մահու շափ ձանձրալի են,— ասում էր նա:— Գիշերը քունս չի տանի, չեմ քնի, էթե իրենց քոտտ երեկույթներին ինձ շհարվորեն:

Բայց հիմա դա նրան սկսել էր մի քիչ ջղայնացնել:

Փոքրիկ թուխ մանկիկը երեսը կնճոտուց: Դա իր որդին էր: Լոուսընը հիշեց Ափրայի խառնածին երեխաներին: Նրանք սնառողջ տեսք ունեին՝ դեղնած ու գունատ և արտառոց կերպով վազածամ հասունացած էին: Լոուսընը տեսել էր նրանց նավով Նոր Զելանդիա՝ դպրոց գնալիս (ընտրում էին այնպիսի դպրոցներ, որտեղ բնիկի արյուն ունեցող երեխաներին ընդունում էին): Նրանք իրար գլխի էին հավաքվում՝ հանդուգն և միաժամանակ երկշոտ, և սպիտակամորթներից դիմագծերով տարբերվում էին տարօրինակ կերպով: Իրար հետ տեղական լեզվով էին խոսում: Իսկ երբ մեծանում էին, տղամարդիկ իրենց բնիկի արյան պատճառով սովորականից ցածր աշխատավարձ էին ստանում: Ազգիկները դեռ կարող է սպիտակամորթի հետ ամուսնանալին, բայց տղաներն ընտրություն չունեին, կամ իրենց նման խառնածինի հետ պիտի ամուսնանալին, կամ բնիկի: Լոուսընը հաստատ որոշում կայացրեց՝ իր որդուն հետո տանել նման ստորացումից: Պետք էր վերադառնալ Նյու-Կասթլ՝ ինչ գնով էլ լիներ: Իսկ երբ ներս գնաց և տեսավ անկողնում պառկած էթելին՝ փխրուն ու նուրբ, բնիկ կանանցով շրջապատված, նրա վճռականությունն ամրապնդվեց: Էթելը հայրենիքում ավելի լրիվ կպատկաներ իրեն: Լոուսընն այնքան կրքոտ էր սիրում նրան, այնպես էր ուզում մի հոգի ու մարմին դառնալ հետը, այնինչ այստեղ, նա դիտակցում էր, տեղի կյանքի հետ շափից ավելի խոր արմատներ են կապում նրան, ուստի միևնույն է, ինքը միշտ մի փոքր պակաս կստանա իր սիրելիից:

Լոուսընը, գաղտնապահության ազոտ մի բնագրից դրված, շարունակում էր սուս-փուս աշխատանքի գնալ, բայց և միաժամանակ նամակ դրեց իր գարմիկին, որն Աբբրդինում մի նավագնացային Ֆիրմայի գործընկեր էր, թե իր առողջությունը (ինչի համար որ շատերի նման Ափրա էր եկել) այնքան էլ լավացել, որ ինքը պատճառ չի տեսնում Նյու-Կասթլ վերադառնալու հնդրեց գործադրել չուր ողջ ազգացությունը, որպեսզի իր հա-

մար աշխատանք ճարի, ինչքան էլ վարձատրութիւնը ցածր լինի: Լոուսընն ուզում էր ապրել Գիսալոյում, որտեղ եղանակը հասկապես հարմար էր թոքերի հիվանդութիւնը տառապողի համար: Նավակներն Աբրորդինից Սամոա հինգ-վեց շաբաթում էին հասնում, իսկ գրել հարկ եղավ մի քանի անգամ: Էթելին նախապատրաստելու համար ահագին ժամանակ կար: Նա էլ իր հերթին երեխայի պես հրճվում էր: Լոուսընը բավականութիւն էր ստանում տեսնելով, թէ նա ինչպես է ընկերուհիները մոտ պարծենում, որ Անգլիա է գնալու, — դա մի աստիճան վերին էր էթելի համար, նա իսկական անգլուհի կդառնա այնտեղ. նա նաև հուզված էր մոտալուտ հետաքրքիր ուղևորութիւն մտքից: Երբ վերջապես Լոուսընին հեռագրով հայանեցին, որ նրան Քինքարդինեշայրի բանկում պաշտոն է առաջարկված, էթելի ուրախութիւնը շափ ու սահման չկար:

Երբ երկարատև ճանապարհորդութիւնից հետո նրանք բնակութիւն հաստատեցին գրանիտի շէնքերով շտաբանական քաղաքում, Լոուսընը հասկացավ, թէ իր համար ինչ մեծ բան է կրկին յուր ժողովրդի մեջ ապրելը: Ափիսայում անցկացրած երեք տարին քառոր էր թվում այժմ, և նա թեթևութիւն հոգոցով վերադարձավ այն միակ կյանքին, որ նորմալ էր համարում: Հաճելի էր կրկին գոլֆ խաղալ, ձուկ որսալ. որսալ ինչպես հարկն է. — ետադառնալ օվկիանոսում դա մի մեծ ուրախութիւն էր՝ բավական էր կարթոյ գցելը, և արդեն մեկը մյուսի ետևից հսկայական ալարկոտ ձկներ էին դուրս բաշում լեփ-լիցուն ծովի ընդերքից. հաճելի էր ամեն օր թերթում այդ օրվա նորութիւնները կարգալ և հանդիպել թո տեսակի մարդկանց, մարդիկ, որոնց հետ խոսելու նշույթ ունես: Նաև հաճելի էր ուտել միս, որ չէր ստանցված ու խմել կաթ, որ պահածո չէր: Ամուսիններն այժմ ավելի առանձնացած ու ինքնուրույն էին ապրում, քան այնտեղ՝ ետադառնալ օվկիանոսի ափին, և Լոուսընն ուրախ էր, որ էթելն այժմ բացառապես իրեն է պատկանում: Երկու տարվա ամուսնութիւնից հետո նա ավելի քան նվիրվածորեն էր սիրում իր կնոջը, մի րոպե չէր կարողանում առանց նրա և այժմ ավելի սերտ միութիւն պահանջ էր դրում: Բայց, որքան էլ տարօրինակ է, առաջին պահի հուզմունքից հետո էթելը նրա սպասածից ավելի քիչ հետաքրքրութիւն ցուցաբերեց նոր կյանքի նկատմամբ: Նա չէր ընտելանում իր շրջապատին ու միշտ մի քիչ քնատ էր: Երբ շքանալ աշունը մթնեց-դարձավ ձմեռ, էթելը սկսեց բողբոջել ցըր-

տից: Առավոտվա կեսն անկողնում պառկած էր լինում, իսկ օրվա մնացած մասն անցկացնում էր բազմօցի վրա՝ երբեմն կարգալով, սակայն ավելի հաճախ պարապ: Շատ ճնշված տեսք ուներ:

— Ոչինչ, սիրելիս, — ասում էր Լոուսընը: — Շատ շուտով կսովորես դրան: Սպասիր, ամառը գաւ: Կարող է Ափիսայից ոչ պակաս շոգ լինի:

Նա արդեն քանի տարի է այսքան լավ ու ուժեղ չէր զգացել, ինչքան հիմա:

Անփութութիւնը, որով էթելը տնտեսութիւնն էր վարում, Սամոայում առանձին նշանակութիւն չուներ, բայց այստեղ միանգամայն անտեղի էր: Երբ մեկնում եկեր գալիս էր, Լոուսընը չէր ուզում, որ իր տունը փնթի երևար, և ծիծաղելով ու էթելին հանաքով ծաղրելով, ինքն էր սկսում կարգի բերել սենյակը: Էթելն ալարկոտ դիտում էր նրան: Նա ժամերով խաղում էր իր տղայի հետ: Խոսում էր հետն իր երկրի մանուկների լնգվով: Լոուսընը, նրան մի քիչ ցրելու համար, ետանդով սկսեց բարեկամութիւն հաստատել հարեանների հետ, և հաճախ ամուսինները գնում էին փոքրիկ երեկուցիների, որտեղ տիկնայք բալլադներ էին երգում, իսկ տղամարդիկ լուռ ու բարյացակամ ժպտում էին՝ փայլելով երանութիւնից: Էթելն ամաչում էր: Նա միշտ կարծես առանձին նստած լիներ: Երբեմն Լոուսընը, հանկարծակի տաղնապով համակված, հարցնում էր՝ երջանի՞կ է նա արդյոք:

— Այո, ես շատ երջանիկ եմ, — պատասխանում էր էթելը:

Սակայն նրա աչքերի խորքում մի անհիմանալի զգացում էր թաքնված: Այնքան էր ինքն իր մեջ ամփոփվել, որ Լոուսընը հասկացավ. ինքն այդ կնոջ մասին շգիտե ավելի շատ, քան այն օրը, երբ առաջին անգամ տեսավ նրան գետախորշում լողանալիս: Մի անգուր զգացում ուներ, թէ էթելն իրենից ինչ-որ բան է պահում, և քանի որ պաշտում էր նրան, շատ էր տանջվում դրանից:

— Գու Ափիան շես աստուտ, չէ՞, — մի օր հարցրեց նա:

— Օ՛, ոչ, այստեղ շատ հաճելի է:

Մի աղոտ վատ նախազգացում Լոուսընին գրգեց անբարենպաստ արտահայտվել կղզու և նրա բնակիչների մասին: Էթելը ժպտաց ու ոչինչ չպատասխանեց: Նա շատ հազվադեպ Սամոայից կապոցով նամակներ էր ստանում, և հետո մի երկու օր քայլում էր քարացած, գունատ դեմքով:

— Ինձ ոչինչ չի ստիպի ետ գնալ այնտեղ, — մի անգամ ասաց Լոուսընը: — Դա սպիտակ մարդու տեղը չէ:

Բայց շուտով նա սկսեց զգալ, որ երբեմն, իր տանը շեղած ժամանակ, էթելը լաց է լինում: Ափիսալում նա սիրում էր խոսել, սեղագար ճովողում էր՝ քննարկում իրենց համատեղ կյանքի ամեն մի մանրամասնը, բամբասում, սակայն այժմ նա աստիճանաբար լուսկյաց էր դառնում, ու թեև Լոուսընը գնալով ավելի մեծ ջանքեր էր գործադրում իր սիրելիին զվարթացնելու համար, վերջինս մնում էր անտարբեր: Լոուսընին թվում էր, թե էթելի հիշողություններն անցյալի մասին իրենից հեռու են տանում նրան, և նա խելագարվելու աստիճան խանդում էր կնոջը դեպի կողին, ծովը, Բրեւայը և այն բոլոր թխամաշկ մարդիկ, որոնց հիմա սարսափով էր հիշում: Երբ էթելը խոսում էր Սամոայից, նա սկսում էր կծու հեղձել: Մի օր ուշ երեկոյան, գարնանը, երբ կենդանիներն արդեն սկսում էին տերևներ արձակել, Լոուսընը գոլֆ խաղալուց տուն վերադարձավ և տեսավ, որ էթելը ոչ թե սովորականի նման պառկած է բազմոցին, այլ կանգնած է լուսամուտի մոտ: Պարզ էր, որ նա սպասում էր ամուսնու վերադարձին: Ու վերջինս սենյակ մտավ թե չէ, խոսեց: Ի վարմանս Լոուսընի՝ խոսեց սամոերեն:

— Էլ չեմ դիմանում: Այլևս այստեղ չեմ կարող ապրել: Ատում եմ, Ատում եմ այս ամենը:

— Ի սեր աստծո, քաղաքակիրթ լեզվով խոսիր, — գայրացած ասաց Լոուսընը:

Էթելը մոտեցավ նրան ու գրկեց անշնորհք կերպով: Այդ շարժումի մեջ ինչ-որ բարբարոսական բան կար:

— Արի գնանք այստեղից: Ետ գնանք Սամոա: Եթե ինձ ստիպես այստեղ մնալ, ես կմեռնեմ: Ես տուն եմ ուզում:

Հանկարծ նրա ավունը մարեց՝ վերածվելով արցունքների հեղեղի: Լոուսընի վայրույթը շքացավ, և նա կնոջը նստեցրեց ծնկներին: Սկսեց բացատրել, որ իր համար անհնար է աշխատանքից ձեռք բաշել, չէ՞ որ ի վերջո զրանով է մի կտոր հաց վաստակում: Ափիսայի իր տեղն արդեն վաղուց ուրիշին են տվել: Ի՞նչ ունի այնտեղ անելու նա փորձում էր համոզել բացատրել, թե որքան անհարմար է կյանքն այնտեղ, ինչպիսի ստորացումներ են իրենց սպասում և թե ինչ դառնություններ դա կպատճառի իրենց տղային:

— Շոտլանդիան հրաշալի տեղ է սովորելու և ուրիշ նման

քաների համար: Գարցոցները և՛ լավն են, և՛ էժան, իսկ հետո կարող է ներքոգին՝ համալսարան գնալ: Ես նրան իսկական շոտլանդացի կդարձնեմ:

Երբխային էնդրյու էին անվանել: Լոուսընն ուզում էր, որ նա բժիշկ դառնա: Հետո էլ սպիտակամորթ կնոջ հետ ամուսնանա:

— Ես չեմ ամաշուս, որ կիսով չափ բնիկ եմ, — մտայն ասաց էթելը:

— Իհարկե ոչ, սիրելիս: Ի՞նչ ամաշուս բան կա:

Նա աննկարագուելի թուլություն զգաց, երբ կնոջ փափուկ այտը հեղվեց իր այտին:

— Դու չգիտես, ինչ խելքան եմ քեզ սիրում, — ասաց նա: — Աշխարհի բոլոր բարիքները կտայի, միայն թե իմանայիր, թե ինչ կա իմ սրտում:

Նա փնտրեց-գտավ էթելի շրթունքները:

Եկավ սմտոր: Լեռնային հովիտը կանաչ էր ու անուշաբույր, և սարերը ուրախ ծածկվել էին հավամբույ: Մի արևոտ օրը հետևում էր մյուսին այդ անհոգ անկյունում, և կենդանի սուկերը ճանապարհի շոփից հետո հաճելի էր ու գրավիչ: Էթելն այլևս Սամոայի մասին չէր խոսում, և Լոուսընն էլ առաջվա նման չէր նյարդայնանում: Մտածում էր, թե երևի կինը հաշտվել է շրջապատին ու միաժամանակ զգում էր իր սերն այնքան կրթոտ է, որ նրա սրտում թախծի տեղ չի կարող թողնել: Մի օր տեղի բժիշկը փողոցում կանգնեցրեց նրան:

— Լսեցեք, Լոուսըն, ձեր սիրկինը պետք է զգուշ լինի մեր լեռնային վտակներում լողանալիս: Գիտեք, սա խաղաղ օվկիանոսը չէ:

Լոուսընը զարմացած էր ու չկարողացավ թաքցնել դա:

— Ես չգիտեի, թե նա լողանում է:

Բժիշկը ծիծաղեց:

— Բազմաթիվ տեսնողներ են եղել: Սկսել են մի բիշ խոսել այդ մասին, դե, որովհետև, գիտե՛ք, լողանալու համար փոքր-ինչ տարօրինակ տեղ է ընտրել՝ կամրջի մոտի գետախորշը, իսկ այնտեղ լողանալ չի թույլատրվում, բայց բանը դա չէ: Ես չգիտեմ, ինչ ինչպես է ջրի սառնությունը դիմանում:

Լոուսընը զիտեր այն գետախորշը, որի մասին խոսում էր բժիշկը, և հանկարծ նրա մտքով անցավ, որ ինչ-որ տեղ դա ճիշտ

նման էր Ուփոլուի գետախորշին, որտեղ էթելն ամեն երկկո լուզանալու սովորություն ունենալ: Մի վճիտ լեռնային վտակ վազում էր սյուր-սուր, քարքարոտ հունով, ուրախ բարձրով ու խոզ, զուլալ, փոքրիկ ավազոտ ափով գետախորշ կազմում: Կողքը խիտ ծառեր էին աճել՝ ո՛չ արմաշենիներ, այլ հաճարենիներ, և արեւ տերեւների արանքից պսոթկալով խաղ էր անում փայլփրլուն ջրի հետ: Լոուսընը ցնցված էր: Նա մտովի տեսավ, ինչպես է էթելը ամեն օր գնում աշնտեղ, ափին հանվում և սահում մտնում ջրի մեջ, որը սառն է, շատ ավելի սառը, քան իր հայրենիքում սիրած գետախորշի ջուրը, և մի բուպե կրկին վերապրում է տնցած-գնացած զպացումը: Մեկ անգամ ևս տեսավ նրան որպես գետակի տարօրինակ, վայրի ոգի և հանկարծ մի ֆանտաստիկ միտք անցավ գլխով՝ հոսող ջուրը կանչում է էթելին: Այլ օրը ցերեկը Լոուսընը գնաց գետ: Նա զգուշորեն ճանապարհ էր հարթում ծառերի միջով և խոտածածկ գետինը մեռցնում էր նրա ստնաձայնները: Շուտով հասավ մի կետի, որտեղից երևում էր գետախորշը: էթելը, նստած ափին, նայում էր վար՝ ջրի մեջ: Անշարժ էր, ասես քար կտրած լիներ: Թվում էր, թե ջուրն անդիմադրելիորեն ձգում է նրան: Տեսնես ի՞նչ տարօրինակ մտքեր էին հաժում նրա գլխում: Վերջապես նա վեր կացավ և մեկ կամ երկու բուպե անհետացավ սևազուշտից, հետո նորից երևաց՝ հսկայն բալախոն, և փոքրիկ բարիկ ստքը մեղմորեն զրեց մամուտ գետնին: Մտանցավ ափին ու փափուկ, առանց հողիլուների, սուզվեց ջրի մեջ: Լողում էր անազմուկ, ոչ այնպես, ինչպես մարդ կտեղ կլողար: Լոուսընը շեր հասկանում, թե ինչու է դա ուղքան հասում իր հողին: Նա սպասեց, մինչև էթելը ափ մազրցեց: Վերջինս մի բուպե կանգ առավ՝ թաց բալախոնը պինդ, ալիք-ալիք կպած մտքմին, որից երևում էր իրանի գծագրությունը ու հետո, ձևերը կրծքի վրայով զանդաղ տանելով, հրձվալից մի հատաչ արձակեց: Եվ անհետացավ: Լոուսընը շրջվեց ու քայլեց հա՛ գլուղ: Նրա սիրտը ցավում էր գառնորեն, քանզի հասկացել էր, որ էթելն առաջիկա պես օտար է իրեն, և իլ անհագուրդ սերը զատապարտված է հավերժ շրավարարված մշալու:

Լոուսընն իր տեսածի մասին ոչ մի խոսք չասաց: Նա եղածը մտացույթյան ավեց, սակայն կնոջը նայում էր հետաքրքրությամբ, փորձելով գուշակել նրա մտքին: Կրկնապատակեց քննքությունը նրա նկատմամբ: Իր սիրտ ուժգնությամբ կամենում

էր խլացնել էթելի հոգու խոր կարտը: Իսկ հետո մի օր, երբ տուն եկավ, ապշեց, տեսնելով, որ նա տանը չէ:

— Որտե՞ղ է միսիս Լոուսընը, — հարցրեց աղախնին:

— Երեխայի հետ մեկնեց Արբորդին, սըր, — պատասխանեց սղախինը, հարցից մի բիշ զարմացած: — Ասաց, որ վերջին գնացքով կգա:

— Հա՛, լավ:

Լոուսընը զղայնացավ, որ կինն իրեն ոչինչ չի ասել իր ուղևորության մասին, բայց շանհանգստացավ, քանի որ վերջերս էթելը հաճախ էր Արբորդինում լինում: Լոուսընն ուրախ էր, որ նա խանութները կըրքի ու գուցե կինո մտնի: Նա զնայ վերջին գնացքը դիմավորելու, սակայն երբ էթելը չեկավ, հանկարծ միանգամից վախեցավ: Վերադարձավ տուն, բարձրացավ ննջարան և անմիջապես նկատեց, որ կնոջ արդուզարդի պարագաներն իրենց տեղում չեն: Բացեց պահարանն ու դարակները: Իրանք կիսով շափ դատարկ էին: էթելը փախել էր:

Կատաղի գայլույթը համակեց Լոուսընին: Արբորդին զանպահարելու և հարցուփորձ անելու համար շափազանց ուշ էր, բայց նա արգեն գիտել, թե այդ հարցուփորձերն իրեն ինչ կտան: Ստանալական խորամանկությամբ էթելն այնպիսի ժամանակ էր ընտրել, երբ բանկում տարեկան հաշվեկշռով էին դրողված, և ինքը նրան հետապնդելու հնարավորություն չուներ: Աշխատանքը նրա ձեռքերը կապել էր: Լոուսընը մի լրագիր վերցրեց ու տեսավ, որ հաջորդ առավոտյան Ավստրալիա մեկնող նավ կա: էթելը հիմա հավանարար արգեն Լանդնի ճանապարհին է: Լոուսընի կրծքից ցավով հեկեկոցներ պոկվեցին:

— Ամեն բան արեցի նրա համար, իսկ նրա խիղճը թույլ տվեց հետս աչպես վարվել: Ինչպիսի անպիտանություն, ինչպիսի հրեշավո՞ր անգթություն:

Երկու տանջալից օրերից հետո նա էթելից նամակ ստացավ: Իրված էր նրա մանկական ձեռագրով (էթելը միշտ էլ զրմավարովյամբ էր դրում):

«Միբելի Բերթի»

էլ չէի կարող դիմանալ: Ես եմ գնում տուն: Յաճատություն:

Երկու:

Ափսոսանքի բառ անգամ չկար ուղ երկտողում: Նույնի՞սկ չէր կանչում իրեն միանալ, Լոուսընը ջախջախված էր: Նա խնա-

յալ, թե նալը որտեղ է իր առաջին կանգառն անում ու, թեև շատ լավ գիտեր, որ էթելը ետ եկողը չէ, հեռագիր տվեց՝ ազեր-սելով վերադառնալ: Տխուր ու անհամբեր սպասեց, որ գոնե սիրո մի խոսք կուղարկի, սակայն էթելը մինչև անգամ չհասնեց պատասխանել: Հակասական զգացմունքները ձգտում էին կոտարելին: Մեկ տեսար, ինքն իրեն ասում էր, թի լավ պրծավ նրանից, մեկ էլ որսշում, որ փող չի տա ու ալգայիսով նրան կստիպի վերադառնալ: Կոտարնը միայնակ էր ու թշվառ: Իր տղային էր ուզում ու էթելին: Գիտեր, որ ինչքան էլ ինքն իրեն խաբի, միայն մի բան է մնում անել՝ հետևել նրան: Այլևս չէր կարող առանց նրա ապրել: Գալիքի բոլոր ծրագրերը խաղաթղթի տնակի նման փլվեցին, և կոտարնը կատաղի ու անհամբեր մի կողմ նետեց դրանք: Արդեն հոգն էլ չէր, որ իր ապագայի հետ է խաղում, քանզի միայն մի կարևոր բան գոյութուն ունեւր այժմ՝ դա էթելին ետ բերելն էր: Հենց որ հնարավոր եղավ, գնաց Աբբրդին և բանկի տնօրենին ասաց, որ պատրաստվում է անմիջապես մեկնել: Տնօրենն առարկեց, կոտարնի այդքան հապշտապ հրաժարականը ձեռք չէր տալիս նրան: Բայց սա ոչինչ լսել չէր ուզում: Մտքին գրել էր աղատութուն ստանալ մինչև հաջողը նավի մեկնելը, և միայն այն ժամանակ որոշ շափով հանդարտվեց, երբ արդեն ամբողջ ունեցվածքը վաճառել էր ու հայտնվել նավի վրա: Մինչ այդ նա իր հետ շփվողների վրա խելքը թոցբածի տպավորություն էր թողնում: Վերջին բանը, որ Անգլիայում արեց, էթելին հեռագիր ուղարկելն էր, որտեղ գրել էր, թե ինքը միանում է նրան:

Մի ուրիշ հեռագիր Միգնելից ավեց, և երբ վերջապես լուսաբացին նավը մոտեցավ Ափիային, ու նա տեսավ ծովածոցի շուրջն անկանոն դասավորված սպիտակ տները, անասելի թեթևությունն զգաց: Նավ բարձրացան բժիշկն ու մտքատառն գործակալը: Երկուսն էլ կոտարնին ծանոթ էին, և վերջինս ուրախությունն զգաց նրանց հարազատ դեմքերը տեսնելով: Մի երկու բաժակ հետնելը խմեց անցած օրերի կենացը ու նաև այն պատճառով, որ հուսահատության աստիճան նշարդացնացած էր: Վստահ չէր, թե էթելն իրեն տեսնելով կուրախանա: Երբ ոտքը դրեց նավի աստիճանին ու քայլեց դեպի նավամատույց, աչքերն անհամբերությամբ տարավ գիծավորողների ամբխով: Էթելն ախտեղ չէր, և կոտարնի սիրտը նվազեց, սակայն հետո նա տեսավ

Եսեալգին՝ հնամաշ կապույտ շորերը հագին, և սիրտը շերմուլիամբ լցվեց ծերուկի հանգեպ:

— Ո՞ր է էթելը, — ասաց նա ակ ցատկելուն պես:

— Խրճիթում է: Մեզ հետ է ապրում:

Տազնապը տիրեց կոտարնին, բայց նա զվարթ ձևացավ:

— Գե, փակ ինձ համար տեղ ունե՞ք: Երեի մի երկու շաբաթ տեխ, մինչև տեղավորվենք:

— Հա, քեզ համար տեղ կճարենք:

Մաքսատունն անցնելուց հետո գնացին հյուրանոց, որտեղ կոտարնին ողջունեցին նրա հին ընկերներից մի քանիսը: Շատ բաժակներ դատարկեցին, մինչև հնարավոր դարձավ հեռանալ ու երբ վերջապես ձամփա ընկան Բրեալդի տուն, երկուսն էլ բավական լավ էին: Կոտարնը թևերի մեջ առավ էթելին: Կրկին իր սիրելիին գրկելու երջանկությունը մոռացնել էր տվել բոլոր դատը մտքերը: Զորանչն ուրախ էր նրան տեսնելու համար, ուրախ էր նաև նրա մայրը՝ ձեր, կնճառոված այն վճռելը: Ներսեան ընկերներն ու խառնածիները, նստոտեցին կոտարնի շուրջը՝ զվարթ հայացքները նրան հառած: Բրեալդը մի շեշ վիակի ունեւր, և բոլոր ներսեանները մի-մի կում ստացան: Կոտարնի հագեց հանել էին անգլիական հագուստը, և նա մերկ էր՝ թխաներ դավակը ծնկներին, իսկ բալախոն հագած էթելը՝ կողքին: Իրեն տուն վերադարձած անստակ որդի էր զգում: Յերեկը նորից գնաց հյուրանոց և երբ ետ եկավ, ոչ միայն լավ էր, ավելին՝ հարբած էր: Էթելն ու նրա մայրը գիտեին, որ սպիտակ մարգիկ մեկ-մեկ հարբում են, նրանցից դա պետք է սպասել, ուստի ծիծաղում էին բարեստորեն, օղնելով, որ մահճակալին հասնի:

Մի երկու օրից կոտարնը սկսեց գործ սրսնելու նա գիտեր, որ հույս չի կարող ունենալ այնպիսի պաշտոնի, ինչպիսին թողել էր Անգլիա գնալու համար, բայց նրա հմտութունն առևտրական ֆիրմաներից մեկին անպայման պետք կգար, և ով գիտե, զուցե վերջում շափասար փոփոխության համար:

— Ի վերջո, բանկում փող սարքել չի լինի, — ասաց նա: — Փող սարքելու համար ասեուոր է պետք անել:

Նա հույս ունեւր շուտով այնքան անփոխարինելի դառնալ, որ մեկնումեկը ուզեր ընկերակից վերցնել իրեն, դե իսկ դրանից հետո ինչո՞ւ պիտի մի բանի ատրուց հարուստ մարդ չդառնա:

— Հենց որ գործ ճարեմ, մեզ համար մի սխևան կպանեմ, — ասաց նա էթելին: — Հո անընդհատ այստեղ չե՞նք ապրի:

Բրեւալդի հյուղական այնքան փոքր էր, որ ապրողներն իրար գլխի էին լցված, ու մենակ մնալու հնարավորութիւն չկար։ Ուղղակի անհնար էր մի բոպե հանգիստ ու առանձնացած լինել։

— Ոչինչ, շտապելու կարիք չկա։ Այստեղ շատ լավ կգիմանանք, մինչև մեր ուզածը գտնենք։

Մի շաբաթ տեւեց, մինչև Լոուսընը վերջապէս տեղավորվեց, իսկ հետո ընդունվեց Բեյն անունով մեկի ֆիրման։ Մակայն երբ էթելի հետ խոսեց տեղափոխվելու մասին, սա սասաց, որ ուզում է մնալ իր տեղում մինչև երեսման ծնվի, քանի որ զավակ էր սպասում։ Լոուսընը փորձեց հակաճառել։

— Եթե դուրդ չի գալիս,— սասաց էթելը,— գնա հյուրանոցում ապրի։

Լոուսընը միանգամից գոճատվեց։

— Էթել, ինչպե՞ս կարող ես նման բան առաջարկել։ Էթելն ուսերը թոթվեց։

— Ի՞նչ կարիք կա սեփական տուն ունենալու, երբ մենք կարող ենք այստեղ ապրել։

Լոուսընը տեղի տվեց։

Երբ նա գործից հետո տուն էր գալիս, տեսնում էր, որ խորհիթը լի է բնիկներով։ Նրանք պտուկած ծխում էին, բնում, կավա խմում ու անվերջ խոսում։ Տունը կեղտոտ էր ու թափփված։ Նրա Լրեխան սողում էր հատակին, խաղում բնիկ երեխաների հետ ու բացի սամոներենից՝ ուրիշ լեզու չէր լսում։ Լոուսընը սովորութիւն դարձրեց տուն գնալուց իրեն հյուրանոց գցել և մի քանի կոկտեյլ խմել, քանզի երեկոն բարեհոգի բնիկների բողմուխան մեջ կարողանում էր տանել միայն, երբ ալկոհոլի միջոցով արիութիւն էր ստացած լինում։ Եվ ամբողջ ժամանակ, թեև ավելի քան երբևէ կրքոտ էր սկսել էթելին սիրել, զգում էր, որ նա հեռանում է իրենից։ Երբ երեխան ծնվեց, Լոուսընը առաջարկեց, որ տեղափոխվեն իրենց սեփական տուն, բայց էթելը հրաժարվեց։ Շոտլանդիայում անցկացրած ամիսներն այժմ, երբ վերադարձել էր, ասես ավելի կրքոտ էին կապել նրան յուր ցեղակիցների հետ, և նա ինքնամոռաց կերպով տրվեց բնիկային իր սովորութիւններին։ Լոուսընն սկսեց ավելի շատ խմել։ Ամեն շաբաթ Լրեկո նա գնում էր անգլիական ակումբ ու հարբում իրեն կորցնելու աստիճան։

Նա առանձնահատկութիւն ունեւր՝ խմելուն պէս կովարար

էր գտնում, և մի անգամ կատարել վեճ ունեցավ անօրենի՝ Բեյնի հետ։ Բեյնը աշխատանքից հեռացրեց նրան, և Լոուսընը սկսեց ուրիշ գործ որոնել։ Մի երկու շաբաթ նա պարապ մնաց և այդ ընթացքում, խրճիթում նստելու փոխարեն, բարձր էր գալիս հյուրանոցում կամ անգլիական ակումբում ու խմում էր։ Ավելի շուտ խղճահարութիւնից, քան որևէ այլ բանից դրդված, Միլլերը՝ գերմանական ծաղումով ամերիկացին, նրան ընդունեց իր գրասենյակ։ Մակայն Միլլերը գործնական մարդ էր, ու թեպէտ ֆինանսական գործում Լոուսընի հմտութիւնը վերջինիս արժեքավոր էր դարձնում, հանգամանքներն այնպիսին էին, որ նա դժվար թե հրաժարվեր նախկինից ավելի ցածր աշխատավարձից, դե իսկ Միլլերը շտատանվեց այդ առաջարկն անել։ Էթելն ու Բրեւալդը դժգոհում էին, որ Լոուսընը համաձայնեց, քանի որ խառնածին Փեդերսընն ավելի շատ էր առաջարկում։ Մակայն Լոուսընը լսել անգամ չէր ուզում խառնածինի ղեկավարութիւն տակ աշխատելու մասին։ Երբ էթելը սկսեց հանդիմանել, նա կատաղած վրա տվեց։

— Ավելի շուտ կմեռնեմ, քան նիգերի՝ համար կաշխատեմ։

— Մեկ էլ տեսար,— պատասխանեց էթելը։

Իսկ վեց ամսից Լոուսընը ստիպված եղավ այդ վերջին ստորացումն էլ կրել։ Ալկոհոլի հանդեպ սերը գերիշխող էր դառնում, հաճախ նա խմելուց չափն անցնում էր և վատ կատարում իր աշխատանքը։ Միլլերը մի երկու անգամ զգուշացում արեց, իսկ Լոուսընն այն մարդկանցից չէր, որոնք հանդիմանութիւններին հանգստութեամբ են վերաբերվում։ Մի օր վիճաբանութիւն կեսից նա զխարկը վերցրեց ու դուրս գնաց։ Մակայն այժմ Լոուսընը վատ համբավ էր ձեռք բերել, և ոչ ոք չէր ուզում իր մոտ ընդունել նրան։ Միտոժամանակ նա պարապ-սարապ թափառեց, իսկ հետո սպիտակ տենդի նուպա ունեցավ։ Երբ լաւացավ՝ ամոթահար ու թուլացած, այլևս ի վիճակի չէր դիմադրելու անդադար ճնշմանը, ուստի գնաց Փեդերսընի մոտ ու աշխատանք խնդրեց։ Փեդերսընն սրախ էր իր խանութում սպիտակամորթ աշխատող ունենալու համար, իսկ Լոուսընի հաշվապահական հմտութիւնը գործին օգուտ կբերեր։

Գրանից հետո Լոուսընի անկումն արագացավ։ Սպիտակամորթները սառն էին վերաբերվում նրան։ Միակ բռնը, որ նրանց պահում էր Լոուսընի հետ կապերը վերջնականապէս խզելուց, քամահարալից խղճահարութիւնն էր և սարսափը նրա հար-

բած կատաղութիւնից: Նա ահա՛վոր նեղացկոտ էր դարձել ու միշտ ամեն ինչում վիրավորանք էր որոնում:

Ապրում էր բացարձակապէս բնիկների ու խառնածինների մեջ, բայց այլևս սպիտակ մարդու հեղինակութիւնը չէր վայելում: Նրանք զգում էին, որ նա նողկանք է տածում իրենց հանդեպ և վրդովվում էին՝ ինչո՞ւ է իրեն այնպէս պահում, ասես գերազանցութիւն ունի: Զէ՞ որ հիմա նա իրենցից մեկն է՝ ի՞նչ կարիք կա երևակայելու: Բրևալդը, որը մի ժամանակ սիրալիր էր ու շողորթի, հիմա արհամարհանքով էր վերաբերվում նրան: Էթելը հաջող գործարքի մեջ չէր մտել: Մի քանի խայտառակ տեսարաններ ևզան, իսկ մի երկու անգամ՝ բանը մինչև իսկ տուրուզմիտոցի հասա՛վ: Վեճերի ժամանակ էթելն իր հարագտունների կողմն էր բռնում: Այժմ բոլորը գերագասում էին, որ Լուսընը հարբած լինի՝ խմած ժամանակ նա պառկում էր մահճակալին կամ գետնին և խոր քուն մտնում:

Հետո Լուսընը հասկացա՛վ, որ իրենից ինչ-որ բան են թաքցնում:

Երբ նա Երեկոյան խրճիթ էր գալիս իր խղճուկ, կիսաբնիկային ընթրիքն ուտելու, էթելը հաճախ տանը չէր լինում: Երբ հարցնում էր, թե ուր է, Բրևալդն ասում էր, թե գնացել է երեկան այս կամ այն բնկերուհու հետ անցկացնելու: Մի օր նա էթելի Լուսից զնայ Բրևալդի մատնանշած տունը և տեսա՛վ, որ նա այնտեղ չէ: Երբ էթելի վերադառնալուց հետո հարցրեց, թե ուր է եղել, սա ասաց, որ հայրը սխալվել է՝ ինքը ոչ թե այսինչի մոտ է եղել, այլ այնինչի: Սակայն Լուսընը գիտեր, որ նա ստում է: Էթելը շատ լավիկն էր՝ նա հազել էր ամենազեղչիկ հագուստը, իսկ աչքերը փայլում էին:

— Աղջիկս, հանաքներ մի արա, — ասաց նա, — թե չէ ոսկորներդ փշուր-փշուր կանեմ:

— Հարբած անասո՛ւն, — արհամարհանքով պատասխանեց էթելը:

Լուսընին թվաց, թե միտիս Բրևալդը և ծեր տատը շարությամբ են իրեն նայում և Բրևալդի՝ իր հանգիստ ցուցաբերած լավ վերաբերմունքը, այնքան անսովոր վերջերս, վերադրեց ծեղուկի ուրախությանը, որ փեսայի դեմ ինչ-որ բան է պահել: Հետո նրա կասկածներն անճեցին. սկսեց երևակայիլ, թե սպիտակամորթ տղամարդիկ հետաքրքրասիրական հայացքներ են նետում

իր վրա: Երբ հշուրանոցի սրահ մտնելուց բոլորը հանկարծակի լուռ էին, նա համոզվում էր, որ ինքը խոսակցության առարկան է նշել: Ինչ-որ բան էր կատարվում, և իրենից բացի բոլորն այդ մասին գիտեին: Կատաղի խանգը համակել էր նրան: Լուսընը հավատացած էր, որ էթելը սպիտակամորթներից մեկի հետ է կապված, և նա բոլորին նայում էր քննախույզ հայացքով, բայց ոչ մի ակնարկ չէր գտնում ի հաստատումն յուր կասկածների: Անօգնական վիճակի մեջ էր: Եվ քանի որ չէր կարողանում ճարել մեկին, որին կարելի լիներ հաստատ կասկածել, ապա իրեն պահում էր մոլեկոյն մտազարի նման՝ մարդ փնտրելով, որ վրան կատաղութիւնը թափի: Եվ հանգամանքների բերումով ի վերջո հարվածն իջա՛վ հենց այն մարդու վրա, որը բոլորից քիչ էր արժանի նրա վայրենութիւնից տուժելու: Մի օր ցերեկը, երբ Լուսընը մեն-մենակ նստած էր հշուրանոցում՝ մոռալ ու տրտում, Չափիինը եկա՛վ ու նստեց նրա կողքին: Չափիինը երևի միակ մարդն էր կղզում, որ կարեկցանք էր տածում նրա հանդեպ: Խմիչք պատվիրեցին ու մի երկու րոպե շատախոսեցին մոտ ժամանակներն անցկացվելիք ձիարշավի մասին: Հետո Չափիինն ասաց.

— Երևում է, բոլորս էլ պիտի նոր շորերի համար փող ցնծանք:

Լուսընը քթի տակ ծիծաղեց: Քանի որ միտիս Չափիինն էր վերահսկում ընտանեկան բոլոր ծախսերը, նա ամուսնուց անշուշտ դրամ չէր խնդրի, եթե նոր զոնսա ցանկանար:

— Ինչպե՞ս է տիկինդ, — հարցրեց Չափիինը, ձգտելով բնկերական լինել:

— Իսկ քո ի՞նչ գործն է, — ասաց Լուսընը, թա՛վ հոնքերը կիտելով:

— Ուղղակի քաղաքավարության համար հարցրի:

— Դե ուրեմն քաղաքավարի հարցերդ բեզ պահիր:

Չափիինն այնքան էլ համբերատար մարդ չէր. արևադարձային երկրում անցկացրած տարիները, վիսկին և բնտանեկան հաշիվները նրան ոչ պակաս բռնկվող էին դարձրել, քան Լուսընն էր:

— Լսի, տղա՛ս, երբ դու իմ հշուրանոցում ես, քեզ քենտրմենի պես պահի, թե չէ քերանդ բաց շարած՝ փողոցում կհայտնըվես:

Լուսընի մոռալ դեմքն ավելի մպայցա՛վ ու կարմրեց:

— Մեկընդմիջա լսիր ու մյուսներին էլ հազորդիր,— ասաց նա, կատաղությունից շնչահեղձ լինելով։— Եթե ձեզնից մեկնու- մեկը սկսի կնոջս շուրջը քարշ գալ, թող հետո իրեն մեղադրիս։

— Քո կարծիքով ո՞վ է ուզում կնոջդ շուրջը քարշ գալ։

— Ես ձեր իմացածի լավի հիմար չեմ։ Ես ամեն ինչ լավ տեսնում եմ և քեզ երեսիդ զգուշացնում եմ, այսբան բան։ Չհա- վատաս, թե կթողնեմ գլխիս խաղեր խաղաք։

— Լսի, լավ կանես թողնես գնաս ու լրջանաս, նոր գաս։

— Ես կգնամ, երբ խելքիս փչի,— ասաց Լոուսընը։

Նա իզուր էր հոխորտում, քանզի Չափլինն իր հյուրանոցա- տիրության ընթացքում առանձնահատուկ վարպետություն էր ձևաբ բերել գործ ունենալու այն պարտենների հետ, որոնց բա- ցակալությունն ինքր նախընտրում էր նրանց ներկայությունից, և հազիվ էին այդ բաները Լոուսընի բերանից դուրս եկել, ոչ Չափլինի ամուր ձեռքը բռնեց նրա թևից ու օձիբից և ոչ առանց բռնի ուժի՝ դուրս հրեց փողոց։ Աստիճաններով վար սայթա- քեց Լոուսընը դեպի արևի կուրացուցիչ շողերը։

Այս իրադարձությունն էլ պատճառ եղավ էթելի հետ առաջին բուռն տեսարանի։ Ստորացումից տանջվող Լոուսընը չէր կամե- նում ետ գնալ հյուրանոց, և նա այդ օրը սովորականից վաղ տուն գնաց։ Ու սկսավ էթելին, որը հագնվում էր՝ պատրաստ- վելով ինչ-որ տեղ գնալ։ Որպես կանոն էթելը, բալախոնը հա- զին, ռասբորիկ պատկած էր լինում՝ թուխ մազերի մեջ ծաղիկ խրած, բայց այժմ, սպիտակ մետաքս կիսագուլպաներով ու բարձրակրունկ կոշիկներով, նա կոճկում էր իր ամենանոր վար- դագույն մուսլինե զգեստի կոճակները։

— Շատ ես սիրունանում,— ասաց Լոուսընը։— Ո՛րք ես գնում։

— Քրոսիկների մուս։

— Ես քեզ հետ եմ գալիս։

— Ինչո՞ւ,— սառը հարցրեց նա։

— Չեմ ուզում, որ ամբողջ ժամանակ մենակ քարշ գաս։

— Քեզ չեն հրավիրել։

— Թքած։ Առանց ինձ չես գնա։

— Ավելի լավ կանես պոսկես, մինչև հագնվեմ։

Կա կարծում էր, Լոուսընը խմած է ու պոսկի թև չէ, աչքը կկաշի։ Մինչդեռ սա նստեց աթոռին և սկսեց ծխել։ Էթելը գնա- լով ավելի էր նեղարտում նրան նայելով։ Երբ հագնվեց-վերջաց-

րեց, Լոուսընը տեղից վեր կացավ։ Հանդամանքների անսովոր բերումով խրճիթում ոչ ոք չկար։ Բրեւալը սլանտացիայում գործ էր անում, իսկ նրա կինն Ալիսա էր գնացել։ Էթելն ուղիղ նայեց Լոուսընի դեմքին։

— Ես քեզ հետ չեմ գնա։ Դու խմած ես։

— Ճիշտ չէ։ Դու առանց ինձ չես գնա։

Նա թոթվեց ուսերը և փորձեց անցնել Լոուսընի կողքով, սա- կայն վերջինս բռնեց նրա թևն ու պահեց։

— Թող գնամ, հրեշի մեկը,— ասաց էթելը, անցնելով սա- մոտրենի։

— Ինչո՞ւ ես ուզում առանց ինձ գնալ։ Քեզ չե՞մ ասել, որ չեմ թողնի հանաքներ անես։

Էթելը բռունցքը սեղմեց ու խփեց նրա դեմքին։ Լոուսընը ինքնատիրապետումը լրիվ կորցրեց։ Ողջ նրա սերը, ողջ ասե- լությունը փոթորկվեց ներսում, և նա սահմաններից դուրս եկավ։

— Ես քեզ ցո՛ւյց կառամ,— գտուց նա։— Ես քեզ ցո՛ւյց կառամ։

Նա ճանկեց ձեռքի տակ պատահարաբ հայտնված մտրակն ու դրանով հարվածեց կնոջը։ Մա՛ ճչաց, և այդ ձիչն այնպես ճծվեցրեց Լոուսընին, որ նա շարունակեց հարվածել՝ նորից ու նորից։ Էթելի աղաղակները զրնգում էին խրճիթով մեկ, իսկ նա լուսանքներ էր տեղում ու խփում։ Հետո կնոջը շարունակ մահ- ճակարի վրա։ Էթելը՝ ցավից ու սարսափից հեծկատալով, մնաց պոսկած։ Լոուսընը մի կողմ նետեց մտրակը և դուրս թռավ սեն- լակից։ Էթելը լսեց, թե ամուսինն ինչպես է հեռանում, ու դա- դարեց լաց լինելու։ Նա գզուշությունը շուրջը նայեց, հետո տեղից բարձրացավ։ Մարմինը ցավում էր, բայց առանձնապես վնաս- ված չէր, և նա նայեց զգեստին՝ հո չի՞ փչացել։ Թնիկահիները ծեծին անսովոր շեն Լոուսընի արածը նրան չլայրացրեց։ Երբ նա լուր էր հայելու մեջ և կարգի բերում մազերը, նրա աչքերը փայլում էին։ Տարօրինակ կայծ էր շողում նրանցում։ Հավա- նաբար այդ բուպիին նա ավելի էր մոտ Լոուսընին սիրելուն, քան երբևէ։

Սակայն, Լոուսընը կուրացած, ինչ-որ անբերույթ ուժով առաջ մղված, սայթաքելով վազում էր սլանտացիայով։ Հուն- կարծ թուլանալով, երեխայի պես անում իրեն փանին նետեց մի ծառերի մոտ։ Նա խեղճացած էր ու ամոթահար։ Մտածեց էթելի մասին, և սիրո ամենակուլ քնքշությունից բոլոր ոսկոր-

Ներն ասես փափկեցին: Մտածեց անցյալի մասին, իր հուշերի մասին և սահմոկեց իր արածից: Երբեք այնքան չէր ցանկացել էթելին, որքան հիմա: Ուզում էր յուր բազուկների մեջ առնել նրան: Ո՛չ, ինքը պիտի անմիջապես ետ գնա նրա մոտ: Նա վեր կացավ: Այնքան թույլ էր, որ թայլելիս երկրում էր: Նա մտավ տուն ու տեսավ, որ էթելը նստած է իրենց նեղլիկ ննջարանում՝ հայելու դիմաց:

— Ա՛խ, էթել, ներիր ինձ: Ես այնքա՛ն ամաչում եմ: Ինքս է: Չգիտեի, թե ինչ էի անում:

Նա ծունկ շոթեց կնոջ առաջ և երկչոտությամբ ձեռքը հպեց շուրի փեշին:

— Սարսափում եմ մտածել անգամ, թե ինչ արեցի: Ի՛նչ ահավոր բան էր: Երեկ գտվել էի: Աշխարհում ամենից ավելի թեզ եմ սիրում: Ես պատրաստ էի ամեն բան անել, որ դու ցավ չզգաս, իսկ դրա փոխարեն ցավ պատճառեցի թեզ: Ես ինձ կրթեք շեմ կարող ներել, բայց, աստժո սիրուն, ասա, որ դու ինձ ներում ես:

Ականջին ղեռ հնչում էին նրա ձիշերը: Դա անտանելի էր: Լթելը լուռ նայեց նրան: Լոուսընը փորձեց բռնել կնոջ ձեռքը, և արցունքները հոսեցին նրա աչքերից: Ստորացած, նա գլուխը ֆաղեց էթելի փեշի մեջ, նրա փխրուն մարմինը ցնցվեց հեկեկոցներից: Մայրանդ բամահրանքի արտահայտություն հայտնեղվեց էթելի երեսին: Նա բուրբ բնիկուհիների նման խորապես աբհամարում էր այն տղամարդուն, որն իրեն նվաստացնում է կնոջ առաջ: Փալա՛ս: Իսկ ինքը մի բույս քիչ մնաց մտածեք, թե նրա մեջ ինչ-որ բան կա: Փողոցի շան նման փովել է իր ստրեբրի առաջ: Նա բացով կամաց ու արհամարհական հրեց Լոուսընին:

— Դուրս, — ասաց նա: — Ես ատում եմ քեզ:

Լոուսընը ձեռքերն առաջ պարզեց, սակայն էթելը մի կողմ բռթեց նրան: Ոտքի ելավ: Սկսեց հանել զգեստը: Շպրտեց կոշիկները և հանեց գուլպաները, հետո վրան գցեց հնամաշ բալախունը:

— Ո՛ւր ես գնում:

— Քեզ համար ի՞նչ տարբերություն: Գնում եմ գետախորշ:

— Թող ես էլ գամ, — ասաց նա:

Փոքր երեխայի պես խնդրում էր:

— Չե՛ս կարող գոնն այդ մի բանն ինձ թողնել:

Լոուսընը ղեկքը թաքցրեց ավերի մեջ, հոնգուր-հոնգուր լաց լինելով, մինչդեռ էթելը, վճռական ու սառը, անցավ նրա կողքով ու դուրս գնաց:

Այդ օրվանից նա ամբողջ սրտով արհամարհեց իր ամուսնուն, ու թեև փորձիկ խրճիթում իրար գլխի լցված (Լոուսընն ու էթելն՝ իր երկու երեխաներով, Բրեալըր, նրա կինն ու կնոջ մայրը և հետո ազգականներն ու հացկատակները, որ մշտապես գնում-գալիս էին), ստիպված էին քիթ-քթի ասպրել, Լոուսընին ոչ ոք չէր էլ նկատում համարյա: Նա դուրս էր գալիս առավոտյան նախաճաշից հետո և միայն ընթերցում համար տուն գալիս: Դադարեց պայքարել, և երբ փող շունենալու պատճառով անգլիական ակումբ չէր կարողանում գնալ, երեկոն անցկացնում էր ծերուկ Բրեալդի և բնիկների հետ թուղթ խաղալով: Երբ խմած չէր լինում, վախեցած էր ու հույս էթելը նրա հետ շան պես էր վարվում: Ժամանակ առ ժամանակ եսթարկվում էր նրա կատաղի կրթի նուպաներին և վախենում էր դրանց հետեզ ատելության պոթիկումներից, բայց երբ, դրանից հետո, Լոուսընը սկսում էր սողալ ու լացուկոծ անել, էթելն այնպիսի բամահրանք էր զգում, որ քիչ էր մնում թքի երեսին: Երբեմն Լոուսընը գագազում էր, սակայն այժմ էթելն արդեն պատրաստ էր դրան, և երբ սա խրփում էր, կինը բացով էր տալիս, ճանկոտում ու կծում ի պատասխան: Սոսկալի կոխվներ էին լինում, որոնց ժամանակ ամուսինը միշտ չէ, որ հաղթող էր դուրս գալիս: Շուտով ամբողջ Ափիան իմացավ, որ նրանք լեզու շեն գտնում: Լոուսընին կարեկցող համարյա չկար, և հյուրանոցում տարակուսում էին, թե ինչո՞ւ ծերուկ Բրեալըր նրան դուրս չի շարտում:

— Բրեալըն այլանգակ տիպ է, — ասաց մեկը: — Ես չեի վարմանա, եթե մի օր փամփուշտով Լոուսընի գանգը ծակեր:

Էթելն առաջվա նման երեկոները գնում էր խաղաղ գետախորշում լողանալու: Գետախորշը կարծես ինչ-որ գերմարդկային հմայքով ձգում էր նրան, նա ասես կին դարձած ջրահարս լինեի՝ հրապուրված ծովի սառնորակ, աղի ալիքներով: Երբեմն Լոուսընը միանում էր նրան: Զգիտեմ, թե ինչն էր նրան ստիպում գնալ, քանզի էթելն ակնհայտորեն սրտենդում էր նրա ներկայությունից: Գուցե հույս ուներ գետախորշում վերագտնել այն անաղարտ հիացմունքը, որով լցվել էր սիրտը առաջին անգամ էթելին տեսնելիս, գուցեև բոլոր անպատասխան սիրողների նման խելագար իղձ էր փայփայում, թե իր համառությունը

սեր կառաջացնի Մի որ Լոուսընը գետախորշ գնաց իր ներկա վիճակի համար հազվադեպ զգացումով: Հանկարծ իրեն հաշտ ու համերաշխ էր զգացել ամբողջ աշխարհի հետ: Երեկոն վրա էր հասնում, և մթնշաղը կարծես կառչած լիներ արմավենու տերևներից՝ փոքրիկ, բարակ ամպիկի նման, նա տեսավ մեջքի վրա լողացող էթելին: Մազերը փովել էին գլխի շուրջը, իսկ ձեռքում մի մեծ մոլորավարդ էր պահել: Մի բուպե Լոուսընը կանգ առավ հիացած: էթելն ասես Օֆելյան լիներ:

— Հելլո, էթել,— զվարթ գոչեց նա:

էթելը հանկարծակի շարժում արեց ու գցեց կարմիր ծաղիկը, որն ալարկոտ մի կողմ լողաց: նա լող տվեց, մինչև ոտքերի տակ զգաց գետինը և կանգնեց:

— Հեռացիր,— ասաց նա:— Հեռացիր:

Լոուսընը ծիծաղեց:

— Ես ասեր մի եղիր: Տեղը երկուսիս հերիք կանի:

— Ինչ է, շե՞ս կարող ինձ հանգիստ թողնել: Ես ուզում եմ մենակ մնալ:

— Վերջ տուր, ես լողանալ եմ ուզում,— բարեսրտորեն ասաց նա:

— Գնա կամբջի մտու: Ես շեմ ուզում, որ դու այստեղ լինես:

— Ափսոս,— ասաց Լոուսընը, դեռ շարունակելով ժպտալ: նա մազաշափ անգամ չէր ջղայնանում, և հազիվ թե նկատեց, որ էթելը շարացած է: Սկսեց պիչակը հանել:

— Հեռացիր,— ճշաց էթելը:— Ես շեմ ուզում այստեղ լինես: Չե՞ս կարող գոնե սա ինձ թողնել: Հեռացիր:

— Հիմարություններ մի արա, սիրելիս:

Կինը կռացավ, մի սուր բար վերցրեց ու արագ շարտեց Լոուսընի վրա: Վերջինս խույս տալու ժամանակ շունքը Քարը գիպավ բունքին: նա գոռալով ձեռք դրեց գլխին, իսկ երբ ետ քաշեց՝ արյուն երևաց: էթելն անշարժ կանգնած էր՝ գայլուկների հետ: Լոուսընը սարսափելի գունատվեց և առանց մի խոսք ասելու՝ պիչակը վերցրեց ու գնաց: էթելը նորից մտավ շուրջը, և հոսանքը նրան դանդաղ տարավ գեպի ծանծաղուտ:

Քարն անհավասար վերք էր առաջացրել, և Լոուսընը մի բանի օր ման էր գալիս վիրակապված գլխով: Մի ճշմարտանման պատմություն էր հորինել, որպեսզի պատահականություն բերումով բացատրի եղածը, եթե ակումբում հարցնեն, սակայն առիթ չու-

նեցավ հնարածն օգտագործելու: Ոչ ոք զեպքին չանդրադարձավ, Լոուսընը տեսնում էր իր գլխին ուղղված թարուն հայացքները, բայց ոչ ոք բառ անգամ չէր ասում: Լոուսընը միայն մի բան կարող էր նշանակել՝ նրանք գիտեին, թե վերքն ինչպես է առաջացել: Այժմ Լոուսընը արդեն վստահ էր, որ էթելը սիրելիան ունի, և բոլորը գիտեն, թե նա ով է: Բայց ամենափոքր նշան անգամ չկար, որ օգներ ճիշտ հետքի վրա ընկնելու: էթելին երբեք ոչ մեկի հետ չէր տեսել, ոչ որ ցանկություն չէր հայտնել նրա հետ լինելու կամ Լոուսընին չէր վերաբերվել այնպես, որ տարօրինակ թվար: Կատաղի ցասումը համակեց Լոուսընին, և չգտնելով մեկին, որ կարողանար բարկությունը վրան թափել, նա սկսեց ավելի ու ավելի թունդ խմել: Իմ կզգի գալուց մի փոքր առաջ նա սպիտակ տենդի երկրորդ նուպան էր ունեցել:

Ես հանդիպեցի էթելին Քասթրո անունով մեկի տանը, որն իր բնիկ կնոջ հետ ապրում էր Ափիայից երկու-երեք մղոն այն կողմ: Մենք Քասթրոի հետ թենիս էինք խաղում, և երբ հազարվեցինք, նա առաջարկեց թեյ խմել: ներս գնացինք և թափթրված հյուրասննչակում գտանք էթելին՝ միսիս Քասթրոի հետ շատախոսելիս:

— Հելլո, էթել,— ասաց Քասթրո:— Չգիտեի, որ այստեղ ես:

Չէի կարող ինձ զսպել ու հետաքրքրություն մը ընայել էթելին: Ես փորձում էի տեսնել, թե այդ ի՞նչն էր նրա մեջ Լոուսընի ամենակործան կիրքը հարուցել: Սակայն մի՞թե այդպիսի բաները հնարավոր էր բացատրել: Ճիշտ է, որ էթելը լավիկն էր՝ նա հիշեցնում էր Մամոնում ամենատարածված ծաղիկը՝ կարմիր մոլորավարդը՝ նրբագեղ, նվազում ու կրթոտ, բայց ինչը որ ինձ ամենաշատը զարմացրեց (հաշվի առնելով այս պատմությունը, որի մասին նույնիսկ այն ժամանակ ահագին բան գիտեի)՝ էթելի թարմությունն էր ու պարզությունը: նա սուսուփուտ էր և մի քիչ ամաչկոտ: Ոչ մի կուպիտ ու ճշացող բան չկար նրա մեջ, շունքը խառնածիններին հատուկ շափից դուրս փթթունությունը: Համարյա անհնար էր հավատալ, թե նա է այն լաշառը, որն այժմ արդեն բոլորին հայտնի դարձած ընտանեկան սոսկալի տեսարանների գլխավոր գործող անձն էր: Իր սիրուն վարդագույն զգեստով էթելը եվրոպացի կնոջ էր նման: Դժվար էր ենթադրել, թե դրա ետև բնիկի կյանքի մթին լարիթիթոսներ են, որտեղ նա իրեն այնքան լավ է գտնում: Խելքի ու զարգացածու-

Յյան նշաններ մտոր շնկատեցի, ու չէի զարմանա, եթե տղա-
մարդը, միառժամանակ նրա հետ ապրելով, հայտնաբերեր, որ
իրեն զեպի այդ կինը մղող կիրքը վերածվել է ձանձրույթի:
Մտքովս անցավ, որ նրա անըմբռնելիության մեջ էլ (ինչպես
միաբը, որ մի վայրկյան փայլատակում է գիտակցութեան խոր-
քում և անհետ կորչում, մինչ խոսքերը կորսան նրան) հենց
թաքնված է առանձնահատուկ հմայքը, սակայն դա գուցե պար-
զապես երևակայութուն էր, և եթե ես այդ կնոջ մասին ոչինչ
չիմանայի, նրան կտեսնեի ուղղակի որպես մի փոքրիկ ու սխա-
նիկ խառնածին՝ այնպիսին, ինչպիսին մյուսները:

Էթելը հետս գրուցում էր այն բազմաթիվ բաների մասին,
որ սովորաբար օտարականների հետ խոսում են Սամոայում.
Ճանապարհորդութունից, և թե արդյոք եղև՞ և մ Փափափախի
ծովախոսի վրա, կամ պատրաստվում եմ արդյոք մնալ բնիկ-
ների գյուղում: Հետս խոսեց Շոտլանդիայից, ու ինձ թվաց, թե
նա շափաղանցնում է յուր ապրելակերպի ճոխութունն այնտեղ:
Պարզամտորեն ինձ հարցնում էր, թե ես գիտե՞մ արդյոք միատը
այսինչին կամ միտես այնինչին, որոնց ինքը հանաչել էր հյու-
սիսում ապրելիս:

Հետո ներս մտավ Միլլերը՝ գերմանական ծագումով հաս-
տամարմին ամերիկացին: Նա շատ սիրալիք սեղանեց բուրբի ձեռ-
քերը և նստեց, իր բարձր, զվարթ ձայնով սողա-վիսկի խընդ-
րելով:

Նա շատ գեր էր ու դրանից սաստիկ բրանում էր: Հանեց
ուկեղը շանակ ակնոցը և մաքրեց ապակիները. ահա այդ ժա-
մանակ երևաց, որ նրա փոքրիկ աչքերը, որոնք կլոր շրջանակնե-
րի նստում բարյացակամ էին թվում, թափանցող են ու խորա-
մանկ: Մինչև Միլլերի գալը հավաքույթը մի ահաակ ձանձրալի
էր անցնում, բայց նա լավ պատմող էր և ուրախ անձնավորու-
թյուն: Շուտով երկու կանայք՝ էթելն ու իմ ընկերոջ կինը, հըրճ-
վալից ծիծաղում էին նրա սրախոսութունների վրա: Միլլերը
կողում կանանց սիրելիի համարում ուներ, պետք էր տեսնել
միայն, թե ինչպես այդ գեր, ծանրունեծ տղամարդը՝ ծեր ու
անճուռի, զեռ պահպանել է դուր գալու ունակութունը: Նրա
հումորն իր հանգիսականների մակարդակին էր՝ ամեն ինչ որո-
շում էր աշխուժութունն ու վստահութունը, իսկ արևմտյան առու-
զանութունն աստծոններին յուրահատուկ համուհոտ էր հաղոր-
դում: Վերջապես նա շրջվեց իմ կողմը:

— Դե եթե մենք ուզում ենք ճաշին Ափիայում լինել, լավ
կանենք շարժվենք: Եթե կուզեք, ձեզ իմ մեքենայով կտանեմ:

Ես նրան շնորհակալութուն հայտնեցի և վեր կացա: Միլլերը
սեղանեց մյուսների ձեռքերը, դուրս գնաց սենյակից՝ խոշորա-
մարմին ու վստահաբայլ, և մտավ իր մեքենան:

— Շատ լավիկն է այդ Լուստընի կինը, — ասացի ես հանա-
պարհին:

— Շատ վատ է վերաբերվում նրան: Ծեծում է: Տանել չեմ
կարող, երբ տղամարդը կնոջը խփում է:

Մի քիչ լռելուց հետո Միլլերն ավելացրեց.

— Հիմարութուն արից, որ ամուսնացյալ հեղը: Ես ժամու-
նակին ասացի: Որ շամուսնանար, հիմա կնոջ տերը կլիներ
վախկոտ, ատորի մեկն է, ահա թե ինչ:

Տարին վերջանում էր, և մոտեցավ Սամոայից հետանալու
ժամանակը: Ըստ շվացուցակի՝ իմ նավը պետք է Միզենյ մեկ-
նեի հունվարի շորսին: Հյուրանոցում հարկ եղած ձևակարգու-
թյուններով նշել էին Սուրբ Մնունդը, սակայն դրան նայում էին
ոչ ավել, քան որպես նոր տարվա խաղափորձ, և տղամարդիկ,
որ սովոր էին հյուրանոցում հավաքվելու, սրոշել էին նոր տարվա
գիշերը հարկ եղածի պես նշել: Աղմկոտ ճաշկերույթ եղավ, իսկ
հետո հավաքվածները դիմեցին զեպի անգլիական ակումբ՝ այդ
պարզ ու հասարակ փայտե շինութունը՝ բիլիարդ խաղալու:
Շուրջը շուրջ խոսում էին, ծիծաղում, գրազներ բռնում և քիչ
ուշադրութուն էին նվիրում խաղին, բոլորը, բացի Միլլերից,
որը նրանցից մի բան էլ ավել էր խմել (թեև ամենամեծն էր
տարիքով) բայց զգոնութունը և ձեռքի ամբուլթունը չէր կորց-
րել: Նա սիրալիք կատակներ անելով գրպանում էր երիտա-
սարգենքի փողերը: Մի ժամից ես հոգնեցի և դուրս գնացի:
Ճանապարհը կտրեցի-անցա ու մոտեցա ծովափին: Երեք ար-
մավենի էր աճել այնտեղ, ինչպես երեք լուսնահարս՝ սպասուհ,
որ իրենց սիրեցյալները դուրս գան ծովից, և ես նստեցի այդ
արմավենիներից մեկի լճի մոտ՝ հայացքս հառած ծովալճակին,
դիտելով աստղերի գիշերային հավաքը:

Ես շփտեմ, թե Լուստըն ամբողջ երեկոյի ընթացքում որտեղ
էր, սակայն ժամը տասի ու տասնմեկի միջև նա ակումբ էկավ:
Ոտքերն ալարկոտ քարը էր տալիս փոշոտ, անմարդ ճանապար-
հով, ձանձրույթից ու անգործութունից խեղդվելով և ակումբ
հատնելով, մինչև բիլիարդանոց մտնելը, մոտեցավ բարին, որ

մեն-մենակ մի բան խմբի Այժմ նա քաշվում էր միանալ սպիտակներին, երբ սրանք խմբված էին լինում: Անհրաժեշտ էր լինում վիճակի բավականաչափ դողա ընդունել, որպեսզի իրեն վատահ զգա: Նա կանգնած էր բաժակը ձեռքին, երբ Միլլերը մոտեցավ: Հազին միայն վերնաշապիկն էր, իսկ ձեռքում դեռ պահել էր խաղաձողը: Նա մի հայացք գցեց բարմենի վրա:

— Դուրս գնա, Ջեք:

Բարմենը՝ դեղին պիջակով ու կարմիր լավա-լավայով մի բնիկ, առանց խոսք ասելու դուրս սահեց փոքրիկ սենյակից:

— Լսիր, ուզում եմ հետդ մի երկու խոսք խոսել, Լուսըն,— ասաց հաղթանգամ ամերիկացին:

— Դե, դա այն քլաթիվ բաներից է, որ այս անիծյալ կղզում կարելի է ձրի անել:

Միլլերը ոսկե ակնոցը ավելի պինդ դրեց քթարմատին և Լուսընին հռոպեց յուր սառը, վճռական աչքերը:

— Լսիր, շահել, ինձ հասել է, որ նորից ես ծեծում միսիս Լուսընին: Ես դա թույլ չեմ տա: Եթե հենց այսօր դրան վերջ չտաս, քո կեղտոտ ոսկորները մեկ-մեկ շարժուփշուր կանեմ:

Եվ այստեղ Լուսընն իմացավ այն, ինչ այդքան երկար ուղում էր պարզել: Դա Միլլերն էր: Այդ մարդու արտաքինը՝ գեթ, ճաղատ, անմազ կլոր գեմքով, կրկնակի ծնոտով ու ոսկե ակնոցով, նրա տարիքը, պաշտոնաթող քահանայի մեղմ, խորթափանց հայացքը և միտքը էթեի մասին՝ այնքան բարակիրան ու կուսական, հանկարծակի սարսափով լցրեց Լուսընին: Իր բուրբ թևերով ճանդերձ, Լուսընը վախկոտ մարդ չէր, ուստի նա առանց մի խոսքի ամբողջ թափով խփեց Միլլերին: Միլլերը խաղաձողը բռնած ձեռքով հարվածն արագ ետ մղեց, իսկ հետո աչք ձեռքը թափահարեց և բռունցքն իջեցրեց Լուսընի ականջին: Լուսընն ամերիկացուց շորս մատնաչափ կարճ էր և նվազ ու փխրուն, թուլացած ոչ միայն հիվանդությունից ու ուժասպառ անող արևադարձային կլիմայից, այլև խմելուց: Միլլերը հանեց ակնոցն ու թաշկինակով սրբեց ապակիները:

— Կարծում եմ, հիմա գիտես, թե ինչ պետք է սպասել: Քեզ չգուշացրեցի: Լավ կլինի՝ ականջիդ օղ անես:

Նա վերցրեց իր խաղաձողը և ետ գնաց բիլիարդանոց: Այնտեղ այնպիսի աղմուկ էր, որ ոչ ոք չիմացավ տեղի ունեցածի մասին: Լուսընն իրեն ստիպեց ոտքի կանգնել: Ձեռքը դրեց

ականջին, որ դեռ դժժում էր: Հետո գողունի դուրս գնաց ակումբից:

Ես տեսա, որ մի մարդ անցնում է ճամփան՝ սպիտակ մի բիծ գիշերվա մթում, սակայն չիմացա, թե դա ով է: Նա քայլեց ներքև՝ դեպի ավեր, անցավ կողքովս՝ ծառերի մոտով, ու ներքև նայեց: Նոր միայն տեսա, որ դա Լուսընն է, բայց քանի որ նա անկասկած խմած էր, ձայն չհանեցի: Նա գնաց առաջ, անվճար-կանոթն մի երկու քալ գցեց ու ետ շրջվեց: Մոտեցավ ինձ ու, կռահալով, ուշադիր նայեց դեմքիս:

— Մտածեցի, որ դուք կլինեք,— ասաց նա: Հետո նստեց ու հանեց իր ծխամորճը:

— Ակումբում շոգ էր ու աղմկոտ,— խոսակցությունը սկսեցի ես:

— Ինչո՞ւ եք այստեղ նստել:

— Սպասում էի եկեղեցում պատարագը սկսվեր:

— Եթե ուզում եք, կգամ ձեզ հետ:

Լուսընը բուրբովին սթափ էր: Միտածամանակ մենք լուս նստած ծխում էինք: Մովալճակից մերթնդմերթ որևէ խոշոր ձկան ճողփյուն էր լսվում, իսկ քիչ այն կողմ՝ ստորջրյա խուլից ոչ հեռու, առադաստանավի լույս էր երևում:

— Մյուս շաբաթ եք գնում, չէ՞,— ասաց նա:

— Այո:

— Ինչ լավ կլինեք մի անգամ էլ տուն գնայի: Բայց հիմա էլ չեմ դիմանա: Դե գիտեք, ցուրտ է:

— Տարօրինակ է նույնիսկ մտածելը, որ հիմա Անգլիայում կրակի շուրջ նստած գողում են,— ասացի ես:

Քամու շունչ անգամ չկար: Գիշերվա հանդարտությունը կախարդիչ էր: Հազիս, բացի վերնաշապիկից ու բարակ կոստյումից, բան չկար: Ես հիանում էի նվազուն գիշերով: Հոգնաբեկ ձգվեցի ավազի վրա:

— Մա այն նոր տարվա գիշերներից չէ, որոնք մարդուն մղում են ապագայի համար լավ որոշումներ ընդունել,— ժլպտացի ես:

Լուսընը չպատասխանեց, սակայն շփոթեմ, թե իմ հենց այնպես արած գիտողությունը նրա մտքերին ինչ ուղղություն հաղորդեց, քանզի շուտով նա խոսեց: Խոսում էր ցածր ձայնով, առանց որևէ արտահայտության, բայց կրթված մարդու առո-

գանությամբ, և ակնջններս այնքան երկար ժամանակ ծակող գոնհիկ, քթախոս արտասանություններից հետո նրան լսելը թեթևություն էր բերում ինձ:

— Այ, թե շիտափլամ սարքեցի: Պարզ է, չէ՞: Անդունդի հատակին եմ, դուքս գալ չի լինի: «Մայրից ծայր սե, ինչպես անդունդ»:— Զգացի, որ մեղքերումն անելով ժպտաց:— Եվ տարօրինակն այն է, որ շեմ հասկանում, թե ինչպես սխալվեցի:

Ես շունչս պահեցի. ինձ համար չկա ավելի հուզաթրթիռ պահ, քան երբ մարդ առչես ցուցադրում է յուր հոգու մերկությունը: Ահա այդ ժամանակ էլ տեսնում ես, որ ոչ մի մարդ այնքան դատարկ ու անպետք չէ, որ իր մեջ մի բանի առկայծում շունենա ու կարեկցանք չհարուցի:

— Ամեն ինչ այսքան գարշելի չէր լինի, եթե զգայի, որ ամբողջովին իմ մեղքն է: Ծիշտ է, ևս խմում եմ, բայց եթե իրերն ուրիշ կերպ ընթանային, այդ բանը չէր լինի: Ես առանձնապես սեր շունեի խմիչքի հանդեպ: Երևի շպետք է էթելի հետ ամուսնացած լինելի: Եթե պարզապես ապրեի հետը, ամեն ինչ լավ կլիներ: Բայց այնքան էի նրան սիրում, որ...

Լոուսընի ձայնը դողացրեց:

— Գիտե՞ք, նա այնքան վատը չէ: Բախտն է մեղավոր, բախտը: Մենք թագավորների նման երջանիկ կարող էինք լինել: Երբ նա սխալվեց, ես երևի պետք է թողնեի գնար, բայց չէի կարող:— այն ժամանակ խենթի պես կապված էի նրան... ու հետո երեխան...

— Երեխային սիրո՞ւմ եք,— հարցրի ես:

— Սիրում էի: Հիմա երկուսն են, երեխ գիտե՞ք: Բայց ինձ համար այդևս այդքան նշանակություն չունեն: Բնիկներից շեք տարբերի: Ես ստիպված եմ հետևել որ սամոններն խոսելու:

— Իսկ ձեզ համար շատ ուշ է նորից սկսելը: Զե՞ք կարող ամեն ինչի վրա թրել ու գնայ այստեղից:

— Ու՞մ շունեմ դրա համար: Իմ բախտը վերջացած է:

— Մինչև հիմա սիրահարված եք ձեռն կնոջը:

— Արդեն ոչ: Արդեն ոչ:— Նա կրկնեց այդ երկու բառը մի աեսակ սարսափով:— Նույնիսկ դա չկա հիմա: Լրիվ վերջացած մարդ եմ:

Եկեղեցու գանգերը դողանջում էին:

— Եթե իրոք ուզում եք գալ գիշերային պատարագին, լավ կանեք շարժվենք,— ասացի ես:

— Շարժվենք:

Մենք վեր կացանք և քայլեցինք ճանապարհով: Եկեղեցին, ամբողջովին սպիտակ, կանգնած ծովի դեմ-դիմաց, բավական տպավորիչ էր, և դրա կողքին բողբոջական աղոթատներն ասես մանր-մունր մատուռներ լինեին: Ժանապարհին երեք մեքենա էր կանգնած և բազմաթիվ կառքեր, մի քանի կառքեր էլ շարվել էին պատի կողքը: Կղզու բոլոր մասերից մարդիկ եկել էին ժամերգության, և հսկայական բաց դռների միջով մենք տեսանք, որ ներսում բազմութուն է խնկված: Բեմը շլացուցիչ պայծառ լուսավորված էր: Մի քանի սպիտակներ կային ու բազմաթիվ խառնածիններ, սակայն մեծամասնությունը բնիկներ էին: Բոլոր տղամարդիկ շարվար էին հագել, քանզի եկեղեցին որոշել էր, թե լավա-լավան անպատշաճ է: Ետևում, բաց դռան մասսիվոսներ գտանք ու նստեցինք: Շատ շանցած, Լոուսընի աչքերին հետևելով, ես խառնածինների խմբի մեջ տեսա էթելին: Նրանք բոլորը գուլգված-գարգալված էին՝ տղամարդիկ բարձր, պինդ օձիքներով ու փայլող կոշիկներով, կանայք լայն, դույնդույն գլխարկներով: Եթևը, շարքի մոտով անցնելիս, գլխով էր անում ու ժպտում իր բնիկներին: Ժամերգությունն սկսվեց:

Երբ արարողությունը վերջացավ, Լոուսընը և ես միաժամանակ մի կողմ կանգնած մնացինք, գիտելով հետացող ամբոխը, հետո նա մեկնեց ձեռքը:

— Բարի գիշեր,— ասաց նա:— Լուսով եմ, որ ուղևորությունն Անգլիա հաճելի կլինի:

— Հա՛, բայց ես ձեզ մեկնելուց առաջ կտեսնեմ:

Լոուսընը քմծիծաղ տվեց:

— Հարցն այն է, ինձ իմա՞ծ կտեսնեք, թե՞ լուրջ:

Նա շրջվեց ու հեռացավ: Մեջս տպավորված մնացին այն հսկայական սե աչքերը, որ անզուսպ փայլում էին թավ հոնոնոն տակից: Մի րոպե անվճռական կանգ առա: Քունս չէր տանում, և ես մտածեցի պատկերուց առաջ, այնուամենայնիվ, մի ժամով ակումբ գնալ: Երբ մտա, տեսա, որ բիլիարդանոցը դատարկ է, բայց սրահում մի վեց հոգի նստած փոկեր են խաղում: Ներս գալուս պես Միլլերը գլուխը բարձրացրեց:

— Նստե՞ք ու թուղթ վերցրե՞ք,— ասաց նա:

— Լավ:

Մի քանի շիփ գնեցի ու սկսեցի խաղալ: Անշուշտ, դա ամենակլանիչ խաղն է աշխարհում, և իմ մի ժամը դարձավ երկու,

հետո երեք: Բնիկ բարձենը, որը, շնայած ուշ ժամին, զվարթ էր ու կայտառ, պտտվում էր շուրջներս և խմիչքով ապահովում մեզ կամ մեկ էլ տեսար որտեղից որտեղ ապուխտ ու մի բոքոն հաց էր հայտնաբերում: Խաղը շարունակվում էր: Հավաքվածների մեծ մասն իրենց շափից ավելի էին խմել, և խաղը խոշոր էր ու անզգուշ: Ես համեստ խաղ էի անում, ո՛չ ձգտում էի տանել, ո՛չ էլ անհանգստանում, որ կտարվեմ, սակայն կլանված հետևում էի Միլլերին: Բոլորի հետ միասին նա էլ բաժակ բաժակի ետեից էր խմում, բայց մնում էր զգաստ ու գլուխը չէր տաքանում: Նրա շիփերի կույտը գնալով մեծանում էր, իսկ գիմացը մի փոքրիկ թղթի կտոր էր դրած, ուր Միլլերը նշում էր տարբեր գումարները, որ պարտքով ավել էր նրանց, ում բախտը չէր բերում: Բարեկամաբար խրախուսում էր այն երիտասարդներին, որոնց փողը խլում էր: Նա անդադար կատակներ և ուրախ պատմություններ էր անելում, սակայն ոչ մի ավելառուկ բաց չընդեց, ոչ մի դեմքի շարժում աչքաթող շարեց: Ի վերջս լուսաբացը ներս սողաց պատուհաններից՝ հանդարտ, մի տեսակ անհամարձակ ու ամոթխած, ասես ոչ մի անելիք չունենար այդ սենյակում: Վրա հասավ նոր օրը:

— Գե, — ասաց Միլլերը, — կարծում եմ, հին տարին կարգին շուրջով ճամփու գրիներ: Հիմա եկեք մի վերջին անգամ կրկնապատկենք խաղը, ու ես գնամ անկողնուս մոտ: Մի մոռացեք, ես հիսուն տարեկան եմ, չնմ կարող գիշերները երկար նստել:

Գնացինք պատշգամբ: Առավոտը գեղեցիկ էր ու թարմ, և ծովայնակը փայլում էր գույնզգույն ապակու նման: Մեկը առաջարկեց քնելուց առաջ ջուրը մտնել, բայց ոչ ոք չէր ուզում ծովայնակում լողանալ. դրա հատակը լայրծուն էր ու անհաստատ: Միլլերի ավտոմեքենան դռան մոտ էր, և նա առաջարկեց մեզ տանել գետախորշ: Ներս լցվեցինք, և մեքենան շարժվեց ամայի ճանապարհով: Հասանք գետախորշին, որտեղ օրը, թվում է, թե նոր էր սկսում բացվել: Ծառերի ստվերի տակ ջուրը մութ էր, և գիշերը կարծես գեթ թաքնված լիներ այնտեղ: Տրամադրություններս շատ բարձր էր: Ո՛չ սրբիչ ունեինք, ո՛չ լողաղգեստ, և ես, որ զգաստութունս չէի կորցրել, մտածում էի, թե ինչպես էլիտի շորանանք: Բոլորս էլ թեթև էինք հագնված, և հանվելը լեկտր չուենց: Նելսընը, փոքրահասակ սուպերկարգոն, առաջինը մերկացավ:

— Մինչև տակը գնալու եմ, — ասաց նա:

Նելսընը սուզվեց, իսկ մի վայրկյանից մի ուրիշը հետևեց նրան, բայց ոչ խոր և նրանից շուտ դուրս լողաց: Հետո Նելսընը ջրի երես ելավ և ամբողջ թափով մի կողմ լողաց:

— Լսեք, հանեք ինձ:

— Ի՞նչ է եղել:

Ակնհայտորեն մի բան էր պատահել: Նելսընի դեմքին սուկանք էր գծադրված: Երկու հոգի պարզեցին ձեռքները, և նա վեր մագլցեց:

— Լսեք, տակը մարդ կա:

— Հիմարութուններ մի խոսիր: Խմած ես:

— Վիզս կկտրեմ: Ուրեմն մոտս սպիտակ տենդ է սկսվում: Ասում եմ, տակը մարդ կա: Վախից քիչ էր մնում ցնդելի:

Միլլերը մի ըսպե նրան նայեց: Փոքրիկ մարդը ծեփի գույն ուներ: Գողում էր ամբողջ մարմնով:

— Քասթրը, արի, — դիմեց Միլլերը հաղթանդամ ավատարիացուն, — ավելի լավ է գնանք տեանեք:


— Նա կանգնած է, — ասաց Նելսընը: — Շորերը հագին, ես տեսա: Ուզում էր ինձ ճանկել:

— Սուս կաց, — ասաց Միլլերը: — Պատրա՞ստ ես:

Նրանք սուզվեցին: Մենք, ափին լուռ կանգնած, սպասում էինք: Թվում էր, նրանք ջրի տակ այնքան մնացին, որ մարդու շունչը չէր հերիքի: Ի վերջո Քասթրը երևաց, իսկ հետո՝ դեմքն այնքան կարմիր, ասես ուր որ է կաթված պիտի ստանար, դուրս լողաց Միլլերը: Նրանք ինչ-որ բան էին քարշ տալիս: Մեկը թռավ ջուրը, որ օգնի, և երեքով բեռը քաշեցին ու հրեցին ափ: Ահա այդ ժամանակ տեսանք, որ դա կուուսըն էր՝ պիջակի մեջ փաթաթած մի մեծ քար ոտքերից կախ:

— Անպես է արել, որ հաստատ խեղզվի, — ասաց Միլլերը, կարճատես աչքերը սրբելով:

ՀԱՅՐ ՎԻՃԱԳԻՊԱՅԻՑ ԻՆՈՒ



որ օգնականը ժամանեց ցերեկը: Երբ ռեզիդենտը՝ միստր Ուորթթընը, տեղեկացավ, որ փրահուն՝ արդեն երևում է, նա գլխին դրեց իր արևապաշտպան սաղավարտը և դիմեց դեպի նավակայան: Վեց փոքրահասակ դայեր՝ զինվորներից կազմված պահակախումբը պատիվ տվեց, տեսնելով անցնող ռեզիդենտին: Ես գտնուեալով յայտեց, որ զինվորները կեցվածքը խլորխա է, համազգեստները՝ կոկիկ ու մարու, իսկ հրացանները փայլում են: Նրանք պատիվ էին բերում իրենց ռեզիդենտին: Նավակայանում կանգնած, միստր Ուորթթընն աչքերը հասել էր գեօի ոլորանին, սրտեղից ուր ուր է պիտի հայտնվեր նավակը: Պարուսինն անրիժ անզրոպարտիքը և ճերմակ կոշիկները հագին՝ նա անբասիր տեսք ուներ: Զեռքին Մալորբայի աշխատանքը պատրաստած սկիզբուխ ձեռնափայտ էր,

որ Փերաքի սուլթանն էր նախընտրել: Նոր ժամանողին ռեզիդենտը սպասում էր խառը զգացումներով: Տեղաշրջանում շատ աննիշեկար, որ վեր էր մի մարդու ուժեղից, և ամեն անգամ, երկրով մեկ իր պարբերական շրջագայությունները կատարելիս ռեզիդենտին բնիկ պաշտոնյայի ձեռքը թողնելը հարմար բան չէր, բայց նա այնքան երկար էր միակ սպիտակ մարդը եղել այդտեղ, որ չէր կարող մեկ ուրիշի գալուտյանը թերահավատությունը չվերաբերվել: Սովորել էր միայնությունը: Պատերազմի ժամանակ նա երեք տարի շարունակ անզլիացու երես չէր տեսել, և մի անգամ, երբ կարգադրություն էր ստացել հյուրընկալելու անտառապատման պետի մի պաշտոնյայի, խուճապի էր մատնվել այնպես, որ երբ անձանտն արդեն ժամանելու վրա էր, ռեզիդենտը, վերջինիս գալու առթիվ ամեն ինչ կարգավորելուց հետո մի երկտող էր գրել, թե ինքը ստիպված է գործով հեռանալ և դիմել էր փախուստի: Նա ետ չվերադարձավ այնքան, մինչև մի լրաբերի միջոցով տեղեկացավ, որ հյուրը մեկնել է Սլոյմ արդեն փրահուն երևում էր: Թիավարները կալանավորներ էին՝ տարբեր ժամկետներով դատապարտված դայերներ, և երկու բանտային հսկիչ նավակայանում սպասում էին, որպեսզի նրանց ետ տանեն բանտ: Դրանք ամրակազմ տղամարդիկ էին, զեռքին սովոր, և թիավարում էին ուժգին հարվածներով: Երբ նավակը տեղ հասավ, արմավենու տերևներից սարքած ծածկի տակից մի մարդ դուրս եկավ և դեպի ափ քայլեց: Պահակախումբը հրացանները պատվի առավ:

— Վերջապես տեղ հասանք: Դրողը տանի, ա՛յ թե ձգվել են ջղերս: Ես բերել եմ ձեր փոստը:

Նա խոսում էր չափազանցված զվարթությամբ: Միստր Ուորթթընը քաղաքավարի մեկնեց ձեռքը:

— Միստր Քո՛ւփեր, եթե չեմ սխալվում:

— Ճիշտ այդպես: Իսկ դուք ինչ է, ուրի՛շ մեկին էիք սպասում:

Հարցը կատակի ձևով արվեց, բայց ռեզիդենտը չժպտաց:

— Իմ ազգանունը Ուորթթըն է: Ես ձեզ ցույց կտամ՝ ձեր բնակարանը: Իրերը կբերեն:

Նա Քուփերին առաջնորդեց նեղ արահետով, և նրանք ցանկապատված մի հողամաս մտան, որտեղ փոքրիկ խրճիթ էր կանգնած:

— Ես հնարավորին շափ հարմար եմ դարձրել այս տունը, բայց, իհարկե, բավական տարի է այստեղ ոչ ոք չի ապրել:

Երճիթը ցցագերանների վրա էր կառուցված: Այն բաղկացած էր երկար հյուրասենյակից, որը տանում էր դեպի լայն պատշգամբը, և ետևի մասում երկու ննջարանից՝ երկար միջանցքով բաժանված:

— Լավ է, հարմար է,— ասաց Քուսիերը:

— Ենթադրում եմ, որ կուզենաք լողանք ընդունել և փոխել ձեր հագուստը: Ես շատ զգացված կլինեմ, եթե դուք այսօր երկուսն էլ ճաշեք ինձ հետ: Ժամը ութին ձեզ հարմա՞ր է:

— Երբ կուզեք, ինձ միշտ էլ հարմար է:

Ռեզիդենտը ժպտաց քաղաքավարի, բայց փոքր-ինչ շփոթված, և հեռացավ: Նա վերադարձավ ամրոց, որտեղ իր նստավայրն էր: Այն Քուսիերի թողած տպավորությունն այնքան էլ բարենպաստ չէր, սակայն միտքը Ուորբերթընն անկանխակալ մարդ էր և գիտեր, որ արդարացի չէ կարծիք կազմելը այդքան թուրքիկ մի հայացքից: Քուսիերը կլիներ երեսուն տարեկան: Նա բարձրահասակ, նիհար տղամարդ էր՝ դեղնավուն, կարմրությունից գուրդ, միապաղաղ դեմքով: Քիթը մեծ էր, արծվային, աչքերը՝ կապույտ: Երբ խոճիթ մտնելուց Քուսիերը հանել էր արևապաշտպան սաղավորտը և շարտել սպասավորին, միտքը Ուորբերթընը նկատել էր, որ նրա խոշոր գանգը՝ ծածկված կարճ, շագանակագույն մազերով, ինչ-որ արտառոց ձևով հակադրվում է թույլ, փոքր ծնոտին: Հագին խակի գույնի շալվար էր և նույն գույնի վերնաշապիկ, բայց քրքրված ու ցեխոտ, իսկ մաշված սաղավորտը օրեր շարունակ չէր մաքրվել: Միտքը Ուորբերթընը մտածեց, որ երիտասարդը մի շարաթ անց է կացրել տոսփոյա նավազնացություն շոգենավի վրա և վերջին քառասունութ ժամը պանկած է եղել փրահուի հատակին:

— Տեսնենք, թե ինչ տեսք կունենա, երբ գա ճաշելու:

Նա գնաց իր սենյակը, որտեղ իրերն այնպես կանոնավոր էին դասավորված, ասես տանն անգլիացի սպասավոր լիներ, հանվեց, աստիճաններով լողարան իջավ ու սառը ցնցուղ ընդունեց: Միակ զիջումը, որ նահանգապետն անում էր կլիմային, ճաշին սպիտակ սմոկինգ հագնեին էր, բայց ինչ վերաբերում էր մնացածին՝ օսլալած վերնաշապիկին ու բարձր օձիքին, մետաքսե կիսազուլպաներին ու լաթած կոշիկներին, ապա այդ ամենն այնքան ձևական տեսք ուներ, ասես դրանք հագնողը Փել-Մելի

իր ակումբում ճաշելիս լիներ: Որպես փութազան տանտեր՝ նա գնաց ճաշասենյակ՝ տեսնելու, թե սեղանի վրա ամեն ինչ հարկեղածի նման է արդյոք: Խոլորձի փունջն ուրախ տեսք էր տվել սենյակին, և ճաշասպասքի արծաթը փայլում էր պայծառ: Անձեռոցիկները խնամքով ոլորված էին: Արծաթե մոմակաշների մեջ մեղմ լույսով վառվում էին մոմերը: Միտքը Ուորբերթընը գոհունակությամբ ժպտաց և վերադարձավ հյուրասենյակ՝ սպասելու հյուրին: Ետևով վերջինս հայտնվեց: Քուսիերի հագնեցն աչքնույն իրակի գույնի կարճ շալվարը, վերնաշապիկն ու հնամաշ պիջակն էին, որոնցով նա ափ էր իջել: Միտքը Ուորբերթընի դեմքին սառեց ողջուձի ժպիտը:

— Հելլո, պա՛հ, դուք կարգին հագնվել եք,— ասաց Քուսիերը:— Ես չգիտեի, որ այդպիսի բան եք անելու: Լավ էր սարճով՝ շհագա:

— Ոչինչ, վնաս չունի: Ենթադրում եմ, որ ձեր բոյերը՝ զբաղված էին:

— Իզուր եք նեղություն քաշել ու իմ պատճառով հագնվել:

— Ես ձեր պատճառով չեմ հագնվել: Ես միշտ այդպես եմ վարվում ճաշելիս:

— Նույնիսկ երբ մենա՞կ եք:

— Հատկապես երբ մենակ եմ,— պատասխանեց միտքը Ուորբերթընը պող հայացքը հառած գրուցակցին:

Նա տեսավ, թե ինչպես ծիծաղի նման մի բան առկաթեց Քուսիերի աչքերում, և գայտույթից շառագունեց: Միտքը Ուորբերթընը տաքարյուն մարդ էր. այդ բանը կարելի էր գուշակել նրա կամակոր դիմագծերով կարմիր դեմքից և սպիտակող շիկակարմիր մազերից. կապույտ աչքերը՝ որպես կանոն սառը և բննախույզ, հանկարծ կարող էին փայլատակել ցատկով, բայց նա աղնվակիր մարդ էր և արդարության կողմնակից: Պիտի ուժերի ներած ամեն ինչ աներ, որպեսզի հարմարվեր այս անձնավորությանը:

— Երբ ես ապրում էի Լոնդոնում, այնպիսի միջավայրում էի լինում, որտեղ արտառոց կլիներ ամեն երեկո ճաշի համար շրջահագնվելը, արնախ, ինչպես ամեն առավոտ լողանք շրջողները: Երբ եկա Բորնետ, պատճառ չտեսա այդքան լավ սովորությանը դավաճանելու: Պատերազմի երեք տարիների ընթացքում ոչ մի անգամ սպիտակ մարդու երես չտեսա: Եվ ես երբեք չմոռացա հագնվել, եթե միայն բավականաչափ առողջ էի ճաշի գալու:

համար Գուք այս երկրում այնքան էլ երկար չեք եղել, հաստացե՛ք ինձ, շկա ավելի լավ ուզի՝ պահպանելու համար սեփական արժանապատվությունը, որ պիտի ունենաք ձեր մեջ: Երբ սպիտակ մարդը թեկուզ ամենափոքր շափով, տեղի է տալիս իրեն շրջապատող արդեցություններին, նա շատ շուտով կորցնում է հարգանքն իր նկատմամբ, իսկ երբ նա կորցնում է այդ հարգանքը, հաստատ համոզված եղեք, որ բնիկները նախակես դադարում են նրա հանդեպ տածել այդ զգացմունքը:

— Դե, եթե դուք սպասում եք, որ ես օալալած վերանաշապիկ ու բարձր օձիք կհագնեմ այս շոգին, վախենում եմ, որ հրասթափվեք:

— Երբ դուք ճաշում եք ձեր սեփական խոճիթում, իհարկե, կհագնվեք, ինչպես հարմար կգտնեք, սակայն, երբ շնորհ եք անում ճաշել ինձ հետ, երևի գաթ եղրակացություն, որ միակ քաղաքավարի բանը քաղաքակիրթ հասարակությունում ընդունված ձևով հագնվելն է:

Երկու մալալացի բոլ, սոնգրոններով, հագներին սարոնգներ և պղնձ կոճակներով նորակար պիշակներ, ներս կկան, մեկը բերում էր ջինի փահիթ², մյուսը մատուցարան՝ վրան ձիթապտուղ և անձրուկ: Հետո ներս գնացին ճաշելու: Միտար Ուորբրթընը հպարտանում էր, որ իր լինացի խոհարարը լավագույնն է Թորնետում, և նա շատ էր շարշարվում, որպեսզի այդ դժվարին հանգամանքներում հնարավոր ամենալավ ուտելիքները ունենա: Չինացին մեծ հնարամտություն էր ցուցաբերում ձեռքի տակ եղած մթերքներից կարելվույն շափ համեղ բաներ պատրաստելու համար:

— Ուղո՞ւմ եք նայել,— նա ճաշադուցակը մեկնեց Քուփերին:

Ճաշադուցակը ֆրանսերին էր գրված, և կերակրատեսակները հնչեղ անուններ ունեին: Մատուցողների դերը երկու բոլերն էին կատարում: Սենյակի հակադիր կողմերում ուրիշ երկու բոլ ֆահահարում էին հսկայական հովհարները և այդպիսով շարժում հաղորդում հեղձուկ օդին: Ուտեստեղենը շքեղ էր, իսկ շամպայնը՝ գերազանց:

— Գուք ամե՞ն օր եք այսպես անում,— հարցուց Քուփերը: Միտար Ուորբրթընը մի անփույթ հայացք նետեց ճաշադուցակին:

— Չնկատեցի, թե ճաշը սովորականից տարբեր լինեք,—

ասաց նա:— Ես ինքս շատ քիչ եմ ուտում, բայց կանոն եմ դարձրել, որ ամեն երեկո ինձ պատշաճ ճաշ մատուցվի: Գոխոհարարի համար պրակտիկա է, իսկ բոլերի համար՝ կարգապահական միջոց:

Ձրույցը շարունակելը ջանքեր էր խլում: Միտար Ուորբրթընը ընդժամահարգալից էր պահում իրեն և, հնարավոր է, փոքր-ինչ շարախնդում էր, տեսնելով, թե իր գործընկերը դրանից ինչպես է շփոթվում: Քուփերն ընդամենը մի քանի ամիս էր եղել Սեմբուլում և միտար Ուորբրթընի հարցերը Քուալա Սոլորի՝ իր ընկերների մասին շուտով սպառվեցին:

— Ի դեպ,— քիչ անց ասաց նա,— դուք հանդիպեցի՞ք Հենրիի արգանունով մի տղայի: Նա կարծեմ վերջերս պիտի եկած լինի:

— Ահ, այո, նա ուտիկանությունում է աշխատում: Անդգամի մեկն է:

— Ձեմ կարծում, որ այդպիսին լինի: Նրա քեռին իմ ընկերն է՝ լորդ Բարբրլաֆը: Հենց վերջերս լինող Բարբրլաֆից նամակ ստացա, որտեղ խնդրում էր հետաքրքրվել նրանով:

— Հա՛, ես լսել եմ, որ ինչ-որ մեկի բարեկամն է: Երևի այդպես է աշխատանք ստացել: Նա իթընում ու Օքսֆորդում է սովորել և երբեք չի մոռանում իմացնել տալ այդ մասին:

— Գուք ինձ զարմացնում եք,— ասաց միտար Ուորբրթընը:— Նրանց ողջ ցեղը երկու հարյուր տարի է, ինչ իթընում ու Օքսֆորդում է սովորում: Ես կարծում եմ, դա նրա համար սովորական բան պիտի լինի:

— Գրողի տարած ձևապաշտի մեկն է:

— Իսկ դո՞ւք ինչ դպրոցում եք սովորել:

— Ես ծնվել եմ Բարբադոսում: Այնտեղ եմ կրթությունը ստացել:

— Ա՛, ահա թե ինչ:

Միտար Ուորբրթընը կարողացավ այնքան մեծ վիրավորանք դնել իր կարճ բացականչության մեջ, որ Քուփերը կարմրեց: Նա լռեց:

— Ես երկու թե երեք նամակ եմ ստացել Քուալա Սոլորից,— շարունակեց միտար Ուորբրթընը,— և իմ տպավորությունները երիտասարդ Հենրիին շատ հաջող պատանի է: Ասում են առաջնակարգ սպորտսմեն է:

— Օ՛, այո, նա շատ հանրաճանաչ է: Նրա նմաններին Քուա-

լա Սուլորում շատ են սիրում: Ես ինքս մի առանձին բան չեմ տեսնում այդ առաջնակարգ սպորտսմենների մեջ: Վերջի վերջո, քննչ նշանակություն ունի, որ մարդը մյուսներից լավ է գուժ կամ թեևիս խաղում: Եվ ո՞ւմ է պետք, որ բխիարդում կարող է յոթանասունմեկ միավոր հավաքել: Անգլիայում այդպիսի բաներին շափից շատ ուշադրություն են դարձնում, գրողը տանի:

— Դուք այդպե՞ս եք կարծում: Ես այնպիսի տպավորություն եմ ստացել, որ առաջնակարգ սպորտսմենները պատերազմում մյուսներից վատ շորսևորեցին իրենց:

— Դե, եթե պատերազմից խոսենք, ապա ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Ես Հենրիկի հետ նույն գնդում էի և կարող եմ ձեզ ասել, որ զինվորները նրան տանել չէին կարող:

— Ի՞նչ գիտեք:

— Որովհետև ես այդ զինվորներից մեկն էի:

— Օ՛, ուրեմն դուք սպայի կոչում չունեիք:

— Որտեղի՞ց ունենայի: Ես այսպես կոչված «գաղութածին» եմ: Հատուկ դպրոցներ չեմ գնացել և ծանոթություններ չունեմ: Գրա համար էլ սկզբից մինչև վերջ շարքային եմ եղել:

Քուսիերը մոռցվեց: Զգացվում էր, որ դժվարությամբ է զբաղում իրեն, որպեսզի չսկսի կատաղել, վիրավորական բաներ դուրս տալ: Միստր Ուորթթերը դիտում էր նրան: Ինքզինքն սիստեմի կապույտ աշքերը նեղացան, ղննեցին խոսակցին և կարծիք կազմեցին: Նյութը փոխելով, միստր Ուորթթերը սկսեց Քուսիերի հետ զրուցել վերջինիս անելիք աշխատանքի մասին և հենց որ զարկեց ժամը տասը, ոտքի կանգնեց:

— Դե, այլևս ձեզ չեմ պահի: Կարծում եմ, որ հոգնած կլինեք ճանապարհորդությունից:

Նրանք մեկմեկու ձեռք սեղմեցին:

— Հա, լսեք, բան էի ուզում ասել,— հանկարծ հիշեց Քուսիերը,— կարո՞ղ եք ինձ համար մի բոյ ճարել: Այն մի բոյը, որ ունեի, չբվեց, երբ Քուսյա Սուլորից այստեղ էի գալիս: Նա ճամպրուկս ու մնացած բաները նավ բերեց և հետո անհետացավ: Մինչև իմացա, որ հետս չի, արգեն գետարերան էինք հասել:

— Ես կհարցնեմ իմ ավագ բոյին: Զեմ կսովածում, որ ձեզ համար մեկնում եկին կգտնի:

— Շատ լավ: Ուղղակի ասեք, որ մոտս ուղարկի, և եթե հավանեմ, կվերցնեմ:

Լուսնյակ գիշեր էր, և լապտեր վառելու կարիք չկար: Քուսիերը ամբողջ անցնելով՝ քայլեց դեպի իր խրճիթը:

«Հետաքրքիր է, ինչո՞ւ են այսպիսի մի անձնավորություն ուղարկել ինձ,— մտածում էր միստր Ուորթթերը:— Եթե նրանց ջոկած ամենահաջող մարդը սա է, ապա ես այնքան էլ լավ կարծիքի չեմ նրա մասին:

Նա անշտապ քայլեց պարտեզով: Ամբողջ կառուցված էր մի փոքրիկ բլրի գագաթին, և այգին հասնում էր մինչև դետափ. սփին մի տաղավար էր կանգնած, սրտեղ ղեկզեկուր սովորություն էր դարձրել ճաշից հետո գալ ու սիգար ծխել: Եվ հաճախ ետևում հոսող դետից ձայն էր լսվում,— ձայն որևէ մայրաչացու, որը շափից դուրս երկշոտ էր ցերեկվա լույսին խլղախելու համար,— և մի բողոք կամ մեղադրանք էր մեղմորեն հասնում նրա ականջին, որևէ փոքրիկ տեղեկություն էին շնչում կամ օգտակար ականարկ, մի բան, որ ուրիշ ոչ մի կերպ նրան՝ պետական պաշտոնյային, չէր հասնի:

Ինքզինքն սր թափով ընկզմվեց արմավենու փայտից պատրաստված երկար բազկաթուղի մեջ: Քուսիե՛ր... նախանձ, անդաստիարակ մի անձնավորություն՝ գոռոզ, ինքնագոհ ու ինքնասիրահարված: Բայց միստր Ուորթթերնի նեղսրտությունը երկար չհակամարտեց գիշերվա անաղմուկ գեղեցկությանը: Օղջ լի էր տաղավարի մոտի ծառին բացված ծաղիկների անուշ բուրմունքով, և լուսատիկները դանդաղ լողում էին՝ արծաթավուն փայլ արձակելով: Լուսինը գետի հարթության վրա ճանապարհ էր փռել Միվայի թեթևաբայլ հարսնացուի՝ համար, գիմացի սփին արմավենիների թավուտը մեղմորեն գծազրկել էր երկրների Ֆոնին: Խաղաղությունը կամացուկ սողոսկեց միստր Ուորթթերնի հոգին:

Նա տարօրինակ արարած էր և ինքնատիպ կյանք էր ունեցել: Քսանմեկ տարեկան հասակում պատկանելի կարողություն էր ծառանգել՝ հարչուր հազար ֆունտ, և Օքսֆորդն ավարտելուց հետո իրեն նետեց հորձանուսն ուրախ կյանքի, որ այն օրերին (այժմ միստր Ուորթթերը հիտունչորս տարեկան էր) սպասում էր լավ ընտանիքի երիտասարդներին: Նա բնակարան ուներ Մաունթ օթթիթում², սեփական երկանիվ կառք և որսորդական անակ՝ Ուորուիքշայլում: Նա լինում էր բոլոր այն վայրերում, որտեղ հավարվում էր ընտիր հասարակությունը: Ուորթթերը գեղեցկատես էր, հետաքրքիր զրուցակից էր և առատաձեռն ըն-

կեր: Նա դեմք էր վազ իննսունական թվականների լուսնայան
բարձրաշխարհիկ հասարակությունում, որն այն ժամանակ դեռ
չէր կորցրել իր ինքնամոտիությունը և ոչ էլ փայլը: Բուրական
պատերազմի մասին, որը ցնցեց այն, ոչ որ չէր էլ մտածում,
առաջին համաշխարհայինը, որը կործանեց այն, նախադուշա-
կում էին միայն հոռետեսները: Այդ օրերին հարուստ երիտա-
սարգ լինելը տհաճ բան չէր, և միտքը Ուորթթերնի բուխարու
վրայի գարակը ծայրից ծայր ծածկված էր անվանի մարդկաց
այցեետոմսերով: Միտքը Ուորթթերնը գոհունակությամբ ի ցույց
էր դնում դրանք: Քանզի միտքը Ուորթթերնը սնոր՝ էր: Ոչ այն
երկշտ սնորներից, որոնք մի քիչ ամաշում են իրենցից ավելի
բարձրերի հանդեպ տածած զգացմունքներից, ոչ այն սնորե-
րից, որոնք մոտիկություն են փնտրում քաղաքականության մեջ
հայտնի կամ արվեստում անուն հանած մարդկանց հետ, ոչ էլ
նրանցից, որոնք շացած են ուրիշների հարստությունից, նա
պարզապես հասարակ, առանց մի փոքր խառնուրդի սնոր էր,
որը սիրառատորեն նվիրված է իրենից անվանիներին: Նա դուռ-
թագրիկ էր և տաքարյուն, սակայն հարյուր անգամ կզերա-
գասեր ստորացված լինելի դիրքի տեղ մարդու կողմից, քան
շոյված՝ հասարակ ծագման մարդուց: Նրա անունը անցողիկ
կերպով նշված էր Բարբերի «Պերերի գրքում» և գվարձալի էր
տեսնել հնարամտությունը, որ նա գործի էր դնում նշելու համար
իր հեռավոր ազգակցությունն ազնվական մի ընտանիքի: Բայց
միտքը Ուորթթերնը երբեք մի խոսքով անգամ չհիշեց լիվերիու-
ցի ազնիվ Ֆարբիկատիորը, որից կարողություն էր ժառանգել
յուր մոր՝ ոմն միսս Գաբրիելի միջոցով: Նրա ճոխ կյանքը թու-
նավորում էր սարսափը, թե չլինի մի օր, Քաուսում կամ գուցե
Աքոթթում, երբ ինքը մի դքսուհու կամ անգամ արքայազնի հետ
լինի, այդ աղգակներին որեւէ մեկը ծանոթություն հանդես
բերի իր հետ:

Նրա թուլությունն այնքան սկնհայտ էր, որ շուտով բոլորն
այդ մասին իմացան: Սակայն այդ խելահեղ սնորիվը շափից
դուրս անհեթեթ էր, որպեսզի պարզապես բամահրանք ծներ:
Մեծամեծները, որոնց նա երկրպագում էր, ծիծաղում էին վրան,
բայց սրտի խորքում համարում էին, որ այդ երկրպագությունն
անբնական չէ: Խեղճ Ուորթթերնն, իհարկե, մի ահավոր սնոր
էր, սակայն ամենը մի կողմ դրած, կարգին անձնավորություն:
Նա միշտ պատրաստ էր վճարել որեւէ անփող ազնվականի հա-

շիվը, և եթե դուք նեղ վիճակում էիք, կարող էիք վստահ լինել,
որ նրանից մի հարյուր ֆունտ պարտք կստանաք: Ուորթթերնը
հաշկերությունը էր տալիս: Նա վատ էր վիստ խաղում, սակայն
երբեք չէր մտահոգվում, թե ինչքան տարվեց, եթե խաղացողների
կազմն ընտիր էր: Թղթամոլ էր, ընդ որում անհաջողակ թղթա-
մոլ, բայց արժանապատվությամբ տարվելի գիտեր, անհնար էր
չհիանալ այն ստոնարյունություններ, որով նա մի նստելուց կորց-
նում էր հինգ հարյուր ֆունտ: Ուորթթերնի սերը խաղաթղթերի
նկատմամբ, համարյա ոչ պակաս ուժեղ, քան սերը կոշումների
նկատմամբ, նրա կործանման պատճառը հանդիսացավ: Մի կող-
մից շուրջ կյանք էր վարում, մյուս կողմից՝ հսկայական գու-
մարներ տարվում: Գնալով սկսեց ավելի մոլեգին կերպով խա-
ղալ, սկզբից ձիարշավարանում, իսկ հետո՝ բորսայում: Ուորթթ-
թերնը պարզունակ քնավորություն ուներ, և անազնիվ մարդիկ,
հանձին նրա, միամիտ զոհ էին գտնում: Զգիտեմ, թե այդ մար-
դը երբեւէ գլխի ընկա՞վ արդյոք, որ իր բարձրաշխարհիկ ընկեր-
ները ետևից ծիծաղում են վրան, բայց կարծում եմ, նա մի աղոտ
խնազողով զգում էր, որ իրավունք չունի ցույց տալ, թե փողի
մասին մտածում է: Միտքը Ուորթթերնն ընկավ վաշխառուների
ձեռքը: Երեսունչորս տարեկանում նա սնանկացած էր:

Նա շափից ավելի էր եերծծված իր դասակարգի ոգով, որ-
պեսզի տատանվեր հաջորդ քայլն անելու: Երբ նրա շրջապատի
մարդն անփող էր մնում, գնում էր գաղութներ: Ոչ որ չսեց,
որ միտքը Ուորթթերնը տրտնջար: Նա ոչ մի անգամ չըողոթեց,
որ իր ազնվազարմ ընկերը խորհուրդ էր տվել մի կործանարար
սպեկուլյացիայի մեջ մտնել, իրենից պարտք վերցնողներից ոչ
մեկին շտափակեց նա վճարել, մարեց իր պարտքերը (եթե միայն
իմանա՞ր, որ այդ րուպին իր մեջ խոսում էր աղհամարձված
լիվերիուցի Ֆարբիկատիորը արյունը), ոչ մեկի մոտ օգնու-
թյուն չփնտրեց, և, կյանքում մատը մատին խփած չլինելով,
սկսեց վաստակի ձև որոնել: Նա մնաց գվարթ, անհոգ ու կեն-
սախինդ: Յանկություն չունեք ծանոթներից որեւէ մեկին անհար-
մարություն պատճառել՝ իր գծրախտությունների մասին պատ-
մելով: Միտքը Ուորթթերնը սնոր էր, բայց նա նաև ջենտլմեն
էր:

Միակ լավությունը, որ նա խնդրեց այն բոլոր մեծամեծ բա-
րեկամներից, որոնց ամենօրյա ընկերակցություն մեջ ապրել
էր տարիներ շարունակ, մի հանձնարարական էր: Այդ ժամա-

նակվա Սեմբուլուի սուլթանը՝ խելացի մի մարդ, իր մոտ ծառայության վերցրեց միստր Ուորրթթընին: Մեկնելու նախորդ երեկոյան նա վերջին անգամ ճաշեց իր ահումբում:

— Կեզ եմ, որ մեկնում եք, Ուորրթթընը, — դիմեց նրան Հերֆորդի ձեռ դուքսը:

— Այո, գնում եմ Բորնհու:

— Տեղ աստված, ինչի՞ համար եք այնտեղ գնում:

— Ահ, ես սնանկացել եմ:

— Մի՞թե: Ցավում եմ: Դե, իմաց տվեք մեզ, երբ ետ գար Ցանկանում եմ, որ լավ ժամանակ անցկացնեք:

— Իհարկե, այնտեղ լավ որս կա:

Դուքսը գլխով արեց և հեռացավ: Մի քանի ժամ անց միստր Ուորրթթընը դիտում էր, թե ինչպես է Անգլիայի փոք հալվում մշուշի մեջ: Նա ետևում թողեց այն ամենն, ինչ նրա համար կյանքի իմաստ էր կաղմում:

Քսան տարի էր անցել դրանից հետո: Ուորրթթընն ահաբեկ նամակազրույթուն էր պահպանում բազմաթիվ մեծամեծ տիկնանց հետ, և նրա նամակները հետաքրքրական էին ու անկաշկանդ: Նա երբեք չկորցրեց յուր սերը կոչում ունեցողների նրկատմանը և ծայրահեղ ուշադրությամբ էր բնթերցում «Մայմսի» հայտարարությունները (որ նրան հասնում էր սպառփելուց վեց շաբաթ անց) նրանց անցադարձի մասին: Միստր Ուորրթթընը խնամքով աչքի էր անցկացնում ծնունդներին, մահերին և ամուսնություններին վերաբերող սյունակները և միշտ պատրաստ էր շնորհավորական կամ ցավակցական նամակ գրելու: Կարագարդված լրագրերն ասում էին նրան, թե ով ինչ արտաքին ունի և իր պարբերաբար Անգլիա կատարած այցելությունների ժամանակ նա, ասես կապր երբեք կտրած էլ չլինեք, ամեն ինչ գիտեր ցանկացած նոր անձնավորության մասին, որ կարող էր հայտնվել սոցիալական կյանքի տեսադաշտում: Նրա հետաքրքրությունն ընտիր հասարակության հանդեպ կենդանի էր այնպես, ինչպես երբ ինքն էլ գեմք էր այնտեղ: Առաջվա նման դա միակ բանն էր, որ Ուորրթթընն ուշադրության արժանի էր համարում: Սակայն աննկատելիորեն նրա կյանքը մի ուրիշ հետաքրքրություն էլ էր ներս սողոսկել: Դիրքը, որն ուներ միստր Ուորրթթընը ներկայումս, շոյում էր նրա սնապարծությունը: Նա այլևս առաջվա այնպիսի չէր, որը ժպիտ էր կորցում մեծերի երեսներին, նա տեր էր, որի խոսքն օրենք է: Միստր Ուորրթթընին

բավականություն էր պատճառում դայեր զինվորների պահակախումբը, որ պատիվ էր տալիս իր անցնելուց: Նա սիրում էր իր նմանների դատը վարել: Նրան զոհունակություն էր պատճառում հակառակորդ առաջնորդների վեճերը խաղաղեցնելու: Առաջ, երբ բանագործները շատ էին անհանգստացնում, ռեզիդենտը ճամփա էր ընկնում նրանց հետապնդելու, հպարտ իր պահելաձևով: Նա շափեց դուրս փառասեր էր, որպեսզի անվախ ու խիզախ լինեք, և անգամ մի գեղեցիկ պատմություն էին պատմում, թե ինչպիսի սառնարյունությամբ էր այդ մարդը մեն-մենակ մտել զինված մի գյուղ և պահանջել, որպեսզի արնախում ծովահենը հանձնվի: Միստր Ուորրթթընը դարձավ հմուտ զեկավար: Նա խիստ էր, արդարամիտ ու արևելի:

Յվ կամաց-կամաց նրա մեջ խոր սեր առաջացավ մալայացիների նկատմամբ: Ինքզինքն սկսեց հետաքրքրվել բնիկների օրենքներով և սովորություններով: Երբեք չէր հոգնում նրանց խոսակցությունները լսելուց: Ուորրթթընը հիանում էր այդ մարդկանց առաքինություններով և ժպիտով ու ուսերը թոթվելով ներքում արատները:

— Ժամանակին, — ասում էր նա, — ես մոտ հարաբերությունների մեջ եմ եղել Անգլիայի մեծամեծ զենտվեհներին ու մանց հետ, բայց երբեք եմ ճանաչել ավելի հրաշալի զենտվեհներին, քան այն մի քանի բարեծին մալայացիները, որոնց հրպարտ եմ իմ ընկերներն անվանելու:

Ուորրթթընին դուր էր գալիս նրանց քաղաքավարությունը և երբին շարժուձևերը, մեղմությունն ու հանկարծակի կրքոտությունը: Նա ննթագիտակցորեն շատ ճիշտ զգում էր, ինչպես պետք է վարվել բնիկների հետ: Անկեղծ քնքրություն էր տալում նրանց հանդեպ: Սակայն միստր Ուորրթթընը երբեք չէր մոռանում, որ ինքն անգլիացի զենտվեհ է, և տանել չէր կարողանում սպիտակներից նրանց, որոնք տեղի էին տալիս բնիկների սովորություններին: Նա ինքը դիջումներ չէր անում: Չէր բնորոշակելի այն բազմաթիվ սպիտակամորթներին, որոնք բնիկ կնոջ հետ էին ամուսնանում, քանզի այդ տեսակ սիրալիկ կապը, որքան էլ որ օրինակալից վեր սովորություններով, թվում էր նրան ու միայն սկանդալալիս, այլև անվայել: Դժվար թե այն մարդը, որին Ալբերտ էդուարդը՝ Ռեյսի թագաժառանգը, ժամանակին սպարզապես Ձորջ էր անվանել, որևէ կապ ունենար բնիկ կնոջ հետ: Այժմ, կրո նա Բորնհու էր վերադարձել Անգլիա կատարած

այցելութիւններէր, մի տեսակ թեթեւացած էր զգում իրենս Միստր Ուորրթթընի ընկերները, ինչպես նա ինքը, այլևս երիտասարդ չէին, և հայտնվել էր նոր սերունդ, որը նրան նայում էր որպէս մի ծանձրալի ծեղրուկի։ Ռեզիդենտին թվում էր, թէ այսօրվա Անգլիան շատ բան է կորցրել այն ամենից, ինչ ինքը սիրել է իր երիտասարդութեան տարիների Անգլիայում։ Քայց Բորնհոն նույնն էր մնացել։ Դա նրա տունն էր այժմ։ Ուորրթթընը պատրաստվում էր շփոթնել ծառայութիւնն այնքան ժամանակ, որքան հնարավոր կլինի, և սրտի խորքում հուշ էր փայփայում, որ կմեռնի ավելի շուտ, քան իրեն վերջապես կըստիպեն պաշտօնաթուղ լինել։ Կտակի մեջ նա գրել էր, թէ որտեղ է, որ մեռնի, ուզում է, որ իր անշունքը կտ բերվի Սեմքուու ու թաղվի իր սիրած մարդկանց մեջ՝ գետի մեղմ կարկաչունի ներքո։

Սակայն այս հուշերը միստր Ուորրթթընը թաքուն էր պահում մարդկանց աչքերից, և, տեսնելով այդ պնդագեղ, մարմնեղ մարդուն՝ առնական, մաքուր սափրված երեսով ու սպիտակող մազերով, ոչ ոք մտքով անգամ չէր անցկացնի, որ սա այդքան խոր մի զգացմունք է փայփայում։

Ռեզիդենտը լավ գիտէր, թէ աշխատանքը կդդում ինչպես պիտի տարվի, և հաշտող մի քանի օրը կանկաթանքով հետևում էր օգնականին։ Նա շուտով տեսավ, որ Քուփերը շանագիր է ու գործին լավատեղյակ։ Միակ թերութիւնը, որ նկատեց, վերջին տես կոպիտ վերաբերմունքն էր բնիկների հետ։

— Մալայացիներն ամաչկոտ են ու շատ զգայուն, — ասաց նա Քուփերին։ — Կարծում եմ, դուք շատ ավելի լավ արդունքներ կստանաք, եթէ մշտապես հոգ տանեք լինել բաղաբավարի, համբերատար ու բարի։

Քուփերը ծիծաղեց կարճատև, տհաճ ծիծաղով։

— Ես ծնվել եմ Բարբադոսում և Աֆրիկայում էի պատերազմի ժամանակ, Կարծում եմ, քիչ բան կա նիզերների մասին, որ ես չիմանամ։

— Ես չգիտեմ ոչինչ, — հեզորեն ասաց միստր Ուորրթթընը։ — Սակայն մենք նրանցից չէինք խոսում։ Մենք խոսում էինք մալայացիներից։

— Մալայացիներն, ինչ է, նիզեր չե՞ն։

— Դուք շատ տգետ եք, — պատասխանեց միստր Ուորրթթընը։

Նա այլևս ոչինչ չասաց։

Քուփերի ժամանելու հետևանքով առաջին կիրակի օրը ռեզիդենտը հրավիրեց նրան ճաշի։ Նա ամեն ինչ արեց ըստ ծիսակարգի, ու թէև նրանք նախորդ օրը հանդիպել էին գրասենյակում և հետո ամբողջի պատշգամբում ժամը վեցին միասին շինի կոկտեյլ խմել, մի բաղաբավարի երկուսը ուղարկեց խոճիթ բռնի միջոցով։ Քուփերը, թէև դժկամով, սկսեց կոտորում հարգած և միստր Ուորրթթընը, ճիշտ է, դճ, որ իր ցանկալիները հարգվել է, քամահրանքով նկատեց, որ երիտասարդի հագուստը վատ է ձևված, և վերնաշապիկը չի սաղում։ Քայց այդ երեկո միստր Ուորրթթընը լավ տրամադրութեան մեջ էր։

— Ի միջի այլոց, — ասաց նա Քուփերին, երբ իրար ձեռք էին սեղմում, — ես խոսեցի իմ ավագ բոյի հետ ձեզ համար մեկին ճարելու մասին, և նա առաջարկեց իր եղբորորդուն։ Նա նրան տեսել եմ՝ ուշիմ և պատրաստակամ պատանջակ է կրելով։ Կուզե՞իք նրան տեսնել։

— Դեմ չեմ։

— Նա հիմա սպասում է։

Միստր Ուորրթթընը կանչեց բոյին և ասաց, որ նա մարդ ուղարկի իր եղբորորդուն կանչելու։ Մի րոպեից հայտնվեց մի բարձրահասակ, նրբիքուն սլաքանի՝ մոտ քսան տարեկան, խոշոր մուգ աչքերով ու հաճելի կիսազեմով։

Նա հարգարուն տեսք ուներ. հագին սարունգ, կարճ սոլիտակ տիջակ, իսկ գլխին՝ ստանց ծոպի, սալորի գուլչի թավշյա ֆետ։ Սրտա էին անվանում այդ պատանուն։ Միստր Ուորրթթընը խրախուսանքով նայեց նրան, և ռեզիդենտի ձայնն անկախ իր կամքից փափկեց, երբ սկսեց Աքասի հետ խոսել սահուն ու զուեղ մալայերենով։ Սպիտակամորթների հետ ռեզիդենտը կարող էր լինել ծաղրող, հեզող, բայց մալայացիների հանդեպ նա ներողամտութեան և բարութեան մի սքանչելի խառնուրդ էր ցուցաբերում։ Չէ՞ որ ինքը սուլթանի փոխանորդն էր այնտեղ։ Նա շատ լավ գիտեր, ինչպես պահպանել իր սեփական արժանատուութիւնը, և, միևնույն ժամանակ, բնիկին թույլ տալ, որ իղեն ազատ գգա։

— Ինչպե՞ս է, հարմա՞ր է, — հարցրեց միստր Ուորրթթընը, շրջվելով դեպի Քուփերը։

— Այո, կարծում եմ, ավելի մեծ արիկա չէ, քան նրանցից չարաբանչուրը։

Միստր Ուորբերթընը տղային տեղեկացրեց, որ նա ընդունված է և ազատ արձակեց:

— Չեր բախտը շատ բերեց, որ այսպիսի բոյ ձևընեկը ընկավ,— ասաց նա Քուփերին:— Նա պատկանում է շատ լավ ընտանիքի: Նրանք Մալաբրայից այստեղ են եկել համարյա հարյուր սարի առաջ:

— Ինձ առանձնապես չի հուզում, կոշիկներս մաքրող և պետք եղած ժամանակ խմիչք բերող բոյի երակներով կատույտ արյուն է հոսում, թե ոչ: Իմ ամբողջ ուզածն այն է, որ նա անի, ինչ իրեն ասում են և ուշադիր լինի, որ չսխալվի:

Միստր Ուորբերթընը ծամածոնց շուրթերը, բայց պատասխան չափեց:

Նրանք ներս փնացին ճաշելու: Ճաշը գերազանց էր պարատած, դինին լավն էր: Այն շուտով իր ազդեցությունը թողեց երկուսի վրա էլ, և նրանք սկսեցին զրուցել ոչ միայն առանց թունոտության, այլ մինչև անգամ բարեկամաբար: Միստր Ուորբերթընը սիրում էր իրեն մի քիչ լավ դգալ, և շաբաթ երկուներին նա սովորություն էր գարծրել իրեն նույնիսկ սովորականից է՛լ ավելի լավ դգալ: Նա սկսեց մտածել, որ ինքն անարդարացի է եղել Քուփերի հանդեպ: Իհարկե, այդ մարդը ջենտլմեն չէ, բայց դա նրա մեղքը չէ, և երբ ավելի մտտիկից ճանաչես, կարող է պարզվել, որ նա շատ լավ անձնավորություն է: Նրա թերություններն, ըստ երևույթին, իր դաստիարակության հետ են կապված: Բացի այդ, Քուփերն անկասկած լավ աշխատող է՝ ջանասեր, բարեսիրտ և ուշադիր: Երբ անցան աղանդերին, միստր Ուորբերթընը բարյացակամորեն էր տրամադրված ամբողջ մարդկության հանդեպ:

— Սա ձեր առաջին կիրակին է, և ես ձեզ մի բաժակ առանձնահատուկ պորովեյն կհյուրասիրեմ: Ինձ մոտ ընդամենը տասներկու շիշ է մնացել, և ես դրանք պահում եմ հատուկ առիթների համար:

Նա կարգադրություններ արեց, և շուտով շիշը բերեցին: Միստր Ուորբերթընը նայում էր, թե ինչպես է բոյն այն բացում:

— Այս պորովեյնն ինձ տվել է իմ վաղեմի բարեկամ Չարլզ Հոլինգթընը: Նա այս գինին պահել էր քառասուն տարի, և ես նույնպես պահել եմ շատ տարիներ: Նա հանրաճանաչ է իր գինու մառանով, որ լավագույնն է Անգլիայում:

— Նա ի՞նչ է, գինեվաճա՞րն է:

— Այնքան էլ չէ,— ժպտաց միստր Ուորբերթընը:— Ես խոսում էի Քասըլ Բեյի լորդ Հոլինգթընի մասին: Նա Անգլիայի ամենահարուստ պերիքից մեկն է: Իմ շատ վաղեմի ընկերը: Ես նրա եղբոր հետ սովորել եմ իթընում:

Այսպիսի առիթը միստր Ուորբերթընը երբևէր չէր կարող բաց թողնել, և նա մի փոքրիկ անեկզատ պատմեց, որի միակ համն այն էր, որ ինքը ծանոթ է եղել կոմսի հետ: Պորովեյնն անտարակույս շատ լավն էր. նա խմեց մի բաժակ, իսկ հետո երկրորդը: Նա բոլորովին մոռացավ զրուցության մասին: Ամիսներով սպասակ մարզու հետ շէր զրուցել: Ուորբերթընը սկսեց պատմություններ պատմել, որտեղ ինքն անգաղար հանդես էր դալիս մեծամեծների շքապատում: Կտիով նրան, կարելի էր մտածել, թե մի ժամանակ կառավարության կազմը և պետության բաղաբականությունը փոխվում էին նրա մի ակնարկով: Միստր Ուորբերթընը երկու բառ էր փոփոխում դրսուհու ականջին կամ ձաշի ժամանակ անփութորեն մի բան էր ասում, և դա անմիջապես ի կատար էր ածվում, ասկեր, պետության ղեկավարի ամենամոտ խորհրդականի կողմից:

Անցած օրերն Ասքըթում, Գալովուզում և Քաուսում նորից կենդանացել էին նրա հոգում: Մի բաժակ պորովեյն ես: Յորբշայրում և Շոտլանդիայում վիթխարի հավաքություններ էին լինում, որ նա գնում էր ամեն տարի:

— Ինձ մոտ այն ժամանակ Ֆորմըն աղգանունով մի մարդ էր ծառայում, կյանքումս այդպիսի լավ սպասավոր չեմ ունեցել, և ինչ եք կարծում, ինչո՞ւ նա հրաժարվեց իր գործից: Գուց փոտեք, որ ծառաների սենյակում աղախինները և սպասավորները նստում են ըստ իրենց տերերի դիրքի հաջորդականության: Նա ինձ ասաց, թե հոգնել է ամեն անգամ քնալ այնպիսի հավաքությունների, որտեղ ես միակ ոչ ազնվականն եմ: Գա նշանակում էր, որ նա միշտ ստիպված էր սեղանի ծայրին նստելու, և մինչև մատուցարանն իրեն կհասներ, բոլոր լավ կտորները վերջանում էին: Ես այդ մասին պատմեցի Հերֆրդի ժեր դուբսին, և նա ծիծաղից շնչակտուր եղավ:

— Աստված վկա, սրբ,— ասաց նա,— եթե ես Անգլիայի թագավորը լինեի, ձեզ վիկոնտ կգարձնեի, միայն թե ձեր ծառայի համար մի բան արած լինեի:

— Վերցրեք նրան ձեզ, դուքս,— ասացի ես:— Կլանքումս աչդպիսի լավ սպասավոր չեմ ունեցել:

— Դե՛, Ուորբըթըն,— ասաց նա,— եթե նա ձեռք է տալիս ձեզ, ապա ձեռք է առլիս նաև ինձ: Ուղարկեք, թող գա:

Հետո սեզիդեհնար հիշեց Մոնտե Կառլոն, սրտեզ միսար Ուորբըթընը և մեծ իշխան Ֆեոդորը, իրար հետ զույգ նստած, խփել էին ինդաբանկը մի երեկո, իսկ հետո Մարիենբադը: Մարիենբադում միսար Ուորբըթընը բակկարա էր խաղացել էդուարդ 7-րդի հետ:

— Նա այն ժամանակ, իհարկե, ընդամենը Ուելսի թագաժառանգն էր: Ես հիշում եմ, նա ասաց ինձ. «Ջորջ, եթե դուք հիշգանաց վերցնեք, վերջին շապիկը կկորցնեք»: Նա հիշտ էր. երբ իր կլանքում գրանից ավելի ճիշտ բան ասած չլիներ: Հիանալի մարդ էր: Ես միշտ սասել եմ, որ նա Եվրոպայի մեծագույն դիվանագետն էր: Բայց այն օրերին ես չա՛նել էի ու հիմար, և խելք չունեցա հետևելու նրա խորհրդին: Եթե լսած լինեի, եթե հինգանոցը չվերցնեի, կարծում եմ, այսօր այստեղ չէի լինի:

Քուսիբը դիտում էր նրան: Նրա շագանակագույն աչքերը խոր ակնակապիճների մեջ անկարեկից էին և արհամարհականանտարբեց, իսկ շրթունքներին ծաղրական ժպիտ էր ստաել: Նա Քուալա Սուլթանը շատ էր լսել միսար Ուորբըթընի մասին,— վատ մարդ չէ, ասում էին, ժամացույցի պես է իր գործն անում, բայց, տե՛ր աստված, ինչպիսի՛ տեսք է: Նրա վրա ծիծաղում էին անշար ծիծաղով, քանզի անհնար էր հակակրանք տածել դեպի այդ աստիճան ասատաձենն ու բարբի մեկը, և Քուսիբն արդեն գիտեր Ուելսի թագաժառանգի ու բակկարայի պատմությունը: Սակայն Քուսիբը լսում էր առանց ներողամտության: Ամենասկզբից ևեթ նրան զայրացրել էր ռեզիդենտի պահեղաձևը: Քուսիբը շատ զգայուն էր, նա բառիս բուն իմաստով գալարվում էր միսար Ուորբըթընի քաղաքավարի խայթոցներից: Միսար Ուորբըթընը մի ընդունակություն ուներ. իրեն դուր չեկած խոսքերին կործանող լուովյամբ էր պատասխանում: Քուսիբը թիչ էր ապրել Անգլիայում և առանձնահատուկ հակակրանք էր տածում անգլիացիներին հանդեպ: Հատկապես տանել չէր կարողանում արիստոկրատական դպրոց ավարտածներին, քանի որ մշտապես վախենում էր, թե չլինի՞ սրանք հանկարծ իր վրա վերևից նայեն: Այնքան էր վախենում, թե ուրիշներն իր հետ դեռուզարար կվարվեն, որ առաջ ընկնելու համար ինքն էր գո-

ուղ պահում իրեն, ուստի բուրբ նրան համարում էին ինքնազու՛ ու ինքնավստահ:

— Հա, ամեն դեպքում պատերազմը մեզ մի մեծ օգուտ տվեց,— վերջապես ասաց նա:— Քարուքանդ արեց արիստոկրատիայի դիրքերը: Բուրական պատերազմը դա սկսեց, իսկ 1914 թիվը վերջակետ դրեց:

— Անգլիայի մեծամեծ ընտանիքները դատապարտված են,— ասաց միսար Ուորբըթընը՝ կյուրսիկոս 15-րդի արքունիքը մտաբերող վտարանդիի մելամաղձոտությամբ:— Նրանց միջոցներն այլևս թույլ չեն տալիս ապրել սքանչելի պայտաներում, և նրանց արքայական հյուրընկալությունը շուտով կվերածվի պարսպ հիշողության:

— Եվ շատ էլ լավ կլինի:

— Իմ խեղճ Քուսիբ, ի՞նչ կարող եք դուք իմանալ «Փառքի մասին՝ Հունաստանի և մեծություն՝ Հուսիս»:

Միսար Ուորբըթընը ձևորով լաջն շարժում արեց: Նրա աչքերը մի պահ մշուշվեցին անցյալի հիշողություններից:

— Լսեք, հավատացե՛ք ինձ, մենք մինչև կոկորդը կուշտ ենք այդ դատարկ բաներից: Մեր ուղածը գործնական պետություն է, որը գործնական մարդիկ են ղեկավարում: Ես ծնվել եմ գաղութում և ամբողջ կյանքս փաստորեն ապրել եմ գաղութներում: Ամենալավ լորդի համար մի գրող էլ չեմ տա: Անգլիայի ցավը սնորհիվն է: Իսկ ես տանել չեմ կարող սնորհներին:

Մե՛ր, Միսար Ուորբըթընի երեսը կաս-կարմիր կտրեց, և աչքերը փայլեցին զայրույթից: Դա մի խոսք էր, որ ողջ կյանքում հետապնդել էր նրան: Մեծամեծ տիկնայք, որոնց ընկերակցությունը նա վայելել էր իր պատանեկության տարիներին, անարժեք չէին համարում այն բարձր գնահատականը, որ ինքն էր նրանց տալիս, բայց նույնիսկ մեծամեծ տիկնայք երբեմն համբուրությունից դուրս են գալիս, և մի անգամ չէ, որ միսար Ուորբըթընի երեսին էր շարտվել այդ ահավոր խոսքը: Միսար Ուորբըթընը գիտեր, չէր կարող չիմանալ՝ կային մի քանի գարշելի մարդիկ, որոնք իրեն տեսք էին անվանում: Ինչպիսի՛ անարդարություն: Չկար այնպիսի արատ, որ նա ավելի անդուր համարեր, քան սնորհիվն: Վերջ ի վերջու, իրեն դուր էր գալիս շփո՛ւել իր գասի մարդկանց հետ, միայն նրանց հետ էր Ուորբըթ-

* մեշքերում եղգար Պոյի «Հեղինակն արևմտից»

Քընն իրեն լավ զգում և ասացեք խնդրեմ, մի՞թե դա կարելի էր սնորիզմ անվանել: Մի սանրի կտավ...

— Ես միանգամայն համաձայն եմ ձեզ հետ,— ասաց Ուորրթթընը:— Սնորը մի մարդ է, որը երկրպագում կամ արհամարհում է մյուսին, որովհետև սա ավելի բարձր սոցիալական խավի է պատկանում, քան ինքը: Դա մեր անգլիական միջին դարի ամենագոհելի մոլությունն է:

Նա Քուփերի աչքերում ծիծաղի առկայծում տեսավ: Քուփերը ձեռքը բարձրացրեց, որպեսզի ծածկի շրթունքներին հայտնված լայն ժպտը և այդպիսով ավելի նկատելի դարձրեց այն: Միստր Ուորրթթընի ձեռքը թեթևակի դողաց:

Հավանաբար Քուփերը երբեք չիմացավ, թե ինչ աստիճանի է վիրավորել իր պետին: Ինքը զգայուն մարդ լինելով, նա արտասովոր կերպով անզգա էր մյուսների սպրտմաների նկատմամբ:

Աշխատանքը ստիպում էր նրանց օրվա ընթացքում մի բանի անգամ իրար տեսնել, իսկ ժամը վեցին հանդիպում էին միստր Ուորրթթընի պատշգամբում՝ մի բաժակ բան խմելու: Այդ երկրում դա մի հինավուրց սովորույթ էր, որը միստր Ուորրթթընը ոչ մի դեպքում չէր ուզի դանց առնել: Սակայն ուտում էին նրանք առանձին՝ Քուփերն իր խրճիթում, իսկ միստր Ուորրթթընը՝ ամբողջում: Գրասենյակում աշխատանքը վերջացնելուց հետո նրանք զրոսնում էին մինչև մութն ընկնելը, բայց զրոսնում էին առանձին: Ընդամենը մի քանի արահետ կար այդ երկրում, որտեղ ջունգլիները կիսկ կպած էին գյուղի պլանտացիաներին, և երբ միստր Ուորրթթընը նկատում էր իր օգնականի լայնլայն քայլվածքը, թեքում էր ճանապարհը, որպեսզի խուսափի հանդիպումից: Քուփերն իր անտաշ շարժումով, մեծամիտ դատողություններով ու անհանդուրժողականությամբ արդեն ազդում էր նրա նյարդերի վրա: Սակայն Քուփերի կզզի գալուց երկու ամիս անց միայն տեղի ունեցավ այն միջադեպը, որը ռեզիդենտի հակակրանքը փոխեց սուր ատելություն:

Միստր Ուորրթթընը ստիպված էր մեկնել շրջագայության՝ ստուգումներ կատարելու, և նա ռեզիդենտի անսահման թողեց Քուփերի հույսին, քանզի եկել էր այն եզրակացություն, որ սա շնորհալի անձնավորություն է: Միակ բանը, որ նրան դուր չէր գալիս, նոր օգնականի անգթությունն էր: Նա ազնիվ էր, արդարացի և ջանասեր, բայց բնիկների հանդեպ կարեկցանք չու-

ներ: Միստր Ուորրթթընին թե՛ դառնություն էր պատճառում և թե՛ դվարձացնում էր, որ այդ մարդը, իրեն ոչ մեկից պակաս չհամարելով, միաժամանակ վերեկից էր նայում այդքան շատերին: Նա անողոր էր, անկարեկից՝ բնիկների հոգեբանությանը ու կուպիտ: Միստր Ուորրթթընը շատ շուտով հասկացավ, որ մալայացիները չեն սիրում այդ մարդուն և վախենում են նրանից: Նա այնքան էլ դժգոհ չէր գրանից: Չէր ուզի, որ օգնականը ժողովրդականություն վայելեր և մրցակցեր իր հետ: Խնամքով նախապատրաստվելով, միստր Ուորրթթընը արշավի մեկնեց և երեք շաբաթից վերադարձավ: Այդ ընթացքում փոստը տեղ էր հասել: Երբ ռեզիդենտը մտավ իր հյուրասենյակը, առաջին բանը, որ աչքի զարնեց, բացված լրագրերի հսկա կույտն էր: Քուփերը նրան դիմավորել էր, և նրանք միասին էին սենյակ մտել: Միստր Ուորրթթընը շրջվեց դեպի ծառաներից մեկը, որ տանն էր մնացել, և խստաձայն հարցրեց, թե ինչ է նշանակում թերթերի այդ վիճակը: Քուփերը շտապեց բացատրել:

— Ես ուզում էի մանրամասն կարդալ վուլվերհեմփթընի սպանության մասին, դրա համար էլ փոխ վերցրի ձեր «Քայմս»-ը: Ես գրանք նորից ետ եմ բերել: Գիտեի, որ դեմ չէիք լինի: Միստր Ուորրթթընը, զայրույթից սպիտակած, շրջվեց դեպի նա:

— Բայց ես դեմ եմ: Ես շատ դե՛մ եմ:

— Ներողություն,— հանդիստ ասաց Քուփերը:— Փաստորեն պարզապես չկարողացա սպասել մինչև վերադառնալ:

— Զարմանում եմ, թե ինչպես է, որ նամակներս նույնպես չէք բացել:

Քուփերն անվրդով ժպտաց, տեսնելով իր պետի ջղայնությունը:

— Օ՛, բայց դա նույն բանը չէ: Ի վերջո, իմ մտքով չէր անցնի, որ կվրդովվեք, եթե ես կարդամ ձեր լրագրերը: Այնտեղ ոչ մի անձնական բան չկա:

— Ես կտրականապես դեմ եմ, որ մեկնում եկն իմ թերթերն ինձանից առաջ կտողալ:— Նա մոտեցավ լրագրերի կույտին: Այնտեղ մոտ երեսուն համար կար:— Ես ձեր արարքը ծայրահեղ հանդգնություն եմ համարում: Ամբողջ իրար եր խառնել:

— Կարելի է հեշտությամբ դասավորել,— ասաց Քուփերը, նույնպես սեղանին մոտ գալով:

— Զեռք մի՛ տվեք,— բզավեց միստր Ուորրթթընը:

— Լսեք, Լրեխայութիւնն է այդպիսի փոքր բանից տեսարան
աարբելը:

— Ինչպե՞ս եք համարձակվում այդ ձևով խոսել հետս:

— Է՛, կրեք գրողի ծոցը,— ասաց Քուփերը և դուրս թուով
սկնչակից:

Միստր Ուորրթընը, գալուցից դողալով, սկսեց զննել թեր-
թերը: Նրա կշանքի մեծագույն հաճույքը կործանվել էր այդ
սնգուֆ, կոպիտ ձեռքերով: Քաղաքակրթության կենտրոնից հե-
ռու ապրող մարդկանց մեծամասնութիւնը փոստը ստանալուն
պես անհամբերութեամբ պատռում-բացում են այն և, հանելով
վերջին համարները, առաջին հերթին աչքի անցկացնում հայրե-
նիոցից ստացված ամենաթարմ լուրերը: Բայց ոչ միստր Ուորրթը-
նը: Նրա փոստային դործակալը ցուցում էր ստացել բոլոր
փաթեթներին վրա գրանցել ուղարկված լրագրերի ամսաթվերը,
և երբ կապուկը տեղ էր հասնում, միստր Ուորրթընը նայում էր
այդ ամսաթվերին և իր կապույտ մատիտով համարակալում
դրանք: Ավագ բոլը կարգադրութիւն ունէր ամեն առավոտ մի
զավաթ թիչի հետ պատշգամբում մատուցել դրանցից մեկը, և
միստր Ուորրթընին առանձնահատուկ բավականութիւն էր
պատճառում առանց թիչ խմելն ընդհատելու, փաթեթը պատ-
ռելն ու առավոտյան թերթը կարդալը: Դա նրա մեջ պատրանք էր
ստեղծում, թե Անգլիայում է՝ իր հայրենիքում: Ամեն երկու-
շաբթի առավոտ նա վեց շաբաթ առաջվա երկուշաբթի օրվա
«Քայման» էր կարդում և այդպես շարունակ: Կիրակի օրը «Օբ-
զերվըր» էր կարդում: Ինչպես ճաշի համար զուգվելը, դա նույն-
պես նրան քաղաքակրթության հետ կապող օղակ էր: Եվ յետ-
գնեւը հպարտ էր, որ ինչքան էլ նորութիւնը հետաքրքրական
լինէր, նա երբեք տեղի չէր տվել ժամանակից շուտ հաջորդ
լրագիրը բացելու գայթակղութիւնը: Պատերազմի օրերին անո-
րոշութիւնը երբեմն անտանելի էր դառնում, և մի օր, երբ
միստր Ուորրթընը կարգաց, որ հարձակում է սկսվել, տագ-
նապալից տվայտանքներ սկսվեցին նրա համար: Այդ ամենին
հեշտութեամբ կարելի էր վերջ տալ՝ պարզապես բացելով վեր-
ջին լրագիրը, որը նրան էր սպասում գրադարակի վրա: Դա
ամենադաժան փորձութիւնն էր, որին երբևիցե դատապարտել
էր իրեն ռեզիդենտը, բայց նա հաշտութեամբ հաղթահարեց
այն: Իսկ այդ անտակա հիմարը բաց էր արել խնամքով, պինդ
կապած փաթեթները, որովհետև ցանկանում էր իմանալ, թե

ինչ-որ մի այլանդակ կին սպանե՞լ է արդո՞ք յուր դարչելի
ամուսնուն:

Միստր Ուորրթընը կանչեց իր բոլին և պատվիրեց, որ փա-
թեթաթուղթ բերի: Հնարավորին շափ խնամքով ծախեց թերթերը,
փաթեթավորեց և համարակալեց: Սակայն անուրախ աշխատանք
էր դա:

— Ես նրան երբեք չեմ ների,— մրմնջում էր ռեզիդենտը.—
երբեք:

Ավագ բոլն անշուշտ նրա հետ էր եղել արշավի ժամանակ:
Ուորրթընը երբեք չէր ճանապարհորդում առանց վերջինիս,
բանդի այդ բոլը շատ լավ գիտէր, թե իր տերը ինչն ինչպես է
սիրում, իսկ միստր Ուորրթընը շունդլինեքում ճանապարհոր-
դողներին այն տեսակից չէր, որոնք պատրաստ են յուր գնալ
առանց հարմարութիւնների, բայց այժմ, տեղ հասնելուն պես,
նա հասցրել էր բամբասել ծառաների բնակարանում: Իմացել
էր, որ Քուփերը լեզու չի գտնում իր բոլերի հետ: Բոլորը, բացի
պատանի Աբասից, հեռացել էին նրանից: Աբասը նույնպես
տենչում էր հեռանալ, սակայն հորեղբայրը նրան ռեզիդենտի
կարգադրութեամբ էր այդտեղ տեղավորել, և պատանին վախե-
նում էր հեռանալ՝ առանց իր հորեղբոր թույլտվութեան:

— Ես ասացի, որ լավ է արել, թուան՞,— ասաց բոլը:—
Բայց նա զժբախտ է: Ասում է, որ դա լավ տուն չի և ուզում
է իմանալ, թե կարո՞ղ է մշտաների պես թողնել գնալ:

— Ոչ, նա պիտի մնա: Թուանը պետք է ծառաներ ունենա
Գնացողների տեղն ուրիշներին բերե՞լ են:

— Ոչ, թուան, ոչ ոք չի ուզում:

Միստր Ուորրթընը մտալլվեց: Քուփերն անպատկառ հիմարի
մեկն է, բայց նա պաշտոնական դիրք ունի և պիտի համա-
պատասխանորեն ապահովված լինի ծառաներով: Պատշաճ չէ,
որ նրա տանը կարգուկանոն չլինի:

— Որտե՞ղ են այն բոլերը, որոնք փախել են:

— Գյուղում են, թուան:

— Գնա այսօր նրանց տես և ասա, ես սպասում եմ, որ
վաղն առավոտյան վերադառնան թուան Քուփերի տուն:

— Նրանք ասում են, որ չեն գնա, թուան:

— Իմ հրամանից հետո՞:

* պարոն (մալախերեն)

Բույր տասնհինգ տարի շարունակ միտար Ուորբերթընի հետ էր Լոնդն և գիտեր իր տիրոջ ձայնի ամեն մի նրբերանգր: Նա չէր վախենում Ուորբերթընից, շափից գուրս շատ բան էին տեսել միասին. մի անգամ ջունգլիներում ուղիղնար փրկել էր նրա կյանքը, իսկ մի ուրիշ անգամ ռեզիդենտը կիսեղզվեք գետի հորձանուտում, Եթե չլիներ ինքը, բայց նա գիտեր, թե երբ է հարկալոր հնազանդվել սուանց որևէ առարկություն:

— Ես կզնամ գյուղ, — ասաց բույր:

Միտար Ուորբերթընը սպասում էր, որ իր ենթական առաջին իսկ առիթով ներդուրություն կխնդրի յուր անբաղաքավարության համար, սակայն Քուփերը բոլոր վստ դաստիարակված մարդկանց նման անկարող էր ցույց տալ, որ զղում է, և երբ հաջորդ օրը հանդիպեցին գրասենյակում, միջազեպի մասին ծրայուն էլ չհանեց: Քանի որ միտար Ուորբերթընը երեք շաբաթ բացակայել էր, անհրաժեշտ էր մի երկար-բարակ դրույց ունենալ: Խոսակցության վերջում նահանգապետը Քուփերին բաց թողեց:

— Կարծում եմ, վերջացրինք, շնորհակալ եմ, — Քուփերը շրջվեց, որպեսզի գնա, բայց միտար Ուորբերթընը նրան կանգնեցրեց: — Ինչպես իմացել եմ, դուք ձեր բոյերից մի քանիսի հետ լիզու շեք գտնում:

Քուփերը ծիծաղեց տհամ ձայնով:

— Նրանք փորձում էին ինձ շանտաժի ենթարկել: Նրանց լիախությունը հերթեց, որ թողնեն փախչին, բույրը, բացի այն անճարակ Աբասից (դե, նա գիտեր, որ իրենից ոչինչ չի ներկայացնում), բայց ևս ինձ պինդ պահեցի: Հիմա բույրն էլ մի հոգու պես խելքի են եկել:

— Ի՞նչ եք ուզում դրանով ասել:

— Այս առավոտ ետ էին գարձել իրենց գործին՝ չինացի խոհարարը և մյուս բույրը: Ու այնքան հանգիստ էին, կարծես անունները տեղերի վրա գրել էին: Երեկ եկել էին այն կարծիքին, որ ես այնքան հիմար չեմ, որքան թվում եմ:

— Բնավ: Նրանք ետ են եկել իմ հատուկ հրամանով:

Քուփերը թեթևակի շառագունեց:

— Զեզ պարտական կմնայի, եթե չխառնվեիր իմ անձնական հոգսերին:

— Դրանք ձեր անձնական հոգսերը չեն: Երբ ծառաները թողնում փախչում են, դա ծիծաղելի է դարձնում ձեզ: Դուք միանգամայն ազատ եք ձեզ հիմար վիճակի մեջ դնելու, սա-

կայն ես չեմ կարող թույլ տալ, որ ուրիշները ձեզ հիմարի տեղ զենն: Երևակայել անգամ չի կարելի, որ ձեր տանը բավականաչափ ծառայողներ չլինեն: Հենց որ լսեցի, թե ձեր բոյերը հեռացել են, հազարդեցի, որ լուսազեմին վերագառնան իրենց տեղերը: Այդքանը:

Միտար Ուորբերթընը գլխով արեց՝ ցույց տալու համար, որ խոսակցությունը վերջացել է: Քուփերը ուշադրություն չդարձրեց:

— Ասե՛մ, թե ինչ արեցի: Ես նրանց կանչեցի ու վոնդեցի բույրին գրողի ծոցը: Տասը բոպե ժամանակ տվեցի, որ հեռանան տնիցս:

Միտար Ուորբերթընն ուսերը թոթվեց:

— Ի՞նչն է ստիպում ձեզ կարծել, թե ուրիշներին կձարեք:

— Ես հանձնարարել եմ քարտուղարիս՝ գրազվել այդ հարցով:

Միտար Ուորբերթընը մի բոպե մտածեց:

— Կարծում եմ, ձեզ շատ հիմար ձևով եք պահել: Լավ կլինի հետագայում հիշեք, որ լավ տեղին է լավ ծառա ունենում:

— Էլ ուրիշ ի՞նչ եք ուզում ինձ սովորեցնել:

— Կուզեի ձեզ պահելու ձև սովորեցնել, բայց դա ծանր աշխատանք կլիներ, իսկ ես վառնելու ժամանակ չունեմ: Ես կհետևեմ, որ դուք բոյեր ունենաք:

— Խնդրում եմ իմ պատճառով նեղություն չբաշեք: Ես միանգամայն ի վիճակի եմ ինքս այդ բանն անելու:

Միտար Ուորբերթընը շարախնդորեն մպտաց: Նա ենթադրում էր, որ Քուփերը հակակրում է իրեն ոչ պակաս, քան ինքը նրան, և գիտեր, որ ոչինչ ավելի տհամ չէ, քան չհավանածը մարդու արած լավությունն ընդունելը:

— Թույլ տվեք ձեզ հավաստիացնել, որ դուք այստեղ ճիշտ այնքան շանս ունեք մալայացի կամ չինացի ծառա ձարելու, որքան անգլիացի սենեկապետ կամ ֆրանսիացի խոհարար: Ոչ ոք չի գա ձեզ մոտ, եթե ևս չկարգադրեմ: Ուղ՞ում եք, որ անեմ այդ:

— Ոչ:

— Ինչպես կուզեք: Ցտեսություն:

Միտար Ուորբերթընը կծու հեպտանքով հետևում էր իրերի ընթացքին: Քուփերի քարտուղարը չկարողացավ համոզել մալայացիներին, գայեթներին կամ չինացիներին այդպիսի տիրոջ

տուն մտնելու Աբասն՝ այն բոլոր, որ նրան հավատարիմ էր մնացել, միայն տեղական ճաշատեսակներ էր կարողանում պատրաստել, և Քուփերը, որը լավ ուտող էր, զգում էր, որ իր անհագուրդ ոսկորն ապաստամբում է հավերժական բրնձի դեմ: Զուր բերող չկար, իսկ այդ տապին նա օրը մի բանի անգամ լողանքի կարիք էր զգում: Նա հայհոյում էր Աբասին, սակայն Աբասը դիմակայում էր մտալլ համառությամբ և իր պարտականություններից ավելի ոչինչ չէր անում: Քուփերին գայրացնում էր այն միտքը, որ պատանջակն իր մոտից չի հեռանում միայն, որովհետև ռեզիդենտն է պնդում, որ մնա: Այսպես շարունակվեց երկու շաբաթ, մինչև մի օր առավոտյան Քուփերը իր տանը տեսավ նույն այն ծառաներին, որոնց վճռել էր կատաղի ցատուք տիրեց նրան, բայց հիմա նա մի փոքր ավելի խելամիտ էր դարձել, և այս անգամ, առանց մի խոսք ասելու, թողեց, որ մնան: Նա կույ տվեց ստորացումը, սակայն միտքը Ուորթթերնի բնավորության գծերի նկատմամբ տածած երբեմնի արհամարհանքը վերափոխվեց մտալլ ատելության. այս քինոտ հարվածով ռեզիդենտը նրան բոլոր բնիկների ժիժաղի առարկան էր դարձրել:

Այժմ երկու տղամարդիկ գործից դուրս ոչ մի հարաբերություն չունեին: Նրանք իտալացիներ հինավուրց ու հարգված սովորույթը, որի համաձայն՝ ռեզիդենցիայում գտնվող բոլոր սպիտակ մարդիկ պիտի ժամը վեցին միասին կոկտեյլ խմեին, անկախ անձնական հակակրանքից: Յուրաքանչյուրն ապրում էր իր տանն այնպես, ասես մյուսը գոյություն էլ չունենար: Այժմ, երբ Քուփերն արդեն աշխատանքը յուրացրել էր, պարտադիր չէր, որ գրասենյակում շատ շփվեին իրար հետ: Միտքը Ուորթթերնն իր համհարգի միջոցով էր ուղարկում բոլոր հանձնարարությունները, որ պիտի տար յուր օգնականին, իսկ կարգադրություններն ուղարկում էր գործնական նամակով: Կանոնավորապես տեսնում էին մեկմեկու, դա անխուսափելի էր, բայց շարաթվա մեջ հինգ-վեց բառ էլ չէին փոխանակում: Այն փաստը, որ չէին կարողանում խուսափել իրար տեսնելուց, ազդում էր երկուսի էլ նյարդերի վրա: Հաճախ էին խորհում իրենց թշնամանքի շուրջը, և միտքը Ուորթթերնը, յուր ամենօրյա զրոսանքը կատարելիս, բացի օգնականի հանդեպ տածած իր ատելությունից, ուրիշ ոչ մի բանի մասին չէր կարողանում մտածել:

Եվ ամենաահավորն այն էր, որ, ըստ ամենայնի, նրանք

պետք է մնային այստեղ՝ իրար դեմ-հանդիման մահացու թրշնամանքով, մինչև որ միտքը Ուորթթերնը թողակի անցներ: Գա կարող էր երեք տարի տևել: Նա պատրվակ չունեի ղեկավարությունը բողոք ուղարկելու: Քուփերն իր աշխատանքը շատ լավ էր կատարում, իսկ այդ ժամանակ մարդկանց պակաս էր զգացվում: Եթե է, նրան թույլ բողոքներ էին համարում և ակնարկներ, որ բնիկները Քուփերին կոպիտ են համարում: Անկասկած, նրանց մեջ գծողություն էր տիրում: Բայց երբ միտքը Ուորթթերնը խորամուխ էր լինում առանձին ղեկավարում, տեսնում էր՝ միակ բանը, որ կարող է ասել, այն է, որ Քուփերը խիստ է եղել այնտեղ, որտեղ չէր խանգարի մեղմ լինել, և անողոք եղել այնտեղ, որտեղ անձամբ ինքը զիջասիրտ կլիներ: Նա ոչ մի այնպիսի բան չէր արել, որի համար կարելի լինի հանդիմանել: Սակայն միտքը Ուորթթերնը հեռուում էր նրան: Ատելությունը հաճախ մարդուն խորաթափանց է դարձնում: Ռեզիդենտը կասկածում էր, որ Քուփերը բնիկների վերաբերվում է անհարգալից, բայց օրենքի սահմաններում, քանզի զգում է, որ դրանով կարող է նյարդայնացնել իր սպիտին: Մի օր նա հավանաբար շատ հեռու կգնար: Ոչ որ միտքը Ուորթթերնից ավելի լավ չգիտեր, թե անդադար տալը մարդուն ինչքան չղային է դարձնում, և թե որքան ղովար է պահպանել ինքնազուգումն անբուն գիշերից հետո: Նա մեղմորեն մպստում էր մտքում: Վաղ թե ոչ Քուփերն իր ձեռքերում կհայտնվի:

Երբ վերջապես հնարավորությունը ստեղծվեց, միտքը Ուորթթերնը քրքջոց բարձրաձայն: Քուփերը զբաղվում էր բանտարկյալներով: Նրանք ճանապարհներ էին կառուցում, ծածկոցներ սարքում, թիավարում էին, երբ անհրաժեշտ էր լինում փրահուն հոսանքի ուղղությամբ կամ հակառակ ուղարկել, մարում էին քաղաքը և այլ օդտակար աշխատանքով զբաղվում: Եթե իրենց լավ էին պահում, երբեմն նույնիսկ տան ծառայություն էին անում: Քուփերը խիստ էր նրանց հետ: Միտքը էր տեսնել, որ աշխատում են: Հաճույք էր զգում նրանց համար հանձնարարություններ հնարելուց, և բանտարկյալները շուտով տեսնելով, որ իրենց անօգուտ գործ են ստիպում կատարել, սկսեցին վատ աշխատել: Քուփերը նրանց պատժում էր աշխատածամանակը երկարացնելով: Գա հակառակ էր օրենքին, և հենց որ բանը հասավ միտքը Ուորթթերնի ականջին, սա, առանց լր ստորագրելի հետ հարցը բնորոշելու, հրահանգ տվեց, որ

նը, փորձելով մի կերպ ժպիտ հաղորդել յուր ծամածուլած շուրթերին:

— Քուան, օգնական թուանը վատ մարդ է: Աբասը նորից ուզում է գնալ նրա մտոից:

— Թող մի քիչ սպասի: Ես կգրեմ Քուալա Սուլթը և կխնդրեմ, որ թուան Քուսիերն ուղիշ տեղ գնա:

— Թուան Քուսիերը մալայացիների հետ լավ չի:

— Ինձ մենակ թող:

Քոյը սուսուփուս հեռացավ: Միտար Ուորրթթընը մենակ մնաց յուր մտքերի հետ: Նրա աչքերի առջև հայտնվեց Քուալա Սուլթը, ազամարգիկ՝ իրենց սպորտային հագուստներով նստած պատուհանի մոտ, սեղանի շուրջ, ուր դիշերն է նրանց բռնել գոլֆի կամ քենիսի հրապարակից. նրանք վիսկի և շինի փահիթ են խմում ու ծիծաղում, պատմելով Մարիենրադում իր և Ուելսի թագաժառանգի հետ եղած հանրահայտ պատմությունը: Իեզիզենտը վառվում էր ամոթից ու ցավից: Մն՛ր: Նրանք բուլտըն իրեն սնոր են համարում: Իսկ ինքը միշտ նրանց շատ լավ անձնավորություններ է համարել, միշտ ախքան ջննտում են է եղել, որ նշանակություն չի տվել այն բանին, թե ինչ ցածր դիրքի տեղ են նրանք: Այժմ ատում էր նրանց բուլտին: Բայց այդ ատելությունը ոչինչ էր՝ համեմատած ատելությունը, որ տածում էր Քուսիերի հանդեպ: Իսկ եթե բանը հասնի խփելուն, Քուսիերն իրեն կարող էր ծեծած լինել: Ամոթի ու նվաստացման արցունքներ հոսեցին նրա կարմիր, գեթ աշտերով: Աչքպես նստած մնաց մի երկու ժամ, սիգարետ սիգարետի վրայից ծխելով, խորհելով, որ ավելի լավ կլինեք մեռնել:

Վերջապես բոյը վերադարձավ և հարցրեց, թե չի՞ ուզում հագնվել ճաշի համար: Անշուշտ: Նա միշտ էր հագնվում ճաշի համար: Միտար Ուորրթթընը ծանր վեր էլավ աթոռից և հազավ իր օւլայած վերնաշապիկն ու օձիքը: Նստեց գեղեցիկ սպասավորված սեղանի մոտ: Ինչպես սովորաբար, երկու բոյ մատուցում էին, մինչդեռ մյուս երկուսը թափահարում էին հսկայական հովհարները: Նրկու հարյուր յարդ այն կողմ՝ խրճիթում, Քուսիերը գարշելի կերակուր է ուտում՝ հագին միայն սարսեգ և բաշու: Ուրքերը բորիկ են և հավանաբար ուտելիս գետեկտիվ է կարդում:

Ճաշից հետո միտար Ուորրթթընը նստեց նամակ գրելու: Սուլթթանը տեղ էլ մեկնել, բայց նա մասնավոր, գազտնարար գրեց

իրագոր ներկայացուցչին: Քուսիերը շատ լավ է կատարում իր ուշխատանքը, գրում էր նա, սակայն ինքը փաստորեն չի համակերպվում նրա հետ: Անտանելի ազդում են մեկը մյուսի նյարդերի վրա, և ինքը մեծ լավություն կհամարի, եթե Քուսիերին տեղափոխեն այլ պաշտոնի:

Հաջորդ առավոտյան ռեզիզենտը հատուկ հանձնակատարի միջոցով ուղարկեց նամակը: Պատասխանը եկավ երկու շաբաթից՝ ամսվա փոստի հետ: Դա մի անձնական գրություն էր հետևյալ բովանդակությամբ՝

«Սյուրեյի Ուորրթթըն».

Ես չեի ուզում ըստ նամակին պաշտոնապես պատասխանել, դրա համար էլ մի քանի տող եմ գրում իմ կողմից: Իհարկե, եթե դու պնդում ես, տեղյակ կգարձնեմ սուլթանին, բայց կարծում եմ, ավելի խելոք կանես, եթե փակես այս գործը: Դիտեմ, որ Քուսիերը գոռը կորիզ է, սակայն ընդունակ տղա է և բավական զժվարություններ է քաշել պատերազմի ժամանակ, դրա համար, կարծում եմ, պետք է ամեն կերպ ընդառաջել նրան: Ինձ թվում է, դու մի փոքր շափից ավելի ես հակված մարդու սոցիալական դիրքին կարևորություն տալ: Հիշիր, որ ժամանակները փոխվել են: Անշուշտ, շատ լավ է, երբ մարդ ջննտում են է: Բայց ավելի լավ է, նա լինի լավատեղյակ և եռանդուն աշխատող: Կարծում եմ, եթե մի քիչ ներողամտություն ցուցաբերես, շատ լավ լեզու կգտնես Քուսիերի հետ:

Հարգանքներով

բոնը՝ Թիլադ Փեննիլ»:

Նամակը ցած ընկավ միտար Ուորրթթընի ձեռքից: Դժվար չէր տողերի արանքում կարդալ: Դիք Փեննիլը, որին դիտեր այս էլ քսան սարի, Դիք Փեննիլը, որը բավական լավ անդլիտական ընտանիքից էր սերում, համարում էր իրեն սնոր և այդ իսկ պատճառով բանի տեղ չէր դնում իր նամակը: Հանկարծ միտար Ուորրթթընը վճատություն զգաց: Աշխարհը, որի մասն էր ինքը, անցել զնացել էր, իսկ ապագան պատկանում էր մի այլ՝ ավելի ստոր սերնդի: Դրա ներկայացուցիչը Քուսիերն էր, իսկ Քուսիերին ինքն ատում էր ամբողջ սրտով: Նա ձեռքը առաջ պարզեց, որ բաժակը լցնի, և այդ շաբթոմբ նկատելով, ավադ բոյը մոտ եկավ:

— Չգիտեի, որ այստեղ ես:
Քոյը բարձրացրեց պաշտոնական նամակը: Ահա թե ինչու էր նա սպասել:

— Քուան Քուփերը գն՞ում է, թուան:

— Ոչ:

— Գժբախտություն կլինի:

Մի պահ այդ բռները ոչինչ չափկույցքին նրա թուլությանը: Բայց մի պահ միայն նա ուղղվեց աթոռի վրա և նույնց բոլորն Ուշադրությունը լարեց:

— Ի՞նչ ես ուզում գրանով տես:

— Թուան Քուփերը լավ չի վերաբերվում Աբրահիմ հետ:

Միտար Ուորրթթընը ուսերը թոթվեց: Որակզի՞ց պիտի Քուփերին նման մարդն իմանար, թե ինչպե՞ս պետք է վարվել ծառաների հետ: Միտար Ուորրթթընը նախադրում էր նրա նմաններին՝ գրանք մեկ տեսար իրենց ահավոր տնավարի են պահում ծառաների հետ և մեկ էլ տեսար դատնում կուպիտ ու մարդու տեղ չեն դնում նրանց:

— Թող Աբրամը ես գնա իր ընտանիքի մոտ:

— Թուան Քուփերը պահում է նրա սոճիկը, որպեսզի չկարողանա փախչել: Երեք ամիս է, բան չի վճարել: Ես ասացի նրան, որ համբերի: Բայց նա զայրացած է, խելոք խոսք չի լսում: Եթե թուանը շարունակի նրան վատ վերաբերվել, գժբախտություն կլինի:

— Լավ արեցիր, որ ինձ ասացիր:

Հիմարի՛ մեկը, Մի՞թե նա այդքան քիչ գիտե ժուլայացիներին, որ կարծում է, թե կարող է հանգիստ վիրավորել նրանց: Տեղը կլինի, գրողը տանի, եթե մեղքը քրիս՝ խրին: Քրի՛ս Լանկարձ միտար Ուորրթթընի սիրտն ասես դադարեց բարախել: Պետք է միայն թողնել իրենի ընթացքով, և մի գեղեցիկ օր ինքը կազատվի Քուփերից: Նա մպտաց իր մտքով անցած արտահայտության վրա՝ «վարպետրեն շարժող» Եվ այժմ նրա սիրտը մի փոքր ավելի արագ խփեց, բանդի տեսավ իր առած մարդուն՝ բերանքսիվայր պտակած ջուղլիի մի արահետում՝ դանակը մեջքը խրված: Անտաշին ու բոխին արժանի պատիժ: Միտար Ուորրթթընը հասաչեց: Իր պարտքն է նրան զգուշացնել, և ինքն, անկասկած, պետք է դա անի: Նա մի հա-

մատուտ ու պաշտոնական երկտող գրեց Քուփերին, որտեղ վերջինիս տառն էր, որ անմիջապես գա ամբողջ:

Տասը ըսպեից Քուփերը կանգնած էր նրա առջև: Այն օրվանից, ինչ միտար Ուորրթթընը քիչ էր մնացել խփեր նրան, չէին խոսել իրար հետ: Այժմ նա Քուփերին շառաչարկեց նստել:

— Գուք ուզում էիք ինձ տեսնել, — հարցրեց Քուփերը:

Նա անփույթ և ոչ այնքան մաքուր տեսք ունեւր: Երեսը և ձեռքերը ծածկված էին փոքրիկ կարմիր պղուկներով՝ մոծակների կծածներն այնքան էր քորել, մինչև արյուն էր եկել: Երկար, վախտ գեմքը մոռլ էր:

— Ինչքան գիտեմ, դուք նորից լեզու չեք գտնում ձեր ծառաների հետ: Արտաք՝ իմ ավագ բոչի եղորորդին, բողոքում է, որ պահել եր իր երեք ամսվա աշխատավարձը: Ես գտնում եմ, որ դա ժայրաստիճան կամայականությունն է: Տղան ուզում է հեռանալ ձեզնից, և ես, իհարկե, չեմ մեղադրում նրան: Սախված եմ պնդել, որ վճարեք նրան իր հասանելիքը:

— Ես չեմ ուզում, որ նա գնա: Ռոճիկը պահում եմ որպես կրաշխիք իր լավ վարչագծի:

— Գուք մալայացիներին բնավորությունը չգիտեք: Մալայացիները շատ զգայուն են վիրավորանքների ու ծանակությունների նկատմամբ: Նրանք կրքոտ են ու վրեժխնդիր: Իմ պարտքն է զգուշացնել ձեզ, որ մեծ ռիսկ կանեք, եթե այդ տղային հաներ համբերությունից:

Քուփերն արհամարհանքով քմծիծաղ սովեց:

— Իսկ նա ի՞նչ կանի, ձեր կարծիքով:

— Կարծում եմ, կսպանի ձեզ:

— Իսկ ինչ է, ձեր շա՞տ հոգն է:

— Օ՛, իմ հոգը չէ, — թույլ քմծիծաղով պատասխանեց միտարը Ուորրթթընը, — ես այդ հարվածը հոգու արտակարգ արհուրվամբ կտանեմ: Բայց իմ պաշտոնական պարտքն եմ համարում հարկ եղած ձևով զգուշացնել ձեզ:

— Չլինի՞ կարծում եք, թե վախենում եմ գրողի տարած նիգերից:

— Դա կատարելապես միևնույն է ինձ համար:

— Դե որ այդպես է, իմացեք, որ ես գիտեմ, թե ինչպես հոգամ իմ մասին: Ձեր այդ Աբրամը կեղտոտ, զոգ ստահակ է, և եթե նա ինձ հետ փորձի խաղեր խաղալ, շան պես վիզը կոտրեմ:

— Այս էր ամենը, որ կամենում էի ձեզ ասել, — ասաց միս-
ալը Ուորթթիլընը: — Յստաության:

Միսար Ուորթթիլընը ի նշան հրածեղտի թեթևակի գլխով արեց
Քուփերը շտապունեց, մի րոպե չիմացավ ինչ ասի կամ անի,
կրնկի վրա շուտ եկավ և սայթաքելով դուրս նետվեց սենյակից:
Միսար Ուորթթիլընը սառցային ժպիտը դեմքին հետևում էր
նրան: Նա կատարել էր յուր պարտքը: Սակայն ինչ կմտածեր,
ե՞րև իմանար, որ երբ Քուփերը հասավ իր լուռ ու անուշախ
խրճիթը, նետվեց մահճակալին և իր գրտը մենության մեջ հան-
կարժ կորցրեց ինքնատիրապետումը: Յավագին փղձկոցները
պատառոտեցին նրա կուրծքը, և ծանր արցունքի կաթիլները
սահեցին վախա այտերով:

Գրանից հետո միսար Ուորթթիլընը հազվադեպ էր տեսնում
Քուփերին և չէր խոսում հետը: Ամեն առավոտ կարգում էր իր
«Քայմար», գրասենյակում աշխատում, գրոսանք կատարում,
հաջնվում ճաշի համար, ճաշում և դետի մոտ նստած ծխում յուր
ծխամորձը: Եթե պատահաբար հանդիպում էր Քուփերին, ըս-
տեսնելու էր ապիս նրան: Նրանցից ամեն մեկը, թեև ոչ մի
վայրկյան չմոռանալով հարևանի մասին, պահում էր իրեն այն-
պես, ասես մյուսը գոյություն անգամ չունենար: Ժամանակը չէր
մեղմացնում թշնամանքը: Հետևում էին մեկը մյուսի գործո-
ղություններին, և յուրաքանչյուրը գետև, թե մյուսն ինչ է
անում: Թեև երիտասարդ հասակում միտեր Ուորթթիլընը վարժ
կրակող էր եղել, տարիների ընթացքում նրա համար շունգիների
վայրի դաղաններին սպանելը ահա՛ և էր դարձել, մինչդեռ Քու-
փերը կիրակի և տոն օրերին հրացանն առած որսի էր գնում:
Եթե մի բան խփեր, դա հազի՛րանակ էր լինում միսար Ուորթթիլը-
նի նկատմամբ, եթե ոչ, միսար Ուորթթիլընն ուներ թե՛րևում էր
ու ըմբի՛ծող տալլա: Մի տեսէր այս գործակատարներին, որ
ուղում են իրենց որսորդ զգալ: Մուրը Մնունզը երկուսի համար
էլ վատ ժամանակ էր. նրանք առանձին ճաշում էին՝ ամեն մեկն
իր բնակարանում, և հարքում անշտապ: Երկու հարյուր մղան
շտապվող ոչ մի սպիտակամորթ չկար, իսկ սպրոտ էին այն-
քան մոտ, որ մեկը մյուսի գոտոցը կլսեր: Տարվա սկզբին Քու-
փերը պակեց տեսնող, և երբ միսար Ուորթթիլընը նորից տեսավ
նրան, դարմացավ, թե ինչքան է նիհարել: Հիվանդ ու հալումաշ
եղած տեսք ուներ: Միայնությունը, առավել անբնական, քանզի
դա անհրաժեշտություն թեւադրանքը չէր, սկսում էր ազդել նրա

նյարդերի վրա: Նույնը տեղի էր ունենում միսար Ուորթթիլընի
հետ, և նա հաճախ դիզերները բնել չէր կարողանում: Արթուն
պակած միտք էր անում: Քուփերը թունդ խմում էր և, անտա-
րակույս, ուր որ է սառույցը կշարժվեր, սակայն բնիկների հետ
հարաբերություններում նա աշխատում էր շանել ոչ մի ափսոսի
բան, որ կարող էր պետին առիթ տալ իրեն հանդիմանելու: Նրանք
մոռալ ու լուռ ճակատամարտ էին մղում: Դա փորձություն էր
դիմացկունություն: Ամիսներ էին անցնում, և ո՛չ մեկը, ոչ էլ
մյուսը թուլանալու նշաններ չէին ցուցաբերում: Ասես հավեր-
ժական գիշերների երկրում ապրողներ լինեին. ում սխալը կե-
ղերում է այն միտքը, որ օրը չի լուսանա երբևէ իրենց համար:
Թվում էր, թե նրանց կյանքը պիտի հավերժ շարունակվի ամե-
լությունյան այդ տազտեպլի, ահա՛վեր մի օրինակության մեջ:

Եվ երբ վերջապես անխուսափելին տեղի ունեցավ, այն ցնցոց
միսար Ուորթթիլընին անսպասելիության յուր ողջ ուժգնությունը:
Քուփերը մեղադրել էր պատանի Աբասին ինչ-որ հազուադեպ
թոցնելու մեջ, և երբ տղան ժխտել էր, թե գողություն է արել,
լուսել էր վերջինիս վզակոթից և սարի հարվածով վաթ գլորել
խրճիթի աստիճաններով: Տղան պահանջել էր իր ռոճիկը, իսկ
Քուփերը նրա գլխին էր թափել իմացած բոլոր լուսանքները:
Եթե մի ժամից հետո նրան տեսնի տան շրջակայքում, սպա-
նացել էր Քուփերը, կհանձնի ոստիկանությունը: Առավոտյան
բոլբ դարանեց նրան ամբողջը դուրս, երբ գնում էր գրասեն-
յակ, և նորից պահանջեց իր ռոճիկը: Քուփերը բռունցքով հար-
վածեց նրա դեմքին: Տղան վալը ընկավ գետեփն, իսկ երբ
բարձրացավ, քթից արյուն էր հոսում:

Քուփերը գնաց գրասենյակ: Սակայն չէր կարողանում կենսա-
րոնանալ: Հարվածը մեղմացրել էր շղայնությունը, և այժմ ար-
դեն զգում էր, որ հետուն գնաց: Տագնապը տիրել էր նրան: Իրեն
հիվանդ էր զգում, խղճուկ ու վախեցած: Կողքի գրասենյակում
նստած էր միսար Ուորթթիլընը, և Քուփերին մի բան մղեց գնալ
ու պատմել, թե ինչ է արել. նա մի շարժում արեց աթոռի վրա,
բայց նույն րոպեին պատկերացրեց, թե պետն ինչ սառցային
բամաճրանքով կունկնդրի իր պատմությունը: Արդեն տեսնում
էր նրա ամբարտաձան ժպիտը: Մի րոպե Քուփերը անհարմաշ
վախ զգաց, մտածելով, թե Աբասն ինչ կարող է անել: Ուորթթի-
լընն իրեն ինչպես հարկն է զղուշացրել էր: Նա հառաչեց: Ի՛նչ
հիմար է եղել ինքը: Սակայն անմիջապես գրգռված թոթիկը

ուսերը: Իր պետքն էլ չէ՛ կարծես թե շատ բո՛ւ ունի կորցնելու Այգ ամենը Ուորթթըրնի մեզքն է, և Նե իրեն գալուստը չի կորցրել, այսպիսի բան չէր լինի: Հենց ամենակորից կյանքը զոսխը դարձրեց իր համար: Սնորթ՝ մեկը՝ նրանք բոլորն էլ այդպիսին են, և դա՛ որովհետև ինքը գաղութածին է: Գրողը տանի, հազաք ամոթ, որ ինքը պատերազմի ժամանակ այդպես էլ սպայի կոչում շատացավ՝ մյուսներից ինչո՞ւ էր պակաս: Բուլոքն էլ կեղտոտ սնորհներ են: Ամոթ իրեն, և թե հիմա զիջի՝ Անկասկած, Ուորթթըրնը կյսի տեղի ունեցածի մասին, ծեր սատանան ամեն ինչին տեղյակ է: Բայց ինքը չի վախենում: Ինքը չի վախենում ոչ մի մալալացուց, և Ուորթթըրնը կարող է կորչել՝ գրողի ծոցը: Նա ճիշտ էր կարծում, որ միտար Ուորթթըրնը կիմանա տեղի ունեցածի մասին: Նախաճաշի ժամանակ ավագ բոյը ամեն ինչ պատմեց նրան:

— Որտե՞ղ է հիմա եղբորդդ:

— Չգիտեմ, թուան: Գնացել է:

Միտար Ուորթթըրնը լսեց: Որպես կանոն, նա նախաճաշից հետո մի փոքր քնում էր, բայց այսօր քունը չէր տանում: Նրա աչքերը սեփական կամքից անկախ փնտրում էին խրճիթը, որտեղ հիմա հանգստանում էր Քուփերը:

Ապո՛ւշ: Մի բոպե միտար Ուորթթըրնը երկմտեց: Դիտե՞ր արդյոք այդ Քուփերը, թե ինչ վառնգի մեջ է ինքը: Գուցե մա՞րդ ուղարկի նրան կանչելու: Սակայն ամեն անգամ, երբ ինքը փորձել է ընդհանուր լեզու գտնել Քուփերի հետ, վերջինս վիրավորել է իրեն: Զայրույթ, կատաղի զայրույթ հանկարծ լցվեց միտարը Ուորթթըրնի սիրտը, այնպես որ քունքերի զարկերակներն ուռեցին, և նա ամուր սեղմեց բուռնցքները: Այդ անտաշին ինքն արդեն նախազգուշացրել է: Հիմա թող ստանա: Դա իր գործը չէ, և եթե մի բան պատահի, իր մեղքը չի լինի: Բայց Քուալս Մոյրում երևի դեռ ափսոսան, որ իր խորհուրդը չկատարեցին և Քուփերին ուրիշ վայր շտեղծափոխեցին:

Այդ երեկո նա արտասովոր կերպով անհանգիստ էր: Ծաշից հետո պատշաճում էր մի քիչ գրոսնեց: Երբ բոյը ուզեց գնալ, միտար Ուորթթըրնը հարցրեց, թե Արասին տեսնող եղև՞ է արդյոք:

— Ոչ, թուան, ես կարծում եմ, երևի գնացել է գյուղ՝ քեռու մաս:

Միտար Ուորթթըրնը մի ուշադիր հայացք նետեց նրա վրա,

բայց բոյը ցած էր նայում, և նրանց աչքերը շահնդիպեցին: Միտար Ուորթթըրնը ղնաց գեպի գետը և նստեց տաղավարում: Սակայն հանգստությունը դավաճանել էր նրան: Գետը հոսում էր լուռ, շարագույժ: Ասես մի հսկա օձ լինեք, որ ալարկոտ դեպի ծով է սողում: Եվ ջրի մոտի ծառերը լի էին անշունչ սպառնալիքով: Քոչունների երգը չէր լսվում և քասիանների տերևներն անշարժ էին, քանի որ ղեփյուռ անգամ չէր փչում: Ամեն ինչ շուրջը սպասողական տեսք ուներ:

Նա քաջեց պարտեզով դեպի ճանապարհը: Այգտեղից պարզ երևում էր Քուփերի խրճիթը: Հյուրասենյակում լույս էր վառվում, և շուրջը տարածվել էին ռեզիմայի հնչյունները: Քուփերը միացրել էր գրամոֆոնը: Միտար Ուորթթըրնը սարսուաց. երբեք չէր կարողացել հազիմհարել բնազդային զզվանքն այդ գործիքի նկատմամբ: Եթե գրամոֆոնը չլիներ, նա կգնար ու կխոսեր Քուփերի հետ: Թեզիղեմար շրջվեց և տուն քալեց: Նա երկար կարգաց անկողնում, մինչև վերջապես քուն մտավ: Բայց շատ երկար չքնեց, մղձավանջների մեջ էր և արթնացավ, ինչպես իրեն թվաց, գոռոցից: Անտարակույս դա նույնպես երազ էր, քանզի ոչ մի աղաղակ, օրինակ, խրճիթից, չէր հասնի իր սենյակ: Մինչև լույս արթուն մնաց: Հետո շտապ քալեք լսեց, ինչ-որ ձայններ, ավագ բոյը հանկարծ ներս խուժեց սենյակ՝ գլխաբաց, առանց ֆեսի: և միտար Ուորթթըրնի սիրտը մարեց մի բոպե:

— Թուա՛ն, թուա՛ն:

Միտար Ուորթթըրնը վեր թռավ անկողնուց:

— Գալիս եմ, հիմա՛:

Նա հազավ հողաթափերը և սարոնքն ու պիծաման հագին քալեց Քուփերի տան կողմը: Քուփերը պառկած էր իր մահճակալին, բերանը բաց, սրտի մեջ քրիս խրված: Նրան սպանել էին քնած տեղը: Միտար Ուորթթըրնը ցնցվեց, բայց ոչ որովհետև չէր սպասում այդպիսի մի տեսարանի, նա ցնցվեց, որովհետև հանկարծ ցնծության այիքը պատեց նրան: Մի հսկա բեռնկավ ուսերից:

Քուփերն արգեն սառն էր: Միտար Ուորթթըրնը վերջից դուրս բաշեց քրիսը՝ այնպիսի ուժով էին խրել, որ ջանք էր պետք գործադրել դուրս հանելու համար, և նայեց դաշույնին: Ճանաչեց: Այդ քրիսը մի առևտրական իրեն էր առաջարկել մի քանի շաբաթ առաջ, և ինքը գիտեր, որ Քուփերն էր գնել այն:

— Որտե՞ղ է Աբասը, — խստորեն հարցրեց նա:

— Աբասը գլուղում է՝ իր քեռու մոտ:

Տեղական աստիկանության բնիկ սերժանտը կանգնած էր անկողնու մոտ:

— Երկու հոգի վերցրեք, գլուղ զնացեք և ձերբակալեք նրան:

Միստր Ուորբերթընն անում էր այն ամենն, ինչ միանգամից անհրաժեշտ էր անել: Քարացած ղեմքով կարգադրություններ էր տալիս: Բառերը կարճ էին և կտրական: Հետո նա վերադարձավ ամրոց: Մափովեց, լոգանք ընդունեց, հազնվեց և զնաց ճաշասենյակ: Ափսեհ կողքին փաթեթավորված «Բուլմախ» համարը նրան էր սպասում: Նա միրգ կերավ: Ավագ բոլը թեյ էր լցնում, մինչդեռ մի ուրիշը բերեց հավկիթներով փսեսն: Միստր Ուորբերթընը կերավ մեծ ախորժակով: Ավագ բոլը սպասում էր:

— Ի՞նչ կա, — հարցրեց միստր Ուորբերթընը:

— Թուան, Աբասը, իմ եղբոր տղան, ամբողջ գիշեր իր քեռու տանն է եղել: Դա կարելի է սպացուցել: Նրա քեռին կերդվի, որ նա գլուղից չի հեռացել:

Միստր Ուորբերթընը խոժոռ շրջվեց դեպի ծառան:

— Թուան Քուփերին Աբասն է սպանել: Դու դա ինձնից լավ գիտես: Արդարությունը պետք է տեղի ունենա:

— Թուան, չե՞ք կախի նրան:

Միստր Ուորբերթընը մի բույն վարանեց, ու թեև նրա ձայնը մնաց վատահ ու խիստ, մի բան փոխվեց աչքերում: Դա մեռական ծում էր, որը մալայացի անմիջապես որսաց, և վերջինիս աչքերում փայլեց պատասխան արտահայտությունը՝ նա հասկացավ:

— Նա շտիֆից շատ էր նեղել Աբասին: Աբասը որոշ ժամկետով բանտարկության կդատապարտվի:

Մի պահ լուսվումն տրեհց: Ուորբերթընը ջեմ քսեց հուցին:

— Երբ ժամկետի մի մասը կլրանա, ես նրան այս տան ծառա էվերցնեմ: Դու կարող ես նրան սովորեցնել իր պարտականությունները: Կասկած չունեմ, որ թուան Քուփերի տանը վատ սովորություններ է ձեռք բերել:

— Աբասը պետք է հանձնվի, թուան:

— Խեղոք կվարվի, եթե այդպես անի:

Բոլը հեռացավ: Միստր Ուորբերթընը ձեռքը վերցրեց իր «Թալմաք» և խնամքով կտրեց փաթեթը: Նա սիրում էր բացել ծանր, խշխշացող էջերը...

Հրաշալի առավոտ էր՝ թարմ ու զով, և մի բույն նրա աչ-

քերը բարեհոգաբար սահեցին պարտեզով: Մի մեծ բեռից էին ազատվել մտքերը: Հետո հայացքը հառեց սլունակներին, որտեղ հայտարարություններ էին ծնունդներին, մահերի և ամուսնությունների մասին: Նա միշտ դրանք էր առաջին հերթին աչքի անցկացնում: Մի ծանոթ անուն գրավեց ուշադրությունը: Վերջապես լեյդի Օմաքիբը տղա էր ունեցել: Մա՛լաք Գևորգ, ինչ գոհ կլինի հիմա ծեղ տիկինը: Հաջորդ փոստով շնորհավորական երկտող կգրի նրան:

Աբասից շատ լավ ծառա դուրս կգա:

Այդ հիմա՛ր Քուփերը:

Հիշյու՞մի մորթին



ատերը ցնցված մնացին, երբ կարգացին, թե կապիտան Զորեոսիկերը գտել է յուր մահճն անտառային հրդեհի բոցերում, փորձելով փրկել իր կնոջ շանը, որ պատահարար տանը փակված էր մնացել: Ոմանք ասում էին, թե մտքներով չէր անցնի, որ նա դրան ընդունակ է, մյուսներն ուսում էին, թե հենց դա էլ պետք էր նրանից սպասել, բայց մի մասն այդ բաների տակ մի բան նկատի ունեն, մյուսները՝ այլ բան: Ողբերգական այդ իրադարձությունից հետո միսիս Զորեոսիկերն ապաստան գտավ ոմն Հարդիների սուսնձուտանը, որոնք հետ ինքն ու ամուսինը վերջերս էին ծանոթացել: Կապիտան Զորեոսիկերը չէր սիրում նրանց, համենայն դեպս Ֆրեդ Հարդին, սակայն միսիս Զորեոսիկերը հիմա զգում էր, որ եթե ամուսինը կենդանի մնար այդ սարսափելի դիշերը, կփոխեր յուր վերաբերմունքը: Կհասկանար, թե ինչքան լավ դեղոր ունի Հարդին՝ հակառակ իր համբավի, և

այնպիսի ջննալձեն, ինչպիսին նա էր, չէր տատանվի ընդունել, որ ինքը սխալվել է: Միսիս Զորեոսիկերը չէր պատկերացնում, թե ինչպես կկարողանար չխեղազարվել՝ կորցնելուց՝ հետո մի մարդու, որն ամեն ինչ էր իր համար, եթե շինեք Հարդիների սրանչիլի բարությունը: Նրա անշափելի վշտի դեմ միակ մխիթարությունը այդ մարդկանց անփոփոխ կարեկցանքն էր: Նրանք, համարյա սեփական աչքերով տեսնելով իր ամուսնու մեծ զոհարկությունը, բուրից ավելի լավ գիտեին, թե ինչ հիանալի մարդ էր նա: Երբև չի մոռանա այն բաները, որոնցով սիրելի Ֆրեդ Հարդին սվեռեց իրեն անավար բոթը: Այդ բաներն էին, որ իրեն կարող դարձրին ոչ միայն դիմանալ սարսազդու աղետին, այլև անմխիթար ապագային ընդառաջ դնել խիզախությունը, որով համոզված էր, իր ախքան սիրած բաց անձնավորությունը, նրանկատ ջննալձենը կուշկը, որ ինքը չնար:

Միսիս Զորեոսիկերը շատ լավ էլին էր Բարի մարդիկ այդպես ևն ասում էին՝ մասին, երբ ուրիշ ոչինչ չեն կարող ասել, և բոլորը որպես առոր դավաճանը են ընդունում դա: Ես այդ իմաստը նկատի չունեմ:

Միսիս Զորեոսիկերը ոչ հմայիլ էր, ոչ զեղեցիկ և ոչ էլ խելացի: Ընդհակառակը, նա անխելչ էր, հասարակ ու հիմար, և այսուամենայնիվ, որքան շատ էր նրան ճանաչում, այնքան ավելի էր նա ձեզ զուր գալիս, և է՛հ հարցնում էին ինչու, ձեզնից անկախ ստիպված էիր կրկնել, որ նա շատ լավ էին և Միջահասակ էր, տափակ ցիխ ունեց, բաց կապույտ կարճաճան աչքեր և մեծ սնձուսնի ձեռքեր: Մտշկը կնձոտ էր ու հողմահարված, բայց նա ուժեղ շարժում էր և երկար մաղեցր, սակեզույն ներկած, խիտ խոպուպներ էր դարձնում ու խնամքով հարգարում: Նա ամեն հնարավոր բան անում էր, որ հակադրվի իր արտաքինի աչք ծակող արականությունը, սակայն ընդամենը հաջողեցնում էր նմանվել վողեկի մեջ կնոջ դեր կատարող աղամարդու: Զույնը կանացի էր, բայց մարդ միշտ սպասում էր, ես համարի վերջում այն կվերափոխվի հզոր բառի, և նա, զլխից պոկելով սակեզույն կեղծամբ, կցուցադրի գազաթի ճազատու: Միսիս Զորեոսիկերը շափազանց շատ գրամ էր ծախում հագուստների վրա, որոնք պատվիրում էր Փարիզի ամենամոդայիկ զերձակների մոտ, սակայն հիանամյա այդ կիներ զմրախառաբար անհաջող ճաշակ ունեք, նրա ընտրած ոլկեսանները նրբազեղ էին թվում փոքրիկ, սիրունիկ, ծաղիկ հասակի մանեկեն-

ների վրա: Տիկինը միշտ մեծ քանակությամբ թանկարժեք դար-
դեր էր կրում: Նրա շարժումներն անձուռնի էին ու անշնորհ: Եթե
հյուրասենյակ էր մտնում, որտեղ մի թանկարժեք բյուրեղապա-
կե իր կար, շփուես ինչպես հաշողեցնում էր վար գցել այն. եթե
ընթրում էր ձեզ հետ, և դուք բաժակներ ունեիր, որ շատ թանկ
էիք գնահատում, դրանցից մեկը անպայման կվերածեր մանր
փշուրներին:

Այսուհանդերձ, այդ անհեթեթ արտաքինը պատասպարում էր
մի քնքուշ, ումանտիկ ու երազկոտ հոգի: Որոշ ժամանակ էր
պետք լինում, որ մարդ դա զգար, քանզի առաջին հայացքից
մի ծիծաղաշարժ էակի տեղ էիր դնում նրան, իսկ հետո, երբ
ավելի լավ էիր ճանաչում այդ կնոջը (և տուժում նրա անշնորհ-
քութիւններից), նա ջղայնացնում էր քեզ. սակայն երբ հայտնա-
բերում էիր այդ բանը, սկսում էիր քեզ հիմար համարել, որ
ամբողջ ժամանակ շես իմացել դա, քանզի շուտով այդ բանը
քեզ էր սկսում նայել բաց կապույտ, կարճատես աչքերի միջից՝
շատ ամաշկոտ, բայց և անկեղծությամբ, որ միայն հիմարը
կարող էր շնկատել: Այդ վայելչագեղ մուսլիմներն ու զարնանա-
բույր շղարշները, այդ կուսական մետաքսները ծածկում էին ոչ
թե կոշտուկայիտ մարմինը, այլ թարմ, աղջկական հոգին: Մո-
ռանում էիր, որ ջարդել է հախճապակիդ և կնոջ շոր հագած
տղամարդու տեսք ունի, տեսնում էիր նրան այնպես, ինչպես
ինքն իրեն, այնպես, ինչպես նա իրոք կլիներ, եթե տեսանելի
լիներ իրականությունը՝ որպես մի փոքրիկ սքանչելի էակ, որը
ուսկե սիրտ ունի: Նրբ ճանաչում էիր նրան, տեսնում էիր, որ
երևխայի պես պարզ է. նա սրտառու էր կերպով երախտապարտ
էր լինում իր հանգիստ ցույց արվող ամեն մի ուշադրության.
միայն Յորեսսիների սեփական բարությունն անսահման էր, ինչ
էլ որ խնդրեր քեզ համար անել, ու որքան էլ դա հոգնեցուցիչ
լիներ, նա կկատարեր այնպես, ասես լավություն արած լինեիր,
հնարավորություն տալով իրեն հոգսերի մեջ ընկնելու: Հազ-
վագուտ մի ունակություն ունեի անշահախնդիր սիրտ: Մարդ
մտտահ էր, որ երբեք մի շար կամ թունոտ միտք չի անցել նրա
գլխով: Եվ այդ ամենում համոզվելուց հետո մի անգամ էլ էիր
կրկնում, որ նա շատ լավ կին է:

Պժբախտաբար, նա միևնույն ժամանակ նաև հիմարի մեկն
էր: Դա պարզ էր դառնում, երբ հանդիպում էիր նրա ամուսնուն:
Միայն Յորեսսիներն ամերիկուհի էր, իսկ կապիտան Յորեսսիներն՝

անգլիացի: Միայն Յորեսսիները ծնվել էր Փորթլենդում՝ Օրիգոն
նահանգում, և ոչ մի անգամ չէր եղել Եվրոպայում մինչև 1914
թվի պատերազմը, երբ, իր առաջին ամուսնու մահից ոչ շատ
անց, ընդունվել էր հիվանդանոց աշխատելու և Յորանսիա եկել:
Նա հարուստ չէր ըստ ամերիկյան ստանդարտների, սակայն
Անգլիայի շափանիշներով բարեկեցիկ պայմաններում էր զրտ-
նրվում: Յորեսսիներների ապրելակերպից դատելով, տիկինը տա-
րեկան մի երեսուն հազար դոլար եկամուտ ուներ: Եթե հաշվի
լառնենք, որ նա անկասկած սխալ դեղեր էր տալիս սխալ մարդ-
կանց, վիրակապերն այնպես կազում, որ դրանցից վնասից բա-
ցի՝ օգուտ չկար և շարդում էր ամեն մի գործիք ու սարք, որ
հնարավոր էր շարդել, ես համոզված եմ, որ նա հոյակապ բուժ-
բույր էր: Զեմ պատկերացնում այնպիսի մի աշխատանք, որ
միայն Յորեսսիների համար չափից դուրս զգվելի լիներ, և նա
տատանվեր դա կատարել. հաստատ կարող եմ ասել, որ այդ
կինը երբեք իրեն չէր խնայում և անտարակույս երբեք չէր բար-
կանում: Կարծում եմ, որ շատ ու շատ խեղճուկրակներ հիմք
ունեն օրհնելու նրա բարի սիրտը, և հնարավոր է, որ շատերն
իրենց վերջին դառը քայլն արել են դեպ անհայտություն ավելի
մեծ քաղցությամբ, շնորհիվ նրա ոսկե հոգու բարեսրտության:
Կապիտան Յորեսսիները նրա խնամքի տակ հայտնվեց պատերազ-
մի վերջին տարում և խաղաղությունից անմիջապես հետո հայ-
տարարվեց: Որ նրանք ամուսնանում են: Նորասպակները բնակ-
վել ընդ Կաննի սարերից այն կողմ, մի գեղեցիկ առանձնատանը
և կարճ ժամանակահատվածում ճանաչված դարձան Ռիվիերայի
սոցիալական կյանքում: Կապիտան Յորեսսիները լավ բրիջ ու
գուլֆ էր խաղում: Թենիս էլ վատ չէր խաղում: Նա զբոսանալ
ունեի, և ամառը Յորեսսիներները կղզիների մոտ շատ հաճելի
երեկույթներ էին կազմակերպում: Տասնյոթ տարվա ամուս-
նությունից հետո միայն Յորեսսիները շարունակում էր պաշտել
յուր գեղեցկագեղեմ ամուսնուն, և եթե մեկը երկար ճանաչում էր
տիկինը, նա չէր խուսափի սկզբից մինչև վերջ լսելու միայն
Յորեսսիների արևմտյան ձգուն արտասանությամբ արած պատ-
մությունն այն մասին, թե ինչպես է կապիտանը սիրահետել
լինել:

— Դա սեր էր առաջին հայացքից, — ասում էր նա: — Նրբ
նրան բերեցին, ես ազատ էի աշխատանքից, և երբ նկատ եկա
ու տեսա նրան պատկած իմ մահճակալներից մեկին, ա՛հ, աստ-

ված իմ, այնպիսի մի հարված զգացի կրծքումս, որ մի րոպե ինձ թվաց, թե շափոյ դուրս շատ եմ գործ արել և հոգնեցրել եմ սիրտս: Դա ամենագեղեցիկ տղամարդն էր, որ տեսել էի իմ կյանքում:

— Նա ծա՞նր էր վիրավորված:

— Գիտե՞ք, ոչ թե վիրավորված: Դա շատ արտասովոր բան էր. նա անցել էր ամբողջ պատերազմը, և բեմն ամիսներով կրակի տակ եղել, և, անշուշտ, օրը քսան անգամ կյանքը վտանգի ենթարկել. նա այն մարդկանցից էր, որոնք չգիտեն, թե ինչ է վախը, բայց ոչ մի անգամ ճանկովածք իսկ չէր ստացել: Կայծուռուցքներ ունե՞ր:

Ջերմ կապվածության նախաբանը լինելու համար դա ոչ այնքան սովորական տկարություն էր թվում: Միսիս Ֆորեսթիերն այդ հարցում ավելորդ համեստություն էր ցուցաբերում, ու թեև կապիտան Ֆորեսթիերի կայծուռուցքները շափազանց հետաքրքրում էին նրան, այնուամենայնիվ, նա մի թեթև դժվարանում էր պարզորոշ ասել, թե հատկապես որտեղ էին դրանք գտնվում:

— Հենց մեջքի տակ էին, նույնիսկ ավելի այն կողմ, և նա տանել չէր կարողանում, երբ ևս վիրակապում էի դրանք: Անգլիացիները վարձանախորեն ամոթխած են, շատ ու շատ անգամներ ես դա նկատել եմ, և այդ բանը շատ էր խոցում նրա արժանապատվությունը: Երևի ձեզ թվա, որ հենց առաջին ծանոթություններից այդպիսի հարաբերությունների մեջ լինելը (եթե հասկանում եք, թե ինչը նկատի ունեմ) մեզ ավելի մտ պիտի դարձներ: Բայց, չգիտեմ ինչու, այդպես չեղավ: Նա շատ անբարեհամբույր էր ինձ հետ: Երբ շրջայցի ժամանակ մոտենում էի նրա մահճակալին, շունչս այնպես էր կտրվում, և սիրտս այնպես խփում, որ չէի կարողանում հասկանալ, թե ինչ է հետս կատարվում: Ես ընդհանրապես անշնորհք կին չեմ, երբեք ոչ մի բան վայր չեմ գցում կամ չեմ կոտրում, բայց երևի դուք չհավատաք, երբ Ռորերտին պեղ էի տալիս, գդալը ընկնում էր ձեռքիցս, իսկ բաժակը՝ շարզվում: Ես չէի պատկերացնում, թե նա իմ մասին ինչ կ'ընտանի:

Բավական դժվար էր շփոթազել միսիս Ֆորեսթիերի այդ պատճառի վրա: Նա շատ անուշ ժպտում էր:

— Ըստ երևույթին, դա ձեզ շատ անիմաստ բան է թվում, բայց, գիտե՞ք, երբեք առաջներում ինձ այդպես չեմ զգացել: Երբ ես ամուսնացա առաջին անգամ, ամուսինս այրի էր և շա-

փահաս երեխաներ ուներ, նա հիանալի մարդ էր՝ նահանգի ամենաճանաչված քաղաքացիներից, բայց ամեն ինչ մի տեսակ այլ կերպ էր:

— Իսկ ինչպե՞ս եղավ, որ դուք վերջիվերջո հայտնագործեցիք, թե սիրում եք իրար:

— Դե, ես չեմ պնդի, որ ինձ հավատաք, գիտեմ, դա ծիծաղելի է հնչում, բայց փաստն այս է՝ ինձ րուլթերից մեկն ասաց, և ես անմիջապես հասկացա, որ դա անկասկած ձիշտ է: Սկզբից շափազանց վշտացա: Բանն այն է, որ ես նրա մասին ոչինչ չգիտեի: Ինչպես բոլոր անգլիացիները, նա շատ զուսպ էր, և զրա համար կարծում էի, թե նա երևի կին ունի ու մի վեց երեխա:

— Ինչպե՞ս պարզեցիք, որ չունի:

— Իրեն հարցրի: Հենց լսեցի, որ ամուրի է, նույն վայրկյանին որոշեցի, որ պիտի ամուսնանամ հետը, թեկուզ աշխարհը փուլ գա: Նա տանջվում էր անտանելի ցավերից, խեղճը ախր ստիպված էր համարյա ամբողջ ժամանակ երեսի վրա պսակել, մեջքի վրա պսակելը տառապանք էր: Ինչ վերաբերում է նստելուն, ապա այդ մասին մտածել անգամ չէր կարող: Բայց չեմ կարծում, թե նրա ցավերն իմ ցավերից սուր էին: Տղամարդիկ սիրում են մարմինը կիս գրկած մետաքս շորեր ու փափուկ, խավոտ բաներ (դուք հասկանում եք, թե ինչ եմ ուզում ասել), իսկ ես իմ բուժքրոջ համազգեստով շատ անշահավետ վիճակի մեջ էի: Ավազ քույրը՝ մեկը այն անգլիական պառաված օրիորդներից, տանել չէր կարող, երբ շարքվում էին, այն ժամանակ ես ամենևին չէի շարքվում՝ առաջին ամուսինս դա չէր սիրում, բացի այդ, մազերս այնքան սիրուն չէին, ինչքան հիմա: Նույն ժամ էր նայում իր հոյակապ կապույտ աչքերով, և ես զգում էի՝ ինձ տգեղ չի համարում: Նա շատ ընկճված էր, ուզեցի ամեն ինչ անել նրան աշխուժացնելու համար, ուստի երբ մի քանի ազատ րոպե էի ունենում, գնում և զրուցում էի հետը: Ռորերտն ասում էր, թե անտանելի է մտածել, որ նման ուժեղ, հաղթանդամ երիտասարդը պսակած է անկողնում, մինչդեռ ընկերուղանները խրամատներում են: Հետը խոսելիս չէի կարող չհասկանալ՝ դա այն մարդկանցից էր, որոնք կյանքի բաղցրությունը երբեք այնքան ուժեղ չեն զգում, որքան այն ժամանակ, երբ շուրջը փամփուլաններ են սուլում, և հաջորդ րոպեն կարող է վերջինը լինել: Վտանգը խթանում էր նրան: Չեմ թաքցնի, երբ

մատչանի մեջ գրի էի առնում նրա շերմաստիճանը, մի երկու կնտ ավելացնում էի, որպեսզի բժիշկները նրա վիճակն ավելի վատ համարեին, քան կար: Գիտեի, ձեռքից եկածն անում է, որպեսզի բաց թողնեն իրեն, և գտնում էի, որ նրա հանդեպ միակ արդար բանը այնպես անելն է, որ զա տեղի չունենա: Երբ խոսում էի, մտախոհ ինձ էր նայում, և ես գիտեմ, որ անհամբերությամբ էր սպասում մեր փոքրիկ անհոգ զրույցներին: Ես նրան պատմեցի, որ այրի եմ ու խնամքիս տակ ոչ ոք չունեմ, և որ ցանկանում եմ պատերազմից հետո Եվրոպայում բնակվել: Աստիճանաբար նա փափկեց մի փոքր: Շատ չէր խոսում իր մասին, բայց հետո հանաքներ էր անում, դուք գիտեք, նա հուճարի ուժեղ զգացում ունի, և մեկ-մեկ ես խկապեա սկսում էի մտածել, թե բավական դուր եմ գալիս նրան: Վերջուպես հայտնեցին, որ նա պիտանի է ծառայության: Ի զարմանս ինձ, նա խնդրեց, որ վերջին երեկոն հետք ճաշեմ: Հաջողեցրի ավագ քրոջից թուլություններն ստանալ, և մեքենայով գնացինք Փարիզ: Չեք կարող պատկերացնել, թե ինչ գեղեցիկ էր իր համազգեստով: Շատ էր աչքի ընկնում: Ոտքից գլուխ արիստոկրատ: Ինչ-ինչ պատճառներով, սպասածիս հակառակ, լավ տրամադրություն չունեի: Չէ՞ որ խելքը գնում էր ճակատ վերադառնալու համար:

— Ինչո՞ւ եք այսօր այդքան անտրամադիր,— հարցրի ես:— Վերջիվերջո, դուք հասել եք ձեր ուզածին:

— Գիտեմ, հասել եմ,— ասաց նա:— Եվ եթե, չնայած դրան, ես մի փոքր տխուր եմ, ապա դուք չե՞ք կարող գուշակել, թե ինչու:

Ես սյարդապես չէի համարձակվում ենթադրել, թե ինչ նկատի ունի նա: Մտածեցի, որ ավելի լավ կլինի կատակեմ:

— Ես լավ գուշակող չեմ,— ասացի ծիծաղելով:— Եթե ուզում եք իմանամ, ավելի լավ է ասել:

Նա վար նայեց, և ես տեսա, որ նյարդայնանում է:

— Դուք խիստ լավ եք եղել իմ նկատմամբ,— ասաց նա:— Անբնդհատ ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ ամբողջ ձեր բարության համար: Դուք իմ երբևէ ճանաչած ամենահրաշալի կինն եք:

Ինձ այդ բառերը շվարեցրին: Դե, գիտեք, թե անգլիացիք ինչ ծիծաղելի մարդիկ են. առաջ նա ինձ երբեք հաճույսխոսություն չէր արել:

— Ես միայն ուրել եմ այն, ինչ ամեն մի փորձված բուժքույր կաներ,— ասացի ես:

— Ես ձեզ երբևէ նորից կտեսնե՞մ,— հարցրեց նա:

— Դու ձեզնից է կախված,— պատասխանեցի ես:

Հուսով էի, որ չի լսում, թե ինչպես է ձայնս դողում:

— Չեմ կամենում բաժանվել ձեզնից,— ասաց նա:

Ես հաղիվ էի բառերն արտաբերում:

— Իսկ դա պարտադիր է,— հարցրի:

— Քանի դեռ իմ թագավորն ու հայրենիքը կարիքս ունեն, ևս նրանց ծառան եմ:

Երբ միայն Ծորեթիները հասավ այդ գրվագին, նրա բաց երկնագույն աչքերը լցվեցին արցունքով:

— Սակայն պատերազմը հավերժ չի կարող տևել,— ասացի ես:

— Երբ պատերազմն ավարտվի,— պատասխանեց նա,— և ենթադրեք, թե մի փամփուշտ վերջս չտա, ևս մի դրոշ անդամ չեմ ունենա: Նույնիսկ չգիտեմ, թե ինչ պիտի անեմ ապրուստս վատակելու համար: Դուք շատ հարուստ կին եք, ես՝ չբավոր:

— Դուք անգլիացի ջենտլմեն եք,— ասացի ես:

— Մի՞թե դա մեծ նշանակություն ունի, երբ աշխարհը ուսմիկներին է դարձել,— պատասխանեց նա դառնությամբ:

— Ես արդեն խեղդվում էի արտասուքներից: Նրա ամեն սասածը այնքան գեղեցիկ էր: Իհարկե, ես տեսնում էի, թե նա ինչ նկատի ունի: Պատվաբեր բան չէր համարում խնդրելը, որ ամուսնանամ իր հետ: Ես զգում էի, որ այդ մարդն ավելի շուտ կմեռնի, քան կհանդուրժի, որ մտածեմ, թե իր ուզածն իմ փողն է: Հիանալի մարդ էր: Գիտեի արժանի չեմ նրան, բայց տեսնում էի, որ եթե ցանկանում եմ իմը լինի, պիտի ինքս ընդառաջ գնամ:

— Կով չէ ձեռքնել, թե չեմ գտնում ձեզ համար, որովհետև դա այդպես է,— ասացի:

— Ավելի մի դժվարացրեք ինձ համար,— խուստ քայականչեց նա:

Մի բուպե ինձ թվաց, թե կմեռնեմ՝ այնքան էի սիրում նրան այդ բառերի համար: Դրանք ասացին այն ամենն, ինչ ես ուզում էի իմանալ: Ես ձեռքս առաջ պարզեցի:

— Որքերտ, կամուսնանա՞մ ինձ հետ,— պարզապես ասացի ես:

— Էլեանոր, — առաջ նա:

Այդ ժամանակ էր, որ նա պատմեց, թե ինչպէս է սիրել ինձ հենց առաջին տեսնելուց: Սկզբից նա այդ լուրը չի բնորոշել, մտածել է, որ ես բնորոշեմք մի բուժքույր եմ, և գուցե ինքը հետո մի սիրազիպ ունենա, իսկ հետո, երբ պարզել է, որ այդ տեսակ կին չիմ. և դուժարի տեր եմ, ժառին դրել է, որ պիտի խեղդի իր սերը: Հասկանում եք, նա մտածել է, որ ամուսնութեան մասին խոսք լինել չի կարող:

Համարաբար, ոչինչ արեցան չէր շոյում միտի Տորեսթիերին, որքան այն գաղափարը, որ կապիտան Տորեսթիերն ուզեցել է սիրի-բիլի անել իր հետ: Անտարակոյս, ուրիշ ոչ ոք ոչ մի անգամ անպատվաբեր առաջարկներ չէր արել նրան, ու թէև Տորեսթիերը նույնպէս ոչինչ չէր ասել, այն համազգամութունը, որ նա այդպիսի միտք է փայփայել, բավարարութեան մի անմար օղբույր էր տիկնոջ համար: Երբ նրանք ամուսնացան, Էլեանորի ազգականները՝ կոշտակոսիտ արեւմտյան մարդիկ, առաջարկեցին, որ ամուսինը, կնոջ փողերով ապրելու փոխարեն, զնա աշխատի, և կապիտան Տորեսթիերն ամբողջ սրտով համաձայն էր դրան: Նրա դրած միակ պայմանը հետևյալն էր.

— Բաներ կան, որ ջնջումներ չի կարող անել, Էլեանոր: Ամեն մի այլ բան ես ուրախութեամբ կանեմ: Աստված է վկա, ես այդպիսի բաների ոչ մի կարևորութուն չեմ տալիս, բայց եթէ մեկը սահի՞ր է, ապա նա իր հետ ոչինչ չի կարող անել, և ի վերջո, զքո՞ղբ տանի, հարկապես մեք ժամանակներում մարդ որոշ պարտավորութիւններ ունի դեպի իր դասակարգը:

Էլեանորը զանում էր, որ իր ամուսինը բավական շատ է կշտնքը դիտելի հեթարկելի՝ շոքս տարի շարունակ իրար հաշորդող աքրունահեղ մարտերում՝ հանուն հայրենիքի, սակայն նա չափեց ավելի հպարտ էր կապիտանով, որպեսզի թույլ տաք ասեմք, թէ նա մի բարտախնդիր անձնավորութիւն է և իր հետ փողի համար է ամուսնացել, ուստի որոշեց շատարկել, եթէ օա իրեն արժան մի դործ գտնելու ծավոք, առաջարկվածները բավականաչափ պատկառելի աշխատանքներ չէին: Բայց Տորեսթիերը դրանցից հրաժարվելու պատասխանատվութիւնն իր վրա չէր վերցնում:

— Ինքը որոշիր, Էլեանոր, — առում էր նա: — Միայն մի բան ասա, և ես կընդունեմ դա: Ընդհատ է, իմ խեղճ ծերուկը

գերեզմանի մեջ շուտ կգար, եթէ ինձ տեսներ այդ անելիս, բայց ինչ արած: Ինձ համար առաջինը քո հանդեպ պարտքն է:

Էլեանորը լսել անգամ չէր ուզում այդ ծախն, և աշխատելու գաղափարն աստիճանաբար մի կողմ նետվեց: Տարվա մեծ մասը Տորեսթիերներն ապրում էին Ռիվիերայի իրենց առանձնատունը: Անգլիա հազվադեպ էին գնում: Ռոքերտն ասում էր, որ դա պատերազմից ի վեր ջնջումներն հարմար տեղ չի արդեն, քանզի բաւոք կարգին մարդիկ (սպիտակամորթներ՝ առաջինից մինչև վերջինը, որ իր հետ էին, երբ ինքն էլ «տղաներից մեկն» էր) սպանվել են: Ինքը կուզեր ձեռններն Անգլիայում անցկացնել, շարաթը երեք անգամ որս անել Քուրդի՝ անդամների հետ՝ գաղամարդու համար ամեն ինչ է, սակայն խեղճ Էլեանորի այնքան միայնակ կանաք որսորդների այդ ընկերախմբում, ինքը չէր կարող այդպիսի զոհարարութիւն պահանջել նրանից: Էլեանորը պատրաստ էր ամեն մի զոհարարութեան, բայց կապիտան Տորեսթիերը զուրկ թափ էր տալիս: Ինքն առաջվա պես ջահել չի, և իր որսորդութիւն անելու ժամանակն անցել է: Ինքը միանգամայն բավարարված է սիրիհեմներ՝ ինձամիտվ և բաժ օրփինգթըններ³ բազմացնելով: Ամուսինները բավական մեծ հողամաս ունեին՝ նրանց տունը բլրի գագաթին էր, սարահարթում, երեք կողմից անտառով շրջապատված, իսկ առջևում պարտեզ կար: Էլեանորն ասում էր, որ Ռոքերտի համար շկա ավելի մեծ ներշնչութիւն, քան հին թվիդե կոստյումը հագին զբոսնել կազվածքով շնապահի ուղեկցութեամբ, որը միաժամանակ նաև ճտերին էր խնամում: Եվ ահա այդ ժամանակ կապիտանի մեջ ի հայտ էին գալիս գլուղական կալվածատերերի այն բոլոր սերունդները, որ եղել էին՝ մինչ այդ Էլեանորը հազվում և միաժամանակ զգարեցանում էր, տեսնելով, թէ ինչպէս է նա երկար-բնարակ գրուցում շնապահի հետ բաժ օրփինգթընների մասին՝ աստված իմ, կարծես փաստաններից խոսել իր անտառապահի հետ, և նա այնպես էր տաքանում սիրիհեմների պատճառով, ասես դրանք որսաշներ լինեին, որոնց հետ (անընդհատ անցնում էր մարդու մտքով) նա իրեն շատ ավելի սեփական տարերքի մեջ կզգար: Կապիտան Տորեսթիերի ապուպազը ռեկնտութեան ժամանակի դիւրիներից էր եղել: Հենց նա էր սնանկացրել տոհմն այնքան, որ սիրույթները հարկ էր եղել վաճառել: Նրանք Երուզայում մի հրաշալի հինավուրց կալվածք էին անեցել՝ ունեցել էին դարեր շարունակ, և Էլեանորը,

թեև դա արգեն վաղուց իրենց չէր պատկանում, կուզեր գնալ տեսնել, բայց կապիտան Յորեսթիերն ասում էր, որ իր համար շափից դուրս ցավալի բան կլինի դա և երբեք չէր համաձայնում:

Յորեսթիերները սիրում էին լավ ժամանակ անցկացնել: Կապիտան Յորեսթիերը գինիների նուրբ գիտակ էր և հպարտանում էր իր մատանով:

— Նրա հայրը հայտնի է եղել որպես Անգլիայի ամենանբաճաշակ համտես անող,— ասում էր էլեանորը,— և Ռոբերտը ժառանգել է դա:

Նրանց ընկերների մեծ մասը ամերիկացիներ էին, ֆրանսիացիներ կամ ուսանելու Ռոբերտը համարում էր նրանց ընդհանուր առմամբ ավելի հեռաքրքիր, քան անգլիացիներին, իսկ էլեանորը հավանում էր այն ամենը, ինչ հավանում էր իր ամուսինը: Ռոբերտը գտնում էր, որ անգլիացիները հարկ եղած մակարդակին չեն: Անցած օրերին իր ճանաչած մարդկանց մեծ մասը սիրում էին որս անել ու ձկնորսություն, նրանք՝ խեղճ սաստանաները, բոլորը մեանկացել էին այժմ. ու թեև, փառք ասած, ինքը սնոր չէ, սակայն իրեն այնքան էլ դուր չի գալիս այն միտքը, թե իր կինը պիտի շփվի բազմաթիվ ուսուցիչների հետ, որոնց մասին ոչ ոք երբեք ոչինչ չի էլ լսել: Միսիս Յորեսթիերն այդ աստիճան բժախնդիր չէր, բայց նա հարգում էր ամուսնու նախապաշարմունքները և հիանում վերջինիս ինքնապարփակությունը:

— Իհարկե, նա էլ իր տարօրինակություններն ունի,— ասում էր էլեանորը,— բայց, ըստ իս, իմ կողմից միակ խելոք բանը դրանց տեղի տալն է: Երբ տեսնում ես, թե ինչ տեսակ մարդկանցից է սերում նա, հասկանում ես, թե ինչքան բնական են դրանք: Միակ անգամը, որ տեսել եմ նրան շղայնացած մեք ամուսնությունից տարիների ընթացքում, դա՛ երբ մի ժիզդո՞ւմ մտեցավ ինձ կազինուցում և առաջարկեց պարելու Ռոբերտը քիչ էր մնում մի հարվածով փոքր նրան: Ես ասացի, որ այդ խեղճ երեխան ընդամենը իր աշխատանքն է անում, բայց նա ասաց, թե չի հանդուրժի, որ դրա նման մի խոզ նույնիսկ պարզապես առաջարկի այդպիսի բան:

Կապիտան Յորեսթիերը բարձր բարոյական հատկանիշների տեր էր: Նա փառք էր տալիս աստծուն, որ ինքը նախապաշարմունքների գերքի չէ, սակայն ամեն տեղ սահման պետք է լինի, և եթե ինքը Ռիվիերայում է ապրում, ապա դա չի նշանակում, որ

պիտի բաժակ-բաժակի զարկի հարբեցողների, վատնորների ու փլացածների հետ: Նա չէր ներում սեռական սանձարձակությունները և էլեանորին թույլ չէր տալիս այցելել կասկածելի համրավ ունեցող կանանց:

— Ախր գիտեք,— ասում էր էլեանորը,— նա կատարիապես անբիծ անձնավորություն է, նա իմ երբևէ ճանաչած ամենամաքուր մարդն է, և եթե մեկ-մեկ մի փոքր անհանդուրժող է թվում, դուք միշտ պետք է հիշեք, որ Ռոբերտը երբեք մշտնըրից չի պահանջում այն, ինչ ինքը պատրաստ չէ անել: Ի վերջո՞ւ չի կարելի չհիանալ մի մարդով, որի սկզբունքներն այդքան բարձր են, և որը պատրաստ է ամեն գնով հովատարիմ մնալ այդ սկզբունքներին:

Երբ կապիտան Յորեսթիերն էլեանորին ասում էր, թե այնինչ մարդը, որին ամեն տեղ հանդիպում էին, և որը բավական հաճելի էր թվում, փառք սահիր չէ, վերջինս գիտեք, որ շարժն հակառակ է: Գիտեք, որ իր ամուսնու տեսակետից այդ մարդու հետ կապված ամեն բան պարզ է, և պատրաստ էր կատարել իր սիրելիի ցանկությունը: Համարյա քսան տարվա համատեղ կյանքից հետո նա մի բանում էր համոզվել՝ Ռոբերտ Յորեսթիերն իսկական անզրիճացի ջենտլմեն է:

— Եվ չեմ պատկերացնում, թե աստված երբևէ գրանցի ավելի հոյակապ բան ստեղծած լինի,— ասում էր նա:

Ամբողջ բանն այն է, որ կապիտան Յորեսթիերն անզրիճացի ջենտլմենի շափից դուրս կատարյալ տիպ էր: Նա քառասունհինգ տարեկան էր (երկու թե երեք տարի փոքր էր էլեանորից), դեռևս բավական գեղեցկադեմ՝ խիտ, ալիքավոր սպիտակ մազերով ու աննական բեղերով: Նրա մաշկը հողմահարված էր, թարմ ու թուխ, ինչպիսին ունենում են մաքուր օդում շատ լինող մարդիկ: Բարձրահասակ էր, երեսը և լայնաթիկունք: Իսկական մարդիկ: Բարձրահասակ էր, երեսը և լայնաթիկունք: Իսկական ջենտլմեր էր: Նա կոպտավուն, բարեհամբույր, սրտաբաց պահելու լավ ունեն էր ծիծաղում էր երկար, անկեղծորեն: Իր խոսելու ձևով, պահելու ձևով, հագուստով կապիտանն այնքան ախպիկ ջենտլմեն էր, որ մարդ հազիվ էր հավատում: Այն աստիճան նման էր կալվածատիրոջ, որ ավելի շուտ հիշեցնում էր դերասանի, որն իր դերն անզուգական է խաղում: Երբ նա քայլում էր Քրուսգեթով, ծխամորեք բերանին, գլխի անդրավարտիքով ու ճիշտ այնպիսի վերադրվածով, ինչպիսին Հյուսիսային Անգլիայի որսավարներում կհագնեք, այն աստիճան անզրիճացի որսորդի տեսք

էր ունենում, որ մարդ ցնցված էր մնում: Երա խոտելը, դա-
վանաբանելը, արտահայտած կարծիքների տափակ անմտու-
թյունը, բարեկիրթ հիմարութիւնը, այդ ամենն այնքան բնորոշ
էին պաշտանաթող սպային, որ տկամայից մտածում էիր, թե
ձնացնում է:

Երբ էլեանորը լսեց, որ իրենց բյուրանքի տունը գնել են
ինչ-որ սըր Ֆրեդերիկ և լեյդի Հարդի, շատ ուրախացավ: Ռո-
բերտի համար հաճելի կլինէր իր դասակարգից մեկնումնակին
մտա հարևան ունենալ: Տիկինը Կաննում ապրող իր բարեկամ-
ների միջոցով տեղեկութիւններ հավաքեց: Պարզվեց, որ սըր
Ֆրեդերիկը վերջերս էր բարոնես դարձել՝ իր թևու մեռնելուց
հետո, և Ռիվիերա էր եկել երկու-երեք տարով, քանի ղեռ ժա-
ռանգութեան եկամտահարկն էր վճարում: Ասում էին, երիտա-
սարդ ժամանակ շատ թոկից փախածն է եղել: Հիմա, երբ Կանն
էր եկել, տարիքն առած, հիսունին մտա մարդ էր և կարգին
ընտանիք ունէր՝ մի շատ սիրունիկ փոքր-մոքր կին և երկու
մանկահասակ տղա: Ափսոս, որ լեյդի Հարդին ժամանակին դե-
բասանուհի էր եղել, քանզի Ռոբերտը մի քիչ պահպանողարար
էր տրամադրված դեպի դերասանուհիները, սակայն բոլորն ասում
էին, որ նա շատ լավ շարժումներ ունի և իրեն լեյդիի պէս է
պահում, այնպես որ մտրովդ էլ չի անցնի, թե նա բեմի վրա խա-
ղացել է: Փորեսթիերները նրան առաջին անգամ հանդիպեցին
մի թեյխամութեան ժամանակ, որին սըր Ֆրեդերիկը չէր եկել, և
Ռոբերտն ընդունեց, որ նա շատ կարգին անձնավորութիւնն է,
ուստի էլեանորը, ցանկանալով լավ հարևանութիւն սկսել,
տիկնոջն ամուսնու հետ հրավիրեց նախաճաշի: Օրվա մասին
պայմանավորվեցին: Փորեսթիերները շատ մարդ էին հրավիրել,
իսկ Հարդիները բավական ուշացան: Էլեանորին սըր Ֆրեդերիկը
միանգամից դուր եկավ: Նա սպասածից շատ ավելի երիտասարդ
էր երևում՝ կարճ կտրած մազերի մեջ ոչ մի սպիտակ թել չէր
նշմարվում: Իրոք, նրանում ինչ-որ տղայական բան կար՝ բա-
վական գրավիչ: Փորբամարմին էր, էլեանորից ցածրահասակ
և զինչ, բարչացակամ աչքեր ունէր ու պատրաստակամ ժպտա-
նք: Էլեանորը նկատեց, որ նրա վզին նույն բանակային փողկապից
է. ինչ մեկ-մեկ Ռոբերտն է կապում: Սըր Ֆրեդերիկն այնքան
լավ չէր հագնված, ինչքան Ռոբերտը, որը միշտ այնպիսի տեսք
ունէր, ասես հենց նոր է դուրս եկել ցուցափեղկից: Նա հին շո-
քերով էր, ասես ընդգծելու համար, որ մարդու հագինը մեծ

կարեւորութիւն չունի: Էլեանորը հեշտութեամբ հավատաց, որ
նա երիտասարդ ժամանակ մի քիչ կապը կտրած է եղել: Բայց
հակված չէր նրան մեղադրելու:

— Ծանոթացեք ամուսնուս հետ, — ասաց նա:

Եվ կանչեց ամուսնուն: Ռոբերտը պատշգամբում զրուցում էր
մի բանի օրիշ հյուրերի հետ և Հարդիների ներս գալը չէր նկա-
տել: Նա առաջ եկավ և իրեն հատուկ բարեհամբույր, սրտաբաց
ձևով, սիրալիրութեամբ, որ միշտ հմալում էր էլեանորին, սեղմեց
լիցքի Հարդիի ձեռքը: Հետո շրջվեց դեպի սըր Ֆրեդերիկը: Սըր
Ֆրեդերիկը մտահոգ հայացքով նայեց նրան:

— Մենք առաջ չե՞նք հանդիպել, — հարցրեց նա:

Ռոբերտը սառը նայեց նրան:

— Զեմ կարծում:

— Պատրաստ էի երգվել, որ ձեր դեմքն ինձ ծանոթ է:

Էլեանորը զգաց, թե ամուսինն ինչպես է սառն ու ամբար-
տավան տեսք ստանում և միանգամից հասկացավ, որ ինչ-որ
բան այնպես չէ, Ռոբերտը ծիծաղեց:

— Կուցե դա շատ անբաղաբաւութի թվա, բայց ես հովա-
տացած եմ, որ կյանքում ձեզ չեմ տեսել: Կարող է պատահել,
որ հանդիպել ենք պատերազմի ժամանակ: Էնքան մարդու ենք
էլետեղ պատահել, չէ՞: Կոկաեյլ կուզե՞ք, լեյդի Հարդի:

Նախաճաշի ժամանակ էլեանորը նկատեց, որ Հարդին շա-
րունակում է Ռոբերտին նայել: Ակնհայտորեն ուզում էր տեղը
բերել: Ռոբերտը վրադված էր իր երկու կողմում նստած կանան-
ցով և չէր նկատում հայացքները: Նա ջանքեր էր թափում, որ
գրազնցնի իր հարևանուհիներին, և նրա բարձր, զրնգուն ծի-
ծաղն արձագանք էր տալիս սենյակում: Հոյակապ տանտեր էր
էլեանորը միշտ հիանում էր բարձրաշխարհիկ մարդու պարտ-
քի նրա զգացումով, որքան էլ կողքին նստած կանայք անհե-
տաքքիք լինեին, նա ամեն հնարավոր բան անում էր, որ իրենց
լավ զգան: Սակայն երբ հյուրերը գնացին, Ռոբերտի զվարթու-
թյունը թիկնոցի պես ընկավ վրայից: Էլեանորին թվաց, թե
ամուսինը սրտնեղած է:

— Իշխանուհին շա՞տ ձանձրալի էր, — մեղմորեն հարցրեց
նա:

— Եթե հաշվի չառնենք, որ պառավ ու թունտ կտավի մեկն
է, լավն էր:

— Հետաքրքիր է, չէ՞, որ սրը Ֆրեդերիքը կարծեց, թե գիտի քեզ:

— Կյանքումս տեսած չկամ նրան: Բայց ամեն ինչ գիտեմ նրա մասին: Քո տեղը լինեի, հետը հնարավորին շափ քիչ գործ կունենայի, էլ չհանճո՞ր: Չեմ կարծում, թե մեր մակարդակի մարդ է:

— Բայց նրա բարոնեստի կոչումն ամենահաներից մեկն է Անգլիայում: Մենք նույն էնք «Հու իգ հու»-ում:

— Նա անպետք սրիկայի մեկն է: Մտքովս չէր անցնի, որ կապիտան Հարդին,— Ռորերտն ինքն իրեն ուղղեց,— որ Ֆրեդ Հարդին, որին հին ժամանակներից ի վեր ճանաչում եմ, դարձել է սրը Ֆրեդերիք: Թե չէ ոչ մի դեպքում թույլ չէի տա նրան իմ սուս հրավիրես:

— Ինչու՞, Ռորերտ: Կետք է ասեմ, որ նա ինձ շատ հմայիչ թվաց:— Առաջին անգամ էր, որ էլիանորը չուր ամուսնուն բավական անարդարացի համարեց:

— Շատ-շատ կանանց է նա այդպիսին թվացել, և դա այդ կանանց բավական փող է արժեցել:

— Գիտես, որ մարդիկ սիրում են խոսել: Ամեն լսածին պետք չէ հավատալ:

Ռորերտը կնոջ մի ձևորը վերցրեց իր ափերի մեջ և լուրջ ու մտահոգ նայեց նրան:

— Էլիանոր, դու գիտես, ես այն տեսակ մարդ չեմ, որ մի սերիշի և տեղից խոսեմ, և ես կգերադասեի քեզ չզատումել, թե ինչ շիտեմ Հարդիի մասին: Կարող եմ միայն խնդրել, որ հավատաս խոսքիս՝ նա քո ծանոթը լինելու հարմար մարդ չէ:

Այս կոչի հանդեպ էլիանորը շէր կարող խուլ մնալ: Նրա սրտը թրթռաց, երբ խմայեց, որ Ռորերտն այդքան վստահում է իրեն. ուրե՞ն նա գիտեր, որ կրիտիկական պահին բավական է դիմի իրեն՝ էլիանորին, և հուսախաբ չի լինի:

— Ոչ ոք ինձից լավ չգիտի, Ռորերտ,— լրջմտորեն ասաց նա,— քո բացարձակ ազնվություն մասին: Գիտեմ, եթե կարողանայիր, կպատմեիր, բայց հիմա արդեն եթե ցանկանաս է, չեմ թողնի. կարող է թվալ, թե ավելի քիչ եմ վստահում քեզ, քան դու ինձ: Ես կամենում եմ կատարել քո ցանկությունը: Ես ստանում եմ, որ Հարդիների շուքն անգամ չի երես մեր գրուների մոտ:

Սակայն էլիանորը համախ ընթրում էր առանց Ռորերտի,

երբ վերջինս գու՞թ էր խաղում, և այդ պատճառով շատ էր հանգիստ Հարդիների: Նա վերին աստիճանի սառն էր սրը Ֆրեդերիքի հետ, բանի որ, եթե Ռորերտը հակակրում էր այդ մարդուն, ինքը պարտավոր էր նմանվել իր ամուսնուն, բայց սա կամ չէր նկատում, կամ իսկի հոգն էլ չէր: Շարունակում էր առաջվա պես սքրապիր լինել էլիանորի հետ, և վերջինս էլ իր հերթին գործիկան մարդ էր համարում նրան: Գծվար էր շարել այդպիսի մեկին, որը հեշտ ու հանգիստ համարելով, թե ոչ մի կին լավը չէ ավելի, քան պետք է լինի, մնում էր այդուհանդերձ շատ անուշ մի անձնավորություն, հիանալի շարժունների տեր մարդ: Հնարավոր է, որ այդ մարդը հարմար չէր իր ծանոթը լինելու, բայց էլիանորն իրենից անկախ շատ էր հավանում նրա շագանակազույն աչքերի հայացքը: Մի տեսակ ծաղրական հայացք էր դա, որը ստիպում էր աշայուրջ լինել, բայց և միտժամանակ այնքան փաղաքուշ, որ անհնար էր շար դիտավորություն տեսնել դրա խորքում: Սակայն ինչքան շատ էր էլիանորը լուր մայր մարդու մասին, այնքան ավելի էր հասկանում, թե որքան հիշտ էր Ռորերտը: Դա մի անսկզբունք ստահակ էր: Մարդիկ տախա էին այն կանանց անունները, ովքեր հանուն նրա զոհարեցել էին ամեն ինչ, և որոնց սրը Ֆրեդերիքն առանց ձևականությունների մի կողմ էր նետել, հենց որ հոգնել էր նրանցից: Այժմ թվում էր, թե նա վերջապես խելքի է եկել և նվիրված է կնոջն ու երեխաներին, բայց մի՞թե կարծիր կովը կաշին կփոխի: Ըստ ամենայնի, լեյզի Հարդին շատ ու շատ այնպիսի բաների հետ էր ստիպված հաշտվել, որ ոչ ոքի մտքով չէր անցնում:

Ֆրեդ Հարդին անտակի մեկն էր: Միտունիկ կանայք, շեմեն դե ֆերը՝ և օսխալս ձիու վրա խաղաղումար դնելու ցավալի հակումը սնանկացրին նրան ու դատարանի գուռը հասցրին, և նա ստիպված եղավ պաշտոնաթող լինել: Այդ օրերին նա չէր քաշվում իր հմայքի ազդեցության տակ քնկնող, սուսքին երիտասարդությունն անցած կանանց թույլ տալ, որ իր կարիքները հոգան: Սակայն վրա հասավ պատերազմը, նա միացավ իր դուրմասին և շքանշան վաստակեց: Հետո ուղեորվեց Փենիա, որտեղ հաջողեցրեց պատասխանակից դառնալ մի տխրահույզ ամուսնալուծութան: Փենիայից հեռացավ մի ինչ-որ շեկի հետ կապված պատմության պատճառով: Ազնվության մասին նրա պատկերացումները բավական անհաստատ էին: Ֆրեդ Հարդիից

մեքենա կամ ձի գնելն ապահով բան չէր, և լավ կանեիք խուսափեիք շամպայնի ա՛յն տեսակներից, որ նա ձեզ չեքմորեն խորհուրդ էր տալիս ձեռք բերել: Երբ իրեն հատուկ համայնոգ համոզություններով ձեզ մի սպեկուլյացիա էր առաջարկում, որի շնորհիվ երկուսդ էլ կարողություն տեր պիտի դառնայիք, կարող էիք վստահ լինել, որ ինքը ինչ ոգուտ էլ ստանար, դուք հաստատ ուրիշ չէիք մտառակի: Այսօր նա մեքենա էր վաճառում, վաղը միջնորդ էր դրամական կամ այլ գործերում, երրորդ օրը՝ գերաստն: Եթե աշխարհում գոնե մի քիչ արդարություն կա, նա պիտի բռնառնում լիներ, կամ պատի տակ սատկեր: Բայց բարտի հրեշավոր մի քամահաճույթով վերջապես բարոնետություն ժառանգեց՝ համապատասխան եկամտի հետ միասին, ամուսնացավ, ինքը լինելով քառասունն անց, մի գեղեցիկ, խելացի կնոջ հետ, որը ճիշտ ժամանակին երկու ասուղ ու սիրունասես երեխաներ ունեցավ, և հիմա ապագան խոստանում էր բարեկեցություն, դիրք ու հարգանք: Ձրեղ Հարդին երբեք կյանքին ավելի լուրջ չէր վերաբերվել, քան վերաբերվում էր կանանց, և կյանքն այնքան բարի էր նրա հանդեպ, որքան կանայք էին եղել:

Եթե մտածում էր անցյալի մասին, ապա գոհունակությամբ լավ ժամանակ էր անցկացրել և վայրէջքներն ու վերելքներն իր շրտով էին եղել. իսկ հիմա, լավ առողջությամբ ու մաքուր խղճով, Ձրեղ Հարդին պատրաստ էր գյուղական կալվածատիրոջ վերածվելու, գրո՛ղը տանի, մեծացնելու երեխաներին ինչպես հարին է, իսկ երբ իրենց շրջանի ծեղ ախմախը ոտքերը տնկեր, սուրբ Գևորգը վկա, հենց ինքը կգնար պատվամենտ:

— Ես նրանց մի երկու բան կասեի, որ իրենք չեն իմանում: Հնարավոր է, որ նա չէր սխալվում, սակայն հաճախ մտքովն անցնում էր, թե դրանք այն բաները չէին, որ նրանք շատ կուզեին իմանալ:

Մի օր, մայրամուտից քիչ առաջ, Ձրեղ Հարդին գնաց Քրուագեթի բարերից մեկը: Նա մարդամոտ էակ էր և չէր սիրում մեծակ խմել, ուստի շուրջը նաչեց, որ տեսնի, թե մի ծանոթ վկա՞ արդյոք: Եվ նկատեց Ռոբերտին, որը գուլֆ էր խաղացել ու այժմ էլ նանորին էր սպասում այգտեղ:

— Հեյո՛, Բոր, մի բաժակ բան շխմե՞՞ք:
Ռոբերտը ցնցվեց: Ռիվիերայում ոչ ոք Բոր չէր անվանում

նրան: Երբ տեսավ, թե խոսողն ով է, վճռականորեն պատասխանեց:

— Ծնորհակալություն, ես արդեն խմել եմ:
— Մի հատ էլ խմիր: Իմ ախիլներ չի խրախուսում ճաշից հետո խմելը, բայց երբ հաջողեցնում եմ ձեռքից պրծնել, այս ժամերին ինձ պետք էմ այստեղ ու մի բաժակ խմում: Զգիտեմ, թե դու ինչ ես մտածում այդ մասին, բայց ինձ թվում է, որ աստված ժամը վեցը խմելու համար է ստեղծել:

Ձրեղը փովեց Ռոբերտի կողքի մեծ կաշվե բազկաթոռի մեջ և կանչեց մատուցողին: Միաժամանակ Ռոբերտին պարզեց իր բարեհոգի, դրավիչ ժպիտը:

— Ինչքա՛ն ջուր է հոսել մեր առաջին հանդիպումից հետո, հը՞, ծերուկ:

Ռոբերտը, թեթևակի կնճռտովելով, խեթեց նրան մի հայացքով, որ կողմնակի դիտողը կնկարագրեր որպես տազնապալիզզուշավուր:

— Ծիշտն տսած, չգիտեմ, թե դուր ինչ նկատի ունեք: Եթե հիշողությունս չի դավաճանում, առաջին անգամ ձեզ հետ հանդիպել ենք երեք թե չորս շաբաթ առաջ, կբք դուք և ձեր կինը շնորհ արեցիք գալ և ընթրել մեզ հետ:

— Վերջ տուր, Բոր: Ես գիտեի, որ քեզ առաջ էլ եմ տեսել: Սկզբից շվարել էի, իսկ հետո միանգամից զխտմօ փայլատակեց: Գու Ռուսթըն սթրիթի գարածում, որտեղ իմ մեքենան էի պահում, ավտո լվացող էիր:

Կապիտան Չորեսթիերն ի սրտե ծիծաղեց:
— Ցավում եմ, բայց դուք սխալվում եք: Երբեք ավելի ծիծաղելի բան չեմ լսել:

— Ես շտեսնված հիշողություն ունեմ և դեմքերը կրբեր չեմ մոռանում: Գրազ կգամ, որ դու էլ ինձ չես մոռացել: Շատ անգամներ եմ քեզ կհակրոն տվել, որ մեքենան տանս մոտից տանես, երբ չեմ ուզեցել ինձ նեղություն տալ ու գարած հասնել:

— Ձեր ասածը բացարձակ անմտություն է: Կյանքումս ձեզ չէի տեսել, մինչև չեկաք մեր տուն:
Հարդին ուրախ ժպտաց:

— Գու գիտես, որ նա միշտ լուսանկարելու գիժ եմ եղել: Ալբոմներ ունեմ՝ այստեղ-այնտեղ արած նկարներով: Կգարմանայի՞ր, եթե իմանալիք, որ մի նկար եմ գտել, որտեղ դու կանգնած ես իմ հենց նոր գնած երկտեղանոցի կողքին: Գրողը տանի,

սիրուն տղա էիր այն ժամանակ, չնայած հաղիդ արտահագուստ էր և երեսդ էլ արնքան մաքուր չէր: Իհարկե, ավելի հազթանդամ ես դարձել, մազերդ սպիտակել են և բեղեր ես թողել, բայց էլի նույն տղան ես: Հարչուրից հարչուր:

Կապիտան Ֆորեսթիերը ստոր նայեց նրան:

— Դուք հավանաբար խարվել եք արտաքին նմանությունից: Ինչ-որ մի ուրիշին եք ձեր կեանքոնները տվել:

— Կա՛մ, իսկ որտե՞ղ էիր, եթե 1913-ից 1914 թիվը Բրուսիլի գարածում ավտո լվացող չէիր:

— Հնդկաստանում:

— Գնդիդ հե՞տ, — կրկին ժպտալով հարցրեց Ֆրեդ Հարպին:

— Ես որս էի անում:

— Սուտասան:

Ռորերտը թունդ շտաղունեց:

— Սա տուրուզմոցի համար այնքան էլ հարմար տեղ չէ, բայց եթե դուք կարծում եք, թե ես պիտի այստեղ մնամ, որպեսզի ձեզ նման հարբած խողն ինձ վիրավորի՝ սխալվում եք:

— Ձեխ՞ր ուղի լսել, թե ուրիշ ինչ գիտեմ քո մասին: Գիտես, թե ինչպես է մարդ սկսում մտաբերել, իսկ ես շատ բան եմ հիշել:

— Ես մաղաչափ անգամ չեմ հետաքրքրվում: Կրկնում եմ, որ խորապես սխալվում եք: Ինձ շփոթում եք ինչ-որ մեկի հետ: Բայց նա թողնել գնալու փորձ չարեց:

— Նույնիսկ այն ժամանակ մի քիչ լողը էիր: Հիշում եմ, մի անգամ, երբ առավոտ շուտ պիտի պուդ զնայի, քեզ ասել էի, որ միևնույն ժամը ինը մեքենան լվանաս, իսկ դու չէիր լվացել, ես էլ սկանգալ սարքեցի, և ձերուկ Քոմփսընն ինձ ասաց, որ քո հայրն իր ընկերն է եղել, ու ինքը լավություն անելու համար է քեզ վերցրել, որովհետև խեղճուկրակ վիճակում էիր: Հաջող դինի մատուցող էր եղել ակումբներից մեկում՝ Ուայթսում թե՛ Բրուքսում, արդեն մտահան եմ արել, իսկ դու սպասավոր՝ հենց նույն տեղում: Հետո բնդունվել էիր բանակ, և, եթե չեմ սխալվում, մեկը քեզ փրկագնել էր ու իր սպասուկը դարձրել:

— Դա շափից ավելի ֆանտաստիկ է, — բամահարվից ասաց Ռորերտը:

— Եվ ես հիշում եմ, երբ պատրաստվում էի տուն գնալ և գարած եկա, ձերուկ Քոմփսընը պատմեց, որ ցուցակագրվել

և ինտենդանտական ծառայության: Մտքիդ չկար կյանքդ առանձնապես վտանգի ենթարկել, չէ՞: Մի քիչ համը հանել ես, ինչ խրամատներում ցուցաբերած քո խիզախության մասին արտոմոթյուններով: Կարծում եմ, սպայի կոչում իսկապես ստացել ես, թե՛ դա էլ է կեղծիք:

— Ես, իհարկե, կոչում ստացել եմ:

— Դե՛հ, էլ ով ասես որ այդ օրերին շատցավ, բայց դիտե՛, ձերուկ, եթե դա ինտենդանտության համար է եղել, քո տեղը լինեի, այս զինվորական փողկապը չէի կապի:

Կապիտան Ֆորեսթիերը բնազդաբար ձեռքը տարավ զևափ փողկապը: Ֆրեդ Հարպին, որը ծաղրական արտահայտությամբ ստեղծում էր նրան, կարող էր պնդել, որ չնայած իր թուխ մաշկին, Ռորերտը սպիտակեց:

— Ձեր գործը չէ, թե ես ինչ փողկապ եմ կապում:

— Համը մի հանի, ձերուկ: Ի՛նչ ես կողի ընկել: Ես ամեն ինչ ջոկել եմ, բայց քեզ ծախելու միտք չունեմ, էլ ինչո՞ւ չես ուզում բացվել:

— Ես բացվելու ոչինչ չունեմ: Ասում եմ ձեզ, որ դա մի անհեթեթ սխալ է: Եվ պետք է պուշուցնեմ, որ եթե իմանամ, թե տարածում եք այս ստահոգ պատմություններն իմ մասին, անհապաղ գատի կտամ ձեզ որպես զրպարաշի:

— Վերջ տուր, Բո՛ր: Ոչ մի պատմություն էլ չեմ ուզում տարածել: Կարծում ես շատ պե՛տքս է: Այս ամենն ինձ շատ ուրախ բան է թվում: Ես քո հանդեպ ոչ մի վատ զգացում չունեմ: Ինքն էլ մի քիչ արկածախնդիր եմ եղել և հիանում եմ քո արած վիթխարի բլեֆով: Միակն որպես սպասավոր, հետո զինվոր, սպասուկ ու մեքենա լվացող և հիմա լինել մի հայակապ ընկալմեն, ունենալ հսկայական տուն, ժամանակ անցկացնել Ռիվերսայի բոլոր շքեքի հետ, գու՛թի մրցումների հազթող և չախտամենների ակումբի փոխնախագահ դառնալ ու էլ չգիտեմ թե ինչ: Կաննում քեզ սնց սր պետք է գրել ես, խոսք չկա: Հույս կապ է: Ես էլ իմ ժամանակին եմ մի երկու հետաքրքիր բան սրել, բայց քո անպատկառությունը, ձերո՛ւկ, զլխարկո հանում եմ քո առաջ:

— Կուրեի արժանի լինել ձեր հաճույխասություններին: Մտկայն դա այդպես չէ: Իմ հայրը մտառել է հնդկական հեծե՛լադրում, և ես դանձ ջենտլմեն ծնվել եմ: Գուցե շատ աչքի

ընկնող կենսագրութիւն շեմ ունեցել, բայց, անկասկած, ամառ չելու բան էլ չունենա:

— Է՞, վերջացրու, Բո՛ր: Ես, դու գիտես, նույնիսկ իմ պառավի մտտ էլ չեմ բացվի: Ես կրքեք կանանց չեմ ասում այն, ինչ նրանք արդեն չդիտեն: Հավատա, ես ավելի տհաճ հաշիվներս մեջ կընկնի, քան ընկել եմ, եթե դա կանոն դարձրած շինեհի ինձ համար: Ես կարծում էի, որ կուզես կողք մեկը լինի, որի հետ քեզ ազատ զգաս: Դժվար չի՞ անընդհատ լարված լինելը, մեկ-մեկ շունչ շառնելը: Ախմախութիւնն ես անում, որ քեզ այդքան հետու ես պահում ինձնից: Ես, ծերուկ, քեզնից ոչնչով ավելի լավը չեմ: Ճիշտ է, հիմա բարոնետ եմ ու հողատեր, բայց ժամանակին շատ ոխակոտ վիճակներս մեջ եմ եղել, և զարմանում եմ, թե ինչպէս մինչև հիմա բանտ չեմ ընկել:—

— Ուրիշներն էլ են զարմանում:

Ֆրեդ Հարդին հահոաց:

— Քո ասածն է, ինձ խեղճացրիր, ծերո՛ւկ: Բայց միևնույն է, մի նեղացիր, սակայն պիտի ասեմ, որ մի թիչ չափն անցել ես՝ կնոջդ ասելով, թե իր հետ շփվելու արժանի մարդ չեմ:

— Ես այդպիսի բան երբեք չեմ ասել:

— Ասել ես, ասել: Քո պատուր շատ հրաշալի կին է, բայց մի թիչ բերանբաց, թե՞ ես սխալ եմ:

— Ես չեմ պատրաստվում իմ կնոջ մասին քննարկութիւն բացել ձեզ նման մարդու հետ.— ասաց կապիտան Ֆորեսթիերը սառնորեն:

— Ա՛հ, Բոր, գրողը տանի, ինձ հետ քեզ այդքան ջննտլմենավարի մի պահիր: Մենք ընդամենը երկու անբաններ ենք ու վերջ: Մենք միասին կարող էինք շատ լավ ժամանակ անցկացնել, եթե գոն մի թիչ խելք ունենայիր: Դու ստախոս ես, խաղողախ ու խաբերա, բայց կարծես թե շատ կարգին ես վարվում կնոջդ հետ, և դա քո օգտին է խուսում: Նա քեզ համար զովում է, չէ՞: Միծաղելի են այդ կանայք: Նա շատ լավ կին է, Բո՛ր:

Ռոբերտի դիմրը կարմրեց, նա սեղմեց բռունցքը և կիսով չափ բարձրացավ ամբողջ վերայից:

— Անխձյալ լինեք, հերիք է խոսեք իմ կնոջ մասին: Եթե մի անգամ էլ տոք նրա անունը, երգվում եմ, որ ձեր մոտովը կչարդեմ:

— Է՛, չէ, չես ջարդի: Դու չափից ավելի ջննտլմեն ես, որ պեսպի քեզնից նվազ մարդուն խփես:

Հարդին այս բռնեքը ծողրանքով ասաց, միածամանակ հետեկով Ռոբերտին՝ պատրաստ ամեն վայրկյան խույս տալու նրա հսկա բռունցքից, և նա շշմեց իր ասածի արդյունքից: Ռոբերտը նորից ընկղմվեց իր ամբողջ մեջ և բաց արեց բռունցքը:

— Դուք իրավացի եք: Բայց միայն ստոր շունը կօղավեոյրանից:

Բացականութիւնն այնքան թատերական էր, որ Ֆրեդ Հարդին սկսեց քրքշալ, սակայն հետո տեսավ, որ այդ մարդը չի կատակում: Նա մահու չափ լուրջ էր: Ֆրեդ Հարդին հիմար չէր՝ դժվար թե նա դատարկ գլուխ ունենար և այնուհանդերձ քսանհինգ տարի իր խելքով կարգին կյանք վարեո: Եվ հիմա, տարակուսանքով հայացքը հառած այդ հաղթանգամ, հուժկու մարդուն՝ այդքան նման իսկական արիստոկրատի ու սպորտսմենի, սուզված բաղկամբողի մեջ, նա հանկարծ քստ արժանութիւն փնտհատեց իր դիմացիներն: Դա մի շարքային խաբերա չէր, որը հիմար կին է ճանկել, որ հշտուհանգիտու տարի նրա հաշիվին կիսն ընդամենը միջոց էր՝ ավելի մեծ, վերջնական նպատակի հասնելու: Այդ մարդն ամբողջովին կլանված է եղել մի բարձրագույն նպատակով և ոչնչի առաջ կանգ չի առել: Կրան հասնելու համար: Հնարավոր է, այդ միտքն առաջին անգամ ծնվել էր նրա մեջ, երբ սպասավոր էր արիստոկրատական ակումբում, դրա անդամներն իրենց պարապ անկաշխանդութիւնամբ, անխոյժ շարժումներով հավանաբար հիացմունք էին պատճառում նրան: Հետագայում, զինվորութիւն, սպասակութիւն անելիս և ավտոմեքենա լվանալիս, շատ այդպիսի մարդկանց էր պատահել, որոնք պատկանում էին մի այլ աշխարհի և Ռոբերտի աչքին ինչ-որ խորհրդավոր մշուշով պարուրված հերոսներ էին և հավանորեն հիացմունքով ու նախանձով էին լցրել նրա հոգին: Ինքն էլ էր ուզում նմանվել այդ մարդկանց: Ուզում էր նրանցից մեկը լինել: Դա էր այն իրգալը, որ պատկերվում էր նրա երազներում: Նա ուզում էր,— դա ծիծաղելի էր և միևնույն ժամանակ վսեմ,— լինել ջննտլմեն: Պատերազմը, սպայի կոչում շնորհելով, հնարավորութիւն քնձևոց նրան: Էլիանորի դրամն սպահովեց միջոցները: Այդ թշվառ արարածը քսան տարի շարունակ ձեացրել էր, թե ինչ-որ բան է ներկայացնում իրենից, ընդամին այդ ինչ-որ բանի միակ արժեքն այն էր, որ դա խաբերայութիւն չիներ: Դա նույնպէս ծիծաղելի էր և նույնպէս

վսեմ: Ֆրեզ Հարդին, անկախ իր կամքից, բարձրաձայն արտաբերեց գլխով անցած միտքը:

— Խեղճ ձերուկ, — ասաց նա:

Ֆորեսթիերն ակնթարթաբար նրան նայեց: Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչ էին նշանակում այդ բառերը և ոչ էլ տոնը, որով դրանք ասվեցին: Ռորերտը շտապունեց:

— Ի՞նչ էք ուզում դրանով ասել:

— Ոչ մի բան, ոչ մի բան:

— Չեմ կարծում, թե հարկ կա այս խոսակցությունը շարունակելու: Երևի ձեզ իմ ասածները չհամոզեն, որ սխալվում եք: Կարող եմ միայն կրկնել, որ ձեր բառերի մեջ ոչ մի կաթիլ ճշմարտություն չկա: Ես այն մարդը չեմ, որի տեղն ինձ դնում եք:

— Դե լավ, ծերուկ, ինչպես կուզես:

Ֆորեսթիերը կանչեց մատուցողին:

— Ուզո՞ւմ եք ձեր փոխարեն վճարեմ, — ստոցային ձայնով հորցրեց նա:

— Այո, ծերուկ:

Ֆորեսթիերը մի տեսակ վեհաշուք կերպով թղթադրամը մեկնեց մատուցողին և վերջինիս ասաց, որ մանրն իրեն պահի, ապա, տոանց մի խոսքի, տոանց անդամ Ֆրեզ Հարդիի կողմը նայելու, դուրս ճեմեց բարից:

Նրանք այլևս չհանդիպեցին մինչև այն գիշերը, երբ Ռորերտ Ֆորեսթիերը կորցրեց յուր կյանքը:

Չմեռն անցավ, եկավ գարունը, և Ռիվիերայի այգիները պատվեցին շլացնող գույներով: Բլրալանջերը, ծածկված վայրի ծաղիկներով, խստաշունչ, զվարթ գեղեցկություն էին ճառագում: Քաղաքների փողոցները տաք էին, պայծառ, կրքոտ ջերմությամբ, որից արյունն ավելի արագ էր սկսում վազել: Կանայք բայլում էին պիծամաներով, գլխներին ծղտտ գլխարկներ: Լողափերը մարդաշատ էին: Տղամարդիկ լողավարտիքներով և կանայք համարյա մերկ՝ արնկող էին անում: Երեկոները Քրուսդեթի բարերում խռովում էր գարնանային ծաղիկների նման բազմազույն ամբողջ՝ անդադրում ու շատախոս: Մի քանի շաբաթ շարունակ անձրև չէր եկել: Շրջակայքում մի քանի անտառային հրդեհներ էին եղել, և Ռորերտ Ֆորեսթիերն իր սովորական սրտաբաց, կատակ անողի արտահայտությամբ մի քանի անգամ կրկնել էր, որ չգիտե, թե ինչ է անելու, եթե իրենց

անտառները կրակ ընկնի: Ոմանք նրան խորհուրդ էին տալիս տան ետևի ծառերը կտրել, բայց Ռորերտը մտածել անգամ չէր ուզում դրա մասին: Ճիշտ է, դրանք անմխիթար վիճակում էին եղել, երբ Ֆորեսթիերները գեռ նոր էին գնել հողամասը, բայց այժմ, տարեցտարի, հին, մեռնող անտառը վերացվում էր, ծառերը շունչ էին քաշում ու ազատվում մուխխոտերից, և անտառը հրաշալի մի բան էր դարձել:

— Ախր դա նույնը կլինի, ինչ սեփական ոտքս կտրելը: Դրանց մեծ մասը հարյուր տարեկանից ծեր է:

Հուլիսի տասնչորսին Ֆորեսթիերներն ուղևորվեցին Մոնտե Կարլո, ինչ-որ հանդիսավոր ճաշկերույթի, իսկ անային աշխատողներին թույլ ավեցին զնալ Կոնն: Բաստիի գրավման օրն էր. ժողովուրդը պարում էր դրսում՝ սոսիների տակ, հրավասություններ էին տեղի ունենում, և հեռվից ու մոտիկից մարդիկ դալիս էին ուրախանալու: Հարդիները նույնպես թողել էին ծառաներին, բայց իրենք տանն էին մնացել, և նրանց երկու փոքրիկ որդիներն արդեն պտուկել էին քնելու: Ֆրեզը փասխան էր բացում, իսկ լեզի Հարդին մի փոքրիկ գորգ էր գործում: որով պիտի աթոռը ծածկել: Հանկարծ դուռը գանգեցին և միաժամանակ ուժեղ թակեցին:

— Ո՞վ է, գրեզը տանի:

Հարդին դուռը բացեց և տեսավ մի տղայի, որն ասաց, թե Ֆորեսթիերների անտառում հրդեհ է սկսվել: Գյուղից գնացած մի քանի հոգի փախել էին կրակը հանդեպ, բայց ինչքան շատ օգնող լինի, այնքան լավ: Արդյոք միտտը Հարդին չի՞ գա:

— Իհարկե, կգամ:

Նա շտապեց կնոջ մոտ և ասաց.

— Արթնացրու երեխաներին, թող գան լավ բան տեսնեն: Աստված վկա, այս երաշտից հետո պետք է որ կարդին բոց լինի:

Ու անմխիթապես դուրս վազեց սենյակից: Տղան պատմեց, որ գանդել են ոստիկանություն, և նրանք պիտի զինվորներ ուղարկեն: Ինչ-որ մեկը փորձում էր հեռախոսով կապվել Մոնտե Կարլոյի հետ և կապիտան Ֆորեսթիերին իմաց տալ:

— Մինչև հասնի այստեղ, մի ժամ կբաշի, — ասաց Հարդին:

Ճանապարհին, վաղելիս, նրանք երկնքում բոսորագույն փայլ սևասն, իսկ երբ հասան բլրի գագաթին, երևացին թռչող բոցի

լեզվակները: Ձուր չկար և միակ հնարավոր բանը հարվածներով հանգցնելն էր: Արդեն շատ տղամարդիկ փորձում էին այդ անել: Հարդին միացավ նրանց: Բայց հազիվ էին մի տեղ բոցերը պահասում, երբ մյուս թավուտն էր բռնկվում ու սկսում ճթճթալ և, մինչև աչքը թարթելի, վերածվում էր հսկայական կրակն զահի: Տապն անտանելի էր, և աշխատողներն, այլևս անկարող դիմանալու, դանդաղ ետ էին մղվում: Զեփյուռ էր փչում՝ կայծերը ծառից թուփ փոխանցելով: Շարաքներ տեղը երաշտից հետո ամեն ինչ տերևի պես շոր էր, և բավական էր, որ մի կայծ կպչեր, ու ծառը, թուփը կուլ էին գնում կրակին: Հարդանքախառն սարսափ էր առաջացնում դիտելը, թե ինչպես է հսկա, վեց ոտնաչափ բարձրություն եղևին այրվում լուցկու հատիկի պես: Կրակը ոռնում էր, ասես գործարանի վառարանում: Այն դադարեցնելու լավագույն եղանակը ծառերն ու թփերը կտրատելն էր, սակայն տղամարդիկ սակավաթիվ էին, և միայն մի քանիսը կացին ունեին: Միակ հույսը զինվորներն էին, որոնք սովոր էին գործ ունենալ անտառային հրդեհների հետ, բայց զինվորները չէին երևում:

— Եթե շուտ տեղ չհասնեն, տունը շենք կարողանա փրկել, — ասաց Հարդին:

Նա նկատեց իր կնոջը, որ եկել էր որդիների հետ, և ձեռքով արհեստ: Մտից սեպեղ էր, և քրտինք էր հոսում դեմքից: Լեյզի Հարդին վազելով մոտ եկավ:

— Ա՛հ, Ֆրեդ, շներն ու ճաերը:

— Սուրբ Գևորգ, այս:

Ենանոցն ու հավանոցը տան ետևում էին, որտեղ ծառերից մարրված էր: Խեղճ կենդանիներն արգեն սարսափից իրենց կորցրել էին: Հարդին դուռը բացեց, և նրանք սլուցան դեպ փրկելու: Այժմ միակ հնարավոր բանը թողնելն էր, որ վազեն ուր սլատահի: Հետո կարելի կլիներ հավաքել: Այժմ բոցը հեռվից երևում էր: Բայց զինվորները չկային, և քլաթիվ օգնողներն անուժ էին գրոհող կրակի դեմ:

— Եթե այդ անիծյալ զինվորները հիմա տեղ չհասնեն, տան երգը երգված է, — ասաց Հարդին: — Իմ կարծիքով, լավ կլինի ինչ-որ հնարավոր է դուրս հանենք:

Տունը քարից էր, սակայն շուրջ բոլորը փայտե պատշգամբներ էին: Դրանք ավելի լավ կվառվեին, բան նազի մեջ թախած թուղթը: Յորեսթիներն ծառաներն արդեն հասցրել

էին գույ: Հարդին հավաքեց նրանց: Նրա կինը և որդիները նույնպես օգնում էին: Սկսեցին նախասենյակ հանել ինչ որ հնարավոր էր՝ կտորեղենն ու արծաթը, զարդաքանդակները, նկարները և կոճույքի մի մասը: Վերջապես երկու բռնատարով ժամանեցին զինվորները և միանգամից մեթոզաբար սկսեցին փոսեր փորել ու ծառերը տապալել: Նրանց մի սպա էր ղեկավարում, և Հարդին, նշելով տանը սպառնացող վտանգը, խնդրեց առաջին հերթին կտրել շրջակայքի ծառերը:

— Տունը պետք է ինքը հոգ տանի իր մասին, — ասաց սպան: — Ես պիտի միջոցներ ձեռք առնեմ, որ կրակը բլրից այն կողմ շտարածվի:

Ուրբապուույս ճանապարհի խորքից մեքենայի լույսեր երեվացին, և մի բանի բոսի անց Յորեսթիներն ու կինը դուրս թռան այդ մեքենայի միջից:

— Որտե՞ղ են շները, — գոռաց Ռոբերտը:

— Գուրս եմ թողել, — պատասխանեց Հարդին:

— Ա՛խ, այդ դուք եք:

Սկզբից, ի դեմս այդ աղտոտ, ամբողջովին մշոտ ու բրտնաբար արքարածի, նա չէր ճանաչել Ֆրեդ Հարդին: Ռոբերտը զայբացած խոժոռովեց:

— Ես մտածեցի, որ տունն էլ կարող է կպչել: Ինչ-որ հնարավոր էր՝ դուրս եմ հանել:

Յորեսթիները նայեց բոցախուլ անտառին:

— Հա՛, ծառերիս վերքը եկավ, — ասաց նա:

— Զինվորները բլրի լանջին են աշխատում: Փորձում են մյուս կալվածքը փրկել: Ավելի լավ կլինի, գնանք տեսնենք, ինչ կտրող ենք փրկել:

— Ես կգնամ: Պետք չէ, որ դուք գաք, — բարկացած բղավեց Յորեսթիները:

Հանկարծ էլիանորը մի տանջալից ճիշ արձակեց.

— Ա՛խ, նայեք: Տո՛ւնը:

Նրանց կանգնած տեղից երևում էր, թե ինչպես հանկարծ ետևի պատշգամբը բռնկվեց:

— Հանգի՛ստ, էլիանոր: Տունը չի կարող վառվել: Միայն փայտե մասերը: Առ իմ պիջակը, ես կվազեմ զինվորներին օգնելու:

Նա հանեց սմոկինգը և մեկնեց կնոջը:

— Ես ձեզ հետ կգամ, — ասաց Հարդին: — Միայն Յորես-

թիւր, լավ կանենք զնանք ձեր իրերի մոտ: Իմ կարծիքով ամեն
թանկարժեք բան հանել ենք:

— Փա՛ռք ասածո, սկիզբնիս մեծ մասը վրաս էր:

Լեյդի Հարդին խելամիտ կին էր:

— Միսիս Ֆորեսթիեր, եկեք հավաքենք ծառաներին և ինչ
հնարավոր է տանենք մեր տուն:

Երկու տղամարդիկ քայլեցին այնտեղ, որտեղ զինվորներն
էին աշխատում:

— Դուք շատ բարի եք եղել, դուրս հանելով տնիցս այդ
ամենը,— զուսպ ասաց Ռորերտը:

— Գատարկ բան է,— պատասխանեց Ֆրեդ Հարդին:

Շատ չհեռացած, կանչ լսեցին: Երջվեցին և խավարի մեջ մի
կերպ նշմարեցին մի վազող կնոջ:

— Monsieur, Monsieur.

Նրանք կանգ առան, և կինը, թեև լայն բաց արած, մոտ
վազեց: Դա էլեանորի աղախինն էր: Նա խռովահույզ վիճա-
կում էր:

— La petite Judy. Փոքրիկ Ջուդի՛ն: Երբ տնից գնում էինք,
ես փակեցի նրան: Հիմա շոգից խեղդվում է: Ես նրան դրել էի՝
ծառաների լողարանում:

— Աստված իմ,— բացականչեց Ֆորեսթիերը:

— Ի՞նչ է եղել:

— Էլեանորի շունը: Ինչ գնով էլ լինի, պիտի փրկեմ նրան:
Նա շրջվեց և ուզեց ետ վազել տուն: Հարդին կառչեց նրա
թևից:

— Հիմար բաներ մի արա, Բոր: Տունը վառվում է: Չես կա-
րող ներս գնալ:

Ֆորեսթիերը ջանք էր գործադրում, որ աղատվի:

— Փողնք գնամ, անիծյալ լինեք: Չլինի՞ կարծում եք կթող-
նեմ, որ շունը ողջ-ողջ խոզովվի:

— Ա՛հ, ձայնդ կտրի: Գերասանութուն ունելու ժամանակը
չէ:

Ֆորեսթիերը ձեռքը պոկեց, սակայն Հարդին թռավ նրա վրա
և ճանկեց գոտկատեղից: Ֆորեսթիերը պինդ սեղմած բռունցքով
ամբողջ ուժով հարվածեց Հարդիի դեմքին: Հարդին երեքաց,
Բուլացրեց ձեռքերը, և Ֆորեսթիերը նորից խփեց: Հարդին ըն-
կավ գետնին:

— Անզգամի մեկը: Ես ցույց կտամ, թե ինչպես է վարվում
չինտլմենը:

Ֆրեդ Հարդին դանդաղ բարձրացավ և շոշափեց իր դեմքը:
Ցավ զգաց:

— Աստված իմ, աչքս վաղը կկապտի:— Նա ցնցված էր ու
թեթևակի շշմած: Աղախինն անսպասելիորեն սկսեց հեկեկալ
հիստերիկ ձայնով:— Ձա՛յնդ, լրբի մեկը,— կատաղած գոռաց
նա:— Չհամարձակվես տիրուհուդ մի բան ասել:

Ֆորեսթիերն անհետացել էր: Մի ժամ անցավ, մինչև կարո-
ղացան նրան գտնել: Նա մեռած պատկած էր լողարանի մոտ,
հատակին՝ սատկած սիրիհեմը ձեռքերի մեջ: Հարդին երկար
նայեց նրան, հետո ասաց.

— Հիմարի մեկը:— Նա զայրացած նետեց ատամների արան-
քից:— Հիմարի գլուխ:

Վերջապես իր իսկ խաբուսթյունը արժանին էր հատուցել
նրան: Ինչպես մի մարդ, որն այնքան երկար է փայփայում յուր
մոլությունը, մինչև այն սկսում է խեղդել նրան և դարձնում մի
անօդնական ստրուկ, նա այնքան երկար էր ստել, որ ինքն էլ
սկսել էր իր ստին հավատալ: Բոր Ֆորեսթիերն այնքան երկար
էր ձևացրել, թե չենտլմեն է, որ վերջում, մոռացած այդ ամե-
նի կեղծ լինելը, պահանջ էր զգացել վարվելու այնպես, ինչպես
պիտի վարվեր շենտլմենը՝ ըստ նրա տխմար, սահմանափակ
խելթի: Այլևս շեռանելով տարբերությունը շինծուի և իսկականի
մինչև, նա զոհել էր չուր կյանքը հանուն կեղծ հերոսության:
Բայց Ֆրեդ Հարդին պետք է բոթը տաներ միսիս Ֆորեսթիերին:
Վերջինս բլրի լանջին էր, միսիս Հարդիի հետ և դեռ կարծում
էր, թե Ռորերտը զինվորների հետ ծառեխն է կտրում ու թփուտ-
ները մաքրում: Հարդին պատմեց, ինչքան հնարավոր է ավելի
մեղմ, բայց նա պիտի պատմեր, պիտի ամեն ինչ պատմեր:
Սկզբից միսիս Ֆորեսթիերն ասես չէր կարողանում քմրտնել նրա
ուսածը:

— Մեռա՛ծ,— զոռաց նա:— Մեռա՛ծ: Իմ Ռորե՛րտը:

Եվ այդ ժամանակ Ֆրեդ Հարդին՝ այդ անառակը, ցինիկը,
անազնիվ սրիկան, իր ափերի մեջ առավ միսիս Ֆորեսթիերի ձեռ-
քերը և արտասանեց այն միակ խոսքերը, որ օգնեցին նրան
վշտին դիմանալու:

— Միսիս Ֆորեսթիեր, նա մի շատ երբակիրթ շենտլմեն
էր:

20— Լուսին և վեցսկեսանոց

Էրեք հասարակ կանայք Անտիրում



Եկին անվանում էին միսիս Րիչմոն. նա այրի էր՝ Երկրորդին անվանում էին միսիս Մաթբլիֆ, նա ամերիկուհի էր և երկու ամուսին էր փոխել: Երրորդին անվանում էին միսս Հիբսըն, նա պառակտված օրհորդ էր: Բոլոր երեքն էլ բառասունն անց, կյանք տեսած և ապահովված կանայք էին: Միսիս Մաթբլիֆը տարօրինակ անուն ուներ՝ էրոու: Երբ նա ղեկ երիտասարդ էր ու բարակիրան՝ շատ էր սիրում իր անունը: Այն ստացում էր նրան, և դրա շուրջ արվող կատակները, թեև չափից դուրս հաճախ էին կրկնվում, շատ էին շոյում միսիս Մաթբլիֆին, — նա անգամ հակված էր հավատալու, որ այդ անունը համապատասխանում է իր բնավորությանը՝ խորհրդանշելով ուղղամտություն, արագութուն ու վճռականություն: Հիմա, երբ գիրությունը ազավազել էր նրա նորը զիմագծերը, էր թեևրն առուսերն այդքան հաստացել էին, իսկ կոնքերն այդքան պարարտացել, էրոուն ավելի քիչ էր սիրում իր անունը: Գնալով գովառ էր դառնում աջնախի գղեստների ճարհլը, որոնք նրան իր ուզած տեսքը հաղորդեին: Անվան հետ կապված կատակները հիմա

ս.րդեն էրոուի թիկունքից էին արվում, և նա շատ լավ գիտեր, որ դրանք հետո էին բարեկամական լինելու: Սակայն միսիս Մաթբլիֆը ոչ մի ղեպքում չէր ուզում հաշտվել միջին տարիքի կնոջ դերի հետ: Նա շարունակում էր կապույտ շորեր հագնել, որպեսզի ընդգծի աչքերի գույնը և արհեստական միջոցների օգնությամբ պահպանում շեկ մազերի փայլը: Ինչը որ էրոուին առանձնապես էր դուր գալիս Բեաթրիս Րիչմոնի և Ֆրենսիս Հիբսընի մեջ այն էր, որ նրանք երկուսն էլ իրենից շատ ավելի դեր էին. դրա շնորհիվ էրոուն նրբիրան էր երևում, բացի այդ, նրանք երկուսն էլ տարիքով ավելի մեծ էին և հակված էին նրան վերաբերվելու որպես մի փոքրիկ պատանի կուկի: Գա աչքերան էլ ահաճ բան չէր: Զվարթ կանայք լինելով, նրանք սիրում էին էրոուի հետ կատակներ անել նրան սիրաճեղագուհների մասին. իրենք արդեն դադարել էին մտածել նման գառարկ բաների շուրջ (էլ շատած, որ միսս Հիբսընը երբեք մի վայրկյան անգամ չէր հատկացրել այդ տեսակ մտքերին), սակայն ներողամտությամբ էին վերաբերվում իրենց ընկերուհու սիրախաղերին: Ենթադրվում էր, որ օրերս էրոուն երբորդ տղամարդուն է երջանկացնելու:

— Միայն թե էլ չպիտի շագանա, սիրելիս, — ասում էր միսիս Րիչմոնը:

— Եվ, ի սեր ասածս, իմացի՞ր՝ ինչպե՞ս է բրիջ խաղում, — նրան ծայնակցում էր միսս Հիբսընը:

Նրանք էրոուի ապագա ամուսնուն պատկերացնում էին հիմնովա, բայց լավ պահպանված ու արհեստ-չրտառական կեցվածքով տղամարդ, ասենք՝ պաշտոնավող ծովակալ, որը լավ գուժ է խաղում, կամ կնոջը՝ կորցրած մեկը, որը ծանրաբեռնված չէ զավակներով, բայց ով էլ լինի՝ պիտի լավ եկամուտ ունենա: Էրոուն բարյացակամորեն ունկնդրում էր նրանց, մշտքում պահելով այն փաստը, որ դա ամենին էլ իր ուզածը չէ: Երև է, ինքը կցանկանար նորից ամուսնանալ, սակայն նրա երազանքը բոցկուտացող աչքերով բարակիրան իտալացի էր՝ հնչեղ ախուռսով, և կամ ազնվագարմ իսպանացի զոն, և երեսուն տարեկանից ոչ մի օր մեծ: Վայրկյաններ էին լինում, երբ, հայելուն նայելով, էրոուի մեջ վստահություն էր առաջանում, թե ինքն էլ դրանից մեծ չի երևում:

Նրանք մտա ընկերուհիներ էին՝ միսս Հիբսընը, միսիս Րիչմոնը և էրոու Մաթբլիֆը: Գիրությունն էր, որ միացրել էր այդ

կանանց, և բրիջն էր, որ ցեմենտել էր այդ միութիւնը: Առաջին անգամ հանդիպել էին Կառլսբադում, որտեղ նույն Նշուրանոցում էին կենում և բուժվում նույն բժշկի մոտ, որը միեւնոյն անո- ղորութեամբ էր վերաբերվում նրանց: Բեաթրիս Բիշմընն անասե- լի շափեր ունէր: Նա գեղեցիկ կին էր՝ հրաշալի աչքերով, կար- մքրացրած այտերով ու ներկած շարձերով: Նա շատ գոհ էր լավ կարողութեան տեր այրու իր վիճակից: Բեաթրիսը պաշտում էր ստեղծողը: Միբուժ էր հաց ու կարագ, սերուցք, կարստաֆիլով ու ճրագուով փուղիկ: Նա տարին տասնմեկ ամիս ուտում էր ինչ ինչիսին փշեր, իսկ հետո մեկ ամսով գնում Կառլսբադ՝ նիհա- րելու Բայց ամեն տարվա հետ միտիս Բիշմընն ավելի էր գերա- նում: Նա բողոքում էր բժշկին, սակայն կարեկցանք չէր գտնում վերջինիս կողմից: Բժիշկը նշում էր մի շարք հասարակ ու պարզ փաստեր:

— Բայց եթե երբև շեմ ուտելու իմ սիրած բաները, էլ ինչո՞ւ եմ ապրում,— փորձում էր համոզել Բեաթրիսը:

Բժիշկն անխախտաբար ունեն էր թոթովում: Դրանից հետո միտիս Բիշմընն ստում էր միտս Հիքսընին, թե սկսում է կաս- կածել, որ բժիշկն իր կարծածի շափ խելոք չէ: Միտս Հիքսընն աղմուկով հոհում էր: Նա այդ տեսակ կին էր: Խոր, թավ ձայն ունէր և լայն ու տափակ, գեղնած դեմք, որի վրա փայլատա- կում էին փոքրիկ վառվառն աչքերը. քայլում էր ծանր՝ մի տե- սակ անշնորհ, ձեռքերը գրգռնը գրած, և երբ զգում էր, որ ուշադրութեան չի գրավի, երկար սրգար էր ծխում: Հնարավորին շափ տղամարդավարի էր հագնվում:

— Ինչու՞ պիտի գուզվեմ ու զիզիբիզիներ հագնեմ,— ասում էր նա:— Ինձ նման չազ մարդը պիտի հանդիստ լինի:

Միտս Հիքսընը թվիզից շորեր ու ծանր կոշիկներ էր հագ- նում, իսկ երբ հնարավորութեան էր լինում՝ գլխաբաց էր ման գալիս: Սակայն նա փղի ուժ ունէր և պարծնում էր, թե շատ տղամարդկանցից ավելի հեռու է նետում գոլֆի գնդակը: Միտս Հիքսընը սիրում էր հասարակ բռնիք օգտագործել և ցանկացած բեռնակրից ավելի լավ հայհույել գիտեր: Չնայած անունը Ֆրանս- սիս էր, գերադասում էր, որ իրեն Ֆրենկ կոչեն: Հմտորեն, բայց տակառով, յուր մարզամտ բնավորութեան օգնութեամբ ամուր էր պահում իրենց երեք ընկերութեանը: Կտնայք միա- փին հանրաչին չուր էին խմում, նույն ժամին լոգանք ընդու- նում, միաօյն կատարում կազմարիչ գրասանքներ, իրար հետ

վազվում թենիսի հրապարակում՝ մարդիչի գլխավորութեամբ, և միեւնոյն ժամին ուտում իրենց աղբարիկ ու դիտիկ կերա- կուրները: Ոչինչ չէր կարող փշաքնել կանանց լավ արամադրու- թեանը, բացի կշեռքից, և երբ նրանցից մեկնումեկի քաշը նույնն էր լինում, ինչ որ նախորդ օրը, ո՞չ Ֆրենկի կոշտակալիտ կա- տակները, ոչ Բեաթրիսի bonhomie-ն, ոչ էլ էրոտի փիսիկաւ- թեանները չէին օգնում մտայնութեանը ցրելու:

Անմիջապէս վճռական միջոցներ էին ձեռք տանվում՝ հան- ցավորը քանչորս ժամով տեղափոխվում էր անկողին, և նրա բերանը բան չէր ընկնում, բացի բժշկի հանրահայտ բանշարե- ղենի ապուրից, որը մեջը վարունգ գցած եռացրած ջրի համ ունէր:

Երբեք երեք կին այդքան հավասարիմ ընկերներ չեն եղել: Նրանք միանգամայն անկախ կլինեին ուրիշներից, եթե բրիջում շորորդի կարիքը չզգային: Մոլի, շերմեանոց խաղացողներ լի- նելով, մտերիմները, օրվա բուժումը վերջացնելուն պես, նըս- տում էին բրիջ խաղալու էրոտն, իր կանացիութեամբ հանդերձ, երբեք մեջ ամենալավ խաղացողն էր՝ անողորմ, ինչացի, խնա- յել չունէր, մի փոքր զիջում անգամ չէր անում և չէր հապաղում օգտվել զիմացիների սխալից: Բեաթրիսը տեսարան էր և ամեն վայրկյան կարող էր վկայակոչել բոլոր հեղինակութեաններին: Ընկերուհիները երկար վիճաբանութեաններ էին ունենում մրցակ- ցո՞ղ սխառմաների շուրջ: Իրար սմբակոծում էին Գալբերթսընից ու Միմսից՝ մեջբերումներով: Ակնհայտ է, որ նրանցից ոչ մեկը երբև մի թուղթ անգամ չէր խաղում առանց տասնհինգ լավ գրգապատճառի, սակայն հետագա խոսակցութեանից ակներև էր դառնում նաև, որ տասնհինգ հավասարաշափ լավ պատճառ կար այդ թուղթը չխաղալու: Ամեն ինչ կարգին կլինէր, անգամ այն գարշելի սպուրն ու քանչորս ժամ անկողինը, երբ բժշկի հո- տած (Բեաթրիս), քոտտ (Ֆրենկ), նոզկալի (էրոտ) կշեռքը ձևացնում էր, թե մեկնումներ երկու օրվա մեջ մի ունցիա ան- գամ չի կորցրել): Եթե միայն իրենց մակարդակի խաղացող ճա- րելու մշտական ղեկավարութեանը չլինէր:

Ահա այս էր պատճառը, որ Ֆրենկը հրավիրեց Լինս Յին- լին՝ գալ իրենց մտո՞ Անտի, որի մասին և կկարգա բնթերբուր ստորե: Ֆրենկի առաջարկութեամբ ընկերուհիները պետք է մի լանի շարքի անցկացնեին ամառը: Նրան՝ սղջամիտ այդ կնո- ցը, անմասնութեան էր թվում, որ բուժուելու վերջու՞նուրոց անմի-

չապես հետո Բեաթրիսը, որը միշտ քսան ֆունտ քաշ էր կորցնում, տեղի է տալու յուր անսանձ ախորժակին և այդպիսով նորից գիրանաւ Բեաթրիսը թույլ էր: Նրան մի ուժեղ կամքի տեր անձնամոլորութուն էր պետք, որ հետեւեր դիետին: Յրենկն առաջարկեց Կառլսբադից հեռանալուն պես տուն վարձել Անտիբուս, որտեղ կարող են ուզածի շափ մարմնամարզութեամբ զբաղվել (բուրժիէն է հայտնի, որ ոչինչ ավելի շատ չի օգնում նիհարելուն, քան լողալը) և հնարավորին շափ շարունակել բուժումը: Սեփական խոհարար պահելով, գոնե կկարողանային խուսափել բացահայտորեն գիրացնող ուտելիքներից: Ինչո՞ւ մի քանի ֆունտ էլ չզցեին: Դա հրաշալի միտք էր թվում: Բեաթրիսը գիտեր իր լավը, և նա կարող էր հաջողութեամբ դիմանալ գայլախնայութեանը, եթե այդ գայլախնայութեանը թի տակ չլինէր: Բացի այդ, նա թղթախաղ էր սիրում, և շաբաթը երկու-երեք անգամ կազմեցում մի քանի հուզումնային վայրկյաններ ապրելը հաճելի ժամանց կլինէր: Էրոուն պաշտում էր Անտիբը և կփորձեր Կառլսբադում անցկացրած մեկ ամսից հետո ժամանակն իզուր չկորցնել: Կարող էր հեշտ ու հանգիստ բնարութեան կատարել երիտասարդ խալացիների, կրթող իտալացիների, նորակիրթ ֆրանսիացիների և երկարտան անգլիացիների միջև, որոնք առավոտից իրիկուն գրոսնում էին լողավարտիքներով ու վառ գունավոր խալաթներով: Մրագիրը շատ հաջող էր իրականանում: Կանայք հոյակապ ժամանակ էին անցկացնում: Շաբաթը երկու օր, խաշած ձվերից ու հում պամիդորներից բացի ոչինչ չէին ուտում և ամեն առավոտ թեթև սրտով հեծնում էին կշեռքը: Էրոուն նիհարել էր մինչև յոթանասուն կիլոգրամ և իրեն սղջնակի նման էր զգում: Բեաթրիսն ու Յրենկը կշեռքին որոշակի ձեռով կանգնելիս 83—84 կիլոգրամից ավել չէին կշռում: Նրանց գնած կշեռքը կիլոգրամներով էր ցույց տալիս, և կանայք շտեմնված հմտացել էին մի ակնթարթում կիլոգրամները ֆունտերի և ունցիաների թարգմանելու մեջ:

Բայց մի գծավորութուն էր մնացել՝ շորորդ բրիջ խաղացողը: Այս մեկը տախտակի պես էր խաղում, մյուսն այնքան դանդաղ, որ կարելի էր գծվել, երրորդը վիճել էր սիրում, շորորդը տարվել չգիտեր, հինգերորդը խաղանկնգից մի մազ էր հեռու նույնիսկ տարօրինակ էր, թե ինչ գծվար է ուղած խաղացողին շտեմնելը:

Մի օր առավոտյան, երբ կանայք ծովի կողմը նայող տեղա-

սում պիտամայով նստած թեյ էին խմում (առանց կաթի կամ ջրաբարի), բժիշկ Հազբըթի դեղատոմսով պատրաստված չգիրացնող շորահաց ուտում, Յրենկը, որ նամակներն էր կարդում, զուգը բարձրացրեց:

— Լինա Յրենկն է գալիս Ռիվիերա, — ասաց նա:

— Դա ո՞վ է, — հարցրեց Էրոուն:

— Նա դարմիկիս հետ էր ամուսնացած: Զարմիկս մեռավ մի երկու ամիս առաջ, և հիմա Լինան ներվային ցնցումից նոր է ուշքի գալիս: Ի՞նչ կասեիք, եթե մի երկու շաբաթով այստեղ հրավիրեինք:

— Բրիջ խաղո՞ւմ է, — հարցրեց Բեաթրիսը:

— Բա ո՞նց, — շեփոթեց Յրենկն իր կրծքային ձախով: — Շատ լավ էլ խաղում է: Դրսի մարդկանցից լրիվ անկախ կդառնանք:

— Քանի՞ տարեկան է, — հարցրեց Էրոուն:

— Իմ շափ:

— Ուրեմն լավ է:

Հարցը լուծված էր: Յրենկը, իրեն հատուկ վճարականութեամբ, նախաձայր վերջացրեց թե չէ, գնաց հեռագիր տալու, և երեք օրից Լինա Յրենկը ժամանեց: Յրենկը դիմավորեց նրան կայաբանում: Լինան խոր, սակայն ոչ ցուցադրական սուգ էր կրում իր վերջերս մեռած ամուսնու համար: Յրենկն արգեն երկու տարի չէր տեսել նրան: Նա չէրմ համբուրեց Լինային և մի կուշտ նայեց վրան:

— Շատ նիհար ես, ջանիկս, — ասաց նա:

Լինան խիղախորեն մպտաց:

— Վերջերս ուժասպառ եմ եղել: Շատ քաշ եմ կորցրել:

Յրենկը հառաչեց, բայց հայտնի չէ՝ կորցրած զարմիկի՞ համար, թե՞ նախանձից:

Ինչ որ է, Լինան շափից դուրս խնդաւայած չէր, և արագ լուգանք բնդունելուց հետո նա միանգամայն պատրաստ էր Յրենկին իզքն Բոք ուղեկցելու: Յրենկը նորեկին ներկայացրեց իր երկու բնկերուհիներին, և նրանք մտան Մանքի Հաուզ: Դա մի սպակեծածկ, ծովին նայող շինութուն էր, աղմկոտ, լողազգեստներ, պիտամաներ և խալաթներ հագած մարդկանցով լեփ-լեցուն, որոնք բարում սեղանների շուրջ նստած կոկտեյլ էին խմում: Բեաթրիսի փափուկ սիրտը կարեկցանք զգաց գեպի որբնայրին, իսկ Էրոուն, տեսնելով, որ Լինան գունատ է, աչքի շրնկնող և

քառասունութից ոչ պակաս, նույնպէս պատրաստ էր նրան շատ սիրելու: Մատուցողը մտաեցավ կանանց:

— Ի՞նչ կիմես, կինա, սիրելիս,— հարցրեց Ֆրենկը:

— Ահ, չգիտեմ, ինչ որ գուշ բռնորդ՝ դառը Մարտինի կամ Ռայթ կեչոյի:

էրոտն ու Բեաթրիսը մի արագ հայացք նետեցին նրա կողմը: Քոյորին է հայտնի, թէ կոկոնչիներն ինչպէս են գիրացնում:

— Երեւի հոգնել էս ճանապարհից,— բարեարտորեն ասաց Ֆրենկը:

Նա գտոյր Մարտինի պատվիրեց կինայի համար, իսկ իրեն և իր երկու ընկերուհիներին՝ լիմոնի ու նարնջի խառնած հելուի:

— Մենք գտնում ենք, որ այս շոգին արկոճոյր լավ չէ,— բացատրեց նա:

— Օ՛, ինձ վրա բոլորովին չի ազդում,— անհոգ պատասխանեց կինան:— Ես կոկոնչի սիրում եմ:

էրոտն իր կարմրաներկի տակ թեթևակի գունատվեց (ոչ նա, ոչ էլ Բեաթրիսը լողանալիս երեսները չէին թրջում և Ֆրենկի կողմից անմատոյթուն էին համարում, որ այդ շափերն ունենալով, ձևացնում է, թէ սիրում է սուզվել), բայց ոչինչ չառացի: Զրույցն ուրախ էր ու անկաշկանդ, խոնգալատուրից մտնում էին ինչի մասին ասես, մինչև վրա հասավ ժամանակը, և կանայք էտ գնացին առանձնատուն՝ երկրորդ նախաճաշին: Ամեն անձեռնոցիկի մեջ երկու փոքրիկ, չգիրացնող շորահաց էր դրված: Կինան ուրախ ժպտաց՝ դրանք դնելով իր ամսերի կողքը:

— Կարելի՞ է հաց ուղել,— հարցրեց նա:

Ամենամեծ անպատշաճութունն անգամ երեք ընկերուհիներին ականջին այդպիսի հարված չէր լինի: Տասը տարի էր արդեն, նրանցից ոչ մեկը հաց չէր կերել: Նույնիսկ Բեաթրիսն, իր ողջ շատակերութեամբ հանդերձ, այդանող արդեն չափը չէր անցնում: Ֆրենկը, որպէս լավ տանտիրուհի, առաջինը խեղճի եկավ:

— Անշուշտ, ջանիկս,— ասաց նա և, ծառայապետի կողմից շրջվելով, կարգադրեց հաց բերել:

— Եվ մի քիչ կարագ,— ասաց կինան՝ իրեն հատուկ մեղծ ու անհոգ եղանակով:

Մի րոպե շփոթված լուսթյուն տիրեց:

— Զգիտեմ, տանը կա՞, թե չէ,— ասաց Ֆրենկը,— բայց կտեղեկանամ: Կարող է խոհանոցում մի քիչ լինի:

— Ես գծվում եմ հաց ու կարագի համար, իսկ դո՛ւք,— ասաց կինան՝ Բեաթրիսի կողմը շրջվելով:

Բեաթրիսը հիվանդագին ժպտաց և խուսափողական պատասխան տվեց: Մտաշափուկ մի երկար ու խրթխրթան Ֆրանսիական բուլկի բերեց: Կինան բուլկին երկու մասի կիսեց և վրան լսեց կարագը, որ հրաշքով հայտնաբերվել էր: Մատուցվեց ասպակած ձուկ:

— Մենք այստեղ շատ հասարակ բաներ ենք ուտում,— ասաց Ֆրենկը:— Հուսով եմ՝ զեմ չես:

— Զէ, բոլորովին, ես ինքս շատ պարզ բաներ եմ սիրում,— ասաց կինան, կարագ բսելով իր ձկան վրա:— Մի քիչ հաց ու կարագ լինի, կարտոֆիլ ու սեր՝ բավական է, որ ինձ նըջանիկ դրամ:

Երեք ընկերուհիները հայացքներ փոխանակեցին: Ֆրենկի նկատարան զեղնած դեմքը մի փոքր սմբեց, և նա տհաճութեամբ նայեց իր ամսերի գրված շոր, անհամ ձկանը: Օղնության հասավ Բեաթրիսը:

— Պատկերացնո՛ւմ եք, այստեղ սեր չի ճարվում,— ասաց նա:— Դա այն բաներից է, առանց որի ստիպված ես մի կերպ բավարարվել Ռիվիերայում:

— Ափսոս,— ասաց կինան:

Նախաճաշի մնացած մասը բաղկացած էր գառան կոտլետներից, որոնց վրայից ճարպը խնամքով հեռացվել էր, որպեսզի Բեաթրիսը հանկարծ ճիշտ ճամփից չհեղվի, ջրի մեջ հոսաքրած սղոսնախից և որպէս աղանդեր՝ տանձի կոմպոտից: Կինան տունը փորձեց և ծառայապետի կողմը մի հարցական հայացք նետեց: Այդ ճնարամիտ մարդը միանգամից հասկացավ ու, թեև սուաջ ոչ մի անգամ շաքարի փոշի չէր մատուցվել, անմիջապէս մի աման բերեց: Կինան առատորեն օգտվեց դրանից: Մյուս երեքը ձևացնում էին, թէ չեն նկատում: Հետո սուրճ հրամցվեց, և կինան երեք կտոր շաքար դրեց իր գավաթը:

— Շատ քաղցրասերն եք,— ասաց էրոտն, փորձելով պոհսպանել ձայնի բարեկամական հնչողութունը:

— Մենք գտնում ենք, որ սախարիները շատ ավելի քաղցր է,— ասաց Ֆրենկը, մի բարայիկ հար նետելով իր սուրճի մեջ:

— Զգվելի բան է,— ասաց կինան:

Բեաթրիսի բերանն անկյուններում կախ ընկավ, և նա ծարավ հայացքով նայեց շաքարին:

— Բեաթրիս,— խստորեն որոտաց Ֆրենկը:
Բեաթրիսը մի հառաչ արձակեց և ձեռքը տարաժ սախարինի
Հո բերին:

Երբ նստեցին բրիչի սեղանի շուրջ, Ֆրենկն իրեն թեթևացած
պայաց: Պարզ էր, որ էրոուն ու Բեաթրիսը սրտնեղած են: Ֆրենկն
ուզում էր, որ Լինան նրանց դուր գաւ և շատ էր ցանկանում, որ
վերջինս իր երկու շարաթն ուրախ անցկացնի նրանց շրջապա-
տում: Առաջին ոտքերի ժամանակ էրոուն ղույզ ընկալ նորեկը:

— Դուք վանդերբի՞լթ եք խաղում, թե՞ Գայրերթսըն,—
հարցրեց էրոուն:

— Ինձ համար օրենքներ չկան,— ուրախ-ուրախ պատաս-
խանեց Լինան— Ես բրիչ խաղում եմ բնական՝ սրտի թելադ-
րանքով:

— Իսկ ես կրտսիկ Գայրերթսըն եմ խաղում,— կծու ասաց
էրոուն:

Երեք հասարակ կանայք պատրաստվեցին ճակատամարտի
Ուրեմն, օրենքներ չկա՞ն: Իրենք նրան ցո՛ւյց կտան: Երբ բանը
հասնում էր բրիչին, ետյնիակ Ֆրենկի ընտանեկան զգացմունք-
ներն էին մտապայտեցնում արժամ, և նա մյուսների նման նստեց
խաղալու լի՛ էրենց միջի օտարին կրպիտ վճառականութեամբ:
Սակայն սրտի թելադրանքը շատ լավ էր ծառայում Լինային:
Նա խաղալու բնատուր ասպանդ ուներ և մեծ փորձ: Խաղում
էր Ֆանտազիայով, արագ, համարձակ ու փտահ: Մյուս խաղորն-
կերուհիները շահից գուրս բարձր մակարդակ ունեին, որ չհաս-
կանային՝ Լինան գիտի, թե ինչ է անում, և բանի որ նրանք երեքն
էլ անսահման բարեսեր, մեծահոգի կանայք էին, կամաց-կամաց
փակեցին: Ամեն ինչ սկսում էր հաջող ընթանալ:

Մի երկու ժամից կանայք բաժանվեցին. Ֆրենկն ու Բեաթ-
րիսը գնացին դո՞ք խաղալու, իսկ էրոուն աշխույժ գրոսանքի՝
Բարթեյր անունով մի ջահել արքայազնի ընկերակցութեամբ,
որի հետ վերջերս էր ծանոթացել: Արքայազնը շատ անուշիկ էր,
երիտասարդ ու գեղեցկազն: Լինան ասաց, որ կմնա հանգըս-
տանալու:

Նորից հանդիպեցին ճաշելուց անմիջապես առաջ:

— Հուսով եմ, որ ըեզ լավ ես զգացել, Լինա, սիրելիս,— ասաց
Ֆրենկը:— Խիղճս խայթում էր, որ ըեզ պարապ-սարապ էի
թողել ամբողջ ժամանակ:

— Չէ՛, ներողություն մի խնդրիր: Ես մի կուշտ բնեցի, իսկ

հետո գնացի Հուան ու կոկտեյլ խմեցի: Եվ գիտե՞ս թե ինչ հայտ-
նագործեցի: Դուք այնքա՞ն գո՞հ կլինեիր: Մի սիրունիկ փոքրիկ
թելաբան գտա, որանը շատ հրաշալի խիտ ու թարմ սեր են
ունենում: Ես ստացի, որ օրական կես պինտ օւղաբլեկն մեզ
Մտածեցի, թող դա էլ ի՞մ փոքրիկ ներդրումը լինի ասան հոգ-
սերում:

Լինայի աչքերը փայլում էին: Նա ակներևաբար սպասում
էր, որ կանայք կհրճվեն:

— Շատ լավ բան ես արել,— ասաց Ֆրենկը, հայացքով
փորձելով խաղաղեցնել իր երկու բնկերուհիներին գնդին
տայտեցած ցատուներ:— Բայց մենք երբեք սեր չենք ուտում: Այս
եղանակին դա մարդու այնքան չլույսին է դարձնում:

— Ուրեմն պիտի ամբողջը մենակ ուտեմ,— ուրախ-ուրախ
ասաց Լինան:

— Դուք ձեր կաղմվածքի մասին չե՞ք մտածում,— էրոուն
հարցրեց զգուշորեն, մտածկոտ-ստոցային ձայնով:

— Բժիշկն ասել է, որ պետք է ուտեմ:

— Հո չի՞ ասել, որ պետք է հաց ու կարագ և կարտոֆիլ ու
սեր ուտեք:

— Ասել է: Ես կարծում էի, դուք դա նկատի ունեիր, երբ
ուսացիք՝ հասարակ ուտելիքներ...

— Դուք այնքան կգիրանաք, որ...— ասաց Բեաթրիսը:

Լինան ուրախ ծիծաղեց:

— Չէ, չեմ գերանա: Գիտեք, երբեք ուլին ինձ չի գիրացնում:
Միշտ կերել եմ ինչ ուղեմ, և երբեք վրաս ամենափոքր աղդե-
ցութիւն անգամ չի գործել դա:

Այս խոսքերին հետևած բար լուսնյունը խախտվեց միայն
ժառանգապետի ներս գալով:

— Mademoiselle est servie!,— հայտարարեց նա:

Ուշ գիշերով, երբ Լինան գնաց բնելու, կանայք Ֆրենկի սեն-
յակում անցան հարցի բնարկեմունը: Ամբողջ երեկոյի ընթաց-
քում նրանք ստատիկ զվարթ էին և այնքան կատակներ էին
իրար հետ արել, որ ամենաքննախույզ գիտողին ապակազմնու-
րոշած կլինեին: Բայց հիմա գիմակները մի կողմ նետվեցին:
Բեաթրիսը մտալ էր: Էրոուն շարացած էր, իսկ Ֆրենկը՝ սովո-
ր: կանից կուպիտ:

— Այնքան էլ հաճելի չի նստել ու նայել, թե ոնց է ուտում

հենց այն բաները, որ հատկապես սիրում եմ,— տրամագին ասաց Բեաթրիսը:

— Ոչ մեկիս համար էլ հաննիլի չի,— հարվածը ետ մղեց Ֆրենկը:

— Պետք է նրան այստեղ կանչած լինեիր,— ասաց էրոուս:

— Ի՞նչ իմանալի,— գոռաց Ֆրենկը:

— Ինձ, չգիտեմ ինչու, թվում է, որ եթե իր ամուսնու մասին մտածեք, դժվար թե այդքան շատ ուտեք,— ասաց Բեաթրիսը:— Երկու ամիս էլ չկա, որ թաղել է: Ուզում եմ ասել, իմ կարծիքով մեռածին մի քիչ հարգել է պետք:

— Ինչ է, չի՞ կարող ուտել այն, ինչ որ մենք,— թշնամանքով ասաց էրոուսը:— Հլուր է, չէ՞:

— Դե դու լսեցիր, թե ինչ ասաց: Բժիշկին ասել է, որ պետք է ուտի:

— Ուրեմն, թող առողջարան գնար:

— Ֆրենկ, դրան դիմանալ չի լինի,— անբաց Բեաթրիսը:

— Ես որ դիմանում եմ, դուք էլ կդիմանաք:

— Նա քո ազգականն է, ո՛չ թե մեր,— ասաց էրոուսը:—

Ես չեմ պատրաստվում երկու շաբաթ նստել այստեղ ու նայիլ, թե այդ կինն ինչպես է իրեն խոզի տեղ դնում:

— Գուհիկ է ուտելու այդքան կարևորություն տալը,— զղբոցարեց Ֆրենկը, և նրա ձայնը սովորականից ավելի կրծքաչին էր:— Ի վերջո, միակ իսկապես կարևոր բանը հոգին է:

— Դու ի՞նչ ես գուհիկ անվանում, Ֆրենկ,— աչքերը փայլեցնելով հարցրեց էրոուսը:

— Ձե, իհարկե չէ,— մեջ ընկավ Բեաթրիսը:

— Քեզնից հեռու չի, որ մեր քնած ժամանակ խոհանոց գրեւս ու թաքուն մի լավ ուտես:

Ֆրենկը վեր թռավ:

— Ինչպե՞ս ես համարձակվում այդպիսի բան ասել, էրոուս Ես երբեք ոչ մեկից չեմ պահանջել այն, ինչ ինքս պատրաստ չեմ անելու: Այսքան տարի ինձ իմանալուց հետո մի՞թե կարող ես կարծել, թե ի վիճակի եմ այդպիսի ստոր բան անել:

— Բա ինչպե՞ս է, որ երբեք բաշ չես գցում:

Ֆրենկը իսր շունչ առավ, ու հանկարծ արցունքները դուրս ցայտեցին նրա աչքերից:

— Ի՞նչ դաժան բան ես ասում, Ես այնքա՞ն եմ նիհարել:

Նա կրեխալի պես հեկեկում էր: Մտեղ մարմինը ցնցվում էր,

և հսկայական արցունքները հեղեղում էին լուսանման կուրծքը:

— Զանիկս, ախր ինձ չհասկացար,— գոչեց էրոուսը:

Նա ծնկի եկավ և իր թմբիկ թներով գրկեց Ֆրենկից այնբան, որքան հնարավոր էր: Նա հեկեկում էր, և դեմքի շպարը վար էր հոսում այտերով:

— Ինչ է, ուզում ես ասել՝ չի՞ երևում, որ նիհարել եմ,— հեծկլտում էր Ֆրենկը:— Այդքան տառապանքիցս հետո:

— Իհարկե երևում է, սիրելիս,— գոռում էր էրոուսը՝ արտասուքների միջոց:— Բուրբն էլ դա նկատել են:

Բեաթրիսը, թեև ի քնե հանդարտ խառնվածք ուներ, սկսեց կամացուկ լաց լինել: Շատ հուզիչ տեսարան էր: Իսկապես, միայն քար սիրտը չէր փափկի՝ տեսնելով, թե ինչպես է Ֆրենկը՝ առյուծի պես այդ կինը, կտոր-կտոր լինում: Շուտով, ինչևէ, նրանք արցունքները շորացրին և մի քիչ կոնյակ ու չուր խմեցին, որ բժշկի ասելով ամենաքիչ գիրացնող խմիչքն էր, ու շատ ավելի լավ զգացին իրենց: Ընկերուհիները որոշեցին, որ կինան պետք է ուտի այն սննդաբան կերակուրները, որ նրան խորհուրդ էին տվել, և հանդիսավոր երզվեցին՝ թույլ շտալ, որ դա խախտի իրենց անվրդովությունը: Կինան, անկասկած, առաջնակարգ բրիչ խաղացող էր և վերջ ի վերջո դա ընդամենը երկու շաբաթ էր տևելու: Կարեցած ամեն բան պիտի անեին, որ նա լավ զգար իրեն: Կանայք չերմ համբուրեցին իրար և արտակարգ բարձր տրամադրություններ հեռացան քնելու: Ոչ մի բան չէր կարող խախտել այն հրաշալի ընկերությունը, որն այդքան երջանկություն էր բերել իրենց երեքի կյանքում:

Բայց մարդն իր բնույթով թույլ արարած է: Ձի կարելի նրանից շատ բան պահանջել: Իրենք տապակած ձուկ էին ուտում, մինչդեռ կինան՝ կարագի ու պանրի մեջ ծպծպացող մակարոն, իրենք՝ տապակած կոտլետ ու եփած սպանախ, կինան՝ pâtié de foie gras¹, իրենք՝ շաբաթը երկու անգամ պինդ խաշած ձու և հում պոմիդոր, իսկ կինան՝ սերուցքի և կարտոֆիլի մեջ բուրբ կանոններով համեղ սարքած սիսեռ: Խոհարարն իր գործի վարպետն էր, և նա ուրախությունից թռչկոտում էր, որ իրեն հնարավորություն է տրված ճաշատեսակներից մեկն ավելի հարուստ, ախորժալի ու հյութեղ պատրաստել, քան մյուսը:

— Խե՛ղճ Ձիմ,— հառաչում էր կինան, մտածելով յուր ամուսնու մասին,— ես սիրում էր ֆրանսիական ճաշատեսակներ:

Մտաշապետն ի հայտ բերեց այն փաստը, որ ինքը վեց-յոթ

աեսակի կոկոսեյլ պատրաստել գիտի, իսկ Լինան տեղեկացրեց, որ բժիշկն իրեն խորհուրդ է տվել երկրորդ նախաճաշին բուրգունդյան գինի խմել և ճաշի ժամանակ՝ շամպայն: Երեք հաստիկ կանայք դիմանում էին: Նրանք զվարթ էին, զրուցասեր և հուշնիակ արտակարգ ուրախ (այդպես է՝ բոլոր կանայք ի բնի խարելու տաղանդ ունեն), սակայն Բեաթրիսը հետզհետե ուժասպառ էր լինում ու հուսալքվում, իսկ էրոուի քնքուր կապույտ աչքերը սրզպատյա փայլ էին ստանում: Ֆրենկի կրճաջիև ձայնն ավելի խուլոտ էր գարձել: Լարվածութունը զգալի էր գառնում, երբ բրիչ էին խաղում: Երեք կանայք խաղի ժամանակ խոսելու սովորություն ունեին, բայց թննարկումը միշտ էլ բարեկամական բնույթ էր ունեցել: Այժմ դիտողությունները որոշակաբան կծու էին դարձել, և երբեմն մեկը մյուսի սրույր ստանանքում էր միանգամայն ավելորդ ուզգամտություն: Քրննարկումը վերափոխվում էր հակահաստություն, իսկ հակահաստությունը՝ վիճաբանություն: Ժամանակ առ ժամանակ խաղը վերջանում էր զայրացկոտ յուսթյաբ: Մի անգամ Ֆրենկն էրոուին մեղադրեց իրեն միտումնավոր կերպով վնասելու մեջ: Երկու թե երեք անգամ Բեաթրիսը՝ ընկերուհիների մեջ ամենափափկասիրտը, հուզվեց արտավելու աստիճան: Մի ուրիշ առիթով էրոուն սեղանին շարտեց իր խաղաթղթերը և ցատուժի նուպայի մեջ զուրս նետվեց սենյակից: Կրքիրը բորբոքվում էին: Խաղսովյան աղափնյն Լինան էր:

— Ախր շարժե բրիչի համար վիճել,— ասում էր նա:— Վերջ ի վերջո, դա միայն խաղ է:

Նրա համար ամեն ինչ շատ լավ էր: Կուշտ կերել էր և կես շիշ շամպայն խմել: Բացի այդ, բախտն անբնական կերպով բերում էր: Տանում էր նրանց ամբողջ գրամը: Ամեն խաղից հետո հաշիվը գրանցվում էր, և Լինային որ օրի ավելանում էր անխափան կանոնավորությամբ: Ի՞նչ է, դուրս էր գալիս, որ աշխարհում արդարություն չկա: Կանայք սկսեցին իրար ատել: Ու թեև Լինային նույնպես ատում էին, սակայն շփոթես ինչու նրան իրենց խոստովանամայր էին բնորել: Ամեն մեկն առանձին գնում էր: մոտը և պատմում, թե մյուսները որքան վատն են: էրոուն ասում էր, թե վստահ է, որ իրեն վնաս է այդքան հաճախ իրենից տարիքով այդքան մեծ կանանց տեսնելը: Ինքը միտք ունի զոհաբերել ընդհանուր գումարի մեջ իր ներդրածը և սուտան մնացած մասն անցկացնել Վենետիկում: Ֆրենկը Լի-

նային հավատացնում էր, թե իր նման սուլամարդկային խելք ունեցողից զվար է սպասել, որ բավարարվի էրոուի պես թեթևամիտով ու Բեաթրիսի պես բացահայտ հիմարով:

— Ես պետք ունեմ ինտելեկտուալ գրույցների,— որոտում էր նա:— Ինձ նման ուղեղ ունեցողը պետք է խելքով իրեն հավասարների հետ շփվի:

Բեաթրիսի ուզածը միայն խաղաղություն էր ու հանգստություն:

— Ես կանանց ատում եմ, ազնիվ խոսք,— ասում էր նա:— Նրանք այնքան անհուսալի են, այնքան շար:

Երբ Լինայի երկու շարաթը վերջանալու վրա էր, երեք հաստիկ կանայք իրարից համարյա խոտվ էին: Լինայի ներկայությունը ցույց չէին տալիս, բայց երբ սա բացակայում էր՝ էլ չէին ձևացնում: Վեճեր արդեն չէին լինում: Պարզապես չէին նկատում իրար, իսկ երբ դա հնարավոր չէր, սառցային քաղաքավարությամբ էին վերաբերվում մեկը մյուսին:

Լինան պետք է գնար իր բարեկամների մոտ՝ Բուալական Ռիվիերա, և Ֆրենկը նրան ճանապարհեց նույն գնացքով, որով ժամանել էր: Լինան իր հետ շատ էր տանում երեք հաստիկ կանանց փողերից:

— Ես չգիտեմ, թե ձեզ ինչպես շնորհակալություն հայտենեմ,— ասաց Լինան վագոն բարձրանալիս:— Ես հրաշայի ժամանակ անցկացրի:

Մի բան, որով Ֆրենկը Հիբսընն ավելի շատ էր հպարտանում, քան իր ոչ մի սուլամարդուց պակաս շինելը, այն էր, որ նա շենտլմեն էր, ուստի պատասխանը կատարյալ էր իր մեծահոգությամբ ու վեհությունը:

— Մենք բուրբա շատ ուրախ ենք, որ մեզ հետ եղար, Լինա,— ասաց նա:— Դու մեզ շատ պարտավորեցիր:

Սակայն երբ Ֆրենկը մի կողմ շրջվեց հեռացող գնացքից, նա ի նշան թեթևություն՝ մի այնպիսի հառաչ արձակեց, որ կառամատույցը դողրացրեց: Նա թափով ետ տարավ ուսերը և լռեց սովեց դիպի առանձնատուն:

— Օ՞ֆ,— մոնչում էր նա, մի վայրկյան կանց առնելով, որ շունչ քաշի:— Օ՞ֆ:

Տուն հասնելուն պես Ֆրենկը փոխեց շորը, հագավ լողազգեստը, կտորից շտաբն ու սուլամարդու հասարակ խալաթը և գնաց Իզրն Բոք: Մինչև երկրորդ նախաճաշը գնա ժամանակ կար՝ կա-

բւլի էր լողանալ: Նա անցավ Մանրի Հաուզով, նայելով շուրջը, որ ծանոթներին բարեկի, քանզի անսպասելիորեն իրեն շատ հաշտ ու խաղաղ էր դրամ մարդկության հետ, և հանկարծ դարձանքից մեկովեց տեղում: Աչքերին չէր կարողանում հավատալ: Բնաթրիսը մեն-մենակ նստած էր սեղաններից մեկի մոտ՝ հագին Molineux-ից երկու-երեք օր առաջ գնած պիժամա, վզին՝ մարգարիտների շարան, և Ֆրենկի սուր աչքերը նկատեցին, որ նա հենց նոր գտնողացրել է մազերը, իսկ այտերը, աչքերն ու շրթները ներկած են: Ինչքան էլ որ մարմնեղ էր, ավելին, նույնիսկ պարարտ, ոչ ոք չէր հերքի, որ նա արտակարգ գեղեցիկ կին է: Բայց ի՞նչ էր անում Բեաթրիսը: Ֆրենկն իր անձուհի, և անդիպաւցու քայլվածքով մտտեցավ Բեաթրիսին: Ան լողագրեստի մեջ Ֆրենկը նման էր այն հսկայական կետածկանը, որին ճապոնացիները որսում են Քորիս Սթրեյթսում, և որին հասարակ լեզվով ծովային կով են անվանում:

— Բեաթրիս, ի՞նչ ես անում,— գոռաց նա իր կրծքային ձայնով:

Ասես հեռավոր սարերում որոտացող ամպրոպ հնչեց: Բեաթրիսն անմրդով նայեց Ֆրենկին:

— Ուսում եմ,— պատասխանեց նա:

— Գրողը ասե՛նի, տե՛նում եմ, որ ուսում ես:

Բեաթրիսի առջև մի ավտե՛ croissant էր գրված, մի ափսե կարագ, ամանով ելակի ջեմ, սուրճ և մի սափոք սեր: Բեաթրիսը կարագը հնարավորին շափ հաստ քսում էր ախորժկի, տաք հացին, ծածկում ջեմով և ամենի վրայից թանձր սեր լցնում:

— Դու քեզ կսպանես,— ասաց Ֆրենկը:

— Պետք էլ չի,— բերանը լիքը՝ մրթմրթաց Բեաթրիսը:

— Գիտե՛ս ինչքան կզիրանաս:

— Կորի՛ր գրողի ծոցը:

Նա բացահայտորեն ծիծաղում էր Ֆրենկի երեսին: Ասաված իմ, ի՞նչ հրաշալի բուրմունք ունեին croissant-ները:

— Ես քեզից հիասթափված եմ, Բեաթրիս: Կարծում էի, սովելի շատ կամքի ուժ ունես:

— Մեղքը բունն է: Այն գրողի տարած կի՛ներ: Դու՛ նրան աչտակ հրավիրեցիր: Երկու շաբաթ նայում էի, թե սեց է խոզի սկես դիտվում: Դրան դիմանալ չէր լինի: Որ սպալեմ էլ, մի անգամ պետք է պի՛նջ ուտեմ:

Ֆրենկի աչքերն արցունքով լցվեցին: Հանկարծ նա իրեն

թույլ ու կանաչի զգաց: Կուզե՛ր, որ մի ուժեղ մարդ իրեն ծնկին գնե՛ր, փայփայեր ու կրծքին սեղմեր և երեսույթ անուններ տար իրեն: Նա անխոս իշավ Բեաթրիսի կողքի աթոռին: Մատուցողը մտեցավ: Չուքի մի զգայացունց շարժումով Ֆրենկը ցույց տվեց սուրճը և croissant-ները:

— Նույնից,— հառաչեց նա:

Հետո ձեռքը ծուլ-ծուլ մեկնեց, որ բուլկի վերջնի, բայց Բեաթրիսն ափսե՛ն ճանկեց ու մի կողմ քաշեց:

— Չէ՛,— ասաց նա:— Սպասիր, մինչև քոնը բերեն:

Ֆրենկը նրան անվանեց մի անունով, որ կանայք հազվադեպ են ջերմ քնքռության վայրկյանին օգտագործում: Մի բուլկից մատուցողը բերեց croissant-ները, կարագը, ջեմը և սուրճը:

— Բա սե՛րն ուր է, հիմարի մեկը,— մոնչաց Ֆրենկը. ասես հետապնդված էլ առյուծ լինե՛ր:

Նա սկսեց սպահարեն ուտել: Սրահը լցվում էր լողացողնե-րով, որոնք գայիս էին ծովին ու արևին իրենց տուրքը հատուցելուց հետո մի կամ երկու բաժակ կոկտեյլ խմելու: Շուտով հայտնվեց էրոսն՝ իր արքայազն Բոքլմեյրի հետ: Մի ձեռքով հայտնվեց էրոսն՝ իր արքայազն Բոքլմեյրի հետ: Մի ձեռքով մարմնի շուրջ մի սիրուն մետաքս շալ էր կիպ բռնել, որպեսզի հնարավորին շափ բարախիկ երևա, իսկ գլուխը բարձր էր պահում, որ արքայազնը կրկնակողպը չնկատի: Նա ուրախ ծիծաղում էր: Իրեն ջահել աղբիկ էր գգում: Արքայազնը հենց նոր ոտել էր (խտալերեն), որ նրա աչքերի կողքին Միչերկրական ծովի կադույան ասես սիսեւով սպուրի գույն ունենալ նա թողեց էրոսին, որպեսզի գնա տղամարդկանց դուգարան և սանրի իր սղալած սև մազերը: Պայմանավորվեցին, որ հինգ բուլկից կը-հանդիպեն ու մի բան կխմեն: Էրոսն քայլեց գևալի կանանց զուգարան, այտերին մի քիչ կարմրաներկ և շրթունքներին շրթներկ քսելու: Սովալս ճամփին տեսավ Ֆրենկին և Բեաթրիսին: Ու կանոց առավ: Աչքերին չէր կարողանում հավատալ:

— Տե՛ր ասաված.— էլաց նա:— Անասունենե՛ր: Խոզե՛ր:— Նա մի աթոռ ճանկեց:— Մատուցո՛ղ:

Միանգամից մոտացավ ժամագրության մասին: Ակնխարթ շանցած մատուցողը նրա կողքին էր:

— Բերե՛ք ինձ նույնը, ինչ-որ այս տիկնայք են ուտում,— կարգադրեց նա:

Ֆրենկն իր հեղա ծանր գլուխն ափսեից վեր բարձրացրե՛ր:

— Ինձ pâlé de foie gras բերեք,— որոտաց նա:

— Ֆրե՛նկ,— գոչեց Բեաթրիսը:

— Ձախդ կարի՛ր:

— Շատ լավ: Ես էլ կուտեմ:

Բերեցին սուրճը, տաք բուլկիները, սերը, pâlé de foie gras-ը, նրանք գործի անցան: Պաշտեօտի վրայից սերուցք բսեցին ու կերան: Ջեմը գգալով էին կլանում: Ազահարեն կուլ էին տալիս խրթիթթան հացը: Էլ ի՞նչ էր սերն էրոտի համար: Թո՛ղ արբայազներ իրեն պահել իր պալատը Հոսմում և իր ամբոցն Ապենիւնյան թերակղզում: Կանայք չէին խոսում: Նրանք շափից ալկոլի լուրջ գործով էին զբաղված: Ուտում էին հանդիսավոր, մուլեզին խանդավառութեամբ:

— Քսանհինգ տարի է՝ կարտոֆիլ չեմ կերել,— ասաց Ֆրենկը օտարակա, մտածկոտ տոնով:

— Մատուցո՛ւ, — գոտաց Բեաթրիսը, — երեք բաժին տապակած կարտոֆիլ բերեք:

— Très bien, Madame.

Կարտոֆիլը բերեցին «Արարիայի բուրբ անուշ բույրերը ալկոլի լավ չէին բուրում»^{*}: Ուտում էին մատենբրով:

— Ինձ դառը Մարտինի բերեք,— ասաց էրոտն:

— Դու հո չե՞ս կարող ուտելու կեսից դառը Մարտինի խմել, էրոտ,— ասաց Ֆրենկը:

— Չե՞մ կարող: Սպասիր, կտեսնես:

— Շատ լավ: Այդ դեպքում ինձ կրկնակի դառը Մարտինի բերեք,— ասաց Ֆրենկը:

— Երեք հատ կրկնակի դառը Մարտինի բերեք,— ասաց Բեաթրիսը:

Բերելուն պես կոկաեյլները մի շնչով խմվեցին: Կանայք իրար նայեցին ու հոգոց բաշեցին: Անցած երկու շաբաթվա տարածայնութեանն անհետացան, և նրանց սրտերը նորից լցվեցին անկեղծ սիրով, որ միշտ տածել էին իրար հանդեպ: Դժվար էր հավատալ, թե երբևէ մտքներովն անցել էր խախտել այն բարեկամութիւնը, որը միշտ այդքան բավարարութեան էր բերել նրանց: Կարտոֆիլը կերան վերջացրին:

— Տեսնես շոկուզով էլիերներ ունե՞ն,— ասաց Բեաթրիսը:

— Իհարկե, ունեն:

Դե իհարկե, ունեին: Ֆրենկը մեկը միանգամից խոթեց իր հսկա բերանը, կուլ տվեց և մի ուրիշը ճանկեց, սակայն, մինչ այս մեկը կուտեր, նայեց ընկերուհիներին և հրեշավոր կինայի սիրտը մի վրեժխնդիր դաշույն խրեց:

— Ինչ ուզում եք ասեք, բայց ճիշտն այն է, որ նա ըստուրիչ խաղացող էր, չէ՞:

— Նողկալի,— համաձայնեց էրոտն:

Բայց Բեաթրիսը հանկարծ մտածեց, որ կուզեր ձվակարկանդակ ուտել:

* Հեղինակը էստոնիով ազգագրված միջերոտ է անում Շեքսպիրի «Մակբեթ» սգբերգությունից:

ԵՆՆՐ



քերն իր ամուսնության ամենաառաջին օրից. նկարները, որ հարազատ էին եղել նրան շուրջ երեսուն տարի, և հանձնել էր իրեն դեկորատոր-մասնագետի ձեռքը: Միսիս Քատրերի հյուրասենյակում չէր մնացել ոչ մի բան, որի հետ տիրուհին առնչություն ունենար, կամ որի հետ որևէ զգացմունք լիներ կապած: Այդ օրը նա ինձ հրավիրել էր, որ տեսնեի մոզայիկ շքեղությունը, որի մեջ այժմ ապրում էր ինքը: Ամեն բան, որ կարող էր անտիկ տեսք ստանալ, ստացել էր, իսկ ինչ որ անտիկ տեսք չէր ստացել՝ ներկվել էր: Այժմ մի բան չէր սազում, բայց ամեն բան ներդաշնակում էր:

— Հիշո՞ւմ եք հյուրասենյակի այն ծիծաղելի կահույքը, որ առաջ ունեի, — հարցրեց միսիս Քատրերը:

Վարագույրները թանկարժեք էին, սակայն անպատշաճ, բազմաթիվ ծածկված էր իտալական դիպակով, տակիս ամբողջ պատված էր ասեղնագործ նախշերով: Սենյակը գեղեցիկ էր, հարուստ, բայց ոչ անճաշակ և յուրօրինակ, բայց ոչ պատշաճագարդ, և, այնուամենայնիվ, աչքիս ինչ-որ բան պակասում էր, ու մինչ շրթունքներս դո՛վաբանում էին, ինքս ինձ հարց էի տալիս, թե ինչո՞ւ էի այնքան գերագասում արհամարհված հին կահույքի երեսի շիթը, Վիկտորյան ոճի ջրանկարները, որ գիտեի այնքան վաղուց և արտաոտոց դրեզդենյան հախճապակին, որ զարդարում էր բուխարու վրայի դարակիր: Միտք էի անում, թե ի՞նչ էր արդյոք ինձ պակասում այս սենյակներում, որ դեկորատորները գուցե էին իրենց շահարեր փոփոխանությունը: Հոգի՞ գուցե: Սակայն միսիս Քատրերն իր շուրջն էր նայում երջանիկ հայացքով:

— Զե՞ք հավանում իմ այերաստան լամպերը: — հարցրեց նա: — Այնքան մեղմ լույս են արձակում:

— Անձամբ ես գերադասում եմ, երբ շուրջս բան է երկվում, — ծպտացի ես:

— Ախր այնքան դժվար է միաժամանակ հաշտեցնել, որ շատ լավ չիրևա: — ծիծաղեց միսիս Քատրերը:

Ես պատկերացում անզամ լուռնեի, թե նա բանի ատրեկան է: Երբ դեռ շատ երիտասարդ էի, միսիս Քատրերն արդեն ամուսնացած կին էր՝ ինձնից ուժաղին մեծ, բայց արևմ նա ինձ հետ իր հասակակցի պես էր վարվում: Միշտ կրկնում էր, որ գաղտնի չի պահում իր տարիքը՝ քուստուն ատրեկան, իսկ հետո ավելացնում էր մպտալով, թե կունայր սովորաբար հինգ տարի պա-

Էս շատ լավ հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ տեսա Զեյն Փատրերին: Միայն ու միայն այն պատճառով, որ այդ հանդիպման բոլոր մանրամասները թարմ են գիտումս, ես չեմ կասկածում հիշողությանս վրա, բանգի մի հետադարձ հալացք գցելով, պեսք է խոստովանեմ, դժվար է հավատալ, թե այն մի աներևակայելի կատակ չի արել հետս: Երբ էի Զինասանից Լոնդոն վերադարձել և նստած թեյ էի խմում միսիս Քատրերի հետ: Վերջերս միսիս Քատրերը համակվել էր տունը մեզադասավորելու ամենակուլ կրքով և իր սեռին հատուկ անդորությունը զահարել էր ամբողջը, որոնց վրա փափուկ ու հանգիստ նստել էր տարիներ շարունակ. սեղանները, պահարաններն ու զարդարանքները, որոնց հանդարտ հառել էր աչ-



կաս են ասում: Երբեք չէր թարցնում, որ ներկում է մազերը (շատ սիրուն շագանակագույն մազեր ունեւ՝ կարմրավուն երան-
հոյ) և ասում էր, թե այդպէս է վարվում, որովհետեւ նոր սպի-
տակել սկսող մազերը սոսկալի են: Հենց որ լրիվ սպիտակեն,
այլևս չի ներկի:

— Այդ ժամանակ կասեն, որ դեմքս շատ շահել է:

Մինչդեռ այն շայրված էր, ճիշտ է, չափի զգացումով, և
նրա աչքերն իրենց աշխուժութեան համար շատ էին պարտա-
կան արհեստական միջոցներին: Նա գեղեցիկ կին էր, նրբա-
ճաշակորեն հագնվում էր, և աչքաստրե լամպերի երկշտ
լույսի տակ իր ասած քառասունից մեծ չէր երևում:

— Ես միայն զարդասեղանիս առաջ եմ կարողանում դիմա-
նայ երեսուներկու մոմանոց էլեկտրական լամպի մերկ պայծա-
րութեանը, — ավելացրեց միսիս Քատրըրը ժպտուն ցինիզմով: —
Այնտեղ ես դրա միջոցով առաջինն եմ իմանում սոսկալի ճրշ-
մարտութունը և հենց դրա օգնութեամբ առաջին քայլերն եմ
անում դրութունը շտկելու:

Մենք մի լավ բամբասեցիք մեր ընդհանուր բարեկամների
մասին, և միսիս Քատրըրն ինձ հաղորդակից դարձրեց վերջին
ասեկոսներին: Իմ այս ու այնտեղ քաշած անվերջ նեղութուն-
ներից հետո շատ հաճելի էր նստել հարմարավետ բազկաթոռում՝
բուխարու վրա կրակի մոտ, թեյ խմել սքանչելի թելասպասքից՝
զրված սքանչելի սեղանի վրա և զրուցել այս հետաքրքիր, հմա-
լիչ կնոջ հետ: Նա հետո այնպէս էր վարվում, ասես տուն դար-
ձած մոլորյալ որդի լինեի. սիրալիք վերաբերմունք էր ցույց
տալիս: Միսիս Քատրըրը հպարտանում էր յուր ճաշկերույթնե-
րով, նա հոգ էր տանում, որ հյուրերը պատշաճ կերպով ընտր-
վեին, և անում էր դա ոչ պակաս ջանասիրութեամբ, քան գերա-
զանց ճաշատեսակներ պատփրելը: Քիչ մարդիկ կգտնվեին, որ
պատիվ չհամարեին այդ հանդեսներից մեկին հրավիրված լի-
նել: Այժմ տիկինը ճշտում էր որը և հարցնում ինձ, թե ում կու-
զեի իր մոտ հանդիպել:

— Բայց մի բան պիտի ձեզ ասեմ: Եթե Ջեյն Ֆատուրըրը դեռ
այստեղ լինի, ուրեմն պիտք է հետաձգեմ:

— Ո՞վ է Ջեյն Ֆատուրըրը, — հարցրեցի ես:

Միսիս Քատրըրը վշտորեն ժպտաց.

— Ջեյն Ֆատուրըրը իմ բաժին տանջանքն է:

— Օհո՛:

— Դուք հիշո՞ւմ եք, մինչև սենյակս վերադասավորելը՝ դաշ-
նամուրի վրա մի կնոջ նկար էր գրված՝ հագին պիրի թևերով,
մարմինը կիպ գրկած զգեստ, վզին՝ ոսկե մեղալիտն, մազերը
լայն ճակատից ետ սանրած, յոշտակ ականջներով ու տափակ
քթին դրած ակնոցով: Այ դա հենց Ջեյն Ֆատուրըրն էր:

— Դուք ձեր սենյակում շատ լուսանկարներ ունեիք այն
օրերին, երբ դեռ չէիք վերամարմնավորվիլ հոգեպես, — անորոշ
պատասխանեցի ես:

— Երբ դրանք հիշում եմ, մարմինս դող է պատում: Բոլորը
հավաքել, մի մեծ փաթեթ եմ սարքել ու պահել ձեզնահար-
կում:

— Լավ, իսկ ո՞վ է Ջեյն Ֆատուրըրը, — նորից հարցրեցի ես,
ժպտալով:

— Ես իմ տալն է: Ամուսնուս քույրն էր և ամուսնացավ
հյուսիսացի մի ֆարքիկատիրոջ հետ: Արդեն բանի տարի անց
է և շատ հարուստ:

— Իսկ ինչու՞ է ձեր բաժին տանջանքը:

— Նա պատկանելի է, նա անճաշակ է, նա զավառացի է,
ինձնից քրան տարի մեծ է երևում ու միանգամայն ի վիճակի
է ամեն մի պատահածի ասել, որ զարոցում իրար հետ ենք
սովորել: Նա ընտանեկան կապովածութեան շտեմված հակում-
ների ունի, և քանի որ իր միակ կենդանի ազգականն եմ, նվիր-
ված է ինձ: Երբ կոնգոն է գալիս, նրա մտքով անգամ չի անց-
նում, թե կարելի է ուրիշ տեղ մնալ, մտածում է, թե կվիրա-
վորի իմ զղացմունքները, և այցելում է ինձ երեք-չորս շա-
բաթով: Մենք նստում ենք այստեղ, և նա գործում է ու կար-
գում: Երբեմն պնդում է, թե պիտի տանի ինձ Քլարիջ՝ ճաշելու,
և նա ծեք ծիծաղելի հավաքարարի տեսք է ունենում, ու բոլոր
նրանք, ովքեր հատկապես շեմ ուզում ինձ նրա հետ տեսնեն,
նստած են լինում կողքի սեղանի շուրջ: Երբ տուն ենք գնում,
ասում է, թե շաւ, է սիրում ինձ աննշան բավականութուն պատ-
ճառելու: Նա ինձ համար իր ձեռքով թեյնիկի ծածկոցներ է գոր-
ծում, որոնք ստիպված օգտագործում եմ, երբ ինքն այստեղ է,
և էլի ուրիշ բաներ՝ անձեռոցիկներ, սփռոցներ...

Միսիս Քատրըրը դադար տվեց, որ շունչ քաշի:

— Ինձ թվում է, ձեզ պէս տակտի տեր կինն այդ իրավի-
ճակից էլք կարող էր գտնել:

— Հա, բայց հասկանու՞մ եք, ես հնարավորութուն չունեմ:

Նա այնքան անասելի բարի է: Ոսկի սիրտ ունի: Ինձ մասնու
շափ ձանձրացնում է, բայց ոչ մի դեպքում չեմ կարող թույլ
տալ, որ ինքը դա գգաս:

— Իսկ ե՞րբ է ժամանելու:

— Վազը:

Սակայն հազիվ էր միտիս թաուրքը հասցրել պատասխան
տալ, երբ դռնն զանկը հնչեց: Նախասենյակից թեթևակի իրար-
անցումի ձայներ լսվեցին, և մեկ թե երկու բուսկից ծառայա-
պետը մի տարիքավոր կնոջ ներս հրավիրեց:

— Միտիս Ֆաուլըրը, — հայտարարեց նա:

— Զե՛յն, — գուշեց միտիս Ֆաուլըրը, վեր թռչելով, — ես քեզ
այսօր չէի սպասում:

— Հենց նոր քո ծառայուհեքը նույն բանն ասաց ինձ: Ես
իմ նամակում հաստատ գրել եմ, որ այսօր եմ գալու:

Միտիս Ֆաուլըրը ուշքի եկավ:

— Դե լավ, դա կապ չունի: Շատ ուրախ եմ քեզ տեսնելու,
երբ էլ որ գաս: Բարեբախտաբար, այս երեկո անելու բան չու-
նեմ:

— Նեղություն չբաշխե ինձ համար: Ես կբավարարվեմ մի
հատ խաշած ձկով:

Թեթևակի ծամածուլթյունը մի վայրկյան ազավաղեց միտիս
Ֆաուլըրի գեղեցիկ դիմագծերը: Խաշած ձու՛:

— Օ՛, իմ կարծիքով մենք զբանից մի քիչ ավելի լավ բան
կճարենք:

Ես թաքուն բժժիծազ տվեցի, հիշելով, որ երկու տիկիները
հասակակիցներ են:

Միտիս Ֆաուլըրը հիսունհինգից ոչ պակաս էր երևում: Նա
բավական խոշոր կին էր՝ հագին սև լայնկող ծղոտե գլխարկ,
որից մի սև մետաքսե քող էր հասնում մինչև ուսերը, վերարկու,
որը շատ արտաոռց ձևով համատեղում էր անպատճառությունն
անճաշակության հետ, երկար սև զգեստ՝ այնպես փքված, սակե
տակից մի քանի ներքնազգեստ հագած լինելը, և հաստ ներ-
բաններով կոշիկներ: Ակնհայտորեն կարճատես էր, քանզի աշ-
խարհին նայում էր ոսկե շրջանակավոր մեծ ակնոցի միջով:

— Մի բավական թեյ կուզե՞ս, — հարցրեց միտիս Ֆաուլըրը:

— Եթե դա քեզ շատ նեղություն չի պատճառի: Ես վրայիցս
վերարկուս զցեմ:

Միտիս Ֆաուլըրը սկզբից հանեց իր սև ձեռնոցները, հետո

վերարկուն: Վզին մի հաստ ոսկե շղթա էր կախված՝ ոսկե մեծ
մեղալիոնով, որի մեջ, վստահ եմ, նրա հանգուցյալ ամուսնու
լուսանկարը պիտի լիներ: Հետո հանեց գլխարկը և խնամքով
չրեց ձեռնոցների ու վերարկուի կողքը՝ բազմոցի մի անկյու-
նում: Այդ հանդերձանքներն, անշուշտ, այնքան էլ չլին բռնում
միտիս Ֆաուլըրի վերափոխված հյուրասենյակի խոտաշունչ, բայց
և շքեղ գեղեցկության հետ: Ծարակուսում էի, թե միտիս Ֆաու-
լըրը որտեղի՞ց է ճաբել իր արտասովոր շորերը: Իրանք չին
չին, ու կտորն էլ թանկարժեք էր: Ապշել կարելի էր, մա-
ծելով, որ գերձակները շարունակում են տնայրիս բաներ կարել,
որոնք քառորդ դար է՝ ոչ ոք չի հագնում: Միտիս Ֆաուլըրի
սպիտակ մազերը շատ հասարակ էին սանրած, մեջտեղը բա-
ժանք էր արված, և ճակատն ու ակունջները ամբողջովին բաց
էին: Ակնհայտորեն մաշո Մարտիլի՝ մկրտոն անծանոթ էր այդ
մազերին: Այժմ միտիս Ֆաուլըրի աչքերը կանց առան թեյի սե-
զանին՝ Գեորգյան արձաթից թեյիկով և Ուսալբրյան հնամենի
հախճապակուց զավաթներով:

— Ի՞նչ ես արել այն թեյիկի ծածկույր, — քեզ տվեցի անց-
յալ գալուցս, Մերիթն, — հարցրեց նա: — Զե՞ս սգոտագրծում:

— Սգոտագրծում եմ, ամեն օր, Զե՛յն, — աշխատորեն պա-
տասխանեց միտիս Ֆաուլըրը: — Դժբախտաբար մի քանի օր
տուտջ գրա հետ մեծ անախորժություն պատահեց: Վատվեց:

— Բայց դրանից առաջ ավան էր վատվո՞ւ:

— Վախենում եմ, որ մեղ շատ անփութի՞մ համարես:

— Ոչինչ, տոսնձնապես բան չկա, — ժպտաց միտիս Ֆաու-
լըրը: — Ես ուրախությամբ նորը կպատրաստեմ քեզ համար:

Վազը կգնամ կիրքթիս և մետաքս կգնեմ:

Միտիս Ֆաուլըրը խիզախորեն պահպանեց դեմքի անփոքով
արտահայտությունը:

— Դիտես, ես արժանի չեմ: Զեր փոխերեցի կինը դրա
կարիքը չունի՞:

— Նրա համար ես արդեն սարքել եմ, — կենսուրախ ասաց
միտիս Ֆաուլըրը:

Երբ ժպտում էր, նկատեցի, որ ատամները սպիտակ են, մանր
և ուղիղ: Շատ գեղեցիկ էին: Եվ մայիտն էլ շատ քաղցր էր:

Սակայն արդեն վաղուց ժամանակն էր, որ տիկնոսնց երկու-
սով թողնեի, ուստի հրաժեշտ տվեցի:

Հաջորդ օրը վաղ առավոտյան միտիս Ֆաուլըրը դանդաճա-

րեց ինձ, և ես նրա ձայնից անմիջապես զգացի, որ շատ բարձր տրամադրութիւն մեջ է:

— Հրաշալի նորութիւն ունեմ ձեզ ասելու: Զեյնը պատրաստ-վում է ամուսնանալ:

— Զի կարող պատահի:

— Նրա փեսացուն այսօր երեկոյան գալու է ինձ մոտ ճաշի, որպէսզի ներկայանա, և ես ուզում եմ՝ դուք էլ դար:

— Այո, բայց ես արձեւորդ կլինեմ:

— Զեք լինի: Զեյնն ինքն առաջարկեց, որ ձեզ հրաշալիեմ մկեք, խնդրում եմ:

Նա ծիծաղից թուլանում էր:

— Ա՛յ է փեսացուն:

— Զգիտեմ: Ասում է, որ ճարտարագետ է: Պատկերացնո՞ւմ եք, թե Զեյնի ապագա ամուսինն ինչ տեսակ մարդ պիտի լինի: Ես անելիք չունեի և վստահ էի, որ ճաշկերույցը լավը կլինի:

Երբ տեղ հասա, միտիս թառուրը, որը հրաշալի տեսք ունէր իր համար մի քիչ շատ երիտասարդական զգեստի մեջ, մենակ էր:

— Զեյնը դբաղված է իր արտաքինին վերջին շտրիխները հարդարելով: Անճամբեր սպասում եմ, որ տեսներ նրան: Նա հուզմանքից գողում է: Ասում է, որ փեսայուն պաշտում է իրեն: Անունը Գիլբերթ է: Երբ խոսում է Գիլբերթի մասին, ձայնն այնքան ծիծաղելի ու գողողուն է դառնում: Հագիվ եմ ինձ զսպում, որ չծիծաղեմ:

— Տեսնես ի՞նչ տեսք ունի:

— Ա՛հ, ես կարող եմ հաստատ ասել: Երևի շատ խոշոր ու մեծ, ճաղատ գլխով, հսկա փորիկից մի հսկա ոսկե շղթա կախված: Լայն, շաղ, խնամքով սափրած կարմիր երես ու գոռգոռացող ձայն:

Ներս եկավ միտիս ծառայորր: Հագին շատ ձիգ սև մետաքսե զղեսա էր՝ երկար ու լայն քղանդառուտով: Վզի մոտ ամոթխած սրտածն կտրվածք կար, իսկ թևերը հասնում էին արմունկներին: Վզին՝ աղամանդե մանյակ՝ արծաթի ազուցարաններով: Զևարթին մի գույգ երկար սև ձեռնոցներ էին և ջայլամի փետուրներից պատրաստված հովհար: Նա կարողացել էր (ինչ այնքան քերթին է հաջողվում) երևալ հենց այնպիսին, ինչպիսին կարու Քույր Նյուսիսից տպանովված ֆաբրիկատորոջ այրուց, ուրիշ ոչ մի բանի տեղ նրան զննել հնարավոր չէր:

— Դու իրոք շատ սիրուն վիզ ունես, Զեյն,— բարեսրտորին ժպտաց միտիս թառուրը:

Իսկապես, նրա վիզը, համեմատած հողմահարված գեմբին, շշմելու աստիճան ջահել էր: Հարթ էր, առանց կնճիտների, և մաշկը սպիտակ էր: Ես ման նկատեցի, որ միտիս ծառայորը գլուխը շատ ուղիղ և գեղեցիկ է պահում:

— Մերիւրը ձեզ նորութիւնն ասե՞լ է,— հարցրեց նա, ետ կողմը շրջելով ու ժպտալով իր հմայիչ ժպիտով այնպես, ասես մենք արդեն վաղեմի բարեկամներ լինեինք:

— Շնորհավորում եմ ձեզ,— ասացի ես:

— Սպասեցեք շնորհավորել, միշտ տեսեք իմ երիտասարդին:

— Զափից գուրս հաճելի է, երբ նրան երիտասարդ ես կոչում,— ժպտաց միտիս թառուրը:

Միտիս ծառայորի աչքերն անշուշտ փայլփայցին անհեթեթ սկիւնցի Ետեում:

— Մի սպասեք, թե շատ ծեր կլինի: Հո չէ՞ք ուզի, որ ամուսնանալի որեէ դառամյալ ծեր ջինտլմենի հետ՝ մի սոքոջ գերեզմանում:

Սա միակ զգուշացումն էր, որ նա մեզ արեց: Այլևս քննարկման ժամանակ չկար, քանզի ծառայապետը թափով բացեց դուռը և բարձրաձայն հայտարարեց.

— Միտս Գիլբերթն անփիւրը:

Սենյակ մտավ մի երիտասարդ, հագին շատ լավ կարված սմոկինդ: Նա վտիտ էր, ոչ այնքան բարձրահասակ, բայց գուլնի լեթեակի ալիքավոր մազերով, մաքուր սափրված, կապուտալյա: Առանձնապես գեղեցիկ չէր, սակայն հաճելի, գուրեկան գեմք ունէր: Տասը տարուց երեի կկնճուտվեր ու կդեղնէր, բայց հիմա՝ այդքան պատանի, նա թարմ էր, մաքուր և ծաղկուն տեսք ունէր: Քանզի նա անտարակույս քսանչորս տարեկանից մեծ չէր: Առաջին միտսը, որ գլխովս անցավ, այն էր, թե զա երևի Զեյն ծառայորի փեսացուի որդին է (չգիտեի, որ նա երեխաներ չունի) և եկել է ասելու, թե իր հայրը չի կարող գալ ճաշկերույցին՝ հողատապի հանկարծակի նոսրալի պատճառով: Բայց պատանու աչքերն անմիջապէս դարձան միտիս ծառայորին, նրա երեսը պայծառացավ, և զույգ ձևերն առաջ պարզած՝ նա մտտեցավ վերջինիս: Միտիս ծառայորը, զուսպ ժպտալ շտրիքներին, մեկնեց ի պատասխան յոր ձեռքը և շրջեց գետի իր հարսը:

— Սա է իմ երիտասարդը, Մե՛րիքն,— հայտարարեց նա Երիտասարդն առաջ պարզեց ձեռքը:

— Ղուտով եմ, որ կհավանեք ինձ, միսիս Քաուլըր,— ասաց նա:— Ձեյնն ինձ պատմել է, որ դուք իր միակ ազգականն եք աշխարհում:

Հետաքրքիր էր միսիս Քաուլըրի դեմքին նայելը: Ահա թե որտեղ թաքուն հիացմունքով ես վկա դարձա լավ դաստիարակության և սոցիալական սովորույթների կատաղի բախմանը կահացի բնական բնազդներին: Քանզի զարմանքը և շփոթությունը, որ նա մի պահ շարժեց թաքցնել, հապճեպորեն մի կողմ քաշվեցին, և դեմքը սիրալիք ու հյուրընկալ արտահայտություն ստացավ: Սակայն տիկինը, ակներևաբար, խոսելու համար բռնեց չէր կարողանում գտնել: Տարօրինակ չէր լինի, եթե Գիլբերթը որոշակի շփոթության մատնվեր, իսկ ես էլ շփոթեց դուրս զբաղված էի ծիծաղս զսպելով, որպեսզի մտածեի ու մի բան ասեի: Միսիս Ֆաուլըրն էր միակը, որ կատարյալ հանգրսուցություն էր պահպանում:

— Ես գիտեմ, որ կհավանեմ նրան, Մե՛րիքն: Եստ է սիրում համեղ ուտելիքներ:— Նա շրջվեց դեպի երիտասարդը:— Մերիքնի ճաշկերույթները շատ հայտնի են:

— Գիտեմ,— լուսաճաճանչ ժպիտը դեմքին՝ պատասխան ավելց սա:

Միսիս Քաուլըրը հապճեպ ինչ-որ բան քրթմնշաց, և մենք գնացինք ներքև՝ ճաշասենյակ: Երբեք չեմ մոռանա այդ հանդեսի արտասովոր կոմիզմը: Միսիս Քաուլըրը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ՝ այդ երկուսն իր գլխին մի անհամ կատակ են խաղում, թե՞ Ձեյնը, կանխամտածված կերպով իր փեսացուի տարիքը թաքցնելով, ուղև է իրեն հիմար վիճակի մեջ գնել: Բայց այն օրերին Ձեյնը երբեք չէր կատակում և անընդունակ էր օրեկ թունոտ բան անելու: Միսիս Քաուլըրն ապշած էր. չգալնացած ու շվարած: Սակայն վերագտել էր ինքնա տիրապետունք և ոչ մի գնով չէր կարող մոռանալ՝ ինքը անթերի տանախրուհի է, և իր պարտքն է, որ երեկոն լավ անցնի: Միսիս Քաուլըրն աշխույժ զրույց էր վարում, բայց ես չգիտեմ՝ Գիլբերթն նեփիլըրը ասեա՞վ արդո՞ք, թե ինչ մտալլ ու վրեժխրեցիք ին նրա աչքերը՝ իրեն հառած սիրալիրության դիմակի ետև: Միսիս Քաուլըրն ուսումնասիրում էր նրան: Փորձում էր գուշակի նրա հոգու գազանիքը: Տեսնում էի, որ վրդովված է, սրով-

հետև այտերը կարմրաներկի տակ բոցկլտում էին զայրույթի շառագույնից:

— Մե՛րիքն, շատ լավ գուշն ունես,— ասաց Ձեյնը, բարեսրտորեն նրան նայելով իր հսկայական կլոր ակնոցի միջից:

— Ետապում էի հագնվել: Երևի կարմրաներկ շատ եմ քսել:

— Ա՛հ, ուրեմն դա կարմրաներկ է: Ես կարծում էի՝ քնական է: Այլապես չէի խոսի այդ մասին:— Նա թույլ ու ամոթխած մի ժպիտ պարզեց Գիլբերթին:— Գիտե՞ս, ես ու Մերիքնը զպրոցում միասին ենք սովորել: Վրաներս նայելիս մտքովդ չի անցնի, չէ՞: Բայց ես, իհարկե, շատ հանդիստ կլանք եմ վարել:

Չգիտեմ, թե միսիս Ֆաուլըրն իր այդ ակնարկով ինչ նկատի ուներ, համարյա անհավատալի էր, թե դա արվեց միանգամայն պարզամտորեն, ինչևիցե, այդ բռնորդ միսիս Քաուլըրին այնպիսի կատաղության հասցրին, որ նա մի կողմ շարտեց յուր սեփական խոցված ինքնասիրությունը: Եվ ուրախ ժպտալով ասաց.

— Է՛հ, Ձեյն, ոչ ես, ոչ էլ դու այլևս հիսուն տարեկան չենք լինի:

Եթե այդ դիտողությունն արվեց այրուն շփոթության մատնելու համար, ապա ավաղ:

— Գիլբերթն ասել է, որ հանուն իրեն շխոստովանեմ, թե բառասունինից մեծ եմ,— մեղմորեն պատասխանեց նա:

Միսիս Քաուլըրի ձեռքերը թեթևակի դողացին, բայց նա իրեն չկորցրեց:

— Ձեր միշն, իհարկե, որոշակի տարիքային անհամապատասխանություն կա,— ժպտաց նա:

— Քանչոթ տարի,— ասաց Ձեյնը:— Դու կարծում ես, դա չափից ավելի՞ է: Գիլբերթն ասում է, որ ես տարիքիցս շատ փոքր եմ երևում: Ես քեզ ասել եմ, որ չեմ ուզում ամուսնանալ այնպիսի մարդու հետ, որի մի ոտքը գերեզմանում է:

Ես չէի կարող շփոթվել: Գիլբերթը միացավ ինձ: Նրա ծիծաղն անկեղծ էր ու տղայական: Այնպիսի տպավորություն էր ստեղծվում, թե Ձեյնի ամեն մի բառը բավականություն է պատճառում նրան: Բայց միսիս Քաուլըրի համբերությունը հատնելու վրա էր, և ես վախենում էի, եթե լարվածությունը մի կերպ չիցքաթափվի, նա շուտով կմոռանա, որ ինքը բարձր հասարակության կին է: Ես փորձեցի գրությունը փրկել:

— Երևի շատ եք զբաղված ձեզ օժիտ գնելով,— ասացի:

— Ոչ, ես ուզում եմ ամեն ինչ կարել տալ կիկերփուլի իմ ղերմակին, որի մոտ եմ պատվիրում շորերս՝ սկսած առաջին ամուսնաօթյանս օրերից: Բայց Գիլբերթը թույլ չի տալիս: Նա շատ հմուտ է ե, իհարկե, հիանալի ճաշակ ունի:

Ջեյնը Գիլբերթին նայեց սիրահարված ժպիտով, այնքան համեստորեն, առես տասնյոթ տարեկան աղջնակ լինեք:

Միսիս Քատլըրը շփարի տակ անասելիորեն զոնսավեց:

— Մենք մեզրամսին Իտալիա ենք գնում: Գիլբերթը երբևէ հնարավորություն չի ունեցել վերածննդի ճարտարապետությունն ուսումնասիրելու, իսկ ճարտարապետն անպայման ամեն ինչ իր սլշոտի պիտի տեսնի: Ճանապարհին Փարիզում կանգ կառնենք ու ինչ համար շրեթ կգնենք:

— Երկա՞ր եր մտադիր բացակայել:

— Գիլբերթին իր աշխատավայրում պայմանավորվել է, որ վեց ամիս կբացակայի: Նրա համար դա այնքա՞ն մեծ բան կլինի: Ա՛յո, երբևէ երկու շաբաթից ավել արձակուրդ չի ունեցել:

— Ինչո՞ւ,— հարցրեց միսիս Քատլըրը սառցային ձայնով, կամօրի ոչ մի լարում չէր կարող հայեցնել այն:

— Դրան չի ունեցել ինդհր:

— Ա՛յո,— ասաց միսիս Քատլըրը՝ իր բացականչություն մեջ բազմաթիվ երանգներ գնելով:

Մուրմը մատուցվեց, և տիկիները վերև գնացին: Գիլբերթն ու ես սիսեցինք անկապ-անկապ խոսել, ինչպես սովորաբար տղա-մարդիկ են գրուցում, երբ իրար ասելու բան չունեն. սակայն երկու բոպեից ծառայուպետը մի երկտող բերեց ինձ: Այն դրված էր միսիս Քատլըրի ձեռքով:

«Շուտ վերև եկե՛ք, իսկ հետո ինչխան հնարավոր է՝ արագ հեռացե՛ք: Խուս տաբե՛ք ձեզ հետ: Եթե հենց հիմա այս հարցը Ձե՛նի հետ չպարզե՛մ, կարված կստանամ»:

Ես շտապ ասեցի:

— Միսիս Քատլըրը գլխացավ ունի և ուզում է պառկել: Ինձ թվում է, եթե դուք գեմ չեք, լավ կանենք թողնենք գնանք:

— Իհարկե,— պատասխանեց նա:

Մենք վերև բարձրացանք և հինգ բոպեից դրսում էինք: Ես տաքսի կանգնեցրի և երիտասարդին առաջարկեցի նստել:

— Չէ, շնորհակալ եմ,— ասաց նա,— մի քիչ կբալլեմ և անկյունից ավտոբուս կնստեմ:

Հենց որ դրսի դուռը մեր հունից փակվեց, միսիս Քատլըրը գրոհի անցավ:

— Ջեյն, գժվե՛լ ես,— բղավեց նա:

— Ոչ ավելի, բան այն բուրբ մարդիկ, որոնք գժանցում չեն ապրում,— մեղմորեն պատասխանեց նա:

— Գուցե թու՞յլ տաս տեղեկանալ, թե ինչու ես ամուսնանում այս երիտասարդի հետ,— հարցրեց միսիս Քատլըրն անհղաշունչ բազաբավարությամբ:

— Մասամբ, որովհետե նա «չէ» բառը չի հասկանում: Հինգ անգամ ինձ առաջարկություն է արել: Արդեն կարգին հոգնել եմ մերժելուց:

— Եվ ի՞նչ ես կարծում, ինչու՞ է այդքան ձգտում քեզ հետ ամուսնանալ:

— Նրա համար հետաքրքիր է ինձ հետ:

Միսիս Քատլըրը մի նեղությամբ բացականչություն արեց:

— Նա անազնիվ ստահակի մեկն է: Քիչ էր մնում, հենց իր երեսին ասելի:

— Դու սխալ կլինեիր, բացի այդ, դա բազաբավարի չէր լինի:

— Նա մի գրոշ անգամ չունի, իսկ դու հարուստ ես: Հո տրեցումից այնքան չե՞ս հիմարացել, որ շտեմես. նա փողի համար է հետո ամուսնանում:

Ջեյնը կատարելապես անվրդով մնաց: Նա ոտաբույսած դիտում էր իր հարսի վրդովմունքը:

— Գիտես, չե՞մ կարծում,— պատասխանեց նա:— Ինձ թվում է, ես դուր եմ գայիս նրան:

— Ջեյն, դու ձեք կին ես:

— Ես քո տարիքին եմ, Մե՛րիքն,— ժշտուց նա:

— Ես միշտ հետեւ եմ ինձ: Տարիքիցս շատ փոքր եմ պահպանվել: Ոչ որ չի ասի, թե բառասունից մեծ եմ: Բայց անգամ ե՞ս չէի երազի ինձնից քսուն տարով փոքր աղաչի հետ ամուսնանալ:

— Քսանյոթ,— ուղղեց Ջեյնը:

— Չլինի՞ ուզում ես ինձ ստել, թե հավատում ես, որ մի

քահել աղամարդ կարող է անտարբեր շինել իր մոր տարիքի կնոջ նկատմամբ:

— Ես շատ տարիներ գյուղում եմ ապրել: Մարդկային բնու-թյան հետ շատ բաներ կան կապված, որ չգիտեմ: Ասում են, մի մարդ կա, անունը Ֆրոյդ, ավստրիացի է կարծեմ...

Բայց միտիս Քատրը շատ անբաղաքավարի կերպով ընդ-հատեց նրան:

— Միծաղս մի բեր, Ջեյն, Դա այնքան անվայել է: Այն-քան անհարթ: Միշտ կարծել եմ, թե խելամիտ կին էս: Ումից-ումից, բայց բնկից չէի սպասի, որ տղայի սիրահարվես:

— Բայց ես սիրահարված չեմ: Ես նրան ասել եմ այդ մա-սին: Նա ինձ, իհարկե, շատ է գուր գալիս, թե չէ հետն ամու-նացողը չէի: Ես ճիշտ համարեցի աղնվորեն ասել նրան իմ զգացմունքների մասին:

Միտիս Քատրը շունչ կարվեց: Արյունը խփեց գլխին, և շնչառությունը զովարացավ: Ջեյնի տակ հովհար չկար, բայց նա ճանկեց երեկոյան լրագիրը և թափով սկսեց իրեն հով անել:

— Եթե սիրահարված չես, ինչու՞ ես ուզում հետն ամու-նանալ:

— Ես շատ երկար այրի եմ եղել և շատ հանդարտ կյանք վարել: Միտիս փոփոխություն է ուզում:

— Եթե հենց այնպես ես ամուսնանում, ինչու՞ քո տարիքի մարդ չես ընտրում:

— Ոչ մի իմ տարիքի մարդ ինձ հինգ անգամ առաջարկու-թյուն չի արել: Փաստորեն, ոչ մի իմ տարիքի մարդ ինձ ընդ-հանրապես առաջարկություն չի արել:

Ջեյնը բծիծաղ տվեց այս տուելիս: Դա վերջնականապես չվճեցրեց միտիս Քատրին:

— Մի՛ ծիծաղիր, Ջեյն: Ինձ մտ դա չի անցնի: Ջեմ հա-վատում, թե մտքումը ինքզ թեզ ճիշտ ես համարում: Դա աշա-վոր է:

Այս ամենը շափից ավերի էր, քրտասուքները ցուտեցին նրա աչքերից: Միտիս Քատրը գիտեր, որ իր տարիքում լաց լինելը ճակատագրական է, աչքերը քսանչորս ժամ ուռած կմնան, և ինքը սոսկալի տեսք կունենա: Սակայն ոչինչ չէր կարող անել: Հեկե-կում էլս: Ջեյնը կատարելապես անվրդով մնաց: Իր իտորո ապա-

կիների ետևից նայեց Մերիբենին և մտածկոտ ուղղեց սև մետաք-սե շորի փեշը:

— Ախր, դու սոսկալի դժբախտ կլինես,— հեծկտում էր միտիս Քատրը՝ զգուշ հարվածներով շորացնելով աչքերը, հու-սով, որ թերթերունքների սև ներկը չի լղոզվի:

— Գիտես, չեմ կարծում,— իր հանգիստ, մեղմ ձայնով պա-տասխանեց Ջեյնը՝ ասես ժպտար խոսքերի արանքից:— Մենք շատ մանրամասն խոսել ենք: Ես միշտ համարել եմ, որ ինձ հետ ապրելը հեշտ է: Կարծում եմ, որ Գիլբերթին շատ երջանիկ ու գոհ կգարձենեմ: Նա երբեք չի ունեցել մեկին, որը հոգ տանի իր մասին: Մենք լուրջ քննարկել ենք ամուսնություն հարցը: Եվ որոշել ենք, որ եթե մեզնից մեկնում էին ուզի վերստանալ իր ազատությունը, մյուսն այդ հարցում արդելք չի հանդիսանալ:

Միտիս Քատրըն արդեն բավականաչափ խելի էր եկել, որ-պեսզի կծու դիտողություն անի:

— Ինչքան գրամ է համոզել, որ դնես իր անունով:

— Ես ուզում էի նրա համար տարին մի հազար գնել, բայց նա լսել անգամ չի ուզում: Նա շատ վշտացավ, երբ լսեց առա-ջարկությունս: Ասում է, որ բավականաչափ վատակում է, որ-պեսզի բավարարի սեփական կարիքները:

— Նա ավելի խորամանկ է, քան ես կարծում էի,— խայթեց միտիս Քատրը:

Ջեյնը մի փոքր լռեց և ապա նայեց իր հարսին բարի, բայց վճռական հայացքով:

— Միրելիս, բոնը մի քիչ ուրիշ է,— ասաց նա:— Ախր դու երբեք առանձնապես այրի չես եղել, այնպես չէ՞:

Միտիս Քատրը նայեց Ջեյնին և թեթևակի շառագունեց: Նա իրեն մի քիչ վատ զգաց: Սակայն Ջեյնն, իհարկե, շափից դուրս պարզամիտ էր, որպեսզի ակնարկներ աներ: Միտիս Քա-տրըն իրեն հավաքեց:

— Շատ եմ ցավում, բայց պիտի գնամ քնելու,— հպարտ ասաց նա:— Մենք կշարունակենք մեր խոսակցությունը վաղն առավոտյան:

— Վախենում եմ, դա այնքան էլ հարմար չլինի, սիրելիս: Գիլբերթն ու ես վաղն առավոտյան գնում ենք մեր ամուսնու-թյունը գրանցելու:

Միտիս Քատրը վախեցած վեր կարկառեց ձեռքերը, բայց ոչինչ չզտավ ասելու:

Ամուսնութիւնը տեղի ունեցավ պետական գրասենյակում: Միսիս Քաուլըն ու ես վկաների էլիս: Գիլբերթը, հրաշալի կապույտ կոստյումը հագին, անմտութեան աստիճան ջահել էր երևում: Նա ակնհայտորեն նյարդայնանում էր: Այդ վայրկյանը փորձութիւն է ամեն մի տղամարդու համար: Բայց Ջեյնը վարձանալիորեն հանգիստ էր: Ըստ երևույթին, որպէս ժամանակակից կին, հաճախակի ամուսնանալի անսովոր բան չէր նրա համար: Միայն այտերի թեթև շառագոյնը միտք էր առաջացնում, թէ նրա անվրդովութեան ետև որոշ հուզմունք է թաքնված: Յանկացած կեող համար դա զգայացունց վայրկյան է: Նա շատ լայն, գորշ արծաթավուն դգեստ էր հագել, — դրա ձևվածքից ես աւմիջապէս ճանաչեցի լիվերփուլցի դերձակի ձեռքը (հավանաբար անբիծ վարքուբարքի տեր մի այրի), որը այսքան տարի շարունակ կարել էր Ջեյնի շորերը, — բայց, սեղի տալով իրազարձութեան անլրջութեանը, զայլամի փեռուրներով գարդարված լայնեզր գլխարկ էր դրել: Ոսկե շրջանակներով ակնոցը դրա հետ շատ ծիծաղաշարժ ձևով չէր համընկնում: Երբ արարողութիւնը վերջացավ, գրանցող պաշտօնյան (ինչ-որ տեղ, ըստ իս, շփարած՝ ամուսնացող զուգրի տարիքի տարբերութեանից) սեղմեց Ջեյնի ձեռքը, իսկ նորափեսան, թեթևակի շառագունելով, համբուրեց նրան: Միսիս Քաուլըն, հնազանդված, սակայն շահաւորված, համբուրեց նրան, իսկ հետո նորահարսը սպասողաբար ինձ նայեց: Ակներևարաբ պատշաճութիւնը պահանջում էր, որ ես էլ նրան համբուրեի: Ես համբուրեցի: Խոստովանում եմ, որ մի քիչ անհարմար էի զգում, երբ զուրս եկանք գրասենյակից ու անցանք անբանների կողքով, որոնք ցինիկաբար սայտում էին, որ տեսնեն նորապսակ զուգրերին, և թեթևացած զգացի, ետևելով միսիս Քաուլընի ավտոմեքենան: Ուղեորվեցինք Վիկտորիա կայարան, քանզի երջանիկ զուգրը ժամը երկուսի գնացքով Փարիզ էր մեկնում, և Ջեյնը պնդել էր, որ հարսանեկան նախաճաշ-ճաշկերույթը կայարանի ռեստորանում կայանա: Նա ասում էր, որ միշտ նյարդայնանում է, վախենալով գնացքից ուշանալ: Միսիս Քաուլըն, որին միայն ուժեղ քնտանեկան ըզգացմունքն էր մղել ներկա գտնվել, քիչ բան կարողացավ անել, որ հանդեսը լավ անցնի, նա ոչինչ չկերավ (ինչի համար նրան չեմ կարող մեղադրել, քանի որ ուտելիքը նողկալի էր, բացի այդ տանել չեմ կարող, երբ նախաճաշին շամպայն են խմում):

և խոսում էր բռնազբոսիկ ձայնով: Բայց Ջեյնը ճաշացուցակը բարեխղճորեն օգտագործեց:

— Ես միշտ համարել եմ, որ ճանապարհորդութեանից առաջ պետք է մի կուշտ ուտել, — ասաց նա:

Նորապսակներին ճանապարհեցինք, հետո միսիս Քաուլընի մեքենայով տուն գարձանք:

— Ինչքան կտեի, ըստ ձեզ, — հարցրեց նա: — Վեց ամի՞ս:

— Եկեք լավը հուսանք, — մպտացի ես:

— Անմիտ բաներ մի ասեք: Լավ չի կարող լինել: Զլինի՞ կարծում եք, թէ փողից բացի ուրիշ բանի համար է հետև ամուսնանում: Անկասկած, դա չի կարող երկար տևել: Ես միայն հուսով եմ, որ նա չի ստանա այնքան տառապանք, ինչքան որ վաստակել է:

Ես ծիծաղեցի: Այդ մեծահոգի խոսքերն այնպէս ամփոփեցին, որ իմ մեջ քիչ կասկածներ մնացին դրանց նշանակութեան վերաբերյալ:

— Ինչ արած, ի՞նչ երկար շտեի, կմխիթարվեք նրանով, որ կասեք՝ «Ես քեզ զգուշացնում էի»:

— Խոստանում եմ, որ երբեք դա չեմ անի:

— Այդ դեպքում կբաժարարվեք ինքներդ ձեզ շնորհավորելով, որ այնքան զուսպ եք, որ չեք ասում՝ «Ես քեզ զգուշացնում էի»:

— Նա ծեր է, անճաշակ ու ձանձրալի:

— Վստահ եք, թէ ձանձրալի է, — ասացի ես: — Ծիշտ է, շատ չի խոսում, բայց երբ մի բան է ասում, ապա շատ տեղիւր:

— Կյանքումս չեմ լսել, որ նա կատակի:

Երբ Գիլբերթն ու Ջեյնը մեղրամտից վերադարձան, ես նորից շեռավոր արևելք էի մեկնել և այս անգամ այնտեղ մնացի մտաերկու տարի: Միսիս Քաուլըն նամակի լավ ընկեր չէր, և ես, թեև ժամանակ առ ժամանակ բացիկներ էի ուղարկում նրան, պատասխան չէի ստանում: Սակայն կոնգոն վերադառնալուցս մի շարաթ շանցած հանդիպեցի հետը, մի տեղ ճաշի էի հրապիրված, և նա կողքս էր նստած: Դա մի հսկայական հանգես էր, — «Թիվ ու համար մեզ չկար»* . — և, ուշ տեղ հասնելով, ես այնքան շփոթվեցի մարդկանց բազմութեանից, որ երկար չէի

* հատված մանկական բանաստեղծությունից

կարողանում հասկանալ, թե ծանոթներիցս ով կա: Բայց երբ նստեցինք, սեղանի շուրջ մի հայացք նետելով տեսա, որ հյուրերից շատերը հասարակությանը լավ հայտնի են ամսագրերում ու թերթերում տպված իրենց լուսանկարներից: Տանտիրուհին թուլութուն ուներ հանրահայտ հեղինակությունների նկատմամբ, իսկ այդ օրվա հավաքածուն արտակարգ ընտիր էր: Երբ միսիս Քաուլերն ու ես արդեն փոխանակել էինք այն մի քանի ձևական նախազատությունները, որ ասում են երկու-երեք տարի իրար շտեմած մարդիկ, ես հարցրեցի Ջեյնի մասին:

— Եստ լավ է,— բավական չոր ասաց միսիս Քաուլերը:

— Ամուսնությունը հաջող դուրս եկավ:

Միսիս Քաուլերը մի փոքր դադար տվեց, որպեսզի դիմացի պնակից աղը դրած նուշ վերցնի:

— Կարծես թե բավական հաջող:

— Ուրեմն, դուք սխալվում էիք:

— Ես ասել եմ, որ դա շատ չի տեխ, և կրկնում եմ՝ դա շատ չի տեխ: Դա դեմ է մարդկային բնությանը:

— Նա երջանի՞կ է:

— Երկուսն էլ երջանիկ են:

— Երևի հետները շատ շեք տեսնվում:

— Սկզբում շատ էի տեսնում: Բայց հիմա...— Միսիս Քաուլերը մի թևի ծամածոնեց շուրթերը:— Ջեյնը շատ է մեծամտա-նում:

— Ի՞նչ եք ուզում դրանով ասել,— ծիծաղեցի ես:

— Պիտի ասեմ ձեզ, որ նա այսօր այստեղ է:

Ես շշմել էի: Նորից շուրջս նայեցի: Մեր տանտիրուհին ուրախ ու դժարճասեր կին էր, սակայն մտքովս չէր անցնի, թե նա կաթող էր մի այսպիսի ճաշկերույթի հրավիրել ինչ-որ կասկածելի ճարտարապետի ծեղ ու անճաշակ կնոջը: Միսիս Քաուլերը նկատեց իմ շփոթմունքը և այնքան սրատես էր, որ գուշակեց մըտքերս: Նա ժպտաց անուրախ:

— Նայեցեք տանտիրոջ ձախ կողմը:

Ես նայեցի: Որքան էլ տարօրինակ է, այնտեղ նստած կինն իր մտահնար արտաքինով գրավել էր ուշադրությունս լեփ-լեցուն հյուրասենյակը մտնելուս պես: Ինձ թվացել էր, թե կնոջ աչքերում ինչ-որ կայծ փայլեց՝ ասես ճանաչեց ինձ, բայց համոզված էի, որ երբեք նախկինում չեմ հանդիպել նրան: Նա երիտասարդ չէր, քանզի մազերը մոխրագույն էին. դրանք կարճ

կտրված էին և բարեձև գլխի շուրջ խոպոպված էին հաստ գանգուրներով: Կինը ջահել երևալու փորձ չէր անում՝ նա աչքի էր զարնում ամբողջի մեջ, քանի որ ո՛չ շրթներկ էր օգտագործում, ո՛չ սուսը, ո՛չ էլ դիմափոշի: Դեմքը, որ առանձնապես գեղեցիկ չէր, կարմիր էր ու հողմահարված, բայց որովհետև ոչ մի արհեստական միջոցի հետք չէր կրում, շատ հաճելի բնականություն ուներ: Այն արտասովոր կերպով հակադրվում էր ուսերի սպիտակությանը: Իսկ ուսերն իրոք շքնաղ էին: Երեսնամյա կինը կհպարտանար դրանցով: Բայց զգեստը շատ զարմանալի էր: Ինձ հաճախ չէր բախտ վիճակվել այդքան հանդուգն բան տեսնել: Լայն դեկոլտեով, կարճ փեշով (որ մոդայիկ էր այդ ժամանակ)՝ վրան ղեղին ու սև շերտեր. դա ավելի շուտ դիմակահանդեսի զգեստ էր հիշեցնում և, այսուհանդերձ, այնքան էր սազում նրան, որ թեև ուրիշի վրա վայրի կլիներ, նրա հագին շտեսնված պարզ էր, ինչպես ամեն բնական բան: Եվ լրացնելու համար տպավորությունը արտառոցի, որի մեջ ոչինչ կեղծ չէր, և արտասովորի, որի մեջ ոչինչ ցուցադրական չէր, աչքին մենակեց էր դրել, կապված լայն սև ժապավենաթելով:

— Հո չե՞ք ուզում ասել, թե դա է ձեր տալը,— խոր շունչ քաշեցի ես:

— Դա Ջեյն Նեյթիլերն է,— սառցային ձայնով ասաց միսիս Քաուլերը:

Այդ րոպեին Ջեյնը խոսում էր: Տանտերը սպասողաբար ժպտալով, նրա կողմն էր շրջվել: Մի ճաղատավուն սպիտակահեր տղամարդ՝ սուր, խելացի դեմքով, նստած նրա ձախ կողմում, անհամբեր առաջ էր թեքվել, իսկ դիմացը. նստած ամուսնական զույգը խոսակցությունը դադարեցնելով, ուշադիր լսում էր: Ջեյնն ասածը վերջացրեց, ու հանկարծ նրանք բոլորն անսպասելիորեն ետ ընկան իրենց աթոռներին, և պայթեց հոմեքական բրբբիջը: Սեղանի այն կողմից մի տղամարդ դիմեց միսիս Քաուլերին (հանձին նրա ես ճանաչեցի հայտնի պետական գործիչն):

— Ձեր տալը մի նոր կատակ է արել, միսիս Քաուլեր,— ասաց նա:

Միսիս Քաուլերը ժպտաց:

— Ուղղակի անզին է, այնպես չէ՞:

— Թողեք մի լավ կում շամպայն խմեմ, իսկ հետո, աստծո սիրուն, ամեն ինչ պատմեք ինձ,— ասացի ես:

Ինչպես իմացա, դա տյուզես է եղիլ: Մեղրամսի սկզբին Գիւրբըթը Ջեյնին տարել է մի շաբաթ փորձիչան դերձակիների մոտ, և չի առարկել, որ սա իր սրտի ուզածով մի բունի ձեռք շոր գնէ, բայց միաժամանակ համագել է, որ մի երկու զգեստ էլ իր ձեռածով կարի: Պարզվեց, որ նա այդ տեսակ գործի տաղանդ ունի: Նախ մի ժիր ֆրանսիացի սպասուհի վարձեց: Ջեյնը նախկինում երբեք այդպիսի բան չէր ունեցել: Նա ինքն էր անում իր մանր կարկատերները, իսկ ելր կարիք էր ունենում հագնվելու և իրեն կարգի բերելու, սովորություն ուներ զանգնել կանչել աղանձուն: Գիւրբըթի հնարած զգեստները շատ էին տարբերվում այն ամենից, որ Ջեյնն առաջ էր հագնում, բայց Գիւրբըթը զգուշանում էր միանգամից շատ հեռուն գնալ և հաճույք էր դրում համոզելուց,— թեև ոչ առանց դժվարության,— որ նա գերադասի իր ձեռած շորերը մյուսներից: Իհարկե, Ջեյնը չէր կարող դրանք հագնել իր սովորական բազմահատար ներքնաշոր-չաղգեստների հետ, և նա հրաժարվեց դրանցից՝ ճիշտ է, մի քանի անձ ընկերներ ունենալուց հետո:

— Հիմա նա, ձեր թույլտվութեամբ,— փոխկացնեցով ի նշան անխաբախտութեան, ասաց միսիս Քաուլըրը,— մետաքսե շապիկից բացի ոչինչ չի հագնում: Զարմանում եմ, թե այդ տարիքում ցրտից ինչպես չի մեռնում:

Գիւրբըթը և ֆրանսիացի սպասուհին սովորեցրին, թե ինչպես կրի հագուստները, և, բավական անպասելիորեն, նա շատ ընդունակ աշակերտ դուրս եկավ: Ֆրանսուհին զմայլված էր մաշամի թևերով և ուսերով: Ենթադրութեան էր այդպիսի հրաշքն ի ցույց չգնելը:

— Մի քիչ սպասիր, Ալֆոնսինա,— ասում էր Գիւրբըթը:— Մյուս զգեստները, որ մաշամի համար ձեռնու եմ, ամեն ինչ կրնոգրկեն:

Ակնոցն անշուշտ անավոր էր: Բակըշորջան ակնոցով ոչ ոք էլ լավ տեսք չէր ունենա: Գիւրբըթը փորձեց կրիայի պատշանից պատրաստված ակնոց: Հետո գլուխն օրորեց:

— Ձահել աղջկա համար լավ կլինի: Բայց դու ակնոց կրելու համար շատ մեծ ես, Էն՛ջն:— Հանկարծ նա միտք հղացավ:— Մո՛ղր Գեորգ, գտա՛: Պետք է մենակնոց գնել:

— Օ՛, Գիւրբըթ, չեմ կարողանա:

Ջեյնը նայեց Գիւրբըթին և վերջինիս հուզմունքը՝ արվեստագետի հուզմունքը, ստիպեց նրան ժպտալ: Այնքան քաղցր

էր այդ ընկերն, որ Ջեյնը կամեցավ իր ուժերի սահմաններում ամեն բան անել՝ նրան գոհացնելու համար:

— Ես կփորձեմ:

Երբ գնացին օղտիկայի խանութ և, հարմար չափան ընտրելուց հետո Ջեյնն անհոգորեն աչքին դրեց մենակնոցը, Գիւրբըթը ձեռքերն իրար զարկեց: Հենց այդտեղ, ապշած վաճառողի աչքի առաջ, նա համբուրեց իր կնոջ այտերը:

— Հիանալի է,— գոռաց նա:

Այդպիսով նրանք ուղեորվեցին Իտալիա և մի քանի երջանիկ ամիս անցկացրին՝ Վերածննդի և բարոկկոյի ճարտարապետութեանն ուսումնասիրելով: Ջեյնը ոչ միայն սովորեց իր փոխված արտաքինին, այլև զգաց, որ սկսում է հավանել այն Սկզբից մի քիչ ամառում էր, երբ հյուրանոցում սեստորան էր մշտնում, և մարդիկ շրջվում ու հայացքները հատում էին իրար,— առաջներում ոչ ոք աչքի պոչով անգամ չէր նայել նրան,— սակայն շուտով տեսավ, որ այդ զգացումն անգուր չէ: Տիկնայք մոտենում էին Ջեյնին ու հարցնում, թե որտեղի՞ց է ճարտար իր շորերը:

— Հավանու՞մ եք,— համեստորեն պատասխանում էր նա:— Ամուսինս է ձեռն ինձ համար:

— Եթե դեմ չէիք լինի, կուզեի արտագրել ձեր:

Ջեյնն, իհարկե, շատ տարիներ անվրդով կյանք էր վարել. բայց բուրբուրով էլ զուրկ չէր յուր սեռին հատուկ նորմալ բնազդներից: Նա պատրաստ պատասխան ուներ:

— Անչափ ցավում եմ, բայց ամուսինս շատ նախանձախնդր է և լսել անգամ չի ուզում, որ մեկնում եմ իմ զգեստն արտագրի: Նա ուզում է, որ ես եզակի լինեմ:

Ջեյնին թվում էր, թե մարդիկ սխալ ծիծաղեն այս խոսքերը լսելիս, սակայն ոչ, նրանք պարզապես պատասխանում էին.

— Հա, իհարկե, ես շատ լավ հասկանում եմ: Դուք **Ընեց** եզակի եք:

Բայց Ջեյնը տեսնում էր, որ նրանք մտքում են պահում որոշ բաներ, և ինչ-ինչ պատճառներով դա նրա մոտ սրտի դող էր առաջ բերում: Փանգի չէր կարողանում հասկանալ, թե ինչու են բուրբն ուզում իր հագածն ընդօրինակել, երբ ինքը կյանքում առաջին անգամ չի հագնում այն, ինչ բուրբը:

— Գիւրբըթ,— մի օր իր համար լափազանց կտրուկ ասաց

նա, — հաջորդ անդամ երբ ինձ շորեր կձևես, կուզեմ այնպիսի բաներ ձևես, որ մարդիկ շկարողանան արտագրել:

— Միակ հնարը այնպիսի բաներ ձևելն է, որոնք միայն դու կարող ես հագնել:

— Չե՞ս կարող անել:

— Կարող եմ, եթե դու էլ ինձ համար մի բան անես:

— Ի՞նչ:

— Մազերդ կտրես:

Այս անգամ Ջեյնը (երևի դա առաջին դեպքն էր նրանց ամուսնութեան ընթացքում) համառոտ նրա մազերը երկար էին առ խիստ, և նա աղջիկ ժամանակ շատ էր հպարտանում դրանցով, այդ մազերը կտրելը շատ կարուկ քայլ կլիներ: Գա իսկապես նշանակում էր կամուրջները ետևից այրել, Ամենադժգուրը ոչ թե առաջին քայլը եղավ, այլ վերջինը, սակայն Ջեյնն այդ քայլն արեց («Սա գիտեմ, Մերիքնն ինձ կատարյալ հիմար կհամարի, և ես երբեք այլևս չեմ կարողանա կիվերփուլ գնալ», — ասաց նա), և երբ տուն վերադառնալուց Փարիզով էին անցնում, Գիլբերթը նրան տարավ (իրեն շատ թույլ էր զգում՝ սիրտն այնքան ուժեղ էր զարկում) աշխարհի լավագույն վարսավորի մոտ: Վարսավորանոցից Ջեյնը դուրս եկավ զվարթ, հանդուգն, շաքաճճի մոխրագույն գանգուրներով ծածկված գլխով: Պիգմալիոնը վերջացրել էր յուր ֆանտաստիկ գլուխգործոցը: Ծնվել էր Գալաթեան:

— Այո, — ասացի ես, — բայց դա բավական չէր բացատրելու համար, թե ինչու է Ջեյնն այսօր այստեղ՝ դքսուհիների, մինիստրների և ուրիշ նրանց նմանների ամբոխում, կամ թե ինչու՞ է նստած տանտիրոջ և նավատորմի ծովակալի մեջտեղում:

— Ջեյնը սրախոս է, — ասաց միսիս Քաուլըրը: — Չտեսա՞ք, թե բոլորն ինչպես են ծիծաղում նրա ասածներին վրա:

Հիմա արդեն կասկած չկար, որ միսիս Քաուլըրը սրտում գառնացած է:

— Երբ Ջեյնն ինձ գրեց, որ մեղրամսից ետ են եկել, ես հարկ համարեցի նրանց ճաշի հրավիրել: Զիշտ է, պաղափարն առանձնապես սրտովս չէր, սակայն զգում էի, որ դա անհրաժեշտ է: Գիտեի, որ երեկույթը կորած է, և շուղեցի զոհաբերել նրանց, որոնք իրոք կարևոր են: Մյուս կողմից չէի ուզում Ջեյնց

մտածեր, թե ես լավ ընկերներ չունեմ: Գուք գիտեք, ես երբեք ութ հոգուց ավել մարդ չեմ հրավիրում, բայց այդ առիթով մտածեցի, որ ավելի լավ կլինի տասներկու հոգի կանչել: Մինչև երեկո Ջեյնին շտեմա՝ շատ պրազված էի: Նա մեզ բուրբիս ստիպեց մի քիչ սպասել: — դա Գիլբերթի արածն էր, — և վերջապես ներս լողաց: Միայն թի տեսնեիր վիճակս: Նա բուրբ մնացած կանանց ստիպեց անճաշակ ու գավառացի երեւալ: Ստիպեց, որ ինքս ինձ մի քոված փնթի պառավ զգամ:

Միսիս Քաուլըրը մի կում շամպայն խմեց:

— Կուզի ձեզ նկարագրել զոնար: Մի ուրիշի վրա այդ հագուստն անհնար կլիներ պատկերացնել, Ջեյնի վրա իսկական էր: Իսկ մեկնակնոցը: Երեսունհինգ տարի գիտեմ նրան և ոչ մի անգամ չէի տեսել առանց ակնոցի:

— Բայց դուք գիտեիք, որ լավ կազմվածք ունի:

— Որտեղի՞ց: Ես նրան միշտ տեսել եմ այն շորերով, որ ձեզ հետ առաջին անգամ հանդիպելիս էր հագել: Գուք ինքներդ կմտածեի՞ք, թե լավ կազմվածք ունի: Թվում էր, իմանալով հանգերձ, թե ինչ ցնցուղ տպավորություն է գործում, նա սովորականի պես է ընդունում դա: Ես մտածեցի ճաշկերույթիս մասին ու մի թեթևացած հոգոց արձակեցի: Եթե անգամ մի քիչ անճարակ պահեր իրեն, այդ արտաքինը կշտկեր դրությունը: Նա նստել էր սեղանի հակառակ կողմում, և ես հաճախ ծիծաղ էի լսում այնտեղից. ուրախանում էի, մտածելով, որ մյուս հյուրերն իրենց գերը լավ են խաղում, բայց ճաշկերույթից հետո ապշած մնացի, երբ ոչ պակաս, քան երեք տղամարդ մոտեցան ինձ ու ասացին, թե տալս անգին է, և հարցրին իմ կարծիքը, թե նա արդյոք թույլ կա՞մ, որ իրեն այցելեն: Ես կարծես կրունկներիս փոխարեն գլխի վրա շուռ եկած լինեի: Քասնչորս ժամ հետո մեք այսօրվա տանտիրուհին զանգահարեց ու ասաց, որ լսել է, թե տալս կոնգոնում է, ու որ նա անգին է, և խնդրեց նրան նախաճաշին իր տուն հրավիրել: Այդ կեղծ բնագրն իրեն չի խաբել երբեք՝ մի ամսից բուրբ Ջեյնից էին խոսում: Այսօր ես այստեղ եմ ո՛չ թե որովհետև տանտիրուհուն բսան տարի է հանաչում եմ և հարչուրավոր անգամներ ճաշի եմ հրավիրել, այլ որովհետև Ջեյնի հարսն եմ:

Խեղճ միսիս Քաուլըրը նրա վիճակն աննախանձելի էր, ու թեև մի կողմից ծիծաղս էր գալիս, քանզի հիմա հարչուր ութ-

տուն աստիճան շրջվել էր իրազրույթունը, մյուս կողմից զգացի, որ նա արժանի է կարեկցանքիս:

— Մարդիկ միշտ էլ սիրում են նրանց, ովքեր իրենց ծիծաղեցնում են,— ասացի, փորձելով մխիթարելի:

— Նա ինձ երբեք չի ծիծաղեցնում:

Մեկ անգամ ես սեղանի գլխից հռնոց լսեցի և եմթաղեցի, որ Ջեյնը մի նոր զվարճալի բան է ասել:

— Դուք, ի՞նչ է, ուզում եք հավատացնել, թե միակ մարդն էք, որ նրան ծիծաղելի չի՞ համարում,— ժպտալով հարցրեցի ես:

— Իսկ դուք ի՞նչ է, նկատել եք, որ նա ուժեղ սրախո՞ւ է:

— Պետք է ասեմ, որ ոչ:

— Նա ասում է ճիշտ այն նույն բաները, որոնք ասել է վերջին երեսունհինգ տարում: Ես ծիծաղում եմ, տեսնելով, որ բոլորն են ծիծաղում, քանի որ չեմ ուզում կատարյալ հիմար երևալ, սակայն ինձ զվարթ չեմ զգում:

— Վիկտորյա թագուհու նման,— ասացի ես:

Արածս հիմարություն էր, և միսիս Քաուլը չհապաղեց երեսիս դա ասել: Ես ուրիշ տակտիկա ընտրեցի:

— Գիրքը՞ն այստե՞ղ է,— հարցրեցի, սեղանի մոտ նըստածներին դիտելով:

— Գիրքը՞ր ճրագիրված էր, որովհետև Ջեյնն առանց նրա տեղ չի գնում, բայց այսօր նա ճաշկերույթի է ճարտարապետական ինստիտուտում կամ չգիտեմ ինչպես է դա կոչվում:

— Գծվելու շափ ուզում եմ վերականգնել ծանոթությունս Ջեյնի հետ:

— Գնացեք խոսեցեք նրա հետ ճաշից հետո: Ձեզ կհրավիրի իր երեքշաբթվա երեկույթներին:

— Իր երեկույթներին:

— Նա տանն է լինում ամեն երեքշաբթի երեկոյան: Դուք այնտեղ կհանդիպեք բոլորին, որոնց մասին երբևէ լսել եք: Նրա հանդեսները լավագույնն են լոնդոնում: Մի տարվա մեջ Ջեյնը կարողացավ անել այն, ինչ ինձ չհաջողվեց քսան տարում:

— Բայց ձեր պատմածն իսկապես հրաշք է: Ինչպե՞ս է դա արվել:

Միսիս Քաուլը թոթվեց իր գեղեցիկ, սակայն պարարտ ուսերը:

— Ես ուրախ կլինեի, եթե դուք ինձ ասեիք, թե ինչպես,— պատասխան տվեց նա:

Ճաշից հետո ես փորձեցի ճանապարհ հարթել գեպի այն բազմոցը, որի վրա Ջեյնն էր նստած, բայց ինձ կանգնեցրին, և մի քիչ անց տանտիրուհին մոտ եկավ ու ասաց.

— Ես ձեզ պիտի ներկայացնեմ իմ հանդեսի աստղին: Դուք գիտե՞ք Ջեյն Նեփրրին: Նա անգին է: Շատ ավելի զվարճալի, քան ձեր կատակերգությունները:

Մենք մոտեցանք բազմոցին: Մովակալը, որը Ջեյնի կողքին էր ճաշի ժամանակ, չէր հեռացել նրանից: Նա կարծես թե չէր էլ պատրաստվում գնալ, և Ջեյնը, ձեռքս սեղմելով, ինձ ներկայացրեց նրան:

— Ճանաչո՞ւմ եք սրբեշինըլ Ծրոքիչըրին:

Սկսեցինք գրուցել: Դա այն նույն Ջեյնն էր, որին գիտեի առաջ. շատ հասարակ, ընտանեկտրի ու անկեղծ, սակայն նրա անսովոր արտաքինն անշուշտ յուրահատուկ համուհուտ էր տալիս ասածներին: Հանկարծ տեսա, որ ցնցվում եմ ծիծաղից: Ջեյնը մի դիտողություն էր արել՝ խելամիտ ու տեղին, բայց առանց սրամտության նշույլի անգամ, սակայն ասելու ձևը և կույր հայացքը, որ վրաս էր նետել մենականցի միջից՝ անդիմադրելի էին դարձրել խոսքերը: Ես ինձ թեթևացած ու կենսորախ զգացի: Երբ արդեն գնալու էի, նա ինձ ասաց.

— Եթե անելու ավելի լավ բան չունենաք, երեքշաբթի երեկոյան եկեք մեզ տեսնելու: Գիրքը՞ն այնքան ուրախ կլինի ձեզ հետ հանդիպել:

— Երբ նա մի ամիս լոնդոնում մնա, կիմանա, սր անելու ավելի լավ բան չի կարող ունենալ:

Այդպիսով, երեքշաբթի օրը, թեպետ բավական ուշ, ես գնացի Ջեյնի մոտ: Խոստովանանք լինի, մի քիչ զարմացա, տեսնելով եկողների կազմը: Դա գրողների, նկարիչների և քաղաքական գործիչների, դերասանների, մեծամեծ տիկնանց ու հանրահայտ գեղեցիկահիների մի հրաշալի հավաքածու էր, Միսիս Քաուլըն իրավացի էր, դա գերազանց երեկույթ էր, ես այդպիսի բան Մթեֆֆերը Հաուզի՝ վաճառվելու օրից լոնդոնում չէի տեսել: Ոչ մի հատուկ ժամանց չէր կազմակերպվել: Խորտիկները լավն էին, բայց ոչ արտակարգ: Ջեյնը սովորականի պես հանգիստ ու զվարթ էր, ես շտեքա, թե նա առանձին ջանքեր թափեր հյու-

րիբն գոհացնելու համար, սակայն սրանց բացահայտորեն դուր էր գալիս այդտեղ, և ուրախ, հաճելի այդ հանդեսը տեսնելու մինչև գիշերվա երկուսը: Գրանից հետո ես սկսեցի Քեյնին հաճախ տեսնելու: Ոչ միայն համախառնի նրա տուն էի գնում, այլև հազվադեպ էր պատահում, որ նախամաշի կամ ճաշի գնացի ու նրան շահագրգռելու ես համոթի սիրահար եմ և ջանում էի հայտնաբերեմ, թե ինչու է Քեյնի այդ յուրահատուկ տաղանդը: Անհնար էր կրկնել նրա ասածը, բանցիկ ծիծաղելի մասը, որոշ գինիների պես, իր ամանից այլ տեղ փոխելուց կփշանար: Քեյնը սրամիտ կարճատև գիտողութունների շնորհք շուներ: Երբեք փայլուն, դիտուկ պատասխաններ չէր տալիս: Նրա նկատողութունների մեջ շարութուն չկար, ոչ էլ առարկութունների մեջ՝ խայթուց: Կան այնպիսիները, որոնք կարծում են, թե անպատշաճութունը, նույնիսկ ավելի, քան համառոտութունը, սրախտութիւն համն է, սակայն Քեյնը երբեք չէր ասում այնպիսի մի բան, որ կարող էր ստիպել ամենապուրիտան անգլուհուն թեթևակի շտապուհներ: Ըստ իս, նրա համոթն անգիտակցական էր, և ես համոզված եմ, նաև՝ անկանխամտածված: Այն թիթեռնիկի նման ճախրում էր ծաղկից ծաղիկ, հնազանդ միայն սեփական քմայքին, շնորհակցով ո՛չ մեթոդի, ոչ էլ՝ դիտավորութան: Այդ համոթը կախված էր այն բանից, թե ինչպես էր Քեյնը խոսում և ինչ տեսք ուներ: Գրա նրբութունը շահում էր այդ զարնոզ և արտասովոր արտաքինից, որ Գիլբերթն էր ստեղծել, սակայն արտաքինն, այնուամենայնիվ, մնում էր միայն մասնիկներից մեկը: Հիմա, իհարկե, Քեյնը նորաձևութան վերջին խոսքն էր, և մարդիկ ծիծաղում էին՝ գեռ նա բերանը բաց շարած: Ոչ ոք այլևս չէր վարմանում, որ Գիլբերթն իրենից այդքան մեծ կիներ ընտրելու ճանաչում էին, որ Քեյնի պես կենց համար տարբեր հաշիվ չէ: Գիլբերթին սարսափելի բախտավոր երիտասարդ էին համարում: Մովակալն ինձ համար Շերսպիրից մեջբերում արեց. «Տարիքն անդոր ևն ծերացնել նրան, ոչ էլ բարբերը կարող են նրա բուն ու այլակերպ տենչանքին վերջ տալ»: Գիլբերթը երջանիկ էր, որ իր կիներ հաջողութուն ուներ: Ինչքան նրան լավ էի ճանաչում, այնքան ավելի էի համակրում: Միանգամայն ակնհերև էր, որ Գիլբերթը ո՛չ ստահակ էր, ոչ էլ բախտախնդիր: Նա ոչ միայն անասելիորեն հպարտ էր Քեյնով, այլև մինչև սրտի

խորքը եպիբված էր նրան: Նրա սերը Քեյնի հանդեպ հուզել էր: Գիլբերթը շատ անհաստեր ու բարեհամբույր երիտասարդ էր: — Հը, ի՞նչ կասեիք Քեյնի մասին հիմա, — մի անգամ հարցրեց նա ինձ հաղթական տեսքով, ինչպես մի մանուկ: — Չգիտեմ, թե ձեզնից ով է ավելի հիանալի, — ասուցե՛ս, — զո՞ւր, թե՞ նա: — Ա՛հ, ես ոչինչ եմ: — Դատարկ բան: Հո այնքան հիմար չե՞մ, որ շատնեմ. դուր և միայն դուր եք Քեյնին այնպիսին դարձրել: — Իմ միակ վաստակն այն է, որ ես տեսա նրա մեջ անդհն աչքի համար անտեսանելին, — պատասխանեց Գիլբերթը: — Ես կարող եմ հասկանալ, որ դուր նկատելի եք նրա մեջ իր գերազանց արտաքինի նախանշանները, բայց այդ ինչպե՞ս ձեզ հաջողվեց նրան սրախտ դարձնել: — Բայց ես միշտ էլ նրա ասածները սաստիկ ծիծաղելի եմ համարել: Նա միշտ էլ սրախտ էր: — Դուք միակն եք, որը երբեք այդպես էր մտածել: Միտիս Թատլերը, ոչ առանց մեծահոգութիւն, բնորոնեց, որ ինքը սխալվել է Գիլբերթի հարցում: Շուտով նա շատ կապվեց Գիլբերթին: Սակայն, անկախ այն բանից, թե կողքին ինչ ուպավորութուն է ստեղծվել, միտիս Թատլերը երբեք շատանվեց ու շփոխեց իր կարծիքը, որ այդ ամուսնութունը չի կարող երկար տևել: Ես ծիծաղում էի նրա վրա: — Ախր կյանքումս ավելի մտերիմ գույց չեմ տեսել, — ասում էի ես: — Գիլբերթը հիմա քսանյոթ տարեկան է: Իսկը մամանակն է, որ մի սիրունիկ աղջիկ հայտնվի: Անցյալ երեկո Քեյնի մոտ նկատեցի՞ք սրը Բեյլինլիգի այն փոքրիկ, սիրունիկ աղջականուհուն: Ինձ թվաց, որ Քեյնը նրանց երկուսին բազմական ուշադրութիւնք է նայում, և ինքս ինձ միտք արեցի... — Չեմ հավատա, թե Քեյնը վախենա սչս արեկ տակ որնէ աղջկա մրցակցութունից: — Սպասեք և կտեսնեք, — ասաց միտիս Թատլերը: — Դուք վեց ամիս էիք տվել: — Ինչ արած, հիմա երեք տարի եմ տալիս:

Երբ մեկը շատ վատահ է լինում իր կարծիքին, մարդկային բնութիւնը մղում է ցանկանաս, որ նա սխալ դուրս գա: Միտիս

* Շերսպիր, «Անտոնիոս և Կլոպասարա»:

Յտուրըն իրոք շափից դուրս ինքնավստահ էր: Բայց ես այդպես էլ բավարարութիւն չստացա, քանզի վերջաբանը, որ նա էր մշտապես վտառնորեն նախագուշակում այդ անհամապատասխան միութեան համար, փաստորեն ի վերջո վրա հասավ: Այսուհանդերձ, ճակատագիրը հազվադեպ է պարզում մեզ մեր ուզած ձևով, ու թեև միտիս Յտուրը կարող էր մխիթարել ինքն իրեն, թե ճիշտ է եղել, կարծում եմ, որ ամեն դեպքում նա կպարտասեր սխալ դուրս գալ: Քանզի իրերը բոլորովին էլ նրա սպասած ձևով չընթացան:

Մի օր շտապ կանչ ստացա միտիս Յտուրից և բարեբախտաբար միանգամից դնացի նրան տեսնելու: Երբ ծառան ինձ ներս ուղեկցեց, միտիս Յտուրը վեր բարձրացավ աթոռից և ինձ մոտեցավ իր գոհին հետապնդող հովազի պես՝ գողունի ու արագ: Տեսա, որ հուզված է:

— Ձեյնն ու Գիլբերթը բաժանվել են,— ասաց նա:
— Իսկպե՞տ: Գե ուրեմն ի վերջո դուք ճիշտ էիք:

Միտիս Յտուրըն ինձ նայեց մի արտահայտութեամբ, որի իմաստը չհասկացա:

— Խեղճ Ձեյն,— մրմնջացի ես:
— Խեղճ Ձեյն,— կրկնեց նա, բայց այնպիսի հեզնող երանգով, որ ես շվարեցի:

Նա որոշ գովարութեամբ պատմեց ինձ, թե ինչ է իրակա՛նում պատահել:

Գիլբերթի միտիս Յտուրի մոտից հեռանալուց տառացիորեն մի վայրկյան շէր անցել, երբ վերջինս նետվել էր դեպի հեռախօսն՝ ինձ զանգելու: Իսկ մինչ այդ Գիլբերթը սենյակ մտավ՝ գունատ ու ալլալված, և միտիս Յտուրըն անմիջապէս հասկացավ, որ մի սարսափելի բան է պատահել: Նա, մինչև Գիլբերթը բերանը բացեր, գիտեր, թե սա ինչ կատի:

— Մերիքն, Ձեյնը լքել է ինձ:

Նա թույլ ժպտաց Գիլբերթին և բռնեց նրա ձեռքը:

— Ես գիտեի, որ քեզ ջենտլմենի պէս կպահես: Նրա համար շատ վատ կլիներ, եթե մարդիկ մտածեին, թե դու ես թողել նրան:

— Ես քեզ մոտ եկա, իմանալով, որ կարող եմ վստահ լինել, որ կկարենկցես ինձ:

— Է՛հ, ես քեզ չեմ մեղադրում, Գիլբերթ,— շատ մեղմ ասաց միտիս Յտուրը: Գա պետք է տեղի ունենար:

Գիլբերթը հռուչեց:
— Հա, երևի շո շէի կարող հույս ւնենալ, որ հավերժ կպահեմ նրան կողքիս: Նա շափից դուրս սքանչելի էր, իսկ ես մի սովորական մարդ եմ:

Միտիս Յտուրը շոյեց նրա ձեռքը: Երիտասարդն իրոք շէ՛ղեցիկ էր պահում իրեն:

— Իսկ ի՞նչ պիտի լինի հիմա:

— Նա պիտի ամուսնալուծվի:

— Ձեյնը միշտ ասել է, որ խոչընդոտ չի հանդիսանա, եթե երբևէ ուզես մի աղջկա հետ ամուսնանալ:

— Հո չե՞ս կարծում, թե կարող եմ Ձեյնի ամուսինը լինելուց հետո ցանկանալ մի ուրիշի հետ միանալ:

Միտիս Յտուրը տարակուսանքի մեջ էր:

— Գո՛ւ, իհարկե, ուզում ես ասել, որ դու ես լքել Ձեյնին:

— Ի՛նչ, Մի՞թե ես այդպիսի բան կանեի:

— Բա ինչու՞ է բաժանվում քեզնից:

— Հենց որ ձեռնարկութեանը ամուսնանալու է սըր Բեյլինը և Գիլբերթը հետ:

Միտիս Յտուրը բարձրաձայն ճչաց: Հետո համարյա ուշա՛գնաց եղավ, այնպես, որ անուշադրի կարիք զգացվեց:

— Այն ամենից հետո, որ իր համար արե՛լ ես:

— Ես նրա համար ոչինչ չեմ արել:

— Հիմա, ի՞նչ է, թողնելու ես հեռոց այդպե՛ս վարվի:

— Մենք ամուսնանալուց առաջ սրոշել էինք, որ եթե մեզնից մեկն իր ազատութեանն ուզի, մյուսը պետք է արգելք չհանդիսանա:

— Բայց դա քե՛զ համար է արվել: Որովհետեւ դու նրանից բռնեցիք տարով ջահել կիր:

— Ինչ արած, դա Ձեյնին՝ շատ պետք եկավ,— պատասխանեց Գիլբերթը դառնացած:

Միտիս Յտուրը համոզում էր, վիճում, հորդորում, սակայն Գիլբերթը պնդում էր, որ Ձեյնին ոչ մի կանոն չի կարող վերաբերել, և ինքը պիտի ճշտութեամբ անի նրա ուղածը: Նա հետացավ, թողնելով ուժասպառ միտիս Յտուրին: Վերջինս թեթևութեան զգաց, ինձ ծայրից ծայր շարադրելով խոսակցութեանը: Նրան գոհացրեց տեսնելը, որ ես էլ եմ իր պէս դարմացած, իսկ այն, որ ես իր նման ցատուճով չեմ լցվում դեպի Ձեյնը, նա վերագրեց իմ սեռին հատուկ հանցագործ բարոյազրկութեանը: Նա

դեռ գտնվում էր ծայրահեղ հուզմունքի մեջ, երբ դուռը բացվեց, և ծառայակազմը ներս հրավիրեց... իրեն՝ Ջեյնին: Ջեյնը սև ու սպիտակ զգեստ էր հագել, ինչը որ անտարակույս համապատասխանում էր նրա մի փոքր երկիմաստ դուրսանք:— բայց այդ զգեստն այն աստիճան յուրօրինակ էր ու մտահնար, իսկ զլիարկն այնքան ցնցող, որ ես ակամա խոր շունչ քաշեցի: Սակայն Ջեյնն, ինչպես միշտ, մեղմ էր ու հավարձաված: Նա առաջ եկավ միսիս Քաուլերին համբուրելու, բայց միսիս Քաուլերը սառն ու արժանապատվորեն մի կողմ քաշվեց:

— Գիւրբըթն է այստեղ եղել, — ասաց նա:

— Հա, գիտե՞մ, — ժպտաց Ջեյնը:— Ես էի այել, որ դա քեզ տեսնի: Ես այսօր երեկոյան Փարիզ եմ գնում և կուզեի, որ դու նրա հանդեպ շատ բարի լինեիր, քանի այստեղ չեմ: Վախենում եմ, ամենակարգից շատ մեղակ լինի, դրա համար էլ ինձ ավելի հանգիստ կզգալի, եթե հույս ունենայի, որ աչքդ վրան կպահես:

Միսիս Քաուլերն իրար զարկեց ձեռքերը:

— Գիւրբըթը հենց նոր ինձ մի բան ասաց, որ հազիվ եմ ինքս ինձ ստիպում հավատալ: Ասաց, թե իրենից բաժանվում ես, որպեսզի ամուսնանաս Բեյլիբլի Ծորթիլլերի հետ:

— Ինչ է, չե՞ս հիշում, Գիւրբըթի հետ ամուսնանալուց առաջ դու ինձ խորհուրդ տվեցիր իմ տարիքի մարդու հետ ամուսնանալ: Սովակալը հիսուներեք տարեկան է:

— Բայց, Ջեյն, դու ամեն ինչով Գիւրբըթին ես պարտական, — զայրույթով ասաց միսիս Քաուլերը:— Առանց նրա դու գոյություն չէիր ունենա: Եթե նա չձեռն շորերդ, դու ուրիշ կլիես:

— Ա՛, նա խոստացել է հետագայում էլ շորերս ձեռել, — մեղմորեն ասաց Ջեյնը:

— Ոչ մի կին ավելի լավ ամուսին չի էլ երագի: Նա միշտ քո հանդեպ ինքը բարությունն է եղել:

— Հա, գիտե՞մ, նա շատ քաղցրն էր:

— Ինչպե՞ս կարող ես այդքան անսիրտ լինել:

— Բայց ես Գիւրբըթին երբեք սիրահարված չեմ եղել, —

ասաց Ջեյնը: Միշտ սասել եմ նրան այդ մասին: Ես սկսում եմ իմ տարիքի տղամարդու ընկերակցության կարիքը զգալ: Կարծում եմ, որ երեկ Գիւրբըթի հետ բավական երկար եմ ամուսնացած մնացել: Այդ շահեկանը հետաքրքիր զբոսակից:

նք չեն:— Նա մի բնույթ լուրջ և մի հմայիչ ժպիտ պարզեց մեզ:— Իհարկե, ես Գիւրբըթի հետ կապս չեմ խզի: Ես պայմանավորվել եմ Բեյլիբլիի հետ այդ մասին: Սովակալը մի ազգականուհի ունի, որը շատ կհամապատասխանեք նրան: Հենց ու ամուսնանանք, նրանց կառաջարկենք մեզ հետ ապրել Մալթայում, — դու գիտես, որ ծովակալը Միջերկրականի նավատորմի հրամանատարությունն է ստանձնել, — և ես ամենեկին չեմ զարմանա: Եթե նրանք սիրահարվեն:

Միսիս Քաուլերը կամաց փոթկացրեց:

— Իսկ ծովակալի հետ պայմանավորվել էր, որ եթե ձեր ազատությունը ցանկանաք, ոչ մեկդ պիտի մյուսին խոչընդոտ չլինի:

— Ես առաջարկեցի, — անվրդով պատասխանեց Ջեյնը:— Բայց ծովակալն ասում է, որ ինքը լավ բանը միանգամից ճանաչում է և որ չի ուզի ուրիշ ոչ մեկի հետ ամուսնանալ, իսկ եթե մեկնումեկը ցանկանա ինձ հետ ամուսնանալ, ապա ինքն իր դրոշակիր ռազմանավի վրա ութ հատ տասներկու մատնաչափ տրամագծի թնդանոթ ունի և այդ հարցը կքննարկի մոտ տարածության վրա:— Նա մի հայացք նետեց մեզ վրա իր մեղակնոցի միջից, ու նույնիսկ միսիս Քաուլերի ցատումին արժանանալու ահը չզսպեց ծիծաղալ:— Իմ կարծիքով ծովակալը շատ կբոստ մարդ է:

Միսիս Քաուլերն իսկապես մի զայրացած, խոժոռ հայացք նետեց վրա:

— Ես քեզ երբեք ծիծաղելի չեմ համարել, Ջեյն, — ասաց նա, — ես երբեք չեմ հասկացել, թե մարդիկ քո ասածների վրա ինչու են ծիծաղում:

— Ես ինքս էլ երբեք ինձ ծիծաղելի չեմ համարել, Մե՛րիքն, — ժպտաց Ջեյնը, ցուցադրելով իր շլացուցիչ, կանոնավոր առանկերը:— Ես ուրախ կլինեմ Լոնդոնից հեռանալ, քանի դեռ չափից ավելի շատ մարդիկ մեր կարծիքին չեն եկել:

— Կուզեի, որ ասեիր ձեր ցնցող հաջողության գաղտնիքը, — մեջ բնկա ես:

Նա շքվեց իմ կողմն ու նայեց այն մեղմ, բարեսիրտ հայացքով, որը լավ գիտեի:

— Գիտե՞ք, երբ ես ամուսնացա Գիւրբըթի հետ, բնակվեցի Լոնդոնում, ու մարդիկ սկսեցին ծիծաղել ասածներիս վրա, ոչ ոք ավելի զարմացած չէր, քան ես ինքս: Ես երեսուն տարի նույն ջժ—Լուսին և վեգպեսանց


բաներն էի ասել, և ոչ ոք դրանց մեջ ծիծաղելի ոչինչ չէր տեսել: Մտածեցի, թէ դրա պատճառը երեւի շորերս են կամ կտրած մազերս և կամ թե մենականոցս: Հետո հայտնագործեցի, որ պատճառը ճիշտ խոսելն է: Դա այնքան անսովոր էր, որ սրամիտ էր թվում մարդկանց: Շուտով ուրիշներն էլ կհայտնաբերեն այդ գաղտնիքը, և երբ մարդիկ սովորութիւն դարձնեն ճիշտն ասելը, իհարկեւ, դրանում ծիծաղելի ոչինչ չի մնա:

— Իսկ ինչու՞ եմ ես միակը, որը դա ծիծաղելի չի համարում,— հարցրեց մի սիւսի Քատրըրը:

Ջեյնը մի բռակե տատանվեց, ասես անկեղծորեն բավարար բացատրութիւն որոնեք:

— Հավանաբար դու շեւ ճանաչում ճշմարտութիւնը, երբ տեսնում ես այն, Մեյքիլըն, սիրելի՛ս,— պատասխանեց նա իր մեղմ ու բարեսիրտ եղանակով:

Անկասկած, այդ բառերը վերջին խոսքը թողեցին իրեն՝ Ջեյնին: Ես զգացի, որ վերջին խոսքը միշտ Ջեյնինը կլինի: Նա իրով անգին էր:



Ե

իշարդ Հարենջըրը երջանիկ մարդ էր: Չնայելով, թէ ինչ են ասել հոսետեսները, սկսած էկլեզիաստից, դա այնքան էլ հազվագյուտ բան չէ այս տարաբախտ աշխարհում, սակայն Ռիչարդ Հարենջըրը գիտեր այդ մասին, իսկ դա արդեն իրոր հազվագյուտ բան է: Ոսկե միջինը, որ այնքան բարձր են գնահատել հները, մոդայից զուրս է եկել, և դրան հետևողները պետք է քաղաքավարի ծաղրանքով նայեն նրանց, սվքեր ինքնազստման մեջ առաքինութիւն չեն տեսնում, իսկ առողջ բանականութեան մեջ՝ բարեմասնութիւն: Ռիչարդ Հարենջըրը քաղաքավարի ու զվարթ թոթվում էր ուսերը: Թո՛ղ մշուսները վտանգներով լրկանք ապրեն, թո՛ղ մշուսները այրվեն հրաշալի, ուժեղ կրակով, թո՛ղ իրենց բախտը գրավ դնեն խաղաթղթի քմաչքին, քայլեն ճոպանով, որը զեպի փառք է տանում կամ գերեզման և կամ ոխակի ենթարկեն իրենց կյանքը որեւէ պատճառի, կրքի, արկածի սիրուն: Նա ոչ նախանձում էր փառքին, որ այդ սխրտնքներն էին բերում նրանց, ոչ էլ իրեն նեղութեան տալիս խղճալ նրանց, երբ ջանքերն անհաջողութեամբ էին պսակվում:

Բայց դրանից չի կարելի եզրակացնել, թէ Ռիչարդ Հարենջըրը ետանք կամ անսիրտ մարդ էր: Ոչ, ո՛չ մեկը, ո՛չ էլ մշուսը նա հոգատար ու առատաձեռն բնավորութիւն սւներ: Միշտ պատ-

բաւաս էր ընկերոջը լավութիւնն անել և բավականաչափ միջոցների տեր էր, որպէսզի ինքն իրեն պատճառեր այնպիսի հաճույթ, ինչպիսին է ուրիշներին օգնելը: Ռիչարդ Հարենշըրը որոշ գումար ունէր և, բացի այդ, կենտրոնական գրասենյակում մի պաշտոն էր զբաղեցնում, որը համապատասխան աշխատավարձ էր բերում: Աշխատանքը գոհացնում էր նրան՝ հանդիստ էր, պատասխանատու և համեկի մեկն օր գրասենյակից դուրս գալուց նա գնում էր իր ակումբ՝ մի երկու ժամ բրիջ խաղալու, իսկ շաբաթ և կիրակի օրերը գոլֆ էր խաղում: Արձակուրդներին գնում էր արտասահման, ապրում էր լավ հյուրանոցներում և հաճախում էր կեղեղեցիներ, պատկերասրահներ ու ցուբահանդեսներ: Նա թատրոնների ու համերգների մշտական հաճախորդ էր: Նա շատ էր գնում երեկոյթներ: Ընկերները սիրում էին նրան և կալ գրուցակից էր, զարգացած ու սրամիտ: Բացի այդ, համեկի արտաքին ունէր, ո՛չ արտակարգ գեղեցիկ, բայց բարձրահասակ էր, բարակիրան, կեցվածքը ձիգ: Դեմքը նիհար էր, խելացի. մազերը նոսրացել էին, քանզի հիսունին էր մոտենում արդեն, բայց շագանակագույն աչքերը պահպանել էին ժպտուն արտահայտութունը, իսկ ատամները բոլորն իր սեփականն էին: Ռիչարդ Հարենշըրը ի բնի լավ առողջութիւն ունէր և միշտ հոգ էր տարել իր մասին: Ոչ մի պատճառ չկար, որ նա երջանիկ մարդ չլինէր, և էթէ նրա մեջ ինքնագոհութիւն գոնէ նշույլ գոյութիւն ունենար, կհայտարարեր, որ ինքն արժանի է դրան:

Միտքը Հարենշըրը նույնիսկ բախտ էր ունեցել հաջողութեամբ խուսանալի ամուսնութեան վտանգներով լի, անհանգիստ նեղուցներով, որոնցում այնքան իմաստուն ու լավ մարդիկ աղետ են կրել: Դեռ քսանը չբոլորած ամուսնանալով, նա և իր կինը, մի քանի տարով համարյա թէ կատարյալ երանութիւնից հետո, աստիճանաբար հակառակ կողմեր լողացին: Նըբանցից ոչ մեկը չէր կամենում մի ուրիշի հետ ամուսնանալ, ուստի ամուսնալուծութեան հարց չծագեց (ինչը որ իրոք անցանկալի էր Ռիչարդ Հարենշըրի դիրքի տեր պետական պաշտոնյալի համար), սակայն ի սեր բարեկեցութեան, ընտանեկան փաստարանի օգնութեամբ, նրանք այն տեսակ գասավորեցին բաժանումը, որ ամեն մեկը կարող էր ապրել այնպէս, ինչպէս կկամենար, առանց մյուսի միջամտութեան: Նրանք անջատվեցին՝ իրար հանդեպ փոխադարձ հարգանք ու բարյացակամութիւն պահպանելով:

Ռիչարդ Հարենշըրը վաճառեց Սեյնթ Ջոնս Վուդի իր տունը և մի բնակարան վարձեց Ուայթհոլից ոչ հեռու: Բնակարանը բարեկացած էր հյուրասենյակից, որտեղ նա շաբուց իր գրքերը, ճաշասենյակից, որին նրա շիփընդեյլյան կահույքը իսկը հարմար եղավ, մի հարմարավետ ննջարանից իր համար և, խոհանոցից այն կողմ, ծառաների երկու սենյակից: Խոհարարուհուն, որից շէր բաժանվել տարիներ շարունակ, Սեյնթ Ջոնս Վուդից հետք բերեց, բայց այլևս այդքան մեծ անձնակազմի կարիք չունենալով, ազատ արձակեց մնացած ծառաներին և դիմեց սպասավորների վարձման գրասենյակին, որ մի աղախին գտնեն իր համար: Նա շատ լավ գիտեր իր ուղածն ինչ է և գործակալութեան տնօրենին ճշգրիտ բացատրեց, թէ ինչի կարիք ունի: Ռիչարդ Հարենշըրն ուզում էր, որ սպասուհին շատ երիտասարդ չլինի, առաջինը, որովհետեւ ջահել կանայք փոփոխամիտ են, և երկրորդ, թէ նա տարիքն առած ու սկզբունքների տեր անձնավորութիւն էր, մարդիկ կխոսեին, եթէ ոչ այլ որ, այդ գոնէ դանապանն ու մանրավաճառները. գրա համար էլ, ի սեր թե՛ իր և թե՛ այլ ջահել արարածի բարի համբալի, գտնում էր, որ այդ թեկնածուն պետք է հասուն տարիքի լինի: Բացի այդ, նրա ուզած աղախինը պետք է արժաթեղեղ լավ մաքրել կարողանար: Միտքը Հարենշըրը միշտ էլ թուլութիւն էր ունեցել հնամենի արժաթեղեղի հանդեպ, և բնականաբար պահանջում էր, որ կանաթագուհու մամանակների ազնվազարմ տիկնոջ օգտագործած պատառաքաղներն ու գդախներ խնամվեն քնքշութեամբ ու հարգանքով: Նա հյուրասեր բնավորութիւն ունէր և սիրում էր գոնէ շաբաթը մեկ անգամ ճաշկերույթներ տալ ամենաքիչը չորս, իսկ ամենաշատը՝ ութ մարդու մասնակցութեամբ: Ռիչարդ Հարենշըրը վստահ էր, որ իր խոհարարի պատրաստած կերակուրները հյուրերին բավականութիւն կպատճառեն, և կամենում էր, որ իր աղախինը մատուցի հմտորեն ու արագ: Բացի այդ, նրան մի լավ սենեկապան էր հարկավոր: Նա լավ էր հագնվում, այնպէս, ինչպէս վայել էր իր տարիքին ու դիրքին, և ուզում էր, որ իր հագուստների մասին ինչպէս հարկն է հոգ տարվեր: Ռիչարդ Հարենշըրի փնտրած աղախինը պետք է կարողանար անգրավարտիքները և փողկապները արդուկել, բացի այդ, նա շատ բժախնդիր էր կոշիկների հարցում՝ դրանք պետք է լավ փայլեցված լինեին: Հարենշըրի ոտքերը փոքր էին, և նա շատ ջանքեր էր գործադրում հարմար կոշիկներ ունենալու համար: Կոշիկ

շատ ունեւր, ըստ որում պահանջում էր, որ դրանք հանելուն պես կաղապարի մեջ գրվեն: Ի վերջո, բնակարանը պետք է մաքուր ու հավաքված լիներ: Ինքնին հասկանալի էր, որ թեկնածուն սեռք է անրիժ բնավորութուն ունենար, լինէր զուտ, ազնիվ, վստահարժան և հաճելի արտաքինի տեր: Դրա փոխարեն Ռիչարդ Հարենջըրը պատրաստ էր առաջարկել լավ աշխատավարձ, բավական մեծ ազատութուն (խելքին մոտ սահմաններում) և հաճախակի արձակուրդներ: Տնօրենը լսեց առանց աչքը թարթելու, և, ասելով, թե միանգամայն վստահ է, որ կկարողանա գոհացնել նրան, հաջորդ օրը մի շարք թեկնածուներ ուղարկեց, ինչը ապացուցեց, որ նա մաղաչափ անգամ ուշադրութուն չի դարձրել իր լսածներին: Ռիչարդ Հարենջըրն անձամբ տեսավ բոլորին: Ոմանք ակներևաբար անփորձ էին, ոմանք թեթևաոլիկ տեսք ունեին, մի բանիսը շափազանց ձեռ էին, մի բանիսը՝ շափից դուրս ջահել, մյուսներն էլ շունեին հարկ եղած արտաքինը՝ ինչ-որ կարևոր էր նրա համար: Չկար մեկը, որին նա անգամ ցանկանար փորձելու հնարավորութուն տալ: Ռիչարդ Հարենջըրը բարի, քաղաքավարի մարդ էր և նրանց ծառայութուններին հրաժարվում էր ժպտալով ու ափսոսանքի արտահայտութամբ: Նա համբերութունը չէր կորցնում և պատրաստ էր այնքան քննել աղախիններին, մինչև մեկին գտնել:

Գիտեք, կյանքը մի ծիծաղելի հատկութուն ունի՝ եթե զուր հրաժարվում եք ընդունել որևէ բան, բացի ամենալավից, հաճախ ստանում եք այդ ամենալավը. եթե վճռականորեն հրաժարվում եք համակերպվել ունեցածի հետ, ապա, այսպես թե այնպես, շատ հնարավոր է, որ ստանաք ձեր ուզածը: Առես ճակատագիրն ասում է՝ այս մարդը կատարյալ հիմար է, նա կատարելություն է ուզում, իսկ հետո իրեն հատուկ կանացի կամակորոթյամբ նրա առջև է գցում այդ նույն կատարելությունը: Մի օր նոր բնակարանի բարսպանը առանց մի նախաբանի Ռիչարդ Հարենջըրին ասաց.

— Լսել եմ, աղախին եք փնտրում, սը՛ր: Ես մեկին գիտեմ, որը հարմար տեղ է փնտրում:

— Դուք կարո՞ղ եք անձամբ երաշխավորել նրա համար: Ռիչարդ Հարենջըրը հաստատ համոզված էր, որ մի ծառայի երաշխավորությունը մյուսի մասին շատ ավելին արժե, քան վերջինիս տիրոջ խոսքերը:

— Կարող եմ հավաստիացնել, որ պատկառելի կին է: Նա լավ աներում է ծառայել:

— Ժամը յոթին ես պիտի գամ հագուստս փոխելու: Եթե իրեն հարմար է, կարող եմ այդ ժամին տեսնել նրան:

— Շատ լավ, սըր: Ես նրան տեղյակ կդարձնեմ:

Տուն մտնելուն պես, դեռ հինգ րոպե շանցած, խոհարարուհին, որը գնացել էր դռան զանգին պատասխանելու, ներս եկավ ու հայտնեց, թե եկել է նա, ում մասին ասել էր բարսպանը:

— Ներս հրավիրեք, — ասաց Ռիչարդ Հարենջըրը:

Նա մի քիչ ավելացրեց լույսը, որպեսզի կարողանա տեսնել, թե ինչ արտաքին ունի հայցվորը, և, ելնելով տեղից, կանգնեց, մեջքը բուխարու կողմն արած: Մի կին ներս եկավ և հարգալից դիրքով կանգնեց դռան մեջ:

— Բարի երեկո, — ասաց տանտերը: — Խնչ է ձեր անունը:

— Փրիչըրդ, սըր:

— Քանի՞ տարեկան եք:

— Երեսունհինգ, սըր:

— Հը՛մ, դա հենց այն տարիքն է, որ հարկավոր է:

Նա դուրս փչեց սիգարետի ծուխը և մտածկոտ նայեց կնոջը: Կինը բավական բարձրահասակ էր, համարյա իր՝ Հարենջըրի չափ. սակայն դրա պատճառն ըստ երևույթին բարձրակրունկ կոշիկներն էին: Սև զգեստը համապատասխանում էր նրա դիրքին: Կինը գեղեցիկ կեցվածք ուներ, հաճելի գիմազներ և զեմքի առողջ գույն:

— Չէի՞ք հանի ձեր գլխարկը, — հարցրեց Ռիչարդ Հարենջըրը:

Կինը հանեց, և Ռիչարդ Հարենջըրը տեսավ, որ նրա մտղերը բաց շագանակագույն են՝ խնամքով ու ճաշակով հարգարած: Ուժեղ ու առողջ տեսք ունեւր: Ո՛չ գեր էր, ոչ էլ նիհար: Համազգեստը նրան պիտի որ շատ սազեր: Նրա գեղեցկությունն անպատշաճության չէր հասնում, սակայն դա անկասկած սիրունատես, կյանքի մի այլ պարտոյալում նույնիսկ կարելի էր ասել, որ գեղեցիկ կին էր: Ռիչարդ Հարենջըրը շարունակեց հարցեր տալ: Պատասխանները գոհացուցիչ էին: Փրիչըրդն իր վերջին տեղը թողնելու համար բավարար պատճառներ էր ունեցել: Նա վարժվել էր ծառայակետի մոտ և լավ ծանոթ էր յուր պարտականություններին: Վերջին աշխատավայրում նա երեք աղախինների մեջ գլխավորն էր եղել, բայց դեմ չէր տան գործերը մե-

նակ անելուն: Սենեկապանի պարտականութիւններ էր կատարել մի պարոնի համար, որը նրան ուզարկել էր դերձակի մոտ՝ արդուկ անել սովորելու: Փրիչըրը մի քիչ ամաշկոտ էր, սակայն ո՛չ խեղճացած, ո՛չ էլ կաշկանդված: Ռիչարդը հարցերը տալիս էր չուր սովորական՝ ընկերական-անհոգ եղանակով, իսկ նա պատասխանում էր համեստ ու դուսպ: Ռիչարդը խորապէս ապավորված էր: Հարցրեց, թե ինչ հանձնարարականներ ունի և տեսավ, որ դրանք լիովին գոհացուցիչ են:

— Հիմա լսեք, — ասաց նա, — ես շատ եմ ցանկանում ձեզ ընդունել: Բայց ես փոփոխութիւններ տանել չեմ կարող՝ խոհարարուհիս արգեն տասներկու տարի մոտս է աշխատում: Եթե դուք ինձ հարմար լինեք, իսկ աշխատանքը՝ ձեզ հարմար լինի, հուսով եմ, դուք կմնաք: Ուզում եմ ասել, չեմ ցանկանում, որ երեք-չորս ամսից գաք ու ասեք, թե հեռանում եք, որպեսզի ամուսնանանք:

— Գրանից վախենալու հարկ չկա, սրբ: Ես այրի եմ: Զե՛ն համարում, թե ամուսնութիւնը մի մեծ բախտ է իմ դիրքում գտնվող մեկի համար: Ամուսինս մտառ մատին չի խփել մեր ամուսնութեան օրից մինչև մեռնելը, և ես պետք է ամբողջ ժամանակ հոգ տանեի նրա մասին: Իմ միակ ուզածն այժմ լավ տունն է:

— Ես հակված եմ ձեզ հետ համաձայնելու, — ժպտաց Ռիչարդը: — Ամուսնութիւնը շատ լավ բան է, սակայն, իմ կարծիքով, սխալ է այն սովորութիւն դարձնելը:

Փրիչըրը բազմապարի լեց, սպասելով, որ նա հայտնի չուր որոշումը: Զգացվում էր, որ շատ չի հուզվում. Ռիչարդ Հարնջըրը մտածեց, որ եթե նա երեսացածի շափ հմուտ է, ապա քաջատեղյակ կլինի՝ իր համար գործ ճարելը զովար բան չէ: Ասաց, թե ինչքան աշխատավարձ է պատրաստվում վճարել, և գա կարծես գոհացրեց կնոջը: Հետո ուզեց տեղեկութիւններ տալ բնակարանի վերաբերյալ, սակայն Փրիչըրը հասկացրեց, որ ինքն արդեն ամեն ինչ գիտե, և Ռիչարդի մեջ տպավորութիւն ստեղծվեց (և դա ավելի շուտ զվարճացրեց նրան, քան շփոթեցրեց), թե այդ կինը աշխատանքի համար գիմելուց առաջ լր մասին հետաքրքրվել է: Գա վկայում է նրա հաշվենկատութեան ու սղջամտութեան մասին:

— Եթե ձեզ ընդունեմ, ե՞րբ կկարողանաք գործի գալ: Այս վայրկյանին ոչ ոք չունեմ: Խոհարարս կարեցածի շափ տան

գործ անում է, բայց ես կուզեի այս ամենը որքան հնարավոր է շուտ կարգավորվել:

— Սըր, ես պատրաստվում էի մի շաբաթ պե՛նակուրդ տալ ինքս ինձ, բայց եթե հարցը վերաբերվում է ձեզ նման ջենտլմենին ծառայութիւն մատուցելուն, կարող եմ հրաժարվել դրանից: Եթե հարմար է, կարող եմ վաղվանից գալ:

Ռիչարդ Հարնջըրը ժպտաց իր հմայիչ ժպիտով:

— Ես չէի ուզի գրիվելիք արձակուրդից, որին երեք շաբաթն սպասել եք: Ես շատ հանգիստ կարող եմ մի շաբաթ էլ այսպես ապրել: Գնացեք, անցկացրեք ձեր արձակուրդը և վերադարձեք, երբ վերջանա:

— Շատ շնորհակալ եմ, սրբ: Եթե մյուս շաբաթ այս օրը գամ, ձեզ հարմա՞ր կլինի:

— Շատ բարի:

Երբ Փրիչըրը գնաց, Ռիչարդ Հարնջըրը զգաց, որ իր օրն սպարդյան չի անցել: Թվում է, վերջապես գտել էր հենց այն, ինչ արժանում էր: Զանգահարեց-կանչեց խոհարարուհուն և հարտնեց, որ ազատին է վարձել:

— Ինձ թվում է, նրանից գու՛ն կլինեք, սրբ: — ասաց կինը: — Էսօր առաջուր ներս եկա՞մ ու հետո խոսեց: Միտնգամից երևաց, որ իր գործը լավ գիտի: Ու թափ-վսե՛նեքից չի:

— Փորձե՛ք, փորձե՛ք, միտն Զեզի: Հույս ունենանք, որ ձեր լավ բնութագիրը կարգարացվի:

— Ես ասացի, որ դուք բժախնդիր եք, սրբ: Ասեցի, որ դուք սիրում եք ամեն ինչ տեղը տեղին լինի:

— Ընդունում եմ, գա աչգպես է:

— Ասեց, որ իրեն գա ձեռ է տալիս: Ասեց, որ սիրում է, երբ պաշտոնները լավն ու վատը տարբերում են: Ի՞նչ հասնուք, ստում է, ամեն ինչ պետք եզածի պէս անելուց, եթե ոչ սր չի նկատու՞մ: Կարծում եմ, կախու՛նք, որ նա իր գործը արտակարգ հպարտութեամբ է անում:

— Իմ ուզան էլ հենց դա է: Կարող է, ինչքան շատ փրճարենք, այնքան ավելի մտառ պատահի:

— Բա ինչ: Ի՞նչ բէհ: սրբ: Զիչո է, մինչև շփարձես, շեռ իմանա: Բայց եթե իմ կարծիքն էք ուզում իմանալ, նա մի իսկական գանձ է դուրս գալու:

Հենց այդպես էլ ստացվեց: Կրուկի սնդամ չէր կտրելի ավելի լավ սպասուհու մասին: Այնքան արտակարգ էր կոշիկները

փայլեցնում, որ երբ առավոտյան Ռիչարդը դրասենյակ էր գնում, սովորականից աշխույժ էր քայլում, քանի որ համարյա տեսնում էր սեփական արտացոլումը դրանց վրա: Այնքան ուշագրի էր հետևում հագուստներին, որ Ռիչարդի գործընկերները սկսեցին կատակներ անել՝ սանիով, թե նա պետական ծառայողների մեջ ամենալավ հագնվողն է: Մի օր, անսպասելիորեն տուն գալով, նա լողարանում կիսագուլպաներ ու թաշկինակներ տեսավ՝ կախված շորանալու և կանչեց Փրիլլըրգին:

— Գուր իմ կիսագուլպաներն ու թաշկինակներն ինքնե՞րդ եք լվանում, Փրիլլըրգ: Ինձ թվում է, դուք տաանց դրա էլ բավականաչափ անելիքներ ունեք:

— Լվացքատանը այնպե՛ս են փշացնում, սրբ: Ես գերազանցում եմ տանն անել, եթե դուք դեմ չեք:

Փրիլլըրգը ճշգրիտ գիտեր, թե նա որ առիթով ինչ պիտի հագնի, և առանց հարցնելու իմանում էր՝ սմո՞կինգ է պետք պատրաստել երեկոյի համար, թե՞ ֆրակ: Երբ Ռիչարդը գնում էր այնպիսի երեկոյի թիկ, որտեղ շքանշաններ էր հարկավոր կրել, տեսնում էր, որ իր շքանշաններն արդեն փոքր, կանոնավոր շարքով կպցրած են պիշակի գարձածալին: Շուտով նա դադարեց ամեն առավոտ պահարանից իր ուզած փողկապն ընտրել, բանդի պարզվեց, որ Փրիլլըրգն անսխալ հանում է հենց այն փողկապը, որն ինքը կրնտրեր: Այդ կնոջ ճաշակը կատարյալ էր: Ռիչարդը եկնագրում էր, որ նա կարգում է իր նամակները, քանզի Փրիլլըրգը միշտ գիտեր իր հաջորդ շարժումը, և եթե ինքը մոռացած էր լինում, թե քանիսին է ժամադրվել, նոթատետրում նայելու կարիք չէր լինում, քանզի Փրիլլըրգը կարող էր ասել: Նա ճիշտ գիտեր, թե հետախուսով խոսելիս ում ինչ տոնով է պետք գիմել: Բացի առևտրականներից, որոնց հետ հակված էր կտրուկ լինելու, Փրիլլըրգը միշտ քաղաքավարի էր, սակայն որոշակի տարբերություն կար նրա դիմելածի մեջ՝ նայած զրույցակիցը միտք Հարենջըրի մաս բնկներն էր, թե միսիստրի կին: Բնազդով գիտեր, ում հետ Ռիչարդը կուզի խոսել, իսկ ում հետ՝ ոչ: Հյուրասենյակում նստած նա երբեմն յսում էր Փրիլլըրգի անվրդով անկեղծ ձայնը, երբ նա զանգողին հավատացնում էր, թե տանտիրը դուրս է եկել, իսկ հետո նա ներս էր գալիս և ասում, թե աիկին այսինչը դանգահարեց, բայց ինքը մոռածեց, թե միտք Հարենջըրը չէր ցանկանա, որ իրեն անհանգստացնեին:

— Միանգամայն ճիշտ է, Փրիլլըրգ,— ժպտում էր նա:

— Ես գիտեի, որ ձեզ ուզում է անհանգստացնել միայն համերգի համար,— ասում է Փրիլլըրգը:

Ռիչարդի ընկերները նրա հետ պայմանավորվում էին Փրիլլըրգի միջոցով և երեկոյան, երբ տանտիրը վերադառնում էր, աղախինը պատմում էր, թե ինչ է արել:

— Միսիս Սոմզը զանգահարեց, սը՛ր, և հարցրեց, թե իր հետ հինգշաբթի օրը՝ ամսի ութին չե՞ք ընթրի արգոք, բայց ես ասացի, թե դուք շատ եք ցավում, սակայն արդեն պայմանավորվել եք ընթրել լեյդի Վերսիլըրի հետ: Միտք Օքլին զանգահարեց ու հարցրեց, թե հաջորդ երեքշաբթի իր հետ Սալոյ չե՞ք գնա՝ կոկտեյլի հրավերքի: Ասացի, եթե կարողանաք, կգընաք, բայց գուցե ստիպված լինեք ատամնաբույժին այցելել:

— Միանգամայն ճիշտ է:

— Մտածեցի, որ զեռ կտեսնեք, երբ ժամանակը կգա, սրբ: Բնակարանը փայլելու ստոիճան մաքուր էր պահում: Մի առիթով, նրա ծառայությունների ընդունվելուց ոչ շատ անց, Ռիչարդն արձակուրդից հետո գալով՝ դրազարակից մի գիրք հանեց և միանգամայն նկատեց, որ վրայի փոշին ատած է: Նա զանգահարեց:

— Ես մոռացա գնալուցս ձեզ ասել, որ գրքերիս երբևր, ոչ մի պարագայում ձեռք չտաք: Երբ գրքերը հանում են, որ վրայի փոշին առնեն, երբեք հետո ճիշտ տեղը չեն դնում: Իմ հոգը չէ, որ գրքերս կփոշոտվեն, բայց տանել չեմ կարող, երբ դրանք հնարավոր չի գտնել:

— Ներողություն, սրբ.— ասաց Փրիլլըրգը.— Ես գիտեմ, սրտը պարոններ շատ բծախնդիր են, և հոգ եմ տարել, որ բոլոր գրքերը լինեն իրենց նախկին սեղանում:

Ռիչարդ Հարենջըրը մի հայացք նետեց գրքերին: Եվ համոզվեց, որ բոլորն իրենց սովորական տեղերում են: Նա ժըլտաց:

— Ներողություն եմ խնդրում, Փրիլլըրգ:

— Ամբողջովին կեղտոտ էին, սը՛ր: Ուզում եմ ասել, բավական էր մեկը բաց անելիք, և ձեռքերդ փոշուց կսևանային:

Անտարակույս, երբեք միտք Հարենջըրի արժաթյա սպասքն այնպիսի հոգասարույթամբ չէր խնամվել, ինչպես այժմ: Նա զգում էր, որ ստիպված է առանձնահատուկ գովեստի խոսքեր ասել:

— Գիտեք, դրանց մեծ մասը Աննա թագուհու և Գեորգ 1-ինի ժամանակվա է,— բացատրում էր նա:

— Այո, գիտեմ, սրբո՛ւնք արքայազնի լավ բան ես խնամում, հաճույք ես զգում այն պետք եղածի պես պահելուց։

— Դուք հուսուով շնորհք ունեք այդ գործում։ Իմ ճանաչած ոչ մի սենեկագլուսն ձեզ նման արծաթեղեն չի պահում։

— Տղամարդի՛կ այնքան համբերատար չեմ, որքան կանայք։— Համեստորեն պատասխանում էր նա։

Ձգալով, որ Փրիչըրդն ընտելացել է իր նոր պաշտոնին, Ռիչարդը վերսկսեց շարաթք մեկ ճաշկերույթներ տալ։ Նա արգեն հայտնաբերել էր, որ Փրիչըրդը ինչպես հարկն է սեղան սպասարկել գիտի, սակայն միայն այժմ ջերմ գոհունակությամբ հասկացավ, թե նա ինչ հմտությամբ է երեկույթներն անցկացնում։ Փրիչըրդն արագաշարժ էր, անաղմուկ և ուշադիր։ Հյուրը դեռ ինչ-որ բանի կարիքը չզգացած, Փրիչըրդը հայտնվում էր նրա արմուկի մոտ՝ ասաջարկելով նրա ուղածու։ Նա շուտով սովորեց Ռիչարդի առավել մոտ ընկերների ճաշակները և հիշում էր, որ մեկը վիսկիի հետ սոդայի փոխարեն ջուր է գերադասում, իսկ մի ուրիշը հատկապես սիրում է գառան ոտքի ներքեի մասը։ Նա ճիշտ գիտեր, թե ծնկատակի միսը որքան պիտի սառեցվի, որ համը չկորչի, և ինչքան է պետք կլարեաք սենյակում պահել, որ համուհոտն իսկականը լինի։ Հումեղի էր նայել, թե ինչպիսի զգուշությամբ է լցնում բուրգունդյան գինին, որպեսզի նստվածքը չխախտվի։ Մի առիթով նա լմատուցեց Ռիչարդի պատվիրած գինին։ Սա բավական կտրուկ գիտողություն արեց այդ մասին։

— Ես բացեցի շիշը, սըր, բայց թեթևակի խցանի հոտ էր գալիս։ Դրա համար Չեմբրթին բերեցի, համարելով, որ ավելի ապահով է։

— Միանգամայն ճիշտ է, Փրիչըրդ։

Շուտով նա այս հարցերը լրիվ թողեց Փրիչըրդին, բանզի հայտնաբերեց, որ նա հրաշալի գիտե, թե հյուրերն ինչ գինիներ կուզեն։ Առանց Ռիչարդի կարգադրության նա հանում էր նկուղի ամենալավ պաշարները և բերում ամենահին կոնյակը, եթե մտածում էր, թե հյուրը նրանցից է, որոնք գիտեն, թե ինչ են խմում։ Կանանց ճաշակին չէր հավատում, և երբ սրանք երեկույթին ներկա էին գտնվում, բերում էր այն շամպայնը, որը եթե չխմվեր, կփշանար։ Փրիչըրդն օժտված էր անզլիացի ծառայի հատուկ բնազդային ունակությամբ՝ զգում էր սոցիալական տարբերությունները, և ո՛չ դիրքը, ո՛չ էլ դրամը չէին կուրացնում նրան ու չէին խանգարում հասկանալ, որ այս մի

մարդը ջենտլմեն չէ, սակայն միտքը Հարենջըրի ընկերների մեջ նա իր սիրեցյալներն ունեք, և երբ ճաշկերույթին մասնակցում էր այնպիսի մեկը, որին նա առանձնապես համակրում էր դեղձանիկ կուլ տված կատվի տեսքով՝ հյուրին մի շիշ այնպիսի պինի էր լցնում, որ Հարենջըրը պահել էր շատ հատուկ զեպքերի համար։ Դա դժարձացնում էր Ռիչարդին։

— Մերուկ, դու Փրիչըրդի բարենգույթյանն ես արժանացել,— բացականչում էր նա։— Սակավաթիվ են այն մարդիկ, ում նա այս գինին տալիս է։

Փրիչըրդը վերածվեց անհրաժեշտություն։ Շուտով նա հանրահայտ դարձավ սրբուհու կատարյալ ազդեցիկ։ Մարդիկ Հարենջըրին իր ունեցած ոչ մի բանի համար այնքան չէին նախանձում, որքան՝ Փրիչըրդի։ Նա իր քաշով մեկ ոսկի արժեք։ Երբ նրան գովաբանում էին, Ռիչարդը Հարենջըրն ինքնարավականությունից շողում էր։

— Կավ տերն է լավ ծառայ ունենում,— դժարթ տալով էր նա։

Մի օր, երբ ընկերներով նստած պորտոֆելն էին խմում, իսկ Փրիչըրդը դուրս էր եկել սենյակից, խոսք բացվեց նրա մասին։

— Սարսափելի հարված կլինի, երբ նա հեռանա։

— Ինչու՞ պիտի հեռանա։ Մի երկու հոգի փորձել են նրան ինձանից տանել, բայց նա վրաները չի էլ նայել։ Փրիչըրդը իր լավը հասկանում է։

— Մոտ ժամանակներս կամուսնանա։

— Չեմ կարծում, թե այդ տեսակ կին է։

— Նա գեղեցիկ է։

— Այո, բավական կարգին արտաքին ունի։

— Ի՞նչ եք ասում։ Նա շատ բարետես արարած է։ Կյանքի ալլ հանգամանքներում նա հանրաճանաչ գեղեցկուհի կլինե՞ր՝ լուսանկարը բոլոր թերթերում։

Այդ բուպեին Փրիչըրդը ներս եկավ՝ բերելով սուրճը։ Ռիչարդը Հարենջըրը նայեց նրան։ Այս էլ շորս տարի օրեցօր նրան տեսնելուց հետո,— աստված իմ, ա՛յ թե թռչում է ժամանակը.— նա իրոք մոռացել էր, թե աղախինն ինչ տեսք ունի։ Փրիչըրդը այն առաջին օրվա համեմատությամբ շատ էր փոխվել։ Ավելի զիբ չէր, քան այն ժամանակ, պահպանել էր երեսի առողջ գույնը, իսկ կանոնավոր դիմազոծերը կրում էին նույն արտահայտ

տութիւնը՝ միաժամանակ և՛ լարված-ուշադիր, և՛ անբովանդակ։
Ան համազգեստը սազում էր նրան։ Փրիչըրը դուրս գնաց։

— Նա մի տիպար է, կասկած չկա։

— Գիտեմ,— պատասխանեց Հարենչըրը։— Նա կատարելութիւնն է։ Առանց նրա ես կկորչեի։ Եվ տարօրինակն այն է, որ ինձ առանձնապէս դուր չի գալիս։

— Ինչու՞։

— Երևի որովհետև մի քիչ ձանձրացնում է։ Ախր բոլորովին չի խոսում։ Հաճախ փորձել եմ հետը զրուցել։ Նա պատասխանում է ասածներինս, բայց այդքանը միայն։ Չորս տարվա մեջ չի խիզախել մի սեփական դիտողութիւն անել։ Ես նրա մասին բացարձակապէս ոչինչ չգիտեմ։ Զգիտեմ՝ դուրը գալի՞ս եմ, թե՞ միանգամայն անտարբեր է իմ հանդեպ։ Նա ավտոմատ է։ Ես նրան հարգում եմ, ես նրան գնահատում եմ, ես նրան վստահում եմ։ Փրիչըրըն օժտված է աշխարհի բոլոր բարեմասնութիւններով, և ես հաճախ տարակուսել եմ, թե այդ ամենից հետո ինչու՞ եմ կատարելապէս անտարբեր նրա հանդեպ։ Երևի, կարծում եմ, պատճառն այն է, որ նա միանգամայն զուրկ է հմայքից։

Այդտեղ խոսակցութիւնը կանգ առավ։

Դրանից երկու-երեք օր անց, բանի որ այդ երեկո Փրիչըրդի հանգիստն էր, Ռիչարդը Հարենչըրը ոչ մի ժամադրութիւն չուներ աննալով, միայնակ ճաշում էր յուր ակումբում։ Մի սպասավոր տղա մտեցավ և ասաց, թե հենց նոր բնակարանից զանգահարել են ու հաղորդել, որ բանալիները տանն է թողել։ Հարցնում էին, թե արդյոք տաքսիով շքերե՞ն։ Հարենչըրը ձեռքը մտցրեց գրպանը։ Այո, դա փաստ էր։ Հանգամանքների անսովոր բերումով նա մոռացել էր բանալիները փոխել-դնել սերժն կոստյումի գրպանը, երբ փոխել էր հազուատը ճաշի գալուց առաջ։ Ռիչարդը մտադրվել էր բրիջ խաղալ, սակայն այդ երեկո ակումբում հանդուստյան օր էր, և համարյա հուշա չկար, որ կարգին խաղընկերներ կգտնվեն, միաժամանակ նրա մտքովն անցավ, թե դա լավ առիթ է տեսնելու այն կինոնկարը, որի մասին բոլորը խոսում էին, ուստի սպասավորի միջոցով լուր ուղարկեց, որ կես ժամից ինքը կանցնի բանալիների հետևից։

Դուրը բացեց Փրիչըրը։ Բանալիները ձեռքում էին։

— Ի՞նչ եք անում այստեղ, Փրիչըրդ,— հարցրեց Հարենչըրը։— Մի՞թե այսօր ձեր ազատ երեկոն չէ։

— Այո՞, սրբ։ Բայց ես չէի ուզում գնալ, դրա համար միսիս Զեդդին ասացի, որ կարող է գնալ իմ փոխարեն։

— Դուք պետք է դուրս ելնեք, երբ հնարավորութիւն երունենում,— ասաց ինչպէս միշտ հոգատար Ռիչարդը։— Հարկավոր չէ ամբողջ ժամանակ փակված մնալ այստեղ։

— Ես մեկ-մեկ գործով դուրս եմ գնում, բայց վերջին ամիսը երեկոյան տեղ չեմ գնացել։

— Ախր ինչու՞։

— Դե, մենակ տեղ գնայն առանձնապէս ուրախ բան չէ, իսկ այս վերջերս ես չգիտեմ մեկնումեկին, որի հետ շատ ցանկանայի դուրս գալ։

— Դուք պիտի ժամանակ առ ժամանակ մի փոքր զվարճանաք։ Դա ձեզ համար օգտակար է։

— Մի տեսակ անսովոր եմ դարձել դրան։

— Լսեցեք, ես հիմա հենց պատրաստվում եմ կինո գնալ։ Զէի՞ք ուզի ինձ հետ գալ։

Այս բառերն ասվեցին բարութիւնից, առանց մտածելու և հենց ասելու վայրկյանին Ռիչարդը կիսով չափ ափսոսաց իր խոսքերի համար։

— Այո, սրբ, կուզեի,— ասաց Փրիչըրը։

— Դե ուրեմն վազեք ու գլխարկ դրեք։

— Մի րոպե էլ չեմ ուշանա։

Փրիչըրը անհետացավ, իսկ Հարենչըրը գնաց հյուրասենյակ և սիգարետ վառեց։ Նրան մի փոքր զվարճացնում էր իր ասածը ու նաև գոհացնում՝ հաճելի բան էր մեկնումեկին երջանիկ դարձնել, ինքն իրեն այդքան քիչ նեղութիւն պատճառելով։ Փրիչըրդին բնորոշ էր, որ ոչ զարմացավ, ոչ էլ վարանեց։ Մոտ հինգ րոպե Ռիչարդին սպասեցրեց, իսկ երբ վերադարձավ հազուատը փոխել էր կապույտ զգեստ էր հագել (ինչպէս ենթադրեց Հարենչըրը՝ արհեստական մետաքսից), կապույտ մետաղազարդով փոքրիկ սև գլխարկ, իսկ վզին ազվեսի արծաթափայլ մորթի գցել։ Ռիչարդը մի քիչ թեթևացած զգաց, տեսնելով, որ նրա տեսքը ո՛չ ազբատիկ է, ոչ էլ աչքի զարնող։ Հանդիպողներից ոչ մեկի մտքով չի անցնի, թե դա մի հանրահայտ պետական գործիչ է, որը կինոթատրոն է տանում յուր ազախնին։

— Կներեք, որ ձեզ սպասել տվեցի, սրբ։

— Ոչինչ, ինչ կա որ,— մեծանոգաբար ասաց Ռիչարդը։

Նա բաց արեց դրսի դուռը, և Փրիչըրը դուրս եկավ նրանից

առաջ: Ռիչարդը հիշեց հայտնի անեկոտոր էյուրոպիկոս 14-րդի
և պալատականի մասին ու գնահատեց այն փաստը, որ Փրիչըրը-
ղը շատանկեց իրենից առաջ անցնելու Կինոթատրոնը միստր
Հարենշըրրի բնակարանից շատ հեռու չէր, ուստի նրանք քայլեցին
Ռիչարդը խոսում էր եղանակից, փողոցների վիճակից և Ադուլֆ
Հիտլերից: Փրիչըրը պատասխանում էր, երբ հարկ էր լինում:
Հասնելուն պես մուլտֆիլմ սկսվեց Միքի Մաուսի մասին, և
նրանց տրամագրությունը բարձրացավ: Այս շորս տարվա մեջ,
ինչ Փրիչըրըն աշխատանքի էր ընդունվել, Ռիչարդ Հարենշըրը
հազարից մի անգամ էր տեսել, որ նա ժպտա, և հիմա նրան
զվարճացնում էր, թե Փրիչըրըն ինչպես է ուրախ ծիծաղի,
պոռթկումներ ունենում մեկը մյուսի հետեից: Հաճելի էր տեսնել,
որ նա դու՛հ է: Հետո սկսվեց գլխավոր կինոֆիլմը: Լավ նկար էր՝
երկուսն էլ այն գիտեցին հուզմունքից շունչները պահած: Հա-
նելով ծխախոտատուփը, որ սիգարետ վերցնի, Ռիչարդը մեքե-
նայտեն հրամցրեց Փրիչըրըին:

— Շնորհակալություն, սըր,— ասաց նա՝ մի հատ վերց-
նելով:

Միստր Հարենշըրը կրակ մոտեցրեց: Փրիչըրըն աչքերն էկ-
րանի վրա էին, և նա համարյա չէր գիտակցում, թե ինչ է անում:
Երբ կինոնկարն ավարտվեց, նրանք ամբոխի հոսքի հետ ելան
փողոց: Ետ քայլեցին տուն: Հրաշալի աստղալից երեկո էր:

— Հավանեցի՞ք,— հարցրեց միստր Հարենշըրը:

— Անչափ, սըր:

Մի միտք անցավ Ռիչարդի գլխով:

— Ի դեպ, դուք ընթրե՞լ եք այսօր:

— Ոչ, սըր: Ժամանակ չկար:

— Հիմա սովամահ չե՞ք լինում:

— Որ տուն հասնեմ, մի քիչ հաց ու պանիր կուտեմ՝ մի
պավթ կակաոյով:

— Դա շատ մոտայ է հնչում:

Օրում ուրախ մի զգացում էր թափառում, և անցորդները,
որ բազմություն անցնում էին նրանց կողքով՝ այս կամ այն
կողմ, թվում էր, համակված էին մի հաճելի ոգևորությամբ:—
Ջուրն ընկնողն անձրևից չի վախենա,— ասաց նա ինքն իրեն:—
Լսեցեք, չե՞ի՞ք ուզի միասին մի տեղ ընթրեինք:

— Եթե դուք ցանկանում եք, սըր...

— Եկեք:

Նա մեքենա կանգնեցրեց: Շատ մարդասիրաբար էր արտա-
դրված, և դա բոլորովին էլ տհաճ զգացում չէր: Վարորդին պատ-
վիրեց քշել Օքսֆորդ սթրիթի վրայի մի սեստորան՝ բավական
զվարթ մի տեղ, որտեղ սակայն, նա վստահ էր, ծանոթների պա-
տահելու վտանգ չկար: Այնտեղ նվագախումբ կար, և մտքիկ
պարում էին: Փրիչըրըն բավականություն կպատճառեր նրանց
տեսնելը: Երբ նստեցին, մի մատուցող մոտեցավ նրանց:

— Այստեղ հավաքընթրիք ունեն,— ասաց Ռիչարդը, մտա-
ծելով, որ դա հենց այն է, ինչ Փրիչըրըն դուր կգա:— Եկեք
դրանից պատվիրենք: Ի՞նչ կուզեիք խմել: Մի քիչ սպիտակ
գինի՞:

— Ես կուզեի մի բաժակ իմբիրի գարեջուր:

Ռիչարդ Հարենշըրն իր համար սողալով վիակի պատվիրեց:
Փրիչըրը մեծ ախորժակով կերավ, ու թեև Հարենշըրը քաղցած
չէր, ինքն էլ միացավ, որպեսզի նա չբաշվի: Հենց նոր նայած
կինոնկարը խոսելու նյութ մովեց նրանց: Մի բանի օր տաղվա
խոսքերը շատ ճիշտ էին՝ Փրիչըրը պղպղ կին չէր, և եթե մեկնու-
մեկն իրենց միասին տեսած լինեք. վստա չկար: Ընկերների
համար բավական լավ պատմություն կլինեք, թե ինչպես է ան-
զուգական Փրիչըրըն տարել կինոթատրոն, իսկ հետո՝ ընթրե-
լու: Փրիչըրը թույլ ժպտը գեմքին նայում էր պարտղներին:

— Պարել սիրո՞ւմ եք,— հարցրեց Ռիչարդը:

— Ազդիկ ժամանակ ասանձնապես դրա սիրահարը չէի:
Ամուսնանալուց հետո էլ շատ չեմ պարել: Ամուսինս ինձանից
մի փոքր կուշտ էր, և ես, ճիշտն ասած, չեմ կարծում, թե գեղե-
ցիկ է, երբ ուզումարդ բարձրահասակ չի, դուք ինձ, իհարկե,
հասկանում եք: Երեի շուտով դրա համար շափազանց ծեք
կլինեմ:

Ռիչարդն, անտարակույս, յուր ազականույ ավելի բարձրահա-
սակ էր: Նրանք հարմար կլինեին: Իսկ Ռիչարդը պարել սիրում
էր և լավ էր պարում: Բայց աստուծով էր: Չէր ուզում իր
առաջարկով Փրիչըրըն շփոթեցնել: Ավելի լավ կլինի շատ հե-
ռուն շքնալու Եվ, այնուհանդերձ, ի՞նչ կա որ: Ախր Փրիչըրը շատ
միջոցինակ կյանք է վարում: Նա այնքա՛ն զգույն է՝ եթե դա
սխալ համարի, անկասկած պատշաճ պատրվակ կգանի հրա-
ժարվելու:

— Կուզեի՞ք մի անգամ փորձել, Փրիչըրը,— ասաց նա, երբ
նվագախումբը նորից նվագեց:

29—Լուսին և վեցյանահոց

— Ես շատ եմ հետ վարժվել, սրբ:

— Ի՞նչ անենք որ:

— Եթե զուք դեմ չեք, սրբ,— անվրդով պատասխանեց Փրիշըրը ու տեղից ելավ:

Նա ամենևին էլ երկնչած չէր: Միայն վախենում էր, որ չի կարողանա ձիշտ հետևել իր գույգի քայլերին: Նրանք պտտվեցին, Ռիշարդը գտավ, որ նա շատ լավ է պարում:

— Բայց զուք կարգին պարում եք, Փրիշըրդ,— ասաց նա:

— Սկսում եմ վերհիշել:

Խոշորակազմ կին լինելով, Փրիշըրդը թեթևաշարժ էր ու ուրիշ մի քնահան զգացում ուներ: Նրա հետ պարելը շատ հաճելի էր: Ռիշարդը մի հայացք գցեց պատի հայելիներին և անկախ իր կամքից մտածեց, որ միտքին շատ լավ տեսք ունեն: Նրանց աչքերը հայելու մեջ հանդիպեցին, նրա մտքով անցավ, թե գուցե նույն բանն էլ Փրիշըրդն է խորհում: Երկու անգամ էլ պարեցին, իսկ հետո Ռիշարդը Հարենչըրըն առաջարկեց գնալ: Հաշիվը փակեց և զուրս քայլեցին: Նա նկատեց, որ Փրիշըրդն ամբողջ մեջ չուր ճանապարհը հարթում է առանց մի կաթիլ շփոթության: Սաքսի նստեցին ու տասը րոպեից տանն էին:

— Ես հետևի գանից կմտնեմ, սրբ,— ասաց Փրիշըրդը:

— Դրա կարիքը չկա: Եկեք ինձ հետ՝ վերելակով:

Նա ուղեկցեց Փրիշըրդին, մի սառցային հայացք պարզեցրեց զիշերային բարապատին, այնպես, որ սա տարօրինակ շամաբի, որ ինքը բավական ուշ տուն է գալիս աղախնի հետ, իր բանալիով դուրս բացեց և ներս թողեց նրան:

— Դե, բարի գիշեր, սրբ,— ասաց Փրիշըրդը:— Եստ շնորհակալ եմ ձեզից: Ես իրոք, շատ մեծ հաճույք ստացա:

— Ես եմ շնորհակալ, Փրիշըրդ: Միայնակ շատ ձանձրալի երեկո կունենալի: Լուսով եմ, որ գո՛ւ մնացիր:

— Այո, սրբ, ավելի, բուն կարող եմ արտահայտել:

Ամեն ինչ շատ հաջող էր ստացվել: Ռիշարդը Հարենչըրը գոհ էր ինքն իրենից: Բարի գործ էր արել: Հրաշալի զգացողություն է սրել մեկին այդքան մեծ հաճույք պատճառելը: Սևեղանի մեծահոգությունը չհրմայրեց նրան, և մի րոպե Ռիշարդը սրտի խորքում անսասման սեր զգաց ողջ մարդկային ցեղի նկատմամբ:

— Բարի գիշեր, Փրիշըրդ,— ասաց նա, և բանի որ երջանիկ

ու լավ էր զգում, ձեռքը դրեց նրա գոտիատեղին ու համբուրեց շուրթերը:

Փրիշըրդի շրթունքները շատ փափուկ էին: Դրանք հասցանք հետևանալ: Դա ուժեղի ծաղկման շրջանում գանձող կնոջ ջերմ, սրտագին զրկախառնություն էր: Ռիշարդը դառավ, որ դա շատ հաճելի է և մի քիչ ավելի մոտ բաշեց նրան: Վերջինս ձեռքը գցեց Ռիշարդի վզով...

Որպես կանոն, միտքը Հարենչըրը չէր արթնանում, մինչև Փրիշըրդը նամակները ներս չսերեր, սակայն հաջորդ առավոտյան նա չսթն անց կեսին աչքերը բաց արեց: Մի տարօրինակ ու անձանթ զգացում ուներ: Նա սովոր էր քնելուց գլխի տակ երկու բարձ գնել, իսկ հիմա հանկարծ գիտակցեց, որ միայն մեկն է: Հետո հիշեց, ցնցվեց ու շուրջը նայեց: Մյուս բարձը կողքին էր: Փառք աստծո, վրան քնած պուխ չկար, բայց պարզ էր, որ եղել է: Սառը քրտինքը պատեց նրան:

— Աստված իմ, ի՞նչ ապուշն եմ եղել,— բարձրաձայն գուշեց նա:

Ինչպե՞ս կարող էր ինքը նման հիմարություն անել: Այդ ի՞նչ էր եղել իր հետ: Կապվել սպասուհու հետ, ի՞նչ ստորություն: Ինչպիսի՞ ամոթալի բան էր տարիքում և իր դիրքում: Զէր լսել, թե Փրիշըրդն ինչպես է զուրս գնացել: Հավանաբար զիտ քնած է եղել: Ախր ինքը նրան առանձնապես չէր էլ հավանում՝ Փրիշըրդն իր ճաշակի կին չէր: Եվ, ինչպես այն երեկո ասաց, բավական ձանձրացնում էր իրեն: Նույնիսկ հիմա նրան գիտեք միայն որպես Փրիշըրդ: Կաղապար անգամ չունեք, թե անունն ինչ է: Ա՛յ բեզ խենթություն: Եվ ի՞նչ պիտի հիմա լինի: Անելանելի դրություն էր: Պարզ է, որ նրան պահել չի կարող, և, այնուհանդերձ, նրան հեռացնել մի բանի համար, որի մեղքը կեսն իրենն է, ահավոր անարդարություն է: Ինչպիսի՞ ապուշություն՝ կորցնել լավագույն ազախնին մի ժամվա խելառություն պատճառով:

— Այդ ամենն իմ սրտի տնիծյալ բարությունն պատճառով,— հառաչում էր նա:

Էլ ո՞վ կկարողանա այդպես հրաշալի խնամել իր հազուադեպը և այդքան լավ մարդի արժաթեղներ: Փրիշըրդը գիտեք իր բուրքը ընկերների հեռախոսի համարները և հասկանում էր դիտարկել լավն ու վատը: Բայց, իհարկե, նա պետք է գնա: Ինքն

էլ պիտի հասկանա, որ այս տեղի ունեցածից հետո ոչինչ առաջ-
վա պէս չի կարող լինել: Մի լավ նվեր կտա նրան ու գերազանց
հանձնարարական: Հիմա ամեն բոլոր կարող է ներս գալ: Տես-
նես իրեն շարճճի-կոկե՞տ կպահի, թե՞ տնավարի: Կամ գուցե
ամբարտաձա՞ն: Կարող է իրեն անգամ նեղութուն շտա նամակ-
ները ներս բերել: Մարտափելի կլինի, եթե ինքը զանգ տա, իսկ
միտիս Զեղին ներս գա և ասի. «Փրփրոզը դեռ չի ելել, սըր,
երեկվա գիշերից հետո ուզում է մի քիչ պառկել»:

— Ի՞նչ հիմարն եմ ես եղել: Ի՞նչ ողորմելի անասուն:

Գուռը ծեծեցին: Տագնապից Ռիչարդի սիրտը խառնեց:

— Ներս եկեք:

Ռիչարդ Հարենցրը շատ դժբախտ մարդ էր:

Ժամացույցի խփոցի հետ Փրփրոզը ներս եկավ:

— Բարի առավոտ, սըր, — ասաց նա:

— Բարի առավոտ:

Նա բացեց վարագույրները և տվեց նամակներն ու թերթերը:
Գեմքն անխռով էր: Ճիշտ իր ամենօրյա տեսքն ունէր: Շար-
ժումները նույն վատահոլութունն ունէին, ինչ որ միշտ: Ո՛չ խու-
ւափում էր Ռիչարդի հայացքից, ոչ էլ որոնում այն:

— Գո՞րշը կհագնեք, սըր: Երեկ դերձակի մոտից հետ բե-
րեցին:

— Այո:

Հարենցրը ձևացնում էր, թե նամակներն է կարդում, սա-
կայն աչքի տակով նրան էր դիտում: Փրփրոզը մեջքով էր շքրը-
ված: Նախ վերջրեց շապիկն ու վարտիքը և ծալեց դրեց աթոռի
վրա: Հետո հանեց երեկվա վերնաշապիկի ճարմանդները և մա-
բուրներին ամբացրեց: Մաքուր գուլպաները դրեց աթոռի վրա՝
կապիչների կողքը: Հանեց գորշ կոստյումը և անդրավարտիքի
ետեի կոճակներին տարատակալներ կպցրեց: Բացեց պահարանը
և մի բոլոր մտածմունքից հետո կոստյումին սաղող փողկապ
բնտրեց: Թեևն զցեց նախորդ օրվա կոստյումը և վերջրեց կո-
շիկները:

— Հիմա՞ կնախաճաշեք, սըր, թե սկզբից լոգանք կընդու-
նեք:

— Հիմա կնախաճաշեմ:

— Շատ լավ, սըր:

Իր անշտապ, հանգիստ բայերով, անվրդով Փրփրոզը դուրս
դնաց: Նրա գեմքը կրում էր այն վերին աստիճանի լուրջ, հաճո

գալից, անբովանդակ արտահայտությունը, որ միշտ էր կրել,
ինչ որ եղել էր, հավանաբար երազ էր: Փրփրոզի վարքագծում
ոչ մի բան չէր հուշում, թե նա անցյալ գիշերվա մտտին մի որևէ
բան է հիշել: Միստր Հարենցրը թեթևացած հառաչ արձակեց:
Ամեն ինչ լավ կլինի: Կարիք չկա, որ նա հեռանա, կարիք չկա
Փրփրոզը կատարյալ ազախին է: Հիմա միստր Հարենցրը գի-
տեր, որ ոչ մի խոսքով կամ շարժումով նա երբեք չի վերադառ-
նա այն օրվան, երբ մի վայրկյան իրենց հարաբերությունները
տարբերվել են տիրոջ ու ծառայի հարաբերություններից: Ռի-
չարդ Հարենցրը շատ երջանիկ մարդ էր:

Հենդ օրվա ընկերը



յս էլ երեսուն տարի է, ինչ ուսումնասիրում եմ իմ նմաններին: Ես շատ բան չգիտեմ նրանց մասին: Անշուշտ, հազիվ թե մտառ վարձելի նրա զեմքին նաչելով, և այնուհանդերձ, ըստ իս. մենք մեզ հանդիպույունների մասին զատում ենք մեծ մասամբ նրանց պեմքերով: Կարողացելու ենք անում՝ նաչելով մտախձեհին, աչքերի հայացքին. բնույթի գծագրությունը: Կարծում եմ, որ ավելի շատ սխալ ենք լինում. քան ճիշտ: Ինչու՞ են վեպերի ու պիեսներն աչքան համախի կյանքից ճեռու: Իրովճեռան հեղինակները, զուցե անհրաժեշտությունից գրգված. ետևա ամբողջական կերպարներ են կերտում: Երանք հնարաղբարություն չու-

նեն այդ հերոսներին հակասական պատկերելու, քանզի գրանկը նրանք անբմբունելի են դառնում, և, այնուամենայնիվ, մենք՝ մարդիկ մեծամասնությամբ հենց հակասական ենք. որ կանա: Մենք փոփոխական, իրար հակասող հատկությունների պատաս-հական մի փունջ ենք: Տրամաբանության դասադրքում կհար-զար, որ անմատոթյուն է ասելը, թե դեղինը սևամեջ է կա-մ էրախտապարտությունն օդից ծանր է, բայց անհամառակելիս-թյունների այն խառնուրդում, որ կազմում է մարդկային «ես»-ը, դեղինը շատ հանդիսա կարող է ձի լինել ու կառք, և երախտա-պարտությունը՝ հաջորդ շարաթվա մեջտեղը: Ես տանք թոթվում եմ, երբ ինձ տում են, թե իրենց առաջին սպալորությունների ուրիշների մասին միշտ ճիշտ են: Մտածում եմ՝ կամ այս մարդը խորաթափանց չէ, կամ շափից զուրս մեծ կարծիք է իր մասին: Ինչ վերաբերում է ինձ, սպա սրբան ավելի լավ եմ ճանաչում մարդկանց, այնքան նրանք ավելի հանելուկային են ինձ թր-վում, իմ ամենավաղեմի բնկերները հենց նրանք են, որանց մասին կարող եմ ասել, որ ոչ մի բան էլ չգիտեմ:

Այս մտքերը գլուխս եկան, որովճեռան տոտվառյան լրագրում կարդացի, որ էգուարդ Հայց Բարթընը մեռել է Կորեում: Նա առևտրական էր և երկար տարիներ աշխատել էր Ճապոնիայում: Ես Բարթընին վատ գիտեի, սակայն նրանով հետաքրքրվում էի. որովճեռան ժամանակին մի առիթով շատ էր զարմացրել ինչ-եթե այդ պրամությունը հենց իր բերանից լսած չլինեի, երբեք չէի հավատա. թե նա ընդունակ է նման արարքի: Դա առավել ևս ցնցող էր, բանի որ թե՛ արտարինով և թե՛ շարժումներով նա շատ որոշակի սպալորություն էր թողնում: Ահա իրոք մի մարդ, որն ամբողջական էր: Դա մի նվազ, փոքրահասակ անձնավո-րություն էր, հասակը ոչ ավելի, քան հինգ սանաչափ շորս գլուխը, շատ բարեկազմ, այնհեր, կարմիր, շատ կնճուտ երեսով և կա-պույտ աչքերով: Կարծում եմ, որ երբ հետք ծանոթացա, մե վախճուն տարեկան կլիներ: Նա միշտ շատ խնամքով և համեստ էր հազմված լինում՝ համապատասխան էր տարիքին ու գիր-քին:

Թեև Բարթընի պրասնեյակները Կորեում էին, նա ինքը հա-ճախ էր գալիս Յոկոհամա: Ես էլ մի առիթով մի քանի օր այն-տեղ էի՝ նազի էր սպասում, և ինձ բրիտանական սկուտրում ժանոթագրին Բարթընի հետ: Երբ ճեռան բրիջ խաղացինք, նա լավ խաղացող էր և չէր խառնվում սեռ՝ զամբերներից:

Շատ չէր խոսում ոչ այդտեղ, ոչ էլ հետո՝ երբ խմում էինք, բայց ասածները խելամիտ բաներ էին։ Մեզմ, զուսպ հումոր աւներ։ Երևում էր, որ ակումբում Բարթընը ժողովրդականութիւնն է վայելում, և հետո, երբ արգեն գնացել էր, նրան նկարագրեցին որպէս ամենալավ անդամներից մեկին Այնպէս ստացվեց, որ երկուսս էլ Գրանդ Օթելում էինք ապրում, և հաջորդ օրը Բարթընը խնդրեց, որ իր հետ ճաշիմ։ Հանդիպեցի նրա կնոջը՝ գեր, տարեց, ժպտուն, և երկու դուստրերին։ Ակներևորեն համերաշխ ու սիրով ընտանիք էր։ Ինձ թվում է, որ Բարթընի մեջ առաջին հերթին աշքիս զարնեց նրա բարութիւնը։ Մի ինչ-որ շատ հաճելի բան կար նրա մեղմ, կապուտակ աչքերում։ Չայնը հանգարտ էր, դժվար էր երևակայել անգամ, թե զայրույթի րուպեին այն կարող է բարձրանալ, ժպիտը՝ քնքուշ։ Ահա մի մարդ, որ գրավում էր բնզ, որովհետև զգում էիր, որ նա անկեղծ սիրում է յուր նմաններին։ Հմայքի տեր անձնավորութիւն էր Բարթընը։ Սակայն միաժամանակ ոչ մի բաղցր-մեղցր բան չկար նրանում, սիրում էր իր թղթախաղը և կոկտեյլը, կարողանում էր համով-հոտով լավ ու հետաքրքրաշարժ պատմութիւններ պատմել, իսկ երիտասարդ հասակում սպորտով էր զբաղվել։ Բարթընը հարուստ մարդ էր. նա սեփական ձեռքերով էր վաստակել իր ամեն մի գրողը։ Երևի պատճառներից մեկը, որ համակրանք էր առաջացնում նրա հանդեպ, այն էր, որ Բարթընն այդքան փոքր էր ու փխրուն. նա մարդու մոտ հովանավորողի բնազդներ էր առաջացնում։ Զգում էիր, որ ճանճին անգամ չի կարող վնասել։

Մի օր ցերեկը ես նստած էի Գրանդ Օթելի ճեմասրահում։ Դա երկրաշարժից առաջ էր, և կաշվե բազկաթոռները զեռ չէին հանել։ Պատուհանից լավ երևում էր նավահանգիստն իր մարդաշատ անցուզարձով։ Հսկայական լայներևներն ուղեւորվում էին վանքուվեր ու Սան Ֆրանցիսկո, կամ Եվրոպա՝ ճանապարհին անցնելով Շանհայով, Հոնկոնգով և Սինգապուրով։ Չորս կողմը ինչ երկրի ասես պատկանող մեծ ու փոքր շոգինավեր էին՝ ծակծկված ու հալումաշ եղած, վեր ցցված քթերով ջոնկեր, հըսկայական գունավոր առագաստանավեր և անհաշիվ փոքր նավակներ։ Դա մի եռուկեռով լի, աշխույժ պատկեր էր, միամտամանակ սակայն, չգիտես ինչու, հոգու համար հանգստացուցիչ։ Ահա ուսմանտիկան, և թվում էր, թե բավական է ձեռքը պարզես և կշռափես այն։

Շուտով ճեմասրահ մտավ Բարթընը և անմիջապէս նկատեց ինձ։ Նա եկավ ու նստեց կողքիս բազկաթոռին։

— Ի՞նչ կարծիքի եք, մի բան չիմե՞նք։

Նա ծափ զարկեց՝ կանչեց բոյին և երկու ջինով կոկտեյլ պատվիրեց։ Մինչ բոյը խմիչքն էր բերում, դրսում փողոցով մի մարդ անցավ և ինձ տեսնելով՝ ձեռքը թափահարեց։

— Դուք ճանաչու՞մ եք Թրընդերին, — ասաց Բարթընը, տեսնելով, որ ի պատասխան շարժեցի դուրիս։

— Ես նրան ակումբում եմ պատահել։ Ասում են, հարազատներից ուղարկած փողով է ապրում։

— Այդպէս էլ կլինի։ Այստեղ դրանցից շատ կան։

— Լավ բրիչ է խաղում։

— Սովորաբար նրանք բոլորն են լավ խաղում։ Անցյալ տարի այստեղ մեկը կար, որքան էլ որ տարօրինակ է՝ իմ անվանակիցը, նա կյանքումս երբեք հանդիպած ամենալավ բրիչ խաղացողն էր։ Տեսնես լոնդոնում կարո՞ղ է պատահած լինեք նրան։ Իրեն կոչում էր Լենի Բարթըն։ Նա երևի ժամանակին շատ լավ ակումբների անգամ էր եղել։

— Չէ, այդպիսի անուն չեմ հիշում։

— Նա գերազանց խաղացող էր։ Խաղաթղթերի նկատմամբ մի տեսակ բնազդ ուներ։ Գերբնական բնազդ։ Ես շատ եմ հետք խաղացել։ Նա մի որոշ ժամանակ կորելում մնաց։

Բարթընը մի կում արեց։

— Դա բավական ծիծաղելի պատմութիւն է, — ասաց նա։ — Այդ Բարթընը վատ տղա չէր։ Ինձ դուր էր գալիս։ Միշտ լավ ու խնամքով հազնված էր։ Յուրովի գեղեցիկ էր՝ գանգուր մաղերով և վարդագույն, սպիտակ այտերով։ Կանայք նրանով շատ էին հետաքրքրվում։ Անվնաս արարած էր, ուղղակի մի քիչ բռնկվող էր։ Իհարկե, շափից դուրս շատ էր խմում։ Այդ տեսակի մարդիկ միշտ են շատ խմում։ Չորս ամիսը մեկ մի քիչ փող էր ստանում Անգլիայից, և նա այդ դումարը մի քիչ ավելացնում էր թուղթ խաղալով։ Ես գիտեմ, իմ փողերից շատ է տարել։

Բարթընը բարեսրտորեն բովածաղ տվեց։ Ես սեփական փորձովս գիտեի, որ նա բրիչ խաղալիս կարողանում էր փող տանուլ տալ, ինչպէս ջինսույմենին է վայել։ Նա իր բարակ ձեռքով շփեց սուփրած կզակը, զարկերակները փքված էին, և ձեռքը թափանցիկութիւն աստիճան գունատ էր։

— Կարծում եմ, այդ պատճառով էլ ինձ մտա եկավ, երբ

անանկացավ, և՛ որովհետև անվանակիցս էր: Մի օր եկավ իմ գրասենյակ և գործ խնդրեց: Ես բավական զարմացա: Նա ասաց, որ այլևս տնից փող չի ստանում և ուզում է աշխատել: Ես հարցրի, թե քանի տարեկան է:

— Երեսունհինգ,— ասաց նա:

— Իսկ ի՞նչ եք արել մինչև այժմ,— հարցրի ես:

— Ը՛մ, առանձնապես ոչինչ,— պատասխանեց նա:

Ես հազիվ ինձ դսպեցի, որ շփթաղեմ:

— Վախենում եմ, որ ներկա բուպեիս ձեզ համար ոչինչ անել չեմ կարող,— ասացի: Մի երեսունհինգ տարի էլ որ անցնի, եկեք մոտս, տեսնենք ինչ կարող եմ անել:

Նա շարժվեց: Բայց խիստ զուսուտվեց: Մի բուպե երկմտեց, հետո սկսեց պատմել, որ վերջերս թղթախաղում բախտը չի բերել: Չի բավարարվել բրիջով, փոկեր է խաղացել և կլավել է: Հիմա գրող անգամ չունի: Եղած-չեղածը գրավ է դրել: Էլ չի կարող հյուրանոցի վարձը վճարել, իսկ պարտք այլևս չեն տալիս: Մի խոսքով, քայքայված, անհույս վիճակում է: Եթե մի գործ չճարի, ինքնասպան կլինի:

Ես մի երկու բուպե նրան նայեցի: Հիմա տեսնում էի, որ լրիվ հայումաջ է եղել: Սովորականից շատ էր սկսել խմել և հիսուն տարեկան էր նրանում: Ազդիկներն այդքան նրանով չէին հետաքրքրվի, և թե հիմա տեսնեին:

— Կա՞մ, թուղթ խաղալուց բացի, ոչ մի բան անել չգիտե՞ք,— հարցրի ես:

— Ես կարող եմ լողալ,— ասաց նա:

— Կողա՞լ:

Ականջներիս հազիվ էի հավատում՝ շափից դուրս անմիտ էր հնչում պատասխանը:

— Ես համալսարանի թիմում եմ լող տվել:

Հիմա մի փոքր քմբռնեցի, թե ինչ էր ուզում ակնարկել: Ես շատ գիտեի այդպիսիներին, որոնք սուտ կիսաստվածներ են եղել իրենց համալսարաններում, որպեսզի տպավորվի դրանից:

— Ես ինքս էլ ջահել ժամանակ բավական լավ լողորդ եմ եղել,— ասացի ես:

Ո՛հ հանկարծ գլխովս մի միտք անցավ:

Դադարեցնելով պատմել, Բարթընը դիմեց ինձ:

— Դուք Կոքեն գիտե՞ք,— հարցրեց նա:

— Ոչ,— ասացի ես:— Եղել եմ այնտեղ, բայց միայն մի գիշերով:

— Ուրեմն չեք իմանա Շիրոյա ակումբը: Երբ ես ջահել էի, այնտեղից լող տվեցի մինչև փարոս և ափ դուրս եկա Քարումիի գետաբերանում: Համարյա երեք մղոն ճանապարհ է և բավական դժվար, որովհետև փարոսի շուրջը ծովային հոսանքներ կան: Դե, ես էլ իմ երիտասարդ անվանակցին պատմեցի այդ մասին ու ասացի, որ եթե կրկնի արածս, աշխատանք կստանա:

Ես տեսա, որ նրա դեմքը փոխվեց:

— Ասում եք, լավ լողորդ եք:

— Այնքան լավ մարզավիճակում չեմ,— պատասխանեց նա: Ես ոչինչ շատացի: Միայն ուսերս թոթվեցի: Նա մի բուպե ինձ նայեց, ապա գլխով արեց:

— Կա՞մ,— ասաց նա:— Ե՞րբ եք ուզում անեմ:

Նայեցի ժամացույցիս: Հազիվ տասն անց էր:

— Կողը ձեզնից մի ժամ տասնհինգ բուպեից ավել չի խլի: Ես մեքենայով գետաբերան կգնամ և տասներկուսն անց կես ձեզ կհանդիպեմ: Ետ կտանեմ ակումբ, կհաղնվեք ու հետո միասին կճաշենք:

— Եղավ,— ասաց նա:

Մենք իրար ձեռք սեղմեցինք: Ես նրան հաջողություն մաղթեցի, և նա գնաց: Այդ առավոտ շատ գործ ունեի և հազիվ հասցրի ժամը տասներկուսն անց կես Քարումիի գետաբերանում լինել: Մակայն կարիք չկար, որ շտապեի. նա շհայտնվեց:

— Ի՞նչ է, վերջին բուպեին վախեցա՞վ,— հարցրեցի ես:

— Ոչ, չվախեցա՞մ: Սկսեց, ինչպես պայմանավորվել էինք: Բայց, իհարկե, նա իր օրգանիկովը քայքայել էր խմելով ու անկանոն կյանքով: Փարոսի շուրջը հոսանքները ավելի շատ էին, քան նա ի վիճակի էր հաղթահարել: Երեք օր չէլինք կարողանում մարմինը հանել:

Մի երկու բուպե ես ոչինչ շատացի: Թեթևակի ցնցված էի: Հետո հարց տվեցի Բարթընին:

— Երբ դուք նրան այդ գործն առաջարկեցիք, գիտեի՞ք, որ կխեղդվի:

Նա կամացուկ, մեղմորեն քմծիծաղ տվեց և հայեց ինձ իր բարի ու վճիտ կապուստակ աչքերով: Ձեռքով շփեց ծնոտը:

— Դե, ես այդ ժամանակ գրասենյակում աղատ տեղ չունեի:

Հինաստանի հաստատույթուն



Ի

չինչ չի կարող գրգել ինձ ասելու այն երջանիկ երկրի անունը, ուր տեղի ունեցան իրազարձու-
թյունները, որոնց մասին ստիպված եմ պատմելու Սակայն վնաս չի լինի, եթե խոստովանեմ, որ դա ամերիկյան մայրցամաքում գտնվող մի ազատ ու անկախ պետություն է: Անկասկած, այդ բացատրությունը շա-
փից ավելի անորոշ է և գիվանդիտական անտխրոժ միջադեպի պատճառ չի կարող դառնալու Ուրեմն, այդ ազատ ու անկախ պե-
տության պրեզիդենտը մտքին գրել էր մի սիրունիկ կին ճարել, և հենց այդ ժամանակ մայրաքաղաք (չայն փոզոցներով արևոտ քաղաք՝ plaza-ով, գանձությունից ոչ զուրկ տաճարով և մի քանի հին իսպանական շինություններով) եկավ մի ջահել արա-

բաժ Միչիգանից՝ այնքան սիրունատես, որ պրեզիդենտի սիրտը թունդ կպավ նրան: Վերջինս առանց ժամանակ կորցնելու հաշտ-
նեց իր կրթի մասին և զոհունակությամբ տեղեկացավ, որ այն փոխադարձ է, բայց հետո ցավով հայտնաբերեց, որ ջահել արա-
բածը իրենց համապատասխանորեն մեկը՝ կին, մյուսն՝ ամուսին ունենալու փաստը համարում է արգելք՝ միություն կազմելու Աղջիկը կանանց հատուկ թույլություն ուներ զեպ ամուսնություն-
նը: Թեև պրեզիդենտը այդ պահանջը շափից գուրս խիստ էր հա-
մարում, սակայն նա այն մարդկանցից չէր, որոնք կմերժեն բավարարել սիրունիկ կնոջ բնահաճույթը, ուստի խոստացավ միջոցներ ձեռք առնել և այդ կերպ հնարավորություն ստանալ իր սրտի սիրուհու ձեռքը խնդրելու Պրեզիդենտը կանչեց յուր արդարադատության մինիստրին ու գլխավոր դատախազին և հարց գրեց նրանց առջև: Ասաց, որ ինքը երկար մտածել է, թե առաջադեմ երկրի համար իրենց ամուսնական օրենքները շտե-
նրված հետամնաց են, և որ այդ պատճառով առաջարկում է հիմ-
նովին կատարելագործել դրանք: Մինիստրն ու դատախազը հե-
ռացան և շատ շտնցած մի ամուսնալուծական օրենք մշակեցին, որ բավարարում է պրեզիդենտին: Սակայն պետությունը, որի մասին գրում եմ, մշտապես հոգ էր տանում, որ ամեն բան սահմանադրական ձևով տեղի ունենար, քանզի դա վերին աստի-
ճանի քաղաքակրթված, գեմոկրատական ու ակնածանքի արժան երկիր էր: Ինքն իրեն և իր պետական երզումը հարող պրեզի-
դենտը չի կարող օրենք հրատարակել, առանց որոշակի ձևակա-
նություններ պահպանելու, մինչև իսկ եթե գա իր սեփական շահերին է համապատասխանում, իսկ այդպիսի բաները ժամ-
նակ են խլում: Հազիվ էր պրեզիդենտը ստորագրել զեկրետը, սրով նոր ամուսնալուծական օրենքն ուժ էր ստանում, երբ հե-
ղափոխություն բռնկվեց և նրան, ի մեծ դժբախտություն, կախե-
ցին plaza-ում գտնվող մի յապտերասյունից՝ վսեմություն-
նից ոչ զուրկ տաճարին դեմ-գիմաց: Սիրունատես ջահել արա-
բածը փութով լքեց քաղաքը, սակայն օրենքը մնաց: Որինքի պայմանները պարզ ու հասարակ էին: Ոսկով հարյուր դոլար վճարելուց և երեսուս օր այդ պետությունում ապրելուց հետո տղամարդը կարող էր բաժանվել կնոջից կամ կինն ամուսնուց, առանց մինչև անդամ հակառակ կողմին տեղյակ պահելու անե-
լիք բաշի մասին: Ձեր կիներ կարող էր ձեռք առել, թե գնում է իր տարիքն առած մոր հետ մի ամիս անցկացնելու և մի օր առա-

վատյան նախաձաշին փոստն աշքի անցկացնելիս կարող է նրանից նամակ ստանալիք, որով հայտնի կգարձներ, թե բաժանվել է ձեռնարկից և արդեն ամուսնացել ուրիշի հետ:

Շատ շանցած ամենուրեք ուրախ լուր տարածվեց, թե Նյու Յորքից ոչ առանձնապես հևու մի կրկիր կա, որի մայրաքաղաքը բարեխառն կլիմա ունի և տանկի հարմարություններ, որտեղ կինը կարող է ինքն իրեն ազատել ամուսնական տաղակալի կապերից արագ ու խնայողաբար: Այն փաստը, որ գործողությունը կարող է կատարվել առանց ամուսնու գիտություն, ազատում էր կնոջը նախնական թունոտ քննարկումներից, որ այնքան հոգնեցուցիչ են նյարդերի համար: Ամեն մի կին գիտե, որ ինչքան էլ տղամարդը վիճի առաջարկության շուրջ, նա տեղի ունեցած փաստը սովորաբար հնազանդություններ է բնորոշում: Ասեք նրան, թե «ուսուցում» էր սղում, և նա կասի, որ դրամը չի հերիքում, բայց դեհ մեքենան, և նա գտնուելի պես կստորագրի շեքը: Ուստի, շատ շանցած, գեղեցիկ կանայք բավական մեծ թվաքանակով սկսեցին ժամանել այդ հաճելի, արեոտ քաղաքը, հոգնած գործարար կանայք և մողայիկ կանայք, սիրաշատ կանայք և սիրառատ կանայք գալիս էին Նյու Յորքից, Չիկագոյից և Սան Ֆրանցիսկոյից, գալիս էին Ջորջիայից և Դաքոթայից, գալիս էին Ամերիկայի բոլոր նահանգներից: Յունայթեդ Յթութ կայնի՝ նավերի հարմարությունները հագիվհագ էին համապատասխանում պահանջներին, և եթե դուք ցանկանում էիք առանձին նավախցում ճանապարհորդել, պետք է վեց ամիս սուառ տոմս պատվիրեիք: Բարեկեցություն տիրեց այս ձեռնարկից պետության մայրաքաղաքում, և շատ կարճ ժամանակամիջոցում շինաց մի տեղական փաստաբան, որ «Ֆորդ» շունենար: Դոն Ագոստոն՝ Գրանդ Օթելի սնօրենը, ծախսի տակ ընկավ և մի քանի լոգասենյակ կառուցեց, սակայն չփոշմանեց դրա համար՝ նա կարողություն էր վաստակում, և միշտ անցնելով այն լապտերասյան կողքով, որից հանգուցյալ պրեզիդենտին էին կախել, ձեռքով դվարթ շարժում էր անում, ասելով.

— Նա մեծ մարդ էր: Մի օր նրան հուշարձան կկանգնեցնեն:

Ես այնպես խոսեցի, ասես միայն կանայք էին, որ օգտվում էին այս հարմար ու խելամիտ օրենքից, և դա կարող է նշանակել, թե Միացյալ Նահանգներում ավելի շատ կանայք, քան տղամարդիկ էին բաղձում ազատվել Սուրբ Ամուսնություն կոչվող խոչընդոտից: Ես պատճառ չունեմ այդպես համարելու: Թեև

այս երկիր ամուսնալուծության նպատակով ճանապարհորդողների մեծ մասը կանայք էին, և դա վերագրում եմ այն փաստին, որ նրանց համար միշտ հեշտ է վեց շաբաթով (մի շաբաթ այստեղ գալուն, մի շաբաթ՝ ետ գնալուն, և երեսուե օր՝ բնակության համար) բացակայելը, մինչդեռ տղամարդկանց համար դժվար է գործերն այդքան երկար բարձրիթողի անելը: Ընշտ է, կարող էին ամառային արձակուրդներին այնտեղ գնալ, սակայն այդ միջոցին շոգը մի տեսակ ավելի ճնշող է, և բացի այդ, այնտեղ գուլֆի հրապարակներ չկային, սխալ չի լինի ասել, որ շատ տղամարդիկ կտատանվեն բաժանվել իրենց կանանցից, եթե դա պիտի անպայման արվի մի ամսվա գուլֆի գնով:

Իհարկե, երկու-երեք տղամարդ կային Գրանդ Օթելում՝ երեսուե օրով, բայց նրանք, հիմնականում ինչ-որ մի բնապատճառով, սուտորի գործերով էին ճանապարհորդում: Ես կարող եմ միայն ենթադրել, որ իրենց մասնագիտության բնույթով նրանք ի վիճակի էին միաժամանակ թե՛ ազատություն հետապնդել, թե՛ եկամուտ:

Ինչ որ է, փաստը մնում է այն, որ Գրանդ Օթելի բնակիչները մեծ մասամբ կանայք էին, և հյուրանոցի բակը շատ զվարթ էր լինում նախաձաշի ու ճաշի ժամանակ, երբ նրանք, նստած փոքրիկ քառակուսի սեղանների շուրջը՝ կամարների տակ, իրենց ամուսնական պրոբլեմներն էին քննարկում ու շամպայն խմում: Դոն Ագոստոն խենթանալիք առևտուր էր անում գեներալներին ու գեդապետներին (այս երկրի բանակում ավելի շատ գեներալներ կային, քան գեդապետներ), փաստաբաններին, բանկիրներին, խանութպաններին և քաղաքի աշքի ընկնող ջահելների հետ, որոնք գալիս էին այդ գեղեցիկ արտաձեռնի նայելու: Սակայն կատարելությունն այս աշխարհում հաղվաղեպ է ձեռք բերվում: Միշտ էլ ինչ-որ բան այնպես չէ, իսկ իրենց ամուսիններից ազատվելու նպատակ դրած կանայք սովորաբար զրգոված վիճակում են լինում: Երբեմն դժվար է լինում նրանց գոհացնել: Այժմ պետք է խոստովանել, որ այս հիասքանչ փոքրիկ քաղաքը, չնայած չուր բազմաթիվ առավելություններին, մի քիչ կաղում էր զվարճալիքների կուլմից: Ընդամենը մի կինոթատրոն կար, որտեղ ցուցադրվող ֆիլմերն իրենց մայր Հուլիուզը չափազանց վաղուց էին լքել: Յերեկները դեռ կարող էիք խորհրդակցել փաստաբանի հետ, եղունգները փայլեցնել, մի երկու խոսում մտնել, բայց երեկոներն անտանելի էին: Բազմաթիվ բողոքներ էին հըն-

չում, որ երեսուն օրը չափից ավելի է, և շատուշատ ջահել արա-
բածներ իրենց փաստաբաններին հարցնում էին, թե խնու՞
նրանք մի քիչ եռանդ չեն ներդնում և ամբողջ գործը քառասուն-
ութ ժամում չեն անում: Գոն Ազոստոն, սակայն, հնարամիտ
մարդ էր, և շուտով նա ներշնչանք ունեցավ՝ վարձեց թափառա-
շրջիկ, մարիմբա նվագող զվատեմալացիների մի խումբ: Չկա
աշխարհում մի ուրիշ երաժշտություն, որն այդպես անդիմադրե-
լիորեն ստիպի ոտքերի մատներին այրվել ու թրթռալ, և կարճ
ժամանակ անց բոլորը բակում սկսեցին պարել: Իհարկե, ակներև
է որ քսանհինգ գեղեցիկ կանայք չեն կարող պարել երեք
առևտրի գործով ճանապարհորդների հետ, բայց չէ որ կային
նաև բոլոր այն գեներալները, գեդապետները և քաղաքի աչքի
ընկնող երիտասարդները: Նրանք հոյակապ պարում էին և հըս-
կայական, վճիտ սև աչքեր ունեին: Ժամերը թռչում էին, օրերը
մեկը մյուսի կրունկը տրորում այնքան արագ, որ մինչև աչք
բացելի՞ր՝ ամիսն անցնում էր, և դոն Ազոստոյի հյուրերից շա-
տերն իրենց տանտիրոջը հրաժեշտ մաղթելուց խոստովանում
էին, որ սիրով էլի կմնային: Գոն Ազոստոն երջանկությունից
փալլում էր: Նա սիրում էր, որ մարդիկ իրենց լավ են զգում:
Մարիմբա նվագողներն իրենց ստացած փողից երկու անգամ
ավելի թանկ գին արժեին, և նրա սիրան ուրախանում էր, երբ
տեսնում էր, որ իր տիկնայք պարում են նրբակիրթ սպաների
ու քաղաքի երիտասարդների հետ: Քանի որ դոն Ազոստոն տրն-
տեսող մարդ էր, նա աստիճանահարթակների և միջանցքների
էլեկտրական լույսը երեկոյան տասին անջատում էր, և նրբա-
կիրթ սպաներն ու քաղաքի երիտասարդները հիանալի կերպով
կատարելագործում էին իրենց անգլերենը:

Ամեն ինչ շատ ուրախ ու յուզի պես էր դնում, եթե կարելի
է օգտագործել այս արտահայտությունը, որն, ինչքան էլ ոտ
հնամաշ է, այս կապակցությամբ անխուսափելի է, մինչև մի օր
մաղամ Քորալին եկավ այն եզրակացություն, որ արդեն բա-
վական է: Քանզի «մեկի համար հաց է, բայց մյուսի համար՝
լաց»: Նա հագնվեց և գնաց այցելելու իր ընկերուհի Կարմեն-
սիտային: Երբ մի քանի բովանդակալից բառերով հայտնի գարձ-
րեց յուր այցելության նպատակը, Կարմենսիտան կանչեց աղախ-
նին և պատվիրեց գնալ բերել լա Գորդային: Մի կարևոր խնդիր
կար, որի քննարկումը ցանկանում էին նրա հետ անցկացնելու լա
Գորդան՝ ծավալուն շափերի տեք հաստաբեղ մի կին, շուտով

միացավ նրանց, և մի շիշ Մալագայից հետո այս երեքը լուրջ
ու կարևոր խոսակցություն ունեցան: Դրա արդյունքը եղավ այն,
որ պրեզիդենտին ուղղված մի նամակ կազմեցին, խնդրելով
իրենց ընդունել: Նոր պրեզիդենտը մի հաղթանգամ երիտասարդ
էր՝ երեսուցից ոչ շատ մեծ: Նա առաջ ամերիկյան մի ֆիրմա-
յում էր աշխատել, իսկ ներկայիս բարձր աստիճանին հասել
էր բնատուր պրեզիդենտության և մեկ էլ ատրճանակն արդյունա-
վետ կերպով օգտագործելու շնորհիվ՝ երբ կամեցել էր առանձ-
նապես ընդգծել կամ շեշտել որևէ ձևակերպում կամ հայտա-
բարություն: Երբ քարտուղարներից մեկը նամակը դրեց նրա
առջև, պրեզիդենտը ծիծաղեց:

— Այդ բրեձներն ի՞նչ են ուզում ինձանից:

Սակայն նա բարեհոգի անձնավորություն էր, և նրա մոտ
ընկնելը հեշտ էր: Չէր մոռանում, որ իրեն ընտրել է ժողովուրդը,
որպես հենց այդ ժողովրդի ներկայացուցիչ, որպեսզի ինքը հո-
վանավորի ժողովրդին: Բացի այդ, վաղ պատանություն տարի-
ներին մաղամ Քորալին մի քանի ամսով հանձնակատարի աշ-
խատանք էր տվել նրան: Պրեզիդենտը քարտուղարին սասց, որ
հաշորդ առավոտյան ժամը տասին կընդունի նրանց: Նշանակ-
ված ժամին կանայք եկան պալատ, և վեհաշուք աստիճաններով
նրանց առաջնորդեցին ընդունելությունների դահլիճ: Ուղեկցող
պաշտոնյան մեղմ թակեց դուռը, մի վանդակապատ գիտանցք
բացվեց և մի կասկածավոր աչք հայտնվեց: Պրեզիդենտը հնա-
բավորին շափ աշխատում էր յուր նախորդի ճակատագիրը շու-
նենալ, և, ով էլ որ այցելուն լիներ, առանց նախազգուշական
միջոցների նրան չէր ընդունում: Պաշտոնյան տվեց երեք տիկ-
նանց անունները, դուռը բացվեց, բայց ոչ շատ լայն, և նրանք
ներս սահեցին: Սենյակը գեղեցիկ էր. բազմաթիվ քարտուղար-
ներ՝ նստած փորրիկ սեղանների մոտ, առանց սրիչակի, ամեն
կողին մի-մի ատրճանակ կախած, մեքենագրելով էին զբաղված:
Մի երկու ուրիշ երիտասարդ, ոտքից գլուխ գինված, բազմոց-
ներին պռակած թերթ էին կարդում ու սիգարետ ծխում: Պրեզի-
դենտը նույնպես առանց սրիչակի, ատրճանակը գոտիկից կախ
կանգնած էր բութ մատները խրած բաճկոնի թևածակերի մեջ:
Նա բարձրահասակ էր ու մարմնեղ, գեղեցիկ և մինչև իսկ վեստ
սրտաքինով:

— Que tal? — զվարթ գոռաց նա, փայլեցնելով ճերմակ
ատամները: — Ի՞նչն է ձեզ այստեղ բերել, señoras:

80— Լուսին և վեցպենանոց

— Ինչ լավ տեսք ունեք, դոն Մանուել,— ասաց լա Գորգան։— Ձեր կազմվածքը հույակապ է։

Պրեզիդենտը սեղմեց կանանց ձեռքերը, իսկ նրա անձնակազմի անդամները, դադարեցնելով իրենց եռանդուն գործունեությունը, հենվեցին աթոռների ու բազմոցների թիկնակներին և սրտանց ձեռքով արեցին տիկնանց։ Նրանք հին բարեկամներ էին, և ողջունումը գուցե քիչ ծաղրական էր, սակայն սրտաբույր։

Այժմ պիտի հայտնեմ այն փաստը (դա էս անկասկած կարող էի անել այնքան զուտ ու զգույշ, որ ինձ ճիշտ չէիք հասկանա, բայց թե երբ մի բան էս պատմում, ավելի լավ է կամ պարզ ու շիտակ խոսես, կամ բուլբուլի ոչինչ չասես), որ երեք տիկնայք հանդիսանում էին այս սպասու և անկախ պետության մայրաքաղաքի երեք գլխավոր հասարակաց տների մտամենկերը։ Լա Գորգան ու Կարմենսիտան իսպանական ծագում ունեին և շատ պատշաճ սև շորեր էին հագել՝ գլխներին սև մետաքս շայեր, բայց մաղամ Քորալին Փրանսուհի էր և գլխին տոբ էլ գրել։ Բոլոր երեքն էլ հասուն տարիքի էին և համեստ վարքուբարքի տեր։

Պրեզիդենտը հրավիրեց կանանց նստել և մազերա ու սիգարետներ սուաջարիկեց, սակայն վերջիններս հրամարվեցին։

— Ոչ, չնորհակալություն, դոն Մանուել,— ասաց մաղամ Քորալին։— Մենք ձեզ մոտ գործով ենք եկել։

— Գե՛հ, ինչն՞ով կարող եմ օգտակար լինել։

Լա Գորգան ու Կարմենսիտան նայեցին մաղամ Քորալին, իսկ մաղամ Քորալին նայեց լա Գորգային ու Կարմենսիտային։ Սրանք գլխով արեցին, և մաղամ Քորալին հասկացավ, որ ինքը պիտի լինի ճառախոսը։

— Ահա թե բանն ինչն է, դոն Մանուել։

Մենք երեքս շատ տարիներ բրանաչան աշխատել ենք և բամբասանքի շունչն անգամ չի կպել մեր բարի անուններին։ Ամբողջ Ամերիկայում չի գտնվի երեք այնպիսի հանրահայտ սուս, ինչպիսին մերք, և նրանք պատիվ են բերում այս գեղեցիկ բաղաբիւն։ Միայն անցյալ տարի էս հինգ հարյուր զուտը ծախսեցի, որ իմ sala principal-ն՝ ապահովեմ մեծ հայելիներով։ Մենք միշտ լրջաբարտ ենք եղել և հարկերը կանոնավոր վճարել ենք։ Ծանր է, որ մեր աշխատանքի պատղները պետք է խլվեն մեզ։ Ինչից Չեմ վարանի ասել՝ այսքան տարի ազնիվ ու խղճով գործի՛ն

նվիրվելուց հետո անարդարացի է, որ այսպիսի վերաբերմունքի պիտի արժանանանք։

Պրեզիդենտը շվարած էր։

— Բայց, Քորալի՛, սիրելի՛ս, չեմ հասկանում, թե ինչ նկատուներես, Ինչ որ մեկը համարձակվել է քեզինք փո՞ղ պահանջելու առանց օրինական թույլտվության կամ իմ գիտություն։

Նա կասկածով չի հայացր նետեց բարտաղարների կողմը։ Վերջիններս փորձեցին անմեղ երևալ, սակայն, թեև իրոք այդպիսին էին, միայն հարցեցին շփոթված երևալ։

— Մենք օրենքից ենք բողոքում։ Մասնկացումն ուղիղ մեր երևալն է նույնում։

— Անանկացո՞ւմք։

— Քանի դեռ նոր ամուսնալուծական օրենքը գոյություն ունի, մենք գործ չենք կարող անել և ավելի լավ կլինի սուսփուս փակենք մեր գեղեցիկ տները։

Հետո մաղամ Քորալին բացատրեց այնքան աներկմիտ ձևով, որ ևս դերագասում եմ սեփական խոսքերով հարցողել նրա ասածը. թե շնորհիվ օտար երկրից քաղաք ներխուժած գեղեցիկ կանանց, երեք վայելչագեղ տները, որոնց միջոցով ինքն ու իր երկու բնկերուհին տոկոսներ ու հարկեր էին վճարում, լրիվ ամայացել են։ Մոզայիկ ջահեղները գերադասում են երկոտներն անցկացնել Գրանդ Օթելում, որտեղ նույր բառերի միջոցով սուսնում են այն զվարճալիքները, որոնք օրինական հաստատություններում կարող էին ստանալ միայն հաստակողիս քսակների միջոցով։

— Նրանց չի կարելի մեղադրել,— ասաց պրեզիդենտը։

— Ես չեմ էլ մեղադրում,— գուցե մաղամ Քորալին։— Ես կանանց եմ մեղադրում։ Նրանք իրավունք չունեն գալ և մեր բերանի հայր կարել։ Դոն Մանուել, Դուք մողովորի ծոցից եք, ոչ թե այս արիստոկրատներից մեկը։ Ինչ կասի հայրենիքը, և թե դուք թույլ տար, որ այդ շարեկրթիները մեր գործը խլեն։ Ես հարցնում եմ Ձեզ՝ դա արդա՞ր է, դա ազնի՞վ է։

— Բայց ի՞նչ կարող եմ ես անել,— ասաց պրեզիդենտը։— Հո չե՞մ կարող երևուն օր իրենց սենյակում փակել։ Ես ի՞նչ մեղավոր եմ, որ այս արտասահմանցիներն արժանապատվության զգացում չունեն։

— Աղքատ ազգիանն ուրիշ է,— ասաց լա Գորգան,— նա պիտի ինքն իր զուլթը պահի։ Բայց որ այս կանայք են այդ տե-

սակ բան անում, երբ ստիպված չեն, այդ մեկը երբեք չեմ հասկանա:

— Դա վատ ու անբարոյական օրենք է, — ասաց Կարմենսիտան:

Պրեզիդենտը վեր թռավ և ձեռքերը կանթեց:

— Հո չեք ուզում խնդրել, որ շեղյալ հայտարարեմ մի օրենք, որն այս երկրին բարիք ու առատություն է բերել: Ես ժողովրդի ձայնից եմ, ինձ ժողովուրդն է ընտրել, և իմ հայրենիքի բարգաւաճումը սրտիս շատ մոտ է: Ամուսնալուծությունը մեր հիմնական արդյունահանությունն է, և այդ օրենքը միայն իմ դիակն վրայով կվերացվի:

— O, Maria Santissima, այս ի՞նչ է կատարվում, — ասաց Կարմենսիտան: — Իսկ իմ երկու աղջիկները Նյու Օրլեանում են՝ վանքում: Ախ, այս աշխատանքն անողը շատ տ՛հաճություններ է ունենում, բայց ես ինձ միշտ մխիթարել եմ, մտածելով, թե մի օր աղջիկներին հաջող կամուսնացնեմ, իսկ երբ թոշակի հեռանալուս ժամանակը գա, կժառանգեն գործս: Կարծում եք, կարող եմ ձրի՞ պահել նրանց Նյու Օրլեանի վանքում:

— Իսկ ս՞վ պետք է իմ տղային Հարվարդում պահի, եթե ստիպված լինեմ տունս փակել, դո՞ն Մանուել, — հարցրեց Լա Գորգան:

— Ինչ վերաբերվում է ինձ, — ասաց մազամ Քորալին, — սպա ես չեմ մտահոգվում: Կվերադառնամ Պրանսիա: Իմ սիրելի մայրիկն ութսունյոթ տարեկան է, և նրան այնքան էլ երկար կլանք չի մնացել: Նրա համար շատ հարմար կլինի, եթե ես մնացած վերջին տարիները կողքին լինեմ: Բայց ինձ անարդարությունն է ցավ պատճառում: Դուք շատ երջանիկ երեկոներ եք անցկացրել իմ տանը, դո՞ն Մանուել, և ինձ վիրավորում է, որ կարող եք թույլ ալ մեզ հետ այցուկս վարվեն: Դուք չէի՞ք ինձ ասողը, թե ձեր կյանքի ամենահպարտ օրն էր, երբ որպես պատվար Նյուր մտաք այն տունը, ուր մի օր վարձված էիք եղել որպես հանձնակատար:

— Ես դա չեմ ժխտում: Կանոնած էի, իսկ շուրջըդուրս շամպայանների էին բաղվում: Դոն Մանուելը հո ու առաջ դնաց լայն դահլիճով, բայց լիս ուսերը թսթվելով և, մերթնդմերթ, խոր մտածումների մեջ, ձեռքերով արտահայտիչ շարժումներ անելով: — Ես ժողովրդի ձայնից եմ, ժողովրդի կողմից ընտրված, — գուչեց նա, — և փաստն այն է, որ այդ կանայք շարեյկրեբիեր-

ներ են: — Նա մի գրամատիկ շարժում արեց, թեքվելով բարաուզարների կողմը: — Դա բիծ է իմ կառավարության վրա: Իմ սկզբունքներին դեմ է թույլ ալ, որ ոչ որակյալ բանվորական ուժը մեր աղելի ու աշխատանք ժողովրդի հացը խլի: Այս տիկնայք միանգամայն ճիշտ են արել՝ ինձ մոտ գալով ու պաշպանություն խնդրելով: Ես թույլ չեմ ւա այս ամսթայի բանը շարունակվի:

Ճառն անկասկած տեղին էր ու տպավորիչ, բայց լսողները հասկանում էին, որ գրանցից ոչինչ չի փոխվում: Մազամ Քորալին դիմափոշի քսեց թթին և դրպանի հայելու մեջ իր մարմնի այդ գերիշխող սնդամին մի հայացքի տրժանացրեց:

— Ես ի՛նչարկե, մարդու բնությունը ճանաչում եմ, — ասաց նա, — և լավ եմ հասկանում, որ այդ արարածների ժամանակը շատ սուղ է:

— Մենք կարող էինք գու՞րի դաշտ կառուցել, — համարձակվեց մեջ ընկնել քարտուղարներից մեկը: — Ճիշտ է, դա նրանց միայն ցերեկը կդրազնցներ:

— Եթե տղամարդ է ուզածները, ինչո՞ւ նեաները չեն բերում, — ասաց Լա Գորգան:

— Carumba!, — գուչեց պրեզիդենտը և տեղում անշարժացավ: — Ահա և լուծումը:

Նա իր բարձր աստիճանին շչր հասնի, եթե խորաթափանց ու հնարամիտ մարդ չլիներ: Ժպտար փայլեց պրեզիդենտի երեսին:

— Մենք օրենքը կրարեփոխենք: Տղամարդիկ առաջվա նման առանց արգելք ու խոչընդոտի կան. բայց կանայք՝ միայն իրենց ամուսինների ուղեկցությամբ կամ գրավոր թույլտվությամբ: — Նա նկատեց բարտուղարների յրեն ուղղած կենտրոնացած հայացքները և ձեռքը թափահարեց: — Բայց ներդաղթային իշխանությունները հրահանգ կատանան ամուսին խոսքն ամենալայն կերպով մեկնարարներ:

— Maria Santissima! — գուչեց մազամ Քորալին: — Եթե ընկերոջ հետ գան, նա հույ կտանի, որ ուրիշ ոչ որ հեաները գործ չունենա, և մեր հաճախորդները կվերադառնան այն տները, որտեղ այնքան երկար ու հյուրընկալորեն ընդունվել են: Դո՞ն Մանուել, դուք մե՞ծ մարդ եք, մոտ օրերս ձեզ հուշարձան կկանգնեցնեն:

Հաճախ ամենաահելի դժվարությունները հարթվում են ամենահասարակ միջոցներով: Օրենքը դոն Մանուելի առաջարկած

պայմանների համաձայն թիթեակի կատարելագործվեց, և մինչ բարեկեցութունը շարունակում էր յուր շնորհները թափել այս սպասու տնկախ պետութեան լայնարձակ ու արևոտ մայրաքաղաքի վրա, մաղամ Քորալին հնարափորութուն ստացավ շահարկեր կերպով զբաղվել իր նախկին օգտակար գործունեութեամբ, Կորմենսիտայի երկու գուստրերն ավարտեցին իրենց թանկ կրթութիւնը Նյու Յորկեանի վանքում, իսկ Լա Գորդայի որդին հաջողութեամբ ավարտեց Հարվարդի համալսարանը:

Նյուպատուար



Իստր Փիթն արտակարգ շղային վիճակում էր Նապոլիի քան քսան տարի հյուպատոսական ծառայութեան մեջ էր և ստիպված էր եղել գործ ունենալ ամեն տեսակի ահան մարդկանց հետ. աստիճանավորներ, որոնք խելացի խոսքի շէին ուզում ունկնդրել, առևտրականներ, որոնք բրիտանական պետութունը պարտքեր հավաքող գործակալութեան տեղ էին դնում. միսիսներներ, որոնք անաշառ մտեցման ամեն մի փորձ քննում էին վրդովմունքով՝ որպես մեծ անարգարութուն, սակայն չէր հիշում որեւէ գեղք, որն իրեն ավելի դժվար վիճակի մեջ դրած չիներ: Նա մեղմարար մարդ էր, բայց առանց պատճառի հանկարծ զայրանում էր իր գրուրի վրա և մի անգամ քիչ էր մնում

վնդեր եվրասիական կերպին, որովհետև սա երկու տասնամյակ էր արել նամական, որը ներկայացրել էր իր պաշտոնական ստորագրությունը: Նա բարեխիղճ մարդ էր և չէր կարող ինքն իրեն համոզել, որ զբաղված ժամը շոքից շուտ լքի. սակայն ժամացույցը շոք սնգամ զարկում էր թե չէ, ոտքի էր թռչում և գոչում, որ բերեն գլխարկն ու ձեռնափայտը: Եվ իրատ անպատվում էր իր բոյին, որովհետև սա միանգամից չէր բերում: Ասում են՝ բոլոր հյուրապատասխանը մի փոքր տարօրինակ են դառնում, և առևտրականները, որոնք կարող են բանհինգ տարի Չինաստանում ապրել ու շտվորել լեզուն գոնե այնքան, որ ի վիճակի լինեն փողոցում ճանապարհը հարցնել, հավատացնում են, թե դրա պատճառն այն է, որ հյուպատոսները ստիպված են լինարեն սովորել: Կասկած չկա, որ միտք Փիթը որոշակիորեն տարօրինակ էր: Նա ամուրի էր, և այդ պատճառով ուղարկվել էր մի շարք պաշտոնների, որոնք իրենց առանձնացածության պատճառով ամուսնացած մարդուն ոչ հարմար էին համարվում: Այնքան շատ էր մենակ ապրել, որ ի բնե ունեցած հակումը դեպի էքսցենտրիզմ արտասովորության աստիճան զարգացել էր, և նա ուներ սովորություններ, որոնք կողմնակի մարդուն զարմանալի էին թվում: Շատ ցրված էր: Ուշագրություն չէր դարձնում իր տանը, որը միշտ անկարգ վիճակում էր, ոչ էլ ուտելիքին. նրա բոյներն ինչ ուղեին, այն էլ տալիս էին, որ ուտի, ըստ որում ստիպում, որ տասնապատիկը վճարի: Հյուպատոսն անզգարում ջանքեր էր գործադրում, որպեսզի արգելի թմրադեղերի վաճառքը, բայց նա միակ մարդն էր թաղաքում, որը չգիտեր, որ իր ծառաներն ափոնը պահում են ոչ այլուր, քան հենց հյուպատոսարանում, և իր տան ետևի մուտքից թմրադեղերի աշխույժ վաճառք է կատարվում: Հյուպատոսը ջերմեանող կուկիցիոններ էր, և պետության կողմից նրան հատկացված տունը լի էր տարբեր իրերով, որ հավաքել էր երբ և որտեղ պատահի. մետաղադրամներ, բրոնզե իրեր, փորագրած փայտ, սրանք նրա առավել հիմնական հետաքրքրություններն էին, սակայն նաև հավաքում էր թղթագրամներ, թուղի ձվեր, հյուրանոցային պիտակներ և դրոշմանիշներ. նա պարծենում էր, թե իր գրողմանիշների հավաքածուն հավասարը շունի Բրիտանական կայսրությունում: Տարիներ շարունակ այս ու այնտեղ կարճատև բնակվելու ընթացքում նա շատ էր կարդացել ու թեև չի նաղեւ չէր, շատ ավելի մեծ դիտելիքներ ուներ Չինաստանի, նրա պատմության, գրական

նության ու ժողովրդի մասին, բան իր գործընկերներից շատերը, բայց երկարատև ընթացումները հյուպատոսին ոչ թե համբերատար էր դարձրել, այլ սնապարծի նա յուրահատուկ արտաքին ուներ: Մարմինը փոքր էր ու փխրուն, և երբ բալլում էր, նմանվում էր բամու դեմ պարող այնան տերևի: Բացի այդ, մի շատ արտառոց բան կար նրա տիրույթան, մեջն արյուրի փետուր իրած գլխարկում՝ շատ հին ու մաշված, որը կտրիճարար ծուռ էր դնում հակաշակուն գլխին: Համարյա լրիվ ճաղատ էր: Ակնոցի ետևը թաքնված բաց կապույտ աչքերն անվճռական էին, իսկ կախ ընկած, շատերում ու փոշուս բեզերը շէին թարցնում բերանի կամակոր զծագրությունը: Եվ այժմ, թեթևիով այն փողոցից, որտեղ հյուպատոսությունն էր դտնվում, նա բալլեց թաղաքի պատի կողմը, քանզի այդ բազմամիլիոնանոց թաղաքում միայն այնտեղ էր հնարավոր հանգիստ դրոսնել:

Հյուպատոսն իր աշխատանքը սրտին մտա էր բնդունում, ամեն շնչին բանի համար աշավոր հուզվում, սակայն սրայես կանոն, պատի վրա գրոսնելը խաղաղեցնում ու հանգստացնում էր: Նրան: Թաղաքը գտնվում էր մի հակաշակուն հարթավայրի կենտրոնում, և հաճախ, մայրամուտին, պատի վրայից երևում էին հեռավոր ձյունածածկ սարերը՝ Տիբեթի սարերը, բայց հիմա հյուպատոսն արագ էր բալլում՝ շնայելով ոչ աչ, ոչ ձախ, իսկ նրա գեր սպանիելը վազվզում էր սուրբի տակ՝ տոանց հակողություն: Ցածք, միապաղաղ ձայնով հյուպատոսն արագ-արագ խոսում էր ինքն իր հետ: Նրա ջղայնության պատճառն այդ օրը մի տիկնոջ այց էր: Կինն իրեն անվանում էր միսիս Ցու, սակայն բանի որ հյուպատոսն իր մասնագիտությունը բերումով սիրում էր ճշգրտություն, համառորեն կոչում էր նրան միսս Լեմբերթ: Արդեն իսկ այս պատճառով նրանց հարաբերությունները բավական անսիրալիք էին: Միսս Լեմբերթն անգլուհի էր՝ ամուսնացած չինացու հետ: Երկու տարի առաջ ամուսնու հետևել էր այստեղ Անգլիայից, որտեղ վերջինս սովորում էր Լոնդոնի համալսարանում: Սա հավատացրել էր, թե ինքը հայրենիքում մեծ անձնավորություն է, և կինը պատկերացրել էր, թե իրեն տանելու են մի շքեղազարդ պալատ, որտեղ համապատասխան գիրք է ունենալու: Կուր դարմանքով նա հայտնվեց մտրվականցով լցված խարխուլ չինական տնակում, այնտեղ անգամ եվրոպական մասճակալ չկար կամ էլ դանակ ու պատանուքով: ամեն բան կեղտոտ էր թվում ու ամենուր հոտ էր գա-

չիս: Տճած անսպասելիութիւնն էր իմանալը, որ պիտի ապրի սկեսուրի և սկեսրայրի հետ, իսկ ամուսինն ավելացրեց, որ պետք է հնազանդ կատարի մոր կարգադրութիւնները: Չնայած շինարեն մի բառ տեղամ շփտեք, երկու-երեք օր էլ տանք չէր ապրել, երբ հասկացավ, որ ինքն ամուսնու միակ կինը չէ: Յուն ամուսնացի էր զեռ պատանի հասակում, երբ հեռանում էր մայրենի քաղաքից, որպէսզի օտար վայրերում գիտելիքներ ձեռք բերի: Երբ միսս Լեմբրբը դառնորեն հանդիմանեց նրան իրեն խաբելու համար, վերջինս ուտելը թոթովաց: Ոչ մի բան չիմացուն չի իմանցարում երկու կին ունենայ, եթէ ցանկանում է, և ճըշմարտութեան զեռ մի փոքր մեղանշելով՝ ավելացրեց նա, ոչ մի շնորհ տհաճ չի համարում դու: Այս հայտնադրածութիւնը կատարելուց հետո էր, որ միսս Լեմբրբը անօրին արեւ ճշուարտասին: Սա արդեն լսել էր կնոջ ընտանիքում լուրը, Զինատանում ամեն մեկն ամեն ինչ գիտե ամեն մեկի մասին, և սուտնց գործանքի ընդունեց նրան: Առանձնապէս կարեկցանք չէր ուզում և չէր էլ թարցնում այդ փոստը: Միայն այն, որ եզրուպացի կինն ամուսնացել է չիմացու հետ, ցատում էր լըցրել նրան, բայց որ դա արվել է առանց ինչպէս հարկն է տեղեկութեաններ համարելու, արդեն այնպէս էր զայրացնում հյուպատոսին, ասես անձնական վիրավորումը լինելու: Միսս Լեմբրբը ամենին էլ այն կանանցից չէր, որոնց արտաքինը թույլ է տալիս նեթադրել, թէ բնորոշակ են այդպիսի խենթութեան: Նա սողալակազմ, մարմնեղ, երիտասարդ կին էր, կարճահասակ, զգեղ ու ձանձրալի: Հագին էման, պատրաստի դղեստ էր, գլխին՝ շոտլանդական բերետ: Առամները տղեղ էին, մաշկը՝ գորշ հողազույն: Զեւրերը մեծ էին, կարմիր ու վառ խնամված: Կաշկի էր ենթադրել, որ նա տեսողոր չէ ծանր աշխատանքին: Սքնի առողջանութեամբ էր տնդերեն խոսում:

— Ինչպե՞ս հանդիպեցիր միտքը մուսին, — ստոր հարցրեց հյուպատոսը:

— Գիտեք, բանն էսպէս եղավ, — պատասխանեց կինը: — Չէր լավ գործի էր, իսկ երբ մեռավ, մերս ասեց. «Հանդադրածութեան կլինի բոլոր սենյակները դատարկ պահել, ես պատուհանում հայտարարութեան կգնեմ»:

Հյուպատոսն ընդհատեց:
— Նա ձեռ կենվո՞րն էր
— Գե, ոչ էնքան կենվոր:

— Ուրեմն ասենք տնվո՞ր, — իր թույլ ու մի փոքր ինքնագոհ ժպտը զեռքին ասաց հյուպատոսը:

Սովորաբար դա էր այդպիսի ամուսնութեանների բացատրութեանը: Հետո, բանի որ նրան շատ հիմար, գոեհիկ կին էր համարում, կտրուկ ու շիտակ պարզարանեց, որ, համաձայն անգլիական օրենքի, նրանք Յուսի հետ ամուսիններ չեն և անելիք լավագույն բանը հիմանեթ Անգլիա վերադառնալն է: Կինը սկսեց լաց լինել, և հյուպատոսի սիրտը մի քիչ փափկեց: Խոստացավ նրան զեռ մի քանի միսիոներ տիկնանց խնամքի տակ, որոնք երկար ճանապարհորդութեան ընթացքում հոգ կտանեն նրա մասին, և ավելացրեց, եթէ ուզում է, կհետաքրքրվի, թէ չի՞ կարող միառումանակ տեղավորել նրան միսիաներից մեկում: Սակայն մինչ խոսում էր, միսս Լեմբրբը արտասուքները սրբեց:

— Ի՞նչ լավ բան կա Անգլիա վերադառնալու մեջ, — ի վերջո ասաց նա: — Ես տեղ չունեմ զնալու:

— Կարող եք ձեր մոր մոտ զնալ:

— Նա իմ ու միտքը Յուսի ամուսնանալուն լրիվ զեռ էր: Հիմար հետ գնամ, պիտի առավոտից գիշեր վրես խոսա:

Հյուպատոսը սկսեց նրա հետ վիճել, բայց որքան շատ էր վիճում, այնքան կինն ավելի վճռական էր դառնում, և վերջապէս նա համբերութեանից դուրս եկավ:

— Եթէ ուզում եք այստեղ մնալ մի մարզու հետ, սրբ ձեռ ամուսինը չէ, դա ձեր գործն է, բայց ես ամեն տեսակի պատասխանատվութեանից ձեռքերս լվանում եմ:

Մինչև հիմա էլ հյուպատոսը զայրանում էր, հիշելով կնոջ պատասխանը:

— Դե ուրեմն դուք անհանգստանալու պատճառ չունեք, — ասաց նա, և երբ էլ որ հյուպատոսը մտածում էր նրա մասին, հիշում էր հայացքն այդ վայրկյանին:

Դա երկու տարի առաջ էր, և այդ ժամանակից միտքը Փիթը մի երկու անգամ էր տեսել նրան: Ըստ երեւոյթին, կինը լեզու չէր գտնում ոչ սկեսուրի, ոչ էլ ամուսնու մյուս կնոջ հետ և այդ պատճառով գալիս էր հյուպատոսի մոտ ու անմիտ հարցեր տալիս չինական օրենքի համաձայն իր իրավունքների մասին: Հյուպատոսը կրկնում էր յուր առաջարկը՝ նրան Անգլիա ուղարկելու մասին, սակայն կինը հաստատապէս շարունակում

էր մերժել, և խոսակցութիւնը վերջանում էր զայլուցմի հերթա-
կան նստութեամբ: Նա համարյա իրձնում էր ստահակ Յուզին, որը
ստիպված էր խոզագոռութիւն պահպանել երեք պատերազմող
կանանց միջև: Փատեկով անգլիացի կնոջ պատմածներէից, նա
վերջինիս նետ վատ չէր վարվում: Փորձում էր երկուսի հետ էլ
արդար լինել: Միսս Լեմբըրթը դեպի լավը չէր փոխվում: Հյու-
պատոսը դիտել, որ նա սովորաբար շինական շորեր է հագնում,
բայց հյուպատոսութիւն ելրոպական զգեստով էր գալիս: Գի-
րացի էր ու փնթի դարձել: Զինական կերակուրներն ազդում էին
առողջութեան վրա, և նա օրեցօր թշվառ ու հիվանդոտ տեսք էր
ստանում: Բայց այդ օրը, երբ նրան իր գրասենյակ ուղեկցեցին,
հյուպատոսն իրօք ցնցվեց: Միսս Լեմբըրթն առանց գլխարկի
էր, իսկ մազերը գոգգված էին: Սալրանկ հիստերիկ վիճա-
կում էր:

— Նրանք փորձում են ինձ թուլանել, — գոռաց նա և հյուպա-
տոսի առաջ մի աման զարշահոտ ուտելիք գրեց: — Սա թու-
նաւորված է: Աս վերջին տասը օրը հիվանդ էի, հրաշքով եմ
փրկվել:

Միսս Լեմբըրթը շարագրեց մի երկար, հանգամանալից և
բավական հավանական պատմութիւն՝ այնքան հնարավոր, որ
հյուպատոսը չամոզվեց: Ի վերջո, պարզ է, որ շինացի կանայք
իրենց վաղուցվա մեթոդները պիտի դրժուձեին առելի օտարից
ուզատվելու նամար:

— Գիտե՞ն, որ այստեղ եք եկել:

— Ինտրիկ, գիտե՞ն: Ոս տեսցի, որ կճարանեմ:

Հիմա վերջուպես վճռականորեն գործելու մամանակն էր:
Հյուպատոսը պաշտոնական տեսք չուզումէր:

— Կե, դուք երբեք այդտեղ պիտի ետ չգնաք, ես այլևս չեմ
հաշտվի ձեզ: անձեթեթութիւններէ հետ: Տնդում եմ, որ լրեք
ույս մտողուն, որը ձեր ամուսինը չէ:

Սակայն նա նորից տեսավ, որ անուժ է այդ կնոջ անմիտ
համառութեան զիմաց: Կրկնեց այնքան հաճախ օդադորձած
բոլոր փաստարկները, բայց միսս Լեմբըրթը չէր էլ լսում, և սո-
վորականի պէս հյուպատոսը համբերութիւնից զուրս եկավ: Ահա
այդ ժամանակ, պատասխանելով վերջին, հուսահատ հարցին,
կի՞նն արեց այն գիտողութիւնը, որը վերջնականապէս շարքից
հանեց հյուպատոսին:

— Բայց ախր ի՞նչն է ձեզ ստիպում մնալ այդ մարդու հետ, —
գոռաց նա:

Կինը մի լուպե տատանվեց, և նրա աչքերում մի տարօրինակ
հայացք հայտնվեց:

— Նրա մազերը ճակատին մի տեսակ էնպէս են անում, ոս
զուրս շատ է գալիս, — պատասխանեց նա:

Հյուպատոսը երբեք այդքան վրդովեցուցիչ բան չէր լսել: Պա-
իրօք վերջին կաթիլն էր: Եվ հիմա, երբ քայլում էր, փորձելով
այդ կերպ խաղաղեցնել զայլուցմը, թեև նա այն մարդկանցից
չէր, ովքեր հաճախ են գոհճիկ լեզվով խոսում, հյուպատոսը
չկարողացավ իրեն զսպել և կատաղած ասաց:

— Կնիկները պարզապէս գարշելի են:

ՀԱԿԻԱՎՈՐ ՄԱՐԴԷՐ



Կիսի պատճառով էր, որ առաջին անգամ նկատեցի նրան, քանի որ այդ լայն ու կարմիր սպին հսկայական կիսալուսնի նման ձգվում էր բունքից մինչև կզակը: Դա ըստ երևույթին մի անավոր վերքի հետևանք էր, և ես մտածեցի՝ տեսնես սրի շեղբի՞ց է առաջացել, թե՞ արկի բեկորից: Անսպասելի էր այդ սպին նրա կյոթ, գեր, բարեհոգի դեմքի վրա: Նա մանր, աչքի շրթինոց գիմազժեր ուներ, դեմքի արտահայտությունը պարզամիտ էր: Գեմքն արտառոց կերպով համապատասխանում էր մտեղ մարմնին: Ուժեղ մարդ էր՝ միջինից շատ ավելի ծանր բաշտով: Հագին ուրիշ բան չէի տեսնում, բացի հնամաշ մոխրագույն կոստյումից, խալի գուլջնի վերնաշապկից և քրքրված սոմբրերոյից: Նա մաքուր լինելուց շատ հետո էր: Այդ մարդը սովորություն ուներ ամեն օր Գլատեմալայում հյուրանոց Պալաս գալ կոկտեյլի ժամին և բարի մտա բարը դալով՝ վիճակախաղի տոմսեր առաջարկել: Սթի նա այդ եղանակն էր ընտրել պարելու համար, սպա ընարությունը հաշող չէր, բանգի տոմս գնողներ չկային, սակայն դրա փոխարեն հաճախ առաջարկում էին խմել: Մարդը երբեք չէր հրաժարվում: Նա սեղանների միջով իր համար ճանապարհ էր հարթում մի տեսակ օրորվող քայլվածքով, ասես սովոր

լինի երկար տարածություններ ոտքով կտրելու, կանգ էր առնում ամեն սեղանի մոտ, թույլ ժպտալով նշում իր մտա եղած տոմսերի համարները, իսկ հետո, երբ տեսնում էր, որ իրեն բանի տեղ չեն գնում, նույն ժպտալ շուրթերին՝ անցնում էր առաջ: Իմ կարծիքով խմիչքն այդ մարդուն շատ էր փոխել:

Մի օր երեկոյան ես կանգնած էի բարի կողքը, ոտքս հենած բազրիքին, հետո մի ծանոթ (Գլատեմալայի Պալաս հյուրանոցում շատ լավ դառը Մարտինի են պատրաստում), երբ սպիավոր մարդը մոտեցավ: Ես գլուխս բացասաբար շարժեցի, բանի որ դալստյանս օրվանից այս էլ քսան անգամ աչքս էր խոթում իր վիճակախաղի տոմսերը: Բայց ընկերակիցս սիրալիք գլխով արեց:

— Qué tal general? Կյանքն ինչպե՞ս է:

— Այնչ: Գործը լավ չի գնում, բայց կարող էր ավելի վատ լինել:

— Ի՞նչ կխմեք, գեներալ:

— Կոնյակ:

Գեներալը մի շնչով դատարկեց բաժակը և դրեց վաճառասեղանին: Գլխով արեց ծանոթիս:

— Gracias. Hasta luego!

Հետո մի կողմ շրջվեց և սկսեց տոմսեր առաջարկել կողքի կանգնածներին:

— Ո՞վ է այդ ընկերդ: Մոսկայի սպի ունի երևաին:

— Հա՛, շատ չի գեղեցկացնում նրան, չէ՞: Նա վտարանդի է նիկարագուալցից: Իհարկե, ավազակի ու բանդիտի մեկն է, բայց վատ անձնավորություն չէ: Մեկ-մեկ մի քանի պեսո եմ տալիս նրան: Ժամանակին հեղափոխական գեներալ է եղել, և եթե զինամթերքը վերջացած չլիներ, հիմա հեղաշրջում արած կլիներ և ազմական մինիստր դարձած, փոխանակ Գլատեմալայում վիճակախաղի տոմսեր վաճառելու: Նրան բռնեցին իր անձնակազմի հետ միասին ու դատեցին ոսպնական դատարանով: Նման բաներն, ինչպես գիտեք, բավական արագ են կատարվում այս երկրներում, և գեներալը դատապարտվեց առավոտյան զրնգակահարվելու: Կարծում եմ, որ բռնվելուց նա տրդեն գիտեր իրեն ինչ է սպասում: Գիշերն անցկացրեց բանտում և մյուսների հետ, բոլորը միասին հինգ հոգի էին, ժամանակը կարճեցին փոկեր խաղալով: Զիփերի տեղ յուցկիներ էին օգտագործում: Գեներալն ասում է, որ երբեք բախտն այնքան չի դավաճանել

իրեն, ինչպես այդ օրը, խաղում էին կիսատ կապուկով, խաղը վախտն էր բացում, սակայն իրեն ոչ մի անգամ թուղթ չեկավ, ամբողջ գիշերվա ընթացքում հազիվ մի վեց անգամ գումարը բարձրացրեց և չէր հասցնում չիփեթի նոր կույտեր գնել, երբ անմիջապես դրանք կորցնում էր: Երբ լույսը բացվեց, ու զինվորները բանտախուց եկան դատապարտյալներին մահապատժի ժամանելու, գնեկալին ավելի շատ լուցկի էր տարվել, քան նորմալ մարդը կօգտագործեր ողջ կյանքում:

Նրանց տարան բանտի բակը և կանգնեցրին պատի առաջ, հինգին էլ իրար կողքի՝ կրակողների դիմաց: Մի փոքր դադար եղավ, որից հետո մեր բարեկամը հրամանատար սպային հարցրեց, թե ո՞ր սատանայի համար են իրենց սպասեցնում: Սպան ասաց, որ պետական զորքերը գլխավորող գեներալը ցանկութուն է հայտնել ներկա լինել մահապատժին, և իրենք սպասում են նրա ժամանելուն:

— Այդ դեպքում ես կարող եմ ևս մի սիգարետ ծխել,— ասաց մեր բարեկամը:— Նա միշտ էլ անճշտապահ է եղել:

Սակայն հազիվ էր նա վառել ծխախոտը, երբ գեներալը,— ի դեպ, դա Սան Իգնասիոն էր, չփտեմ, երբեք հանդիպե՞լ եք նրան,— իր համհարգի ուղեկցութվամբ ժամանեց: Սովորական ձևականություններից հետո Սան Իգնասիոն դատապարտյալներին հարցրեց՝ մահապատժից առաջ որևէ ցանկություն ունե՞ն արդյուր: Հինգից չորսը գլուխները թափահարեցին, բայց մեր բարեկամը խոսեց.

- Այո, ևս կուզեի հրաժեշտ տալ կնոջս:
- Bueno,— ասաց գեներալը:— Ես առարկություններ չունեմ: Որտե՞ղ է նա:
- Սպասում է բանտի դռան մոտ:
- Այդ դեպքում, հինգ բուլետից ավել չտե՛ս:
- Հազիվ այդքան: Señor General,— ասաց մեր բարեկամը:

— Տարեք նրան այն կողմ:

Երկու զինվոր առաջ եկան, և դատապարտված ապստամբը նրանց միջով քայլեց դեպի նշված տեղը: Կրակողների հրամանատար սպան, տեսնելով գեներալի գլխով նշանը, հրաման տվեց, հետևեց անկանոն համազարկը, և չորս տղամարդիկ վայր ընկան: Ընկան արտառոց կերպով. ոչ թե միասին, այլ մեկը մյուսի ետևից, գրոտեսկային շարժումներով, տեսա տիկնիկային

Ճատրոնի պուպրիկներ լինեին: Սպան մոտ գնաց նրանց և տեսնելով, որ մեկը զեռ կենդանի է, վերջինիս մեջ գատարկեց իր ատրճանակի երկու փողը: Մեր բարեկամը վերջացրեց իր սիգարետը և մնացորդը մի կողմ նետեց:

Դարպասի մոտ թեթևակի իրարանցում լսվեց: Արագ քայլելով բակ մտավ մի կին, ու հանկարծ կանգ առավ՝ ձեռքը սրտին: Նա մի ճիշտ արձակեց և թևերը լայն պարզած առաջ վազեց:

— Caramba,— ասաց գեներալը:

Կինը սև շորեր էր հագել, գլխին շղարշ էր պցած, իսկ գեմքը մահու շափ գունատ էր: Դեռ համարյա աղջնակ էր, նրբին արարած՝ փոքրիկ կանոնավոր դիմագծերով ու հսկայական աչքերով: Սակայն դրանք խելացնոր էին վշտից: Այնքան լավիկն էր, որ երբ վազում էր՝ բերանը թեթևակի բացած, հրաշագեղ գեմքին տանջանք գծագրված, զարմանքի մի հառաչ լսվեց նրան նայող անտարբեր զինվորների կրծքից:

Ապստամբը մի երկու քայլ արեց կնոջն ընդառաջ: Սա փրեն նետեց ամուսնու գիրկը, և մի հուզահատու խապոտ ճիշտ արձակելով՝ alma de mi corazon — իմ սրտի հատոր, ապստամբն իր շուրթերը միացրեց նրա շուրթերին: Եվ միևնույն վայրկյանին մաշված վերնաշապիկի տակից մի դանակ դուրս քաշեց,— գաղափար չունեմ, թե ինչպես էր դա հաջողեցրել պահելու,— և խրեց կնոջ վիզը: Արյունը զարկեց կտրված երակից և ներկեց նրա վերնաշապիկը: Հետո ապստամբը մի անգամ էլ առավ նրան յուր բազուկների մեջ և շրթունքները միացրեց նրա շուրթերին:

Դա այնքան արագ կատարվեց, որ շատերը չհասկացան, թե ինչ պատահեց, բայց մյուսները սոսկանքի ճիշտ արձակեցին, առաջ նետվեցին և ճանկեցին նրան: Թուլացրին ձեռքերը, և ազդիկը վայր կրկնեց, եթե համհարգը չբռնեք նրան: Աղջիկը գիտակցությունը կորցրել էր: Նրան պատկեցրին գետնին և հողախոտով զեմքերով կանգնեցին շուրջը՝ դիտելով նրան: Ապստամբը գիտեց, թե ուր է խփում, և արյունը կանգնեցնելն անհար էր: Մի բուլետից համհարգը, որը ծունկ էր չոթել աղջկա կողքը, ոտքի ելավ ու շնչաց:

- Նա մեռած է:
- Ապստամբը խաշակեց:
- Ինչու՞ արեցիք այդ բանը,— հարցրեց գեներալը:
- Ես սիրում էի նրան:

Մի տեսակ հառաչ անցավ հավաքված տղամարդկանց միջև— Լուսին և վեցպենսանց

ջով, և այլալված զիմերը հասփեցին ճարդատյանին: Դենեբուլը մի բուպե լուս նուշեց նրան:

— Դա վեհանձն սալլ էր, — վերջացես ասաց նա: — Ես չեմ կարող մահապատժի ենթարկել այս ժարդուն: Վերցրեք իմ ատմեքենան և տարեք նրան սահման: Մինչոր, բնդունեք ակնածանքը, որ մի խիզախ մարդը տածում է մյուսի նկատմամբ:

Հափանության մրժունչ պոկվեց լսողների շարքերից: Համհարզը թփթփացրեց ապստամբի ուսը, և սա առանց մի խոսքի երկու զինվորների արանքով քաչեց դեպի մերենան:

Իմ ընկերը վերջացրեց և մի բուպե լուս մնաց: Ուղում եմ պարզաբանել, որ նա ղվաանեմուլացի էր և հետո իսպաներեն էր խոսում: Ես նրա պատմածը փորձել եմ կարելովուն շափ լավ Քարզմանել, սակայն փորձ չեմ արել մեղմացնել նրա բավական բարձրաձ լեզուն: Ճիշտն ասած, ինձ թվում է այն սաղում է այս պատմությանը:

— Բայց ինչպե՞ս է ստացել սպին, — ի վերջո հարցրեցի ես:

— Աճ, դա մի շշից եղավ, երբ ես բաց էի անում: Մի շիշ ջինջըր էլլից՝

— Անդուր բան, — ասացի ես:

Հիարոն «ամենագետը»



Հակահրեցի Մարտ Քելագային, թեև նրան չէի հանաչում:

Պատերազմը նոր էր վերջացել, և նամագործ Նորգահան նավերը խիստ ծանրաբեռնված էին ուղևորներով: Չափազանց գեղար էր նավի վրա տեղ գտնել: Շուրջութուն էր առանձին խցիկ ակնկալելը, իսկ երկտեղանոց խցիկի համար պետք էր անշափ շնորհակալ լինել: Բայց արամազրութունս ընկավ, երբ իմացա ուղեկցիս ահունը (Քելագա անունը հաշում էր հարեանիս արևելյան ծագումը): Ուրիշի հետ նույն խցիկում տասնչորս սր ապրիլը (մանավանդ՝ արևելյու հետ) ենթադրում էր միշտ փակ պատահան, և բացառված էր նույնիսկ գիշերային մարտը սղը: Թեևս արամազրութունս ավելի բարձրանար, եթե ուղեկցիս անունը Ամիթ կամ Թրաուն լիներ:

Երբ նավ բարձրացա, պարոն Քելագայի իրերն արդեն խցիկում էին: Դրանց տեսքն ինձ դուր չեկավ: Բազմաթիվ պիտակներով ճամպուրակները բավականին մեծ էին: Ուղեկիցս արդեն

հանել էր հարդարանքի առարկաները, որոնց վրա նկատեցի «Կոստի» մականիչը: Լողասենյակում դրված էին նրա օժանելիքները, մազի յուղն ու օճառը: Պարոն Քելադայի հակինթե կոթով խոզանակներն իրենց ոսկյա մակագրություններով, իմ կարծիքով, ավելի հարմար էին հատակը քերելու և փայլեցնելու համար: Ինչնէ, այդ մարդուն նախապես չհամակրելի:

Եցիկից դուրս գալով ուղղվեցի խաղասենյակ, պահանջեցի խաղաթղթեր և սկսեցի «պասիանս» բացել: Հաղիվ էի սկսել խաղը, երբ մեկը մոտեցավ ինձ, և, անունս տալով, ներկայացավ:

— Ես պարոն Քելադան եմ, — ասաց նա լայն ժպտալով, ցուցադրելով փայլուն ատամնաշարը և նստեց:

— Կարծեմ, երկուսս էլ նույն խցիկն ենք դրադեցնում:

— Ինչպիսի՞ գույզադիպությունն երբեք չես կորուզ կուհել, թե ում հետ բախտ կվիճակվի ճանապարհորդել: Զափազանց ուրախացա, երբ լսեցի, որ անպիացի եր: Ես միշտ կողմնակից եմ, որ մենք՝ անզիպացիներս, արտասահմանում համախմբված լինենք: Անշուշտ, դուք հասկանում եք, թե ինչ եմ ուզում ասել: Ես աչքերով հավանությունն նշան արեցի:

— Դուք անպիացի՞ եք, — հարցրեցի:

— Հապա ինչպես: Հս չե՞ք կարծում, որ ամերիկացու տեսք ունեմ: Ոտից գլուխ անզիպացի եմ:

Իր ազածն ու պացուցելու համար պարոն Քելադան ծոցագրպանից հանեց անձնագիրն ու մեծամտորեն ճոճեց քթիս առաջ:

Այդ րոպեին մտածեցի, որ Անգլիայի Զորք թագավորը՝ շատ տարօրինակ հպատակներ ունի: Պարոն Քելադան կարճահասակ էր ու հաստիկ, թխամորթ, մաքուր սափրած աչտիլով, մտտ ու կեռ քթով, մեծ ու փայլուն, ջրակալած աչքերով: Նրա երկար սև մազերը գանգուր էին, չուզված և այդ պատճառով՝ լայնուն: Նա խոսում էր արագ, սակայն ոչ սահուն անզիպեհով և, ահասարակ, աչքի էր ընկնում հարուստ շարժումով: Ես համոզված էի, որ եթև մանրակրկիտ զննվեր նրա անգլիական անձնագիրը, տպա կոպարովեր պարոն Քելադայի՝ ավելի կապույտ երկնքի տակ ծնված լինելու փաստը:

— Ի՞նչ կցանկանալիք խմել, — հարցրեց նա:

Ես տարակուսանքով նայեցի նրան: Որքան ինձ հայտնի էր, ողելից խմիչքների վաճառքն արգելված էր, և նավի վրա, ըստ

երևույթին, ոչ մի ըմպելիք չպետք է լիներ: Բացի այդ, երբ ծարավ չեմ լինում, դժվարանում եմ ասել, որ խմիչքն է ինձ դուր գալիս: Սակայն պարոն Քելադան ինձ ուղղեց իր արևելյան քաղցրալիք ժպտը:

— Վիսկի՞ սողայո՞՞վ, թե՞ մարտինի: Ասացեք, ո՞րն է ձեզ դուր գալիս:

Նա գրպաններից երկու շիշ հանեց և դրեց իմ առաջ, սեղանի վրա: Ես գերադասեցի մարտինին, իսկ նա կանչեց մատուցողին և սառույց ու երկու բաժակ պահանջեց:

— Հիանալի կոկտեյլ, — ասացի:

— Ծ՛, գեռ այնքա՞ն կա: Եթե նավի վրա ընկերներ ունեք, կարող եք չկասկածել: Բոլորին էլ կ՛չլուրասիրենք ամեն տեսակի խմիչքով:

Պարոն Քելադան ասող-խոսող մարդ էր: Նա պատմեց Նյու Յորքից և Սան Ֆրանցիսկոյից, քննարկեց պիեսներ ու կինոնրկարներ, անցավ քաղաքականություն: Հայրենասեր էր ու մարդամտ, բայց միևնույն է, ինձ դուր չէր գալիս: Սկզբում ես մի կողմ էի դրել խաղաթղթերը, բայց, երբ դրույցը շատ երկարեց, նորից սկսեցի խաղալ:

— Երեքը չորսի վրա, — ասաց պարոն Քելադան: — «Պասիանս» խաղալիս ավելի զայրացնող բան չկա, քան այն, երբ հուշում եմ:

— Ստացվո՞ւմ է, ստացվո՞ւմ է, — բացականչեց նա, — տասնոցը վայելտի վրա:

Ես բարկացած վերջացրի խաղը և սրտումս ատելություն զգացի նրա նկատմամբ:

— Խաղաթղթի ձեռնաճարակությունն սիրո՞ւմ եք, — ասաց նա՝ վերցնելով խաղաթղթերը:

— Ոչ, չափազանց ատում եմ, — պատասխանեցի:

— Դե լավ, միայն մեկը ցույց կտամ:

Ցույց ավելի երեքը: Ասացի, որ ուզում եմ ճաշարան զնայ՝ տեղ զբաղեցնելու:

— Հիանալի է, — պատասխանեց նա: — Ես արդեն զբաղեցրել եմ ձեր տեղը: Մտածեցի, քանի որ միասին ենք ապրում, կարելի է նաև միևնույն սեղանի շուրջ նստել:

Զսիրեցի այդ պարոն Քելադային:

Մենք ոչ միայն խցիկում էինք միասին և օրը երեք անգամ ըստում էինք միևնույն սեղանից, այլև անհնար էր զբոսնել տախ-

տակամածի վրա առանց նրա ընկերութեան: Տարօրինակն այն էր, որ չէր էլ կասկածում, թե իր ներկայութեանը կարող է ինձ ահա՞ լինել: Ավելի քան վստահ էր, որ ինքը հաճելի ընկերակից է: Եթե տանգ լինեիր, կարող էիր արացի տալ և աստիճաններով վար գլորել կամ դուրս երեսին փակել: Բայց այս գեղարվեստ ոչինչ անել հնարավոր չէր:

Ուղեկիցս շափաղանց մարդամտ էր և ընդամենը երեք օրում ծանոթացավ նավի բոլոր ուղևորների հետ: Անկախարում էր աճուրդները, դրամ էր հավաքում սպորտային խաղերի համար, կազմակերպում էր մրցումներ, համերգներ ու պարահանդեսներ: Իմ կարծիքով, նավի ամենաշարժած ուղևորն էր: Անունը պարոն «Ամենազեա» էին դրել և նույնիսկ երեսին էին ասում, որն ընդունվում էր իբրև հաճույախոսություն: Ամենից անտանելին ճաշի ժամն էր, երբ մոտ մեկ ժամ իր զոհն էինք: Անընդհատ խոսում էր, ծիծաղում և վիճում: Իրեն համարում էր ամենաառողջակ մարդը և եթե չէիր համաձայնում նրա որևէ խոսքին, վիրավորվում էր: Ինչքան էլ նյութն անկարևոր լիներ, օձիբոց բաց չէր թողնի, մինչև շահագիր իր կարծիքին: Մտքովն իսկ չէր անցնում, որ կարող է սխալվել:

Մեր սեղանի շուրջ նստում էր նաև մի մարդ, որի անունը Ռամզեյ էր: Նա ասում էր արևելյու ինքնավստահությունը և անընդհատ վեճի էր բռնվում նրա հետ: Ռամզեյն ամերիկյան հյուպատոսարանի աշխատակից էր և բնակվում էր Կորեյում: Նա ծնվել էր Միսսիսսիպի նահանգների միջին արևմտյան շրջանում, հաղթանգամ էր, մարմնեղ և թվում էր, թե հագուստն ուր որ է կպատուվի: Նյու Յորք կատարած այցելությունից հետո նա վերադառնում է իր աշխատանքին: Նյու Յորք էր գնացել կնոջը բերելու, որ մեկ տարի հյուրընկալվել էր ծնողների մոտ: Տիկին Ռամզեյը փոքրակազմ, գեղեցիկ էակ էր, հաճելի շարժուձեռքով և հումորի զգացումով: Հյուպատոսարանի աշխատակցի վարձատրությունը ցածր էր, և տիկին Ռամզեյը հագնվում էր հասարակ, սակայն զգայվում էր, որ հագնվելու մեծ ճաշակ ունի ու միշտ տպավորել էր: Նա աչքի գարնոզ մի հատկանիշ ուներ՝ շափազանց համեստ էր: Մի հատկանիշ, որ զարդարում և հրապուրել էր դարձնում նրան:

Մի երեկո ընթերցելիս զրույցը պատահաբար ծավալվեց մարդարիտների շուրջ: Թերթերն այդ օրերին շատ էին գրում խորամանկ ճապոնացիների պատրաստած արհեստական մարդարիտ-

ների մասին, որոնք, անկասկած, կիրիցնելին իսկական մարդարիտների արձեքը, բանի որ գնալով կատարելագործվում էին: Ինչպես միշտ, այս անգամ էլ զրույցը վարում էր պարոն Քելզոան. նա մարդարիտների մասին պատմեց այն ամենը, ինչ հնարավոր էր: Ինձ թվում էր, թե Ռամզեյն այնքան էլ տեղյակ չէր այդ նյութին, բայց բռնկվել էր սրբեցուն չակամատելու կրքով և շուտով մի տաք վիճաբանություն սկսվեց: Այս անգամ պարոն Քելզոան շափազանց գրգռված էր, և երբ Ռամզեյն ինչ-որ բան ասաց, նա ձեռքով հարվածեց սեղանին և բացականչեց.

— Ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Այժմ էլ մեկնում եմ Ճապոնիա, չենք մարդարիտների գործով: Ես այդ արհեստով եմ զբաղվում և լինել որ ասում եմ, ճշմարտացի է, ոչ ոք չի կարող հակաճատել ինձ: Ես գիտեմ՝ աշխարհի բոլոր լավագույն մարդարիտները և եթե կան այնպիսիները, որոնց անտեղյակ եմ, ուրեմն զրանք տնայուման անարժեք են:

Նրա հայտարարությունը մեզ համար նորություն էր. բանի որ մինչ այդ անտեղյակ էինք պարոն Քելզոանի զբաղմունքին: Միայն ազատ կերպով գիտեինք, որ Ճապոնիա էր մեկնում առևտրական գործերով: Նա մի հաղթական հայացք նետեց սեղանակիցների վրա և ասաց.

— Ինձ նման մասնագետ մի հայացքով կարող է որոշել մարդարիտի իսկական կամ կեղծ լինելը:

Եվ մասնապես անելով տիկին Ռամզեյի վրի մարդարտաշարն, ասաց.

— Կամ հիշեցեք իմ խոսքերը, տիկին Ռամզեյ, մարդարիտների այն շարք, որ զարգարում է ձեր վիզը, երբեք չի կորցնի իր արժեքը, նույնիսկ մեկ ցննումով:

Տիկին Ռամզեյն իրեն հատուկ համեստություն մի փոքր կայմից և մարդարտաշարն աննկատ տեղավորեց հագուստի օձիքի տակ: Պարոն Ռամզեյն առաջ թեքվեց, մի հայացք նետեց սեղանակիցների վրա: Նրա աչքերը փայլեցին:

— Գեղեցիկ չէ՞ տիկին Ռամզեյի մարդարտաշարը...

— Անշուշտ, ես անմիջապես նկատեցի,— պատասխանեց պարոն Քելզոան,— և ասացի ինչս ինձ. «Ա՛յ, քեզ իսկական մարդարիտներ...»:

— Ես շեմ գնել այդ շարանը, բայց ինձ շատ է հետաքրքրում նրա արժեքը:

— Այդ շարանը մարդարիտով զբաղվող արհեստավորներն

Համար էարժեհա տասնհինգ հազար դոլար, իսկ եթե դրանք գնվել են Հինգերորդ պողոտայում, շեմ գարմանա, էթե լսեմ, որ վճարված է երեսուն հազար դոլար:

Պարոն Ռամզեյն անողոր քրքշաց:

— Դուք, անշուշտ, շատ կզարմանաք, էթե լսեք, որ տիկին Ռամզեյը զննել է սա բազաթի հանրախանութներից մեկում, Նյու Յորքից մեկնելուց մեկ օր առաջ և վճարել է ընդամենը տասնութ դոլար:

Պարոն Քելագան զայրացավ:

— Հիմարություն: Դրանք ոչ միայն իսկական են, այլև մեծությամբ լավագույններից են, որ ես երբևէ հանդիպել եմ:

— Գրազ եմ գալիս հարյուր դոլարով, որ դրանք արհեստական են:

— Համաձայն եմ:

— Օ, էլմեր, շարժե գրազ գալ այն բանի վրա, որին շափազանց վստահ ես, — թեթևակի ժպտալով և մի փոքր առարկող տոնով սասց տիկին Ռամզեյը:

— Ինչո՞ւ շարժե եթե կարելի է հեշտությամբ փող վաստակել, ապա դրանից միայն հիմարը կհրաժարվի:

— Բայց ինչպե՞ս ապացուցել...

— Թույլ տվեք մտտիկից ուսումնասիրել, և էթե արհեստական է, անմիջապես կասեմ: Ի վերջո, այնքան էլ մեծ բան չէ 100 դոլար կորցնելը:

— Հանիր վզիցդ շարանը, սիրելիս, թող պարոնն ուզածի շափեայի:

Տիկին Ռամզեյը մի պահ տատանվեց և ձեռքը տարավ ամբակցիչը:

— Չի բացվում, — սասց նա, — ըստ երևույթին, պարոն Քելագան պիտի բավարարվի իմ ասածով, ուրիշ միջոց չկա:

Հանկարծ ինձ պաշարեց տարօրինակ մի զգացում. ինձ թվաց, թե հիմա անպայման մի բան պետք է կատարվի:

Ռամզեյը տեղից վեր թռավ:

— Ես ինքս կարձակեմ:

Նա մարդուրտաշարը տվեց պարոն Քելագային:

Արևելյցին գրպանից հանեց խոշորացուցքը:

Երա ողորկ և թուխ զեմքին հաղթական ժպիտ տարածվեց եմ այն բուպիին, երբ վերագարձնելով շարանը, ուղում էր հայտնել իր կարծիքը, նկատեց տիկին Ռամզեյի ուշագնացության

աստիճան գունաթափ դեմքը: Տիկինը նայում էր Քելագային այնպիսի ակնապիշ և աղերսող արտահայտությամբ, որ զարմանալի էր, թե ամուսինը ինչպես չէր նկատում: Պարոն Քելագան կանգ առավ բերանը բաց և կարմրատակած:

Նա ճիգ գործադրեց տիրապետելու իրեն և ասաց.

— Սխալվեցի, շատ հաջող արհեստական մարգարիտներ են, որոշեցի միայն խոշորացուցքով նայելիս: Ես էլ եմ կարծում, որ ասար դոլարից ավելին չարժե:

Այնուհետև պարոն Քելագան դրամապանակից հանեց հարյուր դոլար և անխոս հանձնեց Ռամզեյին:

— Գուցե սա քեզ համար դաս լինի, երիտասարդ բարեկամ, որ այլևս աչքքան ինքնավստահ չլինես, — սասց պարոն Ռամզեյը, վերցնելով թղթադրամը: Ես նկատեցի, որ Քելագայի ձեռքերը հուզմունքից դողում էին:

Այդ յուրն անմիջապես տարածվեց նավով մեկ: Այդ երեկո Քելագան բավական շատ հեկոտեք հանդուրժեց: Մարդիկ զոհ էին, որ, վերջուպես, մերկացվել էր պարոն Սմեհագետը:

Այդ երեկո զլիսացավ պատճառաբանելով, իր շքեղ համարում փակվեց տիկին Ռամզեյը:

Հաջորդ առափոս, երբ վեր կացա և սկսեցի հաղնվել, պարոն Քելագան դեռևս պակաս ծխում էր: Հանկարծ ինչ-որ մեկը բավեց դռանը և ճեղքից մի ծրար ներս խցկեց: Դուրք բացեցի, ոչ որ չկար: Ծրարը հասցեագրված էր Մաքս Քելագային, որի անունը գրված էր տպագիր մեծատառերով: Ծրարը հանձնեցի Քելագային:

— Ումի՞ց է... — նա բացեց և միայն արտասանեց, — Օ...

Ծրարից հանեց ո թե նամակ, այլ՝ հարյուր դոլարտնոց մի թղթադրամ: Նայեց ինձ և նորից կարմրեց, հետո ծրարը պատաստեց:

— Նեղություն չե՞ք կրի պատուհանից դուրս նետել:

Կատարեցի խնդրանքը և ժպտալով նայեցի նրան:

— Անտանելի բան է, երբ մարդուն կատարյալ հիմարի տեղ են դնում:

— Մարդարիտներն իրական էին:

— Եթե ես փոքրիկ, սիրունիկ կիմ ունենայի, երբևր նրան Նյու Յորքում մենակ չէի թողնի, — սասց նա:

Այդ պահին ես այլևս չէի հակակրում պարոն Քելագային: Նա հանեց ծոցատետրը և զգուշությամբ տեղավորեց հարյուր դոլարանոց թղթադրամը:

Մշտությունը



ինս բավականին անճշտապա՛: է, այնպես որ երբ ուշացումով հասա Քլարիչի պետարան, ուր պալ-մանավորվել էինք նախաճաշել, ու շատա իրեն այնտեղ, բոլորովին էլ չզարմացա: Կոկտեյլ պատ-վիրեցի: Սեզոնի ետուն շրջանն էր, ու հագիվ երկու կամ երեք ազատ սեզան կար: Մի քանիսը վաղ նախաճաշից հետո սուրճ էին խմում, մյուսներն ինձ նման ժամանակ էին անցկացնում՝ մի զավտթ մարտինի խմելով: Կանայք իրենց ամա-ռային հագուստներով հմայիչ էին ու դվարթ, աղամարդիկ՝ կենս-ուպախ, բայց չկարողացա գանել մեկին, որի տեսքը հետաքրք-րաբեր ինձ՝ լրացնելու համար այն քառորդ ժամը, որի բնթաց-քան պետք է սպասեի կտոջս: Հաճելի էր դիտել նրանց, նայել նշանց նուրբ տեսքին. թեև լավ էին հարգված, բայց եսև ան-փալթ էին և գրեթե բոլորն էլ կարծես միեկնույն կաղապարից էին: Ես գիտում էի նրանց ավելի շատ համբերատարություններ, քան հետաքրքրություններ: Արդեն ժամը երկուսն էր և ևս զգացի, որ բաղցամ էմ: Կինս սասում է, որ ինքը չի կարողանում կրել ոչ փերուզե քար և ոչ էլ ժամացույց, քանի որ առաջինի դույնը կա-



նաչի է փոխվում, իսկ ժամացույցը կանգնում է, և սրանք նա վերագրում է շար բախտին: Փիրուզի մասին ասելիք չունեմ, բայց երբեմն մտածում եմ, որ եթե նա ժամանակին լարեր ժամա-ցույցը, կաշխատեր: Ես տարված էի այս մտքերով, երբ սպասա-վորը մտանցավ և հյուրանոցի սպասավորներին հասուկ ցածր ու խորհրդավոր ձայնով ասաց, որ ինչ-որ մի տիկին հենց նոր հեռախոսով գանգահարեց և խնդրեց հաղորդել ինձ, որ ուշացել է և չի կարողանալու նախաճաշել ինձ հետ:

Երկընարանքի մեջ քնկա: Այնքան էլ հաճելի չէր միայնակ ճաշել մարդկանցով չի պետարանում, մյուս կողմից էլ՝ ուշ էր տկումը դնալու համար և ես սրոշեցի մնալ իմ տեղում: Ուղղվեցի դեպի ճաշասենյակ, ինձ երբեք առանձնապես բավականություն չի պատճառում, երբ շքեղ պետարանների վարիչներն անձամբ ճանաչում են քեզ, բայց այս դեպքում, անշուշտ, հաճելի կլի-ներ, որ ավելի ջերմ ողջույնի արժանանալիս՝ ճաշարանի վա-րիչը՝ չոր ու անբարչացակամ դեմքով մի մարդ, ասաց, որ բոլոր սեղանները զբաղված են: Անօգնական հալացքով հույսեցի մեծ ու շքեղ սրահի շուրջ բոլորը և հանկարծակի ուրախությունը երջ-մարեցի ծանոթներիցս մեկին: Լեզի էլիզաբեթ՝ Վերմոնթն էր՝ իմ վաղեմի բարեկամուհին: Նա ժպտաց ինձ ու նկատելով, որ մեկնակ է, մտանցա:

— Տեղ չէի՞ք տա բաղցամ մարդուն ձեր սեղանի մեա,— հարցրի:

— Ծ՛, անշուշտ, բայց ես դրեթե վերջացրել եմ: Նա նստած էր մի մեծ սյան կողքին զբված սեղանի մեա և ես տեսա, որ մեկը համարյա տատնանացած էինք:

— Բախտս բերեց,— առաջի ես:— Քաղցամ ուշքս պն:ւմ էր:

Նա շատ հաճելի մպիտ ուներ, որը պայծառացնում էր նրա դեմքը ոչ թե միանգամից, այլ մաս ու մաս՝ ուրույն հմայք տալով նրան: Ժպիտը մի պահ տատանվում էր նրա շուրթերին, հետո դանդաղորեն շարվում դեպի փայլուն սլքերն ու մեղ յո-րեն հանգրվանում այնտեղ: Անշուշտ, ոչ ոք չէր տաի, թե էլի-զաբեթ Վերմոնթը սովորական կին էր: Գեուատի տարիքում չեմ ճանաչել նրան, բայց շատերից եմ լսել, որ սիրունիկ աղջնկ է եղել, այնքան սիրունիկ, որ մարդիկ նրան նայելիս հուզվել են: Ես գրան լրիվ հավատում էի, քանի որ հիմա էլ, շնայած իր հիսուն տարիներին, անզուգական էր մնում: Նրա գեղեցկությունն

արդեն խամրել էր և մի փոքր ստվեր էր գցում երիտասարդ օրե-
րի փթթող հմալքի վրա: Ինձ դուր չեն գալիս այն շպարված
դեմքերը. որոնք բուրն էլ իրար նման են: Իսկ կասկածում եմ,
որ կանայք հիմար են, հերքեցնում են իրենց դեմքի արտա-
հայտությունը և մթազնում իրենց անձը դիմափոշիով, կարմրա-
ներկով ու շրթներկով: Բայց էլիզաբեթ Վերմոնթն այնքան վար-
պետորեն էր օգտագործում այս ամենը, որ դրանից ոչ թե եղծ-
վում, այլ բարեկամվում էր բնակորդ: Մարդ չի քննարկում մի-
ջոցները, այլ ողջունում է արդյունքը: Կոսմետիկան այն ձևով,
ինչպես նա էր օգտագործում, ոչ թե հասարակացնում, այլ գե-
ղեցկացնում էր այդ կատարյալ դեմքի արտահայտությունը:
Կարծում եմ, որ մազերը ներկում էր, որոնք սև, յուղոտ ու փայ-
լուն էին: Իրեն միշտ ուղղաձիգ էր պահում, կարծես երբեք որևէ
բանի հենվելով չէր նստել: Շատ նրբակազմ էր: Հագել էր սև սա-
տինն մի զգեստ, որի ձևն ու պարզությունը հրաշալի էին, իսկ
վիզը զարգարում էր մարգարտյա մի շարան: Նրա մշուս զարդը
մի մեծ գմբուխ էր, որը հանգում էր ամուսնական մատանու
վրա և որի մուգ փայլն ավելի էր ընդգծում ձեռքի ճեղքակաթյու-
թյունը: Բայց էլիզաբեթի տարիքը պարզորոշ կերպով մատնողը
հենց նրա ձեռքերն էին: Գրանք այլևս ուղղակի փափուկ ձեռ-
քերի փոսիկներով պատած կլորությունը շունչին, և տեսնելով
այդ, մարդ հուսախաբ էր լինում: Որոշ ժամանակ անց գրանք
գիշատիչ թռչունի մագիլների տեսք կընդունեին:

էլիզաբեթ Վերմոնթը հայտնի կին էր: Նա ազնվական ծա-
ղում ուներ, սընթ էրթի յոթերորդ կոմսի դուստրն էր: Տասնութ
տարեկանում ամուսնացել էր շատ հարուստ մարդու հետ և բրո-
նել զարմանալի շոալյության, անառակության ու ցոփության
ուղի: Բավականին հպարտ էր զգույշ լինելու համար և բավա-
կանին համարձակ՝ հետևանքների մասին մտածելու: Երկու տա-
րի անց ամուսինը ահավոր խայտառակ իրադարձություններից
հետո ապահարզան տվեց: Այնուհետև նա ամուսնացավ այդ
գործին առնչվող պատասխանատու երեք անձանցից մեկի հետ
և տասնութ ամիս անց նրան էլ լքեց: Ապա հաջորդեց սիրահար-
ների մի ամբողջ շարան: Անուն հանեց իր անտակուսվամբ
Նրա ցնցող գեղեցկությունը և խայտառակ վարքը հասարակու-
թյան ուշադրության կենտրոնում էին պահում նրան և ամեն
անգամ առիթ տալիս բամբասանքի: Էլիզաբեթի անունը ար-
համարհանք էր առաջացնում ազնիվ մարդկանց մեջ: Նա թրդ-

թամու էր, շոալյուղ և քմահաճ: Հնայած սիրահարների հանգեղ
ունեցած անհավատարմությանը, հավատարիմ էր իր ընկերների
նկատմամբ: Համենայն դեպս կալին մի քանիսը, որոնք իրենց
թույլ չէին տալիս նրա մասին վատ արտահայտվել, ինչ էլ որ
նա աներ, և գտնում էին, որ էլիզաբեթը պարզապես հաճելի կին
է: Նրան հասուկ էր անկեղծությունը, բարձր տրամագրությունը
և արիությունը: Երբեք չէր կեղծել: Անատածեռն ու անկեղծ էր:
Կյանքի այդ շրջանում էր, երբ ծանոթացա նրան: Որոշ հանրա-
ճանաչ տիկնայք, որոնց համար կրոնն այլևս մոզայիկ չէ և
որքան շատ են վարկարեկված լինում, սկսում են կեղծ հետա-
քրքրություն ցուցաբերել արվեստի նկատմամբ: Սառը վերա-
բերմունք ստանալով իրենց դասին պատկանող մարդկանցից,
նրանք երբեմն բարեհաճում են ընկերություն անել գրողների,
նկարիչների ու երաժիշտների հետ: Իսկ զգացի, որ էլիզաբեթը
հաճելի ընկեր է: Նա մեկն էր այն անձնավորություններից, որոնք
աներկյուղ արտահայտում են իրենց մտածածը (այսպիսով՝ բա-
վականին օգտակար ժամանակ են խնայում) և ձկուն միտք ունեն:
Միշտ պարաստ էր գրուցելու իր ցնցող անցյալի մասին: Այդ
գրույցները, թեև պոտվում էին թեթև նյութերի շուրջ, այնուա-
մենայնիվ հաճելի էին: Եվ ամեն ինչ մի կողմ գնելով, նա դարձ-
յալ մնում էր նույն ազնիվ կինը:

Հետո էլիզաբեթը կրկին բուրբին ապշեցրեց: Քառասուն տա-
րեկան հասակում ամուսնացավ բասմեկամյա մի երիտասարդի
հետ: Ընկերների կարծիքով դա նրա կյանքի ամենահիմար
արարքն էր, և նրանք, ովքեր իր նեղ օրերին միշտ հավատարիմ
էին, այժմ ի սեր աղաչի, որը բավականին դուրեկան էր և ուղ-
ղակի ամոթ էր նրա անփորձությունից սգավելը: Երամարկեցին
էլիզաբեթից: Գա արգեն գազաթնական էր: Մարդիկ գերախառ-
թյուն դուռնակեցին, քանի որ էլիզաբեթ Վերմոնթը վեց ամսից
ավելի անկարող էր հավատարիմ մնալ որևէ տղամարդու: Նրանք
այդ կարծիքին էին և հույս ունեին, որ էլիզաբեթը նորից կընկնի
սկանդալային իրավիճակի մեջ, իսկ թշվառ տղան ստիպված
կլինի թողնել նրան՝ հարստության բուրբին: Բայց նրանք սխալ-
վեցին: Հայտնի չէր, ժամանակը փոփոխություն մտցրեց քա-
ռասնամյա տիկնոջ սրտում, թե Պեանը Վերմոնթի անմեղու-
թյունն ու պարզ սերը հուղեցին նրան, բայց փաստը մնում է
փաստ, որ էլիզաբեթը նրա համար հիանալի կեն դարձավ: Նը-
րանք ազրատ էին, իսկ էլիզաբեթը բոս իր սովորության՝ շոալյու-

Բայց նա տնտեսող տանտիրիկին էր: Եվ հանկարծ այնքան բծախնդիր դարձավ իր անվան նկատմամբ, որ բամբասանքները լռեցին: Թվում էր, թե նրա միակ հոգսը ամուսնու երջանկութունն էր: Ոչ որ չէր կասկածում էլիզաբեթի նվիրվածությունը: Մարդիկ այլևս չէին բամբասում, կարծես թե մոռացան նրան: Նա հիմնովին վերափոխվել էր, և ես հաճույք զգացի այն մտքից, որ երբ այդ կինը ծերանա, ետևում թողնելով ցնցող անցյալը, նրան կթվա, որ այդ տարիները ոչ թե իրեն էին պատկանում, այլ վաղուց մահացած մեկին, որին ինքը ժամանակին ազոտ կերպով գիտեր: Կանայք կատարվածը մոռանալու նախանձելի բնույթնակություն ունեն:

Բայց ո՞վ կարող է ասել, թե կյանքը ինչ անանկնայնեբով է լի: Մի ակնթարթում ամեն ինչ փոխվեց: Պիտեր Վերմոնթը տաս տարվա իղեալական ամուսնությունից հետո խելագարի նման սիրահարվել էր Բարբարա Կանտոն անունով մի ազնկա: Վերջինս Ռոբերտ Կանտոնի՝ արտաքին գործերի մինիստրի նախկին օգնականի կրտսեր դուստրն էր, և, իրոք, եթերային գեղեցկություն ունեցող: Անշուշտ, հնարավոր չէր նրան համեմատել լեզվի էլիզաբեթի հետ: Շատերը գիտեին դեպքի մասին, բայց ոչ որ չէր կարող ասել, այն հայտնի՝ էլիզաբեթին, թե՞ ոչ: Եվ ի՞նչ որոշում կկայացնե՞ր նա այդ իրադրություն մեջ, որն այնքան անհարիր էր նրա կենսափորձին: Չէ՞ որ առաջինը միշտ ինքն էր լքել սիրեկաններին: Ինչ վերաբերվում է ինձ, ապա ես կարծում էի, որ նա կարականապես վերջ կդնի այդ վիճակին: Ես ծանոթ էի նրա արիությունը: Ահա թե ինչն էր դրադեցնում իր ուղեղը, երբ մենք գրուցում էինք նախաճաշի ժամանակ: Ոչ մի կեղծ բան չկար նրա վարվելու մեջ, տուշվա նման համայնչաքարտի և այնքան անկեղծ էր նրա պահվածքը, որ առիթ չէր տալիս կասկածելու, թե որևէ բան է հուզում իրեն: Թեթև, բայց առողջ բանականությամբ և հնարամիտ ու աշխույժ հումորով խոսակցության բնթացքում առաջացող տարբեր թեմաների շուրջ գրուցում էր այնպես, ինչպես միշտ: Ես բավականություն էի ստանում այս ամենից: Եվ եկա այն եզրակացություն, որ ինչ-որ հրաշքով նա անտեղյակ է ամուսնու զգացմունքներին: Մտածում էի. էլիզաբեթի սերը Պետերի նկատմամբ այնքան մեծ է, որ մտքով անգամ չի անցկացնում վերջինիս դավաճանությունը:

Խնդիրներ մեր սուրճը, մի քանի ծխախոտ էփեղիչք և նա ինձ ժամը հարցրեց:

- Երեքին քառորդ պակաս:
- Ես պետք է խնդրեմ իմ հաշիվը:
- Թույլ կտա՞ք վճարել ձեր նախաճաշի համար:
- Անշուշտ, — ժպտաց նա:
- Շտապո՞ւմ եք:
- Ես պետք է Պետերի հետ հանդիպեմ ժամը երեքին:
- Օ՛, իսկ ինչպես է Պետերը:
- Շատ լավ:

Նա թեթևակի ժպտաց իր ձգված ու հաճելի ժպիտով, բայց կարծես ծաղր նկատեցի այդ ժպիտում, մի պահ տատանվեց, զգուշորեն նայեց ինձ:

— Քեզ դուր են գալիս հետաքրքրաշարժ դեպքերը, այնպես չէ՞, — ասաց նա: — Երբեք չեք գուշակի, թե ինչու եմ եկել այստեղ: Առավոտյան դանդահարեցի Պետերին և պայմանավորվեցի հանդիպելու նրան այստեղ, ժամը երեքին: Պետք է խնդրեմ, որ սպահարդան տա:

— Զի կարող պատահել, — բացականչեցի ես: Զգացի, որ կարմրում եմ: Զգիտեի ինչ ասել: — Կարծում էի, շատ համբերալիս եք:

— Մի՞թե կարծում ես, որ անտեղյակ եմ այն ամենին, ինչ բոլորը գիտեն: Այդ աստիճան հիմար չեմ:

Նա այն կանանցից չէր, որին հնարավոր լիներ ասել այն, ինչին ինքը չես հավատում, և ես չկարողացա ձեռնհասել, թե չեմ հասկանում նրա միտքը: Մեկ, երկու վայրկյան լուռ մնացի:

- Ինչո՞ւ ես թույլ տալիս, որ սպահարդան տա:
- Ռոբերտ Կանտոնը հնամուլ ծերուկ է, և շատ եմ կասկածում, թե նա կթուլատրի Բարբարային ամուսնանալու Պետերի հետ, եթե անգամ ես սպահարդան տամ: Գիտես, որ ինձ համար ոչ մի նշանակություն չունի մեկ սպահարդան ավել կամ պակաս տալը...

Նա թոթվեց իր գեղեցիկ ուտերը:

- Արտեղի՞ց գիտես, որ Պետերն ուղում է ամուսնանալ նրա հետ:
- Նա ոտից գլուխ սիրահարված է:
- Ի՞նչն է քեզ ասել այդ բոլորի մասին:
- Ոչ, նա նույնիսկ տեղյակ չէ, թե ինձ հայտնի է այդ

ամենը: Նա այնքան թշվառ է, այնքան է ջանում շփրավորել իմ զգացմունքները:

— Միգուցե դա կարճատե, կույր հափշտակութուն է,— համարձակվեցի ասել ես:— Այն կարող է անցնել:

— Իսկ ինչո՞ւ. Բարբարան երիտասարդ է, գեղեցիկ և բավականին գուրեկան: Նրանք շատ համապատասխան զույգ են և բացի այդ, ի՞նչ լավ բան կա, եթե սերն արդեն անցել է: Չէ՞ որ սիրո մեջ տվյալ պահն է կարևորագույնը: Ես տասնինը տարով մեծ եմ Պետերից: Եվ եթե տղամարդը դադարում է սիրել մի կնոջ, որն իր մոր տարիքին է, կարծում ես, որ նա կկարողանա՞ երբեկից կրկին սիրել նրան: Դու վիպասան ես և աղելի շատ բան գիտես մարդկային բնավորության մասին, քան ես:

— Ինչո՞ւ դո՞ւ պետք է այդ գոհարերությունը անես:

— Երբ տասը տարի առաջ Պետերն առաջարկեց ամուսնանալ, ես խոստացա, որ երբեկից իր ցանկացած պահին կստանա իր ազատությունը: Հասկանո՞ւմ ես, մեր տարիքների մեջ այնքան շատ անհամաշարժություն կա, որ այս ամենը օրինալի է:

— Իսկ դու ինչո՞ւ ես ուզում խոստումդ հարգել, երբ ինքը չի խնդրել այդ մասին:

Նա մի փոքր ջղաձգեց իր երկար, բարակ ձեռքերը և միայն այժմ նկատեցի, որ ինչ-որ շարագուշակ բան կար այդ գմբուխտե բայլի մուգ փայլի մեջ:

— Օ՞, ես անպայման պետք է այդ անեմ: Մարդ իր խոսքի տերը պետք է լինի ձիշան ասած, ես այսօր դրա համար եմ այստեղ նախաճաշում: Հենց այս նույն սեղանի շուրջն էք, որ նա ինձ առաջարկություն արեց: Մենք միասին ճաշում էինք, և ես նստած էի այստեղ: Ցավալին այն է, որ ես նրան առաջվա պես սիրում եմ:

Մի փոքր լռեց, նկատեցի, որ ատամները սեղմեց:

— Դե, կարծում եմ, պետք է զնալ: Պետերը սպասել չի սիրում:

Նա նույն ինձ մի տեսակ անօգնական հայացքով ու թվաց, թե դժավարանում է վեր կենալ աթոռից: Բայց ժպտաց ու կլտրուկ շարժումով ոտքի կանգնեց:

— Կդանկանայի՞ր, որ ուղեկցեի քեզ:

— Մինչև հյուրանոցի դուռը,— ժպտաց նա:

Մենք բայլեցինք ուստորանի և նախասրահի միջով և երբ

հասանք մուտքին, դռնապանը բացեց պտտվող դուռը: Ես հարցրեցի, չէր ուզենա արդյոք տաքսի նստել:

— Այ, աղելի լավ է բայլեմ, այնքան հաճելի օր է... Նա ինձ մեկնեց ձևորդ:

— Շատ հաճելի էր քեզ հետ հանդիպել: Ես վաղը մեկնում եմ արտասահման և կարծում եմ, որ աշունը անց կիացնեմ Լոնդոնում: Զանգահարիր ինձ:

Նա ժպտաց, գլուխ տվեց ու հեռացավ: Հայացքով հետևեցի նրան մինչև Դավիս փողոցը: Օղը գեռես տաք էր ու զարնանային: Տանիքների արանքից երևացող կապույտ երկնքում դանդաղորհն լողում էին փոքրիկ, ճերմակ ամպերը: Նա իրեն շատ ձիգ էր պահում, իսկ գլխի կեցվածքը վեհ էր: Ուներ բարեկազմ ու գեղեցիկ արտաքին և ուշադրություն էր գրավում: Տեսա, թե ինչպես նազանքով գլուխ տվեց իր ծանոթներից մեկին, որը հանեց գլխարկը և մտածեցի, եթե հազար տարի էլ անցներ, մարդ չէր կարող կոահել, թե ինչ մորմոք կար նրա սրտում:

Ես նորից եմ կրկնում. նա շատ ազնիվ կին էր:

Հանուն արգարության պետք է ստի, որ գրողն իր կենդանության օրոք նույն գրամով էր հասուցում անպոխիական գրականագիտությունը, իր զբոսերում, ելույթներում և հարցազրույցներում բացառապես արժամարձանքով արտահայտվելով Լեյնտիլայի բրմի՛ բ մասին:

Այս ամենի գրողատունացը բննադատության բացումայն կանխամտածված վերաբերմունքն է անտանձ նեղինակի նկատմամբ: Մոեմի գրամաները, երկախոսությունների իրենց ողջ նշվածությունը ու բննական անտասրկելի արծառնեքներով հանդերձ, նազով թե զուրս են գալիս այսպես հոլոված ռյավ սարքված պիեսներին (a well-made play) շրջանակներից, որի ներկայացուցիչներն էին մամանակին Անգլիայում նույնի Ա. Պիներոն և Ջ. Բարբրեյ: Այլ են նրա վեպերն ու պատմվածքները: «Անձրև» (Rain) և «Գրքերի պայտասկը» (The Book-Bag) արդեն մտել են բրիտանական հովվեկաթիլայի գոտականների շարքը: «Մարդկության մարդկային» (Of Human Bondage, 1915), «Լուսին և վեցավեցանոց» (The Moon and Sixpence, 1919), «Կարկանդակներ և գարեջուր» (Cakes and Ale, 1930), «Պատրես» (Theatre, 1937), «Ածելու սայրը» (The Razor's Edge, 1944) վեպերը և «Հանրագումարի բերելով» գիրքը ամենևին էլ ներկա նարչարամյակի անգլիական արևակի երկրորդ կարգի սակզմագրությունների թվին չեն պատկանում: Զուր չէ, որ սկսած 1907 թ., երբ Ռուսաստանում նրա արձանագրվեց նրա «Լեդի Ֆրեդերիկ» (Lady Frederick) պիեսը, Մոեմը թարգմանվել է և այսօր էլ դեռ թարգմանվում է ուսանողներին:

«Հասարակությանը կուլիսների հետ թողնելը վտանգավոր է: Նա ճշտությանը է կորցնում իր պատրանքները, իսկ հետո գայրանում է ձեզ վրա, որովհետև նրան հատկապես պատրանք է պետք», — շարունակում էր Մոեմը¹, բայց ինքն էր խտրում այդ պատվիրանը և այն էլ բավարարելու: Նույնիսկ ինչ-որ մարտահրավեր նետող ցուցադրականությունում, թույլ էր տալիս հետաքրքրասեր ժամանակակիցներին ներս նայելու իր «ստեղծագործական լաբորատորիան»: Հեղինակային զատուցություններն ու խոստովանությունները, որանցով լի են նրա գրքերի էջերը, երբեմն ընդունակ են իրենց մտեմայն հանրահայտ օգինելիմով վախճանել ընթերցողին ու քննադատին: Օրինակ, «Հանրագումարի բերելով» գրքում նեղինակն ավելի քան զսպվածությունում է արտահայտվում իր սեփական ստեղծագործության մասին:

Տաղանդավոր գրողների ոճը հիպոտացիկալու բնդունակություն ունի: Մոեմը, անտարակույս, տաղանդավոր է: Նրան հասուկ է ինքնահեղանքը, սեփական ստեղծագործությունների թուլությունների վրա ձեռնդրելը, գրողի էթիկայի մասին արած շփոթմունք պատճառող կարծիքները, որոնք թույլ չեն տալիս պայտասկելու իր իսկ վերաբերմամբ սատովածային ներշնչանքով գրականությունը ծառայելու առասպելը, այս ամենը կարծես նրա անտացրել է ըրենալատությանը: Եվ կենելով այս ամենից, քննադատությունը մեկընդմիջտ, բացի բացարձիկ դեպքերից, որչնց, զի, և՛ ինչ նեղինակն ինքը հարկ եղած պիեստես չի ցուցաբերում իր ստեղծագործությունների նկատմամբ, ուրեմն իրեն՝ քննադատությանն առավել ևս վայել չէ ընդունել, որ նրանք արժանի են լուրջ քննարկման: Հանգամանքների բերումով այնպես ստացվեց, որ «անգլիական Մարտանը» մինչև օրս էլ նամարվում է բելետրիստիկան և իսկական գրա-

կանուցությունը (անգլիական գրականագիտությունը) կամ էլ ռեալիզմը և մոգիկալիզմը (խորհրդային գրականագիտություն) իրարից ստմանադատող ինչ-որ սեղանք զանախի՝ բնակիչ:

Դու անտարգարացի է: Մոեմի լավագույն վեպերն ու պատմվածքները պարունակում են այն բոլոր անհրաժեշտ ու ծանրակշիւ տարրերը, որպեսզի վերջապես մանեն անդլիզիզու գրականության մեջ և իրենց արժանավոր սեղանքը զբաղին այնտեղ:

Մոեմի գրքերի թողած անմիջական տպավորությունն այն է, որ գրողը գինտե այն, ինչի մասին որ գրում է: Քրիստոմատիական նման օրինակ կարող է ծառայել «Լիզան կամեթից» վեպը: Այդ վեպում անցած դարավերջի լոնդոնյան ետնախորշերն ու նրանց բնակիչները պատկերված են իրենց գրեական ֆակտուրայով, ամենայն մանրամասնությամբ ու մանրահանի օրյեկտիվությամբ: Մոեմի նույնիսկ «ամենակոտորիկ» ստեղծագործությունները («Լուսին և վեցավեցանոց», «Կազուարեսու ծառը» — The Casuarian Tree, 1926, ժողովածուի պատմվածքները) այնպես են զբված, որ ակնհայտորեն երևում է, որ գրողն անձամբ ծանոթ է այն սեղանքին ու մարդկային տիպերին, որոնց մասին խոսում է այդ գրքերում:

Մոեմը շատ է ճամփորդել, շրջանցել է Եվրոպան, այցելել է Ռուսաստան ու Ամերիկա, եղել Աֆրիկայում, Ասիայում և Պոլինեզիան կղզիներում: Որտեղ էլ որ լինում էր, նա ամենուր ստեղծագործության նյութ էր գնտարում և զբոսնում. «Յուրաքանչյուր մտքու մեջ ես ոչ թե ինքնանպատակ եմ տեսնում, այլ ելույթ, որն ինձ որպես գրողի կարող է պետք գալ»:

Հայտնի են Մոեմի բազմաթիվ հայտարարություններն այն մասին, որ նա իր գրքերում հանդես է գալիս որպես դիտող, պատմող, վերաբայագրող, ինչ կամենեաք, բայց ոչ զուտավոր: Այստեղից էլ բխում են օրյեկտիվիզմի և բարեկամենաք, բայց ոչ զուտավոր: Այստեղից էլ բխում են օրյեկտիվիզմի մեղադրանակն ուղեւորիվիզմի մեջ հեղինակի հուցեկին արված հանտիակի մեղադրանքները: Չի կարելի ասել, որ այդ մեղադրանքները անհիմն են, սեփականից իրոք որ հասուկ է Մոեմի փիլիսոփայական հայտքներին: Բայց այսանց ևս հեղինակի սեփական կարծիքները քննադատության աչքում ֆեմիլի բնույթ են ստացել: Իսկ չէ որ արվեստագիտի այնպիսի արձանագրությունը բոլորովին էլ նույնը չեն: Հավասարով հեղինակի «խոսքին», քննադատությունը պատրաստակամությամբ հավատարմության նշան է դրել պատմողի, որի անունից կատարվում է պատմությունը (ինչպես օրինակ «Մարդկության մարդկային» կամ «Լուսին և վեցավեցանոց») և հեղինակի անձի միջև:

Սակայն, կիս պատմող հանձն չի անում զատել մարդկային ցեղը, դա բոլորովին էլ չի նշանակում, թե ստեղծագործությունը գուրկ է կյանքի մասին արած հեղինակային կարծիքից: Թող թևկույ ինքը՝ հեղինակը հայտարարի, թե չի ցանկանում հանդես գալ բիբլիական «սեփական եղբոր պահպանի» դեբում, նրա գրչի տակից զուրս եկածի օրյեկտիվ իմաստ ավելի լավ է իր այդ անձնական գրույթից և չի կարող նույնացվել դրա հետ: Համայն գրողն ստամ և մի բան, իսկ նրա ստեղծած կերպարների արտահայտությունը, ստեղծագործության գեղարվեստական կատեգորիան վկայում է այլ բան: Մոեմը հրաժարվում է զուտելուց, բայց նրա գիրքը իր ձևոք վերցնող ընթերցողը դատում

է, որովհետեւ նա չի կարող անտարբեր մնալ այդ գրքի հերոսների նկատմամբ, որովհետեւ Մոնթի նկարագրածը բնավ էլ անտարբեր չէ շարի ու շարու նկատմամբ Այլ հարց է, որ շատ հաճախ լավագույնը գովար է դասել Մոնթի պերսոնաժներին մասին, որ այստեղ դատական «մեղավոր չէ» ֆորմուլայով կամ էլ քննադատական «գրական-բացասական» շարժումով չեն ազատվի Մոնթան դա վիշտում է ավելի շատ հեղինակի սրժանիքներին, քան թերութունների մասին, չէ որ կյանքում եւ շարի ու բարին հազիվ թի հանդիպում են «մաքուր» անբոլո:

Մոնթը ծայրահեղորեն ճշգրիտ է ժամանակի, տեղի և սոցիալական միջավայրի առանձնահատկությունների հաղորդման մեջ: Նրա պերսոնաժները պարտադր կերպով օտոված են անհատականություններ, թեև հազվադեպ համակրելի, բայց բացառիկորեն կենսունակ են, «Ֆակտուրային», և ստեղծում են անսրժական պատկերի պատրանք: Մոնթի ստեղծագործությունների սյուժեն, որպես կանոն, պարզ է, գեղեցիկ և հետաքրքրական: Գեղեցկությունն ու հետաքրքրականությունը մեզ մտա չգրոտես թի ինչու երբեմն զուգակցվում է մանիերայնությունն ու մանր թեմատիկայի հետ, ինչպես ոչ որ երբեք չի հաստատել, որ լուրջ բաների մասին պետք է անպայման գրել Գրոտոսի կամ Քոմաս Մանի գովարտին ռեով, չէ որ Սվիֆտն ու Վոլտերը կարողանում էին դա անել թեթև և հրապուրելի ձևով:

Մոնթի լավագույն գրքերում մեծ և կարեւոր պորբլեմների պակաս չկա: Կարելի է համաձայնվել կամ չհամաձայնվել դրանց գեղարվեստական մեղեքանություններին հետ, բայց չի կարելի չընդունել, որ հեղինակը առաջ է բաշում այդ պորբլեմները և ձգտում լուծել դրանք լրջմիտ գրողի պատասխանատվությամբ: Մարդկային կյանքի իմաստը («Մարկուսյան մարդկային»), արվեստի էությունը («Լուսին և վեցպենսանոց», «Քուտրոն»), գրողի ստեղծագործությունն ընդհանրապես («Կարկանդակներ և գարնալույս»), դոգմաների բախումը իրականության հետ («Անկեր») — ահա թի ինչ էր հետաքրքրում Մոնթին: Ի միջի այլոց, գրականությունը այսօր էլ հազիվ թի կարողանա այդ հարցերին սպասելի պատասխան տալ:

Մոնթի ստեղծագործությունների մեծ մասի հիմնական թեմաներից մեկը այն էթիկական և էթիկաթիկական երևույթի քննադատությունն է, որը «քուրժուս» է կոչվում: Երբ խոսքը բարձրագույն բարոյականության ու արվեստի նկատմամբ ունեցած նրա հայացքներին է վերաբերում, փոխվում է Մոնթի նույնիսկ պատմելու ինտենցիան, և օրյնկտիվ գրելուձևն իր տեղն է գիշում ամենաթիվականց ու փայլուն կերպով մշակված հեղանցին:

The last but not the least, էթի առաջինը չէ, այս վերջիններից էլ չէ: Ինչպես ասում են անգլիացիները՝ ահա մոնժյան արձակի լեղուն: «Երկար մտածելուց հետո ես որոշեցի, որ ինձ անհրժմեշտ է ձգտել հասակություն, պարզ գոթյան ու բարիշնչունություն» — այսպես է գրողը բնութագրել իր գրելուձեթի քննարկ ատանձնահատկությունները, և դրա հետ գովար է շնամաձայնվել: Մոնթի մտա բացառիկ է (և ոչ միայն անգլիական գրականությունում մեշ) իմաստասիրն բովանդակություն, հեղեղություն և գրաթիկական Ֆրանցի «ձեովորման» և նույնիսկ առանձին բառերի միջև եղած համալսարանությունը: Ահա թի ինչու

Սեւեթի արձակը, բառային գունագարգման և ինչ-որ ռեական շարվաղանցությունների լիակատար բացակայությամբ հանդերձ, այդքան արասահարի է: Նրա գրքերի լեղուն կարելի է համարել անգլիկների հետ, գրական լեղվի լավանի: Այդ տեսակետից «մոնժյան տերստերը» մեծ հնարավորություն են տալիս անգլիկըն լեղուն աստմատորդների հետ աշխատելու համար: Զուր չէ, որ ասուցիներն այլևի խոր կրախառնություն են տաում նրա նկատմամբ, քան սովորական ընթերցողները:

Գ Գ

«Լուսին և վեցպենսանոց» վեպի պիտավոր պերսոնաժները երկուսն են. պատմողը՝ Երկասարը, բայց արդեն առաջադեմը սկսող անգլիացի գրողը և Զարկ Աթրիքլենդը. արտորինակ մի մարդ, որ թագնում է ընտանիքն ու բոլորային միջնորդի իր պատկանելի աշխատանքը. որպեսզի գրեզվի գեղանկարչությամբ, նկարիչ դառնա. ստեղծի մեծահանձուր կտավներ և բորտապլյուսից մեների Թաթիթում մենակության ու անհայտության մեջ:

Վեպի վերնագիրն ունի ենթատեքստ, և քննադատները բովանդես ու տարբեր ձևով են այն «վերձանել»: Այդ մեկնաբանություններից յուրաքանչյուրը հիմնվում է գրքի բովանդակության վրա և կարող է երես լինել. այդ թվում և այսպիսին. կապիտալով ապստովված բարձրագույն հարմարակցությունը հարաբերում է անձնություններին ու պայծառությունը համակրում մեծ արվեստին այնպես. ինչպես վեցպենսանոցը՝ լուսինն: Խոսքը համարաբար, նույնիսկ, ոչ թի հակադրություն մասին է, սակայն արձույն-արվեստագետի և ճշգրիտ, օգտանամերձ ամբարի միջև եղած ռոմանտիկ անատմիայի մասին, այլ սկզբունքորեն անհամատեղելի երկու երևույթների մասին, որոնք բացարձակապես տարբեր շարվումներում են գտնվում:

Ինչպես միշտ, Մոնթի սյուժեի հիմքում ընկած են իրական դեպքեր՝ Ֆրանսիացի մեծ նկարիչ Գոգենի կենսագրություն փաստերը: Սակայն գեղանկարիչ ու մարդ Գոգենը չէ, որ հետաքրքրել է հեղինակին: Նրան հրապուրել է այն հնարավորությունը, որ հիմք ընդունելով այդ փաստերը, կարող է ստեղծել բացառապես ինքնատիպ գեղարվեստական ստեղծագործություն, առաջ բաշել ստեղծագործության և բարոյականության որոշ պորբլեմներ. որոնք հուղում էին հատկապես իրեն, Մոնթին: «Լուսին և վեցպենսանոցը» Աթրիքլենդի անվան տակ պատկերված գիրք չէ Գոգենի մասին. «Լուսին և վեցպենսանոցը» վեպ է մտադատին գեղանկարիչ Զարկ Աթրիքլենդի մասին: Աթրիքլենդի կերպարը նույնքան է անձնվում պատմական Գոգենի տեթի ձևա. ինչպես ասենք, Ճուլստոյի մտա իշխանուհի Բուկուսեկյան իր նախաձեպի հետ նույն կարելի է ասել և Կարկանդակներ և գարնալույս վեպի պիտավոր հերոս, գրող Գրիթլիք կերպարի մասին: Միայ կիկի Գրիթլիքին նույնպես չեն անգլիացի գրող Քոմաս Հարդիի հետ. ինչպես այստեղ եւ պրոմետային հիմքը համընկնում է և անավոր «Տեսաս»-ի և օկեստրերիցի մերթի հեղինակի ստեղծագործական նախադրի մեջ եղած հանկարծական փոփոխությունների որոշ մոմենտների հետ: Խորագույն քիտվում են նրանք, ոչգեր, որոշելով իրեն թի Մոնթն աշխատել է գեղարվեստորեն լուսարանել Գոգենի կամ Հարդիի նովատագիրը. կշտամբում են գրողին գործի փաստական կողմի աղավաղման, վավերագրությունից հեռանալու և երավաղ ժամանակակիցների իսկական կերպարի գունակաման մեջ:

1 В. С. Мюм. «Подводня итоги», стр. 33.

Այդպես պնդող քննադատներն աշխարհը են անում մի փոքրիկ հանդա-
մանը. Մոեմը պատմական վիպեր չէր գրում, ոչ էլ Ա. Մորուայի և Ս. Տվիչդի
ոչով մեծ մարդկանց ուսմանսիկացված կենսագրությունները: Դա ընդհանրապես
նման բան չէր գրում, այնքան նրան խորթ էին այդ ժանրերը:

Նա մտացածին վեպեր էր գրում, որն անգլերեն լեզվում ճշգրտորեն բնո-
րոշվում է fiction («ֆիկցիոն», «մտացածին») բառով:

Այդ իսկ պատճառով, դիմելով «Լուսին և վեցյւնասունը» վեպին, ամենից
ճիշտը կլինի բավարարվել առանց որևէ շինձու համեմատություն և չեղանակին
գոյություն չունեցող մեղքերի մեջ մեղադրելու: Ավելի լավ է խուսել հենց գրքի
մասին: Առավել էս, որ ստեղծագործության լուսնոգնակայից հազվեցվածությունը
թույլ է տալիս դիմելու նրան առանց նախապես հորինված սխեմայի:

Մեանը գրում է երեք տիպի արվեստի մասին:

Ահա լուսնոյան գրական Նյուրասենյակների և գեղարվեստական սալոնների
արվեստը: Այստեղ ամեն ինչ արվում է նրբագեղության, ինտելեկտուալության
և ջլավ ճաշակին չըրված կատենների համաձայն: Այդպիսի արվեստի ճանաչված
կամ ճանաչում ակնկալող ստեղծողները (դրանց թվին է պատկանում ինքը
պտամոզը) չափավոր կերպով նախանդ են, շնայած նորարարությունից չեն
խորշում, չափավորապես տաղանդավոր են, չնայած բնավ էլ չեն հրաժարվել
առօրյա սին հոգսերից, չափավոր կերպով ինքնատեղ են, բայց ոչ այնքան,
որ նրանց էսթետիկական արտադրանքը դազարի առևտրական պահանջարկի լի-
նելուց, իսկ եթե այնքան էլ խելոք չեն, այնուամենայնիվ, միշտ կարող են
փայլել փոխառնված սրամտությամբ կամ տնարույծ շարախոսությամբ:

Ահա օրինավոր բուրգերական առանձնատների օտարվեստը, որը միայն
պայմանականորեն կարելի է արվեստ անվանել: Այդ արվեստը ներկայացված է
Պիրկ Մթրթրի կապիներով: Ապաշնորճ հոլանդացին այնքան է տարված
ամեն ինչ նկարել «հիշպես կյանքում է», որ կյանքը խույս է տալիս նրա
նկարներից, թողնելով նրանց վրա գեղապատկեր սքանկարին և կեղծ իտա-
լական բնապատկերի ֆոնի վրա նկարված թափառաչողիկներին մնում ֆիգու-
րաները:

Տափակ, դիմադուրկ և դատարկ, ինչպես վատ լուսանկարիչ, Մթրթրի նը-
կարները նպաստում են այդ ստանձնատների բնակիչներին քնտանյոք հանդերձ
լավ մարտադրությանը: Իրանով էլ սպասվում է այդ նկարների Լսթեռիկական
Փունկերին:

Ահա Սթրիբլենդի արվեստը, իսկական մեծ արվեստ, իր հանճարեղության
մեջ հրեշտակոր, բոլոր զոդաններն ու պատկերացումները խորանկող, թարմ և
միաժամանակ մի տեսակ նախապատմական: Գեղեցկությանը ծառայելը հենց
գա է, բայց ոչ այն զեղեցկությունը, որը թելադրում է մտղան կամ ժամանակի
բնահաստույթը, այլ այն իսկական գեղեցկությունը, որը գոյություն է ունեցել
նախրան ամեն տեսակի մոզաններն ու զարաշրջանները և իրեն մարմնավորելու
համար պահանջում է ոչ թե ջլավ ճաշակ, այլ լիակատար ինքնամկրում:

Գեղեցկությունն այն գործանարաշնն ու անհասկանալին է, որ նկարիչը
ստեղծում է համաշխարհային քառօրյ հոգեկան ծանր տառապանքների գիծը
եվ էրբ այն ստեղծված է, ամեն մարդու արված լէ ճանաչել այն: Գեղեցկու-
թյունը հասկանալու համար անհրաժեշտ է վաթժվել նկարի իրգախոսմաներին:
Այդպիսի գեղեցկություն է ստեղծում Սթրիբլենդը, սրբաշունչ, առաքալալ ոգի:

որը ձգտում է ավելի բարձր նպատակի, քան այն ամենը, ինչ շղթայված է
մարմնով:

Գրողը չի շոշափում ստեղծագործական պրոցեսի օբյեկտիվ կողմը. երան
առաջին Ներթին հետաքրքրում է մարդու մեջ եղած ներքին ստեղծագործական
օկզորները: Եթե պատմության և փիլիսոփայության համար արվեստը զարգաց-
ման օբյեկտիվ օրինակություններն զբնորում է, ապա իր՝ ստեղծագոր-
ծողի համար արվեստը բնազդ է, իմպուլս, երգանք և այն մարմնավորելու
համար իրենին վիճակված է շատ թանկ վճարել: Մոեմը գրում է արվեստին
ծառայելու, նախանձանխոյիքի լինելու դաժանության մասին, արվեստի անողոր
եռասիրության մասին, որը իր արարչին վեր է անում մի այնպիսի անձնա-
վորության, որին հազիվ թե կարելի է լիարժեք համարել: Արվեստի մասին
նման հայացքները բնորոշ են ոչ միայն Մոեմին, այլ նաև 20-րդ դարի գրա-
կանության այնպիսի կորիֆեյի, ինչպիսին, օրինակ Փոմուս Մանն էր («Տոնիո
Ելբրգեր», «Դոկտոր Յուստուս»): Այս կոնցեպցիան ինչ-որ շափով հիմնվում
է Ֆրեյդի ուսմունքի վրա, այդ իսկ պատճառով էլ իրժեպատական է: Չնայած
պետք է պատշաճը հաստատել, Մոեմը զեռես գրքի առաջին գլխում, այնտեղ,
որտեղ խոսք է լինում առասպելական դոկտոր վեյթրեխտ-Ռոթշուցի աշխա-
տության մասին, փայլուն կերպով է հաղվեհարգար անհետմ ֆրեյդյան էսթետի-
կայի հետ:

«Ժրակտնում նրա կյանքը երազանքներից ու սիրտանական աշխատանքից
էր բաղկացած», ասված է Ներոսի մասին: Սթրիբլենդի կյանքը, երազանքն
ու արվեստը վեպում ներկայացված է որպես մեկուսացված մի աշխարհ, որը
ենթարկվում է իր սեփական օրենքներին: Այդ աշխարհի կողքին զոչովյուն
ուկի մի այլ աշխարհ, բուրժուական աշխարհը, որի մասին Մոեմն արդեն այլ
ձևով է պատմում:

Եթե Սթրիբլենդի աշխարհը անցնում է հավերժություն, եթե ժամանակն ու
մոռացությունը անգոր են իշխելու նրա արվեստի վրա, ապա տիկին Սթրիբ-
լենդի, այդ հարգածան բուրժուա կնոջ աշխարհը պատասպարտված է յզոյության
ժամանակի վազը ֆիգիկապես գրեթե շոշափելի է այնտեղ, որտեղ կյանքը օրն
է, առօրեական ու անցողիկ: Մոեմը զա շնչում է հրաշալիորեն գտնված կոմ-
պոզիցիոն սքայլով», նկարադրելով Սթրիբլենդների տան ինտերյերը դեռ այն
ժամանակ, երբ տանտերը իր երկրի արժանավոր քաղաքացին էր (զլ. 49, գրողն
այն համեմատում է միսին Սթրիբլենդի առանձնատնան ինտերյերի հետ քսան
տարի հետո (զլ. 58): Արժանավոր քաղաքացին արդեն հասցրել է սրիկա ու
վիժվածք դառնալ, իսկ հետո, մարգիուժան հպարտություն, սակայն միսին Սթրիբլենդը միայն ծեղացել է, իսկ մնացած բաներում բուր-
բովին չի փոփոխել: Նրա տան մեջ եղած Մորիսի նախշիով գործվածքներն իրենց
տեղը դիչել են Բակստի էսթիզներով բաղմոցի բարձրին, զա բնական է, մո-
ղաները փոխվում են, ժամանակը՝ անցնում ու անհետանում, իսկ քաղքեխու-
թյունը մնում անմխիթար վիճակում:

Մոեմի հեղանակը շոր է, խոցող և երբեմն էլ սլիֆոյան ձևով խառաբար,
երբ խոսքը վերաբերվում է ճզնիմ մարդկանց ճզնիմ կյանքին: Ամեն տեսակի
էսթետիկական ալլանդակությունների կիստամաբ ցուցադրումն արհամարհանք
տրադիցիոն է դարձել անգլիական դասական գրականության մեջ: Մորիբլմը,
որպես սոցիալական սանդուղքին ցածր կանգնեղների նկատմաբ ցուցաբերած

անպատկանություն և բարձր կանգնածների նկատմամբ ցուցաբերած եանդուն ստորաբարչութիւն միութեան, զիտն համբնդահար ծաղրի է Լնթարկվել Սվիֆտի և Քեքքերի կողմից: Տրանսիական դպրոցի հանգիւ ունեցած էր ոչչ համակրանքով հանգերծ, Մոնը երբէր չէր մտանում «ազգայնականությունը» և անսարբեր չէր հարկեական ժառանգությունը, շատ բարձր էր դատում Սվիֆտի և Գրայքների արժեքը, սիրում էր «Թոմ Զոնսը», «Տրիստրամ Ենդինա», «Փառա- մայութեան տեսլանաւոր»:

Անասորիների ազգային ժառանգություն կա «նոր դաս» մտեման մեկ- նարանութեան մեջ: Այնպիսի կերպարների համար, ինչպիսին միտս Սթրի- լենդն է, միտս Մակ-Էնդրյուն, զնդպետ Մակ-Էնդրյուն և միտ Ուոթթորթը, սեղ կզանկեր Քեքքերի «Մերքների գրքում»: ... Զայտմ միտս Մակ- Էնդրյուն բաղական թառամած էր, բայց այնպիսի մտայնական տեսք ուներ, կարծես Իրիտանական ամբողջ կայսրությունը պրզանում էր դահում, մի տեսք, որ ընտրել էր ավագ սպաների կանանց և պայմանավորված բարձր կատայի պատկանելու հարցա իրնագրականությունը... Նա հազեղ էր թանկարժեք և անճարակ շրջապատում: Մոնիին բաղական է երկու- երեք, իսկ երբեմն հուշիտակ մի արտանայություն, սրպեսզի իր դիմանկար-ընտրագրությունը սոցիալական կատարելություն և Հին պագերտակի ցայտուն հասակություն հազորդի:

Մոնը ձեռք է առնում խելացի և շարտիներեն, ընդ որում ոչ թէ մարդա- սրպես աչգպիսին, այլ մարդկային բնութեան խելագրություններ և նրա սոցիա- լական էութեանը Փառանելը բամահրանքը, որով Սվիֆտը ոչչաշնոմ էր նոր ժամանակների «զգեստապաշտություն» փիլիսոփայությունը ստորաբարչությունը («Տակարի հեթանոս») նամանայուն է Ելուսին և վեցպենանցս գրքի հեղի- նակի Տետ: Երկու հարչուրանվում այդ «փիլիսոփայությունը», իհարկե, հասց- բել է բաղական մանրանալ և շնայած առաջիկա նման «զգեստ» է մարդուն մարդ գործնում, բայց սողաններն արդեն այլ են: Քաղերը, ոսկեթել նախ- շերով համազգեստներն ու ոսպակոյրը, որոնք տանել էին Սվիֆտին, փոխարին- վել են թանկարժեք և անճարակ գգեստներով կամ էլ Գիտայի արդուարդով, Քրահներով ու խելացներ գլխարկներով: Մակայն փիլիսոփայությունը մեացել է նույնը: «Միտ Ուոթթորթը, որի պատանեկան տարիների էսթետիկական պատկերացումների (խիտ կանաչ շրջապատ, ձեռքին նարդիզ) և հասուն տա- բրերի թիվատիկության միջև անհամապատասխանություն էր ստեղծվել (բարձր կրանկներ և փարդյան արդուարդ), նոր գլխարկ էր կրում: «Այդ հանգա- մանքը բարձր արտանայություն էր ստեղծել նրա մոտ: Նա երբեք նման շա- բակամությունը չէր արտանայովել մեր ընդտեսր բարեկամների մասին»:

Գրքի Սթրիվի «արվեստ» նորագույն գիտապաշտություն և բարքենիների ձգձիմ իրականության հարողատ զավանկ է: Արտեստական հյուրանանկայկների արվեստը նույնպես վատ չի հարմարվում այդ միջավայրին. այդ միջավայ- րում հանդարտում են այդ արվեստը, իսկ երբեմն էլ մեծահագորտ համանա- վորում: Արվեստի սնորհների «այնույժ ետեքները», Տրանսայի Տետ հավասար կատարվող սիրախոզերը բարքենիության տեսակետով ծայրունել զեպրում բնական են թվում, բանի որ համապատասխանում են դրական-զեպրմեստական «բունեմիտի» մասին ունեցած բարքենիական պատկերացումներին: Բայց Սթրի- լենդի արվեստի համար սեղ չէա այստեղ. գիտապաշտանքը որդանապես ընդունակ չեն իրենց մեջ դաստիարակել «վեչերտղ զգայարանը», որը անհրա-

ծելու է զեղեկությունը բմբունելու համար: Այդ աշխարհը սահմիջուցիտայի է Լնթարկում Սթրիվենդի կատարելը միայն որպես հերթական մտղա, ոչ ավելի: Հեղինակը չի նակարդել, այլ ցույց է աղել երկու իրարից տարբեր աշ- խարհ՝ նրանցից յուրաքանչյուրին նկարագրելով համաստրալափ անողորմ- թյամբ և անկողմնակալ արչկերիվություն (մոտանանք, որ Սթրիվենդի- զգանկարիչը և Սթրիվենդ-մարդը նույն անձնավորությունն է): Վերջին խոսքը Մոնը թողնում է ընթերցողին, որը պետք է ընտրություն կատարի, որոշի և «հանրագումարի բերի»: Եվ եթէ Սթրիվենդի և բարձրական աշխարհի միջև ընտրություն կատարելու մեջ թերևս չի կարող երկու կարծիք լինել, ապա Սթրիվենդին գատապարտելը այնքան էլ «նշտ գեղարվեստական խնդիր չէ»:

Ընթերցողը իրավունք ունի հարցնելու. ճիշտ է, պատմողը հանձն չի առնում կարծիք հայտնել այդ մասին, բայց ինչ է մտածում ինքը՝ Մոնը: Այդ հարցին պատասխանում է վեպը իր ոչ պատկերավոր կատարվածքով: «Տէյ, Սթրիվենդը վատ մարդ էր, բայց միաժամանակ և մեծ մարդ» («Strikland was an odious man, but I still think he was a great one»):

Մոնը զիմում է այն նավերթական հարցին, որը հուզել է և շարունակում է հույզել գրողներին, նկարիչներին, զերտասաններին, ստեղծագործական մտքի և իրանվածքի տեր մարդկանց: Ինչպես և այն շնեպատաներին ու ճետագորդ- ներին, որոնք պրում են այդ մարդկանց մասին:

Այժմ լրիկայի ու Լոսթերիկայի, ստեղծագործողի բարոյականության և նրա արվեստի պատկերի միջև եղած փոխհարաբերությունների խնդրի ճախել:

Այդ մասին գրել են Արիստոստելը, Գոթթեն, Պուշկինը:

«Մոցարտ և Մալիբրի» ստեղծագործության մեջ Պուշկինը գրել է, որ «հան- ճարն ու շարագործությունը երկու անհամատեղիչ բաներ են»: Մոնը գտնա- մ է, որ գրանք համատեղելի «բաներ» են: Թե ինչպես են գրանք համապեղում և ինչն է կարևորը և արդյունքում ինչ է ստացվում, այդպիսին են վեպի փիլիսոփայական պարզումները:

Մոնը ճետապատում է այն հակասությունը, որը, նրա կարծիքով անհնարին է սացինել կերպով բացատրել՝ «հանճարեղ մարդու կյանքի և ստեղծագոր- ժութեան միջև եղած հակասությունը»: Հրամարվելով բացատրել այդ պարա- վորքը, պրոքը ասոք է աս. իս ստեղծագործական պրոքեսի իդեոլոգիական կոնցեպցիային, որը ինտելիցան վեր է դասում բանականությունից: Պատկե- րելով այդ պարագրքը որպես իրական բան, գրողը հավասարիմ է մնում կյանքին ու արվեստի պատմությանը (նույնիսկ մեծ Գոթթեն, որ հանճարեղ էր արվեստում, իմաստուն և խնձիմ ֆիլիսոսոք էր կյանքում):

«Պոետո» բանաստեղծություն մեջ Պուշկինը պարզաբանում է այդ պարա- զգրքը:

Քանի Ապոլլոն չէ կոչել երգչին
Գույի սերպակն ոգեւորություն,
Ունայն աշխարհի եզգանի լիլիին
Քաղված է երգիչն անհուսկ, տեւալուրե...

Եվ, զուգե, շեշիե շատ Լակներից՝
Ամենից շեշիե հա յե աշխարհում:

Քանի դեռ արվեստը չէր զինվորազրեւ ՍՅրիբլենդին, նա՝ բորսային միջ-
նորդը, ինչ խոսք, որ «աշխարհի էակնհորց» ամենայնիսկներինց մեկն էր: Իսկ
հրք զինվորապիւնց արվեստին, դարձաւ հանձնորդ, բայց միտժամանակ, բացի
կտավի մտա ունեցած հանձնարիք բեկումների պահերինց, շարունակեց մեայ
լն:ին, և հրեմեն-էրրինն էլ նույնիսկ շարագործ դարձավ: Մեկտրամատիկ շա-
րագործ» նրա որհնական կնոջ և իր շրջապատի քաղցնեհական պատկերաց-
մամբ, և առավել ևս շատ դժման, անսիրտ, բարոյազուրի մարդ համամարդ-
կային բարոյականութիան առումով:

Վեպում պատմողը հրքեմն կարծես ընկնում է ՍՅրիբլենդի նորահայտ անձ-
նավորութիան հիպնոսի տակ, նա մտովի տարածում է ձեռքերը. ոչինչ չես
կարող անել՝ յէլո, ՍՅրիբլենդը վատ մարդ էր, բայց միտժամանակ և մեծ
մարդ: Իսկ գրող Մոնմը այդ հիպնոսի տակ չի ընկնում: Նա հասկանում է
ՍՅրիբլենդի դժմանութիան ու բարոյագրկութիան օրչեկտիվ պատճառները, բայց
հակում շունի հետեւելու բավական բարեպատեհ պատվիրանին՝ «Հասկանալ նշա-
նակում է ներել»: Վեպում ՍՅրիբլենդը հասկանալի է, բայց նրա մարդկային
ստորութիւնը զուրս չի զրված ստեղծագործական «մախքերի» թլում:

Բլանչ ՍՅրլովի սպանութիւնը (չի որ զա այնուամենայնիվ սպանութիւն
էր) պակաս գարշելի չի դառնում նրանից, որ մարդասպանը մեծ նկարիչ էր
Սպանութիան զնահատականը տալիս է պատմողը, բայց գրողի կողմից նկարա-
զրվածը տվալ դեպքում ընկալվում է որպէս պատմողի իրավացիութիան նյու-
թական առացույց: Եվ զա համար էլ սպանութիւնը չի գաղարում սպանութիւնն
լինելուց միայն այն պատճառով, որ ՍՅրիբլենդի արարքը զուրի է կնոջ բարե-
պաշտութիւնից և երեսպա տութիւնից, որ նա հետամուտ չի լինում օրեկ բանի և
գրանով չի ձգտում ինչ-որ բան ձեռք բերել, անձամբ իր համար:

Ընթերցողին պարզ է, որ կյանքի այն պլումաններում, որին պատկանում
էր Բլանչը, բուրժուաշխան հարգարժանութիան պայմաններում, ստեղծագործական
պարտութիւն և ինքնարտահայտման ՍՅրիբլենդի օրհնական ձգտումը չէր
կարող այլանձակ ձեւեր շրնդունել: Եվ այնտեղ, որտեղ ՍՅրիբլենդը հանդես է
գալիս բարոյականութիան կոնկրետ-պատմական ձեւերի դեմ, որտեղ առանձնա-
հատուկ են հասարակական որոշակի կացութիւններ, հեղինակը նրա կողմն է:
Բայց այնտեղ, որտեղ ՍՅրիբլենդը հրամարվում է համամարդկային բարոյա-
կանութիան նորմաներինց, որտեղ պարտադիր են յուրաքանչյուր ժամանակի և
չարաքանչյուր հասարակութիւնի համար, Մոնմը հանձն չի առնում արդարաց-
նել նրան:

ՍՅրիբլենդը ծառայում է արվեստին:
Մտաւելով արվեստին՝ նա սպանում է իր մեջ մարդուն:
Մոնմը հասկանում է, թէ ինչու և ինչպէս է ՍՅրիբլենդը վատ մարդ դառ-
նում: Բայց թէ ինչու է զա անխուսափելիորեն կապված նրա հանձնարելութիան
հետ, նա չի բացատրում: Նա հավաստում է, թէ այդպէս կարող է պատահել:
Տվալ զեպքում մարդը ավելի ցածր է կանգնած ստեղծագործական ճակա-
տադրից: Մոնմի մտա հանձնարն ու մարդը տարբեր բեկումների են բաժանված:
Այս բոլորը հիշեցնում է անհատի մետաֆիզիկական երկատումը, որը նկա-
րագրել են անգլիացի նեոտոմանտիկներ Սթիվենսոնը («Անտովոր դիպված, որ
զգտահեց զովտոր Զեկիրի և միսար Հայդի հետ») և Զետերտոնը («Մարդ, որը
Էնգլարթի էր»): Մոնմն աշխատում է այդպիսի երկատմանը սոցիալական հիմ-

նավորում տալ: Ընկնում Քայրի, կուսական գեղեցկութիւնի թագավորութիւն
մեջ, օրտեղ, քաղաքակիրթ աշխարհից մեկուսացված, ՍՅրիբլենդի ստեղծա-
գործական ճակատագիրը իրականացվում և ավարտվում է ստանց խոշորորտի:
ՍՅրիբլենդը հաւանում է ոչ թէ հարմուհիայի, այլ համակնայն դեպո, մարդու և
նկարչի մեջ եղած ինչ-որ հավասարակշռված վիճակի: Քվում է, թէ այդ շա-
րաքատիկ երկատման մեղավորը քաղաքակիրթութիւնն է: Բայց ոչ: ՍՅրիբ-
լենդն ավելի լավ չի դառնում, պարզապէս նոր հանգամանքները նրան չեն
ստիպում դժմանութիւնն անելու:

Այդ իսկ պատճառով էլ Մոնմի ուժեղ վեպի գլխավոր հերոսին պակասում
է այն, ինչ, համեմատած մեծ գրականութիւնի հերոսների հետ, կոչվում է գեո-
զու գիտելիպիկալ:

«Հանձնարն ու շարագործութիւնը» համատեղված են ՍՅրիբլենդի մեջ ան-
փոփոխ կերպով:

Համատեղված են ստեղծագործական ներքին անհայթհայտելի մղումն ու
թուլութիւնը իմ մարդու, որը ընդունակ չէ խղճմտանքով բարձրանալ մինչե
սեփական վրձնի մեծ նվաճումները: Համատեղված են, բայց ցույց չեն արված
փոխներգործման մեջ:

Իհարկէ, ՍՅրիբլենդ-նկարիչը Մոնմի մեկնաբանութիւնը, ամեն տեսու-
կետով էլ անհամեմատ ավելի կարեւոր է և նշանակալից, քան ՍՅրիբլենդ-մարդը:
Չեմբելով մարդուն, Մոնմը փառաբանում է ստեղծագործողի կյանքի գործու
Բայց և այնպէս... Բայց և այնպէս, ՍՅրիբլենդի լավագույն ստեղծագործութիւն-
ը՝ փայտն անակի պատերին արված որմնանկարը, օշնչանում է: Այդ գե-
տալը պարզապէս սիմվոլիկ նշանակութիւնն ունի, որն առավել ևս չի կարելի
անտեսել, օրովհետեւ սիմվոլիկան հազվագայտ հչուր է Մոնմի գրքերում:

Նկարի ամբողջ գեղատիպական կյանքում արվեստը ՍՅրիբլենդի մեջ հաղ-
թում է մարդուն: Նրա մահվանից հետո մարդը, այսինքն կյանքը, ունեւ է
վերցնում և նկարչի ստեղծագործութիւնը, համաձայն մարդու կամքի, ոչնչաց-
վում է: Հանգուցալուծումը, իր անսպասելի շրջադարձով, դարմանալիորեն հի-
շեցնում է Օսկար Ուայլդի «Գորիան Գրեյի դիմանկարի» վերջը:

Այն, ինչ անվեստ է մեում ՍՅրիբլենդի կտալներինց, արդարացնում է ՍՅրիբ-
լենդ-մարդու իր շրջապատի մարդկանց պատճառած ցավերն ու տանջանքները,
չնայած չի արդարացնում նրա բարոյական վարիացումը: ՍՅրիբլենդի ար-
վեստը պետք է մարդկանց, քանի որ, ինչպէս հայտնի է, մարդիկ միայն
հացով չեն ապրում: Անա թէ ինչու համեմատելով ՍՅրիբլենդին ու ՍՅրլովին,
Մոնմը աներմտորեն ցածր է դասում վերջինի «Տացի բարութիւնը», նեո-
կայացնելով նրան ոչ միայն կոմիկական, այլ գարշելիութիւնն աստիճանի ոչոր-
մելի ու չնչին քաղցրեմ մրստող: Բուրժուայի «Տացի բարութիւնը» սնանկ է, և
վեպի սյուժեում օրհնաշխորէն վեր է սովում շարիքի, շար ՍՅրիբլենդը և բարի
ՍՅրլովը հավասար լսովով են պատասխանատվութիւն կրում Բլանչի մահվան
համար: Մեկը էզոցնետրիկ դժմանութիւնը սպանում է նրան, իսկ մյուսը իր
եսամու բարութիւնը օգնում է նրան այդ բանում: Բայց ՍՅրիբլենդը ստեղ-
ծում է Գեղեցկութիւնն և իր անմա՛ կառավերը, իսկ ՍՅրլովը՝ ոչինչ:

ՍՅրլովի բարութիւնը բարութիւն է առանց Գեղեցկութիւնի, դատարկ,
անասնական բարութիւն:

ՍՅրիբլենդի մոտ՝ Գեղեցկութիւնն առանց բարութիւնի:

Միայն Գեղեցկությունը, միայն Գեղեցկությունը ժառանգել է ազատում նկարչին շատ բանից, թեթևացնում հանճարի մարմնավորումը: Բայց փակուղու մեջ է գցում մարտուն, ինչպես գցեց Սթրիբլենդին:

Վեպում դասապարտվում է քարոչական փակուղու մեջ ընկած մարդը: Մոսկի նկարազրույցում է Սթրիբլենդի վերջին և ամենահանճարեղ դրժի՝ սաքսափելին և սասանոկեցուցիչը՝ որմնակարի կործանման էպիզոդը: Գրանով ցույց է տրված այն, որ կարող են գոյություն ունենալ զեղեցիկ այլ, ավելի վրեժ ձևեր, որոնք սինթեզում են Գեղեցկությունն ու Ճշմարտությունը Բարու հետ: Այլ կերպ ասած, ներշնչանքով համակված հանճարը՝ մարդկային ողջամիտ խզնի հետ:

«Ըլուսին և վեցպենսանոցը» կարելի է կարգալ այլ կերպ: Գրան օգնում են Մոսկի ավելի ուշ շրջանի ստեղծագործությունները, մասնավորապես նրա ինքնակենսագրական բնութի գրքերը: Եվ այդ վեպի համեմատությունը մյուս գրքերի հետ:

«Ըլուսին և վեցպենսանոցը» զեղարվեստական հետազոտություն է ստեղծագործողի անհատականության և նրա ստեղծագործություն միջև եղած հակասությունների մասին: Այստեղ գրեթե բացակայում է «ստեղծագործողի անհատականություն-ստեղծագործություն-մարդկային առդիտորիա» կրթորգության օբյեկտիվ կողմը: Դա պատճառաբանված է սյուժեով: Սթրիբլենդը հումահու ճակատագրի արժանազան հանճար է. նկարիչը իր կենդանության օրոք «առդիտորիա» չունի, և նրա նկարները լին հասնում նրանց, որոնց համար գրանք հետո դառնալու էին անհրաժեշտ ինչպես՝ օղբ: Սթրիբլենդի «առդիտորիան» ապագային է պատկանում: Իսկ վեպը պատմում է նկարչի համար ներկա ժամանակի մասին:

Այդ իսկ պատճառով Մոսկի լավագույն վեպերից մեկը՝ «Ըլուսին և վեցպենսանոցը» թողնում է նրա ամենասուրբյեկտիվ ստեղծագործություններից մեկի տպավորություն:

«Թատրոն» վեպը (1937), որտեղ ցույց է տրված ստեղծագործողի անհատականության, ստեղծագործության և մարդկային առդիտորիայի փոխհարաբերությունը, նման տպավորություն չի թողնում: Պատճառներից մեկն այն է, որ այստեղ պատմված է դերասանուհու ճակատագրի մասին, քան նկարչի կամ գրողի մասին գրված վեպերում: Արպեզի դերասանը կարողանա «խրացնել» իր հանճարը, միայն ինքնաարտահայտումը բովանկան լի, դահլիճում նստած կենդանի մարդ է հարկավոր: Բայց, մեր կարծիքով, կա ավելի լուրջ պատճառ: «Ըլուսին և վեցպենսանոցը» «Թատրոնից» բաժանող 18 տարիները հղան մի ժամանակ, երբ վերջնականապես ձևավորվեցին Մոսկի հայացքները («Թատրոնը» լույս տեսնելուց երկու տարի հետո երևան եկավ «Ճանապարհում» թերթի վերջը): Ինչ-որ բան ավելի պարզ դարձավ: Վեպի հերոսուհու՝ դերասանուհի Ջուլի (ամբերթի կերպարում ստեղծագործական սկզբունքը և կենդանի մարդը աարբեր բևեռների լին բաժանված, նրանք փոխներթափանցվում են, և դա հետևողականորեն նկարագրված է հեղինակի կողմից: Ջուլի (ամբերթի կերպարը գուրկ լի «հոգու դիալեկտիկայից»): Մոսկի համար ավելի պարզ է դարձել ոչ միայն այն, թե ինչպես միևնույն մարդկային հոգում ստոր բնազդը համեմատաբար են ապրում է հանճարեղության հետ, այլ նաև ինչ-որ բան հենց հանճար

անդրվյալի բնույթի մեջ: Հնարավոր է; որ այդ իսկ պատճառով 1937 թ. գրանքում, իր զեղարվեստական կատարելությամբ, զարգացված է այն միտքը, որը «Ըլուսին և վեցպենսանոցը» վեպի նկատմամբ փոքր-ինչ խուլ է հնչել: մասնա-ստեղծագործողի գործունեության վերջնական արդարացումը ուրիշներին էլ չափազանց հիշեցնելու մասին է:

Սթրիբլենդի ողբերգությունը ոչ միայն այն էր, որ նա հրեշավոր բնավորություն ուներ և անշարի էզոցենտրիկ էր: նրա ամենամեծ ողբերգությունն այն էր, որ ստեղծագործում էր մարդկության համար, չիմանալով և սկզբունքորեն լքանկանալով իմանալ այդ մասին:

Եթե նա իմանար այդ մասին, ապա Մոսկի գրչի տակից դուրս կգալու բուրովին այլ վեպ, այլ մարդու, Սթրիբլենդին ոչ նման մի նկարչի մասին:

Բայց Մոսկի գրեց «Ըլուսին և վեցպենսանոցը» վեպը, և ահա վեց տասնամյակ ընթացողների մի քանի սերունդ դիմում է այդ արտասովոր, հուզու շնալից, խորհել ստիպող գրքին, և յուրաքանչյուր սերունդ կարգում է այդ գրքը յուրովի:

Վ. ՍՎՈՐՈՒՆՅԱՆ

ՅԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՈՒՍԻՆ ԵՎ ՎԵՏՊԵՏՄԱՆՈՅ

էջ 4

¹ Գրեգոր դե Սիլվա Վերասկես (1599—1660)— իսպանացի նկարիչ, 17-րդ դարի ակադեմիական նկարչության նշանավոր ներկայացուցիչ

² Էլ Գրեկո (1541—1614) նշանակում է «Հուլիան վար հուլիս», իսկական անունն է Գոմենիկո Քոտոպոպուլոս, ծնվել է Կրետե կղզում: Գնդանկարչության սովորել է վենետիկյան վարպետների մոտ: 1574 թ. տեղափոխվել է Տոլեդո, Բուպոնիա: Հայտնի է հատկապես Աստվածաշնչի թեմաներով արած իր նկարներով:

էջ 5

¹ «Մերկուր դե Ֆրանս» — ամսագիր, որ գլխավորում էր Ֆրանսիացի հայտնի քննադատ Ալբեր Գրյեն (1865—1892), որը և 1891 թ. Ֆրանսիացի նկարիչ Պոլ Գոգենին չուլակեց սրպես սիմվոլիզմի առաջնորդ:

էջ 6

¹ Էդվարդ Լեզուս — ժամանակակից նկարիչ: Ծնոթներ Ջարլզ Սթրիքլենդի օտեղծագործությունների մասին: «Մարտին Զեկեր» հրատ., 1917 թ. (ժանոթ. հեղինակի):

² Վելթրբիստ-Ռոստոց, փիլ. գովառու: Եկար Սթրիքլենդ, կյանքն ու արվեստը: «Եվինգլի և Հանիլը» հրատ., Լոնդոն, 1913 թ. (ժանոթ. հեղինակի):

³ Սըր Վալտեր Ռալեյ (1552—1618) — անգլիացի հայտնի ճանապարհորդ-գազուժարար, Նիդերլանդա 1-ին թագուհու մերձավորներից: Ամերիկայում հիմնեց Ռալեյ դազուժը, որն անվանեց Վիրջինիա (կույս), ի պատիվ Նիդերլանդա 1-ին թագուհու, որ կույս էր համարվում:

էջ 7

¹ «Սթրիքլենդի Մարդը և նրա աշխատանքը»: Գիրքը գրված է նրա որդու՝ Ռոբերտ Սթրիքլենդի կողմից: «Վիլյամ Հեյնման», հրատ., 1913. (ժանոթ. հեղինակի):

էջ 8

¹ «Սամարոհին» — նկատի ունի Կաակարանի այն պատուը, թե ինչպե՞ս Քրիստոսը Սամարայով ճանապարհորդելիս սաստիկ ծարավելով մոտեցավ չրհոտ մոտ կանգնած մի կնոջ, խնդրեց ջուր առնել իրեն և հետո առաց. «Ով խմեց այս ջրին նորեն պիտի ծարավի...»: Այդ նկարը Քրիստոսի կատարուող նկարագրված է հետևյալ կերպ. «Մերկ կին, Ընկերության կղզիների բնիկ, պատկած ամբողջ ակիբն Զոնը արմավենիներով, բանաններով և այլն բնագրավոր է»: 60 դյույմ X 48 դյույմ (Սանոթ. հեղինակի):

² Անտոնիոս և Կլեոպատրա — Մարկ Անտոնիոս (83—30 մ. թ. ա.), հռոմեական եռապետ, Կլեոպատրա (63—30 մ. թ. ա.), եգիպտական թագուհի: Նրանց սիրո պատմությունը հիմք է հանդիսացել Մեքսպերի «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգության համար:

³ Տիրանիոս (14—37 թ. թ.) — հռոմեական կայսր, որին պատմաբան Տաքիտոսը (42 մ. թ. ա.—97 մ. թ.) նկարագրել է որպես հրեշավոր անձնավորություն: Անգլիացի պրոֆեսոր Քիլին իր «Կատիլինա, Կլավդիոս և Տիրանիոս» գրքում փորձեց հերքել Տաքիտին: Հնարավոր է, որ Մոմմսը նկատի ունի այդ գիրքը:

⁴ Գևորգ 5-րդ (1910—1936) — Անգլիայի թագավոր

էջ 12

¹ Նիկվե — Հին Ասորեստանի մայրաքաղաքը, որը Կոակարանում հիշատակվում է որպես մեծ քաղաք, Հուլիանովոր իր շքեղ պալատներով: Գտնվում էր Տիրիս գետի ափին:

² Ջորջ Կրաք (1754—1832) — անգլիացի բանաստեղծ

³ Ալեքսանդր Պոպ (1688—1744) — 18-րդ դարի անգլիական լուսավորական կուսակցության նշանավոր ներկայացուցիչ: Հայտնի է ոչ միայն իր սատիրիկ, այլ նաև դիդակտիկ պոեմներով, որոնց մեջ արտահայտել է իր փիլիսոփայական և բարոյագիտական հայացքները:

⁴ Կիթս (1795—1821), Վորդսվորդ (1770—1850), Կոլրիջ (1772—1822), Շելլի (1792—1862) — 18-րդ դարի անգլիացի բոմբաստիկ բանաստեղծներ: Հեղինակը թեև չի հիշատակում Քալյոնի ստույղը, բայց նկատի ունի նաև նրան:

էջ 13

¹ Պիտեր Մարկ Ռոնդա 1779—1869 — անգլիացի բժիշկ և գիտնական, հայտնի գործով հատկապես իր «Անգլիերն բառերի ու արտահայտությունների գանձարան» բառարանով:

33 — Լուսին և վեպենասոնց

¹ Անյժո Մակ-Հելլ Ուիսթլեր (1834—1903) — հայտնի գեղանկարիչ, ժամանակի ամերիկացի, նկարչական սկզբնական կրթութիւնը ստացել է Ռուսաստանում, ապրել է Անգլիայում

² Վիլյամ Մորիս (1834—1896) — անգլիական հասարակական գործիչ, բանաստեղծ և նկարիչ: 60-ական թվականներին Մորիսը կազմակերպեց գեղարվեստական պաստառների, դեկորատիվ գործվածքների, զուսմաժոր ակադու արտադրութիւնը:

¹ Bureau au premier (Ֆրանս.) — ֆրանսիակեր երկրորդ հարկում է:

² Garçon (Ֆրանս.) — զարտե, սպասավոր:

³ Madame est là? (Ֆրանս.) — Տիկինը տա՞նք է:

⁴ Monsieur est seul (Ֆրանս.) — Պարոնը մենակ է ապրում:

¹ Monsieur n'est pas poli (Ֆրանս.) — Պարոնն անքաղաքավարի է:

¹ Le coeur a ses raisons que la raison ne connaît pas (Ֆրանս.) — Միտք յորովի է տրամարնում, դժվար է հասկանալ այդ արամարանութիւնը:

¹ Le Maître de la Boite à Chocolats (Ֆրանս.) — շոկոլադի սուփեր նկարողարդոզ մասնագետ

² Կլոդ Մոնե (1840—1926), Էդվարդ Մանե (1832—1882) — ֆրանսիացի նկարիչներ, իմպրեսիոնիզմի նշանավոր ներկայացուցիչներ

¹ Ժան Շարդեն (1639—1779) — ֆրանսիացի նկարիչ, հռչակվել է իր ժանրային նկարներով ու նատյուրմորտներով, 18-րդ դարի օւսալիստական արվեստի ներկայացուցիչ

² mon petit chou (Ֆրանս.) — փոքրիկս, քաղցրիկս

¹ ma pauvre chérie (Ֆրանս.) — իմ խեղճ սիրելիս

¹ Կամիլ Կորո (1796—1875) — ֆրանսիացի նկարիչ, ջատերի կարծրով իմպրեսիոնիստների նախորդը: Երկար ժամանակ հասարակութիւնը անուշադրութիւն էր մատենել Կորոյի պոլիգործոցները Փառքի արժանացավ մաշվանից հետո:

¹ spaghetti (իտալ.) — մակարոն

¹ voyons (Ֆրանս.) — ճիշտ ար, իսկապէս

² du reste (Ֆրանս.) — բացի այդ

³ Ռաֆայել Սանտի (1483—1520) — իտալացի, վերածննդի շրջանի մեծագույն նկարիչներից մեկը

⁴ Միքելանջիո Բուոնարոտտի (1475—1564) — իտալացի նշանավոր քանդակագործ, նկարիչ, ճարտարագետ, բանաստեղծ: Միքստինյան մատուռի նրա նկարադարձումները վերածնութիւնի դարաշրջանի մեծագույն ստեղծագործութիւններից են:

⁵ Ժան Օգյուստ Էնգր (1780—1867) — ֆրանսիացի նկարիչ, 19-րդ դարի ակադեմիական նկարչութիւնի ներկայացուցիչ

⁶ Էմեն Դելակրուս (1798—1863) — ֆրանսիացի նկարիչ, ռոմանտիզմի նշանավոր ներկայացուցիչ

¹ Այդ նկարը սկզբում պատկանում էր Միլլի մի հարուստ գործարանատիրոջ, որը փոխավ ընդարթեց, երբ մոտենում էին զերմանացիները: Այժմ այդ նկարը գտնվում է Ստոկհոլմի ազգային թանգարանում: Եվիզները պղտոր ջրում ձուկ որսալու վարպետներ են: (Մանսթ. Տեղիւնակի):

¹ en effet (ֆրանս.) — իսկապես, իրոք

¹ Սատիր Մարտիանը արվեստի աստված Ապոլոնին հրավիրեց երաժշտական մրցության, պայմանով, որ հաղթողը վարվի պարտվողի հետ ինչպես համեմատ, Մոսաները հաղթող ճանաչեցին Ապոլոնին, և արվեստի աստվածը պատվիրեց ծառից կապել անպատկառ սաստիքին և ճեպոտահար անելով հանել նրա մտղից:

² Ստեֆան Մալարմե (1842—1898) — ֆրանսիական սիմվոլիզմի գլխավոր թեորետիկներից ու բանաստեղծներից մեկը, Պոլ Գոգենի բարեկամներից

³ Լմիլ Գարոբիո (1853—1873) — ֆրանսիացի գրող, բազմաթիվ գետեկտիվ վեպերի հեղինակ

¹ Սըր Թորի Բելլ — Շեքսպիրի «Ճաստերկուերքոզ դեշերը» կոմեդիայում ծեղ հասույիկի կոմիկական կերպար

¹ café au lait (ֆրանս.) — կաթով սուրճ

¹ Benedictité (լատ.) — Շարդենի «Ազոթ ճաշից առաջ» նկարը.

¹ Դելֆա — բազաբ Հոլանդիայում, վաղուց հայտնի է գունավոր կերամիկայի արտադրությունը

¹ Ալֆրեդ Սիսլեյ (1839—1889) — նկարիչ իմպրեսիոնիստ, հայտնի է իր քնանկարներով, ապրել է Փարիզում, ծագումով անգլիացի

² Էդգար Դեղա (1834—1917) — ֆրանսիացի նկարիչ, էնդեր աշակերտը, հարեց իմպրեսիոնիզմին

¹ Լիլի Լանգթրի (1852—1929) — անգլիացի երգչուհի, դեդեցկուհի

² Մերի Անդերսոն (1859—1940) — ամերիկացի նշանավոր ներդերձուհի

¹ Պոլ Սեզան (1839—1906) — ֆրանսիացի նկարիչ, հանդես եկավ իմպրեսիոնիստների դեմ՝ մեզադրելով նրանց ձևի զգացողության բացակայության մեջ

² Վինսենթ Վան Գոգ (1853—1890) — հոլանդացի նշանավոր նկարիչ

³ Ֆրանց Վինսենցալտեր (1805—1873) — գերմանացի դիմանկարիչ 30-ական թվականներից հետո ապրում էր Փարիզում, նապոլեոն Զ-րդի պալատական նկարիչ

⁴ Պիտեր Բրեյգել ավագ (1530—1569) — հոլանդացի նկարիչ, նրա ստեղծագործության հիմնական թեման աշխատավորներն ու քաղաքային արհեստավորությունն էր

¹ Սրբազան Սկիհ — համաձայն միջնադարյան լեգենդի հրաշագործ սկիհ, որունը պահվում էր Քրիստոսի արյունը: Պահվում էր Մոնսալվիլ լեռան վրա և հսկվում ասպետների կողմից:

¹ Բերնարդո Բելլետտո (1720—1780) — իտալացի նկարիչ

² Զոն Զոֆանիա (1723—1810) — Անգլիայում ապրած գերմանացի դիմանկարիչ

էջ 193

¹ Elle se respecte, vois-tu
էս (Ֆրանս.) — նա հարգում է իրեն, տեսնո՞ւմ

էջ 195

¹ à la portugaise (Ֆրանս.) — պորտուգալական ձևով

էջ 198

¹ Tenez, voilà le capitaine Brunot (Ֆրանս.) — Ահա և կապիտան
Բրոտոն:

² enfin (Ֆրանս.) — ալսիհքի, մի խոսքով

³ voyons (Ֆրանս.) — դե, սպասի՛ր

էջ 201

¹ que sais-je (Ֆրանս.) — կամ, տանք

² mon pauvre ami (Ֆրանս.) — խնդճ բարեկամս

³ volontiers (Ֆրանս.) — հանուրով

էջ 205

¹ évidemment (Ֆրանս.) — իհարկե, անուշտ

² mon cher monsieur (Ֆրանս.) — սիրելիս, հարգելիս

էջ 207

¹ que sais-je (Ֆրանս.) — այստեղ նշանակում է՝ և ո՞վ գիտե էլ ինչով

² mon Dieu (Ֆրանս.) — առաջած իմ

էջ 208

¹ pour l'amour de Dieu (Ֆրանս.) — ի սեր ասածս

² Et bien, oui, je ne le nie pas (Ֆրանս.) — Գե ինչ, թող այդպես լինի՞ր
չեմ առարկում:

էջ 212

¹ Mais non, mon cher monsieur (Ֆրանս.) — Բոլորովին էլ ոչ, սիրելի
պարոն:

էջ 217

¹ que sais-je (Ֆրանս.) — այստեղ նշանակում է՝ ինչպես բացատրեմ

էջ 218

¹ tenez (Ֆրանս.) — իրոք, միշտն ասած

² mais oui (Ֆրանս.) — դե, իհարկե

էջ 220

¹ Հելիոգարսու — հռոմեական կայսր (218—222 թ. թ.) վարում էր անա-
ռակ կյանք: Ժամանակն անց էր կացնում գինարտոբների մեջ, սպանվեց
գավազիբների կողմից:

² Հեսպերիդներ — համաձայն հին հունական առասպելի տիտան Ատլասի
գուսարեր Հեսպերիդները այգում հսկում էին այն սուկն խնձորները, որ Հողը
եզիբն էր Հերս աստծուն ամենակարող Զևսի հետ ամուսնանալու օրը:

էջ 221

¹ Voyons, René, mon ami (Ֆրանս.) — Լսիր Ռենե, բարեկամս:

¹ Բակատ Թողենբերգ (1866—1924) — պետերրուրգյան «Արվեստի աշխարհ» միութիւնի հայտնի ներկայացուցիչներից մեկը: Գեղանկարիչ և դեկորատոր: Կյանքի մեծ մասն անցկացրեց Փարիզում:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԻՆՉՐԵՎ

- ¹ Թափա — տեղական կոշտ կտոր
- ² կավա — ալկոհոլային խմիչք
- ³ լավա-լավա — սամոսական ազգային նախշազարդ հագուստ

ԳԵՏԱՆՈՐԸ

¹ Փել-մել — արիստոկրատական սկումբների թաղամաս Լոնդոնում:

¹ Երգեր — անդերենում արհամարհական մականուն սեամորթներին, երբեմն էլ պարզապէս գունամորթների համար (nigger):

ՄԱՅՐ ԱՆԳՈՒՅԻՅ ՀԵՌՈՐ

- ¹ փրաճու — մուշակյան նավակ
- ² դայնթ — Բորնետում ապրող մալայերեն խոսող բնիկների ցեղ

- ¹ սարոնգ — մալայացի տղամարդկանց և կանանց ազգային հագուստ
- ² բոյ — բնիկ սպասավոր (անգլ. boy — տղա)

- ¹ սոնգքոթ — գլխարկ՝ սովորաբար սև թավշից, շատ տարածված է մալայա-ցիների մեջ: Հանդիսավոր արարողությունների ժամանակ անհրաժեշտ է:
- ² փահիթ — շինի հետ խառնված շուր կամ շինի կոկտեյլ

¹ Քուալա Սուլոբ — հավանաբար մտացածին տեղանուն

- ¹ Սիվայի թեթևաքաղ հարսնացուի համար — խոսքը վերաբերում է Գեփ աստվածուհուն, որը. Սիվայի հետ (հինդուիզմի զլխավոր աստվածներից, մարմնավորում է կործանման ու վերստեղծման ուժերը) ամուսնանալուց առաջ որոշ ժամանակ նրա հարսնացուն է եղել: Գեփի մականուններից մեկը «Թեթևաքաղ» է:
- ² Մաունթ սթրիթ — փողոց Լոնդոնում՝ հարուստ թաղամաս

¹ սնոր — պենամոլ՝ մոդայամուլ մարդ, բարձր հասարակութիւնի ճաշակի, ջարժուձեճի և նրատուկացի մուլդին հետեորդ

¹ բաշու — լայն թևերով մալայական վերնաշապիկ

¹ քրիս-մալայական երկօայր դաշույն

էջ 366

¹ սահիր — զաւարտան եկրտղացի (անգլ.—հնդկ.), նաև՝ փառք սահիր (pukkañ sahib)

էջ 367

- ¹ քուսրն — արիստոկրատական որսորդական միութեան անդամ
- ² սիլիհնի — սելուջան տերիւր
- ³ սրփինդիլըն — համի տնտակ

էջ 368

- ¹ Nouveaux rich (ֆրանս. նորն.) — վերջերս հարստացած
- ² միզու — վարձու պարտք

էջ 372

¹ ո՛չու ի՞նչ հուշ — հայտնի անձանց համարող կենսագրութիւնը պարտնակող գիրք («Who's who» — Ով ով է)

էջ 373

¹ շնիկն ո՞վ ֆէր (chemin de fer) — ֆրանսիական թղթախաղ, ըսկիւարայի տարածանակը

ՈՅ

ԵՐԵՎ ԱՍՍԻԿ ԿԱՆԱՅԵ ԱՆՏՐԱՌՈՒ

էջ 368

¹ էրուս (անգլ. Arrow) — նետ

էջ 369

- ¹ bonhomme (ֆրանս.) — բարեբաւոյն, կենսաբաւոյն
- ² Գալիլեոս, Մինո — բրիտի մասին գրքեր հեղինակներ,

էջ 391

¹ Մակրի Հատը (անգլ. Monkey House) — Կապիկի սան

էջ 393

¹ Mademoiselle est servie (ֆրանս.) — Ըտը մտապէս է

էջ 397

¹ pête de-foid gras (ֆրանս.) — սպի կրկնմանք գազան

էջ 400

¹ croissant (ֆրանս.) — կրակաւանակ ըսկիկ

ՔՅՅՆԸ

էջ 407

¹ Յլարիշ — Կենդանի լսվազուցի հրատարակչից մեկը

էջ 409

¹ Մարուշ Գրաթն (1852—1930) — ֆրանսիացի հանրահայտ վարտակից

էջ 426

¹ ...ինն զվարճի շնն զգում — իսկոց վերաբերում է Արիստոյա թագուն. հայտնի նախադասութեանը՝ «Անկը զվարճի ինն զգում»

էջ 427.

1 Սթեֆանոզ Հատուց—չքեզ առանձնատուն Լեոգոնում, մինչև 20-րդ դարի
ակերբը պատկանում էր Սաղըրչենցի դուքսին: Ունի թանգարանային արժեք

ԱՆՍԱՍԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

էջ 462

1 Յունայթըզ Տրուֆ Լայն — հյուսիսամերիկյան նավային ընկերություն

էջ 465

1 Que tal? (իսպ.) — Ինչպե՞ս էք

էջ 466

1 sala principal (իսպ.) — գլխավոր սենյակ

էջ 469

1 Çaramba (իսպ.) — գրո՞ղը տանի

ՄԻՋՊԱՐԱԿԱՆ ԿՈՒՐՏԸ

էջ 470

1 Gracias, Hasta luego (իսպ.) — Շնորհակալություն, Տանուֆյուն

էջ 482

1 Չինչըր էլլ — ոչ ա կոհոյալին խմիչք

ԳՍՐՈՆ «ԱՄԵՆԱԳԵՏԸ»

էջ 484

1 Անգլիայի Զորք թագավորը — ամենայն հավանականությամբ ակնարկվում
է Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր, լիբերալ կուսակցության պարագլուխ
Լույդ Զորքը (1862—1945):

էջ 485

1 Մարտինի—կոկտեյլի մի տեսակ

էջ 486

1 Կորեկ — փոքրիկ կղզի նազազ օվկիանոսում

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՊ

Հուսիս և վեցպենսանոց — Թարգմ. Ա. Խաչատրյան 2

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Անձրև	228
Քննությունը	276
Մայր Անգլիայից հետո	320
Առյուծի մորթիին	358
Երեք հաստիկ կանայք Անտիբուս	386
Ջիյնք	404
Գանձք	435
Նեղ օրվա քնկերք	454
Անասուն հաստատություն	460
Հյուպատոսք	471
Սպիտակ փարթ	478
Պարոն Եսմենազետրա	483
Խոստումք	490
Վերջաբան — Վ. Սկորոզենկո	498
Սանսթադրություններ	512

**Վիլյամ Սոմերսեթ Մոեմ
ԼՈՒՍԻՆ ԵՎ ՎԵՅՊԵՆՍԱՆՈՑ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ**

Կազմողներ՝ Ա. Ո. Խաչատրյան
Հ. Խ. Բոդաբյան

Խմբագիր՝ Կ. Ժ. Մաքրազյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանգակունի
Գեղ. խմբագիր՝ Ս. Վ. Պողոսյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Խաչատրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Մ. Համբարձումյան

ИБ — 2798

Հանձնված է շարվածքի 8, 08. 1989 թ.: Ատորագրված է տպագրության 09. 11. 1989 թ.: Յորմատ $84 \times 108 \frac{1}{32}$ թուղթ՝ տպար. № 2: Տառատեսակ՝ գրքի սով.: Տպագրություն բարձր, պայմ. 27,72 մամ. + 0,42 մամ. ներդ., տպ. 29,4 գուն. թ. օտ., հրատ. 28,74 + 0,46 մամ. ներդ. մամ.: Տպաքանակ՝ 40000: Ղաաղեր՝ 805: Գինը՝ 3 և. 30 կոպ.:

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի 19 ա:

Издательство «Луйс», Ереван-9, ул. Кирова, 19а.

ՀՄՄՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալախերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжно-торговли, Ереван-10, ул. Алавердяна, 65.